Ա. Ռ. Բաբայան

Տեսակցիական բառարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՔՈՉԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՅԱԴՅԱՆ Ա. Հ.

Ա 100815

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 330 (038)
ԳՄԴ 65 g 2
Բ 260

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Գիտական խմբագիր՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր **Վ. Լ. Հարությունյան**

Բայադյան Ա. Հ.

Բ 260 Տնտեսագիտական բառարան / Ա. Հ. Բայադյան .- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, – 528 էջ:

Բառարանում ամբողջական տեսքով տրված և պարզաբանված են ֆինանսական, վարկային, բանկային, հարկային, ապահովագրական, վիճակագրական և համապատասխան այլ ոլորտներին առնչվող ու հաճախակի օգտագործվող տերմինների բացատրություններ:

Այն նախատեսվում է տնտեսավարող սուբյեկտների, բանկերի, վարկային կազմակերպությունների, բյուջետային, վիճակագրական և հարկային մարմինների, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի, հաշվապահական հաշվառման համապատասխան մասնագետների, աուդիտորական կազմակերպությունների, ուսանողների, դասախոսների համար:

Վերահրատարակվում է որոշ փոփոխություններով և լրացումներով:

ՀՏԴ 330 (038)
ԳՄԴ 65 g 2

ISBN 978-5-8080-1134-2

© Բայադյան Ա. Հ., 2014թ.

Հեղինակի կողմից

Ֆինանսական հարաբերությունների կազմակերպումն ու կարգավորումը, հատկապես կարևորվում է անցումային փուլում գտնվող երկրներում, մասնավորապես նաև Հայաստանի Հանրապետությունում: Տնտեսավարման նոր պայմաններում սկսեցին ձևավորվել ու դեռևս ձևավորման փուլում են գտնվում տարբեր տեսակի բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, այդ թվում նաև առևտրային բանկեր, փոքր ու միջին չափի տնտեսավարող սուբյեկտներ, ֆերմերային տնտեսություններ, որոնց գործունեությունը պետք է ընթանա տնտեսական զարգացման ժամանակակից կանոնակարգով: Կապված հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ներդրման, արժեթղթերի շուկայի ու բորսային գործի, դրամավարկային քաղաքականության, հարկային, բանկային և ապահովագրական համակարգերի հետ, բավականաչափ փոփոխություններ են կատարվել համապատասխան բնագավառներում, ինչպես նաև դրանցում կիրառվող տերմինաբանությունում: Այդ առումով փորձ է արվել պատրաստել տնտեսագիտական բառարան, որը, բացի համառոտ բացատրություններից, ներառի նաև այնպիսի ցուցանիշների համակարգեր, որոնք հնարավորություն կտան գնահատելու ինչպես յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի, այնպես էլ բանկի ֆինանսատնտեսական դրությունը: Մեր կարծիքով բառարանում ընդգրկված յուրաքանչյուր հասկացություն բացատրված է պարզ և հանգամանորեն: Այն իր կառուցվածքով բավականաչափ ընդգրկուն է և կիրառելի տնտեսագիտության ոլորտին առնչվող հարցերի պարզաբանման համար: Բառարանից օգտվողները, եթե որևէ տերմինի բացատրությունում կհանդիպեն անհասկանալի բառերի, ապա դրանց բացատրությունը կարող են գտնել նույն բառարանում:

Կանխավ մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում բառարանից օգտվողներին, ովքեր կներկայացնեն իրենց կարծիքներն ու նկատառումները, որոնք անպայման հաշվի կառնվեն հետագա աշխատանքներում:

Գրախոսողի կողմից

Հայաստանի Հանրապետությունն ազատական տնտեսական հարաբերություններին անցման փուլում առնչվեց տնտեսագիտությունում օգտագործվող ժամանակակից տերմինաբանական և տնտեսական երևույթների մեկնաբանման բազմաթիվ խնդիրների հետ: Դրանց լուծման առումով Ա. Բայադյանը՝ կարևորելով համաշխարհային փորձը, պատրաստել է, մեր կարծիքով, տնտեսագիտական բացատրական հաջողված բառարան: Վերջինս ներառում է տնտեսագիտության մեջ հաճախակի կիրառվող տերմինների և հասկացությունների համառոտակի բացատրություններ, որոնք վերաբերվում են ֆինանսների ընդհանուր տեսությանը, տնտեսավարող սուբյեկտների ֆինանսներին ու վարկավորման գործընթացին, դրամաշրջանառությանը, բանկային ու հարկային համակարգերին, ապահովագրական գործին, հաշվապահական հաշվառմանն ու արժեթղթերի շուկային: Ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ համապատասխան մասնագիտական գրականության ներկայիս պակասի պայմաններում, բառարանը հնարավորություն կընձեռի ուսանողներին անհրաժեշտ մակարդակով ուսումնասիրել այդ ոլորտը: Այն իր ընդարձակ բառացանկով օգտակար կլինի նաև դասախոսների, տնտեսագիտության բնագավառի աշխատողների և դրա հիմնախնդիրներով հետաքրքրվող մասնագետների համար:

Բառարանում ընդգրկված են այնպիսի համալիր ցուցանիշների (ֆինանսական կայունություն, գործարար ակտիվություն, շահութաբերություն, իրացվելիություն) բացատրություններ, որոնք հնարավորություն կտան գնահատելու տնտեսավարող սուբյեկտների, բանկերի ֆինանսական դրությունը:

Տնտեսագիտական բացատրական բառարանը հնարավորություն է ընձեռում և ուսանողներին, և համապատասխան մասնագետներին անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերել պետական ֆինանսների, տնտեսավարող սուբյեկտների ֆինանսների վերաբերյալ, ինչպես նաև համակցված պատկերացում կազմել բանկային համակարգի, կանխիկ և անկանխիկ դրամաշրջանառության, ինչպես նաև արժութային և արժեթղթերի հետ կատարվող գործառնությունների մասին:

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Ռոբերտ Սարինյան**

Ինքնակենսագրություն

Աշոտ Հակոբի Բայադյանը ծնվել է 1946թ. հունիսի 2-ին Սպիտակի շրջանի Մեծ Պարնի գյուղում, աշխատավորի ընտանիքում:

1964-65 ուս. տարում գերազանց առաջադիմությամբ ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1965թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի «Տնտեսագիտական կիբեռնետիկա» բաժինը և ավարտել այն 1970թ.:

1985թ. ավարտել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի հեռակա ասպիրանտուրայի «Վիճակագրություն» բաժինը, որտեղ էլ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Արոն Յա. Բոյարսկու գիտական ղեկավարությամբ և ստացել տնտեսագիտության թեկնածու գիտական աստիճան:

Աշխատել է՝

- Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում 1970-75թթ.՝ որպես տնտեսագետ ինժեներ:
- Հայաստանի գյուղատնտեսական նախարարության հաշվողական կենտրոնում 1975-84թթ., որպես խմբի, այնուհետև՝ բաժնի վարիչ: Զբաղվել է գյուղատնտեսության ոլորտում հաշվապահական և ֆինանսական հաշվետվությունների համակարգիչներով կազմման ու ներդրման հարցերով:
- Հայկական գյուղատնտեսական ինստիտուտում (ՀԳԻ)1984-93թթ., որպես ավագ դասախոս, այնուհետև՝ դոցենտ, համատեղության կարգով նաև Հայաստանի ժողովրդական տնտեսության ինստիտուտում: Դասավանդել է «Հաշվապահական հաշվառում», «Վիճակագրություն» և «Տնտեսական գործունեության վերլուծություն» առարկաները:
- ՀՀ Նյութական ռեսուրսների նախարարությունում, ՀՀ կենտրոնական բանկում, Հայագրոբանկում 1993-96թթ., համապատասխանաբար զբաղեցնելով ֆինանսական վարչության պետի, հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների վարչության

պետի, հաշվառման և մեթոդոլոգիայի բաժնի պետ պաշտոններ, միաժամանակ աշխատելով ՀԳԻ-ում որպես դոցենտ՝ «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» ամբիոնում:

- Հայկական գյուղատնտեսական ակադեմիայում 1996-98թթ. որպես դոցենտ՝ համատեղելով «Ֆինանսա-տնտեսագիտական» վարչության պետի պաշտոնը:
- 1998թ. հոկտեմբերի 1-ից մինչ օրս նորաստեղծ «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի վարիչն է, դասավանդում է հիմնականում մասնագիտական առարկաներ՝ «Ֆինանսների ընդհանուր տեսություն», «Կազմակերպությունների ֆինանսներ» և «Բանկային մենեջմենթ»:
- Այժմ աշխատում է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտում բաժնի վարիչ և միաժամանակ «Ֆինանսներ և էկոնոմիկա» ամենամյա հանդեսի գլխավոր խմբագիրն է:

2002թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական դրության գնահատման մեթոդաբանական հիմնահարցերը» թեմայով, ստանալով տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան, իսկ 2004թ. ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից նրան շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:

Ավելի քան 150 հրատարակված գիտական հոդվածների, մենագրության, ուսումնական ձեռնարկների, տնտեսագիտական բացատրական բառարանների և մեթոդական ցուցումների հեղինակ է:

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանության խորհրդի անդամ է: Միաժամանակ, Հայաստանի ազգային ագրարային համալսարանում Ը.00.03 մասնագիտության որակավորման քննական հանձնաժողովի նախագահն է:

Նրա գիտական ղեկավարությամբ տնտեսագիտության թեկնածուներ են դարձել 3 տասնյակից ավելի ասպիրանտներ ու հայցորդներ: Այժմ նա մի քանի ասպիրանտների և հայցորդների գիտական աշխատանքների ղեկավար է:

Տարիներ շարունակ մի շարք ուսումնական հաստատությունների «Ֆինանսներ և վարկ», «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտությունների գծով պետական քննական հանձնաժողովի նախագահն է:

Դեռևս խորհրդային տարիներին, որպես տնտեսագետ, լինելով տեղերում՝ մեծ օգնություն է ցուցաբերել տնտեսություններին տնտեսահաշվարկային և վարձակալական գործընթացի ներդրման գործում, որի համար պարգևատրվել է շնորհակալագրերով և պատվոգրերով:

Եղել է ակտիվ հասարակական աշխատող և 1986-91թթ. կատարել է տնտեսագիտական ֆակուլտետի արհմիության նախագահի և կուսակցական կազմակերպության քարտուղարի պարտականություններ:

Ուսումնական փորձի առումով 1997-98թթ. եղել է ԱՄՆ-ի Ֆրեզնոյի համալսարանում, 2000թ. Լոնդոնի տնտեսագիտական քոլեջում, 2001թ. Հոլանդիայի, 2005, 2008 և 2010թթ. Գերմանիայի ու Հունաստանի գյուղատնտեսական համալսարաններում:

2006 և 2010թթ. ՀՀ կրթության և գիտության ոլորտում ներդրած ավանդի համար, Հայաստանի պետական ագրարային համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ, պարգևատրվել է «Ոսկե հուշամեդալով»:

2014թ. ՀՀ գիտության պետական կոմիտեի հայտարարված «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթի հաղթողներից մեկն է: Հանդիսանում է ՀՀ պետ. բյուջեից ֆինանսավորվող «ՀՀ պետական պարտքի կարգավորման ուղիները» թեմայով գիտական հետազոտության ղեկավար (2013-2015թթ):

Ամուսնացած է, ունի երկու որդի և մեկ դուստր, որոնք ստացել են բարձրագույն կրթություն:

Կինը՝ Հեղինեն, մանկավարժ է, ավագ որդին՝ Արշակը, տնտեսագետ-ֆինանսիստ է, աշխատում է բանկային համակարգում, կրտսեր որդին՝ Արտակը, միկրովիրաբույժ է, աշխատում է հիվանդանոցում, դուստրը՝ Աննան, տնտեսագետ-հաշվապահ է, աշխատում է դասախոս ՀՊՏՀ-ում, տնտեսագիտության թեկնածու է:

Ա

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ – այն որոշակի ժամանակաշրջանում, սովորաբար մեկ տարվա ընթացքում, տվյալ երկրի տնտեսության մեջ արտադրված բոլոր ապրանքների ու մատուցված ծառայությունների ընդհանուր արժեքն է դրամական արտահայտությամբ: Ընդունված է առանձնացնել համախառն ազգային արդյունքը և զուտ ազգային արդյունքը: Վերջինս հավասար է համախառն ազգային արդյունքից հանած ամորտիզացիոն մասհանումները (հիմնական միջոցների մաշվածության արժեքը):

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ ՀԱՇԻՎՆԵՐ – այն հաշիվներն են, որոնք ներառում են տեղեկատվություններ ինչպես հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների, այնպես էլ՝ տնտեսության տարբեր ճյուղերում արտադրության, եկամուտների կազմավորման աղբյուրների, գների, ապրանքանյութական արժեքների ձեռքբերման համար կատարված ծախսերի վերաբերյալ: Նշված տեղեկատվությունների հիման վրա հաշվարկվում է երկրի ազգային եկամուտը, որի կազմում ներառված հաշիվները լայնորեն օգտագործվում են ազգային տնտեսության զարգացման մակարդակը գնահատելու համար:

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ – այն որոշակի ժամանակաշրջանում, սովորաբար մեկ տարվա ընթացքում տվյալ երկրում նոր ստեղծված ամբողջական արդյունքի արժեքն է դրամական արտահայտությամբ: Արտադրության բոլոր գործոնների (աշխատանք, հող, կապիտալ, ձեռնարկատիրություն) բերած եկամուտն է: Երկրի ազգային եկամուտը հավասար է՝ համախառն ազգային արդյունքից հանած ամորտիզացիոն մասհանումները (հիմնական միջոցների մաշվածություն) և անուղղակի հարկերը: Մյուս կողմից, ազգային եկամուտը կարելի է որոշել որպես մեկ տարում աշխատավարձի, կազմակերպությունների շահույթի, ներդրված կապիտալի դիմաց ստացված տոկոսի, հողի ռենտայի, վարձավճարի, սեփական գործով զբաղվող արհեստավարժների, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ստացված բոլոր եկամուտների գումար: Ազգային

եկամուտը երկրի տնտեսական զարգացման կարևորագույն ընդհանրական ցուցանիշներից է և բնութագրում է բնակչության մեկ շնչին ընկնող ընդհանուր կենսամակարդակը:

ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ – կառավարության կողմից իրագործվող ծրագիր է, ըստ որի փոքր ներդրողները կարող են ներդրումներ կատարել խնայողական սերտիֆիկատների, շահող պարտատոմսերի և այլնի մեջ:

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ (ԱՀՀ) – ազատական տնտեսակարգ ունեցող երկրներում մակրոտնտեսական գործընթացների նկարագրման և վերլուծության համար կիրառվող փոխկապակցված ցուցանիշների համակարգ է:

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏ ՀԱՄԱԿԱՐԳ (ԱՀՍՀ) – տվյալ երկրի տնտեսական իրավիճակը և դինամիկան բնութագրող վիճակագրական տվյալների համակարգ է, որը պատկերացում է տալիս այդ երկրում տեղի ունեցած տնտեսական գործընթացների մասին: Ազգային հաշիվների հիմնական տեսակները խմբավորվում են ըստ տնտեսական կոնկրետ գործառնություններ իրականացնող մասնակիցների: Այդ հաշիվներից են՝ արտադրության, եկամուտների կազմավորման, դրանց օգտագործման ու բաշխման հաշիվները և այլ հաշիվներ: Այդ հաշիվների համակարգը Հայաստանում ներդրվել է՝ ելնելով միջազգային չափանիշներից և գործող մեթոդաբանությունից:

ԱԺՈՒՐ – անալիտիկ և սինթետիկ, պահեստային ու հաշվապահական հաշվառման և այլ տվյալների համընկնում: Ընդհանուր առումով՝ ընթացիկ հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների համընկնում:

ԱԿՏԻՎ ՃԱՆԱՉՎԱԾ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԱԽՍՈՒՄՆԵՐ – դրանք որոշակի չափանիշների (արտադրանքի տեսակը կամ տեխնոլոգիան հստակորեն որոշված է, դրանց տեխնիկական իրագործելիությունը հիմնավորված է, այդ արտադրանքը կամ տեխնոլոգիան արտադրվելու, վաճառվելու և օգտագործվելու է և այլ չափանիշներ) բավարարող ծախսումներն են, որոնք

բնորոշում են ապագայում կատարվող ծախսումների արդյունքում տնտեսությանը եկամուտ բերելու հավանական լինելը:

ԱԿՏԻՎ ՈՉ ՍՏԱՆԴԱՐՏ – համաձայն ՀՀ բանկային օրենսդրության՝ ոչ ստանդարտ են դասակարգվում այն ակտիվները, որոնք չաշխատող են 91-180 օր, և որոնց գծով պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում՝ կապված փոխառուի (պարտապանի) ֆինանսական վիճակի կամ նրա պարտքը մարելու ունակության հետ: Ոչ ստանդարտ ակտիվների մեջ ներառվում են. ա) ժամկետային ակտիվները, որոնց մարումը ժամկետում հնարավոր չէ փոխառուի (պարտապանի) դրամական միջոցների անբավարար հոսքի պատճառով, բ) բանկի կողմից սահմանված ներքին կանոնակարգին համաձայն, սեփական կապիտալի և ներգրաված միջոցների միջև հարաբերակցության, ոչ բավարար վիճակ ունեցող փոխառուի (պարտապանի) վարկերը, կանխավճարները և փոխառուի (պարտապանի) նկատմամբ այլ պահանջները, գ) այն ակտիվները, որոնք փոխառուն (պարտապանը) չի կարող մարել նախնական պայմանավորվածության համաձայն և, որոնք փոխառուի ֆինանսական ոչ բարվոք վիճակի հետևանքով վերանայումների ու դրանց շուրջ տարվող բանակցությունների առարկա են: Այսինքն՝ ակտիվի մարման առաջնային աղբյուրները բավարար չեն, և բանկը պետք է դիմի դրա մարելու երկրորդային աղբյուրներին, որպիսիք են՝ գրավի, գույքի վաճառքը, պայմանների վերանայումը (վերաֆինանսավորումը) կամ կապիտալի նոր աղբյուրների հայթայթումը և այլն: Ոչ ստանդարտ ակտիվներն ունեն ակնհայտ թերություններ, որոնք վտանգում են պարտքի ամբողջությամբ մարելը:

ԱԿՏԻՎՆԵՐ – ա) տնտեսավարող սուբյեկտների ենթակայության տակ գտնվող տնտեսական միջոցներ են, որոնք իրենց բովանդակությամբ հանդես են գալիս ոչ ընթացիկ ակտիվների և ընթացիկ ակտիվների տեսքով, բ) բանկերի ենթակայության տակ գտնվող այն միջոցներն են, որոնք հանդես են գալիս դրամական միջոցների, արժեթղթերում ներդրումների, տրամադրվող վարկերի, հիմնական միջոցների և այլ ակտիվների տեսքով: Ակտիվներն իրենց արժեքային առումով արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռի ձախ կողմում (ակտիվային մաս):

ԱԿՏԻՎՆԵՐ ԱՌԱՎԵԼ ԻՐԱՑՎԵԼԻ – ընթացիկ ակտիվների մի մասը կազմող բոլոր տեսակի դրամական միջոցների այն գումարն է, որը կարելի է օգտագործել անմիջականորեն հաշվարկային գործառնություններ կատարելու համար: Այս խումբ են ներառվում նաև կարճաժամկետ ֆինանսական ներդրումները՝ արժեթղթերի տեսքով:

ԱԿՏԻՎՆԵՐ ԱՐԱԳ ԻՐԱՑՎԵԼԻ – ընթացիկ ակտիվների մի մասը կազմող և որոշակի ժամանակում շրջանառության համար պահանջվող այն միջոցներն են, որոնք հանդես են գալիս հիմնականում դեբիտորական պարտքերի (վճարումներ, որոնք պետք է կատարվեն հաշվետու պահից 12 ամսվա ընթացքում) և այլ ընթացիկ ակտիվների տեսքով: Այդպիսի ակտիվների իրացվելիությունը տարբերակվում է՝ կախված օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններից (ֆինանսական ոլորտի աշխատողների որակավորումը, մատակարարների հետ փոխհարաբերությունները և դրանց վճարունակությունը, գնորդներին վարկերի տրամադրման պայմանները, մուրհակային շրջանառության կազմակերպումը):

ԱԿՏԻՎՆԵՐ ԴԱՆԴԱՂ ԻՐԱՑՎԵԼԻ – դրանք արտադրական պաշարները, անավարտ արտադրության ծախսերը, երկարաժամկետ ֆինանսական ներդրումները, դեբիտորական պարտքերը (վճարումներ, որոնք պետք է կատարվեն հաշվետու պահից ավելի քան 12 ամիս հետո), ապրանքանյութական արժեքների ձեռքբերման գծով ավելացված արժեքի և ակցիզային հարկերն են:

ԱԿՏԻՎՆԵՐ ԴԺՎԱՐ ԻՐԱՑՎԵԼԻ – այն ակտիվներն են, որոնք նախատեսված են համեմատաբար ավելի երկարատև և ժամանակաընթացքում տնտեսական գործունեության մեջ օգտագործելու համար: Դրանց թվին են դասվում հաշվեկշռի ակտիվի 1-ին բաժնում ներառված ոչ ընթացիկ ակտիվները՝ բացառությամբ երկարաժամկետ ֆինանսական ներդրումների:

ԱԿՏԻՎՆԵՐ ԵԿԱՄՏԱԲԵՐ – բանկի այն ակտիվներն են, որոնք բերում են եկամուտ տոկոսի կամ շահաբաժինների տեսքով: Դրանք հիմնականում բանկի կողմից տրամադրված վարկերն

են, լիզինգը և արժեթղթերում կատարված ներդրումները: Անվանվում են նաև աշխատող ակտիվներ: Եկամտաբեր ակտիվներից է բանկը ստանում իր եկամուտների մեծ մասը: Եկամտաբեր ակտիվները պետք է տարբերել ոչ եկամտաբեր այնպիսի ակտիվներից, ինչպիսիք են՝ կանխիկ դրամական միջոցները, կենտրոնական բանկում պարտադիր պահուստները: Կազմակերպության շենքը, որպես կանոն, եկամտաբեր ակտիվ չէ, սակայն այլ անշարժ գույքում ներդրումները կարող են լինել այդպիսին, եթե այդ ակտիվը բերում է եկամուտ՝ վարձավճարի տեսքով:

ԱԿՏԻՎՆԵՐ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ – կարճաժամկետ ներդրումները և մինչև մեկ տարի մարման ժամկետ ունեցող հաստատագրված ու լողացող, փոփոխական տոկոսադրույքով վարկերն ու լիզինգներն են՝ առանց այլ բանկերի առևտրային արժեթղթերի (ընթացիկ ակտիվներ):

ԱԿՏԻՎՆԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ – որոնք ենթադրվում են օգտագործել ձեռնարկատիրական գործունեության մեջ երկարատև ժամանակաշրջանի ընթացքում, ի տարբերություն շրջանառու (սպառվող) ակտիվների: Ընդհանրապես հիմնական ակտիվներն օգտագործվում են ապրանքների ստեղծման, ծառայությունների ձևավորման նպատակով և նախատեսված են վերավաճառքի համար բնականոն առևտրային գործունեության ընթացքում: Ճյուղերի մեծ մասում հիմնական ակտիվներին են վերաբերում հողը, շենքերը, արտադրական շինությունները, մեքենաները, սարքավորումները, փոխադրամիջոցները, կահույքը և այլն: Չնայած, գտնվելով դիլերների մոտ, թվարկված ակտիվները հանդիսանում են շրջանառվող կապիտալ: ԱՄՆ հարկային օրենսդրությամբ հիմնական ակտիվներ են համարվում նաև արժեթղթերում ներդրումները: Հիմնական ակտիվների վրա կատարված ծախսերը սովորաբար աստիճանաբար դուրս են գրվում շահույթից դրանց ծառայության սպասվող ժամկետի ընթացքում՝ հաշվեկշռային արժեքից տարեկան մասհանումների և դրանք ամորտիզացիոն մասհանումների վերագրելու միջոցով: Հիմնական ակտիվներն անվանվում են նաև հիմնական միջոցներ կամ հիմնական կապիտալ:

ԱԿՏԻՎՆԵՐ ՈՉ ԻՐԱՑՎԵԼԻ – ակտիվներ, որոնք դժվարությամբ են արագ իրացվում, և միայն կարելի է, առանց դրանց սկզբնական արժեքի էական կորստի, փոխարկել կանխիկ դրամական միջոցների միայն երկարատև ժամանակաշրջանի ընթացքում, ի տարբերություն բարձր իրացվելի ակտիվների: Անհրաժեշտության դեպքում ոչ իրացվելի ակտիվները կարող են փոխարկվել կանխիկ դրամի, այն էլ սկզբնական արժեքի մեծ կորուստներով: Հիմնական միջոցները, օրինակ, հանդիսանում են դժվար իրացվելի ակտիվներ:

ԱԿՏԻՎՆԵՐ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ – կազմված են կենտրոնական բանկի այն արտաքին ակտիվներից, որոնք կարող են օգտագործվել երկրի վճարային հաշվեկշռի դեֆիցիտի ֆինանսավորման համար: Պայմանականորեն որպես այդպիսին են համարվում կենտրոնական բանկի փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվները: Վճարային հաշվեկշռում գրանցվում է պահուստային ակտիվների փոփոխությունը, որոնք կապված են մոնետար ոսկու, ազատ փոխարկելի արտարժույթով կանխիկ միջոցների, թղթակցային հաշիվների, արժեթղթերի և այլ բարձր իրացվելի ակտիվների գործառնությունների հետ:

ԱԿՏԻՎՆԵՐ ՌԻՍԿԱՅԻՆ – 1) բանկային բոլոր ակտիվներն են, որոնք տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան, չունեն ռիսկի զրոյական գործակից: Համաձայն ներկայումս գործող օրենսդրության, ՀՀ տարածքում գործող բանկերի համար ռիսկի զրոյական գործակիցներ ունեն ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 2-ով սահմանված համապատասխան ակտիվները, 2) բանկային ակտիվներն են, որոնց արժեքը ենթարկվում է փոփոխությունների՝ կապված շուկայական իրադրության և ակտիվների որակի փոփոխությունների հետ:

ԱԿՏԻՎՆԵՐ ՍԱՌԵՑՎԱԾ – 1) ակտիվներ, որոնք չեն կարող իրացվել առանց զգալի կորուստների, 2) ակտիվներ, որոնք այս կամ այն պատճառով ժամանակավորապես չեն թույլատրվում օգտագործել կամ վաճառել (մինչև իրավաբանական գործընթացների սկիզբը կամ ավարտը): Երբեմն սեփականատերը չի կարող այդ ակտիվներն արտահանել՝ վերադաս մարմինների կողմից թույլատվություն չստանալու պատճառով:

ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ – հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով կազմակերպությունն անցկացնում է ակտիվների ու պարտավորությունների գույքագրում: Գույքագրման անցկացումը պարտադիր է՝ ա) տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ, բ) կազմակերպության վերակազմակերպման և լուծարման դեպքերում, գ) տարերային աղետների, հրդեհների և այլ պատճառների հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակների դեպքերում, դ) գույքի հափշտակման, փչացման և կորստի փաստերի բացահայտման դեպքերում, ե) նյութական պատասխանատու անձի փոփոխման դեպքերում: Պարտադիր գույքագրումների դեպքում գույքագրման ենթակա օբյեկտների կազմը, անցկացման կարգը և ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ այդ օբյեկտների կազմի, անցկացման կարգի և ժամկետների վերաբերյալ որոշումը կայացնում է կազմակերպության ղեկավարը:

ԱԿՏԻՎՆԵՐԻ ԶՈՒՏ ԱՐԺԵՔ – այն տվյալ կազմակերպության առանձին տեսակի արժեթղթերի հաշվարկային արժեքն է՝ մեկ բաժնետոմսի կամ պարտատոմսի հաշվով: Իրենից ներկայացնում է կազմակերպության զուտ ակտիվների արժեքի և շրջանառության մեջ թողարկված (սեփականատերերի մոտ գտնվող) արժեթղթերի՝ հասարակ բաժնետոմսերի, պարտատոմսերի կամ արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր թվի հարաբերակցությունը: Զուտ ակտիվների արժեքը հաշվարկելու համար անհրաժեշտ է ընդհանուր ակտիվների գումարից հանել բոլոր ոչ նյութական ակտիվները, պարտավորությունները և այն արժեթղթերը, որոնց գծով դեռևս կան նախկինից մնացած պարտքեր: Ակտիվների զուտ արժեքը հիմք է ծառայում նաև ներդրումները վերադարձնելիս ստացվող գումարը որոշելու համար:

ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – արդյունք են ակտիվների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, ոչ ընթացիկ ֆինանսական ներդրումների, ընթացիկ ֆինանսական ներդրումների) վերագնահատումից առաջացած արժեքի աճի և ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազումից չիրացված վնասների տարբերության: Հաշվապահական հաշ-

վառման մեջ ակտիվների վերագնահատումից առաջացած տարբերությունները նկարագրված են ՀՀՀՀՍ 16 «Հիմնական միջոցներ», ՀՀՀՀՍ 25 «Ներդրումների հաշվառում», ՀՀՀՀՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտներում:

ԱԿՏՈՒԱՐ – ապահովագրության իրականացման գծով մասնագետ է, որը մաթեմատիկական մեթոդներ է կիրառում երկարաժամկետ ֆինանսական խնդիրներ լուծելու համար՝ կապված հիմնականում կենսաթոշակների և կյանքի ապահովագրության ու ներդրումների հետ:

ԱԿՐԵԴԻՏԻՎ – անկանխիկ հաշվարկային գործառնությունների իրականացման ձև է: Այն բացվում է գնորդի կամ պատվիրատուի հանձնարարությամբ այն բանկում, որն սպասարկում է ապրանք վաճառողին (մատակարարին), ծառայություն մատուցողին և այլն: Ակրեդիտիվի բացումը հնարավորություն է տալիս ակրեդիտիվային հանձնարարականում նշված պայմաններով ստանալ վճար՝ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության համար պարտավորությունն անմիջապես կատարելուց հետո կամ գործընկերների միջև ֆինանսական հարաբերությունների կազմակերպման ու կարգավորման ամենաապահով եղանակներից է, հատկապես այն դեպքում՝ երբ գործընկերները նոր են և դեռևս չկա փոխադարձ լրիվ վստահություն: Մատակարարը միշտ ցանկանում է համոզված լինել, որ առաքված ապրանքների դիմաց ժամանակին կստանա գումարը, և որպես կանոն՝ պահանջում է վճարել նախքան ապրանքների առաքումը, իսկ գնորդը ցանկանում է ստանալ ապրանքները և համոզվել, որ ամեն ինչ կարգին է, հետո միայն վճարում կատարել: Այս դեպքում ակրեդիտիվը կարող է հանդիսանալ արդյունավետ լուծում: Ակրեդիտիվը գնորդի բանկի պարտավորությունն է՝ վճարել մատակարարին ապրանքների առաքման կամ ծառայությունների մատուցման դիմաց՝ վերջինիս կողմից ակրեդիտիվում նշված փաստաթղթերի ներկայացման դեպքում: Այս դեպքում և մատակարարի, և գնորդի համար գործարքի երկրորդ կողմ է դառնում բանկը: Գնորդը հնարավորություն է ստանում սահմանելու այն փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ են համոզվելու համար, որ ամեն ինչ կարգին է, և նոր վճարում կատարելու: Իսկ մատակարարը համոզված է լինում, որ ապրանք-

ները առաքելուց հետո անմիջապես կստանա գումարը գնորդի բանկից՝ վերջինիս ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը:

ԱԿՐԵԴԻՏԻՎ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ – դրանք են՝ գնորդ, մատակարար, գնորդի բանկ(թողարկող կամ էմիտենտ բանկ), մատակարարի բանկ (ծանուցող բանկ), հաստատող բանկ (հաստատված ակրեդիտիվի դեպքում):

ԱԿՐԵԴԻՏԻՎ ՀԵՏ ԿԱՆՉՎՈՂ – համարվում է այն ակրեդիտիվը, որը թողարկող (էմիտենտ) բանկը կարող է փոփոխել կամ վերացնել՝ առանց միջոցներ ստացողին նախապես տեղյակ պահելու (ծանուցելու): Ակրեդիտիվի հետ կանչելը էմիտենտ բանկի համար որևէ պարտավորություն չի ստեղծում միջոցներ ստացողի հանդեպ: Բանկը պարտավոր է հետ կանչվող ակրեդիտիվով վճարել կամ այլ գործառնություններ կատարել, եթե դրանց կատարման պահին ծանուցում չի ստացել ակրեդիտիվի պայմանների փոփոխության կամ վերացման մասին:

ԱԿՐԵԴԻՏԻՎ ՀԵՏ ՉԿԱՆՉՎՈՂ – համարվում է այն ակրեդիտիվը, որը չի կարող վերացվել կամ փոփոխվել առանց միջոցներ ստացողի համաձայնության: Էմիտենտ բանկի խնդրանքով, ակրեդիտիվային գործառնությանը մասնակցող բանկը կարող է հաստատել ու ճանաչել հետ չկանչվող ակրեդիտիվը (հաստատված ակրեդիտիվ): Նման հաստատումը նշանակում է էմիտենտ բանկի պարտավորության հանդեպ կատարող բանկի կողմից ակրեդիտիվի պայմաններին համապատասխան գործառնություն իրականացնելու լրացուցիչ պարտավորության ստանձնում:

ԱԿՐԵԴԻՏԻՎԻ ԲԱՑՈՒՄ –

- Գնորդի և մատակարարի միջև կնքվում է ապրանքների առքուվաճառքի կամ ծառայությունների մատուցման պայմանագիր:
- Գնորդը դիմում է իր բանկին (էմիտենտ բանկ)՝ ակրեդիտիվ թողարկելու համար:
- Գնորդի բանկը թողարկում է ակրեդիտիվ և այդ մասին ծանուցում մատակարարի բանկին:

- Մատակարարի բանկն այս մասին ծանուցում է իր հաճախորդին:
- Ծանուցումը ստանալով և համոզվելով, որ ամեն ինչ կարգին է՝ մատակարարը ապրանքներն առաքում է գնորդին:
- Մատակարարն ակրեդիտիվով սահմանված փաստաթղթերը ներկայացնում է իր բանկին՝ վճարում ստանալու համար:
- Մատակարարի բանկը փաստաթղթերն ուղարկում է գնորդի բանկին:
- Գնորդի բանկը մեկ անգամ ևս ստուգում է փաստաթղթերը և ակրեդիտիվի պայմաններին համապատասխանելու դեպքում գումարը փոխանցում մատակարարի բանկին:
- Մատակարարի բանկն իր հերթին ստացված գումարը փոխանցում է մատակարարի հաշվին:

ԱԿՐԵԴԻՏԻՎԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ – Գոյություն ունեն ակրեդիտիվի տարբեր տեսակներ:

1. *Ըստ երրորդ բանկի առկայության՝*

- հաստատված ակրեդիտիվ,
- չհաստատված ակրեդիտիվ:

Հաստատված ակրեդիտիվի դեպքում գնորդի բանկում բացված ակրեդիտիվը հաստատվում է նաև մեկ այլ՝ մատակարարի համար վստահելի բանկի կողմից, որը պարտավորվում է վճարել մատակարարին ակրեդիտիվում նշված գումարը, եթե առաջին բանկը ինչ-ինչ պատճառներով չկարողանա վճարել: Սա նվազեցնում է մատակարարի՝ գումարը չստանալու ռիսկը: Իսկ չհաստատված ակրեդիտիվի դեպքում ակրեդիտիվը բացում է գնորդի բանկն ու վերջինս էլ միայնակ կրում է գումարը վճարելու պարտականությունը:

2. *Ըստ ակրեդիտիվի պայմանների միակողմանի փոփոխության իրավունքի առկայության՝*

- հետ կանչվող ակրեդիտիվ,
- հետ չկանչվող ակրեդիտիվ:

Հետ կանչվող ակրեդիտիվի դեպքում գնորդը կարող է միակողմանիորեն՝ առանց մատակարարի համաձայնության, փոփոխել ակրեդիտիվի պայմանները: Քանի որ ակրեդիտիվի այս տեսակը բավականին ռիսկային է, այն հազվադեպ է կիրառվում: Իսկ հետ չկանչվող ակրեդիտիվի դեպքում գնորդը չունի այդպիսի իրավունք:

3. *Ըստ դրամական միջոցներով ապահովվածության՝*

- լրիվ ապահովված,
- մասնակի ապահովված,
- չապահովված:

Դրամական միջոցներով լրիվ ապահովված ակրեդիտիվը ենթադրում է, որ գնորդը ակրեդիտիվ բացելու ժամանակ իր հաշվին պետք է ունենա բավարար միջոցներ՝ ակրեդիտիվով նախատեսված վճարումն ամբողջությամբ կատարելու համար: Ընդ որում՝ բանկը սառեցնում է այդ միջոցները գործարքի ողջ տևողության ընթացքում: Այլ կերպ ասած՝ գնորդը զրկվում է դրանք օգտագործելու իրավունքից:

Դրամական միջոցներով մասնակի ապահովված ակրեդիտիվի դեպքում գումարի մի մասը վճարում է գնորդը, մյուս մասը՝ բանկը: Այսինքն՝ բանկը իրականացնում է նաև գործարքի ֆինանսավորում:

Դրամական միջոցներով չապահովված ակրեդիտիվի դեպքում գումարն ամբողջությամբ տրամադրվում է բանկի կողմից, այսինքն՝ իրականացվում է գործարքի ամբողջական ֆինանսավորում: Վերջին երկու դեպքերում տրամադրված ֆինանսավորման դիմաց բանկը գանձում է տոկոսագումարներ և կարող է պահանջել գրավի կամ որևէ այլ երաշխիքի առկայություն:

ԱԿՐԵԴԻՏԻՎՆ ԻՆՉ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ – Ակրեդիտիվը թույլ է տալիս գործարք կատարել առավել հարմար ու արդյունավետ եղանակով և ունի մի շարք առավելություններ և՛ գնորդների, և՛ մատակարարների, և՛ բանկերի համար:

1. Գնորդների համար.

- Ապրանքների առաքում նախքան վճարման կատարումը:
- Առաքման ժամկետների և պահանջվող փաստաթղթերի հստակություն:
- Վճարի իրականացում միայն մատակարարի կողմից ակրեդիտիվում նշված փաստաթղթերի ներկայացման դեպքում:

2. Մատակարարների համար.

- Նոր գործընկերների ներգրավման ու գործունեության ընդլայնման ապահովում:
- Ապրանքների առաքումից հետո սահմանված ժամկետում ու կարգով վճարը ստանալու վստահություն:

- Առանց իր համաձայնության գործարքի պայմանները փոփոխելու հնարավորության բացառում (հետ չկանչվող ակրեդիտիվի դեպքում):

3. Բանկերի համար.

- Եկամտի ստացում (միջնորդավճարներ, տոկոսագումարներ):
- Հաճախորդների շրջանակի ընդլայնում:

ԱԿՑԵՊՏ (ՀՈԺԱՐԱԳԻՐ) – անկանխիկ հաշվարկային գործառնությունների իրականացման ձև է, երբ պայմանագիր կողմերը փոխադարձ համաձայնության են գալիս որևիցե գործարքի կամ ծառայությունների մատուցում կատարելու առումով:

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ – պետական բյուջե վճարվող անուղղակի հարկ է, որը վճարում են (խաղողի և այլ տեսակի գինիների, գինեմյութի, գարեջրի, սպիրտի և սպիրտային խմիչքների, սիգարների և այլնի) ակցիզային հարկով հարկվող արտադրատեսակներից՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծող ֆիզիկական, իրավաբանական անձինք ու իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունները, ինչպես նաև Հայաստանի տարածքում դրանց արտադրության ու շրջանառության բոլոր փուլերում: Ակցիզային հարկը վճարվում է հարկման ենթակա ապրանքների իրացման հասույթից համապատասխան տոկոսադրույքաչափերով կամ հաստատագրված վճարներով, որոնք սահմանվում են ապրանքի գնի նկատմամբ: Ակցիզային հարկի գումարը ներառվում է վերոնշյալ արտադրատեսակների իրացումից հասույթում:

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐ – հարկ վճարողներ են համարվում.

- հարկման ենթակա ապրանքներ արտադրող (ներառյալ շշալցնող) և ներմուծող իրավաբանական ու ֆիզիկական անձինք: Ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք հարկ են վճարում ներմուծվող ապրանքների արժեքի կամ քանակի սահմանված չափերը գերազանցելու դեպքում: Օտարերկրյա իրավաբանական անձանց սահմանված կարգով գրանցված ներկայացուցչությունները և մասնաճյուղերը այդ գործարքների մասով ևս հանդիսանում են հարկ վճարող,

- իրենց հումքը արտադրողներին տրամադրող պատվիրատուները:

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՈՒՄ – արտադրողի և ներմուծողի կողմից հարկվող ապրանքներից դրոշմավորվում են ոգելից խմիչքները և ծխախոտը: Դրոշմանիշերի համար վճարված գումարը հանդիսանում է ակցիզային հարկի կանխավճար: Դրոշմավորումը չկատարելու, դրոշմանիշերը կեղծելու համար հարկատուները ենթարկվում են քրեական պատասխանատվության:

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – արտադրողի կողմից ապրանքների իրացման պահին և ներմուծողի կողմից ապրանքների ներմուծման պահին առաջացած պարտավորություններն են:

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ – հարկի դրույքաչափերը տարբեր են առանձին խումբ ապրանքների համար, դրանք արտահայտված են դրամներով: Ըստ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի՝ դրույքաչափերը ենթակա են փոփոխության:

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ – հումքի համար վճարված ակցիզային հարկի գումարներն արտադրողը կարող է հաշվանցել միայն այն դեպքում, երբ մատակարարի կողմից տրված հաշվարկային փաստաթղթերում կատարված է նշում ակցիզային հարկի մասին:

Հաշվարկային փաստաթղթերում պարտադիր նշվում են հետևյալ տվյալները.

- հաշվի հերթական համարը և դուրսգրման ամսաթիվը,
- ապրանք առաքող անձի անվանումը և իրավաբանական հասցեն, ֆիզիկական անձի անունը և ազգանունը, բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ),
- ապրանքներ կամ ծառայություններ ստացող անձի անվանումը և իրավաբանական հասցեն, ֆիզիկական անձի անունը և ազգանունը, բնակության վայրը,
- ապրանքների անվանումը և քանակը,
- ապրանքների գինը և ընդհանուր արժեքը,

- առանձին տողով՝ ակցիզային հարկի գումարը և դրույքաչափը,
- առանձին տողով՝ ԱԱՀ-ի գումարը:

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ – հաշվետու ժամանակաշրջանը դա հարկային տարվա մեկ ամիսն է: Հարկատուները ամսվա համար հաշվարկը ներկայացնում են հարկային մարմին հաջորդ ամսում՝ օրենքով նախատեսված ժամկետում:

Հարկատուները ակցիզային հարկը վճարում են պետ. բյուջե ակցիզային հարկով հարկվող ապրանքների ներմուծման դեպքում:

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆ – ակցիզային հարկով հարկվում է ՀՀ արտադրողի կողմից իրացվող և ՀՀ ներմուծվող հարկման ենթակա ապրանքների քանակը (ծավալը): Ապրանքների իրացման պահը որոշվում է հաշվեգրման մեթոդով:

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳ – ՀՀ-ից արտահանվող ապրանքներն ազատված են ակցիզային հարկից: Նախկինում վճարված ակցիզային հարկի գումարները վերադարձվում են կամ հաշվանցվում են հարկատուներին այլ հարկային պարտավորությունների հաշվին: Այդ գումարներն են՝

- արտադրողների կողմից հումք մատակարարողներին վճարված հարկը,
- արտադրող չհանդիսացող անձանց կողմից ապրանքների ձեռքբերման ժամանակ վճարված հարկի գումարները:

Հարկի գումարների վերադարձը կատարվում է տարածքային հարկային տեսչության կողմից՝ վճարողի դիմումի և արտահանումը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման դեպքում, օրենքով սահմանված օրերի ընթացքում:

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ – ակցիզային հարկից ազատված են.

- ՀՀ-ից բոլոր ապրանքների արտահանումը,
- մաքսային օրենսդրությամբ սահմանված հատուկ մաքսային ռեժիմներով իրականացվող ներմուծումը,
- մաքսային օրենսդրությամբ սահմանված ապրանքների քանակը կամ մաքսային արժեքը չգերազանցող չափով անհատ

ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները,

- բռնագրավված, պետության ենթակայության տակ անցած ապրանքների ներմուծումը և օտարումը:

ԱՃԻ ՏԵՄՊ ($К_{աճ.տ.}$) – ըստ որի դինամիկայի շարքի մակարդակների փոփոխության ինտենսիվությունը գնահատվում է ուսումնասիրվող ցուցանիշի ընթացիկ մակարդակը բազիսային կամ նախորդ մակարդակին հարաբերելու միջոցով: Այդ ցուցանիշը ընդունված է անվանել աճի տեմպ, որը բազիսային եղանակով հաշվարկվում է համեմատվող մակարդակը (y_i) բազիսային մակարդակին (y_1) հարաբերելու միջոցով.

$$К_բ = \frac{y_i}{y_1}.100\%, \quad (i = 2, 3,..., n)$$

Եթե ամեն անգամ համեմատության բազա ենք ընդունում նախորդ մակարդակը, ապա ստանում ենք շղթայական աճի տեմպեր.

$$К_{շղթ.} = \frac{y_i}{y_{i-1}}.100\%, \quad (i = 2, 3,..., n)$$

Աճի տեմպը ցույց է տալիս թե համեմատվող մակարդակը քանի՞ անգամ է մեծ բազիսային կամ նախորդ մակարդակից:

ԱՄՐԱԿՑՎԱԾ ԳՈՒՅՔ – մշտական օգտագործելու նպատակով հողին ամրակցված գույքն է: Ամրակցված գույքն ընդգրկում է՝ շենքերը, շինությունները, կոմունալ և օժանդակ կառույցները, բազմամյա տնկարկները և այլն: Այսինքն՝ գույք, որն ամրակցված է հողին, և որն անհնար է ազատել դրանից՝ առանց էական վնաս պատճառելու այդ գույքին, դրա որևէ մասին կամ հողին:

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ / ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ - հաշվետու ժամանակաշրջանում գրանցված ամուսնությունների /ամուսնալուծությունների/ քանակի և տվյալ ժամանակաշրջանի համար հաշվարկված մշտական բնակչության

թվաքանակի միջին ցուցանիշի հարաբերություններն են: Հաշվարկվում է 1000 բնակչի հաշվով: Բոլոր գործակիցների (արտահայտված պրոմիլներով) հաշվարկներն իրականացվում են դրանք համապատասխանեցնելով տարվան հավասարազոր հաշվարկին:

ԱՅԼ ՈՉ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՇԱՀՈՒՅԹ (ՎՆԱՍ) - արդյունք է տարբեր տեսակի գործարքներից ստացվող եկամուտների և պատճառվող ծախսերի միջև եղած տարբերության:

ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ - որը հաշվետու տարում ներառում է.

- անասնատեսակների աճեցումից ստացված մթերքի (միս, կաթ, բուրդ, ձու և այլն) արժեքը,
- թռչնի և այլ անասնատեսակների աճեցումից ստացված արժեքը (ծնի և քաշաճի արժեքը), առանց իրացված մսի արժեքի,
- մեղվաբուծության արտադրանքի արժեքի և այլն:

ԱՆԿԱԽ ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԲՐՈՔԵՐ – անհատ ձեռներեց, որն իր անունից այլ անձանց հաշվին, այլ անձանց անունից իր հաշվին, կամ այլ անձանց անունից և վերջիններիս հաշվին իրականացնում է արժեթղթերի առուծախ:

ԱՆԿԱԽ ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԴԻԼԵՐ – անհատ ձեռներեց, որն իր անունից և իր հաշվին իրականացնում է արժեթղթերի առուծախ:

ԱՆԿԱՆԽԻԿ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ – դրամաշրջանառության այնպիսի ձևեր են, որոնք կատարվում են առանց կանխիկ դրամի մասնակցության՝ գումարները վճարողի հաշվից ստացողի հաշվին փոխանցելու կամ պահանջների փոխադարձ հաշվանցման միջոցով: Անկանխիկ հաշվարկները հնարավորություն են տալիս զգալիորեն արագացնելու դրամական միջոցների շրջանառելիությունը (պտույտը), միաժամանակ կրճատելով դրանց շրջանառության ծախքերը: Այդպիսի հաշվարկները կատարվում են բանկերի, այլ վարկային կազմակերպությունների միջոցով, որոնցում բացված են համապատասխան հաշիվներ: Բանկերի

միջև անկանխիկ հաշվարկները կատարվում են հաշվանցման (քլիրինգի) կամ թղթակցային հաշիվների միջոցով: Անկանխիկ հաշվարկների միջոցներ են ծառայում հետևյալ վճարային փաստաթղթերը՝ վճարման պահանջագրերը, վճարման հանձնարարականները, վճարման պահանջագիր հանձնարարականները, ակրեդիտիվները, մուրհակները, չեկերը, վճարման էլեկտրոնային միջոցները, ինկասո հաշվարկները, վճարային քարտերը:

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԵՐԵՑ – ֆիզիկական անձ, որն իր անունից որպես զբաղմունք, կանոնավոր իրականացնում է տնտեսական գործունեություն, մատուցում է ծառայություններ և կատարում աշխատանքներ: Նա պետական լիազորված մարմիններից ստանում է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վկայական, որն էլ համարվում է նրա գրանցման փաստաթուղթը:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲԱՑԱՌՁԱԿ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ – իրենցից ներկայացնում են, անմիջականորեն, վիճակագրական դիտարկման ընթացքում որպես օբյեկտների այս կամ այն համակցության առանձին միավորների քանակական հատկանիշների չափերն արտահայտող բացարձակ մեծություններ:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ – ապահովագրության այն ձևն է, ըստ որի հատուցվում է բուժման ծախսերը և դրանով ապահովագրական վկայագրի սեփականատերը հնարավորություն է ստանում բուժվել հիվանդանոցում, երբ նրան նպատակահարմար է: Այն ընձեռնում է նաև հիվանդանոցի և խորհրդատուի այլընտրանքային հնարավորություն:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ – իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այն ձեռնարկությունն է, որը պատկանում է անհատին՝ անձնական սեփականության իրավունքով: Անհատական ձեռնարկության հիմնադիր փաստաթուղթը կանոնադրությունն է և այն կարող է գործել վարձու աշխատողների ընդգրկմամբ: Անհատական ձեռնարկությունը կարող է զբաղվել օրենսդրությամբ իր համար չարգելված տնտեսական գործունեության ցանկացած ձևերով:

ԱՆՁՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ – ըստ որի մի կողմը՝ ապահովագրողը, պարտավորվում է մյուս կողմի՝ ապահովագրվողի համար, պայմանագրով պայմանավորված վճարի (ապահովագրական պարգևի) դիմաց միանվագ կամ պարբերաբար տալու ապահովագրական գումարը ապահովագրված անձի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու դեպքերում: Ապահովագրական գումար ստանալու իրավունք ունի այն անձը, ում օգտին պայմանագիր է կնքվել: Անձնական ապահովագրության պայմանագիր կնքելիս ապահովագրվողի և ապահովագրողի միջև պետք է համաձայնություն ձեռք բերվի ապահովագրված անձի վերաբերյալ, ապահովագրված անձի կյանքում այն իրադարձության բնույթի վերաբերյալ, որի վրա հասնելու դեպքում իրականացվում է ապահովագրությունը, ապահովագրական գումարի չափի և պայմանագրի գործող ժամկետի վերաբերյալ:

ԱՆՆՈՒԻՏԵՏ – 1) կյանքի ապահովագրության տեսակ է, ըստ որի ապահովագրվողը ապահովագրողին մի նշանակալից գումար մուծելով, ստանում է պարբերական եկամուտ՝ սահմանված ժամանակաշրջանի ընթացքում: Աննուիտետների դեպքում ապահովագրվողը, սահմանված ամսաթվից սկսած, պարբերաբար վճարումներ է կատարում ապահովագրական վկայագրի սեփականատիրոջը՝ ամբողջ կյանքի ընթացքում: Աննուիտետը միաժամանակ համարվում է պետական փոխառության տեսակներից, ըստ որի յուրաքանչյուր ժամանակաշրջանում մարվում են այդ փոխառության գումարի մի մասը և վճարվում են հաշվարկված տոկոսները, կամ վերագրվում է այն դրամական միջոցներին, որոնք վճարվում են վարկառուների կողմից հավասարաչափ ժամկետներում ստացված վարկերի և հաշվարկված տոկոսների գծով, 2) դրամական ներհոսքերի գնահատման ամենապարզ մեթոդը աննուիտետների մեթոդն է, որը կիրառվում է այն ներգրավվող գումարների վերլուծության համար, որոնք ժամանակի միևնույն հատվածների համար հաստատուն մեծություններ են և միշտ ունեն դրական նշան՝ անկախ գործարքի տեսակից ու նպատակից: Վճարումների միջև ընկած ժամանակաշրջանը կոչվում է վճարային ժամկետ:

Վճարային պարտավորությունների իրականացումը կարող է կատարվել ինչպես վճարման ժամկետի սկզբին, այնպես էլ՝

նրա վերջին: Սովորաբար ավելի ընդունված է վերջին տարբերակը, այդպիսի վճարային պարտավորությունները կոչվում են սովորական անուիտետներ կամ պոստնումերանդո, իսկ վճարման ժամկետի սկզբին ավանսային (կանխավճարային) ձևով կատարված պարտավորությունները՝ բերված անուիտետներ կամ պրենումերանդո:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ – հողի, ամրակայված գույքի և հողի ու ամրակայված գույքի նկատմամբ իրավասությունների ամբողջությունն է:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ – որոնք զբաղվում են անշարժ գույքի գնահատմամբ և դրանց հետ կապված առևտրային գործարքների ֆինանսավորման ապահովմամբ:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎ (ՀԻՓՈԹԵՔ) – գրավի տեսակ, որի դեպքում գրավ դրված անշարժ գույքը կամ դրա մի մասը թողնվում է գրավատուի կամ երրորդ անձի ենթակայությանը և օգտագործմանը:

ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ (ՍՆԱՆԿԱՑՄԱՆ) ՌԻՍԿ – պահանջում է ուշադիր վերաբերմունք հեռանկարային առումով վտանգից խուսափելու համար: Եթե բանկը հատկացրել է չափազանց մեծ ծավալի վատորակ վարկեր կամ նրա փաթեթի շուկայական արժեքը հաճախակի իջնում է, ապա կապիտալը նկատելի կորուստ կկրի դրանք վաճառելիս: Իսկ եթե, դրան զուգընթաց, ներդրողներն ու ավանդատուներն իմանան այդ մասին և արագ հանեն իրենց միջոցները, ապա կարգավորող մարմինները ստիպված կլինեն այդպիսի բանկը հայտարարել անվճարունակ և փակել այն:

ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ – դա՝ 1) պարտքերը ժամանակին վճարելու անկարողությունն է, 2) իրավաբանական կամ ֆիզիկական անձի այնպիսի վիճակ, երբ նրա պարտավորությունները գերազանցում են ակտիվների արժեքը: Կազմակերպության նման վիճակը նշանակում է, որ նրա սեփական կապիտալը բացասական մեծություն է: Անվճարունակ անձն ի վիճակի չէ կուտակված պարտավորությունները մարելու իր ակտիվների

վաճառքի հասույթներից: Անվճարունակությունը հաճախ բերում է սնանկացման կամ լուծարման, թեպետև՝ ոչ միշտ: Եթե չկա անվճարունակ կազմակերպության ֆինանսական առողջացման իրատեսական ծրագիր, ապա դատարանը կարող է անվճարունակ կազմակերպությանը սնանկ ճանաչել և սկսել դրա լուծարման գործընթացը: Համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, բանկը համարվում է անվճարունակ, եթե՝ ա) սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը և ավելին, կամ՝ բ) ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները, կամ՝ գ) բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է կենտրոնական բանկի խորհրդի սահմանած բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից, կամ՝ դ) պարբերաբար խախտում է օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը:

ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿՈՒՄ – հարկման մի տեսակ է, երբ հարկային բեռը կրում են անձեր կամ կազմակերպություններ: Հայաստանում հիմնական անուղղակի հարկը ավելացված արժեքի հարկն է (ԱԱՀ), որը վճարում են ապրանքներ վաճառողները և ծառայություններ մատուցողները: ԱԱՀ-ի արժեքը մտցվում է ապրանքի և ծառայության գնի մեջ, այսինքն՝ հարկային բեռը հաղորդվում է վերջնական սպառողին: Անուղղակի հարկերի առավելություններից մեկն էլ այն է, որ համեմատաբար փոքր թվով աղբյուրների հարկումից կարելի է ստանալ զգալի տնտեսական արդյունք, ինչը հարկային վարչարարության տեսակետից գրավիչ է: Անուղղակի հարկ է նաև ակցիզային հարկը (տե'ս ԱԱՀ և ակցիզային հարկ):

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՉԱՓԻՉՆԵՐ – օգտագործվում են արտադրանքի արտադրության կամ այլ աշխատանքների (ծառայությունների) վրա գործադրված աշխատանքի քանակը աշխատանքային օրերով, ժամերով, րոպեներով հաշվելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ – ներառում են աշխատունակ բնակչության հատվածը: Աշխատանքային ռեսուրսներում ընդգրկված են տնտեսապես ակտիվ (այսինքն՝ բոլոր զբաղվածները և գործազուրկները) և տնտեսապես ոչ ակտիվ (չաշ-

խատող և աշխատանք չփնտրող աշխատունակ անձինք) բնակչությունը:

Աշխատանքային ռեսուրսները ձևավորվում են աշխատունակ տարիքի բնակչությունից (անձինք, ովքեր գտնվում են տարիքային այն սահմանում, որն ազգային օրենսդրությամբ ընդունված է որպես աշխատունակ, բացառությամբ I և II խմբի չաշխատող հաշմանդամների ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող չաշխատող քաղաքացիների), աշխատող կենսաթոշակառուներից և աշխատող դեռահասներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐ – ներառվում են փաստացի կատարված աշխատանքի դիմաց հաշվարկված աշխատավարձը՝ դրամական և բնեղեն արտահայտությամբ (անկախ ֆինանսավորման աղբյուրից և փաստացի վճարման ժամկետից), ներառյալ՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում չաշխատած ժամերի համար հաշվարկած դրամական գումարները (ամենամյա և լրացուցիչ արձակուրդները), տարբեր պարգևատրումները, լրավճարները, հավելավճարները, նյութական օգնությունը և սոցիալական բնույթի վճարումները:

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ – որոշվում է հաշվետու ժամանակաշրջանում վարծու աշխատողներին՝ կատարած աշխատանքների համար գործատուի կողմից դրամական կամ բնեղեն ձևով վճարած բոլոր վարձատրությունների գումարով: Աշխատողների աշխատանքի վարձատրությունը հաշվառվում է հաշվեգրված գումարներով և իր մեջ ընդգրկում է նաև սոցիալական ապահովագրության վճարները, եկամտահարկը և այլ վճարները, որոնք ենթակա են վճարման աշխատողների կողմից:

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ – որոշվում է աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների հաշվարկված գումարները (դրամական և բնեղեն արտահայտությամբ) հարաբերելով միջին աշխատավարձի հաշվարկման համար ընդունված աշխատող ների միջին ցուցակային թվաքանակին ու տվյալ ժամանակաշրջանի ամիսների թվին:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ – ապահովագրվող առարկաների իրական (շուկայական) արժեքն է ապահովագրության պայմանագրի կնքման պահին:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐ – ապահովագրության գծով միջնորդային գործունեություն իրականացնող, սահմանված կարգով լիցենզավորված կազմակերպություն կամ անհատ ձեռնեռեցն է, որը գործում է ապահովագրվողի հանձնարարությամբ և նրա անունից:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼ – ապահովագրական ընկերությունների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձ է, որը հանդես է գալիս ապահովագրողի անունից և նրա հանձնարարությամբ:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ – որոնք վաճառում են ապահովագրական պոլիսներ՝ վարկային կամ ֆինանսական ծառայությունների գծով:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ – ապահովագրական պատահարի ժամանակ ապահովագրության պայմանագրով նախատեսված հատուցման ենթակա առավելագույն գումարն է, որը սահմանվում է ապահովագրողի կողմից՝ ապահովագրության պայմանագրում նախատեսված յուրաքանչյուր հավանական պատահարի (պատահարների խմբի) համար: Տվյալ պատահարով առաջ բերված հատուցման վճարումից հետո ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարը պակասեցվում է վճարված հատուցման չափով, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ապահովագրական գումարը չի կարող գերազանցել ապահովագրական արժեքին:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – զբաղվում են, կյանքի, առողջության, դժբախտ պատահարներից ապահովագրությամբ, վարկերի տրամադրմամբ:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ – այն գումարն է, որն ապահովագրողը վճարում է ապահովագրվողին (շահառուին)՝ ապահո-

վագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած փաստացի վնասի կամ կորուստների դիմաց:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՇԱՀ – ապահովագրության հիմնական սկզբունքն է, ըստ որի անձը կարող է ապահովագրվել միայն այն դեպքում, երբ ապահովագրական վկայագրով (պոլիսով) նախատեսված պատահարի տեղի ունենալու դեպքում այդ անձը վնաս է կրում:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ – կյանքի և ոչ կյանքի ապահովագրական պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով ապահովագրավճարներից ձևավորված միջոցներն են:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ – գրավոր համաձայնագիր է ապահովագրողի և ապահովագրվողի միջև, ըստ որի ապահովագրվողը պարտավորվում է ապահովագրական պատահարի առաջացման դեպքում իրականացնել ապահովագրական հատուցում (ապահովագրվողին կամ այն անձին, որի օգտին կնքվել է պայմանագիրը), իսկ ապահովագրվողը՝ սահմանված ժամկետում կատարել ապահովագրավճարի մուծումներ: Ապահովագրական պայմանագիրը կարգավորում է նաև ապահովագրության արդյունքում կողմերի միջև առաջացող այլ հարաբերություններ:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ – պատահական դեպք, որի հետևանքով սկիզբ է առնում օրենսդրությամբ (պարտադիր ապահովագրության դեպքում) կամ ապահովագրության պայմանագրով (կամավոր ապահովագրության դեպքում) նախատեսված ապահովագրական հատուցում՝ վճարելու ապահովագրողի պարտավորությունը:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ – ապահովագրողի իրավունքների ու պարտավորությունների ամբողջությունն է՝ ապահովագրվողի գույքային և այլ շահերի ապահովագրության պայմանագրով նախատեսված պաշտպանության հետ կապված:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՐԳԵՎ – համարվում է ապահովագրության համար այն վճարը, որը ապահովագրվողը (շահառուն) պարտավոր է ապահովագրողին մուծել ապահովագրության պայմանագրում սահմանված կարգով և ժամկետներում: Ապահովագրական պարգևի չափը որոշելիս ապահովագրողը, հաշվի առնելով ապահովագրական օբյեկտի և ապահովագրական ռիսկի բնույթը, իրավունք ունի կիրառել ապահովագրական գումարի միավորից գանձվող պարգևը որոշող և իր կողմից մշակված ապահովագրական դրույքաչափեր:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊՈԼԻՍ (ՎԿԱՅԱԳԻՐ, ՀԱՎԱՍՏԱԳԻՐ, ԱՆԴՈՐԱԳԻՐ) – ապահովագրողի կողմից և իր ստորագրությամբ տրված մի փաստաթուղթ է ապահովագրվողին, նրա գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա, որը հաստատում է ապահովագրողի և ապահովագրվողի պայմանագրային փոխհարաբերությունները:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ – ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունն է: Կապված է գույքի (տուն, կահույք, ավտոմեքենա, գյուղատնտեսական կենդանիներ, հող, այգիներ և այլն) շահագործման և տարբեր տեսակի փոխադրումների հետ:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ – վկայագրերի տարբեր տեսակներ են՝ կախված հիմնականում ապահովագրվող ռիսկերի բնույթից:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ – ապահովագրության համար նախատեսվող այն գումարն է, որը ապահովագրվողը (շահառուն) ապահովագրության պայմանագրի, կամ պարտադիր ապահովագրության դեպքում, օրենսդրությանը համապատասխան, պարտավոր է մուծել ապահովագրողին:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐ – օրենսդրությամբ սահմանված կարգով թույլտվություն (լիցենզիա) ունեցող իրավաբանական անձինք են, որոնք կարող են ապահովագրության պայմանագրեր կնքել համապատասխան տեսակի ապահովագրություն իրականացնելու համար:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՏ – ապահովագրության պրակտիկայում դա պաշտոնական փաստաթուղթ է, որով ներկայացվում են վնասի առաջացման տեղը, ամսաթիվը և պատճառը:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ – պայմանավորված է այն իրողությունով, որ ապահովագրողն իրավունք չունի հրատարակել իր մասնագիտական գործունեության արդյունքում ապահովագրվողի, ապահովագրվածի և շահառուի, նրանց առողջական վիճակի, ինչպես նաև գույքային դրության մասին ստացած տեղեկությունները: Այդ գաղտնիությունը խախտելու համար ապահովագրողը պատասխանատվություն է կրում ՀՀ քաղաքացիական օրենքով նախատեսված համապատասխան հոդվածներով:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԳՆԱՅԻՆ ԱՐԺԵՔ – կանխիկ գումար է, որի ստանալու իրավունքն ունի ապահովագրվողը (ապահովադիրը)՝ կյանքի ապահովագրության գործողության դադարեցվելու դեպքում:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ – գործունեություն է, ըստ որի ապահովագրողները ստանձնում են պարտավորություն՝ հատուցել ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարների հետևանքով ապահովագրվողների կրած փաստացի վնասները կամ կորուստները:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ – միջոցառումների համալիր է, ըստ որի կարգավորված է ավանդատուների ներդրած միջոցների պաշտպանությունը՝ բանկի կամ ավանդապահ այլ կազմակերպության սնանկացման դեպքում: Միջազգային պրակտիկայում ավանդների ապահովագրության համակարգը ենթադրում է առևտրային բանկերի կողմից պարտադիր կարգով ապահովագրական պարգևների մուծումներ և նախատեսում է բանկերի սնանկացումների լուծման բազմաթիվ տարբերակներ: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսդրության, բանկերը պարտավոր են պարտադիր ապահովագրության միջոցով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ եղանակներով, ապահովել քաղաքացիների ավանդների վերադարձը: Նման եղանակ ներկայումս նախատեսված է «ՀՀ կենտրոնական

բանկի մասին» ՀՀ օրենքով: Համաձայն այդ օրենքի, բանկերը, սկսած 2003թ. հուլիսի 1-ից, պարտավոր են տվյալ օրենքով սահմանված կարգով երաշխավորել ֆիզիկական անձանցից ներգրավված բոլոր տեսակի դրամային և արտարժութային ավանդները՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանած չափով: Բանկի կողմից իրավաբանական անձանց ավանդների վերադարձն ապահովելու եղանակները սահմանվում են բանկային ավանդի պայմանագրով:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՌԸ – դա միջոց է ապագայի համար կուտակումներ անելու և միաժամանակ ֆինանսական պաշտպանվածություն ձեռք բերելու համար: Ապահովագրավճարներն ապահովագրվողների կողմից մուծվում են սահմանված ժամանակաշրջանի վերջում, իսկ եթե ապահովագրական վկայագրի սեփականատերը մահանում է ավարտի ժամկետից առաջ, ապա ամբողջ ապահովագրական գումարը վճարվում է ընտանիքին՝ առանց լրացուցիչ ապահովագրավճարներ մուծելու:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՄԱՎՈՐ – ապահովագրության այն ձևն է, որն իրականացվում է կողմերի ազատ կամքով կնքված ապահովագրական պայմանագրի հիման վրա:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿՅԱՆՔԻ – ապահովագրության տեսակ, որի դեպքում հատուցումը վճարվում է հետևյալ դեպքերում. ա) ապահովագրված անձի մահվան դեպքում, երբ լրանում է ապահովագրված անձի ապահովագրության պայմանագրով սահմանված տարիքը, բ) երբ ապահովագրության պայմանագրով ապահովագրված անձի (շահառուի) համար նախատեսվում են կենսաթոշակային հատուցումներ՝ կուտակելի ռենտա, տարեվճար, գ) ընթացիկ հատուցումներ՝ ապահովագրության պայմանագրի գործողության ժամանակահատվածում:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ – ըստ որի, պայմանագրով կարող է ապահովագրվել միայն ապահովագրվողի (ապահովադրի) ձեռնարկատիրական ռիսկը և միայն նրա օգտին:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ – ապահովագրվողի կողմից երրորդ անձանց հանդեպ՝ նրանց կյանքին, առողջությանը, գույքին և այլնին պատճառած վնասից առաջացող պարտավորությունների ապահովագրություն է: Հայտնի են փոխադրամիջոցների, սեփականատերերի, երրորդ անձանց հանդեպ պատասխանատվության, բժիշկների, կառուցողների պրոֆեսիոնալ պատասխանատվության և պատասխանատվության ապահովագրության այլ տեսակներ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՏԱԴԻՐ – ապահովագրության այն ձևն է, ըստ որի, կողմերը օրենսդրորեն պարտավորվում են մտնել ապահովագրական հարաբերությունների մեջ: Օգտագործվում է, մասնավորապես, սոցիալական ուղղվածություն ունեցող, ինչպես նաև պատասխանատվության ապահովագրության տեսակների գծով: Պարտադիր ապահովագրությունն ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքելու միջոցով իրականացնում է այն անձը (ապահովագրվողը), ում վրա դրված է այդպիսի ապահովագրության պարտականությունը: Պարտադիր ապահովագրությունն իրականացվում է ապահովագրվողի հաշվին, բացառությամբ ուղևորների պարտադիր ապահովագրության, որն օրենքով նախատեսված դեպքերում կարող է իրականացվել նրանց հաշվին:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԿԵՐԻ – տրամադրված վարկերի գծով հաճախորդների (փոխառուների կամ դեբիտորների) անվճարունակ դառնալու հետևանքով առաջացած ծախսերի փոխհատուցումն է:

ԱՊԱՀՈՎԱԴԻՐ (ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂ) – ապահովագրողի հետ ապահովագրական պայմանագիր կնքած անձն է:

ԱՊԱՀՈՎԱԴԻՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԾԱԽՍԵՐ – ապահովադիրների կողմից սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին հաշվարկված սոցիալական վճարից նվազեցվում են սոցիալական վճարների հաշվին կատարված ծախսերը՝ ժամանակավոր անաշխատունակության, այդ թվում՝ ընտանիքի հիվանդ անդամի, հղիության և ծննդաբերության,

երեխայի ծննդյան միանվագ և թաղման նպաստները, ինչպես նաև վերականգնվող միջոցները:

ԱՊԱՊԵՏԱԿԱՆԱՑՈՒՄ – օրենսդրության ակտերով սահմանված դեպքերում և կարգով պետական տնտեսավարող սուբյեկտների ու անավարտ շինարարության օբյեկտների տրամադրումն է քաղաքացիներին, նրանց խմբերին, օտարերկրյա անձանց՝ վարձակալության, ոչ պետական տնտեսավարող սուբյեկտներ կամ պետական մասնակցությամբ տնտեսավարող սուբյեկտներ ստեղծելու համար, առանց պետական սեփականության իրավունքի օտարման:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ – իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպություն է, որն առևտուրն իրականացնում է իր սահմանած կանոններով, որոշակի տեղում և ժամանակահատվածում՝ հրապարակային սակարկությունների ձևով:

ԱՊՐԱՆՔՆԵՐ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ – տվյալ կազմակերպության կողմից վաճառքի համար թողարկված արտադրանքն է, վերավաճառքի համար գնված ապրանքները, ինչպես նաև չօգտագործված և վաճառքի համար պահվող հիմնական միջոցները և այլ ակտիվները:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ – այն իր մեջ ներառում է այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են՝ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, անտառային տնտեսությունը, շինարարությունը և ապրանքների արտադրության գործունեության այլ տեսակները:

ԱՌԵՎՏՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ – հաշվետվություն է, որում արտացոլվում են միջազգային առևտրում տվյալ երկրի մասնակցության արդյունքները և արտահայտում է այլ երկրների հետ առևտրական կապերը: Առևտրի հաշվեկշիռը տվյալ երկրի վճարային հաշվեկշռի բաղկացուցիչ մասն է և հաշվարկվում է որպես ապրանքների արտահանման և ներմուծման տարբերություն: Հաշվեկշիռը կոչվում է ակտիվային, եթե երկրից արտահանվող ապրանքների արժեքը գերազանցում է ներմուծվող ապրանքների արժեքին, իսկ հակառակ դեպքում այդ հաշվեկշիռը կոչ-

վում է պասիվային: Առևտրի հաշվեկշիռը բնութագրում է ազգային ապրանքային տնտեսության զարգացվածության աստիճանը, այն վերաբերում է միայն իրական ապրանքատեսակներին և չի ընդգրկում ծառայությունները:

ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ - ներառում է մանրածախ և մեծածախ առևտրի շրջանառությունները և ավտոմեքենաների առևտուրը: Առևտրի շրջանառության ցուցանիշը հաշվարկվում է առանց ավելացված արժեքի հարկի և անուղղակի հարկերի:

ԱՌՀԱՇԻՎ ՏՐՎԱԾ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄ – գործուղման կամ կազմակերպության անունից վճարումներ կատարելու նպատակով կազմակերպության աշխատակիցներին կամ կառավարման մարմիններում ներգրավված անձանց տրված կանխիկ դրամը:

ԱՍԻՄԵՏՐԻԱՅԻ ԳՈՐԾԱԿԻՑ (K_A) – որոշվում է ներքոնշյալ գործակցի օգնությամբ, որն իրենից ներկայացնում է թվաբանական միջինի (x) ու մոդայի (M_0) միջև եղած տարբերության և միջին քառակուսային շեղման (σ) հարաբերակցությունը՝

$$K_A = \frac{\bar{x} - M_0}{\sigma} . 100\%$$

ԱՎԱԼ – մուրհակային հանձնարարական է, երաշխիք, որի համաձայն հանձնարարություն ստանձնած անձն (ավալիստը՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ) իր վրա է վերցնում մուրհակի դիմաց վճարման պարտականությունը նրա տիրոջ փոխարեն: Հաճախ ավալ տրամադրվում է բանկի կողմից:

ԱՎԱՆԴ – 1) այն միջոցներն են (դրամական գումար, չեկեր, մուրհակներ և կանխիկի արագ վերածվող այլ վճարային փաստաթղթեր), որոնք թողնվել են որևէ բանկում կամ այլ ֆինանսական կազմակերպությունում՝ պահելու կամ տոկոսներ (տոկոսային եկամուտ) ստանալու նպատակով, 2) այն արժեթղթերն են, որոնք գտնվում են բանկում կամ այլ ֆինանսական կազմակերպությունում, կամ հանձնվել են մասնավոր անձի՝ կոնկրետ նպատակով, 3) այն դրամական գումարն է, որը հանձնվել է բրոքերին կամ դիլերին՝ հնարավոր առևտրային

կորուստներից պաշտպանվածության ապահովման համար, 4) այն դրամական գումարն է, որը մուծվել է որպես պայմանագրային պարտավորությունները կատարելու մտադրության և պայմանագիրը չկատարելու դեպքում՝ հակառակ կողմին պաշտպանելու վկայագիր, 5) այն դրամական գումարն է կամ արժեթղթերը, որոնք պարտապանը (դեբիտորը) դնում է դատական կամ վարչական մարմիններում՝ պարտատիրոջը հանձնելու կամ հայցի ապահովման համար:

ԱՎԱՆԴ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ – 1) ավանդ, որը ներդրվում է բանկում (ավանդային հաշվում) որոշակի ժամկետով: Ավանդատուն կարող է հաշվից հանել ավանդը պայմանագրով սահմանված ժամկետը լրանալիս կամ նախնական ծանուցումից հետո (սովորաբար 30 և ավելի օր առաջ): ԱՄՆ-ում ժամկետային ավանդներն ընդունվում են դրանք հանելու մասին առնվազն 30 օր առաջ ծանուցման պայմանի առկայության դեպքում: Գործնականում ժամկետային ավանդները հաճախ ներկայացվում են որպես նախնական ծանուցմամբ ավանդներ: Ժամկետային ավանդների տոկոսադրույքներն ավելի բարձր են, քան ցպահանջ ավանդներինը: Ավանդի վաղաժամկետ ետ վերցնելը ավանդատուին կբերի տոկոսների (տոկոսային եկամտի) ստացման կորստի: Այն դեպքերում, երբ ժամկետային կամ այլ տեսակի ավանդ (որը ցպահանջ չէ), ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև ժամկետի ավարտը կամ բանկային ավանդի պայմանագրում նշված պահանջների վրա հասնելը, ապա ավանդատուին տոկոսները վճարվում են բանկի կողմից ցպահանջ ավանդների համար սահմանված չափերով (եթե տոկոսների այլ չափ նախատեսված չէ պայմանագրով): Այն դեպքերում, երբ ավանդատուն ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ժամկետային ավանդի գումարը, ապա բանկի կողմից պայմանագիրը համարվում է երկարաձգված ցպահանջ ավանդի պայմաններով (եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով): 2) բանկերում հաճախորդների կողմից ներդրվող և որոշակի ժամկետով ձևակերպվող ավանդներն են:

ԱՎԱՆԴ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ – դրամական միջոցներ են, որոնք որոշակի ժամկետով դրվել են խնայողական հաշվում՝ (մի քանի շաբաթով, ամսով կամ տարով): Խնայողական ավանդի

տարբերակիչ առանձնահատկությունն ավանդի առկայության մասին վկայականն է, որը տրվում է ավանդատուին: Որոշ երկրներում տարբերվում են երկու տեսակի խնայողություններ. *խնայողական ավանդներ*՝ միջոցները դուրս հանելու վերաբերյալ ծանուցման (տեղյակ պահելու) սահմանված ժամկետով և *խնայողական ավանդներ*՝ ծանուցման պայմանագրային ժամկետով:

ԱՎԱՆԴԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – դրանք բանկերի, վարկային կազմակերպությունների կողմից ավանդների ձևով դրամական միջոցները ներգրավելու և դրանք տեղաբաշխելու գծով գործառնություններն են կամ այլ կերպ՝ ներգրավված ավանդների հաշվին դրամական միջոցների վարկավորումը:

ԱՎԱՆԴԱՅԻՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ – վարկատու կազմակերպության փաստաթուղթ է, որը հավաստում է միջոցների ավանդագրումն ու դրա դիմաց սերտիֆիկատների թողարկմամբ պայմանավորված որոշակի չափով տոկոսային եկամուտ ստանալու ներդրողի իրավունքը:

ԱՎԱՆԴՆԵՐ ՑՊԱՀԱՆՋ – հաճախորդների բանկերի պահպանմանը հանձնված և որևէ գործարք իրականացնելիս բանկից պահի դրությամբ (առանց ժամկետը նշելու) հանվող միջոցներն են: Նմանատիպ ավանդները բանկի կողմից ներգրավվում են սովորականից ավելի ցածր տոկոսադրույքով կամ առանց տոկոսադրույքի:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔ – իրացված ապրանքների (կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների) արժեքի և սահմանված կարգով արտադրության ու շրջանառության ծախսերին վերագրվող նյութական ռեսուրսների, վառելիքի, աշխատանքների ու ծառայությունների, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեքի տարբերությունն է:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ – անուղղակի հարկ է, որը վճարվում է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Այն ակցիզային հարկով չհարկվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման գնի նկատմամբ սահմանված տոկոսադրույքաչափերով հարկատեսակ է, որի վճարողներ են համարվում տնտեսական (ձեռնարկատիրական) ինքնուրույն գործունեություն վարող ու տարբեր գործարքներ իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները: Ավելացված արժեքի հարկը վճարվում է հարկման ենթակա ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման հասույթից:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐ – հանդիսանում են տնտեսական գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձինք: Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք ՀՀ տարածք ապրանքներ ներմուծելիս համարվում են ԱԱՀ վճարող այն դեպքում, երբ ներմուծվող ապրանքների արժեքի կամ քանակի սահմանված չափերը գերազանցում են: Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձինք ԱԱՀ վճարող չեն համարվում այն դեպքում, երբ օրենքով սահմանված կարգով ճանաչվել են կամ պարզեցված հարկ վճարող կամ հաստատագրված վճար վճարող:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – դրանք օրենքով սահմանված արտոնություններ են որոշ մատակարարվող, ներմուծվող ապրանքների և մատուցվող ծառայությունների համար: Դրանց առանձնահատկություններն են՝

- չեն հարկվում ԱԱՀ-ով,
- արտոնություններից օգտվող գործարքների իրականացման ընթացքում հարկատուի կողմից վճարված ԱԱՀ-ի գումարները չեն հաշվանցվում,
- արտոնություններից օգտվող գործարքների շրջանառությունը չի ներառվում հարկվող շրջանառության մեջ:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ – հարկատուների նկատմամբ նախատեսված են տույժեր հարկ չվճարելու, հարկվող շրջանառությունը թաքցնելու, սխալ հաշվարկելու, հարկային հաշիվները խախտումով լրացնելու,

հաշվարկները և տեղեկությունները ժամանակին չներկայացնելու համար:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ – ընդհանուր դրույքաչափը (20%-ն է), որը կիրառվում է ապրանքների և ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ, դրանց իրացման լրիվ արժեքի հատուցման գումարի մեջ է (ներառյալ 20% դրույքաչափը) ԱԱՀ-ի գումարը որոշվում է նաև 16,67% հաշվարկային դրույքաչափով (մանրածախ շրջանառությունում), որն իրենից ներկայացնում է 20% / 120% x 100% հարաբերակցությունը: Ավելացված արժեքի հարկի ընդհանուր դրույքաչափը ենթակա է փոփոխման ըստ համապատասխան օրենքի:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ – հարկատուները ԱԱՀ-ի գումարները գանձում են գնորդներից: Իրենց հերթին նրանք վճարում են ԱԱՀ-ով ձեռք բերված ապրանքների և ծառայությունների համար: Սակայն հարկատուները բյուջե են վճարում գանձված և իրենց կողմից վճարված ԱԱՀ-ի դրական տարբերությունը, այսպիսով հետ ստանալով իրենց կողմից վճարված ԱԱՀ-ի գումարները:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿ – հարկատուները հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված գործարքների հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարի և այդ ժամանակաշրջանի հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարի դրական տարբերությունը: Հաշվանցման համար պարտադիր են երկու պայման՝ մատակարարներից ստացած հարկային հաշիվը և դրանց դիմաց կատարված վճարումը, ընդ որում կանխիկ ձևով վճարված գործարքների մասով օրենքով սահմանված են որոշ սահմանափակումներ:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՐԿՎՈՂ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ – ԱԱՀ-ով հարկվում է ՀՀ տարածքում մատակարարվող ապրանքների, մատուցվող ծառայությունների, ինչպես նաև ներմուծվող ապրանքների ամբողջ արժեքը (շրջանառությունը):

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՎճԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ – ԱԱՀ-ի ընդհանուր հաշվետու ժամանակաշրջանն է եռամսյակը: Որոշ հարկատուների համար հաշվետու ժամանակաշրջանը կարող է հավասարեցվել մեկ ամսվա: Բոլոր հարկատուները հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային տեսչություն են ներկայացնում իրենց ԱԱՀ-ի հաշվարկը և համապատասխան գումարը փոխանցում պետական բյուջե:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿՄԱՆ (ԱԱՀ) ՕԲՅԵԿՏ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ – ԱԱՀ-ով հարկման օբյեկտ հանդիսացող գործարքները դասվում են երկու խմբի, և դրանցից յուրաքանչյուրն ունի յուրահատուկ գանձման կարգ՝

- ապրանքների մատակարարում և ծառայությունների մատուցում,
- ապրանքների ներմուծում:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ – այն ապրանքների մատակարարումը, ներմուծումը և ծառայությունների մատուցումը, որոնց վրա չեն տարածվում ԱԱՀ-ի արտոնություններ, համարվում են հարկվող գործարքներ: Հարկվող գործարքների շրջանառությունը կոչվում է հարկվող շրջանառություն:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ – այդ շրջանառությունն արտոնություններ չունեցող մատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների արժեքն է դրամական արտահայտությամբ:

Դրամական հատուցման դեպքում շրջանառությունը հավասար է վաճառքի գնին առանց ԱԱՀ-ի: Ակցիզային հարկով հարկվող ապրանքների համար շրջանառության մեջ ներառվում է նաև այդ հարկի գումարը:

Անհատույց, մասնակի հատուցման և փոխանակման դեպքերում շրջանառությունը հավասար է ապրանքների և ծառայությունների շուկայական գնին՝ առանց ԱԱՀ-ի:

Ապրանքների ներմուծման դեպքում հարկվող շրջանառությունը հավասար է արտոնություններ չունեցող ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի և ակցիզային հարկի գումարին:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՌՔՆԵՐ – հարկվող չեն համարվում մասնավորապես հետևյալ գործարքները.

- այն ծառայությունները, որոնց համար գանձվում է պետական տուրք,
- ՀՀ-ում տեղաբաշխված ստորաբաժանումների միջև ապրանքների և ծառայությունների փոխանցումը,
- ձեռնարկությունների սեփականության իրավունքի փոփոխման (այդ թվում՝ սեփականաշնորհման), ինչպես նաև ապապետականացման գործարքները,
- ձեռնարկությունների՝ օրենքով սահմանված կարգով վերակազմակերպման գործարքները,
- ձեռնարկությունների և ձեռներեցների գույքի իրացման գործարքները դատարանի կողմից նրանց անվճարունակ ճանաչելու դեպքում,
- դրամական ձևով տրվող ֆինանսական օգնությունը և շահաբաժինները,
- ֆիզիկական անձանց կողմից օրենքով սահմանված անձնական օգտագործման իրերի ներմուծումը,
- բյուջետային հիմնարկների կողմից ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը այն մասով, որից հասույթն ամբողջությամբ հաշվերգրվել է պետական կամ համայնքների բյուջեների օգտին:

ԱՎԻԶՈ – մեկ կազմակերպության կողմից այլ կազմակերպությանը փոստային, հեռագրային կամ ինտերնետային ցանցով պաշտոնական հաղորդագրումը, ծանուցումը կամ տեղեկացումն է փոխադարձ հաշվարկներում փոփոխությունների, կատարված գործառնությունների, հանձնարարությունների, վճարումների մասին: Ավիզոն ամենից հաճախակի կապված է դրամական փոխադարձ հաշվարկների և դրամական միջոցների շարժի հետ: Օրինակ, եթե բանկը համաձայն ավանդատուի հանձնարարության, կատարել է դրամական միջոցների փոխանցում մեկ հաշվից այլ հաշվի, այդ մասին տեղյակ է պահվում ավանդատուին ավիզոյի օգնությամբ:

ԱՎՈՒՐԱՆԵՐ – 1) ակտիվներ (դրամական միջոցներ, մուրհակներ, չեկեր, ակրեդիտիվներ), որոնց հաշվին կարող են վճարում-

ներ կատարվել, 2) բանկի միջոցներն են օտարերկրյա արժույթով, արժեթղթերով, ոսկով, չեկերով, մուրհակներով, որոնք գտնվում են օտարերկրյա բանկերի հաշիվներում:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼ – այն ամբողջովին և ըստ դրա առանձին ճյուղերի որոշվում է արժեքային արտահայտությամբ, որպես իրավաբանական անձանց և դրանց առանձնացված ստորաբաժանումների (անկախ սեփականության ձևից) թողարկած արտադրանքի ու կատարված արդյունաբերական բնույթի աշխատանքների և ծառայությունների ծավալների հանրագումար: Արտադրանքի ծավալի մասին տվյալները բերվում են համապատասխան տարվա գործող գներով: Արժեքային արտահայտությամբ արդյունաբերական արտադրանքի ծավալի ամփոփ տվյալների մեջ ներառվում են խոշոր, միջին, փոքր կազմակերպությունների թողարկած արդյունաբերական արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալի վերաբերյալ տվյալները: Կազմակերպության արդյունաբերական արտադրանքի ծավալը որոշվում է առանց ներքին շրջանառության արժեքի:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ ԻՆԴԵՔՍ – այն հարաբերական ցուցանիշ է, որը բնութագրում է արտադրվող նյութական բարիքների ծավալների փոփոխությունը համեմատվող ժամանակաշրջաններում: Արդյունաբերական արտադրանքի գնահատումը, համադրելի գներով, իրականացվում է անմիջականորեն կազմակերպություններում՝ արդյունաբերողների գների հիման վրա: Իրացումից ավելացված արժեքի հարկը, իրացումից ակցիզները հաշվի չեն առնվում արդյունաբերական արտադրանքի ծավալում և ֆիզիկական ծավալի ինդեքսի հաշվարկման ժամանակ:

ԱՐԺԵԹՂԹԵՐ – դրանք վկայություն են որոշակի չափով ներդրած կապիտալի կամ տրամադրած փոխառության մասին, որը տալիս է կանոնավոր եկամուտ (շահաբաժին կամ տոկոսային եկամուտ) ստանալու իրավունք:

ԱՐԺԵԹՂԹԵՐ ԱԶԱՏ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ – այն արժեթղթերն են, որոնց սեփականատերերի փոփոխումը չի վե-

րահսկվում դրանց թողարկողի կողմից, այլ կարող է հաշվառվել դիվիդենտ (շահաբաժին) տալու նպատակով:

ԱՐԺԵԹՂԹԵՐ ԵԿԱՄՏԱԲԵՐ – արժեթուղթ է կամ բաժնետոմսերը, որոնք ձեռք են բերվել, առաջին հերթին, կայուն և համեմատաբար բարձր եկամուտ ստանալու նպատակով, որը կարելի է ակնկալել դրանց ներդրման գծով: Դրանք կարող են լինել հաստատագրված եկամտով պետական արժեթղթերը կամ ցանկացած սովորական (հասարակ) բաժնետոմսը, որն ապահովում է եկամուտի ստացում:

ԱՐԺԵԹՂԹԵՐ ԹՈՂԱՐԿՈՂ (ԷՄԻՏԵՆՏ) – իրավաբանական անձ է, որն արժեթղթերը շրջանառության մեջ է բաց թողնում իր անունից և պարտավորություն է կրում այդ արժեթղթերը ձեռք բերողների առջև:

ԱՐԺԵԹՂԹԵՐ ՉԳՆԱՆՇՎՈՂ – արժեթղթեր (բաժնետոմսեր և պարտատոմսեր), որոնք չեն վաճառվում կամ չեն գնանշվում ոչ մի տեսակի ֆոնդային բորսայում: Այդպիսի արժեթղթերով առևտուր են անում ցածր պահանջներով բորսայական կամ արտաբորսայական շուկաներում: Լոնդոնի արժեթղթերի բորսայում գոյություն ունեն կանոններ, որոնք կարգավորում են ոչ մեծ ընկերությունների չգնանշվող արժեթղթերի հետ պատահական գործարքները: Չգնանշվող արժեթղթերը սովորաբար հաշվեկշռում արտացոլվում են դրանց անվանական արժեքով կամ շուկայական արժեքով (եթե այն կարելի է գնահատել):

ԱՐԺԵԹՂԹԵՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ – այն արժեթղթերն են, որոնց սեփականատերերի փոփոխումը կատարվում է դրանք թողարկողի մասնակցությամբ կամ վերահսկվում է վերջինիս կողմից:

ԱՐԺԵԹՂԹԵՐ ՏԱՐԱԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – որոնք գնում են նոր տեղաբաշխվող պետական կամ կորպորացիոն արժեթղթեր (բաժնետոմսեր, պարտքային արժեթղթեր, դրամական շուկայի միջոցներ և այլն) և այն վերավաճառում են ներդրողներին:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ – որտեղ թողարկողը ներդրողներին է վաճառում նոր թողարկված արժեթղթերը, և ի տարբերություն արժեթղթերի երկրորդային շուկայի (որտեղ գնվում և վաճառվում են նախկինում թողարկված արժեթղթերը), այն արժեթղթերի իրացման գործընթացի առաջին փուլն է: Դրանց առաջին անգամ հայտնվելն է շուկայում, որը գործում է որոշակի կանոններով և պահանջներով: Արժեթղթերի սկզբնական վաճառքին օգնող միջնորդներից են երաշխավորողները, բրոքերները և դիլերները:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՐՏԱԲՈՐՍԱՅԱԿԱՆ ՇՈՒԿԱ – 1) ֆոնդային բորսաների շրջանցմամբ և բանակցությունների անցկացմամբ, արժեթղթերով կատարվող առևտուր է, ըստ որի մեկ գնորդ և մեկ վաճառող իրենց գործակալների միջոցով երկուստեք համաձայնության են գալիս արժեթղթի ընդունելի գնի շուրջը, 2) շուկա է, որտեղ արժեթղթերով գործառնություններն իրականացվում են հեռախոսով և դիլերներին միացնող համակարգչային ցանցով, այլ ոչ թե ֆոնդային բորսայի առևտրային սրահում:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԲԱՑ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ – արժեթղթերի տեղաբաշխումն է անհայտ ներդրողների շրջանում:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԲԻԶՆԵՍ – ներառում է այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են՝ բանկերի կողմից արժեթղթերի թողարկումը և ֆինանսական շուկայում վաճառքը, ուրիշ էմիտենտների արժեթղթերի հետ երկրորդային շուկայում գործարքների իրականացումը, ձեռնարկությունների սեփականաշնորհման հետ կապված ծառայությունների մատուցումը և այլն: Այս դեպքում բանկի եկամուտները ձևավորվում են արժեթղթերի կուրսային տարբերությունների, ծառայությունների մատուցման դիմաց կոմիսիոն (միջնորդային) վարձատրության և այլ ձևերով:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԱՋՈՒԱԳԻՐ – արժեթղթերի իրացման թույլտվություն ստանալու համար արժեթղթեր թողարկողի կողմից ներկայացվող փաստաթուղթ է, որում ներառված են տեղեկատվություններ՝ թողարկողի գործունեության, նրա պարտավորությունների, թողարկման նպատակի և ներդրողների

իրավունքների վերաբերյալ, ինչպես նաև այլ տեղեկատվություններ:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ (ԷՄԻՍԻԱ) – շրջանառության մեջ արժեթղթեր բաց թողնելն ու դրանց առաջին իրացման գործառնությունն է:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ – հասկանում ենք դրանց առքը, վաճառքը և այլ գործառնությունները, որոնք հանգեցնում են արժեթղթերի տիրոջ փոփոխմանը: Արժեթղթեր թողարկելու իրավունք ունեն բաժնետիրական ընկերությունները և վարկային կազմակերպությունները: Արժեթղթեր են համարվում բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերը, պարտատոմսերը, դեպոզիտային սերտիֆիկատները, մուրհակները և այլն, որոնց թողարկումը և շրջանառությունը կարգավորվում է գործող օրենսդրությամբ:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱ – 1) փոխատվական կապիտալի շուկայի այն մասն է, որտեղ իրականացվում են արժեթղթերի առքուվաճառքը, 2) արժեթղթերի թողարկման, փոխանցման և շրջանառության առնչությամբ առաջացող փոխհարաբերությունների համակարգ է:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ – դա շրջանառության մեջ արժեթղթերին փոխարինող փաստաթուղթ է, որը հաստատում է դրանով նշված որոշակի քանակի արժեթղթերի տիրապետման մասին:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ – արժեթղթերի առաջին օտարումն է վաճառքի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված և թողարկողի (էմիտենտի) կանոնադրությամբ նախատեսված այլ ձևերով:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ – դրանք են՝ պարտատոմսը, չեկը, հասարակ մուրհակը, փոխանցելի մուրհակը (վճարագիրը), բաժնետոմսը, կոնոսամենտը, բանկային վկայագիրը (բանկային գրքույկ, բանկային սերտիֆիկատ), երկակի պահեստային վկայագիրը, հասարակ պահեստային վկայագիրը և այլ փաս-

տաթղթերը, որոնք «Արժեթղթերի մասին» ՀՀ օրենքով դասվում են դրանց թվին:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԿ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ – արժեթղթերի տեղաբաշխումն է հայտնի ներդրողների շրջանում:

ԱՐԺԵԹՈՒՂԹ – դա որոշակի ձևի և պարտադիր կարգով սահմանված պայմանների պահպանմամբ գույքային իրավունքները հավաստող ֆինանսական փաստաթուղթ է, որի գործունեության իրականացումը կամ դրա փոխանցումը հնարավոր է միայն այն ներկայացնելու դեպքում: Արժեթղթի փոխանցմամբ իրականացվում են դրանով հավաստվող բոլոր իրավունքները: Այն հավաստում է ընկերության կապիտալի մի մասի նկատմամբ իրավունքի (բաժնետոմսեր) կամ կազմակերպության պարտքի (պարտատոմսեր, պարտքային պարտավորություններ կամ սերտիֆիկատներ) մասին: Դրանք իրենց սեփականատերերին տալիս են եկամուտներ ստանալու իրավունքներ: Արժեթղթերը կարող են լինել առք ու վաճառքի օբյեկտ և գրավ դրվել բանկային վարկ ստանալու համար:

ԱՐԺԵԹՈՒՂԹ ԱԾԱՆՑՅԱԼ – դա ներդրողի իրավունքների կամ պարտավորությունների ժամկետային իրականացման իրավունքը (պարտավորությունը) հավաստող արժեթուղթ է (ֆյուչերս, ֆորվարդ, օպցիոն և այլն):

ԱՐԺԵԹՈՒՂԹ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ – դրամական միջոցների կարճատև ներդրումը հավաստող փաստաթուղթ է, որի սեփականատերը ձեռք է բերում արժեթղթերի թողարկման որոշմամբ սահմանված որոշակի իրավունքներ:

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ – դրանք այն նյութական օբյեկտներն են, որոնք ներգրավվում են միջազգային արժութաֆինանսական կապերի ոլորտ և, որոնց նկատմամբ արժութային օրենսդրությամբ սահմանված է տվյալ երկրի տարածքում դրանց շրջանառության հատուկ սահմանափակ ռեժիմը: ՀՀ արժութային օրենսդրության համաձայն արժութային արժեքներ են համարվում. ա) արտարժույթը, բ) արտարժույթով արտահայտված արժեթղթերը՝ բաժնետոմսերը, պարտատոմսերը, սերտիֆիկատ-

ները, մուրհակները և այլ արժեթղթերը, գ) թանկարժեք մետաղները՝ ոսկի, արծաթ, պլատին և պլատինի խմբի մետաղներ (պալադիում, իրիդիում, ռոդիում, ռութենիում, օսմիում) ցանկացած տեսքով և վիճակում, բացառությամբ այդ մետաղներից պատրաստված ոսկերչական և կենցաղային այլ իրերի, ինչպես նաև՝ այդպիսի իրերի ջարդոնի, դ) բնական թանկարժեք քարերը (ալմաստ, ադամանդ, սուտակ, զմրուխտ, շափյուղ և ալեքսանդրիտ, ինչպես նաև՝ մարգարիտ) անմշակ և մշակված տեսքով, բացառությամբ այդ քարերից պատրաստված ոսկերչական և այլ կենցաղային իրերի, ինչպես նաև՝ այդպիսի իրերի ջարդոնի, ե) համաշխարհային շուկայում գեղարվեստական ու պատմական արժեք ներկայացնող արվեստի գործերը և իրերը:

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՏԻ – մի խումբ պետությունների միավորում է, որոնք պահպանում են փոխադարձ արժութային հարաբերությունների կանոնները և առաջատար երկրի արժույթը ընդունում են որպես հիմնական արժույթ՝ իրենց երկրի ներսում յուրաքանչյուր հաշվարկներ իրականացնելու գործընթացում: Առաջատար երկրի արժույթն օգտագործվում է նաև արժութային գոտու կազմի մեջ չմտնող երկրների հետ հաշվարկներում: Արժութային գոտու հիմնական կանոններն են. առաջատար արժույթի օգտագործումը որպես վճարամիջոց և պահուստային միջոց, այդ արժույթի օգնությամբ «արտաքին վճարումների» իրականացումը, արժույթների ազատ տեղափոխումը մի երկրից դեպի մյուսը:

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – դրանք այն գործառնություններն են, որոնք կապված են. ա) արժութային արժեքների սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների փոխանցման հետ, այդ թվում՝ այնպիսի գործառնությունների, որոնք կապված են որպես վճարման միջոց արտարժույթով վճարման փաստաթղթերի օգտագործման հետ, բ) որպես վճարման միջոց արտարժույթի, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելիս Հայաստանի Հանրապետության արժույթի օգտագործման հետ, գ) արժութային արժեքների՝ արտասահմանից Հայաստանի Հանրապետություն փոխադրման, ներմուծման և առաքման, Հայաստանի Հանրապետությունից դրանց փոխադրման, արտահանման և առաք-

ման, ինչպես նաև միջազգային դրամական փոխանցումների հետ: Արտարժույթով և դրամով արտահայտված արժեթղթերով կատարվող գործառնությունները ստորաբաժանվում են ընթացիկ գործառնությունների և կապիտալի ուղղակի շարժման հետ կապված գործառնությունների:

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿԱՊԻՏԱԼԻ ԵՎ ՎԱՐԿԻ ՇԱՐԺԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ – բոլոր այն արժութային գործառնություններն են, որոնք չեն հանդիսանում ընթացիկ արժութային գործառնություն, այդ թվում՝ ա) ուղղակի ինվեստիցիաները, այսինքն՝ ներդրումներ կազմակերպության կանոնադրական կապիտալում եկամուտ ստանալու և կազմակերպության կառավարմանը մասնակցելու իրավունք ձեռք բերելու նպատակով, բ) պորտֆելային ինվեստիցիաները, մասնավորապես՝ արժեթղթերի ձեռք բերումը, գ) շենքերի, կառույցների և այլ գույքի (ներառյալ հողի, ընդերքի) սեփականության իրավունքի ձեռք բերման համար որպես վճար կատարված փոխանցումները:

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ – դրամավարկային հարաբերությունների ամբողջություն, որոնք ձևավորվել են տնտեսական կապերի միջազգայնացման ու համաշխարհային շուկայի զարգացման հիման վրա: Այն իր գործունեությունն իրականացնում է պայմանագրային ու պետահրավական նորմերով: Տարբերվում են համաշխարհային, միջազգային և ազգային արժութային համակարգեր:

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱ – որի օգնությամբ արժույթ վաճառողները և գնորդները հանդիպում կամ հաղորդակցվում են միմյանց հետ, որոշում են արժույթների փոխանակային կուրսը և ապահովում են դրանց փոխանակումը:

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ – դա տնտեսական, իրավական և կազմակերպչական միջոցառումների ու ձևերի ամբողջություն է, որոնք իրականացվում են պետական մարմինների, կենտրոնական բանկերի, ֆինանսական հիմնարկությունների և միջազգային արժութա-ֆինանսական կազմակերպությունների կողմից արժութային հարաբերությունների բնագավառում: Տվյալ երկրի արժութային քաղաքականությունն

անցկացվում է նրա կառավարության, կենտրոնական բանկի, ֆինանսական մարմինների կողմից՝ արտարժույթի, արտարժութային փոխարժեքի, արտարժութային գործառնությունների վրա փոխազդեցության միջոցով: Աշխարհի մասշտաբով արժութային քաղաքականությունն անցկացվում է միջազգային արժութային-ֆինանսական կազմակերպությունների (Արժույթի միջազգային հիմնադրամ, միջազգային բանկեր) կողմից:

ԱՐԺՈՒՅԹ – որը հնարավորություն է տալիս, որպեսզի տարբեր երկրներն իրենց ազգային դրամներով (արտարժույթով) մասնակցություն ցուցաբերեն միջազգային տնտեսական հարաբերություններում, և որոնց հիմքում ընկած է փոխարժեք հասկացությունը:

ԱՐԺՈՒՅԹ ԱԶԱՏ ՓՈԽԱՐԿԵԼԻ – այն արժույթն է, որը կարող է ազատ փոխարկվել այլ երկրների արժույթների հետ և միաժամանակ առանց որևէ սահմանափակման օգտագործվել տվյալ երկրի քաղաքացիների ու օտարերկրացիների կողմից, տարբեր տեսակի վճարումների իրականացման ժամանակ՝ ընթացիկ շուկայական փոխարժեքով: Ազատ փոխարկելի արժույթների փոխանակման ոլորտը տարածվում է ինչպես ընթացիկ հաշվի գործառնությունների (կապված արտաքին առևտրային գործարքների, արտերկրյա տուրիզմի, ոչ առևտրային վճարումների հետ), այնպես էլ՝ արտաքին վարկերի և օտարերկրյա ներդրումների շարժի գծով գործառնությունների վրա:

ԱՐԺՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ – դրանք են. ա) շրջանառության մեջ գտնվող, ինչպես նաև շրջանառությունից հանված կամ հանվող, փոխանակման ենթակա Հայաստանի Հանրապետության դրամները՝ ՀՀ կենտրոնական բանկի բանկային տոմսերի (թղթադրամների) տեսքով, ինչպես նաև մետաղադրամները և գանձատան տոմսերը, բ) ՀՀ բանկերի և այլ ֆինանսավարկային կազմակերպությունների հաշիվներում առկա միջոցները՝ արտահայտված ՀՀ դրամով, գ) Հայաստանի Հանրապետության արժույթը որպես վճարման օրինական միջոց օգտագործելու մասին ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի կողմից օտարերկրյա պետության համապատասխան մարմինների հետ կնքված համաձայնագրերի հիման վրա,

տվյալ պետության տարածքում գտնվող բանկերի և ֆինանսավարկային այլ կազմակերպությունների հաշիվներում առկա միջոցները՝ արտահայտված ՀՀ դրամով:

ԱՐԺՈՒՅԹԻ ԱՐԺԵԶՐԿՈՒՄ – 1) որևէ արժույթի արժեզրկումն է այլ երկրների արժույթների նկատմամբ, երբ այդ որևէ արժույթի տվյալ քանակով հնարավոր է ձեռք բերել ավելի քիչ քանակի այլ արժույթ, քան դա հնարավոր էր նախկինում, 2) պետության կողմից ձեռնարկվող այն միջոցառումներն են, որոնք ուղղված են այլ երկրների արժույթների կամ ոսկու նկատմամբ սեփական արժույթի փոխարժեքի նվազեցմանը՝ հաստատագրված փոխարժեքի պարագայում: Արժույթի արժեզրկում է տեղի ունենում, երբ իրավասու պետական մարմինը մեծացնում է ազգային արժույթի քանակը ընթացիկ փոխարժեքի պայմաններում այլ արժույթներով փոխանակելու համար: Կենտրոնական բանկը կատարում է արժույթի արժեզրկում այն դեպքերում, երբ ազգային արժույթի փոխարժեքը դառնում է արհեստականորեն բարձր, օրինակ, եթե ակնհայտ է, որ գնաճի բարձր տեմպերի պատճառով երկրից արտահանվող արտադրանքը կորցրել է իր մրցունակությունը: Արժեզրկումը կարող է նպաստել երկրի վճարային հաշվեկշռի պակասուրդի կրճատմանը՝ ներմուծվող ապրանքների նկատմամբ պահանջարկի փոքրացման պայմաններում երկրից արտահանվող ապրանքների նկատմամբ պահանջարկի բարձրացման միջոցով:

ԱՐԺՈՒՅԹԻ ԳՆԱՆՇՈՒՄ – դա այն մեխանիզմն է, որը հնարավորություն է տալիս սահմանելու տվյալ երկրի արժույթի փոխարժեքը մնացած այլ երկրների արժույթների նկատմամբ:

ԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԿԵԼԻՈՒԹՅՈՒՆ – դա տվյալ երկրի արժույթը կամ որևէ երկրի ազգային արժույթը այլ երկրների արժույթների կամ ոսկու հետ փոխանակելու հնարավորությունն է: Վերջինս կարող է պայմանավորված լինել ինչպես երկրի արժութային կարգավորմամբ, այնպես էլ նրանով, թե տվյալ երկիրն ինչպիսի դիրք է գրավում միջազգային տնտեսությունում: Ըստ փոխարկելիության աստիճանի արժույթները կարող են լինել՝ ազատ փոխարկելի, մասնակի փոխարկելի և ոչ փոխարկելի արժույթներ:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԻՆՔՆԱՐԺԵՔ – այն ընդգրկում է տնտեսավարող սուբյեկտի կողմից արտադրանքի արտադրության վրա կատարված ծախսերի ամբողջությունը:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐ – դրանք կոլեկտիվ սեփականության վրա հիմնված, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, իր անդամների աշխատանքային պարտադիր մասնակցությամբ գործող կազմակերպություններ են, որոնք ստեղծվում են շահույթ (եկամուտ) կամ այլ օգտակար արդյունքներ ստանալու նպատակով: Արտադրական կոոպերատիվի հիմնադիր փաստաթուղթը նրա կանոնադրությունն է, իսկ անդամներ կարող են լինել տվյալ երկրի և այլ պետությունների քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք: Արտադրական կոոպերատիվի գույքը պատկանում է նրա անդամներին՝ համատեղ սեփականության իրավունքով, և նրանց համատեղ գործունեությունից ստացված շահույթը (եկամուտը) բաշխվում է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր անդամի աշխատանքային ներդրումը:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ – արտադրանքի առավելագույն հնարավոր թողարկումն է (տարվա, օրվա, հերթափոխի ընթացքում), կամ հումքի արդյունահանման և վերամշակման ծավալն է՝ ըստ անվանացանկի ու տեսականու: Հզորության մեծությունն ըստ արտադրանքի որոշակի տեսակի թողարկման, դրա փոփոխության գործոնները և օգտագործման մակարդակը բնութագրում է արտադրական հզորության հաշվեկշիռը: Արտադրական հզորության օգտագործման գործակիցը հարաբերական ցուցանիշ է, որը բնութագրում է արտադրանքի առանձին տեսակների թողարկման գծով արտադրական հզորության օգտագործման աստիճանը: Հաշվարկվում է որպես արտադրանքի փաստացի թողարկման և այդ արտադրանքի թողարկման գծով հաշվետու ժամանակաշրջանում գործող միջին տարեկան հզորության հարաբերակցություն:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ – դրանք իրենց բնույթով կապված են արտադրության գործընթացի հետ և ուղղակիորեն չեն կարող վերագրվել արտադրվող արդյունքի այս կամ այն տեսակին: Այդ ծախսերին են վերաբերվում՝ ոչ արտադրական

բանվորների աշխատավարձը սոցիալական ապահովագրության հատկացումներով, նորոգման նպատակով օգտագործվող օժանդակ նյութերը և անուղղակի արտադրական ծախսերը:

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԻՐԱՑՈՒՄԻՑ ՇԱՀՈՒՅԹ (ՎՆԱՍ) – համախառն շահույթի (վնասի) և իրացման (առևտրային) ծախսերի, վարչական և ընդհանուր այլ ծախսերի (արտադրական գործընթացի հետ կապ չունեցող) միջև եղած տարբերությունն է:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀԱՐԿԵՐ – բաղկացած են այն բոլոր հարկերից, որոնցով հարկվում են արտադրող միավորները արտադրության գործընթացի կամ արտադրության գործոնների օգտագործման հետ կապված, բացի ապրանքների հարկերից: Այդպիսի հարկերի չափերն ուղղակիորեն կախված չեն արտադրության ծավալներից և շահութաբերությունից: Դրանք չեն ներառում նաև կառուցվածքային միավորների ստացած շահույթի կամ այլ եկամուտների վրա ցանկացած հարկերը: Արտադրության այլ հարկերից են բնական պաշարների օգտագործման համար վճարները (բնապահպանության վճար), հողի, արտադրության մեջ օգտագործվող շենքերի ու շինությունների (անշարժ գույք) պարբերական հարկերը, արտոնագրային վճարները և այլն:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՋՈՒՏ ՀԱՐԿԵՐ – ներառում են ապրանքների և ներմուծման հարկերը, արտադրության այլ հարկերը: «Զուտ» արտահայտությունը նշանակում է, որ հարկերը ցույց են տրվում առանց համապատասխան լրացուցիչ հատկացումների:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍ (I_{zq}) – հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$I_{zq} = \frac{\sum z_1 q_1}{\sum z_0 q_0},$$

որտեղ՝

q_1-ը և q_0-ն համապատասխանաբար հաշվետու և բազիսային ժամանակաշրջաններում արտադրված արտադրանքի քանակն է կամ ֆիզիկական ծավալը:

z_1-ը և z_0-ն հաշվետու և բազիսային ժամանակաշրջաններում արտադրված արտադրանքի մեկ միավորի վրա կատարված արտադրական ծախսերն են:

Այն ցույց է տալիս, թե քանի՞ անգամ է աճել (նվազել) արտադրանքի արտադրության ընդհանուր ծախսերը, կամ քանի՞ տոկոս է կազմում արտադրանքի արտադրության ընդհանուր ծախսերի ավելացումը (պակասեցումը) հաշվետու ժամանակաշրջանում բազիսայինի համեմատությամբ:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՇԻՎ – արտացոլում է անմիջականորեն արտադրական գործընթացին վերաբերվող գործառնությունները: Այս հաշվում որոշվում է համախառն ներքին արդյունքի հաշվարկման հիմքը հանդիսացող ավելացված արժեքը:

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐ – ընդգրկված են ինչպես հայրենական արտադրության, այնպես էլ վերաարտահանված արտասահմանյան արտադրության ապրանքները, իսկ ներմուծման ծավալներում՝ արտասահմանյան արտադրության ապրանքները, որոնք ներկրվել են հանրապետություն՝ ներսում սպառման և վերաարտահանման համար: Արտահանման և ներմուծման ծավալներում չեն ընդգրկված արժեթղթերը, շրջանառության մեջ գտնվող թղթադրամները և մետաղադրամները, դրամական ոսկին, հանրապետության տարածքով օտարերկրյա բեռների տարանցիկ փոխադրումները, ցուցահանդեսների և տոնավաճառների համար ուղարկված կամ ներկրված ապրանքները:

ԱՐՏԱՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ – դրանց միջոցով հնարավորություն է տրվում հաշվառելու որևիցե կազմակերպության հաշվապահական հաշվեկշռում չներառվող, բայց ժամանակավոր օգտագործման կամ պահպանման նպատակով իր մոտ գտնվող նյութական և դրամական ակտիվները (միջոցները): Արտահաշվեկշռային հաշիվներով հաշվառվում են կազմակերպությանը չպատկանող ոչ ընթացիկ ակտիվները, ապրանքանյութական արժեքները, դրամական միջոցները, արժեթղթերը և

այլն: Չնայած նշված ակտիվներն արդեն հաշվառվում և արտացոլվում են այն կազմակերպությունների հաշվեկշիռներում, որոնց դրանք պատկանում են, բայց մյուս կողմից էլ, վարձակալների մոտ դրանք չեն կարող դուրս թողնվել հաշվառումից, քանի որ դրանց պահպանման ու ճիշտ օգտագործման համար պատասխանատվություն են կրում վարձակալները:

ԱՐՏԱՍՈՎՈՐ (ԱՆՆԱԽԱԴԵՊ) ԴԵՊՔԵՐԻՑ ՇԱՀՈՒՅԹ (ՎՆԱՍ) – արդյունք է արտասովոր դեպքերից և տարբեր իրադարձություններից սպասվելիք եկամուտների ու ծախսերի տարբերության:

ԱՐՏԱՍՈՎՈՐ (ԱՆՆԱԽԱԴԵՊ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐ – արդյունք են՝ տարերային աղետների, քաղաքական ցնցումների և արտակարգ այլ իրադարձությունների արդյունքում առաջացած կորուստների համար ստացված եկամուտների:

ԱՐՏԱՍՈՎՈՐ (ԱՆՆԱԽԱԴԵՊ) ԾԱԽՍԵՐ – արդյունք են՝ տարերային աղետների, քաղաքական ցնցումների և արտակարգ այլ իրադարձությունների արդյունքում առաջացած կորուստների դիմաց պատճառված վնասների:

ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ «ԱՐԲԻՏՐԱԺ» – արտարժույթի գնման և վաճառքի գծով միաժամանակ իրականացվող գործառնություն է տարբեր շուկաներում, կամ տարբեր ֆինանսական կազմակերպությունների հետ՝ փոխարժեքային տարբերություններից շահույթ ստանալու ակնկալիքով: Այլ խոսքով, արտարժութային արբիտրաժը կառուցվում է արտարժույթի փոխարժեքների անհամապատասխանության սկզբունքի հիման վրա՝ արտարժութային շուկաների տարբեր իրավիճակներում, նույն օրվա ընթացքում:

ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – 1) արտարժույթի առք ու վաճառքի այն գործառնություններն են, երբ մի արժույթը փոխանակվում է մեկ այլ արժույթի հետ: Արտարժութային փոխարժեքն արտահայտում է մեկ արժույթի արժեքը մյուս արժույթի միավորներով: ՀՀ օրենսդրության համաձայն, արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու

լիցենզիա (թույլտվություն) է տրամադրում ՀՀ կենտրոնական բանկը, 2) տվյալ երկիր արտարժույթի ներկրումը և առաքումն է, ինչպես նաև տվյալ երկրից արտարժույթի արտահանումը և առաքումը, 3) միջազգային դրամական փոխանցումների իրականացումն է:

ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻՐՔ – տվյալ առևտրային բանկի կողմից ժամանակի կոնկրետ պահին արտարժույթով ակտիվների և պարտավորությունների տարբերությունն է: Այն հաշվարկվում է յուրաքանչյուր արտարժույթի համար: Եթե այս կամ այն արտարժույթով ակտիվների ընդհանուր գումարը հավասար է պարտավորությունների գումարին, ապա տվյալ արտարժույթի գծով դիրքը կոչվում է փակ, հակառակ դեպքում դիրքը բաց է: Արտարժութային դիրքը հաշվարկելիս սովորաբար հաշվի են առնվում նաև արտահաշվեկշռային անավարտ (սփոթ, սվոփ, ֆյուչերսային, ֆորվարդային) գործարքների նկատմամբ պահանջները և պարտավորությունները՝ համապատասխան արտարժույթներով: ՀՀ բանկային օրենսդրության համաձայն, արտարժութային դիրքը բանկի արտարժույթով ակտիվների և պարտավորությունների միջև եղած տարբերությունն է՝ հաշվի առած նաև արտահաշվեկշռային անավարտ գործարքների նկատմամբ պահանջները և պարտավորությունները (սփոթ, սվոփ, ֆյուչերսային, ֆորվարդային)՝ համապատասխան արտարժույթներով:

ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻՐՔ՝ ԵՐԿԱՐ – երբ արտարժութային ակտիվները գերազանցում են արտարժութային պարտավորություններին: Այս դեպքում, եթե տվյալ արտարժույթի փոխարժեքն աճում է, ապա բանկը պետք է ավելի քիչ արտարժույթ ծախսի, որպեսզի կատարի իր դրամային պարտավորությունները և հակառակը:

ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻՐՔ՝ ԶՈՒՏ – որը տարբեր արտարժույթների դիրքերի հանրագումարն է, հաշվի առնելով տվյալ դիրքի նշանը (կարճ կամ երկար արտարժութային դիրքերի):

ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻՐՔ՝ ԿԱՐՃ – երբ արտարժութային ակտիվները փոքր են արտարժութային պարտավորություններից:

Այս դեպքում, եթե տվյալ արտարժույթի փոխարժեքն աճում է, ապա բանկը պետք է ավելի շատ դրամ ծախսի, որպեսզի կատարի իր արտարժութային պարտավորությունները և հակառակը:

ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻՐՔ՝ ՀԱՄԱԽԱՌՆ – որը տարբեր արտարժույթների դիրքերի (փակ, բաց, կարճ, երկար) բացարձակ մեծությունների հանրագումարն է:

ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ – դրանք արտարժույթի պաշտոնական այն պաշարներն են տվյալ երկրի կենտրոնական բանկում և ֆինանսական մարմիններում կամ միջազգային արժութավարկային կազմակերպություններում, որոնք պահում են՝ սեփական արժույթը պաշտպանելու, պարտքերը վճարելու և միջազգային հաշվարկները կատարելու համար:

ԱՐՏԱՐԺՈՒՅԹ – ցանկացած օտարերկրյա պետության արժույթն է, որը ծառայում է որպես շրջանառության օրինական միջոց և հաշվառման հիմք տվյալ երկրում: Այս կամ այն երկիրը արտարժույթը կարող է գնել սեփական արժույթով և օգտագործել արտերկրի հետ առևտուր կամ ֆինանսական գործառնություններ կատարելիս: Արտարժույթը գնվում և վաճառվում է արտարժույթի շուկաներում բանկերի կողմից ինչպես կանխիկ ձևով կամ չեկերով, այնպես էլ այդ երկրների բանկերում արտարժութային հաշիվների մնացորդների շարժի ձևով: ՀՀ օրենսդրության համաձայն արտարժույթ են համարվում. ա) օտարերկրյա դրամանիշները՝ արտահայտված բանկային տոմսերի, գանձատան թղթադրամների և մետաղադրամների ձևով, որոնք համապատասխան օտարերկրյա մեկ կամ մի քանի պետությունների տարածքում գտնվում են շրջանառության մեջ և օրինական վճարման միջոց են, ինչպես նաև այն դրամանիշերը, որոնք հանված են կամ հանվում են շրջանառությունից, բայց ենթակա են փոխանակման շրջանառության մեջ գտնվող դրամանիշներով, բ) բանկային հաշիվներում և ավանդներում գտնվող օտարերկրյա պետությունների դրամական միավորներով արտահայտված միջոցներն ու վճարման փաստաթղթերը:

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԳՆԱՆՇՈՒՄ – տվյալ երկրում գործող օրենսդրական նորմերին, կանոններին և ձևավորված պրակտիկային համապատասխան արտարժույթների փոխարժեքների սահմանումն է: Արտարժույթների գնանշումը կատարում են պետական (ազգային) կամ խոշորագույն առևտրային բանկերը՝ ուղղակի կամ անուղղակի եղանակով:

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՇՈՒԿԱ – շուկա, որտեղ կատարվում է արտարժույթի և դրանով արտահայտված վճարային այլ փաստաթղթերի (մուրհակներ, չեկեր և այլն) առք ու վաճառք՝ պահանջարկի և առաջարկի հիման վրա: Դա ոչ ձևական շուկա է, որն ընդգրկում է ամբողջ աշխարհը, որտեղ կապն իրականացվում է հաղորդակցության տարբեր տեսակի ուղիղ և արագ միջոցների օգնությամբ: Արտարժույթի շուկայում հիմնականում գործում են արտարժույթի առևտուր անող դիլերները, առևտրային բանկերը և արտարժույթի առք ու վաճառքի բրոքերները (որոնք գործում են որպես միջնորդներ):

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ (ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ) ՓՈԽԱՐԺԵՔ – դա պետության կողմից պաշտոնապես սահմանվող ազգային արժույթի փոխարժեքն է, որը սովորաբար սահմանում է տվյալ երկրի կենտրոնական բանկը: Եթե պաշտոնական փոխարժեքը տարբերվում է շուկայական փոխարժեքից, ապա կենտրոնական բանկը պետք է պատրաստ լինի պահելու իր սահմանած փոխարժեքը՝ բաց շուկայում գնումների և վաճառքների միջոցով: ՀՀ օրենսդրությանը համաձայն, կենտրոնական բանկը հայտարարում է արտարժույթի ամենօրյա առք ու վաճառքի փոխարժեքները նախորդ օրը ֆինանսական շուկայում ձևավորված փոխարժեքների հիման վրա, որոնց միջին մեծությունը համարվում է հաշվարկային փոխարժեքը: ՀՀ կենտրոնական բանկն առք ու վաճառքի փոխարժեքներն օգտագործում է բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի այլ հաճախորդների հետ գործառնությունների իրականացման ընթացքում: Հաշվարկային փոխարժեքն օգտագործվում է հաշվապահական հաշվառման նպատակներով և հիմք է հանդիսանում ՀՀ գանձապետարանի բանկային սպասարկման համար:

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔ – դա որևիցե մի երկրի դրամական միավորի գինն է՝ արտահայտված մեկ այլ երկրի դրամական միավորներով (սովորաբար 1, 100 կամ 1000 միավորի դիմաց) որոշակի ամսաթվի դրությամբ: Այն ցույց է տալիս, թե ազգային արժույթի քանի միավոր է պահանջվում միավոր արտարժույթ գնելու համար: Հաճախ կիրառվում է ազգային արժույթի փոխարժեքը՝ հաշվարկված միջազգային արժութային միավորների՝ օրինակ էքյուի, նկատմամբ: Արտարժույթի փոխարժեքը ձևավորվում է գլխավորապես արտարժույթի պահանջարկի և առաջարկի հարաբերակցության ազդեցության ներքո կամ սահմանվում է վարչական կարգով և շատ փոփոխուն է: Տարբերում են լողացող (ճկուն), անվանական, իրական փոխարժեքներ: Արտարժույթի փոխարժեքի վրա ազդող հիմնական գործոններից են վճարային հաշվեկշռի վիճակը, գնաճի մակարդակը, երկրների միջև կարճաժամկետ կապիտալների տեղաշարժը, ինչպես նաև քաղաքական և ռազմական գործոնները: Սովորաբար յուրաքանչյուր երկրում իրավասու մարմնի կողմից սահմանվում է արտարժույթի պաշտոնական (հաշվարկային) փոխարժեքը: Տարբերվում են արտարժույթի առքի (գնորդի) և վաճառքի (վաճառողի) փոխարժեքներ: Առքի փոխարժեքով բանկը ձեռք է բերում արտարժույթ, իսկ վաճառքի փոխարժեքով բանկը վաճառում է արտարժույթ: Միջին փոխարժեքը առքի և վաճառքի փոխարժեքների միջին կշռված թվաբանականն է:

ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔ - որպես կանոն, առաջանում է պայմանագրային հարաբերությունների հիման վրա, ըստ որի մեկ կառուցվածքային միավորը /դեբիտորը/ պարտավորություններ է ստանձնում մեկ այլ կառուցվածքային միավորի /կրեդիտորի/ հանդեպ վերադարձնել հիմնական գումարը տոկոսներով կամ առանց տոկոսների, կամ էլ վճարել տոկոսներն առանց հիմնական գումարը վերադարձնելու: Արտաքին պարտքը հաշվարկվում է ըստ տնտեսության հատվածների, որոնք համաձայն այդ պարտքի մեթոդաբանության, դասակարգվում են՝ պետական կառավարման մարմիններ, դրամավարկային կարգավորման մարմիններ, առևտրային բանկեր և այլ հատվածներ:

Արտաքին պարտքի ցուցանիշը ներառում է ոչ միայն հիմնական գումարը, այլ նաև ժամանակահատվածի վերջի դրությամբ հաշվարկված, բայց դեռևս չվճարված տոկոսավճարները:

ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ - որի թվին են դասվում պարտքի գծով արժեթղթերը, վարկերը, առևտրային վարկը, կանխիկ դրամական միջոցները և ավանդները, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների տարր հանդիսացող ներֆիրմային շարժը (վարկեր, առևտրային վարկեր, փոխառություններ): Պարտքի գործիքներ չեն համարվում ֆինանսական ածանցյալները, կապիտալի մասնակցության արժեթղթերը, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների տարր հանդիսացող բաժնետիրական կապիտալն ու վերաներդրված շահույթը (եկամուտը):

ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ – պետության պարտքն է միջազգային բանկերին, այլ երկրների կառավարություններին, օտարերկրյա մասնավոր բանկերին:

ԱՐՏԱՔԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ – օտարերկրյա փոխառություն է, որը տրամադրվում է միջազգային վարկի ձևով դրա կարիքը զգացող երկրներին արտերկրյա վարկատուների կողմից:

ԱՈՒԴԻՏ – աուդիտի ենթարկվող անձի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության անկախ ստուգումն է, որի արդյունքում կազմվում և ներկայացվում է աուդիտորական եզրակացություն:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է հնարավորություն ընձեռել աուդիտորին՝ կարծիք արտահայտելու այն մասին, թե արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, կազմված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Աուդիտն անցկացվում է օրենքով սահմանված դեպքերում (պարտադիր աուդիտ) կամ աուդիտի ենթարկվող անձի նախաձեռնությամբ (կամավոր աուդիտ):

Ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր աուդիտն իրականացվում է աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:

Կամավոր աուդիտը կարող է իրականացվել այլ հիմունքներով (այլ ստանդարտներով և այլն), եթե աուդիտի արդյունքները նախատեսված են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող օգտագործողների համար:

ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁ – աուդիտորական կազմակերպությունն է (աուդիտորական ծառայություններ իրականացնող իրավաբանական անձը) և (կամ) անհատ աուդիտորը (աուդիտորական ծառայություններ իրականացնող անհատ ձեռնարկատերը):

ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – 1) աուդիտ իրականացնող անձն իրավունք ունի. ա) աուդիտորական ծառայությունների իրականացման ընթացքում լրիվ ծավալով ուսումնասիրել աուդիտի ենթարկվող անձի ֆինանսատնտեսական գործունեությանն առնչվող փաստաթղթերը, ինչպես նաև ստուգել փաստաթղթերում հաշվառված գույքի փաստացի առկայությունը, բ) աուդիտի ենթարկվող անձից ստանալու աուդիտորական ծառայությունների իրականացման ընթացքում ծագած հարցերի վերաբերյալ բանավոր, գրավոր բացատրություններ և այլ անհրաժեշտ տեղեկություններ, ինչպես նաև պահանջել այդպիսի տեղեկությունների ստացումը երրորդ անձանցից, գ) աուդիտի ենթարկվող անձի գիտությամբ գրավոր հարցում անել և ստանալ երրորդ անձանցից անհրաժեշտ տեղեկատվություն կամ հավաստումներ, դ) աուդիտորական ծառայությունների իրականացման աշխատանքներում ներգրավել այլ աուդիտորների, մասնագետների (այդ թվում՝ պայմանագրային հիմունքներով), ինչպես նաև այլ առևտրային կազմակերպությունների: Աուդիտորական ծառայությունների իրականացման աշխատանքներում նշված անձանց ներգրավման կարգը նախատեսվում է աուդիտի ստանդարտներով, ե) աուդիտորական եզրակացություն պատրաստելու համար աուդիտի ենթարկվող անձի կողմից անհրաժեշտ տեղեկատվություն չներկայացվելու դեպքում հրաժարվել աուդիտ անցկացնելուց կամ աուդիտորական կարծիք արտահայտելուց, զ) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ իրավունքներ: 2) Աուդիտ իրականացնող անձը պարտավոր է. ա) աուդիտորա-

կան գործունեության իրականացման ընթացքում պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները, բ) ապահովել իր աշխատող աուդիտորների պահանջների պահպանումը, գ) ապահովել աուդիտորական գործունեության իրականացման ընթացքում ստացված և կազմված փաստաթղթերի, ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության պահպանումը: Գաղտնի տեղեկությունների ցանկը սահմանվում է օրենքով, աուդիտորական գործունեության իրականացման մասին պայմանագրով և եթե այդպիսի չէ հրապարակման, բացառությամբ օրենքով կամ պայմանագրով սահմանված դեպքերի, ինչպես նաև այն իրավաբանական անձի, հիմնարկի կամ անհատ ձեռնարկատիրոջ գրավոր համաձայնության, որի մոտ իրականացվել է աուդիտորական գործունեությունը: Այդ ցանկում չեն ներառվում այն տեղեկությունները, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չեն կարող լինել ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք, դ) որևէ խախտում թույլ տրվելու օրվան հաջորդող 30-օրյա ժամկետում այդ մասին գրավոր հայտնել լիազորված մարմնին, ե) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացնել իր գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություններ՝ մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը, զ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վարել իր կողմից կնքված պայմանագրերի գրանցամատյան, է) կրել օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

ԱՈՒԴԻՏԻ ԵՆԹԱՐԿՎՈՂ ԱՆՁ – իրավաբանական անձն է, հիմնարկը կամ անհատ ձեռնարկատերը, որի մոտ իրականացվում են աուդիտորական ծառայություններ:

ԱՈՒԴԻՏԻ ԵՆԹԱՐԿՎՈՂ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – 1) աուդիտի ենթարկվող անձն իրավունք ունի. ա) ինքնուրույն ընտրել աուդիտ իրականացնող անձին, եթե օրենքով կամ պայմանագրով այլ բան սահմանված չէ, բ) աուդիտ իրականացնող անձից ստանալ աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ տեղեկատվություն, գ) լիազորված մարմնին և (կամ) մասնագիտացված կառույցին տեղեկացնել աուդիտ իրականացնող

անձի կողմից աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտման մասին, դ) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ իրավունքներ: 2) Աուդիտի ենթարկվող անձը պարտավոր է. ա) չխոչընդոտել աուդիտորական ծառայությունների իրականացմանը, աուդիտորական ծառայությունների իրականացման համար աուդիտ իրականացնող անձին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր, աուդիտորների բանավոր և (կամ) գրավոր հարցումներին տալ պարզաբանումներ և բացատրություններ (բանավոր և (կամ) գրավոր), ինչպես նաև աուդիտորի առաջարկությամբ, իր իրավասության սահմաններում, երրորդ անձանցից պահանջել աուդիտորական ծառայությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ, բ) չծեռնարկել աուդիտորական ծառայությունների իրականացման ընթացքում ուսումնասիրվող հարցերի շրջանակները սահմանափակող որևէ գործընթաց, գ) վերացնել աուդիտորական ծառայությունների իրականացման արդյունքում բացահայտված՝ հաշվապահական հաշվառման մեջ և ֆինանսական հաշվետվություններում տեղ գտած թերություններն ու խախտումները, դ) աուդիտ իրականացնող անձից պահանջել ներկայացնելու լիցենզիայի պատճենը (կրկնօրինակը), ե) կրել օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

ԱՈՒԴԻՏԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ – 1) աուդիտի և հարակից ծառայությունների իրականացումը պարտադիր փաստաթղթավորվում է աուդիտ իրականացնող անձի կողմից՝ աուդիտի ստանդարտներով սահմանված կարգով, 2) աուդիտի փաստաթղթավորումը նախատեսում է աուդիտորի աշխատանքային փաստաթղթերի և աուդիտի արդյունքների հիման վրա աուդիտորական եզրակացության կազմումը: Պայմանագրով նախատեսված դեպքերում կամ աուդիտ իրականացնող անձի նախաձեռնությամբ կազմվում է նաև աուդիտորական հաշվետվություն (նամակ աուդիտի ենթարկվող անձի ղեկավարությանը), 3) աուդիտորի աշխատանքային փաստաթղթերն աուդիտի անցկացման նպատակով աուդիտորի կողմից պատրաստվող կամ ձեռք բերվող և պահպանվող փաստաթղթերն են: Աուդիտորի աշխատանքային փաստաթղթերը առևտրային գաղտնիք պարունակող փաստաթղթեր են,

4) աուդիտորական եզրակացությունները, աուդիտորական հաշվետվությունները, աուդիտորի աշխատանքային փաստաթղթերը և աուդիտի անցկացման հետ կապված այլ փաստաթղթերը պահպանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան աուդիտի անցկացմանը հաջորդող հինգ տարիների ընթացքում:

ԱՈՒԴԻՏԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ (ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ) – դրանք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխանող, աուդիտի անցկացման, ինչպես նաև աուդիտին հարակից ծառայությունների իրականացման մեթոդներն ու կարգը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերն են:

Աուդիտ իրականացնող անձն ինքնուրույն է ընտրում իր աշխատանքի ձևերն ու մեթոդները, ելնելով աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջներից:

ԱՈՒԴԻՏՈՐ – պետության կողմից որակավորված մասնագետ կամ այլ կերպ՝ աուդիտորական ընկերության աշխատակից, որն ընկերության հետ կնքված պայմանագրի հիման վրա ստուգում է այդ ընկերության ֆինանսատնտեսական վիճակը՝ դրա գործունեության օրենսդրությանը համապատասխան լինելու, ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության մասին եզրակացություն տալու նպատակով:

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ – 1) աուդիտորական գործունեությունը ֆինանսական հաշվետվությունների և (կամ) ֆինանսական հաշվետվություններ ներառող փաստաթղթերում առկա այլ տեղեկատվության աուդիտի և (կամ) աուդիտին հարակից ծառայությունների՝ աուդիտորական դիտարկում, համաձայնեցված ընթացակարգեր, կոմպիլյացիա (տեղեկատվության հավաքում) իրականացումն է, 2) աուդիտորական գործունեությունն իրականացվում է աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով, 3) աուդիտը և աուդիտորական դիտարկումն աուդիտ իրականացնող անձին հնարավորություն է ընձեռում տեղեկատվության արժանահավատության վերաբերյալ ապահովելու իր հավաստիացումը, իսկ համաձայնեցված ընթացա-

կարգերն այդպիսի հավաստիացում չեն նախատեսում, 4) աուդիտորական ծառայության իրականացումն առանց աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիայի արգելվում է: Աուդիտորական ծառայությունները պետք է իրականացվեն առնվազն մեկ աուդիտորի կողմից:

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ – դրանք կազմված են «Աուդիտորական գործունեության մասին» օրենքից, աուդիտորական գործունեությանը վերաբերող նորմեր պարունակող այլ օրենքներից, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից ընդունված այլ իրավական ակտերից:

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ – ֆինանսական հաշվետվությունների այնպիսի ընթացակարգերի իրականացում է, որը հնարավորություն է ընձեռում աուդիտորին, պարզելու, թե արդյո՞ք առկա են այնպիսի փաստեր, որոնք կարող են վկայել այն մասին, որ ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, կազմված չեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ – աուդիտ իրականացնող անձի կողմից կազմված փաստաթուղթ է, որում արտահայտվում է կարծիք աուդիտի ենթարկվող անձի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Աուդիտորական եզրակացության ձևին ու բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվում են աուդիտի ստանդարտներով: Աուդիտորական եզրակացությունը գաղտնիք չպարունակող փաստաթուղթ է, որի հրապարակման անհրաժեշտությունը որոշում է աուդիտի ենթարկվող անձը, եթե օրենքով այլ բան սահմանված չէ: Աուդիտորական եզրակացությունը կազմվում է առնվազն երկու օրինակից, ստորագրվում և (կամ) կնքվում է աուդիտ իրականացնող անձի կողմից: Աուդիտորական եզրակացության մեկ օրինակը տրվում է աուդիտի ենթարկվող անձին, իսկ մյուսը մնում է աուդիտ իրականացնող անձի մոտ:

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՂԾ – այն աուդիտորական եզրակացությունն է, որը կազմվել է առանց աուդիտ անցկացնելու կամ աուդիտի ստանդարտներին համապատասխան փաստաթղթավորում իրականացնելու, ինչպես նաև այն եզրակացությունը, որը հակասում է աուդիտի ենթարկվող անձի կողմից ներկայացված և աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտի ընթացքում ուսումնասիրված փաստաթղթերի բովանդակությանը:

Աուդիտորական եզրակացությունը կեղծ է ճանաչվում դատական կարգով:

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐ – աուդիտորական ծառայությունների դիմաց վճարի չափը, վճարման կարգը և ձևը որոշվում են կողմերի միջև կնքված պայմանագրով ու չեն կարող կախվածության մեջ դրվել աուդիտի ենթարկվող անձի այնպիսի պահանջներից, որոնք կարող են ազդել աուդիտորական ծառայությունների իրականացման արդյունքում տրամադրվող եզրակացության (հաշվետվության) բովանդակության վրա:

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ – դրանում կարող են ներառվել տեղեկություններ աուդիտի ընթացքի, հայտնաբերված սխալների և թերությունների, հաշվապահական հաշվառման վարմանը ու ֆինանսական հաշվետվությունների կազմմանը ներկայացվող պահանջների խախտումների, առանձին հարցերի գծով վերլուծության արդյունքների, պայմանագրով նախատեսված և այլ հարցերի մասին, ինչպես նաև առաջարկություններ սխալների և թերությունների վերացման ուղղությամբ: Աուդիտի ենթարկվող անձի կամ աուդիտորի ցանկությամբ աուդիտորական հաշվետվությունում կարող են ընդգրկվել նաև այլ տեղեկություններ:

Աուդիտորական հաշվետվությունն առևտրային գաղտնիք պարունակող փաստաթուղթ է: Այն կազմվում է առնվազն երկու օրինակից, ստորագրվում է աուդիտի անցկացման համար պատասխանատու աուդիտորի, և ստորագրվում ու կնքվում է աուդիտ իրականացնող անձի ղեկավարի կողմից: Աուդիտորական հաշվետվության առնվազն մեկ օրինակը տրվում է աու-

դիտի ենթարկվող անձին, իսկ մյուսը մնում է աուդիտ իրականացնող անձի մոտ:

Բ

ԲԱԶԵԼՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ – դա Մեծ Բրիտանիայի և Արևմուտքի առաջատար երկրների միջև 1967թ. կնքված համաձայնագիր է, որով սահմանվեց ֆունտ ստեռլինգի ճգնաժամի ժամանակաշրջանում Մեծ Բրիտանիային տրամադրված վարկերի մարման կարգը: Համաձայնագիրն ունեցավ մեծ նշանակություն, քանի որ առաջին անգամ տվյալ երկիրը համաձայնվեց, իր պարտքի դիմաց, երրորդ երկրներին տրամադրել դոլարային երաշխիք:

ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆ ՌԵԳՐԵՍԻԱ – միմյանց հետ կապված երեք և ավելի ցուցանիշների միջև եղած կապը կոչվում է բազմակի կամ բազմագործոն ռեգրեսիա: Բազմագործոն ռեգրեսիայի մեթոդներով փոխկախվածությունների ուսումնասիրման դեպքում խնդիրը ձևակերպվում է այնպես, ինչպես զույգային ռեգրեսիայի ժամանակ, այն է՝ որոշել արդյունքային (y) և գործոնային ցուցանիշների (x) միջև եղած կապը հետևյալ արտահայտությամբ՝

$$\bar{y}_x = f(x_1, x_2, \ldots, x_n):$$

Բազմակի ռեգրեսիայի մոդելների կառուցումն ընդգրկում է հետևյալ փուլերը.

ա) կապի ձևի ընտրումը (ռեգրեսիայի հավասարում),
բ) գործոնային հատկանիշների ընտրումը,
գ) համակցության բավարար ծավալի ապահովումը արդյունավետ գնահատական ստանալու համար:

Ռեգրեսիայի հավասարման ընտրությունը դժվարանում է նրանով, որ կախվածության ցանկացած տեսքի համար կարելի է ընտրել մի շարք հավասարումներ, որոնք տարբեր կերպ կբնութագրեն այդ կապերը:

Փոխկապվածության բազմագործոն մոդելների կառուցման պրակտիկան ցույց է տալիս, որ սոցիալ-տնտեսական երևույթների միջև իրականում գոյություն ունեցող կախվածությունը կարելի է նկարագրել՝ կիրառելով մոդելների հինգ տեսակ.

1) գծային՝ $\bar{y}_{x_1, x_2, \ldots, x_n} = a_0 + a_1x_1 + a_2x_2 + \ldots + a_nx_n;$

2) աստիճանային՝ $\bar{y}_{x_1, x_2, \ldots, x_n} = a_0\, x_1^{a_1}\, x_2^{a_2} \ldots\ldots x_n^{a_n};$

3) ցուցչային՝ $\bar{y}_{x_1, x_2, \ldots, x_n} = e^{a_0 + a_1x_1 + a_2x_2 + \ldots + a_nx_n};$

4) պարաբոլային՝ $\bar{y}_{x_1, x_2, \ldots, x_n} = a_0 + a_1x_1^2 + a_2x_2^2 + \ldots + a_nx_n^2;$

5) հիպերբոլային՝ $\bar{y}_{x_1, x_2, \ldots, x_n} = a_0 + \frac{a_1}{x_1} + \frac{a_2}{x_2} + \ldots\ldots + \frac{a_n}{x_n}:$

Տնտեսագիտորեն տրամաբանական մեկնաբանություն տալու համար գծային մոդելներն ավելի պարզ են ու մատչելի, ուստի այդ առումով ոչ գծային մոդելները բերվում են գծայինի՝ լոգարիթման ճանապարհով:

ԲԱԶՄԱԿԻ ԿՈՌԵԼՅԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԱԿԻՑ – հաշվարկվում է արդյունքային (y) և մի շարք գործոնային ցուցանիշների (x_i) միջև կապի սերտությունը գնահատելու համար:

Արդյունքային (y) և երկու գործոն-ցուցանիշների (x_1; x_2) միջև կապի սերտությունը գնահատելու համար բազմակի կոռելյացիայի գործակիցը կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$R_{y/x_1,x_2} = \sqrt{\frac{r^2_{yx_1} + r^2_{yx_2} - 2r_{yx_1}\, r_{yx_2}\, r_{x_1x_2}}{1 - r^2_{x_1x_2}}}$$

որտեղ՝

$r_{x_1x_2}$ -ը x_1 և x_2 ցուցանիշների միջև զույգային կոռելյացիայի գործակիցն է:

r_{yx_1} և r_{yx_2}-ը y-ի և x_1-ի ու x_2-ի միջև եղած կոռելյացիայի կապն է:

Բազմակի կոռելյացիայի գործակիցը ($Ryx_1, x_2, x_3, \ldots, x_n$) կարելի է հաշվարկել նաև այլ բանաձևով, եթե ազդող գործոնների թվաքանակը հավասար է n-ի: Այն արտահայտվում է հետևյալ տեսքով՝

$$R_{yx_1, x_2, \ldots\ldots x_n} = \sqrt{\beta_1 r_{yx_1} + \beta_2 r_{yx_2} + \ldots\ldots + \beta_n r_{yx_n}} = \sqrt{\sum_{i=1}^{n} \beta_i r_{yx_i}}$$

որտեղ՝ β_i -ն ազդող i-րդ գործոնի (x_i), արդյունքային ցուցանիշի (y) և բազմագործոն հավասարման մեջ ներառվող գործակիցների (a_i) համախմբման (ստանդարտացման) ընդհանուր գործակիցն է, որն իր հերթին արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$\beta_i = a_i \frac{\sigma_y}{\sigma_{y_i}}$$

որտեղ՝ σ_y և σ_x, համապատասխանաբար y-ի և x_i -ի միջին քառակուսային շեղումներն են

$$\sigma_y = \sqrt{\overline{y_i^2} - \overline{y_i}^2} \quad \text{և} \quad \sigma_{x_i} = \sqrt{\overline{x_i^2} - \overline{x_i}^2}$$

r_{yxi} - ն արդյունքային ցուցանիշի (y) և ազդող i-րդ գործոնի միջև եղած կոռելյացիայի գործակիցն է:

Բազմակի կոռելյացիայի գործակիցը փոփոխվում է 0-ից մինչև 1-ի սահմաններում՝ $0 \le R \le 1$:

Եթե R-ը ձգտում է 1-ի, նշանակում է ցուցանիշների միջև գոյություն ունի սերտ կապ, որի խտությունը մեծ է կամ ֆունկցիոնալ է:

Փոքրաթիվ դիտարկումների դեպքում բազմակի կոռելյացիայի գործակցի արժեքը, որպես կանոն, չափից ավելի է բարձրանում, բայց ոչ ավելի 1-ից:

ԲԱԺՆԵՏԵՐ – իրավաբանական կամ ֆիզիկական անձ է, որը հանդիսանում է բաժնետիրական ընկերության մեկ կամ մի քանի բաժնետոմսերի սեփականատեր, և որոնց միջոցով ունի բաժնային մասնակցություն տվյալ ընկերության գույքում: Կան երկու հիմնական տեսակի բաժնետերեր. ա) արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերեր, որոնք ունեն հաստատագրված շահաբաժին ստանալու և բաժնետիրական ընկերության լուծարման դեպքում բաժնետոմսերում ներդրած միջոցները ետ ստանալու առաջնահերթ իրավունք (ի տարբերություն սովորական բաժնետոմսերի սեփականատերերի), բ) սովորական բաժնետոմսերի սեփականատերեր, որոնք չնայած չունեն հաստա-

տագրված շահաբաժին ստանալու իրավունք, սակայն ունեն ձայնի իրավունք ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում: Որտեղ որոշվում են սովորական բաժնետոմսերի բաժնետերերի շահաբաժինների սահմանաչափը: Բոլոր բաժնետերերը հանդիսանում են բաժնետիրական ընկերության մասնակից:

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ – մեկ բաժնետոմսի հաշվով ստացված զուտ շահույթի (բաժնետոմսի շահույթի նորմայի) և բաժնետոմսի շուկայական գնի հարաբերակցությունն է՝ արտահայտված տոկոսներով:

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ – տվյալ ընկերության կողմից առանձնացված և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ստորաբաժանում է, որը գտնվում է ընկերության գտնվելու վայրից դուրս, ներկայացնում է նրա շահերը, իրականացնում նրա պաշտպանությունը: Ներկայացուցչությունը գործում է ընկերության կողմից հաստատված կանոնակարգի հիման վրա: Նրան գույքը տրամադրվում է իր ընկերության կողմից և այն հաշվառվում է ինչպես իր, այնպես էլ այդ ընկերության հաշվեկշռում:

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ԲԸ) – իրավաբանական անձ, որի կանոնադրական հիմնադրամը (կապիտալը) բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի: Բաժնետիրական ընկերության հիմնադիր փաստաթուղթը կանոնադրությունն է: Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բանկային հաշիվներ բացել ՀՀ և այլ պետությունների բանկերում: Բաժնետիրական ընկերությունները կարող են լինել բաց կամ փակ, որը պետք է արտահայտվի նրա կանոնադրությամբ և ֆիրմային անվանմամբ:

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ – բաժնետիրական ընկերության սեփական կապիտալի մի մասն է, որը ձևավորվում է թողարկված բաժնետոմսերի վաճառքից և իրենից ներկայացնում է բաժնետերերի կողմից ներդրված կապիտալի (միջոցների) ընդհանուր գումարը: Հանդիսանում է բաժնետիրական ընկերության սեփականությունը, բաժնետոմսերի անվանական արժեքին հա-

մահունչ: Բաժնետիրական կապիտալը հիմնականում ներառում է կանոնադրական կապիտալը և, եթե բաժնետոմսերն իրացվում (վաճառվում) են անվանական արժեքից բարձր գնով, ապա ձևավորվում է լրացուցիչ կապիտալ:

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԱՐՏՈՆՅԱԼ – որը չափվում է բանկի կողմից թողարկվող ցանկացած բաժնետոմսի անվանական արժեքով, որոնց դիմաց շահաբաժին վճարվելու է խոստացված կայուն դրույքաչափերով:

ԲԱԺՆԵՏՈՄՍ – արժեթուղթ է, որը վկայում է դրա տիրոջ կողմից բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալ (հիմնադրամ) ներդնելու փաստը, և իրավունք է տալիս նրան մասնակցելու ընկերության կառավարմանը, ստացված շահույթին և ընկերության լուծարման ժամանակ մնացած ունեցվածքի բաժանմանը: Բաժնետոմսը չունի գործողության ժամկետ և գոյություն ունի այնքան ժամանակ, քանի դեռ կա տվյալ բաժնետիրական ընկերությունը: Բաժնետոմսը, որպես փաստաթուղթ, պետք է պարունակի հետևյալ ռեկվիզիտները՝ բաժնետիրական ընկերության ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը, արժեթղթի անվանումը, դրա տեսակը, հերթական համարը, թողարկման ամսաթիվը, անվանական արժեքը, քանակը, շահաբաժնի (դիվիդենտի) վճարման ժամկետը, բաժնետիրական ընկերության վարչության նախագահի ստորագրությունը: Բաժնետոմսերը լինում են անվանական և ըստ ներկայացնողի: Անվանական բաժնետոմսերի մեջ նշվում է սեփականատիրոջ անունը, այն գրանցվում է բաժնետիրական ընկերության հատուկ գրքում, ուր նշվում է, թե ով, ինչպիսի և ինչքան բաժնետոմս է տնօրինում: Ըստ ներկայացնողի տիպի բաժնետոմսում սեփականատիրոջ անունը չի նշվում:

ԲԱԺՆԵՏՈՄՍ ԱՐՏՈՆՅԱԼ – դա բաժնետիրական ընկերության կառավարմանը մասնակցելու իրավունք չի տալիս, բայց տալիս է առաջնահերթ իրավունք՝ սահմանված կայուն չափի շահաբաժնի ստացման համար նույնիսկ այն դեպքում, երբ ընկերությունը համապատասխան շահույթի գումար չի ստացել: Արտոնյալ բաժնետոմսերի թողարկումը թույլ է տալիս, սեփական միջոցների ներգրավման ճանապարհով, ավելացնել բաժ-

նետիրական ընկերության կանոնադրական կապիտալը, ի տարբերություն պարտատոմսերի, որոնք սեփականության իրավունք չեն տալիս դրանց տերերին և հանդիսանում են փոխառու աղբյուրներ:

ԲԱԺՆԵՏՈՄՍ ՀԱՍԱՐԱԿ – դա իրավունք է տալիս մասնակցելու բաժնետիրական ընկերության կառավարմանը, շահաբաժնի (դիվիդենտի) ստացմանը, որի չափը որոշվում է բաժնետերերի ժողովում՝ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից և ընկերության գործունեության ֆինանսական արդյունքները որոշելուց հետո:

ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ – մեկ բաժնետոմսին ընկնող այն եկամուտն է, որը հիմնված է կոնկրետ օրվա դրությամբ դրա շուկայական արժեքի և այդ ժամանակաշրջանում վճարվող շահաբաժինների վրա: Սովորաբար այն հաշվարկվում է բաժնետոմսի տարեկան շահաբաժնի և նրա շուկայական արժեքի հարաբերակցությամբ:

ԲԱԺՆԵՏՈՄՍԻ ՇԱՀՈՒՅԹԻ ՆՈՐՄԱ – ցույց է տալիս բաժնետիրական ընկերության զուտ շահույթի (հարկումից հետո) և տարվա ընթացքում շրջանառությունում գտնվող հասարակ բաժնետոմսերի միջին թվաքանակի հարաբերակցությունը: Այս ցուցանիշը մեկ հասարակ բաժնետոմսին ընկնող զուտ շահույթի չափն է, և որքան բարձր է դա, նշանակում է հավասար պայմաններում նույնչափ արդյունավետ են օգտագործվել բաժնետոմսերը: Այս ցուցանիշը շատ զգայուն է շուկայի մրցակցության նկատմամբ, այդ պատճառով էլ յուրաքանչյուր բաժնետիրական ընկերության գործունեությունը գնահատելիս հետազոտվում են նրա տնտեսական կապերը տարբեր ժամանակահատվածներում:

ԲԱՆԿ – ֆինանսավարկային հիմնարկություն է, որն իրականացնում է դրամական միջոցներով և արժեթղթերով տարբեր տեսակի գործառնություններ, ցուցաբերում է ֆինանսական ծառայություններ կառավարությանը, տնտեսավարող սուբյեկտներին, կազմակերպություններին, քաղաքացիներին և այլ բանկերին: Ներգրավում է ազատ դրամական միջոցներ ավանդների

ու դեպոզիտների տեսքով, տրամադրում է տարբեր տեսակի վարկեր՝ դրա կարիքը զգացողներին (վարկառուներին, փոխառուներին), և կատարում է բազմատեսակ գործառնություններ ու ծառայություններ:

ԲԱՆԿ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ – ոչ պետական վարկային հիմնարկություն է, որն իրականացնում է տարբեր տեսակի բանկային գործառնություններ և միաժամանակ կազմակերպություններին և բնակչությանը մատուցում է բազմաբնույթ ֆինանսական ծառայություններ: Բանկի հիմնական գործունեության տեսակներից են՝ ընթացիկ հաշիվների վարումը, վճարահաշվարկային գործառնությունները, ավանդների ներգրավումը, կանխիկ դրամի ընդունումը և տրամադրումը, առևտրային, սպառողական և հիփոթեքային վարկերի տրամադրումը: Լրացուցիչ ծառայություններից են՝ գույքի հավատարմագրային կառավարումը, արտարժույթի և արժեթղթերի առք ու վաճառքը, վարկային քարտերի համակարգը և անձնական կենսաթոշակային հիմնադրամների կառավարումը:

ԲԱՆԿ ԷՄԻՍԻՈՆ – բանկ (որպես կանոն՝ կենտրոնական բանկ), որն օրենսդրորեն օժտված է բանկնոտներ թողարկելու, երկրում դրամաշրջանառությունը, արտարժույթի փոխարժեքը և վարկը կարգավորելու, երկրի արժութային պահուստների պահպանման մենաշնորհային իրավունքով: Տվյալ բանկերն իրականացնում են բանկային տոմսերի (բանկնոտների) թողարկում և վարկային համակարգի կենտրոնն են: Հայաստանի Հանրապետությունում միակ էմիսիոն բանկը ՀՀ կենտրոնական բանկն է:

ԲԱՆԿ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ – մասնագիտացված բանկ է, որն ավանդներ է ընդունում հիմնականում բնակչությունից, առաջարկում է խնայողական տարբեր հաշիվների բացում և վարում, ներդրումներ է կատարում հուսալի արժեթղթերում (այդ թվում՝ պետական պարտատոմսերում), ինչպես նաև առաջարկում է հաշվարկային ծառայություններ, վարկեր, վարկային քարտեր, բանկային փոխատվություններ և այլն: Խնայողական բանկերը նպաստում են բնակչության խնայողությունների և ազատ դրամական միջոցների բանկային համակարգ ներգրավ-

մանը: Կարող է ստեղծվել որպես բաժնետիրական ընկերություն, կամ որպես փոխադարձ-խնայողական բանկ: Ներկայումս գործում են խնայբանկերի մի քանի տեսակներ՝ հավատարմագրային-խնայողական, փոխադարձ-խնայողական և փոստա-խնայողական բանկեր:

ԲԱՆԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ – 1) երկրի գլխավոր բանկը, որն օժտված է բանկնոտների մենաշնորհային թողարկման, դրամաշրջանառության կարգավորման, բանկերի և այլ վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորման և վերահսկման, դրամավարկային և արժութային քաղաքականության մշակման ու իրականացման, երկրի պաշտոնական միջազգային պահուստների պահպանման և կառավարման իրավունքով: Հանդիսանում է «բանկերի բանկը», կառավարության ֆինանսական գործակալը՝ պետական բյուջեն սպասարկելիս, իրականացնում է կառավարության բանկային սպասարկումը: Պատասխանատու է երկրի օրինական վճարամիջոցի՝ թղթադրամի և մետաղադրամի թողարկման համար, որի միջոցով ստանում է մշտական իրացվելիություն և առևտրային բանկերի համար դառնում է իրացվելիության աղբյուր: Իրականացնում է դրամավարկային քաղաքականություն, օգտագործելով հետևյալները. կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նորմատիվի պաշտոնական տոկոսադրույքների սահմանումը, բաց շուկայական գործառնությունները, բանկերի վերավարկավորումը և կառավարության վարկավորումը, արժութային ինտերվենցիաները, պետական արժեթղթերով գործառնությունները, դրամական զանգվածի աճի նպատակային կողմնորոշիչների սահմանումը, քանակական վարկային սահմանափակումները: Տարբեր երկրներում կենտրոնական բանկերին անվանում են տարբեր կերպ՝ ազգային, պետական, ժողովրդական: Մի շարք երկրներում կենտրոնական բանկի կապիտալի մեծ մասը (կամ ամբողջությամբ) պատկանում է պետությանը, թեպետ դրանց բաժնետեր կարող են լինել նաև առևտրային բանկերը և ֆինանսական ինստիտուտները:

ԲԱՆԿ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ – որպես կոոպերատիվ կազմակերպաիրավական ձևով հիմնադրված բանկ է: Կոոպերատիվ բանկի մասնակիցները (անդամները), անկախ բանկի կանոնադրական

կապիտալում իրենց մասնակցության չափից, ունեն մեկ ձայնի իրավունք: Բնութագրվում է սեփականության հատուկ ձևով և ստացվող շահույթի օգտագործման հատուկ մեխանիզմով (շահույթը բաշխվում է հիմնականում բանկի մասնակիցներին՝ նրանց նպաստավոր պայմաններով ծառայություններ մատուցելու համար): ՀՀ օրենսդրությամբ կոոպերատիվ բանկն առանձնացված չէ որպես բանկերի հատուկ տեսակ: Կոոպերատիվ բանկն ունի առնվազն երեք մասնակից: Կոոպերատիվ բանկի շահաբաժիններ վճարելու, նոր մասնակիցներ ընդունելու, բանկում մասնակցությունը դադարելու, ինչպես նաև բանկի լուծարման դեպքում բանկի կապիտալը մասնակիցների միջև բաշխելու կարգը սահմանվում է կոոպերատիվ բանկի կանոնադրությամբ:

ԲԱՆԿ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ – այս անվանմամբ հայտնի են Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը և նրա մասնաճյուղերը, Զարգացման միջազգային ասոցիացիան ու Միջազգային ֆինանսական կորպորացիան: Այս երեք միջազգային ֆինանսական ինստիտուտներից յուրաքանչյուրն ունի Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ-ի) ինքնուրույն մասնագիտացված հիմնարկության կարգավիճակ: Համաշխարհային բանկը (ՀԲ) ստեղծվել է Բրետոն Վուդի համաժողովում (1944թ.) և սկսել գործել 1946թ.ից: Բանկի անդամները պարտադիր պետք է լինեն Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) անդամներ: ՀԲ-ի բարձրագույն մարմինը կառավարիչների խորհուրդն է, որում յուրաքանչյուր երկիր ունի իր ներկայացուցիչը: Ձայները որոշվում են ըստ ԱՄՀ-ում առանձին երկրների քվոտայի: Օպերատիվ աշխատանքն իրականացնում է 20 տնօրեններից բաղկացած տնօրինությունը, ընդ որում ամենամեծ քվոտայով երկրներից յուրաքանչյուրը ներկայացված է մեկական տնօրենով, իսկ մնացած 15 տնօրեններն ընտրվում են մյուս երկրների կողմից 2 տարի ժամկետով: ՀԲ-ն ստեղծվեց երկարաժամկետ վարկավորման և մասնավոր փոխառությունների երաշխավորման ճանապարհով, 2-րդ համաշխարհային պատերազմից հետո Արևմտյան Եվրոպայի տնտեսության վերականգնմանը աջակցելու նպատակով: Հետագայում բանկն անցավ գլխավորապես շուկայական պայմաններով վարկային գործառնություններին: Վարկերը, պետության երաշ-

խավորության դեպքում, տրամադրվում են միայն կառավարություններին և կենտրոնական բանկերին՝ երկրի տնտեսական զարգացման համար նախատեսված նախագծերի (ծրագրերի) ֆինանսավորման համար: Դրանց օգտագործումը խիստ կենտրոնացված է և կատարվում է փուլերով՝ նախագծի իրացմանը զուգընթաց: ՀԲ-ի վարկերի տոկոսադրույքները հաշվարկվում են՝ ելնելով կապիտալների միջազգային շուկաների տոկոսադրույքներից: ՀԲ-ի ռեսուրսները գոյանում են անդամ երկրների մուծումներից, ինչպես նաև՝ կապիտալների միջազգային շուկաներում պարտատոմսային փոխառությունների (10-ից 30 տարի ժամկետով) թողարկման միջոցով ստացված փոխառու միջոցներից: ՀԲ-ի փոխառությունները համարվում են ամենաապահովվածներից մեկը:

ԲԱՆԿ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ – մասնագիտացված բանկ է, որը զբաղվում է հիփոթեքային վարկերի (անշարժ գույքի գրավի դիմաց վարկերի) տրամադրմամբ, անշարժ գույքի ձեռք բերման, հիփոթեքների վերավաճառքի, տարբեր տեսակի տեխնիկական ծառայությունների մատուցման գործունեությամբ: Հիփոթեքային բանկի կողմից տրամադրվող վարկերը սովորաբար ունեն երկարաժամկետ բնույթ: Որպես դրամական միջոցների աղբյուրներ հանդես են գալիս, առավելապես, բանկի այն հաճախորդների ավանդները, որոնք ցանկանում են ստանալ հիփոթեքային վարկ և բանկի սեփական կապիտալը: Նրանք հավաքագրում են ռեսուրսներ արժեթղթերի հատուկ տեսակի՝ գրավաթղթերի, թողարկման միջոցով, որոնց համար որպես ապահովություն ծառայում է բանկերում գրավադրված անշարժ գույքը: Կախված վարկավորման ուղղություններից, հիփոթեքային բանկերը բաժանվում են հողային բանկերի, որոնք վարկ են տրամադրում հողամասի գրավի դիմաց, մելիորատիվ բանկերի, որոնք վարկ են տրամադրում մելիորատիվ (հողաբարելավման) աշխատանքների համար, կոմունալ բանկերի, որոնք վարկ են տրամադրում քաղաքի անշարժ գույքի գրավի դիմաց: ՀՀ օրենսդրությամբ, հիփոթեքային բանկը առանձնացված չէ որպես բանկերի հատուկ տեսակ:

ԲԱՆԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ – խոշոր ունիվերսալ ֆինանսավարկային հիմնարկություն, որը գործում է մի քանի երկրներում և

համաշխարհային շուկայում: Այդ բանկերը փոխատվական կապիտալների շուկայում գլխավոր միջնորդներն են: Որպես կանոն, ունեն օտարերկրյա ներկայացուցչությունների լայն ցանց:

ԲԱՆԿ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ – մունիցիպալ կառուցվածքների սեփականության ներքո գտնվող բանկ է: ՀՀ օրենսդրությամբ մունիցիպալ բանկը առանձնացված չէ որպես բանկերի հատուկ տեսակ:

ԲԱՆԿ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ – բանկ, որն ամբողջությամբ կամ մեծ չափով գործում է արժեթղթերի շուկայում, մասնագիտացված է տնտեսության տարբեր ճյուղերի, գլխավորապես՝ արդյունաբերության, առևտրի և տրանսպորտի երկարաժամկետ ֆինանսավորման ու վարկավորման, բաժնետիրական կապիտալի մեջ ներդրումներ կատարելու և բաժնետիրական ընկերություններին փոխատվություններ տրամադրելու մեջ: Հանդես է գալիս որպես պարտատոմսերի և բաժնետոմսերի նոր թողարկումների երաշխավոր, գործում է հիմնականում տարբեր ընկերությունների արժեթղթերի սկզբնական տեղաբաշխման և վերավաճառքի ոլորտում, ինչպես նաև իրենց հաճախորդների հանձնարարությամբ իրականացնում է բրոքերային գործառնություններ: Առևտրային բանկերից տարբերվում են նրանով, որ սովորաբար չեն ընդունում (կամ գրեթե չեն ընդունում) ավանդներ, չեն վարում հաշվարկային գործառնություններ և չեն տրամադրում կարճաժամկետ վարկեր: Իրենց ռեսուրսների ճնշող մասը հավաքագրում են սեփական բաժնետոմսերի, պարտատոմսերի և փոխառու այլ պարտավորությունների թողարկման, ինչպես նաև առևտրային բանկերից վարկերի ստացման ճանապարհով: Դրա հետ միասին նրանք ակտիվ դեր են խաղում արդյունաբերական և այլ ընկերությունների բաժնետոմսերը թողարկելու ու տեղաբաշխելու գործում: Այսպես՝ ԱՄՆ-ում ներդրումային բանկը, մասնագիտացած է արժեթղթերի թողարկման կազմակերպման, դրանց տեղաբաշխման և առևտրի մեջ, իսկ իրենց հաճախորդներին մատուցում է տարբեր ֆինանսական հարցերի գծով խորհրդատվական ծառայություններ, հիմնականում կողմնորոշված է դեպի մեծածախ ֆինանսական շուկաներ, Մեծ Բրիտանիայում մասնագիտացված է մանր և միջին ընկերություն-

ներում՝ միջնաժամկետ ու երկարաժամկետ ներդրումներ կատարելու մեջ (վարկերի տրամադրում, բաժնետոմսերի ձեռք բերում):

ԲԱՆԿ ՊԵՏԱԿԱՆ – բանկ, որը գտնվում է պետության սեփականության ներքո, այսինքն՝ որոնց կապիտալը ամբողջությամբ պատկանում է տվյալ երկրին: Տարբերում են կենտրոնական, առևտրային պետական և հատուկ պետական վարկային ինստիտուտներ:

ԲԱՆԿ ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ – բանկ, որը ենթարկվում է փակման կամ սնանկացման վտանգի և գտնվում է վերահսկողություն իրականացնող պետական մարմնի (սովորաբար կենտրոնական բանկի) հսկողության ներքո:

ԲԱՆԿ ՌԵԶԻԴԵՆՏ – բանկ, որը ստեղծվում է տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով և գործում է այդ երկրում՝ անկախ այն բանից, թե ովքեր են տվյալ բանկի մասնակիցները՝ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ:

ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴ – 1) լայն իմաստով՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց այն դրամական միջոցներն են, որոնք գտնվում են բանկում ժամանակավոր պահպանման համար: Բանկում պահվող ավանդները կարող են հաշվառվել հաճախորդի ավանդային կամ ընթացիկ հաշիվներում և դրանց դիմաց կարող են հաշվարկվել կամ չհաշվարկվել տոկոսներ: Բանկի հաշվեկշռում ավանդներն արտացոլվում են որպես պարտավորություններ, և ներդրված ավանդի մնացորդը գրանցվում է ավանդային հաշվի կրեդիտում, որն ավանդատուին տալիս է բանկից համարժեք դրամական գումարը ստանալու իրավունք: 2) Նեղ իմաստով՝ դրամական այն միջոցներն են, որոնք դրվել են բանկում ավանդների ձևով, և որոնց դիմաց բանկը վճարում է հաշվարկված տոկոսային եկամուտներ (տոկոսներ): Գոյություն ունեն բանկային ավանդների տարբեր տեսակներ՝ ցպահանջ, ժամկետային, անժամկետ և պայմանագրով նախատեսված այլ պայմաններով վերադարձվող ավանդներ: Բանկային ավանդի պայմանագիրը կնքվում է գրավոր, ավանդն առաջին իսկ պահանջով վերադարձնելու (ցպահանջ ավանդ), կամ ավանդը պայ-

մանագրով սահմանված որոշակի ժամկետի ավարտից հետո վերադարձնելու (ժամկետային ավանդ) պայմաններով:

ԲԱՆԿԱՅԻՆ ԱՈՒԴԻՏ – այն բանկային օրենսդրության պահանջներին համապատասխան, աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող աուդիտորական կազմակերպության կողմից բանկերի հաշվապահական հաշվառման վարման ճշտության ու ֆինանսական հաշվետվությունների անկախ ստուգումն է, որի արդյունքում տրվում է համապատասխան եզրակացություն այդ հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության արժանահավատության վերաբերյալ: Բանկային աուդիտի հիմնական նպատակն է՝ գնահատել բանկերի ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունն ու նրանց կողմից իրականացված ֆինանսական գործառնությունների համապատասխանությունը օրենսդրությանը: Համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, յուրաքանչյուր տարի բանկերը ստուգվում են օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտորական կազմակերպության կողմից: Բանկերը պարտավոր են ֆինանսական տարվա ավարտից հետո վեցամսյա ժամկետում մամուլում հրապարակել իրենց հաշվեկշռի և աուդիտորական եզրակացության համառոտ ամփոփագիրը, տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ – բանկը երաշխավորում է բանկային հաշվի և բանկային ավանդի հաշվով գործառնությունների ու հաճախորդների մասին տեղեկությունների գաղտնիությունը: Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են տրամադրվել միայն հաճախորդներին կամ նրանց ներկայացուցիչներին: Պետական մարմիններին ու դրանց պաշտոնատար անձանց նման տեղեկություններ կարող են տրամադրվել բացառապես օրենքով նախատեսված դեպքերում և սահմանված կարգով: Բանկային գաղտնիք համարվող տեղեկությունները բանկի կողմից հրապարակվելու դեպքում հաճախորդը, ում իրավունքները խախտվել են, իրավունք ունի բանկից պահանջել պատճառված վնասների հատուցում:

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – դրանք բանկերի գործառնություններն են՝ դրամական միջոցների ներգրավման և տեղաբաշխման, արժեթղթերի և հաշվարկների իրականացման գծով: Տարբերում են՝ ակտիվային, պասիվային և միջնորդային գործառնություններ: Ակտիվային գործառնությունների միջոցով բանկերը տեղաբաշխում են իրենց ունեցած ֆինանսական ռեսուրսները՝ սեփական և ներգրավված միջոցները: Որպես կանոն, այդպիսի գործառնություններն են վարկային (հաշվարկավարկային) և արժեթղթերով գործառնությունները: Բանկերի ակտիվային գործառնություններում ամենաբարձր տեսակարար կշիռը կազմում են վարկային գործառնությունները, որոնք հիմնականում բնորոշ են առևտրային բանկերին: Դրանք դասակարգվում են ըստ տարբեր չափանիշների՝ ապահովվածության բնույթի (ապահովված և չապահովված կամ բլանկային), մարման ժամկետների (ցպահանջ և ժամկետային), փոխառուների տեսակների (կազմակերպություններին, բանկերին, ֆոնդային բորսաների միջնորդներին, բնակչությանը): Պասիվային գործառնությունների միջոցով բանկերը ձևավորում են իրենց ֆինանսական ռեսուրսները, որոնք բանկերը հետագայում օգտագործում են վարկային և այլ ակտիվային գործառնություններ իրականացնելու համար: Առևտրային բանկերի պասիվները գոյանում են սեփական, ներգրավված և փոխառու այլ միջոցների հաշվին: Միջնորդային գործառնությունները բանկերի կողմից տարբեր տեսակի միջնորդական ծառայությունների մատուցումն է, հաճախորդների հանձնարարականների կատարումը:

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ – որոնք կարող են իրականացնել բանկերը՝ բանկային գործառնությունների հետ միասին, ինչպես նաև այլ վարկային կազմակերպությունները: Բանկային գործարքներին վերաբերում են հետևյալները. ա) դրամական ձևով պարտավորությունների կատարում նախատեսող՝ երրորդ անձանց համար երաշխավորությունների տրամադրումը, բ) երրորդ անձանցից դրամական ձևով պարտավորությունների կատարման պահանջի իրավունքի ձեռք բերումը, գ) քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ պայմանագրով՝ նրանց դրամական միջոցների և այլ գույքի հավատարմագրային կառավարումը, դ) օրենսդրությանը համապատասխան թանկարժեք մետաղներով և քարերով գործառնությունների իրականացումը,

ե) փաստաթղթերի և արժեքների պահպանման համար քաղաքացիներին ու իրավաբանական անձանց հատուկ տարածքների կամ դրանցում գտնվող պահեստարանների վարձակալության տալը, զ) լիզինգային գործառնությունները, է) խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցումը:

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ – փաստաթուղթ է, ըստ որի բանկը երաշխավորում է իր հաճախորդի ստանձնած դրամական պարտավորությունների պատշաճ կատարումը, այսինքն՝ այդ հաճախորդի կողմից պարտքը չմարելու դեպքում բանկն ինքն է դա իրականացնում: Մի բանկի կողմից տրված երաշխիքը կարող է ծառայել որպես ապահովում մեկ այլ բանկի կողմից տրամադրվող վարկի համար: Առավել տարածված են վճարային երաշխիքները, երբ երաշխիք տված բանկը պարտավորվում է պարտատիրոջ կամ արտահանողի առջև պատասխան տալ պարտապանի կամ ներմուծողի կողմից պայմանագրային պարտավորությունները կատարելու համար:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ – այս կամ այն երկրում պատմականորեն ձևավորված և օրենսդրորեն ամրագրված տարբեր տեսակի փոխկապված բանկերի և այլ վարկային կազմակերպությունների ամբողջությունն է, որոնք գործում են միասնական ֆինանսավարկային մեխանիզմի շրջանակներում: Բանկային համակարգը տվյալ երկրի վարկային համակարգի բաղկացուցիչ մասն է: Տարբեր երկրների բանկային համակարգերը միմյանցից տարբերվում են գործող բանկերի տեսակներով: Ներկայումս մեծ թվով երկրներում գործում է երկմակարդակ բանկային համակարգ, որի առաջին մակարդակում գտնվում է կենտրոնական բանկը (ԱՄՆ-ում՝ Դաշնային պահուստային համակարգը), իսկ երկրորդ մակարդակում՝ առևտրային բանկերի և այլ հաշվարկավարկային կազմակերպությունների ցանցը: Բանկային համակարգը պարտադիր ընդգրկում է կենտրոնական բանկը, որն իրականացնում է պետական էմիսիոն, արժութային և դրամավարկային քաղաքականություն:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ – տվյալ բանկի կողմից իրավաբանական և ֆիզիկական անձանց համար բացված հաշիվ է, որտեղ գրանցվում են հաճախորդի ավանդադրած դրամական միջոցները՝

դրամով կամ արտարժույթով: Այն արտահայտում է բանկի և նրա հաճախորդի միջև ֆինանսական փոխհարաբերությունները: Հաճախորդի կամ նրա կողմից նշված անձի անունից բանկային հաշիվը բացվում է, առաջին հերթին, անկանխիկ (չեկերով կամ վճարման հանձնարարականներով) հաշվարկներ կատարելու, հաշվում անկանխիկ միջոցներ կուտակելու և հետագայում դրանք նպատակային օգտագործելու համար: Միջոցներն այդ հաշվից կարող են դուրս գրվել կամ փոխանցվել հաճախորդի առաջին իսկ պահանջով: Հաշվում նվազագույն մնացորդները և մնացորդի վրա հաշվեգրվող տոկոսները կարող են տարատեսակվել: Հաշիվը բացվում է բանկի և հաճախորդի միջև կնքվող պայմանագրի հիման վրա: Գոյություն ունեն բազմաթիվ բանկային հաշիվներ՝ ընթացիկ, հաշվարկային, ցպահանջ, ժամկետային, մեկ անձի, մի քանի անձանց, ընդհանուր կամ միավորված և այլ հաշիվներ: ՀՀ օրենսդրության համաձայն, ՀՀ տարածքում գործող բանկերը կարող են իրենց կողմից սահմանված կարգով, ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող հաճախորդների սպասարկման նպատակով, ցանկացած արժույթով (ինչպես հայկական դրամով, այնպես էլ արտարժույթով) նրանց կամ նրանց կողմից նշանակված անձանց անունով բացել և վարել միջազգային բանկային պրակտիկայում ընդունված հաշիվներ առանց սահմանափակումների:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀՈԼԴԻՆԳ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ – 1) ընդհանուր նշանակությամբ՝ ցանկացած ընկերություն է, որը տնօրինում կամ վերահսկում է մեկ կամ մի քանի բանկերի: ԱՄՆ-ում այդպիսին է համարվում այն ընկերությունը, որը վերահսկում է առնվազն երկու բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 25 և ավելի տոկոսը: Հոլդինգի կազմակերպումը թույլ է տալիս միավորել տարբեր բանկեր և այլ վարկային կազմակերպություններ, որոնք զբաղվում են ինչպես դասական, այնպես էլ նոր բանկային գործառնություններով: 2) հիմնական վարկային կազմակերպություն է, որը հնարավորություն ունի տնօրինելու մեկ կամ մի քանի վարկային կազմակերպությունների (դուստր վարկային կազմակերպություններ) կողմից ընդունվող որոշումները: Այդպիսի իրավունք կարող է ձեռք բերվել հիմնական վարկային կազմակերպության կողմից մեկ կամ մի քանի վարկային կազ-

մակերպությունների կանոնադրական կապիտալում գերակշռող մասնակցության կամ նրանց հետ կնքված պայմանագրի ուժով:

ԲԱՆԿԱՅԻՆ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏ – տվյալ բանկի կողմից հաճախորդին տրված պլաստիկ քարտն է, որը հանդես է գալիս քարտի տիրոջ անվանմամբ, ստորագրությամբ և ծածկագրի համարով: Պլաստիկ քարտը սպառողի կողմից օգտագործվում է որպես վճարային փաստաթուղթ, որը հավաստում է քարտի տիրոջ հաշվում միջոցների կամ այն թողարկած բանկում նորացվող վարկի առկայության մասին: Քարտի տերերը կարող են լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք: Պլաստիկ քարտերի միջոցով դրա տերը կարող է կատարել անկանխիկ վճարումներ՝ ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների դիմաց, ստանալ կանխիկ դրամ բանկերում կամ ավտոմատ հարմարանքներում, հաստատել իր վճարունակությունը՝ չեկերի օգնությամբ հաշվարկներ կատարելիս:

ԲԱՆԿԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ – նաև բանկային գրքույկ և բանկային սերտիֆիկատ է, և միաժամանակ համարվում է այն արժեթուղթը, որը հավաստում է ավանդի գումարն ու ավանդատուի իրավունքը՝ սահմանված ժամկետի ավարտից հետո վկայագիր տված բանկում կամ այդ բանկի ցանկացած մասնաճյուղում ստանալ ավանդի գումարը և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսային գումարները: Բանկային վկայագիրը կարող է լինել ըստ ներկայացնողի կամ անվանական:

ԲԱՆԿԱՅԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ – 1) զեղչադրույք է կամ հաշվարկային դրույք, որը սահմանում է տվյալ երկրի կենտրոնական բանկն այն պարտքային արժեթղթերի վերահաշվառման գծով, որոնցով կենտրոնական բանկը կատարում է գործառնություններ, 2) տոկոսադրույք, որը սահմանում է տվյալ երկրի կենտրոնական բանկը՝ այլ բանկերին որոշակի ապահովության դիմաց տրամադրվող վարկերի գծով, 3) տոկոսադրույք, որը սահմանում է տվյալ բանկը՝ իր հաճախորդներին վարկ տրամադրելիս և ավանդներ (դեպոզիտներ) ներգրավելիս:

ԲԱՆԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ – բանկերի գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական նորմատիվ ակտերի

ամբողջությունն է: Բանկային օրենսդրությունը մշակում է ինչպես օրենսդիր իշխանությունը, այնպես էլ կենտրոնական բանկը և գործադիր իշխանությունը (կառավարությունը): Օրենսդրական կարգավորումն իրականացնողները, որպես կանոն, հանդիսանում են Կենտրոնական բանկը և Ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարությունը՝ որպես կառավարության լիազորած մարմին: Բանկային օրենսդրության մեջ կենտրոնական բանկին հատկացվում է երկակի դեր, այսինքն՝ մի կողմից նա գործում է օրենսդիր մարմնի ընդունած օրենքներով, իսկ մյուս կողմից էլ, ընդունում է նորմատիվ ակտեր, որոնք կարգավորում են բանկերի և այլ անձանց գործունեությունը: Բացի դրանից, կենտրոնական բանկի վրա է դրված բանկերի կողմից իրավական նորմերի պահանջների կատարմանը հետևելու պարտականությունը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՕՖՇՈՐԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐ – աշխարհագրական և (կամ) իրավաբանական առումով առանձնացված տարածքներ են: Վերջիններս դրանց մասնակիցներն օգտագործում են ոչ ռեզիդենտների հետ բանկային գործառնություններ կատարելու համար՝ այնպիսի պայմաններով, որոնք տարբերվում են կապիտալի ներքին ազգային շուկայում գործողներից: Այդ գոտիներում գործառնությունների վարումը հիմնականում ենթարկվում է օրենսդրական կարգավորման (գոտիներն ունեն խիստ մասնագիտացված բնույթ, որը բացառում է դրանց մասնակիցների կողմից զուտ ֆինանսական գործառնությունների իրականացումը), իսկ մասնակիցներն ամբողջությամբ ազատված չեն հարկեր վճարելուց, և նրանց գործնականում արգելում են արժեթղթերով գործառնությունների իրականացումը:

ԲԱՆԿԵՐ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ – որպես բաժնետիրական ընկերություն, կազմակերպաիրավական ձևով հիմնադրված բանկերն են: Բաժնետիրական բանկի կանոնադրական կապիտալը բաժանված է որոշակի թվով բաժնետոմսերի: Բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը բաժնետերերը կրում են իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում: Կարող են լինել բաց կամ փակ բաժնետիրական ընկերությունների ձևով կազմավորված բանկեր:

Բաց բաժնետիրական ընկերության (ԲԲԸ) մասնակիցները կարող են վաճառել (օտարել) իրենց պատկանող բաժնետոմսերը՝ առանց մյուս բաժնետերերի համաձայնության: Այդպիսի ընկերությունը կարող է անցկացնել իր կողմից թողարկված բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն, նրա բաժնետոմսերը կարող են ազատ գնվել և վաճառվել արժեթղթերի շուկայում: ԲԲԸ բաժնետերերի թիվը չի սահմանափակվում:

Փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ) բաժնետոմսերը չեն գնվում և վաճառվում արժեթղթերի շուկայում, և նրա վրա չեն տարածվում բաց բաժնետիրական ընկերության (ԲԲԸ) գործունեությանը վերաբերող շատ կանոններ: Օրինակ, պարտավոր չէ ի գիտություն բոլորի, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը և հաշվապահական հաշվեկշիռը: ՓԲԸ բաժնետերերի թիվը սովորաբար սահմանափակ է (օրինակ, Մեծ Բրիտանիայում՝ 50, իսկ Հայաստանում՝ 49-ից ոչ ավելի):

ԲԱՆԿԵՐ ՓԱՅԱՏԻՐԱԿԱՆ – որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, կազմակերպաիրավական ձևով հիմնադրված բանկերն են: Այդպիսի համատեքստում «փայ» բառը նշանակում է, որ դրանք բաժնետիրական բանկեր չեն. մասնակիցների բաժնեմասերը կանոնադրական կապիտալում հասկացվում են որպես փայեր, այլ ոչ թե արժեթղթեր՝ բաժնետոմսերի ձևով:

ԲԱՆԿԵՐ ՓՈԽԱԴԱՐՁ-ԽՆԱՅՈՂԱԿԱՆ – կոոպերատիվ բանկային հիմնարկների տարատեսակ են, և տարածված են հատկապես ԱՄՆ-ում, առաջացել են 19-րդ դարի սկզբներին՝ բնակչության փոքր խնայողությունները հավաքագրելու նպատակով: Դրանց առանձնահատկությունն այն է, որ չունեն բաժնետիրական կապիտալ, ավանդատուների միջոցները կուտակվում են բացվող խնայողական և ինվեստիցիոն հաշիվներում, ինչպես նաև՝ տոկոսային չեկային հաշվում (ՆԱՈՒ-հաշվում): Իրականացվող գործառնությունների շրջանակով փոխադարձ-խնայողական բանկերը մոտ են առևտրային բանկերին: Նրանց նկատմամբ կիրառվում է պետական հարկային արտոնյալ ռեժիմ, քանի որ դրանք դասվում են ոչ առևտրային հիմնարկների դասին:

ԲԱՆԿԵՐ ՓՈՍՏԱ-ԽՆԱՅՈՂԱԿԱՆ – արտերկրում առավել տարածված խնայողական հիմնարկներից են և կազմակերպական առումով միավորված են փոստային համակարգին: Առաջացել են 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին: Ժամանակակից պայմաններում լայնորեն տարածված են Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Ֆինլանդիայում, Ճապոնիայում, Եգիպտոսում, Հնդկաստանում և այլ երկրներում: Հանդես են գալիս որպես պետության վարկատուներ և սպասարկում են բնակչությանը այն վայրերում, որտեղ չկան առևտրային բանկեր: Այս բանկերը չունեն բաժնետիրական կապիտալ, նրանց պարտավորությունները երաշխավորված են պետության կողմից: Բնակչության միջոցները կուտակում են փոստի բաժանմունքների միջոցով, որոնց դերը սահմանափակվում է միջոցների ընդունմամբ և տրամադրմամբ: Ակտիվները կազմված են պետական արժեթղթերից: Կատարում են հետևյալ գործառնությունները՝ բնակչության և ձեռնարկությունների (կազմակերպությունների) վարկավորում, չեկերի վճարում, փոխանցումների իրականացում:

ԲԱՆԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ – գործնականում բանկերը կարելի է դասակարգել՝ ելնելով հետևյալ չափանիշներից. 1) իրենց առջև դրված խնդիրներից՝ կենտրոնական բանկ (էմիսիոն), առևտրային բանկեր, 2) կազմակերպահրավական ձևից՝ կոոպերատիվ, փայատիրական, բաժնետիրական ընկերություններ (բաց և փակ), 3) գործունեության բնույթից՝ ունիվերսալ և մասնագիտացված:

ԲԱՆԿԻ ԱԿՏԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ – կոնկրետ բանկի իրացվելիության իրական մակարդակը գնահատելիս պետք է ուշադրություն դարձնել ոչ միայն որևէ ակտիվի եկամտաբերությանը, այլ նաև հաշվի առնել դրա ռիսկի աստիճանը: Հաշվի առնելով առևտրային բանկի հաշվեկշռի իրացվելիության գնահատման մեջ ակտիվային գործառնությունների ռիսկի գործոնը, կարելի է դուրս բերել նրա ակտիվների հիմնական բնութագրիչների միջև հետևյալ կախվածությունը. որքան բարձր է բանկի ակտիվների եկամտաբերությունը, այնքան մեծ է ռիսկը, և դրան առընթեր ցածր է բանկի հաշվեկշռի իրացվելիության մակարդակը, և ընդհակառակը:

ԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ – բանկի իրացվելիության վրա ազդող մեկ այլ կարևոր գործոն է համարվում նրա ակտիվների կառուցվածքը, այսինքն՝ բարձր իրացվելի ակտիվների տեսակարար կշիռը բանկի ակտիվների ընդհանուր ծավալում: Այս դեպքում, որքան մեծ է տվյալ ցուցանիշը, այնքան բարձր է բանկի իրացվելիությունը: Ակտիվների իրացվելիության աստիճանը կախված է դրանց նշանակությունից: Այսպես՝ օրինակ, բանկի դրամական ակտիվները նախատեսված են վճարային գործառույթների կատարման համար, իսկ վարկերը կարող են բավարարել հաճախորդների կարճաժամկետ ու երկարաժամկետ պահանջները և այլն:

ԲԱՆԿԻ ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ – արդյունք է, երբ բանկն ունի մեծ քանակությամբ վատ որակի վարկեր, կամ եթե նրա պորտֆելի մեծ մասը արժեզրկվում է, դա բերում է բանկային կապիտալի նվազման: Եթե ներդրողները և բաժնետերերը իմանում են այդ մասին և սկսում են հանել իրենց միջոցները, ապա բանկը կարող է անվճարունակ ճանաչվել: Անվճարունակության ռիսկը բանկի երկարաժամկետ կենսունակության ապահովման չափանիշն է:

ԲԱՆԿԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻՐՔ – բանկի տվյալ արժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների տարբերությունն է: Երբ տվյալ արժույթով արտահայտված ակտիվները հավասար են նույն արժույթով արտահայտված պարտավորություններին, ապա արժութային դիրքը կանվանվի փակ, իսկ դրանց անհավասար լինելու դեպքում կանվանվի բաց արժութային դիրք:

ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՌԻՍԿԵՐ – ներառվում են բանկի գործունեության ընթացքում առաջացող այն ռիսկերը, որոնք կապված չեն բանկի ներքին կազմակերպչական աշխատանքների հետ, սակայն թողել են իրենց ազդեցությունը բանկի ֆինանսական գործունեության արդյունքների վրա: Ռիսկերի այս խմբում ընդգրկվում են հետևյալները՝ *երկրի քաղաքական, սոցիալական, շուկայական, տարերային աղետների, տնտեսական, մակրոտնտեսական, ֆինանսական, օրենսդրական, փոխանցման, ճյուղային և այլ ռիսկերը*:

ԲԱՆԿԻ ԲԱՐՁՐ ԻՐԱՑՎԵԼԻ ԱԿՏԻՎՆԵՐ – դրանք կանխիկ դրամական միջոցներն են, կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերը, ՀՀ կենտրոնական բանկում թղթակցային հաշիվների և պարտադիր պահուստների միջոցներն ու ներդրված ավանդները (դեպոզիտները), առկա ստանդարտացված ծուլակտորները, ռեզիդենտ և օտարերկրյա բանկերում թղթակցային հաշիվները, ինչպես նաև ՀՀ գանձապետական արժեթղթերը՝ բացառությամբ գրավադրված և հետգնման պայմանագրով վաճառված արժեթղթերի:

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ – դրանք են՝ հաշվարկված և ստացված տոկոսային գումարները, մատուցված ծառայությունների դիմաց ստացված կոմիսիոն (միջնորդային) եկամուտները, հաճախորդների կողմից ծախսերի փոխհատուցումը, արտարժույթային գործառնությունների դիմաց ստացված եկամուտները:

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ – դրանք են՝ հաշվարկված և վճարված տոկոսային գումարները, կոմիսիոն ծառայությունների և արտարժութային գործառնությունների դիմաց վճարումները, կապի և փոստի ծառայությունների դիմաց կատարվող վճարումները:

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԶՈՒՏ ՄԱՐԺԱ – գործառնական եկամուտների և գործառնական ծախսերի տարբերության ու ընդհանուր ակտիվների հարաբերակցությունն է, կամ այլ կերպ՝ գործառնական շահույթի և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունն է:

ԲԱՆԿԻ ԴԱՍԱԿԱՐԳՎԱԾ (ՉԱՇԽԱՏՈՂ) ՎԱՐԿԵՐ – դրանք հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի վարկերի ամբողջականությունն է:

ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ – իրենից ներկայացնում է ստացված տոկոսները և կոմիսիոն (միջնորդային) գումարները, լիզինգային, ֆակտորինգային և հավատարմագրային գործառնություններից ստացված զուտ եկամուտները, արժեթղթերի վերավաճառքից ստաց-

ված զուտ եկամուտները, ստացված այլ եկամուտները, վճարված տոկոսները, վճարված աշխատավարձը և գործուղման ծախսերը, վճարված հարկերը և զուտ դրամական հոսքերը այլ գործառնական գործունեությունից:

ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ – իրենից ներկայացնում է պետական արժեթղթերում, այլ ժամկետային արժեթղթերում, անժամկետ արժեթղթերում ներդրումները, ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված ավանդների և հետգնման համաձայնագրերով գնած արժեթղթերը, վարկային ներդրումները (նվազեցված, նախկինում դուրս գրված վարկերի վերադարձը), այդ թվում՝ ֆակտորինգը, տեղաբաշխված ավանդները, լիզինգի նպատակով ակտիվների ձեռքբերման, լիզինգային գործառնություններից մայր գումարների ետ վերադարձը, հիմնական միջոցների օտարումը (ձեռք բերումը) և զուտ դրամական հոսքերը՝ ստացված այլ ներդրումային գործունեությունից:

ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ – իրենից ներկայացնում է ցպահանջ պարտավորությունների, ժամկետային պարտավորությունների զուտ ավելացումը (նվազումը), ՀՀ կենտրոնական բանկից ստացված վարկերի և հետգնման համաձայնագրով վաճառած արժեթղթերի ավելացումը (նվազումը), կանոնադրական կապիտալում բաժնետերերի ներդրումները, վճարված շահաբաժինները և զուտ դրամական հոսքերը՝ ստացված այլ ֆինանսական գործունեությունից:

ԲԱՆԿԻ ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻՑ ՎԵՐԱԴԱՐՁ – դրանք են՝ վարկերի հնարավոր կորուստների ծածկման պահուստահիմնադրամի հաշվին արտահաշվեկշիռ դուրս գրված վարկերի վերադարձը, այդ նույն պահուստահիմնադրամին մասհանված, բայց դեռևս արտահաշվեկշիռ դուրս չգրված վարկերի վերադարձը, արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստահիմնադրամի հաշվին դուրս գրված արժեթղթերի մարումը, ծախսերով դուրս գրված դեբիտորական պարտավորությունների և այլ գումարների (որոնց համար նախատեսված չեն պահուստներ) վերականգնումը:

ԲԱՆԿԻ ԵԿԱՄՏԱԲԵՐ ԱԿՏԻՎՆԵՐ – դրանք վարկային ներդրումներն են (առանց չաշխատող վարկերի), տեղաբաշխված դեպոզիտները, լիզինգային միջոցները, ֆակտորինգը, արժեթղթերում ներդրումները և այլ ակտիվները, որոնք կարող են տոկոսային եկամուտ ապահովել:

ԲԱՆԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ – բանկերի կողմից կազմվող ֆինանսական հաշվետվություն է, որը բնութագրում է հաշվետու ժամանակահատվածում բանկի գործունեության ֆինանսական արդյունքները, որի հետ անմիջականորեն կապված տարրերն են՝ եկամուտներն ու ծախսերը: Համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, բանկերը ՀՀ կենտրոնական բանկ պետք է ներկայացնեն ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություն եկամուտների և ծախսերի վերաբերյալ: Հաշվետվության մեջ ներառվում են. ա) բանկի եկամուտները, այդ թվում՝ տոկոսային եկամուտները, ոչ տոկոսային եկամուտները, և դուրս գրված ակտիվների վերադարձը, բ) բանկի ծախսերը, այդ թվում՝ տոկոսային ծախսերը, ոչ տոկոսային ծախսերը, հատկացումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին:

ԲԱՆԿԻ ԶՈՒՏ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ – դա զուտ տոկոսային և զուտ ոչ տոկոսային եկամուտների հանրագումարն է:

ԲԱՆԿԻ ԶՈՒՏ ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ – դա ոչ տոկոսային եկամուտների և ոչ տոկոսային ծախսերի տարբերությունն է:

ԲԱՆԿԻ ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ – դա տոկոսային եկամուտների և տոկոսային ծախսերի տարբերությունն է:

ԲԱՆԿԻ ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՄԱՐԺԱ – տոկոսային եկամուտների ու տոկոսային ծախսերի տարբերության և ընդհանուր (կամ եկամտաբեր) ակտիվների հարաբերակցությունն է: Այն ցույց է տալիս տոկոսադրույքների սպրեդի մակարդակը:

ԲԱՆԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՍԵՓԱԿԱՆ) ԿԱՊԻՏԱԼ – բանկի ընդհանուր ակտիվների և ընդհանուր պարտավորությունների տարբերությունն է: Անվանվում է նաև բանկի սեփական կապիտալ: Այն

արտացոլվում է հաշվեկշռի աջ մասում և ներառում է՝ կանոնադրական կապիտալը, գլխավոր պահուստները, վերագնահատման պահուստները, կուտակված շահույթը: Բանկի ընդհանուր կապիտալի ցուցանիշն ունի առավել մեծ նշանակություն նրա գործունեության համար, քանի որ առաջին հերթին, կարգավորող մարմինները սահմանում են կապիտալի անհրաժեշտ նվազագույն չափը, երկրորդը՝ որքան մեծ է բանկի ընդհանուր կապիտալի չափը, այնքան մեծանում է նաև ներդրողների, վարկառուների և հաճախորդների վստահությունը նրա նկատմամբ, որովհետև ընդհանուր կապիտալի մեծությունը բանկի հուսալիության գրավականն է: Այն աջակցում է բանկի եկամուտների աճին, չեզոքացնում է կորուստները, հնարավորություն է տալիս ժամանակին վճարելու շահաբաժիններ և միաժամանակ ապահովում է բանկի կայունությունը:

ԲԱՆԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ – արտացոլվում են հաշվեկշռի ձախ մասում և ներառում են՝ կանխիկ դրամական միջոցները (դրամով և արտարժույթով), թղթակցային հաշվի մնացորդը կենտրոնական բանկում և ռեզիդենտ ու ոչ ռեզիդենտ բանկերում, ներդրումներն այլ արժեթղթերում, պայմանագրերով ետ գնման արժեթղթերը, այլ բանկերին տրված վարկերը, հավատարմագրային գործառնություններից ստացվելիք գումարները, վարկային ներդրումները, հաշվարկված տոկոսները, հիմնական միջոցները և ոչ նյութական ակտիվները, լիզինգը, կանխավճարները և այլ ակտիվները:

ԲԱՆԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ (ROA) – հարկումից հետո զուտ շահույթի և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունն է: Այս ցուցանիշը բնութագրում է առաջին հերթին բանկի աշխատանքի արդյունավետությունը, քանի որ այն ցույց է տալիս բանկի տնօրինության տակ գտնվող մեկ միավոր ակտիվի օգտագործման արդյունքում նրա կողմից ստացվելիք շահույթի մեծությունը՝ հարկում կատարելուց հետո:

ԲԱՆԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ (AU) – գործառնական եկամուտների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունն է, որը բնորոշում է բանկի ենթակայու-

թյան ընդհանուր ակտիվների մեկ միավորին բաժին ընկնող գործառնական եկամուտների գումարի չափը:

ԲԱՆԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՍԻՎՆԵՐ – դրանք արտացոլվում են հաշվեկշռի աջ մասում և այն հավասար է պարտավորությունների ու ընդհանուր (սեփական) կապիտալի հանրագումարին:

ԲԱՆԿԻ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ցպահանջ պարտավորությունների հետ համեմատած ժամկետային պարտավորությունները ծախսատար են, քանի որ բանկը դրանց դիմաց տոկոսագումար է վճարում: Սակայն պարտավորությունների ժամկետայնության կառավարման տեսանկյունից, այսպիսի պարտավորություններն առավել հեշտ է կառավարել, քանի որ հաճախորդի կողմից դրանց հետ պահանջի ժամկետը ֆիքսված է: Հնարավոր է, որ ավանդը ժամկետից շուտ պահանջվի հաճախորդի կողմից, ուստի ռիսկի նվազեցման նպատակով պայմանագրում պարտադիր նշվում է, որ նախատեսված ժամկետից շուտ ավանդի հետ պահանջի դեպքում հաճախորդը տուգանք է մուծում բանկին:

ԲԱՆԿԻ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ – դրանք են՝ 1) ներգրավված ոչ դեպոզիտային միջոցների և ակտիվների հարաբերակցությունը, 2) վարկերի և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը, 3) բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը, 4) դրամական միջոցների և պետական պարտատոմսերի հանրագումարի և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

ԲԱՆԿԻ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅՈՒՆ – նրա ամենօրյա վճարունակությունն է՝ ժամանակին և առանց կորուստների կատարելու իր պարտավորությունները ավանդատուների ու պարտատերերի հանդեպ: Բանկն իրացվելի է, եթե նրա իրացվելի ակտիվների գումարը բավարար է ընթացիկ պարտավորությունները ժամանակին մարելու համար: Իրացվելի բանկի համար մատչելի են այն միջոցները, որոնք նա կարող է ներգրավել խելամիտ գնով և հենց այն պահին, երբ դրանք անհրաժեշտ են: Դա նշանակում է, որ այդպիսի բանկը կամ տնօրինում է իրացվելի միջոցների անհրաժեշտ գումարի, կամ դրանք կարող է ստանալ փոխա-

ռությունների կամ ակտիվների վաճառքի միջոցով: Եվ ընդհակառակը, իրացվելիության անբավարար մակարդակի դեպքում առևտրային բանկերը սովորաբար ունենում են ֆինանսական դժվարություններ, սկսում են կորցնել ավանդներ, որը փոքրացնում է նրանց կանխիկ միջոցները և ստիպում հրաժարվել առավել բարձր իրացվելի արժեթղթերից: Մյուս կողմից, բանկերը մեծ դժկամությամբ են փոխառություններ տրամադրում սնանկացման եզրին գտնվող բանկերին, կամ տրամադրում են միայն գրավի դիմաց և բարձր տոկոսներով, որն էլ ավելի է մեծացնում դրանց ծախսերը:

Բանկի իրացվելիությունը կախված է տվյալ բանկի ակտիվների և պասիվների ընթացիկ հավասարակշռության աստիճանից: Անհրաժեշտ իրացվելիություն ապահովելու համար առևտրային բանկի ակտիվների կառուցվածքը պետք է համապատասխանի իրացվելիության որակական պահանջներին:

ԲԱՆԿԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ (ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ) ԿԱՊԻՏԱԼ – ընդհանուր (սեփական) կապիտալի մի մասն է, և ներառում է՝ բանկի հիմնական միջոցների վերագնահատման պահուստը (ընդ որում, դրա դրական լինելու դեպքում, լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվում են միայն բանկի գործունեության համար անհրաժեշտ շենքերի և շինությունների վերագնահատման մասով), հաշվեկշռի համախմբման (կոնսոլիդացիայի) ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստը, այլ պահուստները և երկարաժամկետ ստորադաս փոխառությունները:

ԲԱՆԿԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ – բանկի զուտ շահույթի (մինչև հարկումը) և գործառնական եկամուտների հարաբերակցությունն է, որը ցույց է տալիս բանկի գործառնական եկամուտների մեկ միավորին բաժին ընկնող զուտ շահույթի գումարի չափը մինչև հարկումը:

ԲԱՆԿԻ ԿԱՅՈՒՆ ԱՃԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ – որպես առաջին նախապայման, հուսալի բանկի ակտիվների աճի տեմպերը չպետք է գերազանցեն ընդհանուր կապիտալի աճի տեմպերին: Սակայն գոյություն ունի բանկի կայուն աճի գործակից, որը ցույց է տալիս, թե բանկն ինչ տեմպերով կարող է զարգանալ շահու-

բաբերության առկա մակարդակի դեպքում: Այդ գործակիցը հաշվարկելու համար կիրառվում են 3 փոփոխականներ, այդ թվում.

- շահութաբերության գործող մակարդակը (ROA), որը հարկումից հետո զուտ շահույթի և ակտիվների հարաբերակցությունն է,
- հարկումից հետո զուտ շահույթի տեսակարար կշիռը,
- ընդհանուր (սեփական) կապիտալի հարաբերակցությունն ակտիվներին (ֆինանսական լծակ), կամ բանկի բազմարկիչ:

Բանկի կայուն աճի գործակիցը հաշվարվում է հետևյալ բանաձևով.

$$\frac{ROA \cdot (1 - \text{շահաբաժինների տեսակարար կշիռ}) \cdot 100\%}{\left(\frac{\text{ընդհանուր կապիտալ}}{\text{ակտիվներ}}\right) - ROA \cdot (1 - \text{շահաբաժինների տեսակարար կշիռ})}$$

ԲԱՆԿԻ ԿԱՆԽԱՎՃԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ – ինչպես գուդվիլի արժեքը, այնպես էլ կանխավճարված ծախսերը ենթարկվում են ամորտիզացիայի: Դրա համար կա համապատասխան հաշիվ, որտեղ գրանցվում են կանխավճարված ծախսերի ամորտիզացիան (դեբետագրվում է ամորտիզացիոն ծախսերի հաշիվը և կրեդիտագրվում՝ կանխավճարված ծախսերի հաշիվը): Այս դեպքում նույնպես դրամական հաշիվները չեն մասնակցում թղթակցությանը, հետևաբար չպետք է արտացոլվեն դրամական հոսքերի հաշվետվությունում:

ԲԱՆԿԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ – գնահատվում է հետևյալ գործակիցների օգնությամբ.

- Լևերեջ = Ընդհանուր կապիտալ/Ընդհանուր պարտավորություններ
- $Գ_1$ = Ընդհանուր կապիտալ/Ընդհանուր ակտիվներ
- $Գ_2$ = Ընդհանուր կապիտալ/Ռիսկով կշռված ակտիվներ
- $Գ_3$ = Հիմնական կապիտալ/Ռիսկով կշռված ակտիվներ

«Լևերեջի» մեծությունը ցույց է տալիս, թե ինչքանով է բանկի կապիտալը սպասարկում նրա ստանձնած պարտավորությունները:

$Գ_1$ գործակիցը ցույց է տալիս, թե ինչքանով է բանկի ընդհանուր կապիտալը ծածկույթ հանդիսանում նրա ակտիվների համար:

$Գ_2$ գործակիցը սահմանված է որպես կապիտալի համարժեքության նորմատիվ ($Ն_1^1$), որի պահանջների ապահովումը պարտադիր է հանրապետության տարածքում գործող բոլոր բանկերի համար:

$Գ_3$ գործակիցը ևս սահմանված է որպես հիմնական տնտեսական նորմատիվ ($Ն_1^2$), որն առավել խիստ է գնահատում կապիտալի համարժեքությունը, քան նախորդ գործակիցները:

ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՐԱԿ – արտահայտվում է բանկի քաղաքականության առկայության ու դրա պահպանման, արդյունավետ կազմակերպման կառուցվածքում, որը հնարավորություն է տալիս բարձր մակարդակով լուծել ռազմավարական և ընթացիկ խնդիրները՝ բանկի ակտիվների և պասիվների կառավարման համապատասխան մեխանիզմի մշակման գործընթացում: Բանկի ղեկավարությունը կարող է որոշել իր ռազմավարությունը և ընտրել իրացվելիության նախընտրելի մակարդակը: Դրա համար էլ յուրաքանչյուր բանկի իրացվելիությունը զգալիորեն կախված է կառավարման վերին օղակների որակավորումից, կադրերի պատրաստվածության մակարդակից:

ԲԱՆԿԻ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԱԿՏԻՎՆԵՐ – ներառում են կարճաժամկետ ներդրումները, մինչև մեկ տարի մարման ժամկետ ունեցող ֆիքսված (կայուն) և փոփոխվող տոկոսադրույքով վարկերն ու լիզինգները՝ առանց այլ բանկերի առևտրային արժեթղթերի (կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ):

ԲԱՆԿԻ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ – ներառում են ավանդատուներին տոկոս (տոկոսային եկամուտ) բերող հաշիվները, կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորումն ու թղթակցային հաշիվները, հակադարձ ետգնման համաձայնագրերը, ինչպես նաև մինչև մեկ տարի մարման ժամկետ ունեցող արժեթղթերն ու այլ բանկերի առևտրային արժեթղթերը:

ԲԱՆԿԻ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ներառում է մինչև մեկ տարի մարման ժամկետով ժամկետային ավանդները,

կենտրոնական բանկից ներգրավված միջոցները և ետգնման համաձայնագրերը, մինչև մեկ տարի մարման ժամկետով ներգրավված այլ միջոցները և նույն ժամկետով օտարերկրյա կազմակերպությունների ժամկետային ավանդները:

ԲԱՆԿԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ – դրանք են՝ 1) ընդհանուր կապիտալի (միջին) և ռիսկով կշռված ակտիվների (միջին) գումարի միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն11 նորմատիվ), որը բնութագրում է ընդհանուր կապիտալի համարժեքության մակարդակն ըստ ակտիվների ռիսկայնության աստիճանի (12% ՀՀ ստանդարտով), 2) հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների (միջին) գումարի միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն12 նորմատիվ), որը բնութագրում է հիմնական կապիտալի համարժեքության մակարդակն ըստ ակտիվների ռիսկայնության աստիճանի (8%), 3) ընդհանուր կապիտալի (միջին) և ընդհանուր ակտիվների (միջին) նվազագույն հարաբերակցությունը, որը բնութագրում է բանկի ընդհանուր վճարունակության մակարդակը (կապիտալի լևերեջ 10%), 4) հիմնական կապիտալի (միջին) և ընդհանուր ակտիվների (միջին) նվազագույն հարաբերակցությունը, որը բնութագրում է բանկի ընդհանուր վճարունակության մակարդակը (հիմնական կապիտալի լևերեջ 6%), 5) բանկի հետ կապված բոլոր անձանց պարտավորությունների հանրագումարի և ընդհանուր կապիտալի (միջին) հարաբերակցությունը (Ն42 տնտեսական նորմատիվ), որը բնութագրում է բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը (60%): Նշված տոկոսադրույքները ենթակա են փոփոխման ՀՀ ԿԲ-ի կողմից: 6) ռիսկով կշռված խոշոր պարտապանների պարտավորությունների և ընդհանուր կապիտալի (միջին) մեծության հարաբերակցությունը, որը բնութագրում է բանկի կողմից տրամադրված խոշոր փոխառությունների ապահովվածությունը սեփական կապիտալով:

ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ – ֆինանսական հաշվետվություն է, որը ներառում է բանկի ակտիվների և պասիվների վերաբերյալ տվյալները, բացահայտում է բանկի գործառնությունների չափերն ու կառուցվածքը որոշակի ամսաթվի դրությամբ: Հաշվեկշռի ակտիվներում բերվում է բանկի ռեսուրսների բաշխումն

ըստ գործառնությունների, իսկ հաշվեկշռի պասիվը ներառում է տվյալներ հաճախորդների և թղթակից բանկերի հաշիվներում (ընթացիկ, ավանդային, խնայողական և այլն) ներգրավված միջոցների, ինչպես նաև սեփական կապիտալի չափերի վերաբերյալ: Հաշվեկշիռը կարող է օգտագործվել որպես տեղեկատվության կարևորագույն աղբյուրներից մեկը՝ բանկի ղեկավարության կողմից կառավարչական որոշումներ ընդունելիս, գործունեության արդյունավետության բարձրացման, ֆինանսական ռիսկերի փոքրացման, իրացվելիության գնահատման և այլ նպատակների համար: Բանկերը պարտավոր են պարբերաբար հրապարակել տարեկան հաշվեկշիռը՝ ֆինանսական տարվա ավարտից հետո վեցամսյա ժամկետում, ինչպես նաև եռամսյակային հաշվեկշիռ՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը: Հրապարակվող հաշվեկշիռը պարտադիր պետք է ներառի կենտրոնական բանկի կողմից սահմանված տեղեկությունները:

ԲԱՆԿԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ – դա բանկի զուտ շահույթի (հարկումից հետո) և մինչև հարկումը զուտ շահույթի հարաբերակցությունն է, որը բնորոշում է բանկի կողմից ակտիվային և պասիվային գործարքների կառավարման հետևանքով հարկային վճարումները նվազագույնի հասցնելու խնդրի լուծման արդյունավետությունը:

ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՆԵՐ – համարվում են ցպահանջ ավանդները, ոչ մեծ գումարների ավանդային սերտիֆիկատները: Հիմնական ավանդները բանկի միջոցների կայուն և վստահելի աղբյուր են:

ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ – ընդհանուր (սեփական) կապիտալի մի մասն է, և իրենից ներկայացնում է կանոնադրական կապիտալի (ներառյալ բաժնետոմսերի հավելավճարը), գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի (եկամուտների պահուստներ) հանրագումարը:

ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ – կենտրոնական բանկերի կողմից բանկերի գործունեության կարգավորման հիմնական չափանիշներն են: Համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, կենտրոնական բանկը բոլոր տեսակի բան-

կերի համար սահմանում է հետևյալ հիմնական տնտեսական նորմատիվները. ա) կանոնադրական կապիտալի (հիմնադրամի) նվազագույն չափը, բ) ընդհանուր կապիտալի նվազագույն մեծությունը, գ) ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը, դ) հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը, ե) բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը (ընդհանուր իրացվելիության նորմատիվ), զ) բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը (ընթացիկ իրացվելիության նորմատիվ), է) մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը, ը) բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը, թ) բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը, ժ) բանկերի կողմից ներգրավված միջոցների դիմաց ՀՀ կենտրոնական բանկում պարտադիր պահուստների նվազագույն չափը, ի) արտարժույթի տնօրինման նորմատիվի առավելագույն չափը: ՀՀ կենտրոնական բանկը, ըստ օրենքի, կարող է սահմանել նաև բանկի պարտատերերի գծով ռիսկի առավելագույն չափը, որը սակայն ներկայումս սահմանված չէ:

ԲԱՆԿԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ – դրանք են՝ վարկերի և արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստահիմնադրամին կատարված մասհանումները, դեբիտորական պարտավորությունների և այլ գումարների (որոնց համար նախատեսված չեն պահուստներ) դուրս գրման ծախսերը:

ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ – բանկի առանձնացված ստորաբաժանումն է, որը գտնվում է նրա գտնվելու վայրից դուրս և առաջարկում է բանկային ծառայություններ: Մասնաճյուղը չի հանդիսանում իրավաբանական անձ, այլ գործում է բանկի հաստատած կանոնադրության հիման վրա: Մասնաճյուղի ղեկավարները նշանակվում են բանկի կողմից և գործում են նրա լիազորագրի հիման վրա: Համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, բանկի մասնաճյուղը նրա իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող

առանձնացված ստորաբաժանումն է, որը գործում է բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից բանկային և (կամ) օրենքով նախատեսված ֆինանսական գործառնություններ է իրականացնում:

ԲԱՆԿԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ – բանկի մոտ հիմնական միջոցների ամորտիզացիոն հատկացումների հաշվապահական ձևակերպումների ժամանակ դրամական հաշիվներից ոչ մեկը չի թղթակցվում, հետևաբար այն չի ազդում դրամական հոսքերի վրա և չպետք է արտացոլվի դրամական հոսքերի հաշվետվությունում:

ԲԱՆԿԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՇԱՀՈՒՅԹԻ ՉՍՏԱՑՄԱՆ ՌԻՍԿ – բանկային զուտ շահույթի մակարդակի ստացման վտանգը կոչվում է բանկային շահույթի ռիսկ: Շահույթը կարող է անսպասելիորեն նվազել ներբանկային կամ արտաքին գործոնների ազդեցության ներքո: Բանկային ոլորտում մրցակցության աստիճանի բարձրացումը բերում է եկամուտների և ծախսերի մարժայի նվազմանը, որն էլ իր հերթին բացասական ազդեցություն է ունենում նաև բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների մակարդակի վրա:

ԲԱՆԿԻ ՆԵՐՔԻՆ ՌԻՍԿԵՐ – առաջանում են բանկի գործունեության ընթացքում և արտահայտվում են նրանց կողմից իրականացվող գործարքների տեսակներով: Այդ ռիսկերը կարելի է բաժանել չորս խմբի.

1. Հաշվեկշռային ռիսկերի խումբը կարելի է տարանջատել երկու մասի՝
   - բանկի ակտիվային գործառնությունների հետ կապված ռիսկեր,
   - բանկի պասիվային գործառնությունների հետ կապված ռիսկեր:

   Հաշվեկշռային ռիսկերի խմբում ընդգրկվում են՝ *վարկային, արժեթղթերի, ներդրումային, կապիտալի կառուցվածքի և այլ ռիսկերը*:
2. Հետհաշվարկային ռիսկերի խումբ, որում ընդգրկվում են՝ *ֆինանսական երաշխիքների, գրավների, հավատարմագրային գործառնությունների և այլ ռիսկերը*:

3. Բանկի կողմից ակտիվների և պասիվների արդյունավետ կառավարման հետ կապված ռիսկերի խումբ, որում ընդգրկվում են՝ *տոկոսային, անվճարունակության, արտարժութային և իրացվելիության ռիսկերը*:
4. Բանկի կողմից ֆինանսական ծառայությունների իրականացման հետ կապված ռիսկերի խումբ, որում ընդգրկվում են՝ *գործառնական, տեխնոլոգիական, անվտանգության, համապատասխանության, ռազմավարական, հաշվառման, վարչական և կազմակերպչական ռիսկերը*:

ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԶՈՒՏ ՄԱՐԺԱ (NPM) – հարկումից հետո զուտ շահույթի և գործառնական եկամուտների հարաբերակցությունն է: Այն բնութագրում է գործառնական եկամուտների մեկ միավորին բաժին ընկնող զուտ շահույթի գումարի չափը հարկումից հետո:

ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒՅԹԻ ՍՊՐԵԴ – տոկոսային եկամուտների ու եկամտաբեր ակտիվների հարաբերակցության և տոկոսային ծախսերի ու բանկի պասիվների (որոնց համար վճարվում են տոկոսներ) հարաբերակցության տարբերությունն է: Սպրեդի միջոցով գնահատվում է բանկի կողմից միջոցների ներգրավման և տրամադրման գործընթացում բանկային մրցակցության աստիճանը:

ԲԱՆԿԻ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՆԵՐ – համարվում են մեծ գումարների (խոշոր) ավանդային սերտիֆիկատները և օտարերկրյա ավանդները: Այս միջոցները, ինչպես նաև շուկայականից բարձր տոկոսադրույքներով ներգրավված միջոցները, շատ անկայուն են, քանի որ նման միջոց ներդրողները նպատակ են հետապնդում վաստակել մեծ տոկոսային եկամուտ, իսկ շուկայում մեկ այլ բանկի կողմից ավելի բարձր տոկոսադրույքների առաջարկի դեպքում տեղի կունենա դրանց չնախատեսված արտահոսք (հատկապես, եթե կա դեպոզիտների ապահովագրում): Խոշոր փոխառություններին անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել նաև այն պատճառով, որ դրանց չնախատեսված արտահոսքը կպահանջի մեծ ծավալների դրամական միջոցներ:

ԲԱՆԿԻ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ներառում են շուկայականից բարձր տոկոսներով ներգրաված փոքր ավանդները (օրինակ ԱՄՆ-ում մինչև $100.000), խոշոր ժամկետային ավանդային սերտիֆիկատները (օրինակ ԱՄՆ-ում $100.000 և ավելի), հետգնման համաձայնագրերը, օտարերկրյա կազմակերպությունների ավանդները: Ելնելով իրենց բնույթից, այս միջոցները հիմնականում համարվում են ոչ կայուն:

ԲԱՆԿԻ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ – բանկի մոտ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն հատկացումների հաշվապահական ձևակերպումների ժամանակ դեբետագրվում են ծախսային հաշիվները, իսկ դրամական հաշիվներից ոչ մեկը չի թղթակցվում, հետևաբար, ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան չի ազդում դրամական հոսքերի վրա և չպետք է արտացոլվի դրամական հոսքերի հաշվետվությունում:

ԲԱՆԿԻ ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ – արդյունք են՝ մատուցված ծառայություններից, գանձապետարանի սպասարկումից, փոփոխական շահաբաժնով բաժնետոմսերից, ներդրումներից, արժեթղթերի վաճառքից, արտարժութային գործառնություններից և արտարժույթի վերագնահատումից, փոխարժեքային տարբերությունից, բանկի շենքի վարձակալությունից, հիմնական միջոցների օտարումից ու վերագնահատումից, տույժերից ու տուգանքներից ստացված եկամուտների և այլ ոչ տոկոսային եկամուտների:

ԲԱՆԿԻ ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ – արդյունք են՝ վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների, գործուղման հետ կապված վճարումների, սոցիալական ապահովագրության, կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամներին կատարվող հատկացումների, հարկային վճարումների, բանկի շենքի վարձակալության դիմաց վճարի, հիմնական միջոցների ամորտիզացիայի վճարումների, գովազդային ու ներկայացուցչական ծախսերի, աուդիտորական և խորհրդատվական ծառայության գծով վճարումների, պատճառված տույժ ու տուգանքների և այլ ոչ տոկոսային ծախսերի:

ԲԱՆԿԻ ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՄԱՐԺԱ – ոչ տոկոսային եկամուտների ու տոկոսային ծախսերի տարբերության և ընդհանուր (կամ եկամտաբեր) ակտիվների հարաբերակցությունն է:

ԲԱՆԿԻ ՊԱՍԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ – բանկի պասիվների կառուցվածքի վերաբերյալ ճիշտ է հետևյալ հիմնավորումը. որքան մեծ է ժամկետային առումներով ներգրավված միջոցների բաժինը փոխառու միջոցների հանրագումարում, այնքան բանկի համար հեշտ կլինի ապահովել ակտիվների և պասիվների միջև հավասարակշռությունն ըստ ժամկետների ու գումարների: Այս առումով բանկի համար կարևոր է մշտապես վերլուծել իր պասիվները (ըստ ժամկետների և գումարների)՝ հաշվի առնելով դրամական շուկայի փոփոխվող իրավիճակը:

ԲԱՆԿԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – արտացոլվում են հաշվեկշռի աջ մասում և ներառում են՝ ռեզիդենտ բանկերի թղթակցային հաշիվները, ցպահանջ ավանդները, այլ բանկերից դեպոզիտները, ժամկետային ավանդները, հաշվարկված տոկոսները, գալիք ժամանակաշրջանի եկամուտները, ներքին ու արտաքին պարտավորությունները, ետգնման պայմանագրի գծով պարտավորությունները և այլ պարտավորությունները:

ԲԱՆԿԻ ՌԻՍԿՈՎ ԿՇՌՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ – ինչպես հայտնի է, բանկերի ոչ բոլոր ակտիվներն ունեն կորստի միևնույն հավանականությունը, այդ պատճառով հաշվեկշռի յուրաքանչյուր տարր (ակտիվ) խմբավորվում է ռիսկային որևէ խմբում: Որոշ ակտիվներ, օրինակ՝ դրամական միջոցները, ոսկու ստանդարտացված ծուլակտորերն ունեն ռիսկի շատ ցածր աստիճան կամ ռիսկ չունեն ընդհանրապես: Դրանք ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում վերցվում են զրոյական ռիսկային կշռով, և այդպիսի ակտիվների ռիսկայնության փոխհատուցման համար բանկերը կարիք չունեն կապիտալ պահելու: Մնացած ակտիվները կշռվում են 0, 10, 20, 50, 70, 100 ռիսկային կշիռներով: Նման մոտեցում է կիրառվում նաև ետհաշվեկշռային (ծանուցման) հաշիվների համար, որոնք կշռվում են վերադարձելիության ռիսկի հավանականության համապատասխան կշիռներով և ընդգրկվում են ակտիվների կազմում:

ԲԱՆԿԻ ՍԵՓԱԿԱՆ (ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ) ԿԱՊԻՏԱԼԻ ՄՈՒԼՏԻՊԼԻԿԱՏՈՐ ԿԱՄ ԲԱԶՄԱՐԿԻՉ (EM) – ընդհանուր ակտիվների և սեփական կապիտալի հարաբերակցությունն է: Այն բնորոշում է բանկի սեփական կապիտալի մեկ միավորին բաժին ընկնող ընդհանուր ակտիվների գումարի չափը, որը սովորաբար բանկի համար ունի բավականաչափ մեծ դեր և ի տարբերություն մնացած տնտեսավարող սուբյեկտների, այն բանկային համակարգում միջին հաշվով կազմում է մոտավորապես 15 միավոր ակտիվ սեփական կապիտալի մեկ միավորի հաշվով: Առանձին դեպքերում այն ավելի բարձր է և հասնում է 20 և ավելի միավորի: Որքան բարձր է մուլտիպլիկատորի մեծությունը, այնքան մեծ է իր բաժնետերերին եկամուտ վճարելու բանկի հնարավորությունը:

ԲԱՆԿԻ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ (ROE) – հարկումից հետո զուտ շահույթի և սեփական (բաժնետիրական) կապիտալի հարաբերակցությունն է: Այն հանդիսանում է եկամտաբերության չափանիշ բանկի բաժնետերերի համար, քանի որ ցույց է տալիս բաժնետերերի կողմից բանկի կանոնադրական կապիտալում կատարված միավոր ներդրման դիմաց ստացվելիք շահույթի գումարի չափը:

ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ – բանկի ակտիվների (հատկապես վարկերի) արժեքի նվազման հավանականությունը կոչվում է վարկային ռիսկ: Քանի որ բանկային ակտիվների մեծ մասը ֆինանսավորվում է ներգրաված միջոցների հաշվին, իսկ սեփական միջոցների հաշվին ձևավորված ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում աննշան է, հետևաբար անհուսալի վարկերի, թեկուզև, չնչին մեծությունը բանկի սնանկացման վտանգ կարող է առաջացնել:

ԲԱՆԿԻ ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ – պետության, իրավաբանական կամ ֆիզիկական անձի՝ պարտատերերի պահանջները կատարելու, պարտավորությունները ժամանակին մարելու ունակությունն է, ինչպես նաև պարտքերը վճարելու համար բավարար կապիտալի առկայությունը:

Բանկը համարվում է վճարունակ, քանի դեռ նրա ընդհանուր (սեփական) կապիտալը մնում է ամբողջական, պահպանված,

այսինքն՝ քանի դեռ նրա գումարային պարտավորությունները փոքր են գումարային ակտիվներից: Այլ կերպ ասած, բանկի վճարունակությունը նրա ակտիվների և պարտավորությունների միջև դրական տարբերությունն է, այսինքն՝ սեփական կապիտալի դրական մեծությունը:

ԲԱՆԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՍՊՐԵԴ – ներկայացնում է բանկերի կողմից տեղաբաշխվող միջոցների և ներգրավող միջոցների տոկոսադրույքների տարբերությունը:

ԲԱՆԿԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ – արդյունք են՝ ՀՀ կենտրոնական բանկում տեղաբաշխված ավանդներից ու դեպոզիտներից, թղթակցային հաշիվներից, բանկերում և այլ ֆինանսավարկային կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից, տեղաբաշխված վարկերից, օվերդրաֆտից և օվերնայթից, պետական և ոչ պետական արժեթղթերից, վարկային քարտերից, ֆորվարդային, ֆյուչերսային և օպցիոն պայմանագրերից, լիզինգից և ֆակտորինգից ստացված տոկոսային եկամուտների և այլ տոկոսային եկամուտների:

ԲԱՆԿԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ – արդյունք են՝ ՀՀ կենտրոնական բանկից ներգրաված միջոցների և ետգնման համաձայնագրերի, թղթակցային հաշիվների և ցպահանջ պարտավորությունների, բանկերից և այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրաված միջոցների, ներգրավված ավանդների ու դեպոզիտների, միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցների, օգտագործված օվերդրաֆտի և օվերնայթի, ֆորվարդային, ֆյուչերսային և օպցիոն պայմանագրերի, լիզինգի դիմաց վճարված տոկոսային գումարների և բանկի կողմից թողարկված արժեթղթերի գծով տոկոսային ծախսերի ու այլ տոկոսային ծախսերի:

ԲԱՆԿԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՄԱՐԺԱ – իրենից ներկայացնում է բանկի տոկոսային եկամուտների և տոկոսային ծախսերի տարբերությունը: Այն հանդիսանում է բանկային շահույթի հիմնական աղբյուրը և կոչված է ծածկելու բանկերի կողմից իրականացվող ծախսերի զգալի մասը: Տոկոսային մարժայի մեծությունը

բնութագրվում է ինչպես բացարձակ մեծություններով, այնպես էլ՝ բազմաթիվ ֆինանսական գործակիցների միջոցով:

ԲԱՆԿԻ ՑՊԱՀԱՆՋ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – դրանք թղթակցային, հաշվարկային հաշիվներում առկա միջոցներն են, որոնք ենթակա են վերադարձման հաճախորդի առաջին իսկ պահանջի դեպքում: Պարտավորությունների կառավարման տեսանկյունից գնահատելիս, ցպահանջ պարտավորությունները երկակի բնույթ ունեն: Ցպահանջ ներգրաված միջոցների դիմաց բանկը տոկոսներ չի վճարում կամ վճարում է շատ ցածր տոկոսադրույքով: Այսինքն, դրանք բանկի համար միջոցների ներգրավման ամենաէժան աղբյուր են հանդիսանում և գերադասելի են բանկի համար: Մյուս կողմից, ցպահանջ պարտավորությունները կարող են ժամանակի ցանկացած պահին պահանջվել հաճախորդի կողմից և բանկը մշտապես պետք է պատրաստ լինի վճարել դրանք, այսինքն, բանկը ժամանակի ցանկացած պահի պետք է ապահովի իրացվելիության բավարար մակարդակ:

ԲԱՆԿՈՒՄ CAMELS ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ – անվանումն առաջացել է կապիտալի համարժեքություն (Capital adequacy), ակտիվների որակ (Asset quality), ղեկավարություն կամ կառավարում (Management), եկամտաբերություն (Earnings), իրացվելիություն (Liquidity) և զգայնություն (Senesitivity) անգլերեն տերմինների սկզբնատառերից: Մեթոդի անվանումն արդեն իսկ հուշում է նրա էությունը, որը կայանում է վերոհիշյալ 6 գործոնների վերլուծության արդյունքում բանկի հուսալիության գնահատման մեջ: 1980-ականներին, երբ ԱՄՆ-ի բանկային համակարգում շարունակվում էր անընդհատ խորացող ճգնաժամը, երկրի համապատասխան մասնագետների կողմից մշակվեց բանկերի գնահատման մի համակարգ, որն այժմ ճանաչում է գտել աշխարհի գրեթե բոլոր երկրների բանկերի կողմից: Ընդորում, անհրաժեշտ է նշել, որ այդ մեթոդիկան անընդհատ կատարելագործվում է, իր մեջ ներառելով համաշխարհային ֆինանսական շուկաներում առաջացող նոր ռիսկերը: Այսպես, օրինակ, զգայունություն գործոնը մեթոդիկայում ընդգրկվել է միայն վերջերս՝ 1997 թվականին, որը, հաշվի առնելով ժամա-

նակի պահանջը, գնահատում է շուկայական ռիսկերի նկատմամբ բանկի զգայունությունը:

Բանկի կապիտալի համարժեքություն (Ք) - ՔԱՄԵԼՍ (CAMELS) համակարգով բանկի ընդհանուր կապիտալի համարժեքությունը գնահատվում է հետևյալ հարաբերակցություններով, և դրանցում ներառված տոկոսակշիռները ենթակա են փոփոխման ՀՀ ԿԲ-ի կողմից:

• *(Նորմատիվային ընդհանուր կապիտալ + հատուկ պահուստ – չաշխատող ակտիվներ) / Ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափ:* Հարաբերակցության համարիչը հաշվարկվում է որպես ամսվա վերջին օրվա դրությամբ նորմատիվային ընդհանուր կապիտալի և ակտիվների հնարավոր կորուստների հատուկ պահուստի (ներառյալ՝ նաև ռիսկային և բարձր ռիսկային ինվեստիցիոն արժեթղթերի գծով պահուստները) գումարի և չաշխատող ակտիվների (ներառյալ ռիսկային, միջին ռիսկային և բարձր ռիսկային ինվեստիցիոն արժեթղթեր) տարբերություն: Հաշվարկում հսկվող ակտիվները և ռիսկային արժեթղթերը ներառվում են 20%, ոչ ստանդարտ ակտիվները՝ 50%, միջին ռիսկային արժեթղթերը և բարձր ռիսկային արժեթղթերը՝ 100% կշիռներով:

• *Ընդհանուր կապիտալ / Ռիսկով կշռված ակտիվներ:* Այս հարաբերակցությունը բանկի $Ն^1_1$ տնտեսական նորմատիվն է, որը բնութագրում է ընդհանուր կապիտալի համարժեքության մակարդակն ըստ ակտիվների ռիսկայնության աստիճանի:

• *Հիմնական կապիտալ / Ռիսկով կշռված ակտիվներ:* Հարաբերակցությունը բանկի $Ն^2_1$ տնտեսական նորմատիվն է, որը բնութագրում է հիմնական կապիտալի համարժեքության մակարդակն ըստ ակտիվների ռիսկայնության աստիճանի:

• *Մեկ փոխառուի պարտավորությունների հանրագումար/ Ընդհանուր կապիտալ:* Բանկի $Ն^1_3$ տնտեսական նորմատիվն է: Հարաբերակցությունը հաշվարկի մեջ ներառվում է միայն այն դեպքում, երբ այն գերազանցում է նորմատիվային ընդհանուր կապիտալի 20%-ը:

• *Բոլոր խոշոր փոխառուների պարտավորությունների հանրագումար / Ընդհանուր կապիտալ:* Բոլոր խոշոր փոխառուների գծով ռիսկն իրենից ներկայացնում է ընդհանուր կապիտալի 5%-ը գերազանցող փոխատվությունների գումարը: Հաշվարկվում է որպես խոշոր փոխատվությունների գումարի և նորմա-

տիվային ընդհանուր կապիտալի հարաբերակցություն ($Ն_3^2$): Հարաբերակցությունը հաշվարկի մեջ ներառվում է միայն այն դեպքում, երբ այն գերազանցում է նորմատիվային ընդհանուր կապիտալի 500%:

• *Բանկի հետ կապված մեկ անձի պարտավորությունների հանրագումար / Ընդհանուր կապիտալ:* $Ն_4^1$ տնտեսական նորմատիվն է: Հարաբերակցությունը հաշվարկի մեջ ներառվում է միայն այն դեպքում, երբ այն գերազանցում է նորմատիվային ընդհանուր կապիտալի 5%-ը:

• *Բանկի հետ կապված բոլոր անձանց պարտավորությունների հանրագումար / Ընդհանուր կապիտալ:* $Ն_4^2$ տնտեսական նորմատիվն է: Հարաբերակցությունը հաշվարկի մեջ ներառվում է միայն այն դեպքում, երբ գերազանցում է նորմատիվային ընդհանուր կապիտալի 20%-ը:

Բանկի ակտիվների որակ *(Ա)* - ՔԱՄԵԼՍ (CAMELS) համակարգով ակտիվների որակը բնութագրող համապատասխան հարաբերակցությունները գնահատում են բանկի ակտիվների որակը՝ դրանց եկամտաբերության, ինչպես նաև կենտրոնացվածության և այլ ռիսկերով պայմանավորված դրանց արժեքի հնարավոր կորստի տեսանկյուններից:

Այդ հարաբերակցություններն են՝

• *Չաշխատող ակտիվներ / Ընդհանուր ակտիվներ*: Ընդհանուր ակտիվները ներառում են հաշվետու օրվա դրությամբ հաշվեկշռային ակտիվները, վարկային ռիսկ պարունակող հաշվետվությունների հոդվածները և ակտիվների հնարավոր կորուստների պահուստները: Չաշխատող ակտիվները դրանք բանկի այն ակտիվներն են, որոնք իրենց գործունեության վերջնական արդյունքում ապահովում են հավանական կորուստներ: Օրինակ, ժամկետային առումով բանկին ետ չվերադարձվող կասկածելի վարկային միջոցները:

• *Չաշխատող վարկեր / Վարկային ներդրումներ*: Հարաբերակցությունը համարվում է բանկի հուսալիությունը բնութագրող ամենահիմնական ցուցանիշներից մեկը: Վարկային ներդրումները ներառում են՝ կենտրոնական բանկում, այլ բանկերում տեղաբաշխված ավանդները, այլ բանկերի, իրավաբանական, ֆիզիկական և բանկի հետ կապված անձանց ու աշխատակիցներին տրամադրված վարկերը:

• *Ոչ եկամտաբեր ակտիվներ / Ընդհանուր ակտիվներ*: Ոչ եկամտաբեր ակտիվների հաշվարկը ներկայացնում է հաշվետու օրվա դրությամբ հաշվեկշռային ընդհանուր ակտիվների (առանց ակտիվների հնարավոր կորստի պահուստով նվազեցման) և եկամտաբեր ակտիվների տարբերությունը:

• *Պահուստներ / Չաշխատող ակտիվներ*: «Պահուստի» ցուցանիշը հաշվարկվում է որպես վարկային ներդրումների, դեբիտորական պարտքերի, ռիսկ պարունակող ետհաշվեկշռային ակտիվների և արժեթղթերի գծով ձևավորված հատուկ պահուստների հանրագումար:

• *Ռիսկով կշռված խոշոր ներդրումների հանրագումար / Ընդհանուր կապիտալ*: Ռիսկով կշռված խոշոր ներդրումների հաշվարկը, ներառում է փոխառուի, նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ պահանջների և նրանց դիմաց հաշվեգրված տոկոսների ու ստացվելիք այլ գումարների հանրագումարը:

• *Ակտիվների կենտրոնացման աստիճանը*: Բնութագրում է բանկի ակտիվների ռիսկայնությունն ըստ տնտեսության ճյուղերի ու ներդրման ոլորտների: Ռիսկային է համարվում մեկ կամ մի քանի ճյուղերում ներդրումների կենտրոնացումը:

• *Խոշոր ներդրումների հանրագումար / Ընդհանուր ներդրումներ:* Խոշոր ներդրումների հաշվարկը կատարվում է որպես վարկառուի, նրա հետ փախկապակցված անձանց պարտավորությունների և դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների ու ստացվելիք այլ գումարների հանրագումար: Սույն գործարքի իմաստով՝ ընդհանուր ներդրումները ներառում են հաշվեկշռային ակտիվները, ետհաշվեկշռային ակրեդիտիվները և տրամադրված երաշխիքները՝ բացառությամբ կանխիկ դրամական միջոցների, ոչ եկամտաբեր թղթակցային հաշիվների, հիմնական միջոցների, արագամաշ առարկաների և ոչ նյութական ակտիվների:

Բանկի կառավարում *(Մ) - ՔԱՄԵԼՍ (CAMELS) համակարգով բանկի կառավարման գործընթացը գնահատվում է հետևյալ չափանիշների հիման վրա, այդ թվում՝* բանկի ընդհանուր ցուցանիշները, դրանց փոփոխությունն ու միտումները, բանկի տեխնիկական հագեցվածությունը, բանկի ընդարձակման ռազմավարությունը, վերահսկողության պահանջներին իրազեկության աստիճանը, թույլ տրված խախտումների հաճախականությունը և դրանց վերացման հնարավորությունները, հաշվետվությու-

ների արժանահավատությունը, բանկը որպես ֆինանսական միջնորդի կայացվածության աստիճանը, ներքին հսկողության համակարգի առկայությունը և որակը, բանկի հեռանկարային զարգացման ծրագրի և բյուջեի իրատեսականությունն ու կատարման մակարդակը, բանկի կառավարման ընթացակարգերի արդյունավետությունը, ղեկավարների և կադրերի մասնագիտական պարտավորության աստիճանը, բանկի կառավարման տարբեր մակարդակների միջև փոխհարաբերությունների և համագործակցության արդյունավետությունն ու դրանց վրա արտաքին ազդեցության առկայությունը, ինչպես նաև վերապատրաստումների թվի և աշխատողների թվաքանակի հարաբերակցությունը, որը բնութագրում է բանկի հիմնական աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության աստիճանը՝ հաշվի առնելով վերապատրաստումները:

Բանկի եկամտաբերություն *(Ե)* - ՔԱՄԵԼՍ (CAMELS) համակարգով եկամտաբերության հարաբերակցությունները բնութագրում են բանկի կողմից ներգրավված ու սեփական միջոցների արդյունավետ կառավարելու ունակությունը՝ եկամուտ ստանալու և ներքին ներուժի հաշվին բանկի ակտիվների աճն ապահովելու առումով: Գնահատում է ինչպես բանկի եկամուտ կազմավորելու, այնպես էլ ծախսերը կառավարելու կարողությունը: Այդ հարաբերակցություններն են՝

- *Զուտ շահույթ / Ընդհանուր ակտիվներ:* Համարիչը հաշվարկվում է տարեսկզբից կուտակված զուտ շահույթը հարաբերած ամիսների թվին, իսկ հայտարարը հաշվարկվում է միջին ժամանակագրականի բանաձևով՝ տարեսկզբից յուրաքանչյուր ամսվա, եռամսյակի և տարվա առումով: Հարաբերակցությունը ցույց է տալիս միջին հաշվով ընդհանուր ակտիվների մեկ միավորին բաժին ընկնող զուտ շահույթը կամ ակտիվների շահութաբերությունը (ROA):
- *Զուտ շահույթ / Ընդհանուր կապիտալ: Հարաբերակցության ընդհանուր կապիտալը հաշվարկվում է այնպես, ինչպես ընդհանուր ակտիվների դեպքում էր (միջին ժամանակագրականի բանաձևով):* Այն ցույց է տալիս միջին հաշվով ընդհանուր կապիտալի մեկ միավորին բաժին ընկնող զուտ շահույթը կամ բնութագրում է ընդհանուր (սեփական) կապիտալի շահութաբերությունը (ROE):
- *Զուտ տոկոսային եկամուտ / Եկամտաբեր ակտիվներ:*

Զուտ տոկոսային եկամուտը հաշվարկվում է որպես տարվա սկզբից կուտակված զուտ տոկոսային եկամուտը հարաբերած ամիսների թվին, իսկ եկամտաբեր ակտիվների հաշվարկը կատարվում է միջին ժամանակագրականի բանաձևով: Հարաբերակցությունը բնութագրում է եկամտաբեր ակտիվների (տրամադրված վարկեր, արժեթղթերում ներդրումներ, լիզինգ, ֆակտորինգ) օգտագործման արդյունավետությունը:

• *Զուտ գործառնական եկամուտ / Ընդհանուր ակտիվներ:*

Զուտ գործառնական եկամուտը հաշվարկվում է որպես տարեսկզբից կուտակված զուտ տոկոսային և զուտ ոչ տոկոսային եկամուտների հանրագումար:

• *(Զուտ տոկոսային եկամուտ + Ոչ տոկոսային եկամուտ) / Տոկոսային ծախսեր:* Համարիչը հաշվարկվում է որպես տարեսկզբից կուտակային զուտ տոկոսային եկամուտների և ոչ տոկոսային եկամուտների (բացառությամբ վերագնահատման արդյունքում և հիմնական միջոցների օտարումից ստացված զուտ եկամուտներից) հանրագումար: Հայտարարը հաշվարկվում է որպես տարեսկզբից կուտակային ոչ տոկոսային ծախսեր:

• *Զուտ դրամական հոսքեր / Հաշվարկված վճարվելիք տոկոսներ:* Հարաբերակցությունը բնութագրում է բանկի ունակությունը՝ մարելու հաշվարկված վճարվելիք տոկոսները դրամական միջոցների հաշվին, հաշվետու ժամանակաշրջանում:

Բանկի իրացվելիություն *(L)* - ՔԱՄԵԼՍ (CAMELS) համակարգով իրացվելիության հարաբերակցությունները բնութագրում են բանկի ունակությունը՝ առանց կորուստների և ժամանակին բավարարելու իր հաճախորդների, նախ և առաջ փոխատուների պահանջները և պատշաճ ձևով կառավարելու իրացվելիության հնարավոր տատանումները:

Այդ հարաբերակցություններն են՝

• *Բարձր իրացվելի ակտիվներ / Ընդհանուր ակտիվներ:*

$Ն_2$[1] տնտեսական նորմատիվն է և բնութագրում է բանկի իրացվելիության ընդհանուր մակարդակը:

• *Բարձր իրացվելի ակտիվներ / (Ցպահանջ պարտավորություններ + խոշոր պարտավորություններ):* Հարաբերակցությունը բնութագրում է բանկի ունակությունը կատարելու ստանձնած ցպահանջ խոշոր պարտավորությունները:

• *Ցպահանջ և մինչև 30 օր մարման ժամկետով ակտիվներ / Ցպահանջ և մինչև 30 օր մարման ժամկետով պարտավո-*

րություններ: Բնութագրում է բանկի կողմից ցպահանջ և մինչև 30 օր մարման ժամկետով պարտավորությունների բավարարման մակարդակը:

• *Մինչև 180 օր մարման ժամկետով ակտիվներ / Մինչև 180 օր մարման ժամկետով պարտավորություններ:* Ակտիվների հաշվարկում չեն ընդգրկվում պետական արժեթղթերը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նկատմամբ պահանջները: Բնութագրում է բանկի կողմից մինչև 180 օր մարման ժամկետով պարտավորությունների բավարարման մակարդակը:

Շուկայական ռիսկի նկատմամբ զգայունություն *(U)* - ՔԱՄԵԼՍ (CAMELS) համակարգի այս բաժնի հարաբերակցությունների հիման վրա գնահատվում է բանկի շուկայական ռիսկերին ենթարկվածությունը: Այդ թվում՝

• *1-ին խմբի համախառն արտարժութային դիրք / Ընդհանուր կապիտալ:* Հարաբերակցությունն արտարժույթի տնօրինման նորմատիվն է, որը բնութագրում է 1-ին խմբի համախառն արտարժույթի ռիսկի աստիճանը: Համարիչի հաշվարկի համար վերցվում է չորս շաբաթների միջին օրական դիրքի մեծությունը: Ցուցանիշի հաշվարկում ներառվում են ամսվա վերջին օրն ընդգրկող շաբաթվա և նրան նախորդող երեք շաբաթների օրական դիրքերի մեծությունը:

• *2-րդ* խմբի համախառն արտարժութային դիրք / Ընդհանուր կապիտալ: Հարաբերակցությունն արտարժույթի տնօրինման նորմատիվ է, որը բնութագրում է 2-րդ խմբի համախառն արտարժույթի ռիսկի աստիճանը և համարիչի հաշվարկի համար վերցվում է չորս շաբաթների միջին օրական դիրքի մեծությունը: Ցուցանիշի հաշվարկում ներառվում են ամսվա վերջին օրն ընդգրկող շաբաթվա և նրան նախորդող երեք շաբաթների օրական դիրքերի մեծությունները:

• *Հիմնական միջոցներ / Հիմնական կապիտալ:* Հարաբերակցությունը բնութագրում է շուկայում հիմնական միջոցների գների փոփոխությունների հետ կապված բանկի ռիսկը: Հիմնական միջոցները ներառում են բանկի կողմից օգտագործվող հիմնական միջոցները, գրավի տնօրինման արդյունքում կամ այլ պահանջներից առաջացած սեփականացված անշարժ գույքն ու այլ հիմնական միջոցները և շահագործումից դուրս հիմնական միջոցները՝ արտահայտված հաշվեկշռային արժեքով:

Բանկի հիմնական կապիտալում ներառվում են՝ կանոնադրական կապիտալը, պահուստային հիմնադրամները և չբաշխված շահույթը:

• *Տոկոսադրույքի փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների տարբերություն/ Ընդհանուր կապիտալ:* Համարիչում վերցվում է մինչև 90 օր մարման ժամկետով տոկոսաբեր ակտիվների և ծախսատար պարտավորությունների տարբերության բացարձակ մեծությունը: Հարաբերակցությունը բնութագրում է շուկայում տոկոսադրույքների փոփոխությունների հետ կապված բանկի ռիսկը:

ԲԱՐԴ ՏՈԿՈՍՆԵՐ – եթե տոկոսները (տոկոսային եկամուտները կամ ծախսերը) յուրաքանչյուր հաշվետու ժամկետի վերջում չեն վճարվում, այլ գումարվում են սկզբնական հիմնական գումարին, և ստացված գումարը ելակետային է դառնում հաջորդ հաշվարկային ժամանակահատվածի համար, ապա ավելացման ենթակա գումարը գործարքի ժամկետի վերջում որոշվում է բարդ տոկոսների բանաձևով: Հաշվեգրման տոկոսների ավելացումը սկզբնական (հիմնական) գումարին, որի նկատմամբ հաշվարկվելու է տոկոսը, կոչվում է տոկոսների կապիտալացում (կուտակում), որը հիմնականում կիրառվում է այն դեպքում, երբ սահմանվող տոկոսադրույքներով հաշվարկվող տոկոսները զգալի մաս են կազմում բազիսային գումարի նկատմամբ:

Տոկոսների կապիտալացման հաշվարկումը սկզբնական գումարի հետ միասին n-րդ ժամանակաշրջանի վերջում կատարվում է մաթեմատիկայից մեզ հայտնի բարդ տոկոսների բանաձևով.

$$S_n = P(1 + i)^n, \quad S_1 = P(1+ i), \quad S_2 = P(1 + i)^2 \text{ և այլն,}$$

որտեղ՝

S_n - կուտակված (ավելացված) ընդհանուր գումարն է n-րդ ժամկետի վերջում,

P - սկզբնական (վարկային կամ ավանդային) գումարը ժամկետի սկզբում,

i - տոկոսադրույքն է,

n - տոկոսների կապիտալացումների քանակն է ըստ ժամկետների:

Այստեղից տոկոսային եկամուտների աճը բարդ տոկոսներով կլինի հավասար՝

$$I = S_n - P = P(1+ i)^n - P = P((1+ i)^n - 1)$$

որտեղ՝

$(1 + i)^n$ - աճի բազմապատկիչն է,

I - տոկոսային եկամուտը:

Ինչպես նկատում ենք, ստացանք երկրաչափական պրոգրեսիայի շարքի բանաձևը, որը մեծ թվերի դեպքում արագ կարող է հասնել ծայրահեղ մեծ գումարների: Որպես այդպիսի օրինակ ամերիկյան տնտեսագետները հաճախ բերում են Մանհեթեն կղզու օրինակը, որը ընդամենը 24 դոլարով 1694թ. գնել էին հնդիկ առաջնորդից, և, ըստ վերը բերված բանաձևի, 350 տարի հետո նրա արժեքը գնահատվում էր մոտ 40 մլրդ դոլար:

ԲԱՐՏԵՐ – ապրանքանյութական արժեքների փոխանակումն է մեկը մյուսով առանց դրամական միջոցների միջամտության, և այդպիսի համամասնական փոխարկումն իրականացվում է երկկողմ գրավոր պայմանագրի հիման վրա: Այն գործարքները, որոնք կատարվում են ապրանքների անմիջական փոխարկմամբ, անվանվում են բարտերային:

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ԲԲԸ) – որի մասնակիցներն առանց մյուս բաժնետերերի համաձայնության կարող են օտարել իրենց պատկանող բաժնետոմսերը, համարվում է բաց բաժնետիրական ընկերություն: Նման բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պայմաններով անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն և դրանց ազատ վաճառք: Բաց բաժնետիրական ընկերությունը պարտավոր է ամեն տարի, ի գիտություն բոլորի, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը և հաշվապահական հաշվեկշիռը:

ԲԱՑ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ – բաց շուկայում շրջանառություն կատարող տարբեր տեսակի պարտքային պարտավորությունների տոկոսադրույքներն են, որոնք ուղղակիորեն ազդում են պահանջարկի և առաջարկի վրա: Բաց շուկայի տոկոսադրույքները տարբերվում են կենտրոնական բանկի կող-

մից սահմանվող հաշվարկային դրույքներից, որոնք կոչված են ազդելու մյուս տոկոսադրույքների, մասնավորապես, առևտրային բանկերի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքների վրա: Կարճաժամկետ արժեթղթերը, ինչպիսիք են՝ առևտրային արժեթղթերը, տոկոսադրույքները և բանկային ակցեպտները (հոժարագրերը) բաց շուկայի տոկոսադրույքների օրինակներ են:

ԲԱՑԱՐՁԱԿ ՀԱՎԵԼԱԾ ($\pm\Delta y$) – ուսումնասիրության ենթակա դինամիկ շարքի մակարդակների տարբերությունն է, որը բնութագրում է, թե որոշակի ժամանակահատվածում քանի՞ միավորով է ավելացել (պակասել) շարքի մակարդակը:

Բացարձակ հավելաճը կարելի է հաշվարկել ինչպես սկզբնական (բազիսային) մակարդակի, այնպես էլ՝ դրան հաջորդող մակարդակների նկատմամբ: Այդ պատճառով էլ տարբերվում են դինամիկայի շարքի բացարձակ հավելաճը՝ հաշվարկված բազիսային և շղթայական եղանակով:

Բազիսային եղանակով բացարձակ հավելաճը հավասար է համեմատվող (y_i) և բազիսային (y_1) մակարդակների տարբերությանը՝ արտահայտված այն նույն միավորներով, որոնցով չափվում են այդ մակարդակները.

$$\pm \Delta y_{բ.} = y_i - y_1;\ (i=2, 3,\ldots,n)$$

Շղթայական եղանակով բացարձակ հավելաճը հավասար է հաջորդ (y_i) և նախորդ (y_{i-1}) մակարդակների տարբերությանը՝

$$\pm \Delta y_{շղ.} = y_i - y_{i-1};\ (i=2, 3,\ldots,n)$$

ԲԱՑԱՐՁԱԿ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ցույց են տալիս հասարակական երևույթների չափերը (մակարդակներ, ծավալներ) տեղի և ժամանակի տվյալ պայմաններում, կամ այդ երևույթները բնութագրող հատկանիշների (ցուցանիշների) մեծությունը, օրինակ՝ տնտեսավարող սուբյեկտի համախառն արտադրանքի իրացումից հասույթի գումարը տվյալ տարում, անասունների գլխաքանակը տնտեսությունում որոշակի ամսաթվի դրությամբ և այլն: Բացարձակ թվերը ստորաբաժանվում են *անհատականի և գումարայինի*: *Անհատական* կոչվում են օբյեկտների այս կամ այն համակցության առանձին միավորների քանակական հատկանիշների չափերն արտահայտող բացարձակ մեծությունները: Դրանք ստացվում են անմիջապես վիճակագրական

դիտարկման գործընթացում և նշվում են սկզբնական հաշվառման փաստաթղթերում: Անհատական բացարձակ մեծությունները ցանկացած վիճակագրական հետազոտման հիմքն են կազմում:

Ի տարբերություն անհատական մեծությունների, *գումարայինը* բացարձակ մեծությունները բնութագրում են վիճակագրական դիտարկման մեջ ընդգրկված օբյեկտների որոշակի համակցության (ցուցանիշի) հատկանիշի հանրագումարային մեծությունը: Դրանք ստացվում են կամ դիտարկման միավորների թվի ուղղակի հաշվումով, կամ համակցության առանձին միավորների հատկանիշի արժեքների գումարման հետևանքով:

ԲԱՑԱՐՁԱԿ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՒՄԱՐԱՅԻՆ – բնութագրում են վիճակագրական դիտարկման մեջ ընդգրկված օբյեկտների որոշակի համակցության հատկանիշի հանրագումարային մեծությունը: Դրանք ստացվում են կա՛մ դիտարկման միավորների թվի ուղղակի հաշվումով, կա՛մ համակցության առանձին միավորների հատկանիշի արժեքների գումարման միջոցով:

ԲԱՑԱՐՁԱԿ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ – բնութագրում են որակապես որոշակի երևույթների չափերը և արտահայտվում են որոշակի չափի միավորներով, դրանով էլ նրանք տարբերվում են վերացական մաթեմատիկական մեծություններից: Նայած ուսումնասիրվող երևույթի էությանը և հետազոտության կոնկրետ խնդիրներին, կիրառվում են չափի բնական ու դրամական (արժեքային) միավորներ:

Բնական կոչվում են չափի այնպիսի միավորները, որոնք համապատասխանում են տվյալ ուսումնասիրվող երևույթի բնական (ֆիզիկական) հատկություններին և արտահայտվում են երկարության, մակերեսի, ծավալի, քաշի և չափի այլ միավորներով կամ միավորների (հատերի) քանակով, փաստերի և իրադարձությունների թվով: Այսպես՝ օրինակ, բնակչության թվի չափի միավոր է համարվում անհատ մարդը, հացահատիկի բերքը չափվում է տոննաներով, ցենտներներով, երբեմն էլ փթերով և այլն:

ԲԵՌՆԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ (ՏՈՆՆԱԿԻԼՈՄԵՏՐԵՐՈՎ) – հաշվարկվում է փոխադրվող բեռների յուրաքանչյուր խմբի քաշի

(տոննա) և այդ բեռնափոխադրման հեռավորության արտադրյալների հանրագումարով:

ԲԻԶՆԵՍ (ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ) – շահույթ բերող արտադրա-առևտրական ծառայության, սպասարկման և այլ գործունեության ցանկացած ձև է:

ԲԻԶՆԵՍՄԵՆ (ԳՈՐԾԱՐԱՐ) – առևտրական ձեռնարկատեր, որը զբաղվում է շահույթ կամ այլ շահ բերող տնտեսական գործունեությամբ:

ԲՅՈՒՋԵ – բառը առաջացել է միջնադարյան անգլերենի "budjet" բառից, որով անվանվում էր այն քսակը, որտեղ թագավորը պահում էր հանրային ծախսերի համար նախատեսվող դրամական միավորները: Բյուջեն որոշակի ժամանակահատվածի համար եկամուտների և ծախսերի նախահաշիվ է: Բյուջեում արտացոլվում է. ա) թե ինչպես են պետական կառավարման (կենտրոնական) և տեղական ինքնակառավարման մարմինները հայթայթում իրենց գործունեության իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցները, բ) որքան գումար է հավաքագրվելու տարբեր տեսակի հարկերից, օրինակ, ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ), շահութահարկից, եկամտահարկից, ակցիզային հարկից և եկամտի այլ աղբյուրներից, գ) ինչպե՞ս պետք է պետական (կենտրոնական) և տեղական կառավարման մարմինները ծախսեն հավաքագրված գումարները, դ) ո՞ր ոլորտները պետք է ֆինանսավորվեն, ե) ինչքա՞ն գումար պետք է հատկացվի պաշտպանության, միջավայրի պահպանության, սոցիալական ծառայությունների, կրթության և այլ ծրագրերին, զ) պետության կողմից փոխառուի միջոցների ներգրավման և պետական պարտքի մարման քաղաքականությունը: Եթե ծախսերը գերազանցում են եկամուտներին, ապա առաջանում է դեֆիցիտ:

ԲՅՈՒՋԵ ԱՎԵԼ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳ – եթե որևէ հարկատեսակի գծով հարկ վճարողը կատարել է ավել մուծումներ, այսինքն՝ ունի գերավճար, ապա հարկային մարմինների կողմից այդ գերավճարը, այլ հարկային պարտավորությունների առկայության դեպքում,

մարվում է համապատասխան չափով: Եթե այլ հարկատեսակների գծով հարկային պարտավորությունների գումարն ավելի մեծ է, քան գերավճարի չափը, ապա սկզբում հաշվանցվում են (մարվում են) տույժերը և տուգանքները, իսկ այնուհետ՝ հարկերի գումարը:

Այլ հարկային պարտավորություններ չլինելու դեպքում բյուջե ավել վճարված գումարները (գերավճարները) հարկ վճարողի դիմումի հիման վրա ետ է վերադարձվում ոչ ուշ, քան այդ կապակցությամբ հարկ վճարողի ներկայացրած դիմումը ստանալուց հետո սահմանված ժամկետում:

Անուղղակի հարկերի (ավելացված արժեքի հարկ և ակցիզային հարկ) գծով առաջացած գերավճարների վերադարձումն ունի որոշակի առանձնահատկություններ:

ԲՅՈՒՋԵ ԸՆՏԱՆԻՔԻ – դա փաստացի եկամուտների և ծախսերի հաշվեկշիռ է, որը ցույց է տալիս մարդկության տարբեր սոցիալական խմբերի ապրուստի միջին մակարդակը:

ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՊԱՀՎՈՂ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ – վերաբերում են այնպիսի հիմնարկների, որոնք իրականացնում են բացառապես կառավարչական գործառույթներ և ամբողջությամբ ֆինանսավորվում են համապատասխան բյուջեներից: Վերջիններիս կողմից ֆինանսավորվող պետական և համայնքների հիմնարկները *բյուջետային հիմնարկներ* են: Այդպիսի հիմնարկների օրինակներ են՝ նախարարությունների, համայնքների աշխատակազմերը և այլն: Այսօրինակ հիմնարկների ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է ըստ ծախսատեսակների՝ խիստ հսկողության ներքո:

ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ – բյուջեների դրամական միջոցների (փողի) կառավարումն ու այդ միջոցների հաշվին բյուջեներով նախատեսված ծախսերի ֆինանսավորման կազմակերպումը Ֆինանսների նախարարության գործառույթներից են: Գործող բյուջետային համակարգում բյուջեների դրամական միջոցները համախմբված են մեկ հաշվում, որն անվանում ենք Գանձապետական միասնական հաշիվ: Այն վարում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը:

Որպես դրամական միջոցների կառավարման հիմնական նպատակներ են դիտարկվում դրանց օգտագործման արդյունավետության բարձրացումը, իսկ պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ դրամական միջոցների անբավարարության դեպքում՝ դրանց ներգրավման գնի նվազեցումը: Դրամական միջոցների կառավարման գործառույթն անհրաժեշտ է ինչպես այդ միջոցների արդյունավետ օգտագործման, այնպես էլ՝ ծախսերի ֆինանսավորման անընդհատությունն ապահովելու նպատակով:

ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄՈՒՏՔԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ – դրամական մուտքերը ներառում են տվյալ բյուջեի համար օրենքով սահմանված եկամուտները, փոխառու և ներգրաված այլ միջոցները, իսկ ծախսերը բաժանվում են կապիտալ և ընթացիկ ծախսերի: Կապիտալ ծախսերը ներառում են պետական և համայնքային նշանակության ծրագրերի շրջանակներում նախատեսվող այն ծախսերը, որոնք հանգեցնում են հիմնական միջոցների, պահուստների ստեղծման նպատակով ապրանքային արժեքների ձեռքբերմանը կամ դրանց արժեքի ավելացմանը: Ընթացիկ ծախսերը ներառում են այն ծախսերը, որոնք ընդգրկված չեն կապիտալ ծախսերում:

ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տարեկան բյուջեների կատարման պատասխանատու գործադիր մարմինը հաստատում է բյուջեների եռամսյակային համամասնությունները: Եռամսյակային համամասնությունների հաստատումը բյուջեների կատարման գործընթացի հրապարակայնության, թափանցիկության, կանխատեսելիության արդյունքում նաև արդյունավետության բարձրացմանը նպատակաուղղված միջոցառում է: Բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները տարեկան ծրագրի (գործառնական, գերատեսչական և տնտեսագիտական դասակարգումներով) բաշխումն է ըստ եռամսյակների: Պետական բյուջեի եռամսյակային համամասնությունների սահմանման պատասխանատուն Հայաստանի Հանրապետության կառավարությունն է: Եռամսյակային համամասնությունները պետք է ընդունվեն պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 45 օրվա ընթացքում: Ընդ որում,

պետական բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները ենթադրում են, որ.

- մինչև բյուջետային տարվա սկիզբը պետական բյուջեն չհաստատվելու դեպքում՝ ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:
- նշված ծախսերը կարող են կատարվել, եթե դրանց ֆինանսավորման համար նախորդ տարվա պետական բյուջեով արդեն իսկ նախատեսված են եղել հատկացումներ:
- կառավարությունն իրավասու է չֆինանսավորել այն ծախսերը, որոնք չեն նախատեսվել տվյալ տարվա բյուջեի մասին իր կազմած օրենքի նախագծում:
- մինչև բյուջեների կատարման համամասնությունների հաստատումը, բյուջեները յուրաքանչյուր ամիս կատարվում են ՀՀ ֆինանսների նախարարության սահմանած համամասնությամբ:

ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ – բյուջեները կարող են դիտարկվել որպես դրամի համար «արկղեր», որտեղ մտնում են բյուջետային մուտքերը և որտեղից դուրս են գալիս բյուջետային ելքերը: Ընդ որում, բյուջետային մուտքերը պետք է գերազանցեն կամ առնվազն հավասար լինեն բյուջետային ելքերին: Բյուջեն որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագիր է, կամ այլ կերպ ասած՝ ներկայացնում է դրամական միջոցների հոսքեր (մուտքեր և ելքեր): Ակնհայտ է, որ բյուջետային ելքերը կարող են տեղի ունենալ, եթե առկա են բավարար միջոցներ՝ բյուջետային մուտքեր: Այստեղից հետևում է, որ բյուջեն պետք է լինի հաշվեկշռված, այսինքն՝ բյուջետային մուտքերն ու ելքերը պետք է լինեն իրար հավասար: Եթե անգամ բյուջետային մուտքերը գերազանցում են բյուջետային ելքերը, միևնույնն է, ելքերում որպես հոսք արտացոլվում է նաև մուտքերի և ելքերի տարբերությունը, որով բյուջեն հաշվեկշռվում է:

ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ – դրանք են՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունները, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ենթակա հիմնարկները, Կենտրոնական բանկը, առևտրային բանկերը և այլ ֆիզիկական ու իրավաբանական անձինք:

ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐ – դրանք են.

- բյուջեների եռամսյակային համամասնությունների հաստատում,
- բյուջեների ծախսերի նախահաշիվների հաստատում,
- պետական և համայնքների հիմնարկների կողմից ֆինանսական պարտավորությունների ստանձնում և իրականացում,
- բյուջեների մուտքերի հաշվառում,
- բյուջեներից վճարումների հաշվառում,
- բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունների կազմում և ներկայացում,
- տարեվերջյան գործողություններ:

Բյուջեներից ծախսերի ֆինանսավորման կամ վճարումների կատարման փուլն իր հերթին պայմանականորեն բաժանվում է մի քանի ենթափուլերի:

- Հատկացում՝ դրամական միջոցների օգտագործման առավելագույն չափի սահմանում (պետական բյուջեի դեպքում՝ Ազգային ժողովի, իսկ համայնքի բյուջեի դեպքում՝ համայնքի ավագանու կողմից):
- Պարտավորության ստանձնում՝ հատկացումների շրջանակում պայմանագրի կամ այլ փաստաթղթի կնքման ճանապարհով (բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչների կողմից):
- Ֆինանսավորում՝ ստանձնած պարտավորությունների համաձայն, նախնական հսկողության արդյունքներով վճարումների կատարման լիազորում (Ֆինանսների նախարարության Գանձապետարանի կողմից):
- Դրամարկղային ծախս՝ ֆինանսավորման սահմաններում վճարման իրականացում (բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչների կողմից՝ գանձապետական հաշիվների միջոցով):
- Փաստացի ծախս՝ ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման հաստատում (բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչների կողմից):

ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԽՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ – դիտարկվում է որպես բյուջետային պարտքերի կանխարգելման միջոց: Իրականում նախնական հսկողության

համակարգը հնարավորություն է ընձեռում ապահովագրելու միջոցների պարտադիր ելքագրումը գանձապետական հաշիվներից՝ բացառապես օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան հիմքերի առկայության դեպքերում: Բացի այդ, նախնական հսկողությունը ցանկացած պահի դրությամբ բյուջեների շրջանակներում ստանձնած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հնարավորություն է տալիս, որը կարող է օգտագործվել բյուջեների կառավարման տարբեր գործառույթների բարելավման, օրինակ՝ կանխիկ հոսքերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Հայաստանի Հանրապետությունում բյուջեների կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է Գանձապետարանը՝ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում: Նախքան գանձապետական հաշիվներից ֆինանսական միջոցների ելքագրումը, Գանձապետարանում գնահատվում է բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչների կողմից իրականացվող ֆինանսական գործառույթների համապատասխանությունը՝ բյուջեների կատարման գործընթացը կարգավորող օրենքներով և այլ ակտերով սահմանված պահանջներին:

ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ – այն պետական և տեղական ինքնակառավարման լիազորություններն իրականացնող իրավաբանական անձանց, համապատասխանաբար, պետական և համայնքների բյուջեների եկամուտների (մուտքերի) ձևավորման ու ծախսերի իրականացման կանոնակարգված գործունեությունն է: Բյուջեների կատարումն իրականացվում է միասնական դրամարկղի սկզբունքի հիման վրա, որը նախատեսում է բյուջեների բոլոր եկամուտների մուտքագրումը և ծախսերի կատարումը՝ Հայաստանի Հանրապետության Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության միասնական գանձապետական հաշվով:

ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԱՄՓՈՓՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ – *բյուջեների կատարման մասին հաշվետվությունը* պետական և համայնքների բյուջեների կատարման, ինչպես նաև՝ հիմնարկների ֆինանսական գործունեության վերաբերյալ որոշակի պարբերա-

կանությամբ և տեսքով (բովանդակությամբ) համապատասխան մարմիններին ներկայացվող վերլուծական և (կամ) թվային տեղեկատվությունն է:

Հաշվետու մարմիններ են համարվում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց ենթակա հիմնարկները և բյուջեների եկամուտների հավաքման համար պատասխանատու մարմինները:

Հաշվետու ժամանակահատվածը տվյալ ֆինանսական տարվա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում իրականացված գործառնությունների վերաբերյալ, կամ որի ավարտի դրությամբ՝ ներկայացվում է հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածի ավարտը հաշվետու ժամանակահատվածի վերջին օրացուցային օրն է:

Հաշվետվության ներկայացման վերջնական ժամկետը հաշվետու ժամանակահատվածին հաջորդող այն օրն է, որի ավարտի դրությամբ հաշվետու մարմինների կողմից հաշվետվությունները պետք է ներկայացված լինեն Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարություն:

ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊՐՈՖԻՑԻՏ) – դա բյուջեների ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումն է: Այն կարող է առաջանալ հետևյալ դեպքերում.

- բյուջեները հաստատվել են հավելուրդով և բյուջետային մուտքերի ու ելքերի ծրագրերը կատարվել են հաստատված չափերով:
- բյուջեներով սահմանված ծախսերը կատարվել են ծրագրվածի չափով, իսկ տարեկան մուտքերը հավաքվել են ծրագրվածից ավելի, ինչի արդյունքում գերազանցվել է ծրագրված պակասուրդի չափը:
- բյուջեներով սահմանված մուտքերը կատարվել են ծրագրվածի չափով, իսկ ծախսերը՝ ծրագրվածից պակաս, որի արդյունքում գերազանցվել է ծրագրված պակասուրդի չափը:

Բյուջեների հավելուրդը տվյալ տարվա բյուջեին հաջորդող տարվա բյուջեի համար մուտք է: Թեև տվյալ տարվա բյուջեում հավելուրդը պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում արտացոլվում է բացասական նշանով՝ բյուջեի հաշվեկշռվածության սկզբունքը պահպանելու նպատակով:

ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ – կազմակերպում է Գանձապետարանը՝ դրա համար նախատեսված գանձապետական հաշիվները վարելու և սահմանված ընթացակարգերն ապահովելու միջոցով: Բյուջեների մուտքերն են՝ եկամուտները, բյուջեների միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը, բյուջետային վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքերը և փոխառու ու ներգրավված այլ դրամական միջոցները:

ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՊԱԿԱՍՈՒՐԴ (ԴԵՖԻՑԻՏ) – դա բյուջեների եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցումն է: Բյուջեների պակասուրդի հարցն առաջանում է այն դեպքում, երբ բյուջետային եկամուտները չեն բավարարում բյուջեների առջև ծառացած ծախսային խնդիրների ֆինանսավորման համար: Ահա այս դեպքում է, որ փոխառու կամ այլ միջոցներ ներգրավելու ճանապարհով բյուջեների դեֆիցիտը ֆինանսավորելու խնդիր է առաջանում: Մեր երկրում պետական բյուջեի պակասուրդի չափը սահմանվում է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով և չի կարող գերազանցել կանխատեսվող համախառն ներքին արդյունքի 5% - ը:

Պետական բյուջեի պակասուրդը կարող է ֆինանսավորվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից՝ միջոցներ ներգրավելու եղանակով: Ընդ որում, այդ միջոցներն իրենց բնույթով կարող են լինել փոխառու կամ ոչ փոխառու: Փոխառու միջոցների օրինակ են՝ պետական արժեթղթերի թողարկման ճանապարհով միջոցների ներգրավումը կամ արտաքին աղբյուրներից վարկային միջոցների ստացումը: Ոչ փոխառու միջոցները բյուջեների տարեսկզբի ազատ մնացորդի և պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցներն են:

ԲՅՈՒՋԵՆԵՐԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԽՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ – Ֆինանսների նախարարության ուշագրավ գործառույթներից մեկը բյուջեներից կատարվող վճարումների նկատմամբ նախնական հսկողության իրականացումն է: Նախնական հսկողությունն իրականացվում է բացառապես նախարարությունում վարվող հաշիվներից՝ միջոցների ելքագրման համար պատասխանատու ստորաբաժանումների կողմից ներկայացված փաստաթղթերի հիման

վրա: Նախարարությունը մշակել և ներդրել է այն ընթացակարգերը, որոնք կիրառվում են նախնական հսկողություն իրականացնելու համար:

ԲՅՈՒՋԵՆԵՐԻՑ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ – կազմակերպում է Գանձապետարանը՝ դրա համար նախատեսված գանձապետական հաշիվները վարելու և սահմանված ընթացակարգերն ապահովելու միջոցով: Բյուջեներից ելքերի հաշվառումը կատարվում են հաշվետերերի կողմից Գանձապետարան ներկայացված վճարման հանձնարարագրերի և վճարումները հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ – յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունը հաստատելու ուղղությամբ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների օրենքով կանոնակարգված գործունեությունն է: Բյուջեների նախագծերը կազմվում են կառավարության գործունեության, ինչպես նաև համայնքների զարգացման ծրագրերին համապատասխան: Տվյալ բյուջետային տարվա համար բյուջետային գործընթացը սկսվում է օրենքով սահմանված ժամկետում և ավարտվում՝ տվյալ բյուջետային տարվա բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու օրը:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ – 1) պետական և համայնքների բյուջեների եկամուտների ու ծախսերի խմբավորումն է՝ ըստ տեսակների և ուղղությունների: Այն արտահայտվում է հետևյալ կառուցվածքով. ա) բյուջեների եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ, բ) բյուջեների ծախսեր և վարկավորում՝ հանած մարումը, գ) պետական բյուջեի պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորման աղբյուրներ և բյուջեների պարտքեր: 2) բյուջեի մուտքերի և ելքերի համակարգված խմբավորումն է՝ հիմնված այնպիսի հատկանիշների վրա, ինչպիսիք են, օրինակ, ծախսերի տնտեսագիտական բնույթը, գործառնական առանձնահատկությունները, գերատեսչական կառուցվածքը և այլ բնութագրերը:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵԼՔԵՐ – պետության կողմից հանրության առջև ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացներից մեկն է: Բյուջետային ելքերը սահմանվում են որպես պետության խնդիրների և գործառույթների ֆինանսական ապահովմանն ուղղվող դրամական միջոցներ:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ – բոլոր հարկային, ոչ հարկային և այլ եկամուտներն են, որոնք հավաքագրվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության: Բյուջետային եկամուտները ներառում են նաև պաշտոնական և այլ տրանսֆերտները (նվիրատվությունները):

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ – պարտավորություն է, որով երաշխավորվում է բյուջետային երաշխիք (երաշխավորագիր) ստացող անձի նկատմամբ պարտքային պարտավորությունների պատշաճ կատարումը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին: Երաշխավորված պարտքային պարտավորությունների չկատարմամբ պայմանավորված գումարները վճարվում են պետական բյուջեով նախատեսված պահուստային հիմնադրամի միջոցների հաշվին: Բյուջետային երաշխավորագրերի տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը: Տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների ընդհանուր գումարը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված երաշխիքների) չի կարող գերազանցել նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների սահմանված տոկոսը:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ – բյուջետային ռեսուրսների հատկացումներն են, որոնք օգտագործվում են ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման համար:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐ – բյուջեների եռամսյակային համամասնությունների հաստատմանը հաջորդող փուլը բյուջետային նախահաշիվների հաստատումն է: Բյուջետային ծախսերի նախահաշվով սահմանվում է պետական հիմնարկների կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորման

նպատակով բյուջեներից հատկացվող գումարների ծավալը, նպատակային նշանակությունը և եռամսյակային բաշխումը: Բյուջետային նախահաշիվն արտահայտում է պետական բյուջեի եռամսյակային համամասնություններով հաստատված ծախսերի գործառնական դասակարգման առանձին ծրագրերի շրջանակներում պետական հիմնարկի կողմից իրականացման ենթակա ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների: Հիմնարկներին համապատասխան բյուջեներից հատկացումները կարող են տրամադրվել, եթե նախատեսված են այդ հիմնարկների՝ սահմանված կարգով հաստատված և տեղական գանձապետական բաժնի կնիքով կնքված նախահաշիվներում:

Նախահաշիվների հաստատման պատասխանատուները բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչներն են, իսկ նախահաշիվների հաստատման մանրամասները սահմանված են գործող օրենսդրությամբ:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ (ՍԵԿՎԵՍՏՐ) – բյուջետային տարվա տվյալ ժամանակահատվածում բյուջեներով նախատեսված ծախսերի տնտեսագիտական բոլոր հոդվածներով՝ օրենքով սահմանված կարգով և չափով համամասնական նվազեցումն է, բացառությամբ՝ պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող լրացուցիչ հատկացումների (դոտացիաների) և օրենքով պաշտպանված այլ ծախսերի (եթե այդպիսիք կան):

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ - բաղկացած է Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներից, որոնք հիմնվում են ֆինանսական, դրամավարկային և հարկային միասնական պետական քաղաքականության վրա: Պետական և համայնքների բյուջեները, պետության և ինքնակառավարման մարմինների գործունեության իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրերն են: Բյուջետային համակարգն իր գործունեությունը կարգավորում է՝ բյուջեների նախագծերի կազմման, բյուջեների եկամուտների (մուտքերի) և ծախսերի բյուջետային դասակարգման, հաշվառ-

ման, հաշվետվության ներկայացման և բյուջեների կատարման ընդհանուր սկզբունքների վրա:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ – միասնականությունն ապահովվում է, ընդհանուր իրավական հիմքով, բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքներով, բյուջետային դասակարգմամբ, բյուջետային հաշվառման, հաշվետվության և բյուջեների կատարման միասնական մեթոդաբանությամբ ու դրամական համակարգով: Բյուջեների ինքնուրույնությունն ապահովվում է օրենքով ամրագրված եկամտի սեփական աղբյուրների առկայությամբ և այդ բյուջեները հաստատող մարմինների կողմից իրենց լիազորությունների սահմաններում բյուջետային ծախսերի ուղղությունները որոշելու իրավունքով:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ – բյուջեի մասին օրենքով սահմանված լիազորություններն են՝ ըստ որոնց տրամադրվում են, տվյալ բյուջետային միջոցների հաշվին, հատկացումներ՝ բյուջետային տարում որոշակի չափով ծախսեր կատարելու համար:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐ – տվյալ տարվա բյուջեով բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգմամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն են: Դրանց կողմից բյուջեների կատարման հետ կապված պարտականությունների կատարման համար պատասխանատու է այդ մարմնի ղեկավարը:

Կարգադրիչների գլխավոր ֆինանսիստը պատասխանատու է բյուջեների կատարման հետ կապված լիազորությունների իրականացումը կազմակերպելու համար: Բյուջեներով նախատեսված ծրագրերի համար անհրաժեշտ ծախսերի նախահաշիվների, վճարման ժամանակացույցերի, գնումների կամ տրանսֆերտների ու սուբսիդիաների տրամադրման պայմանագրերի և դրանց հիման վրա վճարումների իրականացումը, իսկ հետո նաև հաշվետվությունների հետ կապված ընթացակարգերի ապահովումը՝ գլխավոր ֆինանսիստի պարտավորությունների ոչ ամբողջական ցանկն է:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՐԱԴԱՍ ԿԱՐԳԱԴՐԻՉՆԵՐ – բյուջեների կատարման պատասխանատուների աստիճանակարգի հաջորդ մակարդակում գտնվող մարմիններն են, կամ բյուջեներով նախատեսված բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների համակարգերում գտնվող պետական հիմնարկները: Բյուջետային հատկացումների ստորադաս կարգադրիչները սահմանվում են նաև որպես հիմնարկներ, որոնք ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան հաստատված բյուջետային ծախսերի նախահաշիվներ:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ – բյուջետային համակարգի կազմակերպման, դրա կառուցվածքի սահմանման, բյուջեների միջև եկամուտների բաշխման, բյուջետային դասակարգման և բյուջեներում փոփոխությունների, լրացումների կատարման ուղղությամբ իրավասու մարմինների կողմից, օրենքով իրենց վերապահված լիազորությունների սահմաններում, իրականացվող գործունեությունն է: Բյուջետային հարաբերությունները կարգավորվում են օրենքով սահմանված բյուջեների միասնականության, ինքնուրույնության, հաշվեկշռվածության, հրապարակայնության սկզբունքներով:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ – համարվում են պետական և տեղական ինքնակառավարման լիազորություններն իրականացնող իրավաբանական անձինք, որոնց պահպանման ծախսերն ամբողջությամբ ֆինանսավորվում են համապատասխան բյուջեների միջոցների հաշվին: Պետական մարմնի պահպանման ծախսերի նախահաշիվն ընդհանուր հատկացումների սահմաններում հաստատում է դրա ղեկավարը, իսկ տեղական ինքնակառավարման մարմնի պահպանման ծախսերի նախահաշիվը համայնքի բյուջեով հաստատված ընդհանուր հատկացումների սահմաններում հաստատում է համայնքի ղեկավարը՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: Պետական և տեղական ինքնակառավարման մարմին չհամարվող բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի նախահաշիվն ընդհանուր հատկացումների սահմաններում հաստատում է կառավարման վերադաս մարմնի ղեկավարը:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ – վերաբերում է բյուջեների համախառն մուտքերին առանց մանրամասնելու վերջիններիս բովանդակությունը, ինչն արտահայտվում է բյուջեների դասակարգմամբ. այդ թվում՝ բյուջեների եկամուտներ, բյուջեների միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ, բյուջետային վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքեր, փոխառու և ներգրավված այլ դրամական միջոցներ:

Բյուջեների եկամուտներ – անվերադարձ կարգով, օրենսդրությանը համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ամրագրված դրամական միջոցներն են: Սրանք այն միջոցներն են, որոնք գոյանում են պետության գործառույթներից մեկի՝ հանրային միջոցների բաշխման շրջանակում:

Բյուջեների եկամուտները դասակարգվում են՝ ընթացիկ եկամուտների (այդ թվում՝ հարկային եկամուտներ, տուրքեր, ոչ հարկային եկամուտներ), կապիտալի գործառնությունից եկամուտների և պաշտոնական տրանսֆերտների:

Բյուջեների միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ – նախորդ տարվա բյուջեի կատարման ընթացքում իրականացված ելքերի նկատմամբ մուտքերի գերազանցումն է: Բյուջեների միջոցների տարեսկզբի մնացորդը տվյալ տարվա համապատասխան բյուջեների մուտքն է:

Գործող օրենսդրությամբ սահմանված են նաև այն ուղղությունները, որոնց համար կարող են օգտագործվել բյուջեների տարեսկզբի ազատ մնացորդները:

Բյուջեների վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքեր – դրանք բյուջեներից տրամադրվող վարկերի և փոխատվությունների վերադարձից բյուջեներ մուտքագրվող միջոցներն են:

Բյուջետային վարկեր – վերադարձելիության, ժամկետայնության, արժևորման ու վճարովիության սկզբունքով պետական բյուջեից համայնքներին և Երևան քաղաքի բյուջեին, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին դրամական տեսքով տրվող միջոցներն են:

Բյուջետային փոխատվություններ – վերադարձելիության, արժևորման և ժամկետայնության սկզբունքով, առանց վճարովիության սկզբունքի, պետական բյուջեից համայնքներին,

ինչպես նաև՝ Երևան քաղաքի բյուջեին առանձին ծրագրերի կամ ծախսերի ֆինանսավորման նպատակով դրամական տեսքով տրվող միջոցներն են:

Բյուջեում փոխառու և ներգրավված այլ դրամական միջոցներ – դրանք բյուջեների առջև ծառացած տարբեր խնդիրների լուծման նպատակով ներգրավված միջոցներն են:

Փոխառու կամ ոչ փոխառու միջոցները սովորաբար ներգրավվում են, որպեսզի ապահովվի բյուջեի համախառն ելքերի՝ համախառն մուտքերին առնվազն հավասար լինելու պայմանը: Հակառակ դեպքում բյուջեի համախառն ելքերը չեն կարող իրականացվել՝ մուտքեր չլինելու պատճառով:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ – երբեմն հանրային կարիքների ապահովման նպատակով պետությունն իր վրա է վերցնում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող, սակայն վնասով աշխատող տնտեսավարող սուբյեկտի վնասների փոխհատուցումը: Օրինակ՝ պետական բյուջեից սուբսիդավորվում է Երևանի Մետրոպոլիտենը:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ ԵՎ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ – բյուջետային վարկերը տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ անձանց պետական բյուջեից վերադարձելիության, ժամկետայնության և վճարելիության սկզբունքով տրվող միջոցներն են: Բյուջետային փոխատվությունները պետական բյուջեից տեղական ինքնակառավարման մարմիններին առանց վճարելիության սկզբունքի և տվյալ բյուջետային տարում վերադարձման ենթակա առանձին ծրագրերի կամ ծախսերի ֆինանսավորման նպատակով տրվող միջոցներն են: Բյուջետային վարկերի և փոխատվությունների տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐԻ – Հայաստանի Հանրապետությունում բյուջետային տարին համընկնում է օրացուցային տարվա հետ: Այն սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ – ֆիզիկական անձանց կամ հանրային կարիքների ապահովման նկատառումով, որոշ դեպքերում պետությունն աջակցում է կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին՝ բյուջետային տրանսֆերտների տրամադրման միջոցով (օրինակ՝ բնակչության անապահով խավին տրվող նպաստներ, հասարակական կազմակերպության կողմից որևէ բնագավառում զբաղված անձանց վերապատրաստման պետական աջակցության ծրագրի իրականացում և այլն):

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ – ծախսող միավորների կողմից պատրաստվող փաստաթուղթ է, որը ներառում է առաջարկություններ և համապատասխան հիմնավորումներ՝ առաջիկա տարում տվյալ միավորի գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտ բյուջետային ռեսուրսների վերաբերյալ:

ԲՆԱԿԱՆ ՉԱՓԻՉՆԵՐ – դրանք օգտագործվում են նյութական արժեքների (հիմնական միջոցներ, պատրաստի արտադրանք, ապրանքներ և այլն) հաշվառման, ինչպես նաև այդ ակտիվների և տնտեսական գործընթացների արտացոլման համար: Հաշվառման օբյեկտները կարող են չափվել քաշով, ծավալով, երկարությունով և հաշվով (հատով, զույգով և այլն):

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԱՃ – դա տվյալ տարվա ընթացքում ծնվածների և մահացածների թվաքանակների տարբերությունն է:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՇԱՐԺ - ծնվածների և մահացածների համակցության ընդհանրացված անվանումն է, այսինքն՝ բնական ճանապարհով բնակչության թվաքանակի փոփոխությունը: Բնակչության բնական շարժի ցուցանիշներին են վերագրվում նաև ամուսնությունները ու ամուսնալուծությունները, որոնք հաշվարկվում են նույն եղանակով, սակայն բնակչության թվաքանակի ցուցանիշի վրա ուղղակի ազդեցություն չունեն: Ծնունդների, մահերի, ամուսնությունների, ամուսնալուծությունների վերաբերյալ ամենամսյա տեղեկությունները ստացվում են ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) տարածքային մար-

միների կողմից կազմված դրանց գծով ակտերում գրանցված տեղեկությունների հիման վրա:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ – դրանում ներառվում են բնակչության բոլոր խմբերի աշխատանքի վարձատրությունը, կենսաթոշակները, նպաստները, կրթաթոշակները և այլ սոցիալական անհատույց փոխատվությունները, գյուղատնտեսական մթերքի վաճառքից մուտքերը, սեփականությունից եկամուտները՝ ներդրումների, արժեթղթերի, շահաբաժինների տոկոսների տեսքով, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվածների եկամուտները, ինչպես նաև վարկերը, արժեթղթերի վաճառքից եկամուտները և այլ եկամուտներ:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ ԵՎ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ներառվում են ապրանքների գնման և ծառայությունների վճարման ծախսերը, պարտադիր վճարները և կամավոր մուծումները (հարկեր և մուծումներ, ապահովագրական վճարներ, հասարակական և կոոպերատիվ կազմակերպություններին անդամավճարներ, բանկային և ապրանքային վարկերի համար հաշվարկված տոկոսներ և այլն), ինչպես նաև արժեթղթերի ավանդներում խնայողությունների հավելաճը (նվազումը):

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ – դրանք բնակչության օժանդակ տնտեսություններն են, կոլեկտիվ այգիները և բանջարանոցները, գյուղացիական տնտեսությունները, գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները և այլն:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼ – արտացոլում է բնակչության կողմից զանազան տեսակի ծառայությունների սպառման ծավալը և վիճակագրորեն չափվում է մատուցված ծառայությունների դիմաց վճարված դրամական միջոցների գումարով: Ընդ որում, վճարը կարող է կատարվել ինչպես անմիջապես սպառողների կողմից իրենց սպառած ծառայությունների դիմաց, այնպես էլ այն կազմակերպության միջոցով, որում աշխատում է տվյալ սպառողը (սպառված ծառայությունների ծախսերի լրիվ կամ մասնակի փոխհատուցման կամ վճարման գումարի չափով):

Բնակչությանը մատուցվող ծառայությունների ծավալի ցուցանիշը ձևավորվում է կենցաղային, մարդատար տրանսպորտի, փոստային և հեռահաղորդակցության, բնակարանային, կոմունալ, տնտեսության, մշակույթի, զբոսաշրջության և սպորտի, առողջարանների և հանգստյան տների, կրթության համակարգի և այլ բնույթի ծառայություններից: Բոլոր տեսակի ծառայությունների հաշվառումն իրականացվում է դրանց մատուցման պահին բնակչությունից ստացված փաստացի վճարի չափով (անկախ վճարման ձևից):

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐ ՎՃԱՐՈՂՆԵՐ – համարվում են այն ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք իրականացնում են «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործառույթներ, այսինքն՝ վնասակար նյութերի արտանետում շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան), ջրի, կենսապաշարների օգտագործում և այլն:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ – բնապահպանական վճարների դրույքաչափերը սահմանված են օրենքով, իսկ բնօգտագործման վճարներինը՝ ՀՀ կառավարության կողմից: Որպես կանոն, դրանք սահմանված են արտանետված վնասակար նյութերի, օգտագործված պաշարների ծավալների, կամ օգտակար հանածոների իրացման գնի նկատմամբ և արտահայտված են դրամներով կամ տոկոսներով:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐ – բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով օրենքով սահմանված կարգով և չափով պետական կամ համայնքի բյուջե վճարվող պարտադիր վճար է:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ – 1) վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելու համար վճար, 2) արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու

համար վճար, 3) շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճար:

ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐ – պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև տարբեր որակի բնական պաշարներ օգտագործողների համար տնտեսավարման հավասար պայմաններ ստեղծելու նպատակով այդ պաշարների օգտագործման դիմաց օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե գանձվող վճար է:

ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ – 1) ջրօգտագործման համար վճար, 2) պինդ օգտակար հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների համար վճար, 3) կենսապաշարների օգտագործման համար վճար:

ԲՈՆԻՖԻԿԱՑԻԱ – 1) որակի համար ապրանքի գնի վրա հավելուրդ, 2) ապրանքի արտահանման դեպքում երկրի ներսում այդ նույն ապրանքի համար գանձված հարկի գումարի վերադարձ, 3) պետական վարկային սուբսիդիա վարկառուներին՝ վարկային տոկոսի իջեցման նպատակով, 4) պետական փոխառության պարտատոմսեր, տնօրինողների կողմից միաժամանակյա (միանվագ) վճարում, որը կատարվում է պարտատոմսերն այլ արժեթղթերով փոխարինելու դեպքում:

ԲՈՆՈՒՍ – կյանքի ապահովագրության որոշ տեսակներում, դա՝ 1) ապահովագրական գումարին ավելացվող գումար է, 2) ապահովագրավճարից զեղչ է:

ԲՈՐՍԱ – մեծածախ շուկա, ուր առևտուրը կազմակերպվում է ապրանքի նմուշով (ապրանքային բորսա), արժեթղթերով (ֆոնդային բորսա), օտարերկրյա արտարժույթով (արժութային բորսա): Դա այն վայրն է, ուր գործարք կնքելու համար վաճառողներն ու գնորդները հանդիպում են իրար: Բորսան ունի անդամների հաստատագրված կազմ և առևտրի իրականացման կանոններ: Բորսաները լինում են պետական և մասնավոր: Պետական բորսաներում գործարքներ կարող են կնքել ինչպես

բորսայի անդամներ, այնպես էլ՝ անդամ չհանդիսացող տնտեսավարող սուբյեկտներ: Մասնավոր բորսաները կազմակերպվում են բաժնետիրական հիմունքներով, ուր գործարքներ կարող են կնքել միայն դրանց անդամագրված բաժնետերերը: Բորսային անդամները հանդես են գալիս որպես բրոքերներ, մեծածախ առևտրի միջնորդներ, որոնց բորսան ապահովում է տեղով, կապի միջոցներով, կատարում է գործառնությունների հաշվառում, մշակում է օրինակելի պայմանագրեր, քննարկում է արբիտրաժային վեճեր:

ԲՈՐՍԱՅԱԿԱՆ ԻՆԴԵՔՍՆԵՐ – ֆոնդային շուկայի գների դինամիկայի ընդհանուր ցուցանիշ է, որն արտացոլում է դրանում շրջանառվող արժեթղթերի ողջ ոլորտը: Այն միջին մեծություն է և հաշվարկվում է նախկինում որոշված բազիսային շուկայական գնահատման միջոցով:

ԲՈՐՍԱՅԱԿԱՆ ՓՈԽԱՐԺԵՔ – ֆոնդային բորսաներում շրջանառվող արժեթղթերի (բաժնետոմսեր, պարտատոմսեր) արժեքն է, կամ այլ կերպ՝ դրանց վաճառքի գինը: Որոշվում է փոխատվական տոկոսի մակարդակի և տվյալ արժեթղթի եկամտաբերության մակարդակի հարաբերակցությամբ: Բորսայական կուրսը ուղղակի կախվածության մեջ է գտնվում շահաբաժնի մեծությունից և հակադարձ կախվածության մեջ՝ փոխատվական տոկոսի մակարդակից: Բաժնետոմսի անվանական արժեքը բորսայական կուրսի վրա չի ազդում, քանի որ բաժնետոմսը ենթակա չէ ետգնման՝ այն թողարկած ընկերության կողմից: Պարտատոմսի բորսայական կուրսը կախված է դրա անվանական գնից, և այն բարձր կլինի այնքան ժամանակ, որքան մոտենում է ետ գնման ժամկետը: Սովորական բաժնետոմսերի բորսայական կուրսը ավելի բարձր է, քան պարտատոմսերի և արտոնյալ բաժնետոմսերի կուրսը, քանի որ սովորական բաժնետոմսի հաշվով վճարվող շահաբաժնի մակարդակը նախապես որոշված չէ:

ԲՈՐՍԱՅԻՆ ՇԱՀՈՒՅԹ – դա ֆոնդային բորսաներում վաճառվող արժեթղթերի, իսկ ապրանքային բորսաներում՝ ապրանքների վաճառքից գոյացած եկամուտն է: Բորսային շահույթը

բորսային գների և կատարած ծախսերի (ներառյալ մաքսերը, ապահովագրությունը) տարբերությունն է:

ԲՐՈՔԵՐ – բորսաներում պաշտոնական առևտրային միջնորդ է, որը վաճառողի համար փնտրում է գնորդ, իսկ գնորդի համար՝ վաճառող: Գործարքը կնքվում է հաճախորդի հանձնարարությամբ և նրա հաշվին՝ դրա դիմաց ստանալով համապատասխան չափով վարձատրություն: Բրոքերների դեր կարող են կատարել անհատները, ֆիրմաները, կազմակերպությունները: Բրոքերները դիլերներից (առևտրային միջնորդ) տարբերվում են նրանով, որ արժեթղթերի առևտուրն անում են իրենց հաշվին և իրենց անունից:

ԲՐՈՔԵՐ ԱՆԿԱԽ – Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված անհատ ձեռներեց, որն իրականացնում է բրոքերային կամ դիլերային գործունեություն:

ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ՖԻՐՄԱՆԵՐ – կատարում են հաճախորդների հրահանգները՝ շրջանառության մեջ գտնվող արժեթղթերի, արտարժույթի ու ֆինանսական ածանցյալ արժեթղթերի (ֆյուչերս, ֆորվարդ, օպցիոն և այլն) առք ու վաճառքի վերաբերյալ:

Գ

ԳԱՆՁԱՊԱՀ – 1) կազմակերպության ծառայող է, որի վրա դրված է կանխիկ դրամը և արժեթղթերը հաշվառելու, ընդունելու, պահպանելու և դրամարկղից դուրս տալու պարտականությունները: Գանձապահը պատասխանատու է դրամական միջոցները ստանալու և ծախսելու համար, ուստի և կազմակերպության հետ կնքում է նյութական պատասխանատվության պայմանագիր: Նա պատրաստում է փաստաթղթեր և սահմանված կարգով բանկերից ստանում է կանխիկ դրամ՝ աշխատավարձ, պարգևավճարներ, գործուղման և այլ ծախսեր վճարելու համար: Մուտքի և ելքի փաստաթղթերի հիման վրա վարում է դրամարկղային գիրք: Կանխիկ դրամական միջոցների և արժեթղթերի փաստացի առկայությունը համեմատում է դրամարկղի գրքի մնացորդի հետ, կազմում դրամարկղի հաշ-

վետվությունը: 2) Բանկի ծառայող է, որի պարտականությունների մեջ են մտնում կանխիկ դրամով գործառնությունները, ավանդատուներին և բանկի մյուս հաճախորդներին սպասարկելը: Հենց գանձապահն է անմիջական կապի մեջ մտնում հաճախորդի հետ՝ նրանցից ընդունելով և նրանց վճարելով կանխիկ դրամ (օրինակ, ընդունում է ավանդներ և վճարում չեկեր): Հաճախորդների հետ հարաբերություններում իր անմիջական դերի պատճառով գանձապահը պետք է լինի ճշտապահ, հաճախորդների հետ սիրալիր, ունենա տեղեկություններ բանկի մյուս ստորաբաժանումների և նրանց կողմից մատուցվող ծառայությունների մասին: Գանձապահը պարտավոր է տեսակավորել և համապատասխան ֆայլերի մեջ մտցնել ավանդների ընդունման և դրամի տրամադրման վերաբերյալ անդորրագրերը, ստուգել հաճախորդների ստորագրության իսկությունը, վերահսկել հաշիվների մնացորդը և օրվա մեջ առնվազն մեկ անգամ որոշել իր դրամարկղի մնացորդը: Բանկերի հաստիքացուցակներում սովորաբար նախատեսվում են գլխավոր գանձապահի (դրամարկղի վարիչ), ելքի դրամարկղի և մուտքի դրամարկղի գանձապահների հաստիքներ: Խոշոր բանկերում հաճախ յուրաքանչյուր մասնագիտացված գործառույթի համար նշանակվում է առանձին գանձապահ: 3) Կազմակերպության աշխատակից է, որն իրականացնում է կանխիկ դրամի ընդունումը (մուտքագրումը) կազմակերպության դրամարկղ և բացթողումը (ելքագրումը) կազմակերպության դրամարկղից:

ԳԱՆՁԱՊԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ – 1) գանձապահն իրականացնում է կանխիկ դրամի ընդունումը (մուտքագրումը) կազմակերպության դրամարկղ և բացթողումը (ելքագրումը) կազմակերպության դրամարկղից, 2) գանձապահին արգելվում է իր պարտականությունների կատարումը փոխանցել ուրիշ անձանց՝ առանց կազմակերպության ղեկավարի հրամանի (որոշման), 3) գանձապահի պարտականությունները չեն կարող դրվել կազմակերպության այն աշխատակիցների վրա, որոնք իրավունք ունեն ստորագրելու դրամարկղային փաստաթղթերը, բացառությամբ այն կազմակերպությունների, որոնց աշխատակիցների թիվը չի գերազանցում երեքը:

ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ – 1) ԱՄՆ-ում՝ գանձապետարանի կողմից թողարկվող արժեթղթերի ընդհանրական անվանումն է: Թողարկվում են հարկային մուտքերի հաշվին չծածկվող պետական ծախսերի ֆինանսավորման (միջոցների ներգրավման) նպատակով: Շուկայում շրջանառվող գանձապետական արժեթղթերը հանդես են գալիս մուրհակների և պարտատոմսերի տեսքով, 2) Մեծ Բրիտանիայում՝ պարտատոմսերն են, որոնք թողարկվում են գանձապետարանի կողմից՝ արժեթղթերի բորսայի, բանկերի, փոստային բաժանմունքների միջոցով:

ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԱՐՏԱՐԺՈՒԹՅԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ – Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ ՀՀ Կենտրոնական բանկում կարող են բացվել արտարժույթով արտահայտված գանձապետական հաշիվներ: Գանձապետական արտարժութային հաշիվների բացման հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության օրենքները, միջազգային պայմանագրերը և կառավարության որոշումները:

ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐ – Գանձապետարանում իրականացվում է բյուջեների կատարման հաշվապահություն և դրան համահունչ ներդրվել է հաշիվների որոշակի համակարգ: Վերջինս հնարավորություն է ընձեռում սահմանելու բյուջեների կատարումը հաշվառելու համար անհրաժեշտ հաշիվները, դրանց վարման միասնական կանոնները, և արդյունքում՝ ապահովել Գանձապետարանում վարվող հաշիվներով կատարված գործառնությունների լիարժեք հաշվապահությունը: Գանձապետարանում կիրառվում է հաշվապահության կրկնակի գրանցումների սկզբունքը, որը մինչ օրս փորձարկված ամենաարդյունավետ մոտեցումն է:

ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳ – Գանձապետարանի կողմից բյուջեների կատարմանը վերաբերող հաշվապահությունը վարելու նպատակով Ֆինանսների նախարարությունը հաստատել է բյուջետային հատվածի յուրաքանչյուր միավորի (պետական մարմինների և համայնքների ու դրանց ենթակա հիմնարկների) անվամբ Գանձապետարանում հաշիվների վարման ընթացակարգը: Այդ հաշիվներն անվանում են

Գանձապետական հաշիվներ: Հիշյալ ընթացակարգը սահմանում է Գանձապետական հաշիվներին միջոցների հաշվեգրման և այդ հաշիվներից միջոցների ելքագրման գործընթացի մանրամասները:

ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻՑ ԿԱՆԽԻԿ ՉԵՎՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ – կանխիկի շրջանառությունը տնտեսության մեջ սահմանափակելու նկատառումով՝ գանձապետական հաշիվներից կանխիկ դրամով վճարումներ կատարվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման միայն սահմանափակ թվով հոդվածներով, կամ որոշ դեպքերում՝ ՀՀ կառավարության սահմանած չափաքանակների շրջանակներում: Ուշադրության է արժանի թերևս, գանձապետական հաշիվներից կանխիկ վճարումների իրականացման համակարգը: Բյուջեների կատարման ընթացքում կանխիկ դրամի պահանջը բավարարելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարությունը պայմանագրային հիմունքներով հարաբերվում է առևտրային բանկերի հետ: Պայմանագրի առարկան տվյալ դեպքում հետևյալն է. առևտրային բանկը տեղական գանձապետական բաժնի (ՏԳԲ) հայտի հիման վրա իր սեփական միջոցներից կանխիկ է տրամադրում ՏԳԲ-ի լիազորած անձին և իր տրամադրած միջոցների ստացման պահանջ է ներկայացնում ՏԳԲ-ին: Այնուհետև, ՏԳԲ-ն օգտագործված կանխիկի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է Կենտրոնական Գանձապետարանին, իսկ վերջինս՝ այդ միջոցները փոխանցում է առևտրային բանկին: Այս պայմանագրերի հիմքում ընկած են շուկայական մեխանիզմներ, և յուրաքանչյուր բանկի հետ կնքված պայմանագրով սահմանված է նաև կանխիկ միջոցների սպասարկման գինը (արժեքը), որոնք Գանձապետարանը վճարում է տվյալ բանկին: Ընդ որում, պայմանագրերով սահմանված են նաև տույժերի, տուգանքների մեխանիզմները, որոնք կիրառվում են, եթե կողմերից մեկը չի կատարում իր պարտավորությունները:

ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇԻՎ (ԳՄՀ) – Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության Գանձապետական միասնական հաշիվը Գանձապետարանի անվամբ

Կենտրոնական բանկում բացված և ՀՀ դրամով արտահայտված հաշիվ է:

Բյուջեների կատարումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է գանձապետական համակարգի միջոցով՝ միասնական դրամարկղի սկզբունքի հիման վրա: Կամ այլ կերպ՝ Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին ամրագրված բոլոր միջոցները հաշվեգրվում են (մուտքագրվում են) ԳՄՀ, իսկ ծախսերը (ելքերը) կատարվում են ԳՄՀ – ից:

Գանձապետական միասնական հաշիվը ներառում է երկու տեսակի ենթահաշիվներ՝

- Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության կողմից տնօրինվող ենթահաշիվներ,
- ենթահաշիվներ, որ վարվում են Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության կողմից, բայց միջոցները տնօրինում են հաշվետեր հանդիսացող պետական հիմնարկները:

Գանձապետական միասնական հաշվի ենթահաշիվներն օգտագործվում են հետևյալ միջոցների արտացոլման համար.

- Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներ,
- համայնքների միջոցներ,
- արտաբյուջետային միջոցներ,
- Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի միջոցներ,
- արտաքին վարկերի և դրամաշնորհների միջոցներ,
- պետական մարմինների դեպոզիտային միջոցներ:

ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆ – հատուկ պետական ֆինանսական մարմին է, որը գործում է ֆինանսների նախարարությանն առընթեր կամ նրա կազմում: Գանձապետարանի գործառույթներում (ֆունկցիաներում) ներառվում են՝ պետական բյուջեի նախագծի կազմումը և դրա կատարման նկատմամբ հսկողության իրականացումը (այդ թվում՝ բյուջեի դրամարկղային կատարման կառավարումը), բյուջետային միջոցների ծախսման նկատմամբ հսկողությունը, բյուջե մուտքագրվող հարկերի և պարտադիր այլ վճարների հսկողությունը, ինչպես նաև պետական պարտքի սպասարկումը և պետական արժեթղթերի թողարկումն ու դրա կատարման հսկողությունը: Պատասխանատու է բյուջետային, հարկային և ամբողջությամբ վերցրած տնտեսական քաղաքա-

կանության իրագործման համար, կազմակերպում է պետական փոխառություններից եկամուտների և պետության այլ եկամուտների հավաքագրումը: Բացում է բյուջետային վարկեր և տրամադրում բյուջետային միջոցներ՝ համաձայն հաստատված ներդրումային ծրագրերի: Օժանդակում է վարչական իշխանություններին՝ բյուջեի կատարումն արդյունավետ կազմակերպելու հարցում: Գանձապետարանն ապահովում է պետական միջոցներով իրականացվող բոլոր ֆինանսական գործառնությունների հրապարակայնությունը, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում լայն հասարակական զանգվածների քննարկմանը ներկայացնելու պետական ֆինանսական գործառնությունների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն:

ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ – Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգը ստեղծվել է ՀՀ վարչապետի 1996 թվականի մի քանի որոշումներով: Այն ձևավորվել է որպես Կենտրոնական Գանձապետարանի և հանրապետության տարածաշրջաններում գործող տեղական գանձապետական բաժանմունքների ամբողջություն: Կենտրոնական Գանձապետարանը ստեղծվել է ՀՀ ֆինանսների նախարարության կառուցվածքում գործող և համանման գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների, իսկ տեղական գանձապետական բաժանմունքները (ներկայումս՝ տեղական գանձապետական բաժիններ)՝ նախկին շրջանային (քաղաքային) գործադիր կոմիտեների ֆինանսական բաժինների հենքի վրա: Ի տարբերություն գործադիր կոմիտեների նախկին ֆինանսական բաժինների, որոնք ունեին երկակի ենթակայություն (ՀՀ Ֆինանսների նախարարություն և Գործադիր կոմիտե), տեղական գանձապետական բաժինները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների ստորաբաժանումներ և ենթակա են ու հաշվետու միայն դրանց:

ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ – այն երկմակարդակ է՝ Կենտրոնական Գանձապետարանի և տեղական գանձապետական բաժինների համար: Արտաքին աշխարհի հետ Գանձապետարանը կամ բյուջեների կատարման հաշվապահությունը շփման երկու եզր ունի. կենտրոնական գանձա-

պետարանի մասով՝ Կենտրոնական բանկում վարվող հաշիվների միջոցով և տեղական գանձապետական բաժինների մասով՝ առևտրային բանկերից կանխիկ դրամական միջոցների ստացման համար նախատեսված ընթացակարգերի միջոցով:

Գանձապետարանը հնարավորություն է ընձեռում բյուջեի կատարումը կազմակերպելիս տարբերակել երկու տեսակի հոսքեր՝ կանխիկ դրամական միջոցներ և անկանխիկ ֆինանսական միջոցներ: Դրանք գանձապետական համակարգում շարժվում են միմյանցից անկախ: Անհրաժեշտության դեպքում միջոցները կարող են ազատորեն տեղաշարժվել գանձապետարանի ներսում՝ գանձապետարանում վարվող հաշիվներից մեկից՝ մյուսին: Միևնույն ժամանակ, կանխիկ դրամական միջոցները կուտակվում են և դրանց շրջանառումը իրականացվում է կենտրոնացված կարգով՝ գանձապետական միասնական հաշվի միջոցով: Ֆինանսական միջոցների բոլոր տեսակների փոխանցումների առանձնահատկությունն այն է, որ դրանք չեն պահանջում բանկային համակարգի մասնակցություն կամ կանխիկ դրամական միջոցների շարժ, և այդպիսով, իրենցից ներկայացնում են անկանխիկ գործառնություններ: Դրանք ենթադրում են ֆինանսական միջոցների փոխանցում Կենտրոնական Գանձապետարանի (տեղական գանձապետական բաժնի) ներսում կամ Կենտրոնական Գանձապետարանից տեղական գանձապետական բաժին (կամ ընդհակառակը):

ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ – գոյություն ունեն ֆինանսական կառավարման մի շարք գործառնություններ, որոնք դիտարկվում են որպես գանձապետական գործառույթներ: Դրանցից են.

- պետական և համայնքների բյուջեների կատարման կազմակերպում:
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներ բոլոր մուտքերի և այդ բյուջեներից բոլոր վճարումների գործառնությունների կանոնակարգում ու այդ գործառնությունների ամբողջական հաշվառման իրականացում:
- պետությանը և համայնքներին պատկանող բոլոր դրամական միջոցների համախմբում:

- բյուջեների հաշվապահության ռացիոնալացում՝ հաշվառման և հաշվետվական համակարգն ամբողջությամբ բանկային համակարգից գանձապետարան տեղափոխելու միջոցով:
- առևտրային բանկերում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա հիմնարկների հաշիվների վարման գործառույթի տեղափոխում գանձապետարան:
- պետական և համայնքների բյուջեներին ամրագրված միջոցների համապատասխան հաշիվների հաշվեգրման ապահովում՝ դրանց վճարման պահից նվազագույն ուշացումով:
- վճարման սովորական գործընթացում դրամական միջոցների ելքերի «դանդաղեցումը»՝ միջոցների հատկացումից մինչև ապրանքների ու ծառայությունների ձեռք բերման և վերջնական վճարում կատարելու միջև ընկած ժամանակահատվածը օրենքով թույլատրված առավելագույն չափին հասցնելու միջոցով:
- կանխիկ հոսքերի կառավարում այնպես, որ նվազագույնի հասցվի դրամական միջոցների ներգրավման արժեքը և առավելագույնի հասցվի դրանց օգտագործման արդյունավետությունը:
- գանձապետական հաշիվների, ամսական ու տարեկան ֆինանսական հաշիվների, բյուջետային հատկացումների հաշիվների և պետության ակտիվների ու պասիվների հաշիվների պատրաստման նպատակով հաշվային պլանի ներդրում:
- պետական պարտքի և կառավարության ակտիվների կառավարման գործառույթների կենտրոնացում:
- իրական ժամանակում երկրի ֆինանսական վիճակի հսկողություն՝ ամբողջությամբ համակարգչայնացված գանձապետական գործառույթների միջոցով:
- ֆինանսական գործառնությունների գրանցման և հաշվետվության իրականացում՝ դրանց տեղի ունենալու պահից նվազագույն ուշացմամբ:

ԳԱՆՁՈՒՄ – 1) շրջանառվող և վճարման ենթակա ֆինանսական փաստաթղթերը (մուրհակ, չեկ և այլն) վճարման ներկայացնելն է և դրանց հետագա վճարումը՝ այն տրամադրած անձի կողմից: Այս տերմինը վերաբերում է ոչ միայն մուրհակի կամ չեկի գծով հաշվարկների կատարմանը և վճարների

ստացմանը, այլ նաև այնպիսի մասնագիտացված բանկային ծառայություններին, ինչպիսիք են՝ արտերկրներից միջոցների գանձումը, կտրոնների գծով վճարումը և վերադարձված ֆինանսական փաստաթղթերի գծով միջոցների գանձումը, 2) վճարման համար բանկ ներկայացված փոխանցելի մուրհակի կամ չեկի գծով դրամի ստացումն է, 3) ընդհանուր ֆինանսական նշանակությամբ՝ դեբիտորական պարտքերի վերածումը կանխիկ դրամական միջոցների, 4) ընթացակարգեր, որոնք անհրաժեշտ են ժամկետանց վճարումների գծով դրամ ստանալու համար: Այդ ընթացակարգերն ընդգրկում են նաև վճարման ենթակա ժամկետանց հաշիվների հանձնումը պարտքերը գանձող մասնագետներին կամ մասնավոր ֆիրմաներին:

ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ – դրանք անկախ իրենց ծյուղային պատկանելիությունից, կատարում են գիտական հետազոտություններ, ներառելով հիմնավոր կիրառական հետազոտությունները և գիտության բոլոր ճյուղերի մշակումները, ինչպես նաև՝ գիտատեխնիկական ծառայությունները:

ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ - դրանց թվին են դասվում՝ գիտական հետազոտություններն ու մշակումները, նախագծակոնստրուկտորական, տեխնոլոգիական, շինարարության համար նախագծային աշխատանքները, արտադրանքի փորձանմուշների պատրաստումը և գիտատեխնիկական ծառայությունները:

Գիտական հետազոտություն և մշակում համարվում է այն գործունեությունը, որը պարբերաբար իրականացվում է գիտելիքների հարստացման ու նրանց փորձնական կիրառության նոր ոլորտների որոնման նպատակով: Գիտական հետազոտության և դրան հարակից գործունեության տարբերակիչ հիմնական հատկանիշը համարվում է աշխատանքում նորույթի առկայությունը: Մշակումներ համարվում են պարբերաբար կատարվող այն աշխատանքները, որոնք հիմնված են հետազոտությունների, փորձի միջոցով ստացված ու գոյություն ունեցող գիտելիքների վրա և ուղղված են նոր նյութերի, արտադրանքի, գործընթացների, հարմարանքների, ծառայությունների, համակարգի կամ մեթոդի ստեղծմանը:

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ – պաշտոնատար անձ է, որն անմիջապես ենթարկվում է կազմակերպության ղեկավարին և պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառումը վարելու, լրիվ և արժանահավատ ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար: Գլխավոր հաշվապահն ապահովում է իրականացվող տնտեսական գործառնությունների համապատասխանությունը գործող օրենսդրությանը, իրականացնում կազմակերպության գույքի (ունեցվածքի) շարժի և պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն: Նա ապահովում է կազմակերպությունում և նրա ստորաբաժանումներում հաշվապահական հաշվառման և հաշվետվության արդյունավետ կազմակերպումը՝ հաշվառման գծով հաշվարկային աշխատանքների առավելագույն կենտրոնացման ու մեքենայացման և հաշվապահական հաշվառման ու վերահսկողության առաջավոր մեթոդների կիրառման հիման վրա: Գլխավոր հաշվապահը կազմակերպության հաշվապահության ղեկավարն է: ՀՀ հաշվապահական հաշվառման մասին օրենսդրության համաձայն, գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների և փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է կազմակերպության բոլոր աշխատողների համար: Առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված, կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի միջև տարաձայնությունների դեպքում, գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը՝ կազմակերպության ղեկավարի գրավոր կարգադրությամբ (հանձնարարությամբ), և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարը:

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – 1) կազմակերպությունում հաշվապահական հաշվառման ընդհանուր վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացնում է հաշվապահական ծառայության ղեկավարը (գլխավոր հաշվապահը)՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան, 2) գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառում վարելու, ֆինան-

սական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար, 3) գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների ու փաստերի ներկայացման հետ, պարտադիր է կազմակերպության բոլոր աշխատողների համար, 4) առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված (կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի միջև տարաձայնությունների դեպքում) գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը՝ կազմակերպության ղեկավարի գրավոր կարգադրությամբ (հանձնարարությամբ), և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարը, 5) հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները ստորագրելու իրավունք ունի որակավորված գլխավոր հաշվապահը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով աուդիտորի որակավորում ունեցող ֆիզիկական անձը: Այդ նպատակով գլխավոր հաշվապահների որակավորումն իրականացնում է կամ հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինը, կամ նրա կողմից սահմանված չափանիշների համաձայն ընտրված մասնագիտացված կառույցը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ – դա բուսաբուծությունում և անասնապահությունում արտադրված արտադրանքն է դրամական արտահայտությամբ՝ փաստացի միջին կշռված գներով: Գյուղատնտեսական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսի հաշվարկման համար օգտագործվում է դրա ծավալի ցուցանիշը՝ համադրելի գներով:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ - այն բուսաբուծության և անասնաբուծության արտադրանքի գումարն է արժեքային արտահայտությամբ՝ տվյալ տարվա ընթացիկ գներով: Ցուցանիշը հաշվարկվում է բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև ընտրանքային դիտարկման տվյալներով: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի կազմում չեն ընդգրկվում

անտառաբուծության, ձկնորսության և ձկնաբուծության ու որսորդության ծավալների արժեքները:

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ – իրավաբանական անձ հանդիսացող կոլեկտիվ և խառը սեփականության վրա հիմնված, գյուղատնտեսական մթերքների ապրանքային արտադրություն ապահովող տնտեսավարող սուբյեկտ է, որի գործունեությունը կարգավորվում է նույն օրենքներով, ինչ որ գյուղացիական տնտեսությունների դեպքում է:

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ – ազատ ձեռնարկատիրության ձև է, որտեղ ցմահ ժառանգատիրության հիման վրա, կամ հողի օգտագործման վարձակալության պայմաններով, իրականացվում է գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը, դրա վերամշակումն ու իրացումը:

ԳՅՈՒՂՄԹԵՐՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ – արտացոլում է իրացման բոլոր ուղիներով ագրարային հատվածի արտադրանքի գների փոփոխությունների շարժը հաշվետու ժամանակահատվածում՝ բազիսայինի համեմատ: Այն հաշվարկվում է բուսաբուծության և անասնապահության արտադրանքի գների ինդեքսների ագրեգացիայի ճանապարհով: Դրանցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է անհատական ապրանքների ինդեքսների կշռված մեծություն՝ ընդգրկված միատեսակ ապրանքախմբում: Որպես անհատական ինդեքսների կշռման բազա օգտագործվում են հաշվետու ամսում իրացված արտադրանքի ծավալները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ – համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրությունն ու օգտագործումը գնահատվում են այն ընթացիկ շուկայական գներով, որոնք գերակշռում են արտադրանքի արտադրության և օգտագործման ժամանակահատվածում: Տնտեսության տարբեր ճյուղերում արտադրության և եկամուտների ձևավորման կառուցվածքի վրա հարկերի և լրացուցիչ հատկացումների դրույքաչափերի տարբերության ազդեցությունը չեզոքացնելու համար ճյուղային ցուցանիշները գնահատվում են հիմնական գներով: Հիմնական գինն արտադրողի միավոր ապրանքի կամ ծառայության գինն է, առանց

ապրանքների և ներմուծման հարկի (ներառյալ ապրանքների և ներմուծման լրացուցիչ հատկացումները): Ոչ շուկայական ապրանքներն ու ծառայությունները գնահատվում են կամ շուկայում իրացվող նմանատիպ ապրանքների ու ծառայությունների գներով (եթե դա հնարավոր է որոշել), կամ արտադրության ծախսերով (եթե շուկայական գինը բացակայում է), մասնավորապես, այդպես են գնահատվում պետական հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ծառայությունները:

ԳՆԱՀԱՏՈՒՄ – տնտեսական միջոցներն ու գործընթացները դրամական չափիչով արտահայտելու եղանակ է: Գնահատումը հաշվապահական հաշվառման մեթոդի տարրերից մեկն է, այն բացառիկ կարևոր նշանակություն ունի տնտեսավարող սուբյեկտների տնտեսական կայունությունը ճանաչելու ու նրա հետագա աշխատանքներին ճիշտ ուղղություն տալու գործում:

ԳՆԱՃ – տնտեսության մեջ գների ընդհանուր մակարդակի շարունակվող բարձրացումն է կամ դրամաշրջանառության գերհագեցումը դրամով, որը բերում է դրամական միավորի արժեզրկմանը, գնողունակության փոքրացմանը և համապատասխանաբար ապրանքների ու ծառայությունների գների աճին, որը պայմանավորված չէ դրանց որակի բարձրացմամբ: Գնաճ առաջանում է, երբ փորձում են տնտեսական դժվարությունները հաղթահարել դրամի տպագրությամբ, ստեղծելով ավելցուկային դրամական զանգված՝ ապրանքային զանգվածի ոչ համարժեք ավելացման պարագայում: Ուղեկցվում է գների աճով, իրական աշխատավարձի անկումով, բնակչության կենսամակարդակի նվազումով: Տնտեսության գործունեության և բնակչության սոցիալական դրության վրա գնաճի բացասական ազդեցության պատճառով կառավարությունների տնտեսական քաղաքականությունը մեծ ուշադրություն է դարձնում գնաճի զսպմանը: Գնաճի պատճառները բարդ են, և ըստ երևույթին, դրանք չեն կարող հանգել ինչ որ մեկ գործոնի: Դրանց պատճառներ կարող են հանդիսանալ՝ դրամի էմիսիան, բյուջեի պակասուրդը (դեֆիցիտը), վարկերի նկատմամբ պահանջարկի ավելացումը, արտադրական կազմակերպությունների ծախսերի աճը, դրամական զանգվածի ավելացումը, առաջարկի նկատմամբ պահանջարկի գերազանցումը: Գնաճի մեծությունը

կարելի է որոշել, մասնավորապես, մանրածախ գների ինդեքսի միջոցով, որը ցույց է տալիս սպառողական գների հարաբերական փոփոխությունը: Գնաճը սոցիալ-տնտեսական բարդ երևույթ է և այն յուրահատուկ է աշխարհի շատ երկրներին, դառնալով ժամանակակից տնտեսության զարգացման ամենահրատապ հիմնահարցերից մեկը: Եթե գնաճին ուղեկցում են տնտեսական ճգնաժամերը և այն ունենում է սովորականից բարձր տեմպեր, ապա մենք գործ ունենք ստագֆլյացիայի հետ, այսինքն՝ գնաճի լճացման պայմաններին: Գնաճի դեմ պայքարելու համար պետությունը վարում է դեֆլյացիոն քաղաքականություն, իջեցնելով ամբողջ տնտեսությունում գների միջին մակարդակը՝ շրջանառության մեջ դրամի զանգվածի սահմանափակման միջոցով: Գնաճն ունենում է իր տնտեսական և սոցիալական հետևանքները: Ըստ մոնետարիզմի տեսության, գնաճը դրամական զանգվածի շատ բարձր աճի անխուսափելի հետևանք է: Այսպիսով, մոնետարիստները համարում են, որ շրջանառության մեջ գտնվող դրամի զանգվածի խելամիտ հսկողությամբ կարելի է սահմանափակել գնաճը: Արտադրանքի (ծառայության) ծախսերի աճը սովորաբար պայմանավորված է հումքի ծախսերի ավելացմամբ, աշխատավարձի բարձրացմամբ:

ԳՆԱՆԿՈՒՄ – 1) գների մակարդակի ընդհանուր անկումն է՝ կապված ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) առաջարկվող ծավալի նկատմամբ պահանջարկի ընդհանուր ծավալի նվազման հետ: Գնանկումը, ի տարբերություն գնաճին, բնորոշվում է գների աճի արագության նվազումով: Գնանկման պայմաններում ապրանքային պաշար կուտակած առևտրականները, որոնց ապրանքների գներն աստիճանաբար նվազել են, արդյունքում կարող են կրել զգալի վնասներ և հայտնվել սնանկության եզրին, իսկ մյուս կողմից էլ, դրան առընթեր, դրամական միջոցներ կուտակած տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական վիճակը կարող է կտրուկ լավանալ: Որպես կանոն, գնանկման և գնաճի տնտեսական հետևանքները միմյանց հակադիր են՝ բացառությամբ հետևյալ երկու կարևոր հանգամանքների. ա) այն գները, որոնք բարձրացել են գնաճի ժամանակ, պարտադիր չէ, որ իջնեն գնանկման ժամանակաշրջանում, օրինակ՝ աշխատավարձի դրույքները, բ) այն դեպքում, երբ գնաճը խթանում է կամ չի խթանում արտադրու-

թյունը և զբաղվածությունը, ապա որոշակի չափով գնանկումը միշտ բացասական ազդեցություն է թողնում դրանց վրա, 2) ապրանքային պաշարի համեմատությամբ դրամական զանգվածի փոքրացումն է՝ շրջանառությունից ավելցուկային դրամանիշների դուրս հանելու ճանապարհով, որն ուղեկցվում է գների մակարդակի անկմամբ և դրամի գնողունակության բարձրացմամբ: Շրջանառությունից դրամական զանգվածի մի մասի դուրս հանումը կատարվում է նրա աճը կանխարգելու և գնաճի տեմպերը ճնշելու նպատակով: Գնանկումն իրականացվում է հիմնականում հարկերի ավելացման, աշխատավարձի աճի կանխարգելման կամ նրա սառեցման, պետական բյուջեի ծախսերի իջեցման, վարկերի ծավալների կրճատման միջոցով, պետական արժեթղթերի վաճառքի ավելացման հաշվին:

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ – գների բարձրացման կամ իջեցման ցուցանիշ է, որը բնութագրում է գների հարաբերական փոփոխությունը որոշակի ժամանակաշրջանում: Հաշվարկվում է որոշակի քանակի ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) որևէ ժամանակաշրջանի միջին կշռված գները, տոկոսային արտահայտությամբ՝ բաժանելով բազիսային ժամանակաշրջանի միջին կշռված գների վրա: Բազիսային տարին ընդունվում է 100%: Գների ինդեքսն արտացոլում է գների ընդհանուր (միջին) մակարդակի հարաբերական փոփոխությունը: Այլ կերպ ասած, գների ինդեքսը որոշակի ժամանակահատվածում ապրանքների միջին գնի փոփոխությունը բնութագրող հարաբերական ցուցանիշ է: Գների միջին ինդեքսը հաշվելիս տարբեր ապրանքների գները սովորաբար կշռվում են ըստ դրանց տնտեսական կարևորության աստիճանի, և այն իրենից ներկայացնում է հաշվետու ու բազիսային տարիների կշռված միջինների հարաբերակցությունը, արտահայտված տոկոսներով:

Եթե ինդեքսն իջնում է 100%-ից, ապա տեղի է ունենում գնանկում, իսկ եթե ինդեքսն աճում է տվյալ տարում, նախորդ տարվա հետ համեմատած, ապա առկա է գնաճ: Հաշվարկվում է՝ ըստ ամբողջ երկրի, նրա մարզերի, ներքին շուկայի, սպառողական (մանրածախ) ապրանքների ու ծառայությունների, մեծածախ գների: Կառավարությունների կողմից պարբերաբար հրապարակվում են երկու առավել ընդհանուր ինդեքսներ՝

սպառողական ապրանքների գների ինդեքս և արտադրողի գների ինդեքս:

Տարբերում են գների անհատական ինդեքսը, որը հավասար է ուսումնասիրվող (հաշվետու) տարում և բազիսային տարում տվյալ ապրանքի գների հարաբերակցությանը, և ընդհանուր ինդեքսը, որը հավասար է հաշվետու տարում վաճառված ապրանքների խմբի փաստացի գներով հաշվարկված արժեքի և բազիսային ժամանակաշրջանի գների հարաբերակցությանը:

ԳՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍԸ ԱԳՐԵԳԱՏԱՅԻՆ ՏԵՍՔՈՎ (I_p) – գնի ինդեքսը որակական ցուցանիշի ինդեքս է և որոշվում է հետևյալ բանաձևով.

$$I_p = \frac{\sum p_1 q_1}{\sum p_0 q_1}$$

որտեղ՝

q_1-ը հաշվետու ժամանակաշրջանում արտադրված (թողարկված) արտադրանքի ծավալն է կամ քանակը,

p_1-ը և p_0-ն համապատասխանաբար հաշվետու և բազիսային ժամանակաշրջաններում արտադրանքի ծավալի (քանակի) միավորի գինն է:

Տվյալ ինդեքսի համարիչը պարունակում է հաշվետու ժամանակաշրջանի փաստացի ապրանքաշրջանառությունը, իսկ հայտարարը պայմանական մեծություն է, որը ցույց է տալիս, թե որքան կլիներ ապրանքաշրջանառությունը ընթացիկ ժամանակաշրջանում, այն պայմանով, որ գները պահպանվեն բազիսային մակարդակում: Ինդեքսը ցույց է տալիս, թե քանի անգամ է մեծացել (փոքրացել) արտադրանքի արժեքը գնի փոփոխման հետևանքով:

Համարիչի և հայտարարի տարբերությունը՝ $\Sigma p_1 q_1 - \Sigma p_0 q_1$, ցույց է տալիս, թե դրամական քանի՞ միավորով է փոփոխվել արտադրանքի արժեքը՝ գնի աճման (նվազման) արդյունքում:

ԳՆՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ – 1) դրամի գնողունակությունն է, որի արժեքը, բնորոշվում է ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու ընդունակությամբ: Ցույց է տալիս, թե երկրի մեկ դրամական միավորով ինչ քանակի ապրանքներ և ծառայություններ

կարելի է գնել: Դրամի գնողունակությունն ուղղակիորեն կախված է ապրանքների գների և ծառայությունների սակագների մակարդակից (այն ենթադրությամբ, որ այդ գներով ապրանքներ և ծառայություններ կան վաճառքում), 2) բնակչության գնողունակությունն է, որը ցույց է տալիս ապրանքների և ծառայությունների այն քանակը, որը բնակչությունը ընդունակ է ձեռք բերել իր ունեցած դրամական միջոցներով՝ տվյալ երկրում ձևավորված ապրանքների գների և ծառայությունների սակագների մակարդակի պայմաններում: Գնողունակությունը կախված է բնակչության եկամուտների մակարդակից և դրա այն մասից, որն առանձնացված է գնումների համար, սակայն ոչ պակաս չափով պայմանավորված է նաև գների և սակագների մակարդակով, 3) աշխատավարձի գնողունակություն, որը ցույց է տալիս, թե աշխատավարձի տվյալ գումարով ի՞նչ քանակի ապրանքներ և ծառայություններ կարելի է գնել: Հաշվարկվում է երկրում կամ տարածաշրջանում միջին աշխատավարձի և ըստ երկրի (տարածաշրջանի) կոնկրետ ապրանքների գների միջին մակարդակի հարաբերակցությամբ:

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ – նշանակվում է աշխատունակ տարիքի (16 և բարձր) այն քաղաքացիներին, ովքեր գրանցված են զբաղվածության տարածքային կենտրոններում և ՀՀ օրենսդրության համաձայն ունեն գործազուրկի կարգավիճակ:

ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐ – համարվում են հանրապետության տարածքում մշտապես բնակվող աշխատունակ տարիքի այն քաղաքացիները, ովքեր դիտարկվող ժամանակաշրջանում աշխատանք (եկամտաբեր զբաղմունք) չեն ունեցել, աշխատանք են փնտրել զբաղվածության տարածքային կենտրոնների օգնությամբ կամ ինքնուրույն, պատրաստ են եղել անմիջապես կամ օրենսդրությամբ սահմանված ժամանակաշրջանի ընթացքում անցնել աշխատանքի:

ԳՈՐԾԱԿԱԼ – ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը լիազորված է կատարելու որոշակի գործողություններ մեկ այլ անձի (պրինցիպալի) հանձնարարությամբ, նրա անունից և հաշվին, օրինակ՝ կնքել պայմանագիր պրինցիպալի և երրորդ կողմի միջև: Նա հանդես է գալիս որպես միջնորդ, որի հիմ-

նական պարտականությունն է՝ պատշաճ և բարեխիղճ կերպով կատարել պրինցիպալի հանձնարարությունները: Գործակալը, միաժամանակ, պրինցիպալի կողմից հսկվող սուբյեկտ է, ենթարկվում է վերջինիս ցուցումներին, չի տիրապետում իր պրինցիպալի սեփականության իրավունքին: Իրավասությունները կարող են կրել միանվագ բնույթ կամ իրականացվել համաձայն գործակալության պայմանագրի: Ենթադրվում է, որ գործակալին լիազորություն տված անձը (պրինցիպալը) միաժամանակ համաձայնություն է տալիս նրա կողմից իրավաբանական գործարքների կատարմանը: Գործակալին թույլատրվում է իր իրավունքների վերանայում, եթե արտակարգ իրավիճակները պահանջում են բացառիկ միջոցառումներ՝ պրինցիպալի շահերը պաշտպանելու համար: Իր մատուցած ծառայությունների համար գործակալը վարձատրվում է: Վարձատրության (գործակալի միջնորդավճարի) չափը որոշվում է գործակալի և պրինցիպալի համաձայնությամբ (առավել տարածված են այն դրույքները, որոնք տատանվում են վաճառված ապրանքի 2-10% սահմաններում): Գործակալի վարձատրություն ստանալու իրավունքը պետք է ուղղակիորեն նշվի գործակալության պայմանագրում: Ֆիզիկական անձանց գործակալներ կարող են նշանակվել նաև բանկերը: Կարող են լինել գլխավոր և հատուկ գործակալներ: Գլխավոր գործակալին տրվում են գործունեության որոշակի ոլորտին վերաբերող իրավասություններ՝ իր պրինցիպալի բոլոր գործերը վարելու համար, կամ գործել պրինցիպալի շահերի համար, զբաղվելով իր սովորական մասնագիտական գործունեությամբ: Հատուկ գործակալն իրավունք ունի կատարել միայն որոշակի գործողություններ, որոնք չեն մտնում նրա սովորական մասնագիտական պարտականությունների մեջ: Շահավետ գործարք կնքելու համար գործակալը երրորդ կողմին չի հայտնում պրինցիպալի գոյության մասին: Տնտեսական գործառնություններում որպես գործակալներ հանդես են գալիս բրոքերները, դիլերները, միջնորդները: Համաձայն ՀՀ օրենսդրության, գործակալը կարող է պրինցիպալի հանձնարարությամբ, իր անունից, սակայն պրինցիպալի հաշվին, կամ պրինցիպալի անունից և նրա հաշվին, կատարել իրավաբանական և այլ գործողություններ: Ընդ որում, երրորդ անձի հետ իր անունից և պրինցիպալի հաշվին կնքված գործարքով իրավունքներ ու պարտականություններ ձեռք է բերում գոր-

ծակալը, իսկ պրինցիպալի անունից և նրա հաշվին կնքված գործարքով՝ անմիջականորեն տվյալ պրինցիպալը:

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐ (ԾԱԽՍԵՐ) – դրանք են՝ նյութերի, ապրանքների ձեռք բերման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման դիմաց, աշխատակիցներին և նրանց անունից կատարված վճարումները (վճարված աշխատավարձը, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները, եկամտահարկը, ալիմենտը), սոցիալական ապահովագրության և ապահովության նպատակով վճարումները, բյուջեին վճարումները (տնտեսավարող սուբյեկտի կողմից հարկերի, տուրքերի, դրանց դիմաց հաշվարկված տույժերի, տուգանքների և բյուջե գանձվող այլ վճարումների գծով վճարված դրամական միջոցները), գործառնական այլ գործունեության նպատակով վճարումները (անհատույց տրված, գործուղման, պայմանագրային պարտավորությունների խախտման համար տույժերի և տուգանքների, դուրս գրված կրեդիտորական պարտքերի մարման և գործառնական այլ նպատակով վճարված դրամական միջոցները) և արտասովոր դեպքերի հետ կապված վճարումները:

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԶՈՒՏ ՀՈՍՔԵՐ – հավասար է ընդամենը գործառնական գործունեությունից մուտքագրված և ելքագրված գումարների տարբերությանը:

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐ (ԵԿԱՄՈՒՏՆԵՐ) – դրանք են՝ արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) դիմաց, ընթացիկ այլ ակտիվների (հումքի, նյութերի, արագամաշ առարկաների և պաշարների այլ տեսակների) վաճառքի դիմաց, վարձավճարներից և ռոյալթիներից, գործառնական այլ գործունեությունից (դրամական միջոցների համարժեքներ հանդիսացող ներդրումներից ստացված տոկոսները, տույժերը, տուգանքները, դուրս գրված դեբիտորական պարտքերի մարումը, նյութական վնասի փոխհատուցումը և անհատույց ստացված դրամական միջոցները) և արտասովոր այլ դեպքերից ստացված դրամական միջոցները:

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՇԱՀՈՒՅԹ (ՎՆԱՍ) – արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթի (վնասի) և գործառնական այլ եկամուտների գումարի ու գործառնական այլ ծախսերի տարբերությունն է:

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ – 1) կազմակերպության և նրա ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ հաշվապահական հաշվառման գծով օպերատիվ տվյալների ստացման, դրանց ամրագրման և մշակման համակարգ է: Այդ համակարգը կարող է գործել ինչպես փաստաթղթային հիմքով (փաստաթղթերի ստացում և մշակում), այնպես էլ կապի միջոցներով՝ հաղորդվող տեղեկությունների և ծանուցումների (տեղյակ պահելու) հիման վրա: Վերջին դեպքում կիրառվում են տարբեր տեսակի համակարգչային ծրագրերի փաթեթներ: 2) Ծրագրերի փաթեթ, որոնք կարող են կազմել գծապատկերներ, որոնել և վերացնել համակարգչային վիրուսները, իրականացնել տվյալների մուտքագրման և ելքագրման հսկողությունը, վարել հաշվապահական հաշվառում, պահպանել և կառավարել տվյալները:

ԳՈՐԾԱՐԱՐ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ) – դրանք են. 1) աշխատանքի արտադրողականությունը, որն իրենից ներկայացնում է իրացումից հասույթի (զուտ հասույթի) և աշխատողների միջին ցուցակային թվաքանակի հարաբերությունը: Այն ցույց է տալիս մեկ աշխատողի հաշվով ստացված զուտ հասույթի գումարի չափը: Այս ցուցանիշի մեծությունը կախված է ազդող մի շարք գործոններից, այդ թվում՝ արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման գներից, աշխատողների որակական աստիճանից, արտադրության տեխնիկական հագեցվածությունից և այլն: 2) Հիմնական միջոցների հատույցը, որը ցույց է տալիս տնտեսավարող սուբյեկտում ներդրված միջին հաշվով մեկ միավոր հիմնական միջոցին բաժին ընկնող արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից հասույթի (զուտ հասույթի) չափը: Ըստ տնտեսագիտական մեկնաբանության, հիմնական միջոցների հատույցի կամ նրա պտույտների թվաքանակի ավե-

լացումը վկայում է տնտեսավարող սուբյեկտի տնտեսական կարողության օգտագործման արդյունավետության մեծացման մասին: 3) Դեբիտորական պարտքերի շրջանառելիությունը (պտույտներով), որն իրենից ներկայացնում է իրացումից զուտ հասույթի և դեբիտորական պարտքերի միջին մեծության հարաբերակցությունը: 4) Դեբիտորական պարտքերի շրջանառելիությունը (օրերով), որն իրենից ներկայացնում է դեբիտորական պարտքերի միջին մեծության և իրացումից հասույթի (զուտ հասույթի) հարաբերակցությունն՝ արտահայտված օրերով: 5) Պաշարների շրջանառելիությունը (պտույտներով), որն իրենից ներկայացնում է իրացումից հասույթի (զուտ հասույթի) ու պաշարների միջին մեծության հարաբերակցությունը: Այս ցուցանիշը ցույց է տալիս միջին հաշվով մեկ միավոր պաշարներին (նյութեր, արագամաշ առարկաներ, աճեցվող և բտվող կենդանիներ, անավարտ արտադրություն, արտադրանք, ապրանքներ) բաժին ընկած իրացումից զուտ հասույթի գումարի չափը կամ պաշարների պտույտների թիվը: Եթե այս ցուցանիշն ունի նվազման միտում, կնշանակի տնտեսավարող սուբյեկտի մոտ առաջանում են արտադրական ավելորդ պաշարների կուտակումներ, որոնք չեն մասնակցում արտադրության գործընթացին և արհեստականորեն մեծացնում են ինքնարժեքի գումարի չափը: 6) Պաշարների շրջանառելիությունը (օրերով), որը նախորդ ցուցանիշի հակադարձ մեծությունն է, և իրենից ներկայացնում է պաշարների միջին մեծության և իրացումից հասույթի (զուտ հասույթի) հարաբերակցությունը՝ արտահայտված օրերով: Որքան փոքր է այդ տևողությունը, կնշանակի այդ պաշարները լիովին մասնակցում են արտադրության գործընթացին և նպաստում նոր արտադրանքի ստացմանը: 7) Կրեդիտորական պարտքերի (ընթացիկ պարտավորությունների) շրջանառելիությունը (օրերով), որն իրենից ներկայացնում է կրեդիտորական պարտքերի միջին մեծության և իրացվող արտադրանքի ինքնարժեքի հարաբերակցությունը: Այս ցուցանիշը բնորոշում է իրացվող արտադրանքի ինքնարժեքին բաժին ընկնող կրեդիտորական պարտքերի միջին չափը տվյալ ժամանակահատվածում կամ կրեդիտորական պարտքերի մեկ պտույտի տևողությունը: Որքան փոքր լինի այդ տևողությունը, կնշանակի տվյալ տնտեսավարող սուբյեկտն ապահովված է սեփական ընթացիկ ակտիվներով և մեծ չէ կախվածու-

թյունը կարճաժամկետ վարկերից, փոխառություններից, հարկային և այլ տեսակի վճարումներից: 8) Գործառնական փուլի տևողությունը, որը դեբիտորական պարտքերի և պաշարների շրջանառելիության ցուցանիշների հանրագումարն է՝ արտահայտված օրերով: Այստեղից հետևություն, որ որքան փոքր լինի գործառնական փուլի ժամանակահատվածը, կնշանակի դեբիտորական պարտքերի և արտադրական պաշարների համատեղության յուրաքանչյուր պտույտ արտադրատնտեսական գործունեությունից ավելի շատ ֆինանսական արդյունք կբերի: 9) Ֆինանսական փուլի տևողությունը, որը գործառնական փուլի և կրեդիտորական պարտքերի տևողությունների տարբերությունն է: Ցուցանիշի մեծությունը կախված է տնտեսավարող սուբյեկտի կրեդիտորական պարտքերի մարման տևողության երկարատևությունից, այսինքն՝ արդյո՞ք կուտակվել են կրեդիտորական անհուսալի պարտքեր, որոնց հիմնական մասը ժամանակին չի մարվել: 10) Սեփական կապիտալի շրջանառելիությունը (պտույտներով): Այս ցուցանիշն իրացումից հասույթի (զուտ հասույթի) և սեփական կապիտալի միջին մեծության հարաբերակցությունն է: Ցուցանիշը բնորոշում է տնտեսավարող սուբյեկտի սեփական կապիտալի միջին հաշվով մեկ միավորին բաժին ընկնող իրացումից զուտ հասույթի գումարի չափը, և որքան բարձր լինի այդ մեծությունը, կնշանակի տնտեսավարող սուբյեկտը ցուցաբերել է արդյունավետ գործարար ակտիվություն և գտնվում է ֆինանսապես կայուն վիճակում: 11) Ընդհանուր ակտիվների շրջանառելիությունը (պտույտներով), որը իրացումից հասույթի (զուտ հասույթի) և ընդհանուր ակտիվների միջին մեծության հարաբերակցությունն է և ցույց է տալիս ակտիվների միջին հաշվով մեկ միավորին բաժին ընկնող իրացումից զուտ հասույթի գումարի չափը:

Բերված ցուցանիշների հաշվարկների կատարման համար օգտագործվում են հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության տվյալները:

ԳՈՐԾԱՐԱՐ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ – որի էությունը բնորոշող որակական ու քանակական ամենահիմնական չափանիշներ են համարվում՝ արտադրանքի վաճառքի կազմակերպման շուկաները (ներառյալ արտահանման ծավալները), տնտեսական

գործունեության հիմնական ցուցանիշների պլանի կատարման աստիճանը և դրանց աճի տեմպերի ապահովումը, ընդհանուր կապիտալի և դրանում ներառվող առանձին տարրերի օգտագործման արդյունավետության մակարդակն ու տնտեսական աճի կայունությունը:

ԳՐԱՆՏ – դրամական միջոցներ են, որոնք տրամադրվում են բարեգործական նպատակներով՝ որպես ֆինանսական աջակցություն գիտահետազոտական աշխատանքների կատարման համար, գրքեր հրապարակող հեղինակներին, արվեստի աշխատողներին: Այն տրամադրվում է միջազգային տարբեր կազմակերպություններից և տվյալ պետության համախմբված բյուջեից:

ԳՐԱՆՑՄԱՆ ՍԽԱԼՆԵՐ – հնարավոր են ինչպես համատարած, այնպես էլ ոչ համատարած դիտարկումների ժամանակ: Սակայն հաստատված է, որ այդ սխալների չափերը, որպես կանոն, մեծ են համատարած դիտարկման ժամանակ: Դա բացատրվում է նրանով, որ ընտրանքային դիտարկման ժամանակ հետազոտվող միավորների քանակի կրճատման շնորհիվ հնարավոր է ավելի որակյալ ու մանրազնին գրանցում:

ԳՐԱՆՑՎԱԾ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ – հաշվարկվում է որպես պաշտոնապես գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակների հարաբերակցություն:

ԳՐԱՎ – պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է, որի համաձայն գրավով ապահովված հարաբերությունները կարգավորվում են «Գրավի մասին» օրենքով և օրենսդրական այլ ակտերով: Գրավի անհրաժեշտությունն առաջանում է գրավի մասին պայմանագիր կնքելու պահից: Գրավի առարկա կարող է լինել շրջանառության մեջ գտնվող ցանկացած գույք, որի վրա օրենսդրությամբ թույլատրվում է բռնագանձում տարածել:

ԳՐԱՎԱԿԱՆ – համարվում է այն գրավը, որի առարկան անցնում է գրավառուի տիրապետմանը:

ԳՐԱՎԱՌՈՒ – անձ, որն ապահովված է գրավով գրավատուի կողմից, որի շահերը համապատասխանում են նրա ստանձնած պարտավորությանը:

ԳՐԱՎԱՏՈՒ – անձ, ում գույքը կամ գույքի մի մասը գրավ է դրված:

ԳՐԱՎԱՏՈՒՆ ՀԱՆՁՆՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎ – անձնական օգտագործման շարժական գույքը քաղաքացիներից գրավ ընդունելն է՝ ի ապահովումն կարճաժամկետ վարկերի: Որպես ձեռնարկատիրական գործունեություն, իրականացնում են դրա համար թույլտվություն (լիցենզիա) ունեցող մասնագիտացված կազմակերպությունները՝ գրավատները: Գրավատանը պահվող գույքի գրավի պայմանագիրը ձևակերպվում է գրավատան կողմից գրավատոմս տալու միջոցով: Գրավ դրվող գույքը հանձնվում է գրավատուն:

ԳՐԱՎԻ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ – գրավ սահմանելու մասին կողմերի գրավոր համաձայնությունը:

ԳՈՒԴՎԻԼ – ոչ նյութական ակտիվների տեսակ է, որի բնորոշման հիմքում ընկած է ձեռնարկատիրական գործունեության միավորումների հաշվառման մոտեցումները: Այն նախատեսված է կազմակերպությունների (ընկերություններ, ֆիրմաներ և այլն) խմբի համար, երբ ձեռք բերողը մայր կազմակերպությունն է, իսկ ձեռք բերվողը՝ դուստր կազմակերպությունը (այսինքն, երբ ձեռք բերվողը դադարում է որպես առանձին իրավաբանական անձ գոյություն ունենալուց): Հետևաբար, երբ մայր կազմակերպությունը ձեռք է բերում դուստր կազմակերպությանը կամ նրա ակտիվները անվանական գնից ավելի բարձր կամ ցածր արժեքներով, ապա առաջացած տարբերությունը ճանաչվում է որպես դրական կամ բացասական գուդվիլ:

ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ (ԻՆՎԵՆՏԱՐԻԶԱՑԻԱ) – ոչ ընթացիկ ակտիվների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլն), ապրանքանյութական արժեքների (նյութական ընթացիկ ակտիվների), ինչպես նաև դրամարկղում, բանկի հաշվում, դրամական միջոցների և տնտեսավարող սուբյեկտի այլ միջոց-

ների առկա մնացորդների որոշումն ու ցուցակագրումն է՝ քանակական և դրամային արտահայտությամբ: Այն հաշվապահական հաշվառման մեթոդի տարրերից մեկն է: Տնտեսական միջոցների ստուգման ծավալից ելնելով գույքագրումները լինում են լրիվ և մասնակի, իսկ դրանց ստուգման նպատակից և անցկացման եղանակից ելնելով՝ պլանային և հանկարծակի:

ԳՈՒՅՔԱՀԱՐԿ – դա սեփականության իրավունքով տվյալ հարկատեսակը վճարող անձանց պատկանող և հարկվող օբյեկտ համարվող գույքի համար, սահմանված կարգով և չափով, համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից: Գույքահարկ վճարողներ են համարվում ՀՀ-ում և արտերկրներում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից ՀՀ-ից դուրս ստեղծված կազմակերպությունները, ՀՀ և արտերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց ՀՀ տարածքում պատկանում է հարկվող օբյեկտ համարվող գույք: Գույքահարկ չեն վճարում՝ ՀՀ պետական մարմինները, ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինները և հիմնարկները: Գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում շենքերն ու շինությունները, փոխադրամիջոցները: Հարկման բազա է հանդիսանում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը, որոնց հիման վրա սահմանված դրույքաչափերով ու կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը:

ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐ – վճարողներն են ՀՀ-ում շինությունների և տրանսպորտային միջոցների սեփականատեր հանդիսացող կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք:

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՊԱՀ – գույքահարկը հաշվարկելու և վճարելու պարտավորությունը հարկատուի համար առաջանում է հարկման օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսից: Այս կարգը տարածվում է նաև գույքահարկի արտոնության դադարեցման վրա, այսինքն՝ գույքահարկը առաջանում է արտոնության իրավունքը դադարելու ամսվան

հաջորդող ամսից: Գույքահարկի հաշվարկը դադարեցվում է արտոնության առաջացման ամսից սկսած:

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – գույքահարկից ազատվում են գծային, ինժեներատրանսպորտային շինությունները (դրանցից օգտվելու համար վճար չի գանձվում), ջրամբարները, պատմամշակութային նշանակության շինությունները, ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված, ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած և օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց (կամ ընտանիքի անդամներին) պատկանող գույքը, մինչև այդ անձանց զավակներից մեկի 18 տարին լրանալը, ինչպես նաև զինվորական ծառայողներին պատկանող գույքը, եթե ծառայության ընթացքում գույքը չի տրվել վարձակալության կամ հավատարմագրային կառավարման: Գույքահարկի արտոնությունները ենթակա են փոփոխության ըստ սահմանված օրենքի:

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ – հարկատուն գույքահարկի խախտումների դեպքում ենթարկվում է ընդհանուր տույժերի և տուգանքների.

- տուգանք՝ հարկը չվճարելու կամ պակաս վճարելու համար,
- տույժ՝ ժամանակին չվճարված հարկի համար,
- տուգանք՝ ժամանակին հաշվետվություն չհանձնելու համար,
- տուգանք՝ հաշվապահական հաշվառումները սխալ վարելու համար:

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՃԱՐՈՒՄ – կազմակերպությունները գույքահարկի հաշվետվությունը ներկայացնում են հարկային տեսչություն եռամսյակը մեկ՝ մինչև դրանց հաջորդող ամսվա համար սահմանված օրը: Վճարումները կատարվում են մինչև եռամսյակին հաջորդող ամսվա վերջը ներառյալ:

Ընդ որում, հաշվարկը պարտադիր ներկայացվում է միայն գույքահարկի ծանուցագրերի հաշվարկի հետ չհամաձայնեցվելու դեպքում: Ֆիզիկական անձինք տարեկան տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցների համար գույքահարկի

գծով հարկային պարտավորությունները պարտավոր են ամբողջությամբ կատարել՝ մինչև դրանց տվյալ տարվա տեխնիկական զննության ներկայացնելը:

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱ – «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն, հարկման բազա է համարվում օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը, կամ այն բնութագրիչը, որի նկատմամբ սահմանված դրույքաչափերով հաշվարկվում է գույքահարկը:

Շինությունների համար այդպիսի բնութագրիչ է հանդիսանում այդ շինությունների կադաստրային արժեքը, իսկ փոխադրամիջոցների համար՝ փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատտ):

ԳՈՒՅՔԱՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏ – համարվում են հարկատուին պատկանող շենքերն ու շինությունները և փոխադրամիջոցները:

ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ – գույքը կարող է ապահովագրվել հօգուտ այն անձի (ապահովագրվողի կամ շահառուի), ով ըստ օրենքի, այլ իրավական ակտի կամ պայմանագրի հիման վրա այդ գույքի պահպանման շահ ունի: Գույքային ապահովագրության պայմանագրով մի կողմը՝ ապահովագրողը, պարտավորվում է պայմանավորված վճարի (ապահովագրական պարգևի) դիմաց, պայմանագրով նախատեսված դեպքը (ապահովագրական դեպքը) վրա հասնելիս, մյուս կողմին՝ ապահովագրվողին կամ շահառուին (ում օգտին կնքվել է պայմանագիրը), հատուցելու ապահովագրական գույքին պատճառված վնասները (ապահովագրական հատուցումը)՝ որոշված գումարի (ապահովագրական գումարի) սահմաններում:

Դ

ԴԵԲԵՏ – դա հաշվապահական հաշիվների գծով կազմված աղյուսակի ձախ կողմի անվանումն է, որը հանդես է գալիս երկու իմաստով: Ակտիվային հաշիվներում դեբետը նշանակում է հաշվառվող տնտեսական միջոցների (ակտիվի) գումարների

մուտքագրում կամ ավելացում, իսկ պասիվային հաշիվների դեպքում՝ ակտիվի կազմավորման աղբյուրների (պասիվի) գումարների ելքագրում կամ նվազեցում:

ԴԵԲԵՏԱՅԻՆ ՔԱՐՏ – բանկի կողմից թողարկված և հաճախորդին տրամադրվող պլաստիկ քարտեր են, որոնք կարող են փոխարինել չեկերին (որպես ապրանքների ու ծառայությունների վճարման միջոց) և օգտագործման համար ավելի հարմար են, քան չեկերը: Դրանք հաճախորդին (քարտի տիրոջը) հնարավորություն են տալիս մանրածախ առևտրի որոշակի կետերում ձեռք բերել ապրանքներ և ծառայություններ ու դրանց դիմաց վճարել անկանխիկ՝ նրա հաշվից դրամի ուղղակի դուրսգրմամբ, կամ առձեռն ստանալ կանխիկ դրամ: Այս բոլոր ծախսերն անմիջապես գրանցվում են քարտի տիրոջ բանկային հաշվի դեբետում: Դեբետային քարտերը կարելի է օգտագործել հանրախանութներում, ինքնասպասարկման խանութներում կամ բենզալցման կայաններում տեղադրված էլեկտրոնային վճարումների տերմինալների միջոցով, որոնց մեջ մտցվում է դեբետային քարտը: Դեբետային քարտերի որոշ տեսակներ կարող են գործել նաև որպես չեկային քարտ և կանխիկի քարտ՝ կանխիկ դրամը ավտոմատ դրամարկղային մեքենաների կամ բանկոմատների միջոցով հաշվից հանելու համար: Վարկային քարտերի հետ միասին այս քարտերը սովորաբար կոչվում են բանկային քարտեր: Սակայն, ի տարբերություն վարկային քարտերի տերերի, դեբետային քարտերի հաճախորդները չունեն «ֆլոութի» առավելությունները, քանի որ միջոցները հաշվից դուրս են գրվում անհապաղ:

ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ – տնտեսական փոխհարաբերությունների հետևանքով իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից (կրեդիտորից) տնտեսավարող սուբյեկտին, կազմակերպությանը և տարբեր հաճախորդներին (դեբիտորին) հասանելիք (կամ չվճարված) պարտքերի գումարն է: Օրինակ, գնորդ (դեբիտոր) կազմակերպությունը մատակարարից (կրեդիտորից) մինչև ապրանքանյութական արժեքների ստացումը, կատարել է գումարի կանխիկ վճարում կամ փոխանցում: Քանի դեռ ապրանքանյութական արժեքները չեն ստացվել դեբիտոր

(պարտապան) կազմակերպության կողմից, այդ գումարը նրա համար համարվում է դեբիտորական պարտք:

ԴԵՊՈ ՀԱՇԻՎ – դեպոզիտարիայի հաշվառման գրանցամատյաններում գրառումների ամբողջությունն է, որն անհրաժեշտ է դեպոնենտի հետ դեպո հաշվի պայմանագիրը դեպոզիտարիայի կողմից կատարելու և արժեթղթերը հաշվառելու համար: Այդ հաշվում հաշվառվում են արժեթղթերի նկատմամբ դեպոնենտին պատկանող իրավունքը:

ԴԵՊՈԶԻՏ – որպես լատիներենից բառացի թարգմանություն՝ դա որևիցե տեղ պահպանման տրված միջոցներն են, այլ առումներով՝ 1) այն տարբեր հաճախորդներից բանկերում ներգրավված դրամական ավանդներն են, 2) վարկային կազմակերպություններում պահպանման համար տրված դրամական միջոցներն ու արժեթղթերն են:

ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ – 1) դեպոնացված արժեքները պահելու տեղ, պահեստարան, գանձատուն, 2) պահառու կազմակերպություն, որն ի պահ է ընդունում դրամական միջոցներ, փաստաթղթեր, արժեթղթեր, դրանց հավաստագրեր և այլ արժեքավոր ակտիվներ: Դեպոզիտարիաներն առաջացել են որպես հաճախորդների արժեթղթերի պահառուներ, սակայն ժամանակի ընթացքում ընդլայնել են իրենց գործունեության ոլորտը և սկսել մատուցել արժեթղթերի սեփականատերերի հաշվառման, սեփականության իրավունքի ամրագրման կամ այդ իրավունքը այլ անձանց փոխանցման կազմակերպման գծով ծառայություններ: Արժեթղթերը պահվում են դեպոզիտարիայի պահեստում, իսկ դրանց նկատմամբ իրավունքները փոխանցվում են՝ արժեթղթերի սեփականատերերի անձնական հաշիվներում (դեպո հաշիվներում) գրառումներ կատարելու միջոցով: Դեպոզիտարիաները պարզեցնում են արժեթղթերով առևտուրը՝ դրանք դուրս հանելով շրջանառությունից և առաջարկելով մասնակիցներին արժեթղթերի գրանցման հետ կապված գործարքները կնքել ընկերության ռեեստրում գրանցումը փոխելու միջոցով, առանց հավաստագրեր օգտագործելու: Նրանք նաև գանձում են շահաբաժիններ և տոկոսային վճարումներ, իրավասությունների մասին փաստաթղթերն ուղարկում են արժեթղթերի իսկա-

կան տերերին և առաջարկում նման այլ ծառայություններ, 3) պետություն կամ միջազգային կազմակերպություն, որը պահպանում է միջազգային պայմանագրի բնօրինակը: «Դեպոզիտարիա» տերմինը տարբերվում է «լիազորված անձ» տերմինից:

ԴԵՎԱԼՎԱՑԻԱ – դրամական միավորի ոսկու պարունակության իրական պակասեցումն է կամ միջազգային հաշվարկային միավորով արտարժույթի նկատմամբ նրա պաշտոնական կուրսի իջեցումը: Դևալվացիայի են դիմում ինֆլյացիայի պայմաններում՝ դրամաշրջանառությունը կայունացնելու համար:

ԴԵՏԵՐՄԻՆԱՑԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԻՑ ($Dyx_1x_2...x_n$) – ցույց է տալիս արդյունքային ցուցանիշի (y) վրա բոլոր գործոնների (x_i) ազդեցության չափը՝ արտահայտված տոկոսներով: Այն արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$Dyx_1x_2\cdots x_n = R^2_{yx_1x_2\cdots x_n} \cdot 100\%$$

որտեղ՝ $R_{yx_1x_2...x_n}$-ը բազմակի (ընդհանուր) կոռելյացիայի գործակիցն է:

ԴԵՏԵՐՄԻՆԱՑԻԱՅԻ ՄԱՍՆԱԿԻ ԳՈՐԾԱԿԻՑ (dyx_i) – ցույց է տալիս, թե արդյունքային ցուցանիշի (y) մեծությունը տատանման քանի՞ տոկոսով է պայմանավորված ռեգրեսիայի հավասարման մեջ ներառվող i-րդ ցուցանիշի (x_i) հատկանիշի մեծությունով: Դետերմինացիայի մասնակի գործակիցը, արտահայտված տոկոսներով, հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$dyx_i = r^2_{yx_i} \cdot 100\%$$

որտեղ՝ r_{yx_i} -ն արդյունքային և i-րդ գործոնային ցուցանիշների միջև զույգային կոռելյացիայի գործակիցն է:

ԴԵՖԼՅԱՑԻԱ – ինֆլյացիայի հակառակ գործընթացն է, երբ տեղի է ունենում ապրանքների և ծառայությունների գնի իջեցում, կամ այլ կերպ՝ այն շրջանառությունից ավելորդ թղթադրամը հանելու միջոցով դրամական զանգվածի պակասեցումն է: Այս

գործընթացը երբեմն նախորդում է դրամական ռեֆորմներին և նպաստում է ոչ ցանկալի երևույթների՝ հանգեցնում է տնտեսության զարգացման տեմպերի իջեցմանը, ինվեստիցիաների ծավալի նվազեցմանը, աշխատավորների դրության վատթարացմանը և գործազրկության աճմանը:

ԴԻԼԵՐ – ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող գործարարության (բիզնեսի) մասնակից է, որն իր սեփական միջոցների հաշվին իրականացնում է գործունեություն: Օրինակ, բորսայում դիլերը կատարում է միջնորդական գործարքներ, ոչ թե որպես հասարակ միջնորդ գործակալ (բրոքեր), այլ նաև գործում է իր անունից և իր սեփական հաշվից, այսինքն՝ իրականացվող գործընթացում ներդնում է սեփական դրամական միջոցները, ինքնուրույն իրագործում է արժեթղթերի, արտարժույթի և այլ ապրանքանյութական արժեքների առք ու վաճառք:

ԴԻԼԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ – 1) արժեթղթերի կամ արտարժույթի շուկայում մասնագիտացված գործունեության տեսակներից մեկն է, 2) բանկի գործունեությունն է, որը հանդես է գալիս որպես արժեթղթերի գծով դիլեր, այսինքն՝ արժեթղթերի երաշխավորությամբ, դրանց առքով կամ վաճառքով զբաղվող սուբյեկտ:

ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՇԱՐՔԻ ՀԱՐԹԵՑՈՒՄՆԵՐ – ա) դինամիկայի շարքի առանձին անդամների հարթեցում կամ մեխանիկական հավասարեցում հարակից մակարդակների փաստացի նշանակությունների օգտագործմամբ, բ) անալիտիկ հարթեցում գծային կամ ոչ գծային մեթոդների կիրառմամբ, որը կարտացոլի դինամիկ շարքին հատուկ աճման կամ նվազման միտումը: Դիտարկենք առանձին-առանձին:

- *Դինամիկայի շարքի հարթեցման միջինացման մեթոդն ըստ ձախ և աջ կեսի,* այսինքն՝ այդ շարքը (y_1, y_2, y_3,..., y_{n-2}, y_{n-1}, y_n) բաժանում ենք երկու մասի, յուրաքանչյուրի համար գտնում միջին թվաբանականը, և գծապատկերի վրա ստացված կետերով տանում աճման կամ նվազման գիծը (կորը):
- *Դինամիկայի շարքի հարթեցման միջակայքերի խոշորացման մեթոդը,* ըստ որի, եթե ցուցանիշների մակարդակներն ուսումնասիրվում են որոշակի ժամանակահատվածում, ապա տարբեր գործոնների ազդեցության հետևանքով դինամիկայի շարքե-

րում (y_1, y_2, y_3,..., y_{n-2}, y_{n-1}, y_n) կնկատենք այդ մակարդակների նվազման կամ աճման միտում: Այդ իսկ պատճառով էլ աճման կամ նվազման միտումն ավելի ակնառու դարձնելու համար կիրառում ենք միջակայքերի խոշորացման մեթոդը, ըստ որի հաշվարկվում են պարզ միջին թվաբանական մեծություններն ըստ առանձին մակարդակների, սկսած 3-ից, օրինակ ($y_1 + y_2 + y_3/3$), կամ ($y_1 + y_2 + y_3 + y_4/4$) և այլ մակարդակների: Յուրաքանչյուր միջինի հաշվարկի ընթացքում նախորդ մակարդակները հաշվի չեն առնվում:

• *Դինամիկայի շարքի հարթեցման սահող միջինի մեթոդ,* ըստ որի դինամիկայի շարքի (y_1, y_2, y_3,..., y_{n-2}, y_{n-1}, y_n) առաջին հերթական մակարդակների որոշակի թվից (ոչ պակաս 3-ից) հաշվարկվում է պարզ միջին թվաբանական մեծությունը՝ ($y_1+y_2+y_3/3$), իսկ այնուհետև, սկսած երկրորդ մակարդակից հաջորդ միջին մեծությունը՝ ($y_2+y_3+y_4/3$), և այդպես շարունակ՝ ($y_{n-2}+y_{n-1}+y_n/3$), միջին մեծությունը: Ստացվում է, որ միջին մակարդակները հաշվարկելիս կարծես դրանք «սահում են» դինամիկայի շարքի սկզբից մինչև վերջը, ամեն անգամ դուրս գցելով (հանելով) մեկ մակարդակ, և այդպես՝ ներառյալ դինամիկայի շարքի վերջին մակարդակը:

• *Անալիտիկ (վերլուծական) հարթեցման մեթոդ,* այսինքն՝ դինամիկայի շարքի կամ ուսումնասիրվող երևույթների աճման կամ նվազման միտումն, ըստ ժամանակի, արտահայտիչ դարձնելու համար կիրառվում են տարբեր գծային և ոչ գծային մեթոդներ, որոնք արտահայտվում են հետևյալ հավասարումներով.

• առաջին աստիճանի՝ $\bar{y}_t = a_0 + a_1 t$;

• երկրորդ աստիճանի՝ $\bar{y}_t = a_0 + a_1 t + a_2 t^2$;

• երրորդ աստիճանի՝ $\bar{y}_t = a_0 + a_1 t + a_2 t^2 + a_3 t^3$;

• . . . . . .

• n-րդ աստիճանի՝ $\bar{y}_t = a_0 + a_1 t + a_2 t^2 + \ldots + a_n t^n$;

• ցուցչային՝ $\bar{y}_t = a_0 a_1^t$;

որտեղ՝

a_1, a_2,...,a_n-ը հավասարումների պարամետրերն են՝ կախված ժամանակի մեծությունից,

t-ն՝ ժամանակի պայմանական նշանակումը,

a_0 պարամետրը մեկնաբանվում է որպես դինամիկայի շարքի միջին պայմանների բնութագրիչ:

Վերը նշված հավասարումները ենթարկվում են անալիտիկ հարթեցման՝ փոքրագույն քառակուսիների մեթոդով:

ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՇԱՐՔԻ ՄԻՋԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ – որոնք հաշվարկվում են ժամանակի ընթացքում փոփոխվող արժեքների հիման վրա և ընդհանրացնում են ժամանակագրական տատանումները:

Դինամիկայի շարքի միջին մեծության հաշվարկման մեթոդները տարբեր են և հանդես են գալիս միջակայքային ու պահային առումներով:

Բացարձակ մեծություններով և հավասարամեծ մակարդակներով միջակայքային դինամիկայի շարքի միջին մեծությունը որոշվում է պարզ միջին թվաբանականի բանաձևով.

$$\bar{y} = \frac{\sum_{i=1}^{n} y_i}{n}$$

Եթե միջակայքային դինամիկայի շարքն ունի ոչ հավասարամեծ մակարդակներ, ապա այդ դեպքում շարքի միջին մեծությունը որոշվում է կշռված միջին թվաբանականի բանաձևով.

$$\bar{y} = \frac{\sum_{i=1}^{n} y_i t_i}{\sum_{i=1}^{n} t_i}$$

որտեղ՝

y_i-ն դինամիկայի շարքի մակարդակն է,

n-ը՝ մակարդակների թիվը,

t_i-ն՝ մակարդակների միջև ժամանակահատվածի տևողությունը (օրվա, ամսվա, եռամսյակի և այլ ժամանակահատվածի առումով):

Պահային դինամիկայի շարքի միջին մակարդակը այդպիսի եղանակով հաշվարկել չի կարելի, քանի որ առանձին մակարդակներ պարունակում են կրկնակի հաշվարկի տարրեր:

Հավասարամեծ մակարդակներով պահային դինամիկայի շարքի միջին մեծությունը որոշվում է պարզ միջին ժամանակագրականի բանաձևով.

$$\bar{y} = \frac{\frac{1}{2}y_1 + y_2 + y_3 + \ldots + y_{n-1} + \frac{1}{2}y_n}{n-1}$$

Ոչ հավասարամեծ մակարդակներով պահային դինամիկայի շարքի միջին մեծությունը որոշվում է կշռված միջին թվաբանականի բանաձևով.

$$\bar{y} = \frac{\sum \bar{y}_i t_i}{\sum t_i}, \qquad (i = 1,2,\ldots,,n)$$

որտեղ՝

$$\bar{y}_i = \frac{y_i + y_{i+1}}{2},$$

ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ – այդպիսի ցուցանիշներին են վերաբերում՝ բացարձակ հավելաճը, աճի և հավելաճի տեմպերը, մեկ տոկոս հավելաճի տեմպի բացարձակ արժեքը, որոնք հաշվարկվում են բազիսային և շղթայական եղանակներով:

ԴԻՍԿՈՆՏ – հասկացությունն ավելի շատ կիրառական է արժեթղթերի բնագավառում, որը նշանակում է արժեթղթի իրացման գնի զեղչում նրա անվանական արժեքի նկատմամբ:

ԴԻՍԿՈՆՏԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ – հանդիսանում է բանկի կողմից որոշակի զեղչով գնված մուրհակների, չեկերի և այլ դրամական պահանջների բավարարումը: Որպես դիսկոնտային բիզնեսի տարատեսակ հանդես են գալիս ֆակտորինգային գործառնությունները: Վերջիններս կարող են լինել երկու տեսակ՝ շրջանառության իրավունքով և առանց շրջանառության իրավունքի:

Առաջին դեպքում բանկը իրավունք ունի ստացողից գանձել վճարողի կողմից մարված պարտավորությունը: Երկրորդ դեպքում բանկն այդպիսի իրավունք չունի, հետևաբար, ավելի բարձր ռիսկի է դիմում և իր ռիսկի դիմաց պահանջում ավելի բարձր փոխհատուցում: Ֆակտորինգային գործառնության դիմաց բանկի վարձատրությունը նվազեցնում է մատակարարի եկամուտը՝ գործարքի արժեքի զեղչի չափով:

ԴԻՍԿՈՆՏԱՎՈՐՈՒՄ – 1) ֆինանսական միջոցների վաճառքն է՝ դրանց անվանական արժեքից զեղչով, 2) ապագա մուտքերի ընթացիկ արժեքի հաշվարկն է, այսինքն՝ որևէ դրամական միավորի, օրինակ, ՀՀ դրամի կամ ԱՄՆ դոլարի, արժեքի որոշումն է, որը պետք է վճարվի ապագայում, որոշ ժամանակահատվածից հետո: Այդ նպատակով կիրառում են ընթացիկ դիսկոնտային արժեքի բանաձևը՝

$$Ըդա = Կն /(1+Տդ)n,$$

որտեղ՝

Ըդա -ն ընթացիկ դիսկոնտային արժեքն է,

Կն –ն՝ ներդրված կապիտալը, Տդ–ն՝ տոկոսադրույքը,

n-ը՝ տարիների թիվը:

Դիսկոնտավորումը բարդ տոկոսների հաշվարկին հակառակ գործընթաց է:

ԴԻՍՊԵՐՍԻԱ – նշանակվում է հունական սիգմա (σ) փոքրատառի քառակուսի աստիճանով՝ σ^2, այն ուսումնասիրվող վարիացիոն շարքի տարբերակների (x_i) և դրանց միջին մեծության շեղումների քառակուսին է: Դրա հաշվարկման կարգը կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով.

- անհավասար հաճախություններ կամ կշիռներ (f_i) ունեցող վարիացիոն շարքի համար՝

$$\sigma^2_{կշռ.} = \frac{\sum (x_i - \bar{x})^2 f_i}{\sum f_i} \text{ (կշռված)}, \quad (i = 1, 2, \ldots, n)$$

- հաճախությունների (կշիռների) բացակայության դեպքում կլինի հավասար՝

$$\sigma^2_{պ.} = \frac{\sum(x_i - \bar{x})^2}{n} \text{ (պարզ)}, \quad (i = 1, 2, ..., n)$$

Դիսպերսիայի հաշվարկումը հաճախ շատ աշխատատար է լինում և այն պարզեցնելու համար կիրառվում է հետևյալ ընդհանրացնող բանաձևը՝

$$\sigma^2 = \overline{x^2} - \bar{x}^2$$

որտեղ՝

$$\overline{x^2} = \frac{\sum x_i^2}{n} \quad և \quad \bar{x}^2 = \left(\frac{\sum x_i}{n}\right)^2 \quad \text{պարզի դեպքում,}$$

$$\overline{x^2} = \frac{\sum x_i^2 f_i}{\sum f_i} \quad և \quad \bar{x}^2 = \left(\frac{\sum x_i f_i}{\sum f_i}\right)^2 \quad \text{կշռվածի դեպքում:}$$

Վերը նշված դիսպերսիայի բանաձևը (σ^2) կարդացվում է այսպես՝ *հավասար է տարբերակների քառակուսիների միջինի ու դրանց միջինի քառակուսու տարբերությանը:*

ԴԻՍՊԵՐՍԻԱ ԸՍՏ ԱԼՏԵՐՆԱՏԻՎ (ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ) ՀԱՏԿԱՆԻՇԻ – մի շարք դեպքերում անհրաժեշտություն է առաջանում հաշվարկելու այլընտրանքային հատկանիշի դիսպերսիան (σ^2): Այլընտրանքային հատկանիշի դեպքում մի երևույթի հանդես գալը բխում է մյուսի հանդես գալուց: Օրինակ, գիտական աստիճան ունեցողների տեսակարար կշիռը (տոկոսը) ԲՈՒՀ-երում, կրթաթոշակ ստացող ուսանողների տեսակարար կշիռը և այլն: Այդպիսի ալտերնատիվ վարիացիայի դեպքում, երբ կան մեկը մյուսին բացասող երկու տարբերակ, ապա հատկանիշի առկայությունը նշանակվում է 1-ով, իսկ նրա բացակայությունը՝ 0-ով: Միաժամանակ, եթե տվյալ հատկանիշն ունեցող միավորների բաժինը նշանակենք p-ով, իսկ այդ հատկանիշը չունեցող միավորների բաժինը՝ q=1-p-ով, ապա կգտնենք միջինի, դիսպերսիայի և միջին քառակուսային շեղումների մեծությունները:

Ալտերնատիվ հատկանիշի միջին արժեքը որոշվում է կշռված միջին թվաբանականի բանաձևով՝

$$\overline{x_p} = \frac{1 \cdot p + 0 \cdot q}{p + q} = p, \quad \text{ընդ որում} \quad p + q = 1:$$

Ալտերնատիվ հատկանիշի դիսպերսիան (σ_p^2) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\sigma_p^2 = \frac{pq(p + q)}{p + q} = pq \quad \text{կամ} \quad \sigma_p^2 = p(1 - p):$$

Ալտերնատիվ հատկանիշի միջին քառակուսային շեղումը (σ_p) հավասար է՝

$$\sigma_p = \sqrt{pq} \quad \text{կամ} \quad \sigma_p = \sqrt{p(1 - q)}:$$

Եթե, օրինակ ուսանողների 60%-ը արտադրական ստաժ ունեն, իսկ նրանց 40%-ը՝ չունեն, ապա բաժնի համար միջին քառակուսային շեղումը կլինի հավասար՝

$$\sigma_p = \sqrt{0{,}6 \times 0{,}4} = \sqrt{0{,}24}, \quad \text{որտեղից} \; \sigma_p = 0{,}49, \; \text{կամ} \; 49\%:$$

ԴԻՍՊԵՐՍԻԱՅԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ – եթե ուսումնասիրվող ցուցանիշների որոշ համակցություն բաժանվում է խմբերի, ապա ընդհանուր դիսպերսիայի (σ^2) հետ միասին կարող են որոշվել նաև դիսպերսիաներ յուրաքանչյուր առանձին խմբի համար՝ ներխմբային (մնացորդային) դիսպերսիաներ՝ σ_i^2 և դրա միջին մեծությունը՝ $\overline{\sigma_i^2}$, ինչպես նաև՝ միջխմբային դիսպերսիա՝ δ^2:

Վերոնշյալներից ընդհանուր դիսպերսիան (σ^2) կշռված տեսքով հավասար է՝

$$\sigma^2 = \frac{\sum (x_i - \bar{x})^2 f_i}{\sum f_i}$$

• միջխմբային դիսպերսիան (δ^2) բնորոշում է ուսումնասիրվող վարիացիայի շարքի առանձին խմբերի միջինների ($\overline{x_i}$) և այդ շարքի ընդհանուր միջինի ($\bar{x}$) տարբերությունների քառակուսիների գումարը, որն արտահայտվում է հետևյալ բանաձևով կշռված տեսքով.

$$\delta^2 = \frac{\sum(\overline{x_i} - \bar{x})^2 n_i}{\sum n_i}$$

որտեղ n_i -առանձին խմբերի թվաքանակն է:

• ներխմբային (մնացորդային) դիսպերսիան որոշվում է հետևյալ հաջորդականությամբ: Նախօրոք հաշվարկվում է վարիացիոն շարքի առանձին խմբերի դիսպերսիաները, որոնք որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$\sigma_i^2 = \frac{\sum(x_i - \overline{x_i})^2}{n_i}$$

որտեղ՝

x_i -ն յուրաքանչյուր խմբի i–րդ տարբերակն է

$\overline{x_i}$ -ը առանձին խմբերի միջին մեծությունն է,

n_i-ը առանձին խմբերի թվաքանակն է:

Այնուհետև հաշվարկվում է ներխմբային դիսպերսիայի միջին մեծությունը ($\overline{\sigma_i^2}$), որը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\overline{\sigma_i^2} = \frac{\sum \sigma_i^2 n_i}{\sum n_i}$$

Ներխմբային դիսպերսիայի միջոցով որոշվում են այլ գործոնների ազդեցությունը, որոնք դուրս են մնացել ուսումնասիրությունից (դիտարկումից):

Վերը նշված ընդհանուր, միջխմբային և ներխմբային դիսպերսիաները հատկապես օգտագործվում են դիսպերսիոն վերլուծության ժամանակ: Մաթեմատիկական վիճակագրության մեջ ապացուցվում է, որ ընդհանուր դիսպերսիայի, խմբային

դիսպերսիաներից որոշված միջինի և միջխմբային դիսպերսիայի միջև գոյություն ունի այսպիսի կապ՝

$$\sigma^2 = \overline{\sigma_i}^2 + \delta^2:$$

Վերջինս արտահայտում է դիսպերսիայի (վարիացիայի) գումարման կանոնը. *ընդհանուր դիսպերսիան հավասար է խմբային դիսպերսիաներից որոշված միջինին գումարած միջխմբային դիսպերսիան:*

ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱ – տնտեսավարող սուբյեկտների կողմից արտադրվող արտադրանքի տեսականու փոփոխումն ու ընդլայնումն է, արտադրության արդյունավետության բարձրացման նպատակով դրանց նոր տեսակների յուրացումն է, որոնք կարող են նպաստել եկամուտների ստացմանը՝ սնանկացումից խուսափելու համար:

ԴՈՏԱՑԻԱ – տնտեսավարող սուբյեկտների եկամուտների և ծախսերի կենտրոնացված կարգավորման ձև է, երբ այդ սուբյեկտների մոտ պլանային ծախսերը գերազանցում են ստացվող եկամուտներին: Այն տրամադրվում է պետական բյուջեից տրանսֆերտների տեսքով, որպես օգնություն պլանավորված ծախսերը կատարելու համար:

ԴՐԱՄ – բոլոր ապրանքների արժեքի ընդհանրական ձևն է, որը հանդես է գալիս թղթադրամների, մետաղադրամների, բանկերում հաշիվների մնացորդի տեսքով: Դրամը (փողը) օրինական վճարամիջոց է, որն ազատ կատարում է շրջանառության միջոցի գործառույթ, այն ամենը, ինչն ընդունվում է մյուս իրերի փոխարեն: Հնարավորություն է տալիս ապրանքները և այլ ակտիվները գնահատել երկրի դրամական միավորներով, օգտագործվում է դրանց առուծախի ժամանակ, որպես փոխանակման միջոց: Դրամը (փողը) օգտագործվում է նաև փոխառությունների, վարկերի և ներդրումային գործառնությունների համար, կարելի է պահել և օգտագործել ապագա վճարումների համար: Դրամը հաշվարկի միավոր է և կիրառվում է ազգային եկամտի հաշիվներում ապրանքների ու ակտիվների արժեքը գնահատելու համար: Դրամի (փողի) հիմնական բնորոշ հատ-

կություններից են՝ հեշտությամբ ճանաչելը, որակական համասեռությունը, բաժանելիությունը և փոքր ծավալը, բայց համեմատաբար նրա բարձր արժեքը:

ԴՐԱՄԱԿԱՆ ԱԳՐԵԳԱՏ – դրամի և դրամական միջոցների տեսակներն են, որոնք միմյանցից տարբերվում են իրացվելիության աստիճանով, այսինքն՝ կանխիկ դրամի արագ վերածվելու հնարավորությամբ: Հանդիսանում են դրամական զանգվածի կառուցվածքի և ծավալի ցուցանիշներ: Տարբեր երկրներում առանձնացվում են տարբեր կազմով դրամական ագրեգատներ: Ամենից հաճախ օգտագործվում են հետևյալ դրամական ագրեգատները՝ M_0 (կանխիկ դրամ), M_1 (կանխիկ դրամ, չեկեր, ցպահանջ ավանդներ), M_2 (կանխիկ դրամ, ցպահանջ ավանդներ, չեկեր և ոչ մեծ ժամկետային ավանդներ), M_3 (կանխիկ դրամ, չեկեր, բոլոր ավանդները), L (կանխիկ դրամ, չեկեր, ավանդներ, արժեթղթեր):

ԴՐԱՄԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ – կազմակերպության ենթակայության և այլ անձանցից ստացվող դրամական միջոցներն են, որոնց քանակն ամրագրված է կամ որոշվում է որոշակի ապրանքների և ծառայությունների ապագա գներից: Արտահայտվում են դրամի, այլ ոչ թե ապրանքի ձևով: Դրամական ակտիվները կազմակերպության հաշվեկշռում արտացոլվում են այն մեծությամբ, որն ակնկալվում է ստանալ: Ակտիվների սահմանազատումը «դրամական» և «ոչ դրամական ակտիվների», կարևոր է գնաճի ազդեցությունը հաշվի առնելիս:

ԴՐԱՄԱԿԱՆ ԲԱԶԱ – այն ներառում է ՀՀ կենտրոնական բանկից դուրս կանխիկ դրամը, ԿԲ-ում առևտրային բանկերի պարտադիր պահուստները և ոչ բանկային կազմակերպությունների ավանդները: Այլ արտահայտությամբ՝ դրամական բազան զուտ արտաքին և զուտ ներքին ակտիվների գումարն է:

ԴՐԱՄԱԿԱՆ ԶԱՆԳՎԱԾ – այն ներառում է շրջանառությունում գտնվող կանխիկ դրամը և ռեզիդենտի (բնակչության, ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների) դրամով և արտարժույթով բոլոր ավանդները բանկային համակարգում:

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ – 1) երկրում դրամաշրջանառությունն ապահովող իրավական նորմերի, ֆինանսական կազմակերպությունների (այդ թվում՝ բանկերի) և ֆինանսական միջոցների ամբողջությունն է: Ներառում է տվյալ երկրի դրամական միավորը, կանխիկ դրամի (բանկային տոմսեր և մետաղադրամ) թողարկման կարգը, օրինական վճարամիջոցները, ազգային արժույթն այլ պետությունների արժույթներով փոխանակման վերահսկողությունը, դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը, արժութային պահուստների կառավարումը: Դրամական համակարգը վերահսկվում է կենտրոնական բանկի կողմից, որը դրամավարկային քաղաքականության միջոցով կարգավորում է դրամական զանգվածն ու տոկոսադրույքը, 2) համակարգ է, որն օգտագործվում է մի խումբ երկրների արժույթների փոխարժեքները վերահսկելու համար: Դրամական համակարգին են վերագրվում նաև օրենսդրությամբ սահմանված դրամային հարաբերությունները և պետական մարմինների կողմից տարվող դրամաշրջանառությունը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ – երբեմն անվանվում են նաև դրամական միջոցների հոսքեր: Այն՝ 1) հաշվետու ժամանակաշրջանում տնտեսավարող սուբյեկտի կողմից կատարված դրամական վճարումների և դրամական մուտքերի ամբողջությունն է: Տարբերում են դրական և բացասական դրամական հոսքեր՝ կախված դրամական վճարումների ու դրամական մուտքերի տարբերությունից: Այդ տարբերությունը կոչվում է զուտ դրամական հոսք: Դրամական միջոցների աղբյուրների բացահայտումը և վերլուծությունը կարևոր է ցանկացած տնտեսական գործունեության համար: Դրանց հիման վրա են կատարվում աշխատողներին և պարտատերերին վճարումները: Դրամական հոսքերի պլանավորումն ունի անհամեմատ մեծ նշանակություն հատկապես այն ժամանակաշրջաններում, երբ կազմակերպությունը բախվում է կանխիկ դրամական միջոցների ոչ բավարար լինելու խնդրին: Չնայած բանկերի համար սովորաբար սահմանվում են իրացվելիության պարտադիր պահանջներ (տնտեսական նորմատիվներ), սակայն բանկի գործունեությանը ոչ համարժեք դրամական միջոցների հոսքերը կարող են առաջ բերել իրացվելիության հիմնախնդիրներ, որոնք կարող են վերածվել վճարունակության ճգնաժամի, 2) վճարումների հանդեպ մուտ-

քագրումների գերազանցումն է, որոնք կարելի է օգտագործել ընթացիկ ակտիվները համալրելու կամ արտադրական գործունեությունն ընդլայնելու համար, 3) ներդրումներից ստացվող դրամական միջոցների պլանավորված, ըստ ժամանակի բաշխված ապագա զուտ մուտքագրումներն են: Օգտագործվում են ընթացիկ իրացվելիությունը պլանավորելու և ներդրումների ետգնումը վերլուծելու ժամանակ, 4) կազմակերպության դրամական միջոցների շրջանառության փուլի տևողությունն է, որի ընթացքում դրանք սկզբից փոխարկվում են արտադրական պաշարների, այնուհետև հաջորդում է արտադրանքի արտադրության գործընթացը, դրա իրացումը և դրամական միջոցների վերադարձը վաճառքից մուտքագրումների ձևով, 5) անշարժ գույքի հետ կատարված գործառնություններից մնացած եկամուտն է, բոլոր գործառնական ծախսերը և պարտքի սպասարկման արժեքը հանելուց հետո:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ – պետության, կազմակերպությունների, բնակչության կանխիկ և անկանխիկ ձևով կուտակված դրամն ու հեշտությամբ դրամի վերածվող այլ միջոցներն են:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՐԱՎ – այդ միջոցները պահվում են բանկի կամ նոտարի դեպոզիտային հաշվում: Այդ գումարի վրա հաշվեգրվող տոկոսները պատկանում են գրավատուին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐ – դրանք ընթացիկ ակտիվների մի մասն են, որոնց թվին են դասվում՝ դրամարկղը, հաշվարկային և արտարժութային հաշիվները, դրամական փաստաթղթերը, ակրեդիտիվները, չեկային գրքույկները, դրամական միջոցները ճանապարհին: Բոլոր հաշիվներն էլ ակտիվային են:

ԴՐԱՄԱԿԱՆ ՇՈՒԿԱ – միջոցների այն ազատ շրջանառվող և եվրոդոլարով ավանդային սերտիֆիկատների, առևտրային արժեթղթերի, բանկային ակցեպտների (հոժարագրերի), կարճաժամկետ գանձապետական մուրհակների, ինչպես նաև կառավարական զեղչով մուրհակների և այլ արժեթղթերի շուկա է, որի ընդհանուր գծերն են անվտանգության և իրացվելիության

ապահովումը: Դրամական շուկայի մասնակիցներն են կենտրոնական և առևտրային բանկերը, բրոքերային և դիլերային ընկերությունները, ֆինանսավարկային այլ հիմնարկությունները, որոնք մասնակցում են վարկային դրամի, արտարժույթի, արժեթղթերի առք ու վաճառքին: Գործառնությունները դրամական շուկայում, որպես կանոն, կատարվում են առանց ապահովության՝ ի տարբերություն սովորական վարկավորման: Խոշոր դրամական շուկաներում գործող դիլերները մշտապես կապ են պահպանում միմյանց, ինչպես նաև հիմնական փոխառուների և ներդրողների հետ՝ կրկնագործարքի հնարավորությունից օգտվելու համար: Դրամական շուկան սովորաբար չունի ձևական կազմակերպում, առևտրի կենտրոնական վայր: Ըստ ընդունված միջազգային կանոնների, ազգային դրամական շուկայում գործառնությունները պետք է ավարտվեն գործարքի կնքման օրը, իսկ միջազգային շուկայում՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում: Դրամական շուկայում առևտրային բանկերի գործառնությունների ձևերից է նաև կարճաժամկետ դրամական պարտավորությունների առևտուրը: Դրանք վաճառվում են կարճատև, սովորաբար՝ 90 և ավելի քիչ օր ժամկետով, և համարվում են բարձրորակ վարկեր:

ԴՐԱՄԱԿԱՆ ՉԱՓԻՉՆԵՐ – դրանք արժեքային արտահայտությամբ չափում և արտացոլում են բոլոր տեսակի տնտեսական միջոցները և միաժամանակ հնարավորություն են ընձեռում համանման ցուցանիշներով կատարելու վերլուծություններ:

ԴՐԱՄԱՀԱՏԱՐԱՆ – պետական (կառավարությանը կամ կենտրոնական բանկին ենթակա) կազմակերպություն (հիմնարկություն) է, որը զբաղվում է մետաղադրամների հատումով: Այնտեղ են պատրաստվում նաև մետաղադրամները, շքանշանները, մեդալները, այլ մետաղե տարբերանշանները: Մետաղադրամի վրա լինում է փոքրիկ տառ կամ համանման խորհրդանիշ, որը նշանակում է մետաղադրամը թողարկած դրամահատարանի անվանումը:

ԴՐԱՄԱՆԻՇԵՐ – դրանք դրամի ներկայացման ձևերն են, դրամի տեսակները, որոնք մասնակցում են շրջանառությանը: Դրամանիշերի անվանական արժեքները սահմանվում են այն-

պես, որպեսզի դրանք խելամիտ կերպով ապահովեն կանխիկի գծով հաշվարկները և կատարվող վճարումները: Գնաճի պայմաններում թողարկվում են ավելի մեծ անվանումներով դրամանիշեր: Վերջիններս սովորաբար ներկայացվում են թղթադրամների և մետաղադրամների տեսքով:

ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ – տնտեսական օրենք է, որը թույլ է տալիս որոշելու շրջանառության համար անհրաժեշտ դրամի քանակը: Պարզ տարբերակով, այն հաշվարկվում է բոլոր ապրանքների գների գումարի և դրամական միավորի շրջապտույտի արագությամբ:

ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ – 1) դրամի անընդհատ շարժն է շրջանառության և վճարման ոլորտում՝ կանխիկ և անկանխիկ ձևերով, որը պայմանավորված է՝ աշխատանքի, ծառայությունների մատուցման դիմաց վճարման, ապրանքների գնման, տարբեր տեսակի վճարումների և հաշվարկների իրականացման, թոշակների տրամադրման, պարտքերի վերադարձման գործընթացով: Դրամաշրջանառությունը սպասարկվում է թղթադրամներով (բանկնոտներով), մետաղադրամներով, չեկերով, վարկային (կրեդիտային) քարտերով և այլն: Գոյություն ունեն դրամաշրջանառության երկու տեսակ: Առաջինը՝ դա կանխիկ դրամի, այսինքն՝ դրամանիշերի (բանկնոտների և մետաղադրամի) շրջանառությունն է: Այս դեպքում որպես վճարամիջոց հանդես են գալիս իրական դրամանիշերը, որոնք մի սուբյեկտի կողմից փոխանցվում են մյուսին՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների դիմաց կամ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում (օրինակ՝ տուգանքները և տույժերը): Երկրորդը՝ անկանխիկ դրամաշրջանառությունն է: Այն դրսևորվում է մի սուբյեկտի բանկային հաշվից որոշակի դրամական գումար դուրս հանելու և այն տվյալ բանկում կամ այլ բանկում մեկ այլ սուբյեկտի հաշվին հաշվեգրելու, կամ այլ ձևով, որի դեպքում կանխիկ դրամական միջոցները որպես վճարամիջոց բացակայում են: Հաշվարկների կանխիկ կամ անկանխիկ ձևի ընտրության իրավունքը պատկանում է շահագրգիռ կազմակերպություններին, քաղաքացիներին: ՀՀ բանկային օրենսդրության համաձայն, ՀՀ կենտրոնական բանկի խնդիրներից մեկը Հայաստանի Հանրապետության արժույթի թողարկումն է,

դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը: 2) Դա կանխիկ և անկանխիկ դրամի անընդմեջ շարժն է՝ արտադրանքի, ապրանքների շրջանառության, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման և բազմապիսի վճարումների իրականացման գործընթացում:

ԴՐԱՄԱՊԱՀՈՍ – բանկի մեծ սենյակ, որտեղ կանխիկ դրամը և արժեքները պահվում են տեղադրված չհրկիզվող պահարաններում: Սովորաբար գտնվում է նկուղային հարկում և պաշտպանված է կոտրելով բաց անելուց, հրդեհից, հեղեղումներից: ՀՀ բանկային օրենսդրության համաձայն, ՀՀ կենտրոնական բանկը սահմանում է բանկերի և նրանց մասնաճյուղերի տարածքին ու տեխնիկական հագեցվածությանը (այդ թվում՝ դրամապահոցին) ներկայացվող պահանջները:

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ – 1) շուկայական տնտեսությանը հատուկ և առավել բարդ ենթակառուցվածք է: Այն դիտվում է որպես՝ ա) վարկահաշվարկային հարաբերությունների, վարկավորման ձևերի և մեթոդների ամբողջություն: Վարկային հարաբերությունները կապված են փոխատվական կապիտալի շարժի հետ՝ ժամկետայնության, վերադարձելիության և վճարելիության սկզբունքներով: Դրամավարկային համակարգը ներառում է նաև երկրի տարածքում դրամն օգտագործելու համար բնակչությանը դրամով ապահովման, այլ երկրների արժույթների ազգային արժույթի փոխանակման նկատմամբ վերահսկողության, իր դրամավարկային քաղաքականությունն իրականացնելու համար երկրի կողմից օգտագործվող համակարգերը, բ) վարկային կազմակերպությունների (ֆինանսավարկային ինստիտուտների) ամբողջություն, 2) մի խումբ երկրների արտարժույթի փոխարժեքների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար օգտագործվող համակարգ է:

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ – կենտրոնական բանկի քաղաքականությունն է, որով նա ձգտում է ազդել մակրոտնտեսական պայմանների վրա՝ մեծացնելով կամ փոքրացնելով դրամական զանգվածը: Դրա նպատակն է նպաստել երկրում տնտեսական աճին, գների և վճարային հաշվեկշռի կայունությանը, զբաղվածությանը, վերահսկել դրամաշրջանա-

ռությունը և բանկային համակարգի իրացվելիությունն ու վճարունակությունը, ինչպես նաև այն, որ դրամի և վարկային ռեսուրսների առաջարկի մակարդակը նպաստի համազգային տնտեսական խնդիրների լուծմանը: Դրամավարկային քաղաքականությունն անմիջական ազդեցություն է թողնում այնպիսի մակրոտնտեսական ցուցանիշների վրա, ինչպիսիք են՝ համախառն ներքին արդյունքը, գների մակարդակը, գնաճը և զբաղվածությունը: Այն հետապնդում է կամ վարկի և դրամական էմիսիայի ընդլայնում (վարկային էքսպանսիա), կամ էլ դրանց սահմանափակում (վարկային ռեստրիկցիա): Այսպես, տնտեսության ճգնաժամային իրավիճակում կենտրոնական բանկերը փորձում են աշխուժացնել շուկայական իրադրությունը՝ վարկի ընդլայնման և տոկոսադրույքի իջեցման ճանապարհով, իսկ տնտեսական վերելքի ժամանակ, ընդհակառակը, նրանք սահմանափակում են վարկը և բարձրացնում տոկոսադրույքը: Նույն կարգի միջոցառումներով պետությունը նպաստում է դրամական զանգվածի ընդլայնմանը կամ կրճատմանը: Դրամավարկային քաղաքականության մեթոդները բաժանվում են 2 խմբի՝ ընդհանուր (փոխատվական կապիտալի շուկայի վրա ազդեցությունը ամբողջությամբ վերցված) և ընտրովի (վարկի կոնկրետ ձևերի կարգավորում կամ առանձին ճյուղերի, խոշոր ֆիրմաների և այլ սուբյեկտների վարկավորում): Օգտագործվում են դրամավարկային կարգավորման երեք հիմնական մեթոդներ՝ բաց շուկայական գործառնությունների իրականացում, պաշտոնական հաշվարկային (վերաֆինանսավորման) տոկոսադրույքի փոփոխություն, բանկերի համար պարտադիր պահուստավորման նորմատիվի սահմանում: Իր հիմնական խնդիրն իրագործելու համար կենտրոնական բանկը թողարկում է նաև պետական արժեթղթեր, կառավարում է արժութային պահուստները և ազգային արժույթի փոխարժեքը: Կենտրոնական բանկերը հաճախ վարում են «կոշտ» դրամավարկային քաղաքականություն՝ գնաճը զսպելու նպատակով: Հարկաբյուջետային (ֆիսկալ) քաղաքականության հետ միասին, դրամավարկային քաղաքականությունը տնտեսության կայունացման լծակ է:

ԴՐԱՄԱՐԿՂ – կանխիկ դրամի ընդունման, պահպանման և բացթողման համար նախատեսված պահոց (պահեստարան) է:

ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳԻՐՔ – 1) սկզբնական գրառումների (ձևակերպումների) գիրք է, որում գրանցվում են կազմակերպության բոլոր կանխիկ մուտքերը և վճարումները (ելքերը): Շաբաթը կամ ամիսը մեկ անգամ համեմատվում է բանկային հաշվի քաղվածքի հետ, 2) սկզբնական գրառումների գիրք է, որում գրանցվում են կազմակերպության բանկային հաշվին կատարված բոլոր մուտքերը և դրանից կատարված վճարումները: Ի տարբերություն սկզբնական գրառումների մյուս բոլոր գրքերի, դրամարկղային գրքի մնացորդային գումարները ցույց են տալիս, որ բանկը պարտք է տվյալ կազմակերպությանը կամ, ընդհակառակը՝ կազմակերպությունն է պարտք բանկին: Դրամարկղային գրքերը անվանում են նաև դրամարկղային մատյաններ:

ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – բանկերի դրամարկղների, կազմակերպությունների ստորաբաժանումների կողմից իրականացվող գործառնություններն են, որոնք կապված են կանխիկ դրամի ընդունման, պահպանման, հանձնման և վերահաշվարկման հետ: Այդ գործառնությունները սովորաբար կարգավորվում են ֆինանսական իրավունքի նորմերով: Կախված այն բանից, թե որ սուբյեկտների գծով է իրականացվում դրամարկղային գործառնությունների պետական կարգավորումը, կարելի է այն առանձնացնել երեք տեսակի գործառնությունների՝ ա) բանկերի և այլ վարկային հիմնարկությունների, բ) ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների, գ) բնակչությունից ապրանքների, ծառայությունների և աշխատանքների դիմաց վճարներն ընդունող ձեռնարկությունների և այլ կազմակերպությունների կողմից իրականացվող գործառնությունների նկատմամբ: Դրամարկղային գործառնությունների վարման կարգավորումը նաև ապահովում է պետության և կանխիկ դրամաշրջանառության սուբյեկտների շահերի օրգանական զուգակցումը:

ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ – 1) դրամարկղային գործառնություններն իրականացվում են դրամարկղի և հաշվետու անձանց միջոցով, 2) դրամարկղային գործառնությունների իրականացման, այդ թվում՝ դրանց փաստաթղթավորման և դրամարկղային գրքի վարման կարգը սահ-

մանում է կառավարությունը, 3) երբ բանկից ստացված կանխիկ դրամը ենթակա է մուտքագրման կազմակերպության դրամարկղ, մուտքագրումը պետք է կատարվի առնվազն կանխիկ դրամը բանկային հաշվից հանելու հաջորդ օրը, 4) երբ դրամարկղից ելքագրված կանխիկ դրամը ենթակա է մուտքագրման կազմակերպության բանկային հաշիվներ, մուտքագրումը պետք է կատարվի առնվազն կանխիկ դրամը դրամարկղից հանելու հաջորդ օրը:

ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՉԵԿ – ըստ ներկայացնողի, որով հաշվի տիրոջը կամ երրորդ անձին վճարվում է կանխիկ դրամական միջոց՝ առանց այդ չեկի օրինականությունը ստուգելու:

ԴՐԱՄԱՐԿՂԻ ՕՐԴԵՐ – 1) ձեռագիր կամ տպագրված անդորրագիր է, որով կանխիկ դրամի մուծումը գրանցվում է ավանդային հաշվում: Գանձապահը ստուգում է կանխիկ դրամը և այն գրանցում դրամարկղի օրդերում, 2) դրամական փաստաթուղթ է, որով իրականացվում և ձևակերպվում են կազմակերպության դրամարկղի կողմից կանխիկ դրամն ընդունելու և դուրս գրելու հետ կապված դրամարկղային գործառնությունները: Դրամը բաց է թողնվում դրամարկղի ելքի օրդերով կամ դրան փոխարինող այլ փաստաթղթով (վճարման տեղեկագիր, վճարման հաշիվ), իսկ դրամն ընդունվում է դրամարկղի մուտքի օրդերով: Համաձայն ՀՀ գործող օրենսդրության, դրամարկղի ելքի օրդերը ստորագրվում է կազմակերպության ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի, գլխավոր հաշվապահի, գանձապահի և դրամը ստացողի կողմից, իսկ դրամարկղի մուտքի օրդերը՝ գլխավոր հաշվապահի և գանձապահի կողմից:

ԴՐԱՄԻ (ՓՈՂԻ) ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԵՐԸ – դրանք դրամական զանգվածի կառուցվածքի ցուցանիշներն են, այդ թվում՝ M_0-ն շրջանառությունում գտնվող կանխիկ դրամն է: M_1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ դրամը և ցպահանջ ավանդները (առանց տեղական ինքնակառավարման մարմինների ավանդների), M_2-ն ընդգրկում է M_1-ը և դրամով ժամկետային ավանդները:

ԴՈՒՍՏՐ ԲԱՆԿ – ձևական առումով անկախ առևտրային բանկ է, որի նկատմամբ իրական հսկողությունն իրականացնում է մեկ այլ բանկ (կամ այլ բանկեր), որը հանդես է գալիս, այսպես կոչված, մայր բանկի (բանկ-հոլդինգի) դերում: Այդպիսի փոխհարաբերությունների համար, որպես պայման, համարվում է մայր բանկի կողմից դուստր բանկի բաժնետոմսերի (փայերի) հսկիչ փաթեթին տիրապետելը:

ԴՈՒՍՏՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ (ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ) – իրավաբանական անձ հանդիսացող այն ձեռնարկությունն է, որի ամբողջ գույքը սեփականության իրավունքով պատկանում է իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մեկ այլ ձեռնարկության, ինչպես նաև հասարակական կամ կրոնական կազմակերպության: Դուստր ձեռնարկություն հիմնադրելու իրավունք ունեն կոլեկտիվ սեփականության վրա հիմնված ձեռնարկությունները, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները և տվյալ երկրի ու այլ պետությունների պետական ձեռնարկությունները: Դուստր ձեռնարկության հիմնադիր փաստաթուղթը հիմնադիրի կողմից հաստատված կանոնադրությունն է, որում պարտադիր պետք է նշվի այդ հիմնադրի անվանումը:

Ե

ԵԿԱՄՏԱՀԱՐԿ – հարկ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է: Եկամտահարկ են վճարում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում առնվազն 183 օր և ավելի, ինչպես նաև ՀՀ-ում պետական ծառայությունում գտնվող, ժամանակավորապես նրա տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձինք: Եկամտահարկը հարկվում է ստացված համախառն եկամտից՝ սահմանված տոկոսադրույքաչափերով, այդ թվում՝ աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարումներից, խաղատներում՝ շահում-

ներով խաղերից ստացած եկամուտներից, շահաբաժիններից և եկամտահարկի օրենքով սահմանված այլ եկամուտներից:

ԵԿԱՄՏԱՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐ – եկամտահարկ վճարողներ են հանդիսանում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ֆիզիկական անձի ռեզիդենտ լինելը պայմանավորված է ներքոթվարկյալ պայմաններից որևէ մեկի առկայությամբ.

- եթե անձը հարկային տարում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է ՀՀ-ում ընդհանուր առմամբ 183 և ավելի օր,
- եթե անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում (մասնավորապես՝ բնակարանը, որտեղ բնակվում է ընտանիքը, անձնական գույքը, հիմնական գործունեության վայրը),
- եթե անձը ժամանակավորապես պետական ծառայություն է իրականացնում ՀՀ տարածքից դուրս:

ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԳԱՆՁՈՒՄԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՑ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑԻՑ – եթե օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը Հայաստանում եկամուտներ է ստանում հարկային գործակալներից, ապա վերջիններս հաշվարկված եկամուտներից պահում են եկամտահարկ, առանց որևէ նվազեցում կատարելու:

Վերոնշյալից բացառություն են կազմում միայն շահաբաժինները, որոնք հարկային գործակալը նվազեցնում է նաև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:

ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ – ՀՀ ռեզիդենտների կողմից արտերկրներում ստացած եկամուտները ընդգրկվում են նրանց համախառն եկամտի մեջ և հայտարարագրվում ՀՀ-ում:

Սակայն կրկնակի հարկումը բացառելու նպատակով ՀՀ-ում ռեզիդենտների կողմից վճարման ենթակա եկամտահարկը հաշվարկելիս հաշվի են առնվում այն հարկերը, որոնք ռեզիդենտը վճարել է արտերկրներում:

ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ձեռնարկությունները (կազմակերպությունները) և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են եռամսյակը մեկ անգամ իրենց գտնվելու վայրի հարկային մարմնին ներկայացնել ամփոփ հաշվարկ, ինչպես նաև տեղեկություններ՝ անցած եռամսյակում ֆիզիկական անձանց վճարված եկամտի գումարների, նրանց բնակության (հաշվառման) վայրի հասցեների և այդ եկամուտներից պահված ու բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին:

ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ – հարկային գործակալի կողմից հարկի պահումն իրականացվում է ամսական հարկվող եկամտի դեպքում սահմանված տոկոսադրույքներով, համապատասխան սանդղակներում: Տարեկան կտրվածքով ինքնուրույն հարկ վճարողների համար հարկման սանդղակն, ըստ էության, մնում է նույնը, պարզապես տարեկան հարկվող եկամտի չափը տարանջատվում է ամսական հարկվող եկամտի 12-ապատիկի չափով: Եկամտահարկի դրույքաչափերը ենթակա են փոփոխության՝ ըստ համապատասխան օրենքի:

ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ – տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտներ ստացող հարկատուն, նախորդ տարվա եկամտահարկի փաստացի գումարի 1/6-ի չափով, յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա կեսից ոչ ուշ կատարում է եկամտահարկի կանխավճարներ:
Կանխավճարներից ազատվում են հետևյալ հարկատուները.

- որոնց նախորդ տարվա եկամտահարկի գումարները չեն գերազանցում օրենքով սահմանված գումարի չափով, կամ այն հարկատուն, որը նախորդ տարում ունեցել է վնաս,
- որոնք ընթացիկ տարում չեն նախատեսում եկամուտներ ունենալ,
- որոնք եկամտահարկի գծով կատարում են հաստատագրված վճարներ կամ վճարում են պարզեցված հարկ,
- կանխավճարներից ազատված են նաև նոր ձեռնարկատիրական գործունեություն սկսող հարկատուները: Կանխավճարների չափը որոշվում է երկու եղանակով.
- նախորդ տարվա փաստացի եկամտահարկի գումարի հիման վրա,

- նախատեսվող ընթացիկ տարվա հարկվող եկամտի չափի հիման վրա:

ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԵԿԱՄՈՒՏ ՉՀԱՄԱՐՎՈՂ ՏԱՐՐԵՐ – հարկման նպատակով եկամուտ չեն համարվում.

- պետական նպաստները (օրինակ՝ հղիության և ծննդաբերության, երեխայի ծննդյան, թաղման, գործազրկության, աղքատության նպաստները), բացառությամբ ժամանակավոր անաշխատունակության նպաստների,
- պետական կենսաթոշակները,
- արյուն ու կրծքի կաթ հանձնելու և դոնորության այլ տեսակների համար վճարված գումարները,
- վճարվող ալիմենտները (ապրուստավճարները),
- զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին և հաշմանդամ դարձած զինծառայողներին տրվող միանվագ նպաստները:

ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ՀԱՄԱԽՄԲՌՆ ԵԿԱՄՈՒՏ – հաշվետու ժամանակաշրջանում հարկատուի ստացած բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից:

Եկամուտները կարող են ստացվել թե բնամթերային, և թե դրամական տեսքով, այդ թվում նաև՝ արտարժույթով: Արտարժույթով ստացված եկամուտները վերահաշվարկվում են ՀՀ դրամով՝ ելնելով դրանց ստացման օրը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված արտարժութային փոխարժեքից:

- Եկամուտ են համարվում, մասնավորապես՝
- աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները,
- ռոյալթիները,
- մրցույթների դրամական և իրային շահումները,
- նվիրատվության և օգնության կարգով ստացված գույքն ու դրամական միջոցները,
- ժառանգության կարգով ստացված գույքը և դրամական միջոցները,
- վարձակալության դիմաց ստացվող վճարները (վարձավճարները),

- քաղաքացիաիրավական այլ պայմանագրերի կատարումից ստացված եկամուտները,
- տոկոսները (տոկոսային եկամուտները),
- ձեռնարկատիրական գործունեության իրականացումից ստացված եկամուտները և այլն:

ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ԵՎ ՎՃԱՐՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԿՈՂՄԻՑ – այն բոլոր եկամուտները, բացառությամբ որոշ դեպքերի (երբ եկամուտներ ստացող ֆիզիկական անձը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր, կամ ստացված եկամուտները մրցույթների և մրցությունների, ինչպես նաև վիճակախաղի իրային շահումներ են), որոնք հաշվարկվում են ֆիզիկական անձանց վճարելու համար: Հարկ վճարողի կողմից նրանց վճարվում են եկամտահարկի պահումը իրականացնելուց հետո, այսինքն՝ այս հարկատեսակի գծով եկամուտներ վճարող հարկատուները հիմնականում հանդես են գալիս հարկային գործակալի դերում:

ԵԿԱՄՏԱՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏ ԵՎ ՀԱՐԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ – ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը, իսկ ոչ ռեզիդենտի համար՝ հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը:

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐՏ - այս հարկատեսակի մասին ՀՀ օրենքն ընդունվել է 2010թ.դեկտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտել 2013թ. հունվարի 1-ից: Այն հարկ վճարողների կողմից սահմանված կարգով, չափով և ժամկետներում ՀՀ պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է: Վճարողներ են համարվում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը և նոտարները: Վերոնշյալներից ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացման ենթակա հարկվող եկամուտը, իսկ ոչ ռեզիդենտի համար հայաստանյան աղբյուրներից ստացման ենթակա հարկվող եկամուտը: Վերջինիս հաշվելու ժամանակաշրջանում հարկ վճարողի համախառն եկամտի և սույն օրենքով սահմանված նվազեցվող եկամուտների ու ծախսերի դրական տարբերությունն է:

Եկամտային հարկի դրույքաչափերն են՝

- մինչև 120000 դրամի դեպքում, հարկվող եկամուտի 24.4%, որը կազմում է 29.280 դրամ:
- 120000-2000000 դրամի դեպքում 26% (կազմում է 488800 դրամ), իսկ նախորդի հետ միասին կկազմի 518080 դրամ:
- 2 մլն. դրամից ավելիի դեպքում, այդ գումարի 36%-ը:

ԵԿԱՄՈՒՏ – հաշվետու ժամանակաշրջանում ստացված բոլոր տեսակի տնտեսական շահերի ստացման աճն է, որը հանգեցնում է սեփական կապիտալի ավելացմանը (բացառությամբ բաժնետերերի կողմից սեփական կապիտալում կատարված ներդրումների գումարի չափի): Կամ այլ կերպ՝ եկամուտը իրացումից հասույթի և այլ եկամուտների հանրագումարն է:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՇԻՎ – արտացոլում է ընթացիկ անհատույց փոխատվությունների ստացման և փոխանցման արդյունքում սկզբնական եկամուտների մնացորդի (սալդոյի) վերափոխումը տնօրինվող եկամտի:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄԸ ՏԱՐՎԱ ԱՌՈՒՄՈՎ – տարվա ընթացքում (որոշ բացառություններով) ֆիզիկական անձի կողմից փաստացի ստացված (իսկ անհատ ձեռնարկատերերի ձեռնարկատիրական գործունեությունից՝ եկամուտների գծով հաշվեգրված) եկամուտների մասին հայտարարագիրը անձը պետք է ներկայացնի իր բնակության (հաշվառման) վայրի հարկային մարմնին՝ տարին ավարտելուց հետո սահմանված ժամկետում:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՇԻՎ – եկամուտների սկզբնական բաշխման հաշվի բաղկացուցիչ մասն է: Այն արտացոլում է անմիջականորեն ապրանքների ու ծառայությունների արտադրության գործընթացին մասնակցող կառուցվածքային ռեզիդենտ միավորների կողմից վճարած սկզբնական եկամուտները: Կառուցվածքային միավոր է համարվում տվյալ երկրի ռեզիդենտ անձը, եթե այդ տարածքում է գտնվում դրա տնտեսական շահերի կենտրոնը, այսինքն՝ եթե այն զբաղվում կամ նախատեսում է զբաղվել տնտեսական գործունեության որևէ տեսա-

կով կամ գործառնություններով երկար ժամանակահատվածում (սովորաբար հավասարեցված է մեկ տարվա):

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՇԻՎ – համարվում է եկամուտների սկզբնական բաշխման հաշվի երկրորդ կառուցվածքային մասը: Այն բնութագրում է ռեզիդենտների (կառուցվածքային միավորների կամ հատվածների) միջև արտադրական գործունեությունից և սեփականությունից ստացած սկզբնական եկամուտների բաշխումը:

ԵՎՐԱՐԺՈՒՅԹ – 1) տարբեր երկրների ընկերությունների և կառավարությունների դրամական միջոցներն են, որոնք ավանդադրված են իրենց սեփական երկրի տարածքից դուրս գտնվող, գլխավորապես՝ եվրոպական երկրների բանկերում: Այդ ավանդները եվրոպական երկրներից որևէ մեկի արժույթով է, որը, սակայն տվյալ երկրի ազգային արժույթը չէ: Օրինակ, ԱՄՆ դոլարները Ֆրանսիայի կամ Իտալիայի բանկերի հաշիվներում կոչվում են Եվրոդոլարներ, գերմանական մարկերը՝ Շվեցյարիայի կամ Մեծ Բրիտանիայի բանկերի հաշիվներում, Եվրոմարկեր և այլն: Եվրարժույթներն օգտագործվում են վարկերի և փոխառությունների տրամադրման ու ստացման համար: Դրանով առևտրային բանկերն իրագործում են ավանդափոխատվական անկանխիկ գործառնություններ, այդ արժույթները թողարկող երկրների սահմաններից դուրս: Հիմնական փոխառուները և վարկատուներն են, առևտրային բանկերը, խոշոր ընկերությունները և կենտրոնական բանկերը, 2) թողարկող երկրի սահմաններից դուրս գործածություն ունեցող առանձին երկրների ազգային արժույթներն են, որոնցով համապատասխան գործառնությունները կատարում են օտարերկրյա բանկերը՝ զգալի մասշտաբներով:

ԵՎՐԱՐԺՈՒՅԹՈՎ ԴԵՊՈԶԻՏՆԵՐ – այլ արժույթով արտահայտված դեպոզիտն է, որը տարբեր է այն երկրի ազգային արժույթից, որտեղ գտնվում է դեպոզիտ ընդունող բանկը, օրինակ՝ եվրարժույթի շուկայում գործառնություններ իրականացնելիս:

ԵՎՐՈՇՈՒԿԱ – 1) փոխատվական կապիտալի միջազգային շուկա է, որտեղ գործառնություններն իրականացվում են գլխա-

վորապես եվրարժույթով և եվրոպարտատոմսերով: Ստեղծվել է Եվրոպայում 50-ական թվականներին՝ միջազգային առևտուրը ֆինանսավորելու համար: Այն ընդգրկում է միջազգային դրամական ու կապիտալի շուկաների մի ամբողջություն, որը ներառում է բոլոր համաշխարհային ֆինանսական կենտրոնները և որտեղ էլ կատարվում են եվրարժույթով գործառնություններ: Շուկայի հիմնական մասնակիցներն են՝ առևտրային բանկերը, խոշոր ընկերությունները և Եվրոմիության անդամ համարվող կենտրոնական բանկերը: Եվրոշուկայում որպես փոխատուներ հանդես են գալիս առավելապես մասնավոր առևտրային բանկերը, իսկ փոխառուների դերում՝ միջազգային կորպորացիաները և այն պետությունները, որոնք ունեն արտարժույթի կարիք: Գործառնությունները կատարվում են կարճաժամկետ վարկերի տեսքով: 1960թ. շրջանառության մեջ մտան եվրոդոլարային ավանդային սերտիֆիկատները, իսկ եվրոշուկայի հնարավորությունները մեծացան եվրովարկերի հայտնվելով: Բացի վարկերից, եվրոշուկան ներկայանում է եվրոպարտատոմսերի փոխառություններով կատարվող գործառնություններով, եվրարժույթի արժեթղթերով ֆյուչերսային գործարքներով: Եվրոշուկան ընդունված է ստորաբաժանել եվրարժույթի, եվրովարկի և եվրոկապիտալի շուկաների: Խոշորագույն եվրոշուկան Լոնդոնում է, մասշտաբներով ավելի փոքր շուկաները տեղաբաշխված են Փարիզում, Բրյուսելում և Ֆրանկֆուրտում, 2) Եվրոպական համագործակցություն, որը դիտարկվում է որպես ապրանքների միասնական խոշոր շուկա:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ – Եվրոպական միության (Եվրոմիություն) բաղկացուցիչ մասն է, որը մինչև 1993թ. նոյեմբերը անվանվում էր Եվրոպական տնտեսական համագործակցություն: Ստեղծվել է 1957թ. Քարածխի և պողպատի եվրոպական միավորման 6 անդամ երկրների՝ Բելգիայի, Գերմանիայի, Իտալիայի, Լյուքսեմբուրգի, Նիդերլանդների և Ֆրանսիայի միջև Հռոմում կնքված պայմանագրի հիման վրա, նրա անդամների միջև առևտրի և տնտեսական համագործակցության նպատակով: 1973թ. Համագործակցությանը միացան Դանիան, Իռլանդիան և Մեծ Բրիտանիան: Եվրոպական համագործակցության հիմնական նպատակն է՝ անդամ երկրների տնտեսական սերտ միավորումը (ինտեգրացումը), դրամական միջոց-

ների և մարդկանց ազատ հոսքի ապահովումը, ընդհանուր դրամի (եվրո) ու ընդհանուր ազատ շուկայի ստեղծումը և այլն: Օգտագործվում է համատեղ հաշվարկային արժույթ՝ էքյու, գործում է Եվրարժույթի համակարգը: 1985թ. ԵՀ անդամ երկրներն ընդունեցին Միասնական եվրոպական ակտ, որով մասնավորապես, նախատեսվում է վերացնել ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի տեղաշարժի մնացած արգելքները, մաքսային ձևականությունները: 1992թ.-ից ԵՀ-ն անվանվում է տնտեսական միություն, որն ընդգրկում է 12 արևմտաեվրոպական երկրներ (Բելգիա, Մեծ Բրիտանիա, Հունաստան, Դանիա, Գերմանիա, Իռլանդիա, Իսպանիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նիդերլանդներ, Պորտուգալիա և Ֆրանսիա), որոնք իրականացնում են իրենց տնտեսությունների ինտեգրացիան:

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ – ըստ որի երաշխավորը, երաշխավորության պայմանագրով, այլ անձի պարտատիրոջ առջև պարտավորվում է պատասխանատվություն կրել, այդ անձի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար: Երաշխավորության պայմանագիրը կարող է կնքվել նաև ապագայում ծագելիք պարտավորության ապահովման համար: Երաշխավորության պայմանագիրը պետք է կնքվի գրավոր: Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է այդ պայմանագրի անվավերությանը կամ ոչ հավաստի լինելուն:

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ (ԱՆԴԵՐՐԱՅԹԻՆԳ) – ֆինանսական կազմակերպության (առևտրային բանկի, ապահովագրական ընկերության և այլն) կողմից պայմանավորված վարձատրության դիմաց որևէ գործառնության ֆինանսական ռիսկն իր վրա վերցնելն է: Երաշխավորումը արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման երաշխավորված ներդրումային ընկերությունների, բանկերի և խոշոր բրոքերային ֆիրմաների կողմից նոր թողարկված արժեթղթերը առաջնային շուկայում տեղաբաշխելու տարածված մեթոդն է: Հնարավոր են երաշխավորման հետևյալ պայմանները. ա) երաշխավորը՝ ներդրումային ընկերությունը, թողարկողից գնում է արժեթղթերի ամբողջ քանակությունը՝ հաստատագրված գնով և այն վերավաճառում է այլ ներդրողներին, բ) ներդրումային ընկերությունը պարտավորվում է թո-

ղարկողից գնել արժեթղթերի չտեղաբաշխված քանակությունը, գ) ներդրումային ընկերությունը պարտավորվում է ներդնել բոլոր ջանքերը արժեթղթերի թողարկման ուղղությամբ՝ առանց իր վրա վերցնելու դրանց չտեղաբաշխված մասի գծով պարտավորություն:

ԵՐԱՇԽԻՔ – ըստ որի, երաշխիք տված անձը (բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը) այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում այդ պրինցիպալի պարտատիրոջ (բենեֆիցիարի) հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, բենեֆիցիարին վճարել դրամական գումար՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելիս: Երաշխիքն ապահովում է բենեֆիցիարի հանդեպ պրինցիպալի պարտավորության (հիմնական պարտավորության) պատշաճ կատարումը: Երաշխիք տալու համար պրինցիպալը երաշխիք տված անձին վճարում է պայմանավորված վարձատրությունը:

ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ – այն ենթադրում է հաճախորդներին երաշխիքների և երաշխավորությունների տրամադրում ու այդ ծառայության դիմաց կոմիսիոն (միջնորդային) վարձատրության ստացում: Բանկի իմիջի բարձրացման, շահավետ գործնական փոխհարաբերությունների հաստատման և այլ պայմանների դեպքում հնարավոր է նաև անվճար երաշխավորությունների տրամադրում:

ԵՐԿԱԿԻ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ – համարվում է օրդերային այն արժեթուղթը, որը հավաստում է ապրանքային պահեստի կողմից ապրանքն ի պահ ընդունելը: Երկակի պահեստային վկայագիրը կազմված է երկու մասից՝ պահեստային վկայագրից և գրավային վկայագրից (վարանտից), որոնք առանձին-առանձին արժեթղթեր են:

ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԱԿՏԻՎՆԵՐ – ակտիվներ, որոնք ունեն մեկ տարուց ավելի ծառայության ժամկետ, օգտագործվում են արտադրական գործընթացում և նախատեսված չեն հաշվետու ժամանակաշրջանում վաճառելու համար:

ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՊԱՍԻՎՆԵՐ – երկարաժամկետ բանկային վարկերը և փոխառությունները, ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորությունները, հետաձգված հարկային պարտավորությունները և այլ ոչ ընթացիկ պարտավորություններն են, որոնք ենթակա են մարման հաշվետու պահից ավելի քան 12 ամիս հետո:

ԵՐԿՄԱԿԱՐԴԱԿ ՇՈՒԿԱ – արժույթի շուկա, որն ունի երկու մակարդակ: Սովորաբար առաջին մակարդակը զբոսաշրջիկների ներհոսքի կազմակերպումն է, իսկ մյուս մակարդակը՝ գործարարության (բիզնեսի) կարգավորումը:

ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԻՍԿ – ազգային քաղաքականության այն վտանգն է, որ արտերկրյա կառավարությունը կհրաժարվի սպասարկել կամ մարել պարտքը և կատարել այլ պարտավորությունները փոփոխության հետևանքով: Երկրի տնտեսական ռիսկը կապված է ամբողջ պետության ֆինանսական դրության, բոլոր տնտեսական գործակալների (ներառյալ կառավարությունը) կամ նրանց մեծ մասի կողմից արտաքին վճարումները դադարացնելու հնարավորության հետ:

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ – 1) նախկինում թողարկված արժեթղթերի շրջանառությունն է, դրանց գոյության ամբողջ ժամանակահատվածում նրա առք ու վաճառքի, կամ արժեթղթի մի սեփականատիրոջից մյուսին այլ միջոցներով փոխանցման գործողությունների համախումբը: Այլ կերպ ասած, դա մի շուկա է, որտեղ շրջանառվում են արդեն գոյություն ունեցող արժեթղթերը, ի տարբերություն առաջնային շուկայի, որտեղ արժեթղթերը վաճառքի են հանվում առաջին անգամ: Այս շուկայում արժեթղթերի առուծախի գործառնությունները կատարվում են սկզբնական պարտատեր չհանդիսացող անձանց և փոխատուների միջև: Որպես վաճառողներ հանդես են գալիս ոչ թե «սկզբնական» փոխառուները, այլ պարտատերերը, որոնք նախօրոք ձեռք են բերել նշված պարտավորությունները: Այդպիսի վաճառքից միջոցներն անցնում են արժեթղթերի տիրոջը (ներդրողին), և ոչ թե այն թողարկած կազմակերպությանը: Երկրորդային շուկայի դերը հիմնականում կատարում է արժեթղթերի բորսան, քանի որ նոր թողարկումները կազմում են

նրա շրջանառության միայն մի փոքր մասը: Երկրորդային շուկան է ապահովում արժեթղթերի իրացվելիությունը և ռիսկերի բաշխումը, ինչպես նաև ստեղծում պայմաններ առաջնային շուկայի բնականոն գործունեության համար, 2) վաճառքի կամ վերավաճառքի գծով ապրանքային գործարքներն են, որոնք կատարվում են միջնորդի, և ոչ թե սկզբնական վաճառողի միջոցով, 3) շուկա, որտեղ ազատ շրջանառվող դրամական շուկայի գործիքները դիլերների կողմից վաճառվում են նոր ներդրողներին:

ԵՐՐՈՐԴ ԱՆՁ – 1) միջնորդ է, որը կարգավորում է ֆինանսական փոխհարաբերությունները մատակարարի և գնորդի, տարբեր կազմակերպությունների և առանձին անձանց միջև, ապահովելով իր համար եկամտի ստացում, 2) ապահովագրական պատահարի հետ կապված մի անձ է, որը ոչ ապահովագրող է, ոչ էլ ապահովագրվող:

Զ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ – Եվրոպական համագործակցության կողմից կառավարվող հիմնադրամ: Այն զարգացող երկրներին տրամադրում է միջոցներ՝ սուբսիդիաների և վարկերի տեսքով, ենթակառուցվածքների զարգացման կոնկրետ նախագծերի համար:

ԶԲԱՂՎԱԾՆԵՐ – համարվում են ինչպես վարձու (անկախ այն բանից աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր, սեզոնային, պատահական կամ միանգամյա), այնպես էլ ոչ վարձու աշխատող անձինք:

ԶԲԱՂՎԱԾՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ – համարվում են ինչպես սեփականության բոլոր ձևերի հիմնարկներում և կազմակերպություններում աշխատող անձինք, ներառյալ փոքր և հասարակական կազմակերպություններում, գյուղացիական տնտեսություններում զբաղվածները, այնպես էլ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվածները և ինքնազբաղված բնակչությունը:

ԶԵՂՉ – 1) տվյալ պահին արժեթղթերի բորսայում արժեթղթերի վաճառքի գնի, ընթացիկ բորսայական փոխարժեքի և արժեթղթի անվանական արժեքի, կամ մարման պահին նրա վաճառքի գնի միջև տարբերությունն է, ֆինանսական գործիքի գնումը մինչև դրա մարումը այնպիսի գնով, որը փոքր է անվանական արժեքից, 2) արտարժույթի ֆորվարդային փոխարժեքի (գործարքի կնքման պահին ամրագրված, սակայն գալիք ժամկետներում վճարվող փոխարժեքի) և անհապաղ վճարման դեպքում փոխարժեքի միջև տարբերությունն է, 3) մատակարարման տարբեր ժամկետներով միևնույն ապրանքի գների միջև տարբերությունն է, 4) գնից զեղչ՝ հաշվի առած շուկայի իրադրությունը, 5) մուրհակի անվանական գնից իջեցում՝ այն վաղաժամկետ (մինչև մարման ժամկետը լրանալը) ձեռք բերելու (զեղչելու) դեպքում: Մուրհակը զեղչող (գնող) բանկը կամ մասնավոր անձը վճարում է անվանականից ցածր գին, սպասելով մինչև մարման ժամկետը՝ շահույթ ստանալու նպատակով, 6) ապրանքի գնացուցակում նշված կամ հայտարարված գնի իջեցում, կապված կանխիկ վճարողի, մեծաքանակ գնորդների, մշտական հաճախորդների այլ հանգամանքների հետ:

ԶՈՒՅԳԱՅԻՆ ՌԵԳՐԵՍԻԱ – բնութագրվում է գործոնային և արդյունքային ցուցանիշների միջև եղած կապով: Վերլուծական կապն այդ ցուցանիշների միջև արտահայտվում է հետևյալ հավասարումներով.

- ուղիղ գծի՝ $\bar{y}_x = a_0 + a_1 x$;
- պարաբոլի՝ $\bar{y}_x = a_0 + a_1 x + a_2 x^2$;
- հիպերբոլի՝ $\bar{y}_x = a_0 + \frac{a_1}{x}$;
- բազմագործոնի՝ $\bar{y}_{x_1, x_2, \ldots, x_n} = a_0 + a_1 x_1 + a_2 x_2 + \ldots + a_n x_n$;

Հավասարման տեսակը կարելի է որոշել գծապատկերի տեսքով, սակայն գոյություն ունեն դրույթներ, որոնք թույլ են տալիս ստանալու կապի հավասարումը՝ չօգտագործելով գծա-

պատկերային եղանակը: Եթե գործոնային և արդյունքային ցուցանիշներն աճում են համամասնորեն, մոտավորապես թվաբանական պրոգրեսիայով, նշանակում է, դրանց միջև գոյություն ունի գծային կապ, իսկ հակադարձի դեպքում՝ հիպերբոլային կապ: Եթե գործոնային ցուցանիշը փոփոխվում է թվաբանական պրոգրեսիայով, իսկ արդյունքայինը՝ նշանակալի արագ, ապա կիրառվում են պարաբոլային կամ աստիճանային կապերը:

ԶՈՒՏ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ – որոշակի ժամանակաշրջանում (սովորաբար մեկ տարում) երկրում արտադրված բոլոր վերջնական ապրանքների և ծառայությունների գումարային ծավալն է դրամական արտահայտությամբ, հանած հիմնական միջոցների համար նախատեսված ամորտիզացիան: Այն որոշվում է որպես համախառն ազգային արդյունքի (ՀԱԱ) և ամորտիզացիոն հատկացումների միջև տարբերություն:

ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ – կազմակերպության ունեցվածքն է կամ բոլոր տեսակի ակտիվներն են՝ պարտավորությունները հանելուց հետո: Ստացված թիվը հավասար է կազմակերպության սեփական կապիտալին: Գոյություն ունեն տարբեր կարծիքներ այն բանի վերաբերյալ, թե երկարաժամկետ ստորադաս պարտավորություններն արդյո՞ք պետք է դիտարկել որպես սեփական կապիտալի տարր և չհանել զուտ ակտիվների գումարը հաշվելու ժամանակ, թե դրանք պետք է վերագրել պարտավորություններին և հանել ակտիվների ընդհանուր գումարից: Կազմակերպության զուտ ակտիվների արժեքի ցուցանիշը հանդիսանում է կազմակերպության՝ որպես ամբողջական գույքային համալիրի, հաշվեկշռային արժեքի որոշման հիմք:

ԶՈՒՏ ԱՐԺԵՔ – արտադրանքի (ծառայության) իրական արժեքն է, որը որոշվում է արտադրանքի (ծառայության) ընդհանուր արժեքից հանելով ամբողջ շահույթը կամ ֆինանսական եկամուտները:

ԶՈՒՏ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ – հաշվարկվում է որպես ապրանքների և ծառայությունների արտահանման ու ներմուծման տարբերություն և իր մեջ ներառում է արտերկրների (ներառյալ ԱՊՀ երկրները) հետ հայրենական ապրանքաշրջանառությունը:

ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ (ԶԱԱ) – ՀՀ կենտրոնական բանկի և բանկային համակարգի ոչ ռեզիդենտների հետ փոխհարաբերություններից բխող արտաքին ակտիվների ու արտաքին պարտավորությունների տարբերությունն է:

ԶՈՒՏ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔ – որոշակի ժամանակահատվածում կազմակերպության դրամական միջոցների մուտքերի և վճարումների գումարների միջև տարբերությունն է:

ԶՈՒՏ ՀԱՍՈՒՅԹ – առանց անուղղակի հարկերի (ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ և այլ հաստատագրված վճարներ) ապրանքների, արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների), ոչ նյութական ակտիվների (արտոնագրեր, ապրանքանիշեր, հեղինակային իրավունքներ, համակարգչային ծրագրեր և այլն) և այլ ակտիվների (կարճաժամկետ և երկարաժամկետ արժեթղթեր) իրացման դիմաց ստացված դրամական միջոցների ընդհանուր գումարն է:

ԶՈՒՏ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ – համախառն ներդրման (օրինակ, հիմնական միջոցների ավելացման) և ամորտիզացիոն հատկացումների տարբերությունն է որոշակի ժամանակահատվածում: Համաձայն ներկայումս գործող կարգերի, ՀՀ բանկերի հիմնական միջոցների և դրանց գծով կուտակված ամորտիզացիոն հատկացումների գումարի տարբերությունն անվանվում է զուտ հիմնական միջոցներ, իսկ տրամադրված վարկերի և դրանց հնարավոր կորուստների ծածկման պահուստի գումարի տարբերությունը՝ զուտ վարկային ներդրումներ:

ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ (ԶՆԱ) – ՀՀ կենտրոնական բանկի և բանկային համակարգի պահանջներն են երկրի ներքին տնտեսության նկատմամբ: ՀՀ կենտրոնական բանկի համար ներքին տնտեսության հիմնական ոլորտներն են՝ ՀՀ կառավարությունը և առևտրային բանկերը, իսկ ամբողջ բանկային համակարգի համար՝ կառավարությունը և իրական հատվածը: Տնտեսության մյուս հատվածների նկատմամբ պահանջներն ընդգրկվում են զուտ այլ ակտիվներում, իսկ կառավարության նկատմամբ պարտավորություններն առանձնացվում են պահանջներից:

ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ (ՀԱՐԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ) – մինչև հարկումը ստացված զուտ շահույթի և պետական բյուջե վճարվող շահութահարկի գումարների տարբերությունն է:

ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ (ՄԻՆՉԵՎ ՀԱՐԿՈՒՄԸ) – սովորական գործունեությունից շահույթի (վնասի) և արտասովոր դեպքերից շահույթի (վնասի) հանրագումարն է: Վերջինս արտասովոր դեպքերի և տարբեր իրադարձությունների հետևանքով առաջացած շահույթի կամ պատճառված վնասի գումարն է: Կամ այլ կերպ, այն մինչև շահութահարկի վճարումն է:

ԶՈՒՏ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ (+) ԿԱՄ ԶՈՒՏ ՓՈԽԱՌՈՒՄ (-) – ֆինանսավորման աղբյուրների գերազանցումն է կամ պակասուրդը (դեֆիցիտ) ոչ ֆինանսական ակտիվների զուտ ձեռքբերման ծախսերի համեմատությամբ: Ամբողջ տնտեսության մակարդակով զուտ վարկավորումը կամ զուտ փոխառումը ցույց է տալիս ռեսուրսների այն քանակությունը, որը երկիրը տրամադրում է արտերկրին կամ արտերկիրը տրամադրում է տվյալ երկրին:

Է

ԷԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ – ընթացիկ ժամանակաշրջանում բացահայտված այն սխալներն են, որոնք ունեն այնպիսի նշանակություն, որ նախորդ ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) ֆինանսական հաշվետվություններն իրենց ներկայացման ամսաթվի դրությամբ այլևս արժանահավատ չեն կարող համարվել: Այդ սխալները կարող են առաջանալ թվաբանական անճշտությունների, փաստերի ոչ ճիշտ մեկնաբանման, խաբեության կամ անփութության հետևանքով:

ԷԼԱՍՏԻԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ – ցույց է տալիս, թե միջինում քանի՞ տոկոսով կփոխվի արդյունքային ցուցանիշի (y) արժեքը՝ գործոնային ցուցանիշի (x) մեկ տոկոսի չափով փոփոխվելու դեպքում:

ԷԼԱՍՏԻԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԳՈՐԾԱԿԻՑ – որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$э_{x_i} = a_i \frac{\overline{x_i}}{\overline{y}},$$

որտեղ՝

$\overline{x_i}$ -ը համապատասխան ազդող գործոն ցուցանիշի միջին արժեքն է,

$\overline{y}$ -ը՝ արդյունքային ցուցանիշի միջին արժեքը,

a_i-ն՝ համապատասխան գործոնային ցուցանիշի ռեգրեսիայի գործակիցը:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – բանկային գործառնություններ, որոնք իրականացվում են համակարգչային համակարգերի միջոցով: Դրանք հիմնականում դրամական փոխանցումներն են և այլ բանկային ծառայությունները, որոնք իրականացվում են հեռավորության վրա էլեկտրոնային ազդանշանների (հեռախոսային գծեր, տերմինալներ) օգնությամբ: Իջեցնում են ծառայությունների արժեքը և բարձրացնում արդյունավետությունը:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՆՈՒՄ – հեռուստացույցով ցուցադրվող ապրանքների գնումն է, որը սպառողը կատարում է տանը՝ ապրանքը պատվիրելով հեռախոսով կամ համակարգչով:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴՐԱՄՆԵՐ – լայն առումով, դա դրամական հաշվարկների համակարգ է, որի գործընթացում անմիջականորեն օգտագործվում է էլեկտրոնային տեխնիկա, այսինքն՝ հաշվարկներն իրականացվում են համակարգչային ցանցով և չեն օգտագործվում արդեն ավանդական դարձած այնպիսի վճարման միջոցներ, ինչպիսիք են՝ կանխիկ դրամական միջոցները և չեկերը:

ԷՄԻՍԻԱ – տարբեր տեսակի դրամանիշերի, արժեթղթերի թողարկումն է շրջանառության մեջ, որի տակ հասկացվում է ոչ միայն դրամանիշների տպագրումը, այլ նաև՝ դրանց զանգվածի ավելացումը կանխիկ ու անկանխիկ շրջանառությունում:

ԷՄԻՍԻՈՆ ՇԱՀՈՒՅԹ – դա բաժնետիրական ընկերության եկամուտն է, որը ձևավորվում է ի հաշիվ թողարկված բաժնետոմսերի սկզբնական տեղաբաշխման գնի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերության:

ԷՄԻՏԵՆՏ – անձ, որը շրջանառության մեջ թողարկում է դրամանիշեր, արժեթղթեր և վճարահաշվարկային փաստաթղթեր:

ԷՔԱՈՒՆԹԻՆԳ – գործարարության (բիզնեսի) ոլորտ, որը կապված է ֆինանսական տեղեկատվության հավաքագրման, դրանց մշակման և վերլուծության հետ:

ԷՔՍՊԻՐԱՑԻԱ – բնորոշում է պայմանագրի, կրեդիտային քարտի և օպցիոնի գործունեության ժամկետի տևողությունը:

Ը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԱՄՈՒՏՍ – 1) հարկատուի համախառն եկամուտն է բոլոր աղբյուրներից, որը ներառում է ոչ միայն ընթացիկ, այլև անցած տարիների եկամտի վրա հիմնված աղբյուրներից ստացված եկամուտը հարկման տարում, 2) ընդհանուր դրամական հասույթն է, որը հավասար է վաճառված ապրանքի քանակի և դրա միավորի գնի արտադրյալին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍ – բնութագրում է բարդ, մի քանի տարբեր տեսակի միավորներից բաղկացած երևույթի հաշվետու և բազիսային ժամանակաշրջանների մակարդակների հարաբերակցությունը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍ (ԿԱՅՈՒՆ ԿԱՋՄՈՎ)՝ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԳԾՈՎ (I_z) – հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$I_z = \frac{\sum z_1 q_1}{\sum z_0 q_1},$$

որտեղ՝

z_1-ը և z_0-ն հաշվետու և բազիսային ժամանակաշրջանների արտադրանքի ինքնարժեքներն են,

q_1-ը՝ հաշվետու ժամանակաշրջանում արտադրված արտադրանքի ծավալը կամ քանակը:

Այն ցույց է տալիս, թե քանի՞ անգամ է փոփոխվել արտադրանքի արտադրության ընդհանուր ծախսերը արտադրանքի ինքնարժեքի փոփոխման արդյունքում, կամ քանի՞ տոկոս է կազմում արտադրանքի արտադրության ընդհանուր ծախսերի ավելացումը (պակասեցումը) ինքնարժեքի փոփոխման արդյունքում:

Համարիչի և հայտարարի տարբերությունը՝ $\Sigma z_1q_1 - \Sigma z_0q_1$, ցույց է տալիս, թե դրամական քանի միավորով են փոփոխվել արտադրության ընդհանուր ծախսերը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍ՝ ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ (I_{pq}) – իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի ապրանքաշրջանառության (Σp_1q_1) հարաբերությունը դրա բազիսային ժամանակաշրջանի ապրանքաշրջանառությանը (Σp_0q_0).

$$I_{pq} = \frac{\sum p_1q_1}{\sum p_0q_0}:$$

Այսպիսի ինդեքսը ցույց է տալիս, թե ապրանքաշրջանառությունը բազիսային ժամանակաշրջանի համեմատ քանի՞ անգամ է մեծացել (փոքրացել) հաշվետու ժամանակաշրջանում:

Համարիչի և հայտարարի տարբերությունը՝ $\Sigma p_1q_1 - \Sigma p_0q_0$, ցույց է տալիս, թե հաշվետու ժամանակաշրջանում որքա՞ն դրամական միավորով է ավելացել (պակասել) ապրանքաշրջանառությունը բազիսայինի համեմատ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍ՝ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԾԱԽՍԻ ԳԾՈՎ (I_{Tq}) – հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$I_{Tq} = \frac{\sum T_1q_1}{\sum T_0q_0}:$$

Այն ցույց է տալիս, թե քանի՞ անգամ է փոփոխվել ժամանակային ծախսն արտադրանքի արտադրության վրա, կամ քանի՞ տոկոս է կազմում արտադրանքի արտադրության վրա

ժամանակային ծախսի ավելացումը (պակասեցումը) հաշվետու ժամանակաշրջանում բազիսայինի համեմատությամբ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍ՝ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ (I_q) – որի ինդեքսավորվող մեծությունը արտադրանքի քանակն է (q) բնեղեն արտահայտությամբ, իսկ կշիռը՝ գինն է (p):

Քանի որ ֆիզիկական ծավալի ինդեքսը քանակական ցուցանիշի ինդեքս է, ուրեմն որպես կշիռ վերցնում ենք բազիսային ժամանակաշրջանի գինը (p_0): Այս դեպքում այն կունենա հետևյալ տեսքը՝

$$I_q = \frac{\sum q_1 p_0}{\sum q_0 p_0}$$

որտեղ՝

q_1-ը և q_0-ն համապատասխանաբար հաշվետու և բազիսային ժամանակաշրջաններում արտադրված արտադրանքի քանակն է կամ ֆիզիկական ծավալը:

Կոտորակի համարիչը պայմանական մեծություն է, որը ցույց է տալիս, թե որքան կլինի ապրանքաշրջանառությունը հաշվետու ժամանակաշրջանում, այն պայմանով, որ գները պահպանվեն բազիսային ժամանակաշրջանի մակարդակում, իսկ հայտարարը պարունակում է բազիսային ժամանակաշրջանի փաստացի ապրանքաշրջանառությունը:

Ֆիզիկական ծավալի ինդեքսը ցույց է տալիս, թե քանի՞ անգամ է մեծացել (փոքրացել) արտադրանքի արժեքը նրա արտադրության ծավալի աճի (նվազման) դեպքում: Ինդեքսի համարիչի ու հայտարարի տարբերությունը՝ $\Sigma q_1 p_0 - \Sigma q_0 p_0$, ցույց է տալիս, թե ինչպես է փոփոխվել ապրանքաշրջանառությունը բացարձակ արտահայտությամբ՝ ի հաշիվ վաճառված ապրանքների ֆիզիկական ծավալի աճի (նվազման):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊ – այն ավելի հատկանշական է ապրանքաշրջանառության (I_{pq}), գների (I_p), և արտադրանքի ֆիզիկական ծավալի (I_q) ընդհանուր ինդեքսների միջև եղած կապով, որն արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$I_{pq} = I_p I_q$$

կամ՝

$$\frac{\sum p_1q_1}{\sum p_0q_0} = \frac{\sum p_1q_1}{\sum p_0q_1} \cdot \frac{\sum q_1p_0}{\sum p_0q_0} :$$

Յուրաքանչյուր ընդհանուր ինդեքսի համարիչի և հայտարարի տարբերությունն արտահայտում է ընդհանուր բացարձակ հավելաճի արժեքը որևէ գործոնի ազդեցության ներքո: Այդ տարբերությունների հանրահաշվական գումարը հավասար է ապրանքի արժեքի համարիչի և հայտարարի տարբերությանը.

$$(\sum q_1p_1 - \sum p_0q_1) + (\sum q_1p_0 - \sum p_0q_0) = \sum p_1q_1 - \sum p_0q_0 :$$

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ՄԱՍԻՆ – ընտրանքային մեթոդը ոչ համատարած դիտարկման տեսակներից մեկն է: Ընտրանքային մեթոդի ժամանակ հետազոտության է ենթարկվում համակցության մի որոշ մասը, իսկ համակցության այդ հետազոտվող մասը բնութագրող ընդհանրացնող ցուցանիշները տարածվում են ամբողջ համակցության վրա:

Միավորների ամբողջ համակցությունը, որից կատարվում է ընտրություն, կոչվում է *գլխավոր*: Գլխավոր համակցությունից որոշակի կարգով ընտրված մասը, որը ենթակա է ընտրանքային հետազոտության, կոչվում է *ընտրանքային* համակցություն: Գլխավոր համակցության ընդհանրացնող ցուցանիշները (միջինը, տեսակը, կշիռը, դիսպերսիան) կոչվում են *գլխավոր*, իսկ ընտրանքային համակցության համապատասխան ընդհանրացնող ցուցանիշներն՝ *ընտրանքային*:

Ընտրանքային մեթոդը ոչ համատարած դիտարկման մյուս տեսակներից տարբերվում է երկու հատկանիշով.

1. նախօրոք որոշվում է, թե գլխավոր համակցության քանի միավոր կամ միավորների որ մասը պետք է հետազոտվի,
2. նախօրոք որոշվում է միավորների ընտրության կարգը, որի դեպքում ընտրանքային համակցությունը անհրաժեշտ չափով ճիշտ կներկայացներ գլխավոր համակցությունը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ – բոլոր ավանդներն են և այլ միջոցները, որոնք որոշվում են պարտադիր պահուստների պահանջները (նորմատիվը) հաշվարկելու ժամանակ: Ընդգրկում

են կենտրոնական բանկում առևտրային ավանդները (դեպոզիտները) և կանխիկ թղթադրամներն ու մետաղադրամները՝ բանկի դրամապահոցում: Այն պարտադիր և ավելացուկային պահուստների հանրագումարն է:

ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ – տնտեսական միջոցների (ակտիվի) մի մասն են, որոնք արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռի 2-րդ բաժնում, և որում ներառվում են՝ նյութերը, աճեցվող և բտվող կենդանիները, արագամաշ առարկաները, ապրանքները, դրամական միջոցները, տրված ընթացիկ կանխավճարները, առևտրային դեբիտորական պարտքերը և ընթացիկ այլ ակտիվները:

ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐԻ (ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ) ՇՐՋԱՆԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ – դա արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից հասույթի (զուտ հասույթի) և ընթացիկ ակտիվների միջին մեծության հարաբերակցությունն է: Շրջանառելիության գործակիցը ցույց է տալիս հաշվետու կամ նախորդ ժամանակաշրջաններում ընթացիկ ակտիվների կատարած պտույտների թվաքանակը: Որքան բարձր լինի պտույտների թվաքանակը, կնշանակի, որ տվյալ տնտեսավարող սուբյեկտի ընթացիկ ակտիվների մեկ միավորը բերել է ավելի շատ իրացումից հասույթ (զուտ հասույթ), կամ այլ կերպ, այդ գործակիցը բնութագրում է միջին հաշվով ընթացիկ ակտիվներին բաժին ընկնող իրացումից հասույթի (զուտ հասույթի) գումարի չափը (վերջինիս փոխարեն կարող ենք օգտագործել նաև արտադրանքի իրացման ծավալը):

ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ – ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակցի հակադարձ մեծությունն է, որը ցույց է տալիս մեկ միավոր իրացումից հասույթին (զուտ հասույթին) բաժին ընկնող ընթացիկ ակտիվների միջին չափը: Որքան փոքր լինի այս գործակիցը, այսինքն՝ ընթացիկ ակտիվների պտույտի տևողությունը որքան ավելի փոքր ժամանակահատված ընդգրկի, կնշանակի, որ դրանք, հիմնականում գտնվելով արտադրության ու շրջանառության ոլորտում, նպաստում են նոր արդյունքի (արտադրանք, ապրանքներ) ստացմանը:

ԸՆԹԱՑԻԿ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ – դրանք եկամտի և ունեցվածքի գծով ընթացիկ հարկերը, սոցիալական ապահովագրության գծով հատկացումները, սոցիալական նպաստները, կամավոր մուծումները, ոչ կապիտալ բնույթի նվերներն են և այլն:

ԸՆԹԱՑԻԿ ԱՐԺԵՔ – 1) ապագա վճարումների կամ մուտքագրումների արժեքն է ներկա պահին՝ բերված (դիսկոնտավորված) այս կամ այն տոկոսադրույքի (բարդ տոկոսների հաշվարկման բանաձևի) հիման վրա, 2) ակտիվի արժեքն է՝ հաշվի առած նաև մաշվածությունը, այն երբեմն նշանակում է նաև հաշվեկշռային արժեք (հանած մաշվածությունը), 3) համաձայն ՀՀ հաշվապահական հաշվառման մասին օրենսդրության, ընթացիկ (վերականգնման) արժեքի դեպքում, ակտիվները գրանցվում են դրամական միջոցների այն գումարի չափով, որը կվճարվեր, եթե ներկա պահին միևնույն կամ համանման այլ ակտիվ ձեռք բերվեր, պարտավորությունները գրանցվում են դրամական միջոցների այն գումարի չափով, որն անհրաժեշտ կլիներ ներկա պահին առաջացող միևնույն պարտավորությունները մարելու համար:

ԸՆԹԱՑԻԿ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – դրանք են. ա) արտարժույթի փոխանցումները Հայաստանի Հանրապետություն և Հայաստանի Հանրապետությունից դուրս՝ ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների ներմուծման և արտահանման հաշվարկներն առանց վճարման հետաձգման իրականացնելու համար, ինչպես նաև 180 օրվանից ոչ ավելի ժամկետով արտահանման և ներմուծման գործառնությունների վարկավորման հետ կապված հաշվարկներն իրականացնելու համար, բ) կարճաժամկետ (180 օրվանից ոչ ավել) ֆինանսական միջոցների ձևով վարկեր ստանալը և տրամադրելը, գ) տոկոսների շահաբաժինների (դիվիդենտների) և բանկային ավանդներից, ինվեստիցիաներից ու ֆինանսական մյուս գործառնություններից ստացվող այլ եկամուտների փոխանցումները Հայաստանի Հանրապետություն և Հայաստանի Հանրապետությունից դուրս, ներառյալ՝ աշխատավարձի, կենսաթոշակների, ալիմենտի, ժառանգությունների, ֆինանսական մարդասիրական

օգնության, նվիրատվությունների և փոստային փոխանցումների ու համանման այլ գործառնություններ:

ԸՆԹԱՑԻԿ ԶՈՒՏ ԱՐԺԵՔ – որևէ նախագծի (օրինակ՝ կազմակերպության, ընկերության կամ որևիցե շինարարության) արժեքն է, որը հաշվարկվում է նրա ապագա գործունեության ընթացքում ստացվելիք եկամուտներից հանելով նախագծի իրականացման հետ կապված ամբողջ ծախսերը: Եթե ընթացիկ զուտ արժեքը դրական է, ապա նախագիծը եկամտաբեր է: Ապագա ծախսերը և եկամուտները պետք է բերվեն տվյալ պահի արժեքի՝ այս կամ այն տոկոսադրույքի (բարդ տոկոսների հաշվարկման բանաձևի), հիման վրա: Ընթացիկ զուտ արժեքի հաշվարկը բարդ է և ոչ հուսալի՝ ապագա տոկոսադրույքների անորոշության պատճառով: Նախագծի եկամտաբերությունն ավելի հեշտ է գնահատել ծախսերի ետգնման ժամկետը որոշելով:

ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ – 1) ամենօրյա օգտագործման և սպառման համար ապրանքների ու ծառայությունների վրա կատարված դրամական ծախսերն են, որոնք արտացոլվում են ընթացիկ հաշիվներում, 2) տվյալ ժամանակաշրջանում ու տվյալ պահին իրականացվող և վճարվող ծախսերն են, 3) բանկերի և այլ կազմակերպությունների կողմից կատարվող փոքր ծախսերն են, որոնք չեն փոխհատուցվում հաճախորդների կողմից:

ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – տնտեսական միջոցների մի մասի (ընթացիկ ակտիվների) կազմավորման աղբյուրներն են, որոնք արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռի պասիվում, և որում ներառվում են կարճաժամկետ բանկային վարկերը և փոխառությունները, վարկերի և փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսները, առևտրային կրեդիտորական պարտքերը, ստացված ընթացիկ կանխավճարները, կարճաժամկետ կրեդիտորական պարտքը բյուջեին և այլ ընթացիկ պարտավորությունները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՌԵԵՍՏՐ – դա մի ամփոփ փաստաթուղթ է, որում նշվում է բաժնետիրոջ մասին հետևյալ տվյալները, այդ թվում՝ լրիվ անվանումը (ֆիզիկական անձանց համար՝ ազգանունը և անունը), իրավաբանական անձանց

համար՝ գրանցման և փոստային հասցեն, նաև հաշվարկային հաշիվը, իսկ ֆիզիկական անձանց համար՝ անձնագրային տվյալները և փոստային հասցեն, արժեթղթերի քանակն ըստ տեսակների և ձևերի, այդ թվում՝ լրիվ վճարված, բաժնետոմսերի (այլ արժեթղթերի) ձեռք բերման ամսաթիվը և հիմքերը, բաժնետոմսերի (այլ արժեթղթերի) օտարման ամսաթիվը և հիմքերը, ռեեստրի մեջ գրանցման ամսաթիվը:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ – իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այն ձեռնարկությունն է, որը պատկանում է ընտանիքի անդամներին՝ նրանց համատեղ սեփականության իրավունքով: Ընտանեկան ձեռնարկության հիմնադիր փաստաթուղթը կանոնադրությունն է և կարող է գործել վարձու աշխատողների ընդգրկմամբ: Ընտանեկան ձեռնարկությունը կարող է զբաղվել օրենսդրությամբ իր համար չարգելված տնտեսական գործունեության ցանկացած ձևերով:

ԸՆՏՐԱՆՔ ԲՈՒՆ-ՊԱՏԱՀԱԿԱՆ – Բուն-պատահական ընտրանքի դեպքում գլխավոր համակցությունից հետազոտման համար միավորների (կամ միավորների խմբերի) ընտրումը կատարվում է չկանխամտածված, պատահական կարգով: Այդ նպատակով շատ հաճախ կիրառվում է վիճակահանություն:

Այսպես, բուն-պատահական ընտրանքի միջին սխալը կրկնվող ընտրանքի դեպքում արտահայտվում է հետևյալ բանաձևերով՝

$$\mu_{\bar{x}} = \sqrt{\frac{\sigma^2}{n}} = \frac{\sigma}{\sqrt{n}};$$

Համապատասխանաբար, ըստ տեսակարար կշիռների (բաժինների) ընտրանքի միջին սխալը հավասար է՝

$$\mu_w = \sqrt{\frac{w(1-w)}{n}};$$

Վերը նշված երկու բանաձևերից երևում է, որ ընտրանքի միջինը ուղիղ համեմատական է ցուցանիշի (հատկանիշի) միջին քառակուսային շեղմանը: Ուրեմն գլխավոր համակցության մեջ որքան մեծ է ցուցանիշի արժեքների տատանումը (դիսպեր-

սիան), այնքան մեծ է ընտրանքի միջին սխալը, և ընդհակառակը, ցուցանիշի արժեքների տատանման (դիսպերսիայի) փոքրացմամբ, փոքրանում է նաև ընտրանքի հնարավոր սխալի չափը:

Բուն-պատահական ընտրանքի միջին սխալի բանաձևերը չկրկնվող ընտրանքի համար ունեն հետևյալ տեսքը.

$$\mu_{\bar{x}} = \sqrt{\frac{\sigma^2}{n}\left(1-\frac{n}{N}\right)} \quad \text{և} \quad \mu_w = \sqrt{\frac{w(1-w)}{n}\left(1-\frac{n}{N}\right)}$$

որտեղ՝

σ^2-ն ընտրանքային դիսպերսիան է,

n-ը՝ ընտրանքի միավորների քանակը,

N-ը՝ գլխավոր համակցության ծավալը,

w-ն գլխավոր համակցությունից ընտրանքային բաժինն է կամ տեսակարար կշիռը:

ԸՆՏՐԱՆՔ ԿՐԿՆՎՈՂ – որի դեպքում ընտրանքի մեջ ընկած գլխավոր համակցության յուրաքանչյուր միավորը (կամ միավորների խումբը) մեզ հետաքրքրող ցուցանիշի չափերը գրանցելուց հետո նորից վերադարձվում է գլխավոր համակցություն, հետևապես, ընտրանքի մեջ կարող է ընկնել բազմաթիվ անգամ:

Կրկնվող ընտրանքի համար սահմանային սխալը (Δ) հավասար է՝

$$\Delta = t\sqrt{\frac{\sigma^2}{n}} \quad \text{կամ} \quad \Delta = t\sqrt{\frac{w(1-w)}{n}}$$

որտեղ

σ^2-ն դիսպերսիան է,

w-ն՝ ընտրանքում միավորների տեսակարար կշիռը կամ բաժինը,

n-ը գլխավոր համակցությունից ընտրված միավորների թվաքանակն է,

t-ն՝ վստահության գործակիցը:

Վերջինս տարբեր հավանականությունների դեպքում ունի այլ արժեքներ (երբ P=0,683, ապա t=1-ի, P=0,954, ապա t=2-ի,

P=0,997, ապա t=3-ի, P=0,999, ապա t=4-ի), որտեղից ընտրանքի անհրաժեշտ քանակությունը (n) որոշելու դեպքում հավասար է՝

$$n = \frac{t^2\sigma^2}{\Delta^2},\ \text{կամ տեսակարար կշռով՝}\ n = \frac{t^2 w(1-w)}{\Delta^2}:$$

ԸՆՏՐԱՆՔ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ – այնպիսի ընտրանք է, որի դեպքում միավորների ընտրությունը կատարվում է մեխանիկորեն, որոշակի միջակայքի միջոցով: Մեխանիկական ընտրանքը կազմակերպելու ժամանակ գլխավոր համակցության միավորները նախօրոք դասավորվում են որոշակի հերթականությամբ (այբբենական, աշխարհագրական սկզբունքով կամ որևէ ցուցանիշի արժեքների աճման կամ նվազման կարգով և այլն), որից հետո մեխանիկորեն, որոշակի միջակայքի միջոցով վերցնում են տրված քանակի միավորները:

ԸՆՏՐԱՆՔ ՉԿՐԿՆՎՈՂ – որի դեպքում ընտրանքի մեջ ընկած գլխավոր համակցության յուրաքանչյուր միավորը (կամ միավորների խումբը) մեզ հետաքրքրող ցուցանիշի չափերը գրանցելուց հետո այլևս գլխավոր համակցություն չի վերադարձվում:

Չկրկնվող ընտրանքի համար սահմանային սխալը (Δ) հավասար է՝

$$\Delta = t\sqrt{\frac{\sigma^2}{n}\left(1-\frac{n}{N}\right)}\quad \text{կամ}\quad \Delta = t\sqrt{\frac{w(1-w)}{n}\left(1-\frac{n}{N}\right)}$$

որտեղ՝

N-ը գլխավոր համակցության միավորների քանակն է, σ^2-ն կամ w(1-w)-ն դիսպերսիան է,

w-ն՝ ընտրանքում միավորների տեսակարար կշիռը կամ բաժինը:

Որտեղից ընտրանքի անհրաժեշտ քանակությունը (n), որոշելու դեպքում, հավասար է՝

$$n = \frac{t^2\sigma^2 N}{\Delta^2 N + t^2\sigma^2}:$$

Չկրկնվող ընտրանքի անհրաժեշտ քանակությունը կամ մասը որոշելու դեպքում, այն ներկայացվում է հետևյալ բանաձևով.

$$n = \frac{t^2 w(1-w)N}{\Delta^2 N + t^2 w(1-w)}:$$

ԸՆՏՐԱՆՔ ՍԵՐԻԱԿԱՆ – ընտրանքի տեսակներում (բունպատահական, մեխանիկական և տիպական) երբեմն նպատակահարմար է ոչ թե առանձին միավորների, այլ դրանց ամբողջ խմբերի ընտրում կատարել՝ այդպիսի խմբերում բոլոր միավորներն առանց բացառության դիտարկման ենթարկելու համար:

Օրինակ, տնտեսության այս կամ այն ճյուղում բանվորների աշխատանքի արտադրողականությունն ուսումնասիրելու ժամանակ ընտրանքային դիտարկումը հնարավոր է կազմակերպել այնպես, որ ոչ թե առանձին բանվորներ ընտրվեն, այլև մի քանի կազմակերպություններ՝ այնպես, որ այդ կազմակերպությունների բոլոր բանվորները, առանց բացառության, ենթարկվեն դիտարկման:

ԸՆՏՐԱՆՔ ՏԻՊԱԿԱՆ – այն դեպքում, երբ գլխավոր համակցությունը միատիպ չէ և դա ազդում է ուսումնասիրվող ցուցանիշի (հատկանիշի) չափերի վրա, ապա կատարվում է նրա նախնական բաժանում միատեսակ տիպական խմբերի: Խմբավորումը կատարվում է ուսումնասիրվող ցուցանիշների հետ կապված էական հատկանիշների հիման վրա: Օրինակ, բերքատվության ուսումնասիրման ժամանակ վարելահողերը խմբավորվում են ըստ հողի որակի, բնակչությունը՝ ըստ քաղաքայինի ու գյուղականի և այլն:

ԸՆՏՐԱՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԸՆՏՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ – ընտրանքային համակցության կազմավորման նպատակներով հետազոտվող գլխավոր համակցությունից հնարավոր են միավորների ընտրումների տարբեր եղանակներ: Ամենից առաջ պետք է տարբերել *անհատական և սերիական ընտրումները*: Անհատական ընտրման դեպքում ընտրանքային համակցությունը կազմավորվում է առանձին միավորների հաջորդական ընտրման ուղիով, սերիականի դեպքում՝ միավորների ամբողջ խմբերի (սերիաների) հետևողական ընտրման

ուղիով, որից հետո հետազոտվում են ընտրված խմբերի բոլոր միավորները: Անհատական և սերիական ընտրումներն իրենց հերթին կարող են կազմակերպվել որպես բունպահատական, մեխանիկական և տիպական ընտրում: Հաճախ ավելի բարձր ներկայացուցչության հասնելու նպատակով ընտրման այդ եղանակները զուգորդվում են: Այսպես, սերիական ընտրումը կարող է զուգորդվել տիպականի հետ, իսկ տիպականը՝ մեխանիկականի և այլն:

ԸՆՏՐԱՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՍԽԱԼ – այն նշանակելով (դելտա) տառով, իսկ t տառով՝ վստահության գործակիցը, ապա կախված որևէ (P=0,683; 0,954; 0,997 և 0,999) հավանականությունից, կարելի է երաշխավորել, որ ընտրանքի սահմանային սխալը չի գերազանցի t բազմապատիկ միջին սխալին: Այն կարելի է արտահայտել հետևյալ հավասարության տեսքով՝

$$\Delta = t \cdot \mu = t\frac{\sigma}{\sqrt{n}},$$

որտեղ՝

μ-ն ընտրանքի միջին սխալն է,

n-ը՝ ընտրված միավորների թվաքանակը,

σ-ն՝ միջին քառակուսային շեղումը:

Այն դրույթը, որ որոշակի հավանականությամբ ընտրանքային և գլխավոր ընդհանրացնող ցուցանիշների միջև եղած շեղումներն իրենց բացարձակ մեծությամբ չեն գերազանցի ընտրանքի սահմանային սխալին, բխում է մեծ թվերի օրենքի էությունից:

Թ

ԹՂԹԱԴՐԱՄ – 1) հատուկ թղթի վրա տպագրված դրամանիշեր են, որոնք համարվում են օրինական վճարամիջոց: Թղթադրամներն, ըստ էության, հանդիսանում են պայմանական դրամ, քանի որ դրանց իսկական արժեքը, որը չափվում է դրամանիշի, բանկնոտի պատրաստման վրա կատարված ծախսերով, շատ անգամ փոքր է դրամանիշի վրա նշված անվանական

արժեքից: Դրանք օգտագործվում են ի շնորհիվ իրենց էժանության և դրանցով շրջանառություն կատարելու հարմարավետության: Իրենց պատմական զարգացման ընթացքում թղթադրամները փոխարինել են մետաղադրամներին: Ունեն կեղծումից պաշտպանվելու մի քանի աստիճաններ: Թղթադրամները շրջանառության մեջ փոխարինում են լիարժեք փողին՝ ոսկուն և արծաթին, օժտված են հարկադիր փոխարժեքով: Շրջանառության մեջ թողարկվում են պետության (սովորաբար կենտրոնական բանկի) կողմից՝ իր ծախսերը ծածկելու համար, 2) բանկնոտներ և արժեթղթերի ցանկացած տեսակներ (չեկ, փոխանցելի մուրհակ և այլն), որոնք կարող են օգտագործվել դրամի (փողի) փոխարեն՝ նույնիսկ եթե օրինական վճարամիջոց չեն:

ԹՂԹԱԿԻՑ ԲԱՆԿ – 1) բանկ, որը թղթակցային հարաբերությունների պայմանագրի հիման վրա կատարում է վճարումներ, հաշվարկներ, այլ գործառնություններ մեկ այլ բանկի հանձնարարության և նրա հաշվին: Հանձնարարականները կատարելու համար թղթակից բանկերը բացում են հատուկ թղթակցային հաշիվներ (հաշվով թղթակից) կամ հաշիվներ են բացում երրորդ բանկում (թղթակիցներ առանց հաշվի): Թղթակից բանկը մյուս բանկերի գործակալն է, նրանց համար կատարում է որոշակի ծառայություններ, այդ թվում՝ պահում է հաշիվ հաշվարկների համար, կատարում է չեկային հաշվանցում, արտարժութային և այլ գործառնություններ: Որպես կանոն, տարբերում են թղթակից բանկեր միջազգային հարաբերություններում (բանկ-գործընկերը գտնվում է այլ պետությունում) և թղթակից բանկեր մեկ երկրում (տեղական թղթակից բանկեր): Հայրենական բանկի և այլ պետությունում գտնվող թղթակից բանկի միջև կարող են գոյություն ունենալ երկու տեսակի հարաբերություններ. ա) բանկը ազգային բանկի հաշվի կրեդիտին հաշվեգրում է գումարներ վճարման հանձնարարականներով և համապատասխանաբար դեբետագրում է իր մոտ բացված օտարերկրյա թղթակից բանկի հաշիվը, բ) տվյալ երկրի բանկը և օտարերկրյա բանկը միմյանց մոտ հաշիվներ չեն վարում, այլ փոխանակվում են հսկիչ փաստաթղթերով, 2) բանկ, որը հանդես է գալիս որպես ավանդատու մեկ այլ բանկի նկատմամբ:

ԹՂԹԱԿՑԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – 1) բանկերի միջև պայմանագրային հարաբերություններ են, որոնց նպատակը կողմերից որևիցե մեկի կողմից մյուսի հանձնարարականով վճարումներ և հաշվարկներ կատարելն է: Հաստատվում են ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս գտնվող բանկերի միջև թղթակցային պայմանագրի հիման վրա: Վերջիններիս միջոցով, մասնավորապես, որոշվում են հաշվարկների արժույթը, երրորդ երկրների հաշիվներին միջոցների մնացորդի փոխանցման կանոնները, հաշվի լրացման կարգը, միջնորդավճարի չափը և այլ պայմաններ: Բանկերը պայմանավորվում են նաև, թե ինչպիսի հաշիվներով պետք է տեղի ունենան փոխադարձ հաշվարկները, փոխանակում են պաշտոնատար անձանց ստորագրությունների նմուշների և կնիքների քարտերը, հեռագրական բանալիները, կոմիսիոն վարձատրության սակագները և այլ փաստաթղթեր: Միմյանց միջև թղթակցային հարաբերություններ հաստատած բանկերը միմյանց անվանում են թղթակիցներ: Թղթակիցների ցանցի առկայությունն ազատում է օտարերկրյա մասնաճյուղեր (բաժանմունքներ) ստեղծելու անհրաժեշտությունից, իսկ փոքր բանկերի համար տալիս է դեպի մեծածախ ֆինանսական շուկաներ մուտք գործելու հնարավորություն: Համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, բանկերը և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը պարտավոր են ՀՀ դրամով թղթակցային հաշիվ բացել ՀՀ կենտրոնական բանկում: Նրանք կարող են ՀՀ դրամով և արտարժույթով թղթակցային հաշիվներ բացել և վարել: Հաշվի բացման մասին սպասարկվող բանկը պարտավոր է հինգ բանկային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել ՀՀ կենտրոնական բանկին: 2) Երբ մի բանկ վճարում է որոշակի տոկոսավճար այլ բանկին՝ իր մոտ բացված թղթակցային հաշվում պահվող դրամական միջոցների մնացորդի դիմաց: Ստացվելիք եկամտի մեծությունը կախված է ինչպես տոկոսադրույքի չափից և տոկոսադրույքի հաշվարկման ձևից, այնպես էլ՝ թղթակցային միջոցների չափից և դրամական մնացորդը պահելու ժամկետից:

ԹՈՂԱՐԿՈՒՄ (ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) – իրենից ներկայացնում է հաշվետու տվյալ տարում տնտեսությունում, ընկերությունում, ֆիրմաներում արտադրված ապրանքների և ծառայությունների ընդհանուր արժեքը:

Ժ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԱՅԴ ՏԱՐԱԾՔԻՑ – ներմուծումը Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք՝ այդ տարածքից ետադարձ արտահանման պայմանով և արտահանումը Հայաստանի Հանրապետության տարածքից՝ այդ տարածք ետադարձ ներմուծման պայմանով:

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔ – արժեթղթերի, արտարժույթի վաճառքի գործարքն է, ըստ որի գնորդը ստանում է արժեթղթերը, արտարժույթը գործարքի կնքման պահին, իսկ դրանց վճարումը կատարում է որոշակի ժամանակ անց՝ գործարքի կնքման պահին ամրագրված գնով կամ փոխարժեքով:

ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏՔ – 1) իրական կամ պայմանական (այս կամ այն պայմաններից կախված) ֆինանսական պարտավորություն է, որը ժամկետային առումով դարձել է չկատարված: Հասկացությունը հաճախ կիրառվում է սպառողական վարկի, գրավականների, ռենտային վճարների գծով պարտավորությունների և այլ պարտավորությունների նկատմամբ, որոնք կարող են և պետք է մարվեն որոշակի օր, 2) դրամական միջոցներ են, որոնք պետք է վճարվեն, սակայն ժամկետային առումով վճարումը տեղի չի ունեցել, 3) կազմակերպությունների, ընկերությունների կողմից մատակարարներին, վարկային կազմակերպություններին, ֆինանսական մարմիններին, աշխատողներին ժամանակին չկատարված վճարումներն են:

Ի

ԻՄԻՋ – ապրանքի, տնտեսավարող սուբյեկտի, երկրի պատկերի նկարագիրը, հեղինակությունը և վարկանիշը բնորոշող հասկացություն է:

ԻՆԴԵՔՍ – հարաբերական մեծություն է, որը բնութագրում է ուսումնասիրվող երևույթի հարաբերակցությունն ըստ ժամանակի, տարածության մեջ կամ որևէ ցուցանիշի համեմատու-

թյունը ցանկացածի հետ (պլան, կանխատեսում, նորմատիվ և այլն):

Միջազգային պրակտիկայում ընդունված է ինդեքսները նշանակել փոքրատառ «i» կամ մեծատառ «I» սիմվոլներով: «i» տառով նշանակում են անհատական (մասնակի) ինդեքսները, իսկ «I» տառով՝ ընդհանուր ինդեքսները:

Այն ժամանակաշրջանի ցուցանիշները, որոնց հետ կատարվում է համեմատությունը, անվանում ենք *բազիսային ժամանակաշրջան,* որը նշանակվում է 0-ով, համեմատվող (հաշվետու, ընթացիկ) ժամանակաշրջանի ցուցանիշները նշանակվում են 1-ով:

Ինդեքսային մեթոդի օգտագործման ժամանակ կիրառվում է որոշակի նշանակումների համակարգ, որոնց օգնությամբ ինդեքսների բանաձևերի կառուցումը և գրելը դառնում են իմաստալից:

Յուրաքանչյուր ինդեքսավորվող ցուցանիշ, որի մակարդակների հարաբերակցությունը բնութագրում է ինդեքսը, ընդունված է նշանակել որոշակի տառերով: Այսպես՝

q-ն թողարկված արտադրանքի կամ վաճառված ապրանքների տվյալ տեսակի քանակն է բնեղեն արտահայտությամբ (ծավալային ցուցանիշ),

P-ն՝ արտադրանքի կամ ապրանքի միավորի գինը (որակական ցուցանիշ),

Z-ը՝ արտադրանքի միավորի ինքնարժեքն է արժեքային արտահայտությամբ (որակական ցուցանիշ),

t = T / q -ն տվյալ տեսակի արտադրանքի արտադրության միավորի վրա կատարված աշխատաժամանակի կամ աշխատանքային ծախսումներն են, այսինքն՝ արտադրանքի միավորի աշխատատարությունը (որակական ցուցանիշ),

T-ն՝ տվյալ տեսակի արտադրանքի արտադրության վրա ժամանակի (աշխատանքի) ընդհանուր ծախսումները կամ կազմակերպության (բաժնետիրական ընկերության) բանվորների թվաքանակը, միջին ցուցակային թիվը (ծավալային ցուցանիշ),

W = pq / T -ն տվյալ տեսակի արտադրանքի թողարկումն է արժեքային արտահայտությամբ, աշխատաժամանակի միավորի ընթացքում, այսինքն՝ աշխատանքի արտադրողականության մակարդակն է (որակական ցուցանիշ),

V-ն աշխատանքի արտադրողականությունն է բնեղեն արտահայտությամբ կամ միավոր ժամանակում (որակական ցուցանիշ),

d = zq -ն տվյալ տեսակի արտադրանքի արտադրության ընդհանուր ինքնարժեքն է, այսինքն՝ դրա արտադրության վրա կատարված դրամական ծախսումները (որակական ցուցանիշ),

Q = pq -ն թողարկված արտադրանքի կամ վաճառված ապրանքների տվյալ տեսակի ընդհանուր արժեքն է կամ ապրանքաշրջանառությունը (ծավալային ցուցանիշ):

ԻՆԴԵՔՍ ԱԳՐԵԳԱՏԱՅԻՆ – բարդ հարաբերական ցուցանիշ է, որը բնութագրում է սոցիալ-տնտեսական երևույթների միջին փոփոխությունը:

Ինդեքսի այդ ձևի յուրահատկությունն այն է, որ ագրեգատային տեսքով անմիջականորեն համեմատվում են երկու նույնանուն (համասեռ) ցուցանիշների գումարները: Ագրեգատային ինդեքսի համարիչը և հայտարարը երկու մեծությունների արտադրյալների գումար են, որոնցից մեկը փոփոխվում է (ինդեքսավորվող մեծություն), իսկ մյուսը՝ և՛ համարիչում, և՛ հայտարարում, մնում է հաստատուն:

ԻՆԴԵՔՍ ԱՆՀԱՏԱԿԱՆ – սովորական դինամիկայի հարաբերական մեծություն է, որը ստացվում է նույնանուն (համասեռ) երևույթների տարբեր մակարդակների հարաբերակցության արդյունքում:

Անհատական ինդեքսներն ըստ դինամիկայի, պլանի կատարման, համեմատման հարաբերական մեծություններ են:

Կախված տնտեսական ուղղվածությունից՝ անհատական ինդեքսները լինում են *արտադրանքի ֆիզիկական ծավալի, ինքնարժեքի, գնի, աշխատանքի արտադրողականության* և այլն:

ԻՆԴԵՔՍ ԱՆՀԱՏԱԿԱՆ՝ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ԱՊՐԱՆՔՆԵՐԻ) ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ ԳԾՈՎ (i_q) – իրենից ներկայացնում է հաշվետու և բազիսային ժամանակաշրջանների արտադրանքների (q_1 և q_0) ծավալների հարաբերակցություն.

$$i_q = \frac{q_1}{q_0}:$$

Այդ ինդեքսը ցույց է տալիս, թե թողարկվող ինչ-որ արտադրանք քանի անգամ է ավելացել (պակասել) հաշվետու ժամանակաշրջանում բազիսայինի համեմատությամբ, կամ քանի տոկոսով է աճել (նվազել) թողարկվող արտադրանքի ծավալը:

Նույն սկզբունքով կառուցվում են նաև այլ ինդեքսները.

- *Գնի անհատական ինդեքսը՝* (i_p)

$$i_p = \frac{P_1}{P_0},$$

բնութագրում է մեկ որոշակի ապրանքի գնի փոփոխությունը հաշվետու ժամանակաշրջանում բազիսայինի համեմատությամբ:

- *Արտադրանքի միավորի ինքնարժեքի անհատական ինդեքսը* (i_z).

$$i_z = \frac{Z_1}{Z_0},$$

ցույց է տալիս արտադրանքի միավորի ինքնարժեքի փոփոխությունը հաշվետու ժամանակաշրջանում բազիսային ժամանակաշրջանի համեմատությամբ:

- *Աշխատանքի արտադրողականության անհատական ինդեքսը (i_v) բնեղեն արտահայտությամբ.*

$$i_v = \frac{V_1}{V_0} = \frac{q_1}{T_1} : \frac{q_0}{T_0},$$

որտեղ՝

V_1 և V_0-ն հաշվետու և բազիսային ժամանակաշրջանների աշխատանքի արտադրողականություններն են,

q_1-ը և q_0-ն հաշվետու և բազիսային ժամանակաշրջանների արտադրված արտադրանքների ծավալներն են,

T_1 և T_0-ն հաշվետու և բազիսային ժամանակաշրջանների աշխատաժամանակը կամ աշխատողների միջին ցուցակային թիվն է:

- *Աշխատանքի արտադրողականության անհատական ինդեքսը (i_v) ըստ աշխատատարության.*

$$i_v = \frac{t_0}{t_1},$$

քանի որ՝

$$V \cdot t = \frac{q}{T} \cdot \frac{T}{q} = 1,\ V = \frac{1}{t},$$

որտեղ՝ t_1-ը և t_0-ն հաշվետու և բազիսային ժամանակաշրջանների աշխատատարությունները կամ աշխատանքի արտադրողականության հակադարձ մեծություններն են նույն ժամանակաշրջաններում:

- *Մեկ բանվորի աշխատանքի արտադրողականության (i_w)* բնութագրման համար հաճախ օգտվում ենք թողարկվող արտադրանքի արժեքային արտահայտությունից՝

$$i_w = \frac{W_1}{W_0} = \frac{q_1 p}{T_1} : \frac{q_0 p}{T_0},$$

որտեղ՝ P-ն համադրելի գինն է:

ԻՆԴԵՔՍ ԱՆՀԱՏԱԿԱՆ՝ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐԺԵՔԻ (ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ) ԳԾՈՎ (i_{pq}) – ցույց է տալիս, թե հաշվետու ժամանակաշրջանում բազիսային ժամանակաշրջանի համեմատությամբ քանի՞ անգամ է փոփոխվել ինչ-որ ապրանքի արժեքը, կամ քանի՞ տոկոս է կազմում ապրանքի արժեքի աճը (նվազումը):

Այն որոշվում է $i_{pq} = \frac{q_1 p_1}{p_0 q_0}$ բանաձևով:

ԻՆԴԵՔՍ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԳՆԵՐԻ (ԱԱԳ) – բնութագրում է արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գների (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի) փոփոխությունը ժամանակի ընթացքում:

Արդյունաբերական արտադրանքի գների փոփոխության դիտարկումն իրականացվում է ընտրանքային կարգով ընտրված արդյունաբերության ոլորտի բազային կազմակերպությունների տվյալների հիման վրա:

Գների գրանցումն իրականացվում է ապրանքների որոշակի ցանկով, որտեղ ներգրավված է հիմնական որակական հատկանիշներով, օգտագործվող հումքով և արտադրության տեխնոլոգիական գործընթացներով իրար մոտ, առավել ներկայացուցչական արտադրանք: Ըստ արդյունաբերության ճյուղերի և ենթաճյուղերի, գների ինդեքսների հաջորդական փոխկապակցված հաշվարկների համար որպես կշռման բազա օգտագործվում են արդյունաբերական արտադրանքի բազիսային տվյալները:

ԻՆԴԵՔՍ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ – բնութագրում է տրանսպորտի տարբեր տեսակներով բեռնափոխադրումների սակագների փոփոխությունները ժամանակի ընթացքում: Կարգավորվում է հանրապետությունում գործող 4 տեսակի՝ ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, խողովակաշարային բեռնափոխադրումների սակագների հաշվարկված ինդեքսների միջոցով, որը որոշում է տրանսպորտի առանձին տեսակներով բեռնափոխադրումների սակագների շարժն ընթացիկ ժամանակահատվածում բազիսայինի համեմատ՝ առանց հաշվի առնելու տեղափոխվող բեռների կառուցվածքային փոփոխությունների հետ կապված հանգամանքները (բեռի տեսակը, փոխադրման չափը, տեղ հասցնելու արագությունը և այլն): Տրանսպորտի յուրաքանչյուր տեսակի գծով (ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, խողովակաշարային) գրանցվում է ծառայություն իրականացնողի բեռնափոխադրման սակագինը, ինչով պայմանավորվում է տրանսպորտի կոնկրետ տեսակով առավել հաճախ փոխադրվող մեկ միավոր բեռի (տոննա, խորանարդ մետր) առաքումը տարածության վրա (որոշակի երթուղով): Որպես կշռման բազա ընդունվում են որոշակի բազիսային ժամանակահատվածում (հիմնականում նախորդ տարում) բեռների տեղափոխման ծառայությունների դիմաց տրանսպորտային կազմակերպությունների կողմից ներկայացված եկամուտների մասին տվյալները:

ԻՆԴԵՔՍ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՆԵՐԻ – բնութագրում է արտադրության միջոցների գնման գների փոփոխությունների շարժը հաշվետու ժամանակահատվածում բազիսայինի համեմատ:

ԻՆԴԵՔՍ ԳՅՈՒՂՄԹԵՐՔ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԳՆԵՐԻ – արտահայտում է գյուղատնտեսական մթերք արտադրողի տարբեր ուղղություններով իրացված մթերքի գների փոփոխությունները ժամանակի, ինչպես նաև տարածության մեջ: Որպես անհատական ինդեքսների կշռման բազա օգտագործվում է հաշվետու ամսում իրացված արտադրանքի ծավալը:

ԻՆԴԵՔՍ ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ – որոշվում է միջին ամսական անվանական աշխատավարձի և ապրանքների ու ծառայությունների սպառողական գների ինդեքսների հարաբերակցությամբ: Երկու ինդեքսներն էլ պետք է վերաբերվեն միևնույն ժամանակաշրջանին:

ԻՆԴԵՔՍ ԿԱՅՈՒՆ ԿԱԶՄՈՎ – կշռված միջինների հարաբերակցությունն է նույն կշիռներով (կայուն կառուցվածքի դեպքում): Այն հաշվի է առնում միայն ինդեքսավորվող մեծության փոփոխությունը և ցույց է տալիս ուսումնասիրվող համակցության միավորի ($\bar{x}$) միջինի փոփոխման չափը:

Ընդհանուր տեսքով կայուն կազմի ինդեքսը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$I_{կկ} = \frac{\sum x_1 f_1}{\sum f_1} : \frac{\sum x_0 f_1}{\sum f_1} :$$

Կայուն կազմի ինդեքսի հաշվարկման համար կարելի է օգտվել ագրեգատային ինդեքսի բանաձևից՝

$$I_{կկ} = \frac{\sum x_1 f_1}{\sum x_0 f_1} :$$

Օրինակ, արտադրանքի ինքնարժեքի կայուն կազմի ընդհանուր ինդեքսն ունի հետևյալ տեսքը՝

$$I_{zկկ} = \frac{\sum z_1 q_1}{\sum q_1} : \frac{\sum z_0 q_1}{\sum q_1} = \frac{\sum z_1 q_1}{\sum z_0 q_1},$$

որտեղ՝

q_1-ը արտադրված (թողարկված) արտադրանքի կամ վաճառված ապրանքների տվյալ տեսակի քանակն է բնեղեն արտահայտությամբ,

z_1-ը և z_0-ն համապատասխանաբար բազիսային և հաշվետու ժամանակաշրջաններում արտադրանքի միավորի ինքնարժեքն է արժեքային արտահայտությամբ:

ԻՆԴԵՔՍ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺՈՎ – բնութագրում է ուսումնասիրվող երևույթի կառուցվածքի փոփոխության ազդեցությունը ինդեքսավորվող միջին մակարդակի դինամիկայի վրա և հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$I_{կտ} = \frac{\sum x_0 f_1}{\sum f_1} : \frac{\sum x_0 f_0}{\sum f_0} :$$

Օրինակ, արտադրանքի ինքնարժեքի կառուցվածքային տեղաշարժերի ինդեքսը կլինի՝

$$I_{zկտ} = \frac{\sum z_0 q_1}{\sum q_1} : \frac{\sum z_0 q_0}{\sum q_0} :$$

Կառուցվածքային փոփոխություն ասելով հասկանում ենք համակցության առանձին խմբերի միավորների մասի փոփոխությունը՝ նրանց ընդհանուր թվաքանակի նկատմամբ:

Փոփոխական ($I_{փկ}$), կայուն ($I_{կկ}$) և կառուցվածքային տեղաշարժերի ($I_{կտ}$) ընդհանուր ինդեքսների միջև կա փոխադարձ կապ, որոնք արտահայտվում են հետևյալ բանաձևերով.

$$I_{կկ}=\frac{I_{փկ}}{I_{կտ}}, \qquad I_{փկ}=I_{կկ}\cdot I_{կտ}, \qquad I_{կտ}=\frac{I_{փկ}}{I_{կկ}}$$

ԻՆԴԵՔՍ ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ – հիմքում ընկած են հանրապետությունում ընտրանքային ցանցի բազային շինարարական կազմակերպությունների նյութերի, դետալների ու շինարարական այլ տարրերի գրանցված արժեքները, աշխատողների աշխատավարձը: Հաշվարկը կատարվում է հատուկ մշակված տեխնոլոգիական մոդելներով, որոնք իրեն-

ցից ներկայացնում են շինմոնտաժային աշխատանքների ծախսերը բնութագրող նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների ցանկ:

ԻՆԴԵՔՍ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՆԵՐԻ – հաշվարկվում է ըստ կապիտալ ներդրումների տեխնոլոգիական կառուցվածքային բաղադրամասերի (շինմոնտաժային աշխատանքների, մեքենասարքավորումների կապիտալ ներդրումների, այլ կապիտալ աշխատանքների և ծախսերի)՝ կշռված ընդհանուր ծավալում դրանց բաժնեմասով:

ԻՆԴԵՔՍ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ – բնութագրում է բնակչության անձնական սպառման համար ձեռք բերված ապրանքների և ծառայությունների գների (սակագների) ընդհանուր մակարդակի փոփոխությունը ժամանակի ընթացքում: Գների գրանցումն իրականացվում է մայրաքաղաքի և տարածաշրջանային կենտրոնական քաղաքների որոշակի շրջանակի առևտրային ու ծառայության ոլորտի սեփականության տարբեր ձևերի կազմակերպությունների ընտրանքային համակարգում: Գների ինդեքսների հաջորդական փոխկապակցված հաշվարկի (ագրեգատային) համար օգտագործվող կշիռների համակարգը, ըստ տնային տնտեսությունների հետազոտությունների ծախսերի, հաշվարկվում է նախորդ տարվա տվյալների հիման վրա: Հանրապետության միջին գների մակարդակը որոշվում է որպես առանձին տարածաշրջանների գների մակարդակների կշռված միջին թվաբանական մեծություն:

ԻՆԴԵՔՍ ՓՈՓՈԽԱԿԱՆ ԿԱԶՄՈՎ – երկու կշռված միջին արժեքների հարաբերակցությունն է փոփոխվող կշիռներով, որը բնութագրում է ինդեքսավորվող ցուցանիշի (միջինացվող) փոփոխությունը:

Ցանկացած որակական x ցուցանիշի համար փոփոխական կազմի ինդեքսն ունի հետևյալ տեսքը՝

$$I_{\bar{x}} = \frac{\overline{x_1}}{\overline{x_0}} = \frac{\sum x_1 f_1}{\sum f_1} : \frac{\sum x_0 f_0}{\sum f_0} :$$

որտեղ՝

x_1 և x_0 -ն ինդեքսավորվող ցուցանիշի միջինացվող մակարդակներն են հաշվետու և բազիսային ժամանակաշրջանում,

f_1-ը և f_0 -ն կշիռներն են:

Օրինակ, մի քանի տնտեսավարող սուբյեկտներում թողարկվող միատեսակ արտադրանքի ինքնարժեքի փոփոխական կազմով ընդհանուր ինդեքսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$I_{\bar{z}} = \frac{\overline{Z_1}}{\overline{Z_0}} = \frac{\sum z_1 q_1}{\sum q_1} : \frac{\sum z_0 q_0}{\sum q_0} :$$

Փոփոխական կազմի ինդեքսն արտացոլում է ոչ միայն ինդեքսավորվող մեծության (տվյալ դեպքում ինքնարժեքի), այլ նաև համակցության կառուցվածքի փոփոխությունը:

ԻՆԴԵՔՍ՝ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ – հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$I_t = \frac{\sum t_0 q_1}{\sum t_1 q_1},$$

որտեղ՝

t_0-ն և t_1-ը համապատասխանաբար բազիսային և հաշվետու ժամանակաշրջաններում միավոր արտադրանքի վրա կատարված աշխատանքային ծախսումներն են,

q_1-ը հաշվետու ժամանակաշրջանի արտադրանքի քանակը:

Այն ցույց է տալիս, թե քանի՞ անգամ է մեծացել (փոքրացել) աշխատանքի արտադրողականությունը, կամ քանի՞ տոկոս է կազմում աշխատանքային ծախսումների իջեցումը հաշվետու ժամանակաշրջանում բազիսայինի համեմատությամբ:

ԻՆԴԵՔՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ – իրենից ներկայացնում է ինդեքսների հաջորդական կառուցման շարքը: Համեմատության բազայից կախված, ինդեքսային համակարգը կարող է լինել *բազիսային և շղթայական:*

Բազիսային ինդեքսների համակարգը միևնույն երևույթի հաջորդական ինդեքսների հաշվարկն է՝ հաստատուն պահելով

համեմատման բազան, այսինքն՝ կոտորակի հայտարարում բոլոր ինդեքսների ինդեքսավորվող մեծությունները գտնվում են բազիսային ժամանակաշրջանում: Շղթայական ինդեքսների համակարգը միևնույն երևույթի ինդեքսների շարքն է՝ հաշվարկված համեմատության փոփոխական բազայով, այսինքն՝ ամեն հաջորդ ժամանակաշրջանի մակարդակի հարաբերությունը նախորդ ժամանակաշրջանի մակարդակին:

Բազիսային և շղթայական ինդեքսների միջև գոյություն ունի որոշակի կապ, եթե հայտնի են շղթայական ինդեքսները, ապա դրանց հաջորդական բազմապատկման եղանակով կարելի է ստանալ բազիսային ինդեքս.

$$\frac{p_1}{p_0} \cdot \frac{p_2}{p_1} \cdot \frac{p_3}{p_2} \cdots \frac{p_{n-1}}{p_{n-2}} \cdot \frac{p_n}{p_{n-1}} :$$

Կամ ունենալով հաջորդական բազիսայինները, կարելի է որոշել շղթայական ինդեքսները՝ հաջորդ բազիսային ինդեքսը բաժանելով նախորդ բազիսային ինդեքսի վրա.

$$\frac{p_2}{p_0} \cdot \frac{p_1}{p_0} = \frac{p_2}{p_1} :$$

Ինդեքսների համակարգի կառուցման դեպքում կարելի է օգտվել կայուն և փոփոխական կշիռներից:

ԻՆԴԵՔՍԱՎՈՐՈՒՄ – դրամական պահանջների և եկամուտների վերահաշվարկ՝ գների ընդհանուր մակարդակի բարձրացմանը զուգընթաց, գների ինդեքսի փոփոխությանը համամասնաբար աշխատավարձի, հարկերի, սոցիալական վճարումների և կենսաթոշակների բարձրացումը: Նման քաղաքականությունը նպատակ է հետապնդում մեղմելու գնաճի (սղաճի) բացասական հետևանքները: Ինդեքսավորման պայմանը կարող է ներառվել պայմանագրի մեջ՝ որպես հատուկ վերապահում: Գերգնաճի պայմաններում ինդեքսավորումը հղի է գների և աշխատավարձերի մրցավազքով: Իրական կյանքում լրիվ ինդեքսավորումը գործնականում անհնարին է, և գնաճի հետևանքով միշտ որևիցե մեկը մյուսներից շատ է տուժում (օրինակ՝

պարտատերերը, որոնք խնայում են դրամը), իսկ ինչ-որ մեկ ուրիշը շահում է (պարտապանները):

ԻՆԴԵՔՍՆԵՐ ՄԻՋԻՆ – հաշվարկվում է որպես անհատական ինդեքսների միջին մեծություն, որոնց դեպքում օգտագործվում են միջինի երկու ձև՝ թվաբանական ու հարմոնիկ (ներդաշնակ): Միջին թվաբանականի ինդեքսը ագրեգատային ինդեքսի նույնությունն է, եթե անհատական ինդեքսների կշիռները ագրեգատային ինդեքսի հայտարարի բաղադրիչն են:

Միայն այդ դեպքում ինդեքսի մեծությունը հավասար կլինի ագրեգատային ինդեքսին՝ հաշվարկված միջին թվաբանականի բանաձևով:

Արտադրանքի ֆիզիկական ծավալի միջին թվաբանականի ընդհանուր ինդեքսը որոշվում է ըստ հետևյալ բանաձևի.

$$i_q = \frac{\sum i_q p_0 q_0}{\sum p_0 q_0},$$

որտեղ՝

q_0-ն և p_0-ն բազիսային ժամանակաշրջանում համապատասխանաբար արտադրված (թողարկված) արտադրանքի քանակն է և միավոր արտադրանքի գինը:

Քանի որ ըստ անհատական ինդեքսի՝ $i_q \cdot q_0 = q_1$, դրա ընդհանուր ինդեքսի բանաձևը հեշտությամբ կարելի է ձևափոխել վերը նշված բանաձևի: Այս բանաձևում որպես կշիռ հանդես է գալիս արտադրանքի գինը՝ բազիսային ժամանակաշրջանում:

Աշխատանքի արտադրողականության միջին թվաբանականի ընդհանուր ինդեքսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$I_t = \frac{\sum i_t t_1 q_1}{\sum t_1 q_1} = \frac{\sum i_t T_1}{\sum T_1},$$

որտեղ՝

i_t-ն աշխատատարության անհատական ինդեքսն է,

t_1-ը հաշվետու ժամանակաշրջանում տվյալ տեսակի արտադրանքի արտադրության միավորի վրա կատարված աշխատանքային ծախսումներն են,

q_1-ը հաշվետու ժամանակաշրջանում արտադրված (թողարկված) արտադրանքի քանակն է,

T_1-ը՝ տվյալ տեսակի արտադրանքի արտադրությանը մասնակցած աշխատողների միջին ցուցակային թիվը կամ ծախսված աշխատաժամանակը:

Քանի որ ըստ աշխատատարության անհատական ինդեքսի՝ $i_t \cdot t_1 = t_0$, այդ ինդեքսի ընդհանուր բանաձևը կարելի է ձևափոխել աշխատանքի աշխատատարության ագրեգատային տեսքի: Այս պարագայում որպես կշիռ ընդունվում է արտադրանքի արտադրության վրա ժամանակի ընդհանուր ծախսը՝ հաշվետու ժամանակաշրջանում:

Աշխատանքի արտադրողականության Ստրումիլինի միջին թվաբանականի ընդհանուր ինդեքսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$I_v = \frac{\sum\left(\frac{q_1}{T_1} : \frac{q_0}{T_0}\right)T_1}{\sum T_1} :$$

Ինդեքսը ցույց է տալիս, թե քանի՞ անգամ է ավելացել (պակասել) աշխատանքի արտադրողականությունը, կամ քանի՞ տոկոս է կազմում աշխատանքի արտադրողականության աճը (նվազումը) միջինում՝ ըստ ուսումնասիրվող համակցության բոլոր միավորների:

Ինքնարժեքի միջին հարմոնիկ (ներդաշնակ) ընդհանուր ինդեքսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$I_z = \frac{\sum z_1 q_1}{\sum \frac{z_1 q_1}{i_z}}$$

որտեղ՝

z_1-ը հաշվետու ժամանակաշրջանում արտադրանքի միավորի ինքնարժեքն է արժեքային արտահայտությամբ,

i_z-ը ինքնարժեքի անհատական ինդեքսն է:

Ինքնարժեքի միջին հարմոնիկ ինդեքսը որոշելիս որպես կշիռ վերցնում ենք արտադրության ծախսը՝ հաշվետու ժամանակաշրջանում:

Գնի միջին հարմոնիկ ընդհանուր ինդեքսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$I_p = \frac{\sum p_1 q_1}{\sum \frac{p_1 q_1}{i_p}},$$

որտեղ i_p-ն արտադրանքի ֆիզիկական ծավալի անհատական ինդեքսն է:

Գնի ինդեքսը որոշելիս որպես կշիռ ընդունում ենք արտադրանքի գինը՝ հաշվետու ժամանակաշրջանում:

ԻՆԴԵՔՍՆԵՐ ՏԵՐԻՏՈՐԻԱԼ (ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ) – վիճակագրության պրակտիկայում հաճախ անհրաժեշտություն է առաջանում համեմատելու տնտեսական երևույթների մակարդակները տարածության մեջ ըստ երկրների, տնտեսական շրջանների, մարզերի, այսինքն՝ հաշվարկելու տերիտորիալ ինդեքսները: Դրանք կառուցելու և հաշվարկելու համար անհրաժեշտ է որոշել համեմատական բազան ու կշիռները: Եթե օրինակ, համեմատում ենք տարբեր՝ A և B երկրների նույնատիպ ապրանքների գները, ապա այդ դեպքում անհրաժեշտ է կառուցել երկու տերիտորիալ ինդեքսներ՝

$$I_{p_{A/B}} = \frac{\sum p_A q_A}{\sum p_B q_A} \quad \text{և} \quad I_{p_{B/A}} = \frac{\sum p_B q_B}{\sum p_A q_B}$$

որտեղ՝ $I_{p_{A/B}}$ ($I_{p_{B/A}}$) ինդեքսը ցույց է տալիս, որ որպես համեմատական բազա ընդունում ենք A և B երկրների տվյալները՝ երևույթների մակարդակների հարաբերակցության մասին:

Ֆիզիկական ծավալի տերիտորիալ ինդեքսներում որպես չափակցելի կշիռներ կարող են հանդես գալ միջին գները.

$$I_{q_{A/B}} = \frac{\sum q_A \bar{p}}{\sum q_B \bar{p}} \quad \text{կամ} \quad I_{q_{B/A}} = \frac{\sum q_B \bar{p}}{\sum q_A \bar{p}},$$

որտեղ՝

$$\bar{p} = \frac{\sum p_1 q_1}{\sum q_1};$$

ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿԱՅՈՒՆ ԿՇԻՌՆԵՐՈՎ – միևնույն երևույթի ամփոփ ինդեքսների համակարգն է, որոնց կշիռները չեն փոփոխվում մեկ ինդեքսից մյուսին անցնելիս: Կայուն կշիռները թույլ են տալիս բացառելու կառուցվածքի փոփոխության ազդեցությունը ինդեքսի մեծության վրա:

Օրինակ, արտադրանքի ֆիզիկական ծավալի բազիսային ընդհանուր ինդեքսի համակարգը հաստատուն կշռով (p_0) ունի հետևյալ տեսքը՝

$$\frac{\sum q_1 p_0}{\sum q_0 p_0}, \frac{\sum q_2 p_0}{\sum q_0 p_0}, \dots, \frac{\sum q_n p_0}{\sum q_0 p_0},$$

իսկ շղթայական ինդեքսների համակարգը այդ նույն հաստատուն կշռով ներկայացվում է այսպես՝

$$\frac{\sum q_1 p_0}{\sum q_0 p_0}, \frac{\sum q_2 p_0}{\sum q_1 p_0}, \dots, \frac{\sum q_n p_0}{\sum q_{n-1} p_0}:$$

ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ – որտեղ միավորվում են երեք ընդհանուր ինդեքսներ, այդ թվում՝ ըստ փոփոխական կազմի, կայուն կազմի և կառուցվածքային տեղաշարժերի:

ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՓՈՓՈԽՈՒՆ ԿՇԻՌՆԵՐՈՎ – միևնույն երևույթի ամփոփ ինդեքսների համակարգն է, որոնց կշիռները փոփոխվում են մեկ ինդեքսից մյուսին անցնելիս: Փոփոխուն կշիռը հաշվետու ժամանակաշրջանի կշիռն է:

Օրինակ, գնի բազիսային ինդեքսի համակարգը փոփոխուն կշիռներով ունի հետևյալ տեսքը՝

$$\frac{\sum p_1 q_1}{\sum p_0 q_1}, \frac{\sum p_2 q_2}{\sum p_0 q_1}, \dots, \frac{\sum p_n q_n}{\sum p_0 q_1}:$$

Այս համակարգի տարրերը դեֆլյատոր-ինդեքսներ են, որոնք անհրաժեշտ են ազգային հաշիվների համակարգում (ԱՀՀ) վերահաշվարկելու համար արժեքային ցուցանիշները՝ համադրելի գներով:

Գնի շղթայական ինդեքսի համակարգը փոփոխուն կշիռներով կլինի՝

$$\frac{\sum p_1q_1}{\sum p_0q_1}, \frac{\sum p_2q_2}{\sum p_1q_2}, \dots, \frac{\sum p_nq_n}{\sum p_{n-1}q_n}:$$

Այս համակարգի առանձին ինդեքսներն օգտագործվում են հաշվետու ժամանակաշրջանի արժեքային ցուցանիշները նախորդ ժամանակաշրջանի գներով վերահաշվարկելիս:

ԻՆԴՈՍԱՄԵՆՏ – փոխանցագիր է, որը սովորաբար առնչվում է արժեթղթերի (մուրհակ, չեկ և այլն) հետ ու նշված է դրա հակառակ կողմում: Այն վկայում է որևիցե մեկ անձից (ինդոսանտին-փոխանցորդից) մեկ այլ անձին (ինդոսանտին-փոխանցագիրն ընդունողին) փաստաթուղթը փոխանցելու մասին իրավունքը:

ԻՆԴՈՍԱՆՏ – ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը մեկ ուրիշ անձի տալով մուրհակի գծով իր իրավունքը, նրա հակառակ կողմում նշում է «Փոխանցման համաձայնություն» մակագրությունը:

ԻՆԴՈՍԱՏ – ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի օգտին փոխանցվում է փաստաթուղթը (մուրհակը, չեկը և այլն) ինդոսամենտի միջոցով (առանց հետադարձ պահանջի իրավունքի):

ԻՆԿԱՍԱՑԻԱ – դա ծեռնարկությունների, հիմնարկությունների, կազմակերպությունների դրամարկղերում եղած կանխիկ դրամի և արժեքների հավաքագրումն ու դրանք վարկային հիմնարկությունների (բանկերի) դրամարկղում տեղավորելու ծառայությունների մատուցումն է:

ԻՆԿԱՍՈ – բանկային գործառնության տեսակ է, ըստ որի բանկը մատակարարի հանձնարարությամբ իր վրա է վերցնում գնորդից վճարման ենթակա դրամական միջոցների գանձումը հաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

ԻՆՎԵՍՏԻՑԻԱ – շահույթ ստանալու նպատակով երկրի ներսում և արտերկրում կապիտալի երկարաժամկետ ներդրումն է տարբեր ճյուղերի տնտեսավարող սուբյեկտներում, ձեռնարկատիրական ու նորամուծությունների նախագծերում և սոցիալ-տնտեսական ծրագրերում:

ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ – կազմակերպություն, որն իր կամ այլ անձանց անունից և հաշվին իրականացնում է արժեթղթերի առուծախ:

ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ – արժեթղթերի թողարկմամբ, տեղաբաշխմամբ, վերավաճառքով զբաղվող և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող տնտեսավարող սուբյեկտ է, որը հիմնադրվում է սահմանափակ պատասխանատվությամբ կամ բաժնետիրական ընկերության կարգավիճակով:

ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ – կազմակերպություն, որն իրականացնում է արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման և շրջանառության վերաբերյալ խորհրդատվական ծառայություններ:

ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ – իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող սուբյեկտ է՝ հիմնադրված սահմանափակ պատասխանատվությամբ կամ բաժնետիրական ընկերության ձևով, որն իրականացնում է ներդրողի դրամական միջոցների հավաքագրում և արժեթղթերում այդ միջոցների ներդրում:

ԻՆՖԼՅԱՑԻԱ – դրամի արժեզրկումն է, որն առաջանում է ապրանքների և ծառայությունների գնի աճման հետևանքով ու պայմանավորված չէ դրանց որակի բարձրացման հետ: Կամ այլ կերպ, դա շրջանառության ոլորտի գերլցումն է թղթադրամով, որն առաջացնում է դրա արժեզրկում: Այդ թղթադրամի ավելցուկի հայտնվելը սովորաբար կապված է բյուջեի դեֆիցիտի հետ, երբ պետությունն իր կտրուկ աճող ծախսերը (կապված պատերազմների, սպառազինությունների մրցավազքի, տնտեսական ճգնաժամերի հետ) ի վիճակի չէ ծածկելու եկամտի սովորական աղբյուրներից և ստիպված լրացուցիչ դրամ է թողարկում: Ինֆլյացիայի հետևանքով թղթադրամը ոսկու նկատ-

մամբ արժեզրկվում է այն չափով, որքանով շրջանառող թղթադրամի քանակը գերազանցում է ապրանքային շրջանառության սպասարկմանն անհրաժեշտ ոսկե դրամի քանակը: Ինֆլյացիայից ավելի շատ տուժում է աշխատավորությունը, որի իրական աշխատավարձն իջնում է մեծ չափերով՝ կապված սպառման ապրանքների գների բարձրացման հետ:

ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ – ակտիվի, աշխատավարձի, շահույթի և այլնի արժեքն է, որը ճշգրտված է ըստ գների մակարդակի փոփոխության, մասնավորապես գնաճի (սղաճի): Արտահայտվում է որևէ բազիսային տարվա հաստատուն և ոչ թե ընթացիկ գներով: Այսպես, անվանական աշխատավարձը կարող է ավելացված լինել, մինչդեռ իրական աշխատավարձը մնացած լինի նույնը, եթե աշխատավարձն աճում է գնաճի (սղաճի) չափով: Իսկ եթե անվանական աշխատավարձն աճում է սղաճից պակաս չափով, ապա իրական աշխատավարձը նվազում է, այսինքն՝ փոքրանում է աշխատավարձի գնողունակությունը:

ԻՐԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ – դրանք ընթացիկ ժամանակաշրջանի դրամական եկամուտներն են՝ ճշգրտված սպառողական ապրանքների և ծառայությունների գների ինդեքսով:

ԻՐԱԿԱՆ ՁՈՒՏ ԱՐԺԵՔ – կազմակերպության զուտ արժեքն է՝ գումարած նաև պարտատերերի (դեբիտորների) առումով երկրորդական պարտքերը:

ԻՐԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ – անփոփոխ գներով ծախսեր են, որոնք արտահայտվում են անփոփոխ գնողունակությամբ, արժույթով կամ ճշգրտվում են որևէ ինդեքսի միջոցով:

ԻՐԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ – գնաճից (սղաճից) մաքրված տոկոսադրույքն է, որը հավասար է անվանական տոկոսադրույքի և գնաճի (սղաճի) մակարդակի տարբերությանը: Դա այնպիսի տոկոսադրույք է, որով անձը ձեռք է բերում դրամական ակտիվների ապագա գնողունակությունը: Իրական տոկոսադրույքը հանդես է գալիս երկու ձևով. ա) մինչև ենթադրվող գնաճի (սղաճի) ժամանակաշրջանի վրա հասնելը, որին սպա-

սում են պարտատերերն ու փոխառուները փոխատվությունների տրամադրման պահին, բ) իրական, փաստացի և կայացած:

ԻՐԱԿԱՆ ՓՈԽԱՐԺԵՔ – արտացոլում է տարբեր արժույթներով արտահայտված միևնույն ապրանքների գների հարաբերակցությունը, որով կարգավորվում է երկրների միջև ապրանքափոխանակության համամասնությունը: Կախված է անվանական փոխարժեքից, արժույթների փոխարժեքների հարաբերակցությունից և ազգային արժույթներով արտադրանքի գներից: Իրական փոխարժեքն իրենից ներկայացնում է անվանական փոխարժեքի և տարբեր երկրների գների մակարդակների հարաբերակցության արտադրյալ:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐ – դրանք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպությունները: Առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների ձևով: Կոոպերատիվները՝ կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ նման նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ: Ոչ առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել հասարակական միավորումների, հիմնադրամների, իրավաբանական անձանց միությունների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ձևերով: Ոչ առևտրային կազմակերպությունները կարող են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նրանք ստեղծվել են, և համապատասխանում է այդ նպատակներին: Ձեռնակատիրական գործունեության իրականացման համար ոչ առևտրային կազմակերպություններն իրավունք ունեն ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակիցը:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՉՈՒՆԵՑՈՂ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏ – այն չի համարվում իր սեփականատիրոջից առանձին իրավունքի սուբյեկտ: Այդպիսի սուբյեկտի սեփականատերը պարտավորությունների համար պատասխանատու է իր ունեցած այն գույքով, որի նկատմամբ օրենսդրությամբ սահմանված կարգով կարելի է բռնագանձում կատարել:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏ – իրավունքի ինքնուրույն սուբյեկտ է, որի գույքը, իրավունքներն ու պարտականությունները առանձնացված են դրա սեփականատիրոջ (սեփականատերերի) այլ գույքից, իրավունքներից և պարտականություններից: Տնտեսավարող սուբյեկտի պարտավորությունների համար պատասխանատու է իրավաբանական այդ անձը, իսկ սեփականատերը պատասխանատու չէ իր այլ գույքով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ – դա այն կազմակերպությունն է, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ կրող պարտականություններ ու դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Իրավաբանական անձը պետք է ունենա ինքնուրույն հաշվեկշիռ:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՎ – գրավի առարկան օտարման ենթակա իրավունքն է, ներառյալ՝ հողամասի, շենքի, շինության, բնակելի տան (բնակարանի) նկատմամբ վարձակալության իրավունքը, տնտեսական ընկերակցության կամ ընկերության գույքում բաժնեմասի իրավունքը, պարտքի պահանջները: Ժամկետային իրավունքը գրավի առարկա կարող է լինել միայն մինչև դրա գործողության ժամկետի ավարտը: Գրավ դրված իրավունքի պարտապանը պետք է անհապաղ տեղեկացվի գրավի մասին:

ԻՐԱՑՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼ – ա) դա սեփական արտադրության արժեքն է, ըստ որի, հաշվետու ժամանակաշրջանում փաստացի բեռն առաքվել կամ հանձնվել է սպառողներին (ներառյալ նաև այն արտադրանքը, որն ակտով տեղում հանձնվել

է պատվիրատուին), բ) կատարված աշխատանքներն ու ծառայություններն են, որն ընդունել է պատվիրատուն, անկախ նրանից՝ վճարը մուտքագրվել է արտադրողի հաշվին, թե՝ ոչ:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ) – դրանք են. 1) Սեփական ընթացիկ ակտիվների (ՍԸԱ) մեծությունը կամ գործող կապիտալը, որը բնորոշում է տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր իրացվելիությունը: Գործող կապիտալի փոփոխությունը կախված է մի շարք գործոններից, այդ թվում՝ ճյուղային պատկանելիությունից, բանկերի վարկավորման պայմաններից, շահութաբերությունից, աշխատանքների կազմակերպման մակարդակից և այլն: Այդ ցուցանիշը ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների գումարների տարբերությունն է: 2) Գործող կապիտալի շարժունակության գործակիցը, որը ցույց է տալիս տվյալ ժամանակաշրջանի (տարի, եռամսյակ) սկզբի կամ վերջի դրությամբ նյութական ընթացիկ ակտիվների շարժունակությունը սեփական ընթացիկ ակտիվների նկատմամբ: Այն արտահայտվում է նյութական ընթացիկ ակտիվների և սեփական ընթացիկ ակտիվների հարաբերակցությամբ: Որքան տվյալ ցուցանիշի մեծությունը փոքրանա, տնտեսավարող սուբյեկտը ֆինանսապես ավելի կայուն վիճակում կլինի, քանի որ նյութական ընթացիկ ակտիվները (արտադրական պաշարները) անընդհատ կգտնվեն արտադրության ոլորտում և կստեղծեն ավելի շատ նոր ապրանքային արժեքներ: 3) Բացարձակ իրացվելիության գործակիցը, որը ցույց է տալիս, թե ընթացիկ (կարճաժամկետ) փոխառու պարտավորությունների որ մասը կարող է մարվել անմիջապես տվյալ պահի դրությամբ: Այն ներկայացնում է դրամական միջոցների, կարճաժամկետ ֆինանսական ներդրումների գումարների և ընթացիկ պարտավորությունների հարաբերակցությունը: Այս գործակիցն արդյունավետ է համարվում այն դեպքում, երբ փոքր չէ 0,25-ից կամ 25%-ից: Այսինքն, տնտեսավարող սուբյեկտը տվյալ պահի դրությամբ ունի մեկ միավոր կարճաժամկետ պարտքի մարման դիմաց 0,25 միավորից ոչ պակաս դրամական միջոցներ և կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ՝ արժեթղթերի տեսքով: 4) Արագ իրացվելիության գործակիցը, որը ցույց է տալիս, թե ընթացիկ պարտավորությունների որ մասը կարող է մարվել ոչ միայն ունեցած դրամական միջոցների և

կարճաժամկետ ֆինանսական ներդրումների, այլև սպասվող դեբիտորական պարտքերի և այլ ընթացիկ ակտիվների մուտքերի հաշվին: Այն արտահայտվում է նշված ցուցանիշների մեծությունների գումարի և ընթացիկ պարտավորությունների հարաբերակցությամբ: Այս գործակիցն արդյունավետ է համարվում 0,8–1,0 միավորից պակաս չլինելու դեպքում: 5) Ընթացիկ իրացվելիության գործակիցը, որը ցույց է տալիս, թե տնտեսավարող սուբյեկտը որքանով է պատրաստ իր տրամադրության տակ եղած ընթացիկ ակտիվներով մարել բոլոր տեսակի կարճաժամկետ պարտավորությունները (կարճաժամկետ բանկային վարկերն ու փոխառությունները, կրեդիտորական պարտքերը և այլն): Այն ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հարաբերակցությունն է: Տնտեսապես զարգացած երկրներում նորմալ է համարվում, երբ ընթացիկ իրացվելիության գործակիցը տատանվում է 2,0–3,0-ի սահմաններում: Եթե այս գործակիցը աճում և գերազանցում է սահմանված նորման, ապա դա վկայում է ընթացիկ ակտիվների անարդյունավետ օգտագործման մասին, այսինքն՝ դանդաղում է արտադրական պաշարների, դեբիտորական պարտքերի շրջանառելիությունը, մեծանում է անհուսալի դեբիտորական պարտքերի գումարի չափը և այլն: 6) Ընդհանուր կապիտալում (ակտիվներում) ընթացիկ ակտիվների տեսակարար կշիռը կամ բաժինը, որը բնութագրում է տնտեսավարող սուբյեկտի ապահովվածության աստիճանը ընթացիկ ակտիվներով: Այն արտահայտվում է ընթացիկ ակտիվների և ընդհանուր կապիտալի հարաբերակցությամբ: Այս ցուցանիշը միաժամանակ ցույց է տալիս ընթացիկ ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվների հանրագումարում, որի մեծությունը կախված է ճյուղային պատկանելիությունից և դրանց շրջանառելիությունից (պտույտներով): Վերջիններիս թվաքանակի ավելացումը վկայում է, որ ընթացիկ ակտիվներն արդյունավետ են օգտագործվել: 7) Ընթացիկ ակտիվներում արտադրական պաշարների տեսակարար կշիռը կամ բաժինը, որը ցույց է տալիս տնտեսավարող սուբյեկտի արտադրական պաշարներով ապահովվածության աստիճանը: Այն արտահայտվում է նյութական ընթացիկ (շրջանառու) ակտիվների և ընթացիկ ակտիվների հարաբերակցությամբ: Այս ցուցանիշը բնութագրում է տվյալ ժամանակաշրջանի սկզբում կամ վերջում ընթացիկ ակտիվների մեկ միավորին բաժին

ընկնող արտադրական պաշարների գումարի չափը: Որքան փոքր լինի այդ մեծությունը, կնշանակի տնտեսավարող սուբյեկտի պաշարները գտնվում են արտադրական գործընթացի փուլում և ստեղծում են պատրաստի արտադրանք: 8) Պաշարների ծածկման գործակիցը, որը բնութագրում է տնտեսավարող սուբյեկտի նյութական ընթացիկ ակտիվների մեկ միավորին բաժին ընկնող սեփական ընթացիկ ակտիվների գումարի չափը: Այս ցուցանիշն արդյունավետ է համարվում, եթե մեծ է 1,0 գործակցից: Հետևաբար, որքան բարձր լինի այն, կնշանակի տնտեսավարող սուբյեկտն ի վիճակի է ժամանակին ձեռք բերելու արտադրական պաշարներ:

Ցուցանիշները հաշվարկելու ժամանակ օգտագործվում են հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության տվյալները:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ – միջոցառումների ամբողջություն է, որոնք իրականացվում են ընկերությունների, բանկերի և ֆիրմաների կողմից, իրացվելիության ցանկալի մակարդակ ապահովելու նպատակով, այսինքն՝ արտադրական կազմակերպության, բանկի ունակությունն է ցանկացած պահին բավարարելու իր ժամկետային պարտավորությունները: Իրացվելիության կառավարման ժամանակ ընկերությունները ձգտում են իրենց ակտիվները տեղաբաշխել պասիվների գումարների և ժամկետներին համապատասխան ապահովել կանխիկ դրամական միջոցների կամ բարձր իրացվելի արժեթղթերի (պետական արժեթղթերի, հայտնի ընկերությունների բաժնետոմսերի) որոշակի մակարդակի առկայություն, կնքել առևտրային բանկերի հետ վարկային գիծ բացելու մասին համաձայնագրեր և այլն:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅՈՒՆ – տնտեսավարող սուբյեկտի ընդունակությունն է ժամանակին կատարելու իր պարտավորությունները և իրեն ներկայացված օրինական դրամական պահանջները, կամ ֆինանսավորել՝ իր ենթակայության ակտիվներն ավելացնելու համար: Կախված է տվյալ սուբյեկտի ակտիվների և պասիվների ընթացիկ հավասարակշռվածության աստիճանից: Իրացվելիությունը և շահութաբերությունը սովորաբար իրարամերժ նպատակներ են, քանի որ բարձր իրացվելի ակտիվ-

ները, որպես կանոն, ցածր եկամտաբեր են կամ եկամտաբեր չեն:

ԻՐԱՑՈՒՄԻՑ ՀԱՍՈՒՅԹ – եկամտի կազմում ներառվող այն դրամական միջոցներն են, որոնք ստացվում են արտադրանքի իրացումից, ապրանքների վաճառքից, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման դիմաց վճարներից:

ԻՐԱՑՈՒՄԻՑ ՇԱՀՈՒՅԹ (ՎՆԱՍ) – արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից հասույթի (առանց անուղղակի հարկերի և այլ հաստատագրված վճարների) և լրիվ ինքնարժեքի գումարների տարբերությունն է:

Լ

ԼԵՎԵՐԻՋ – 1) համամասնություն է, որն արտահայտում է ընկերությունների կողմից թողարկվող փոխառությունների, արտոնյալ բաժնետոմսերի (ֆիքսված շահաբաժին ապահովող բաժնետոմսի արժեքը) և սովորական կամ հասարակ բաժնետոմսերի (ֆիքսված շահաբաժին չապահովող բաժնետոմսի արժեքը) միջև եղած հարաբերակցությունը, 2) ընկերության սեփական կապիտալի ու պարտավորությունների (փոխառու կապիտալի) հարաբերակցությունն է, և որքան բարձր լինի այդ հարաբերակցության մեծությունը, կնշանակի, տվյալ ընկերությունը գտնվում է ֆինանսապես կայուն վիճակում:

ԼԵՎԵՐԻՋԻ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ – 1) կազմակերպության հաշվեկշռի առանձին խումբ ցուցանիշների հարաբերակցություններն են, որոնք ցույց են տալիս սեփական (և ոչ թե փոխառու) կապիտալի հաշվին կազմակերպության ֆինանսավորման աստիճանը: Այս գործակիցներին առաջին հերթին վերաբերում է սեփական և փոխառու կապիտալների միջև հարաբերակցությունը: Համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, բանկերի գործունեության վերլուծության համար օգտագործվում է ընդհանուր կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցությունը՝ որպես կապիտալի լևերիջի ցուցանիշ, 2) լրացուցիչ փոխառու կապիտալի ներգրավման ճանապարհով լրա-

ցուցիչ եկամուտների ապահովում: Լևերիջի գործակիցները կազմակերպության վճարունակության մակարդակը բնութագրող կարևոր ցուցանիշներից են:

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ (ՎՍՏԱՀԱԳԻՐ) – համարվում է գրավոր վստահություն լիազորություն, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է տալ անմիջականորեն համապատասխան երրորդ անձին: Նոտարական ձև պահանջող գործարքներ կնքելու համար լիազորագիրը պետք է վավերացնի նոտարը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ԼԻԲՈՐ – միջին տոկոսադրույք, որով Լոնդոնի բանկերը եվրարժույթով կարճաժամկետ (սովորաբար 3-6 ամիս ժամկետով) վարկեր են տրամադրում մյուս առաջնակարգ բանկերին: ԼԻԲՈՐ-ն արտացոլում է փոխատվական կապիտալների միջազգային շուկայի պայմանները և առևտրային բանկերի կողմից, որպես հիմք, ծառայում է հաճախորդներին տրամադրվող փոխառությունների տոկոսադրույքը սահմանելու համար: ԼԻԲՈՐ-ի տոկոսադրույքի սանդղակի պաշտոնական սահմանում գոյություն չունի և յուրաքանչյուր խոշոր լոնդոնյան բանկ այն սահմանում և փոխում է դրամական իրավիճակից կախված: Գործնականում ավանդույթ է ձևավորվել հիմնական տոկոսադրույքները սահմանել յուրաքանչյուր գործարար օրվա առավոտյան ժամը 11-ին: Այդ դրույքները սովորաբար կիրառվում են որպես հիմք՝ տատանվող տոկոսադրույքի պայմաններով միջնաժամկետ բանկային վարկեր տրամադրելիս:

ԼԻԶԻՆԳ (ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ) – շենքերի, փոխադրամիջոցների, մեքենաների, սարքավորումների երկարատև վարձակալումն է: Այն սեփականատիրոջը հնարավորություն է տալիս եկամուտ ստանալ ժամանակավորապես ազատ միջոցներից, իսկ վարձակալին՝ նվազագույն կապիտալի ներդրմամբ սկսել կամ ընդլայնել իր արտադրությունը կամ միջին կամ երկար ժամկետայնության ֆինանսական միջոց է, որն օգտագործվում է մեխանիզմների, սարքավորումների, ավտոմեքենաների և կամ գույքի գնման նպատակով:

Լիզինգն իրենից ներկայացնում է մի գործարք, ըստ որի, լիզինգային ընկերությունը, բանկը, վարկային կազմակերպությունը կամ առանձին արտադրող, հաճախորդին ժամանակավոր օգտագործման իրավունքով ապրանք է տրամադրում, իսկ հաճախորդը պարտավորվում է ապրանքն օգտագործելու դիմաց կանոնավոր վճարումներ կատարել: Կախված լիզինգի տեսակից՝ապրանքը ժամկետի ավարտին կարող է դառնալ հաճախորդի սեփականությունը կամ վերադարձվել լիզինգային ընկերությանը:

Լիզինգով հիմնականում տրվում են այնպիսի ապրանքներ, որոնք նախատեսվում են ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու համար: Լիզինգը հաճախորդին հնարավորություն կտա արդյունավետ ձևով համալրելու իր հիմնական միջոցները՝ առանց անշարժ գույքի կամ որևէ այլ սեփականության գրավադրման:

ԼԻԶԻՆԳ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ – 1) լիզինգի (վարձակալության) ցանկացած ձև է, բացի ֆինանսական լիզինգից, 2) լիզինգ, ըստ որի լիզինգառուն կարող է դադարեցնել իր գործունեությունը: Լիզինգը (վարձակալությունը) կարող է շարունակվել, կարող է նաև չշարունակվել վարձակալվող գույքի շահագործման ամբողջ ժամկետի ընթացքում: Գործառնական լիզինգը, ի տարբերություն ֆինանսական լիզինգի, որպես կանոն, կնքվում է զգալիորեն ավելի կարճ ժամկետով, քան վարձակալվող գույքի ամորտիզացիոն (ծառայության) ժամկետն է, իսկ լիզինգառուն կրում է պատասխանատվություն դրա տեխնիկական վիճակի և սպասարկման համար: Լիզինգի պայմանագիրն ավարտվելուց հետո, վարձակալության օբյեկտը վերադարձվում է տիրոջը: Լիզինգատուն ստիպված է լինում այն հանձնել ժամանակավոր օգտագործման մի քանի անգամ, և նրա համար մեծանում է լիզինգի օբյեկտի մնացորդային արժեքի փոխհատուցման ռիսկը՝ դրա նկատմամբ պահանջարկի բացակայության ժամանակ: Դրա հետ կապված լիզինգային վճարների չափերն անհամեմատ ավելի բարձր են, քան ֆինանսական լիզինգի դեպքում: Գործառնական լիզինգը հնարավորություն է տալիս միևնույն տեխնիկական միջոցներով բավարարել մեծ թվով կազմակերպությունների կարիքները: Լիզինգի այս ձևը անվանում են նաև սպասարկմամբ վարձակալություն:

ԼԻԶԻՆԳ ՕՊԵՐԱՏԻՎ – ի տարբերություն ֆինանսական լիզինգի, օպերատիվ լիզինգի ժամանակ լիզինգատուն սարքավորումը ձեռք է բերում նախօրոք, նախքան լիզինգառուի հետ պայմանագիր կնքելը: Օպերատիվ լիզինգի պայմաններում վարձակալության ժամկետն ավելի փոքր է, քան տվյալ սարքավորման բարոյական մաշվածության ժամկետը: Օպերատիվ լիզինգի ժամանակ լիզինգավճարների չափը սովորաբար ավելի բարձր է, քան ֆինանսական լիզինգի ժամանակ:

ԼԻԶԻՆԳ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ – 1) համաձայնագիր է, որը նախատեսում է իր գործողության ընթացքում լիզինգավճարների հատուցում, որով ծածկվում են սարքավորման լրիվ ամորտիզացիայի արժեքը, լրացուցիչ ծախսերը և լիզինգատուի շահույթը: Ֆինանսական լիզինգը բնութագրվում է հետևյալ հիմնական առանձնահատկություններով. ա) երրորդ կողմի (սարքավորում արտադրողի կամ մատակարարի) մասնակցությամբ, բ) լիզինգի պայմանագրի համեմատաբար երկարատևությամբ (այն մոտավորապես հավասար է սարքավորման ծառայության ժամկետին), գ) լիզինգի առարկաները հիմնականում թանկարժեք սարքավորումներ են: 2) Ըստ որի, վարձատուն պարտավորվում է վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշված մատակարարից (վաճառողից) և վճարի դիմաց այդ գույքը հանձնել վարձակալին՝ նրա ժամանակավոր տիրապետմանը: Այդ դեպքում վարձատուն պատասխանատվություն չի կրում վարձակալության համար որոշված առարկայի և վաճառողի ընտրության համար: Ֆինանսական վարձակալության պայմանագրով կարող է նախատեսվել, որ վաճառողի և ձեռք բերվող գույքի ընտրությունը կարող է կատարել վարձատուն, և միաժամանակ վարձակալված գույքը՝ վարձակալության ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը, անցնի վարձակալի ենթակայության տակ որպես սեփականություն՝ վարձակալի կողմից պայմանագրով նախատեսված գինը վճարելու պայմանով:

ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔ –

1. Լիզինգառուի կողմից կատարվում է լիզինգով ձեռք բերվող գույքի ընտրություն:

2. Լիզինգային ընկերության և լիզինգառուի միջև կնքվում է ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիր:
3. Ըստ լիզինգի պայմանագրի, լիզինգային ընկերությունը պարտավորվում է լիզինգառուի նշած գույքը ձեռք բերել նրա կողմից որոշված վաճառողից և վճարի դիմաց հանձնել լիզինգառուի ժամանակավոր տիրապետմանը: Վաճառողի և լիզինգային ընկերության միջև կնքվում է առքուվաճառքի պայմանագիր և լիզինգային ընկերությունը ձեռք է բերում համապատասխան գույքը:
4. Տեղի է ունենում գույքի մատակարարում վաճառողից լիզինգառուին:
5. Լիզինգառուն ֆինանսական վարձակալության պայմանագրով նախատեսված վճարումներ է կատարում լիզինգային ընկերությանը: Ընդ որում՝ պայմանագրի ավարտից հետո գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է անցնել լիզինգառուին կամ լիզինգատուին:

ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ – 1. Լիզինգատու (վարձատու) – լիզինգատուն (վարձատու) այն ֆինանսական հաստատությունն է, որը գնում է լիզինգառուի կողմից ընտրված սարքավորումը և սահմանված ժամկետով տրամադրում այն վերջինիս:

Որպես լիզինգատու կարող են հանդես գալ բանկերը, լիզինգային ընկերությունները, սարքավորումներ արտադրողները կամ մատակարարները և ոչ բանկ ֆինանսական հաստատությունները:

2. Լիզինգառու (վարձակալ) – ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը ձեռնարկատիրական գործունեության համար ստանում է արտադրական միջոցներ՝ լիզինգատուի հետ համաձայնեցված պայմաններով: Լիզինգառուն (վարձակալ) լիզինգի պայմանագրով սահմանված ժամկետում կանոնավոր վճարումներ է կատարում լիզինգատուին՝ նախօրոք համաձայնեցված տոկոսադրույքով:

3. Վաճառող (մատակարար) – ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը համաձայն լիզինգատուի հետ կնքած առքուվաճառքի պայմանագրի, պայմանավորված ժամկետում նրան է վաճառում լիզինգի առարկա հանդիսացող գույքը: Եթե

տեղի է ունենում գույքի ապահովագրություն, ապա գործարքի սուբյեկտ է հանդիսանում նաև ապահովագրական ընկերությունը:

ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – որոնք սեփականության իրավունքով ձեռք են բերում տարաբնույթ ակտիվներ և վարձակալական հիմունքներով տրամադրում են հաճախորդներին:

ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ – այս դեպքում բանկը ձեռք է բերում սարքավորումներ կամ մեքենաներ և վարձակալության հիմունքներով դրանք տրամադրում է իր հաճախորդներին, լիզինգավճար ստանալու ակնկալիքով:

ԼԻԶԻՆԳԻ (ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ) ՈՒՂՂԱԿԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ – փոխառու միջոցների հաշվին հաստատագրված ակտիվների (հիմնական միջոցների) ձեռք բերման ժամկետային ֆինանսավորման ձև է: Վարկատուի և պարտապանի միջև հարաբերությունների տեսանկյունից վարձակալությունը (լիզինգը) նման է վարկերին, քանի որ վարձակալության դեպքում ևս հաշվի են առնվում վարձակալի դրամական հոսքերը, գնահատվում է նրա վարկային պատմությունը, կառավարման մակարդակը և ապագա գործառնությունների նախագծերը:

ԼԻԶԻՆԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ – Լիզինգի երկու հիմնական տեսակներն են՝

- ֆինանսական լիզինգ,
- գործառնական լիզինգ:

Ֆինանսական լիզինգի դեպքում լիզինգային ընկերությունը, բանկը կամ վարկային կազմակերպությունը (լիզինգատուն) պարտավորվում է ձեռք բերել լիզինգառուի կողմից նշված գույքը և այն որպես լիզինգի առարկա հանձնել լիզինգառուի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը՝ որոշակի վճարի դիմաց, որոշակի ժամկետով, որոշակի պայմաններով: Ընդ որում՝ լիզինգային ընկերությունը, բանկը կամ վարկային կազմակերպությունը գնում է այդ ապրանքը լիզինգառուի կողմից նշված վաճառողից և հանդիսանում է այդ ապրանքի սեփականատերը, իսկ լիզինգառուին փոխանցվում է սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հասույթները:

Ֆինանսական լիզինգի դեպքում այն ժամկետը, որով լիզինգի առարկան տրամադրվում է լիզինգառուին, համադրելի է գույքի լրիվ ամորտիզացման (մաշվածության) ժամկետի հետ, իսկ լիզինգի առարկան կարող է անցնել լիզինգառուին որպես սեփականություն ժամկետի ավարտից հետո կամ ժամկետից շուտ՝ միայն գույքի արժեքի ամբողջական վճարումից հետո:

Գործառնական լիզինգի դեպքում լիզինգատուն իր հայեցողությամբ ձեռք է բերում գույք և այն որպես լիզինգի առարկա հանձնում լիզինգառուի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը՝որոշակի վճարի դիմաց, որոշակի ժամկետով, որոշակի պայմաններով: Գործառնական լիզինգի առարկա հանդես է գալիս այնպիսի գույքը, որը հարկավոր է լիզինգառուին կարճաժամկետ, միանգամյա և սեզոնային օգտագործման համար, ինչպես նաև այնպիսի տեխնիկա, որը բարոյապես շուտ է մաշվում:

ԼԻԶԻՆԳՆ ԻՆՉ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ – Լիզինգը լիզինգառուին հնարավորություն է տալիս ձեռք բերել թանկարժեք սարքավորումներ՝ առանց կանխիկ մեծ շրջանառության ծավալներ ունենալու, և կատարվում է սարքավորումների արժեքի ավելի մեծ մասի ֆինանսավորում (մինչև 80%) ավելի ցածր կանխավճարով, քան՝ վարկի դեպքում:

Եթե լիզինգառուն ունի նոր փոքր կամ միջին ձեռնարկություն, որը չունի վարկային պատմություն կամ գրավի համար բավարար միջոցներ, ապա լիզինգը նրան ֆինանսավորման հնարավորություն է տալիս:

Լիզինգը հիմք է ընդունում ոչ թե լիզինգառուի վարկային պատմությունը կամ հաշվեկշիռը, այլ նրա գործարար գործառնությունների արդյունքում լիզինգի վճարումներն իրականացնելու համար դրամական միջոցներ գոյացնելու կարողությունը: Կազմակերպությանը ներկայացվելիք լիզինգային ֆինանսավորման պարագայում հաշվեկշռային պահանջները վարկի համեմատ առավել խիստ չեն: Լիզինգով վերցված գույքն արտացոլվում է ետհաշվեկշռային մասում՝ չազդելով կազմակերպության պարտքի մեծության վրա:

Ի համեմատություն վարկի՝ լիզինգային փաստաթղթերի ձևակերպումն ավելի մատչելի է:

Ի տարբերություն վարկի՝ չի պահանջվում գույքի գրավադրում:

Ի տարբերություն սովորական վարձակալության՝ սարքավորումը ժամկետի վերջում կարող է դառնալ լիզինգառուի սեփականությունը:

Լիզինգի դեպքում հնարավոր է լիզինգառուին տրամադրվեն հարկային արտոնություններ (Օրինակ՝ եթե լիզինգի առարկան ՀՀ սահմանին ազատված է ԱԱՀ-ից, ապա լիզինգի տրամադրման գործընթացը նույնպես ազատվում է ԱԱՀ-ից):

Լիզինգի պարագայում լիզինգավճարների ժամկետները, ծավալը և պարբերականությունը առավելագույնս համապատասխանեցվում են արտադրական պարբերաշրջաններին:

ԼԻԶԻՆԳՆ ԻՆՉՈՎ Է ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՎԱՐԿԻՑ – Լիզինգը ժամկետայնության, վերադարձելիության և հատուցման սկզբունքների տեսանկյունից շատ մոտ է վարկին, սակայն լիզինգը չի կարելի վարկ համարել: Վարկ վերցնելիս, պայմանագրում նշված օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է վարկառուին, իսկ լիզինգի դեպքում՝ վարձատուն (լիզինգատուն) պահպանում է օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը, իսկ լիզինգառուին փոխանցվում է օբյեկտն օգտագործելու իրավունքը: Վարկի դեպքում վաճառողի հետ իրավահարաբերություններում գնորդ է համարվում վարկառուն կամ նրա ներկայացուցիչը, իսկ լիզինգի դեպքում՝ լիզինգատուն: Վարկի դեպքում երաշխիք է համարվում գրավը կամ երաշխավորությունը, իսկ լիզինգի դեպքում՝ լիզինգի օբյեկտը: Վարկի դեպքում մարումը կատարվում է հիմնականում շահույթի հաշվին, իսկ լիզինգի դեպքում՝ապրանքի ինքնարժեքում արտացոլված և այլ հատկացումների հաշվին:

ԼԻԶԻՆԳՈՎ ԻՆՉ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԿԱՐԵԼԻ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ – Լիզինգի առարկա կարող է լինել ցանկացած թանկարժեք գույք.

- ավտոմեքենաներ և տրանսպորտային միջոցներ (բեռնատար, մարդատար, երթուղային, օդային տրանսպորտ և այլն),
- հատուկ նշանակության սարքավորումներ (շինարարական, ճանապարհաշինության, նավթահանման և գազահանման, հանքարդյունաբերական),

- արտադրական սարքավորումներ (փայտամշակման, սննդարդյունաբերական, կաթնամթերքի արտադրության և այլն),
- հատուկ նշանակության սարքեր (հեռահաղորդակցման, գյուղատնտեսական, տպագրական սարքավորումներ, սառնարաններ, ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման, համակարգչային սարքավորումներ և այլն):

Լիզինգի առարկա չեն կարող լինել հողատարածքները և այլ բնական համալիրները, ինչպես նաև՝ շուկայում ազատ շրջանառության արգելք ունեցող գույքը:

ԼԻՑԵՆԶԻԱ – 1) արտահանման, ներմուծման և արժույթի շարժի վերահսկման նպատակով պետական մարմինների կողմից տրվող թույլտվություն՝ արտահանման-ներմուծման գործառնություններ, սահմանափակ քանակներով ապրանքների ներկրում և արտակրում իրականացնելու համար, 2) այլ անձանց կամ կազմակերպություններին տրվող իրավունք՝ որոշակի ժամանակաշրջանի ընթացքում պայմանավորված վարձատրության դիմաց օգտագործելու արտոնագրերով (պատենտներով) պաշտպանված գյուտերը, տեխնոլոգիաները, տեխնիկական գիտելիքները և արտադրական փորձը, արտադրության գաղտնիքները, ապրանքանիշը, արտադրության համար անհրաժեշտ առևտրային և այլ տեղեկատվությունը, 3) պետական իրավասու մարմինների կողմից կազմակերպությանը կամ անձին ընձեռվող իրավունք՝ չզբաղվելու գործունեության որոշակի տեսակներով, որոնք կարիք ունեն սահմանափակման: Օրինակ՝ վաճառելու ոգելից խմիչք կամ ծխախոտ, կրելու զենք, եթեր արձակելու հեռուստատեսային հաղորդումներ, իրականացնել բանկային գործունեություն և այլն: Սեփականատերը կոչվում է լիցենզոր, իսկ ձեռք բերողը՝ լիցենզիատ:

ԼԻՖՈ – դա՝ 1) ապրանքային պաշարների, արժեթղթերի և այլ ակտիվների հաշվառման մեթոդ է, ըստ որի դրանք հաշվապահական հաշվեկշռից դուրս են գրվում դրամական արտահայտությամբ ժամանակաշրջանի վերջում ձեռք բերված դրանց գներով, 2) ժամկետից շուտ բանկային ավանդի դուրս գրման գծով տոկոսների (տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի) հաշվարկման մեթոդ է, որն իրականացվում է ավանդա-

տուի կողմից բանկում ներդրված սկզբնական գումարի նկատմամբ:

ԼՈՂԱՑՈՂ ՓՈԽԱՐԺԵՔ – 1) արժույթի ազատ փոփոխվող, տատանվող փոխարժեք է, որի մեծությունը որոշվում է շուկայական իրադրությամբ, պահանջարկի ու առաջարկի հարաբերակցությամբ և շուկայական այլ գործոններով, 2) ազգային արժույթի փոխարժեքի տատանումներն են, երբ դրա արժեքը չի ամրագրվում ոսկով կամ մեկ այլ ազգային արժույթով, և որը ձևավորվում է շուկայական տատանումների հետևանքով՝ արտարժույթի առուծախի ազատ շուկայի պայմաններում:

ԼՈՐՈ – որևիցե բանկի թղթակցային հաշիվն է տվյալ վարկային հիմնարկությունում և, որի միջոցով արտացոլվում են փոխադարձ վճարումներ: Սովորաբար այս հաշվի բացման դեպքում նախատեսվում է՝ ինչպիսի արժույթով պետք է տարվի այդ հաշիվը, արդյո՞ք անհրաժեշտ է որպեսզի վճարումները կատարվեն հաշվում եղած ամբողջ գումարի սահմաններում, արդյո՞ք հաշվարկվելու են տոկոսային գումարները և կոմիսիոն (միջնորդային) վարձատրությունը կատարված հանձնարարությունների դիմաց:

ԼՈՐՈ ԹՂԹԱԿՑԱՅԻՆ ՀԱՇԻՎ – 1) հաշիվ, որը տվյալ բանկը բացում է իր թղթակից-բանկի անունով (նրա հաշիվները մեր բանկում), և որում արտացոլվում են այդ բանկի հանձնարարությամբ կատարված բոլոր գործառնությունները, ստացվող կամ տրվող գումարները, 2) թղթակցային հաշիվ, որը բացվում է երրորդ բանկի կողմից՝ տվյալ բանկի թղթակից-բանկի մոտ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ – վճարում է ապահովագրվողը ապահովագրողին՝ լրացուցիչ կամ վտանգի բարձր աստիճանով ռիսկերի ապահովագրության պայմանագրի մեջ ընդգրկվելու դեպքում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ – իրականացվում է այն դեպքում, երբ գույքը կամ ձեռնարկատիրական ռիսկն ապահովագրվել է ապահովագրական արժեքի մի մասով: Այդ դեպքում ապահովագրվողն (շահառուն) իրավունք ունի

կատարելու լրացուցիչ ապահովագրություն (ներառյալ այլ ապահովագրողի մոտ), սակայն այն չափով, որպեսզի ընդհանուր ապահովագրական գումարը բոլոր ապահովագրական պայմանագրերով չգերազանցի ապահովագրական արժեքը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՊԻՏԱԼ – արդյունք է տեղաբաշխված և ետ գնված բաժնետոմսերի վաճառքի ու դրանց անվանական արժեքի տարբերության: Եթե այդ տարբերությունը դրական է, ապա լրացուցիչ կապիտալը կարող է հանդես գալ որպես կանոնադրական կապիտալի գումարի չափի ավելացման աղբյուր:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ – պետական բյուջեից որոշակի ապրանքների և ծառայությունների արտադրության նպատակով տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվող անհատույց ընթացիկ վճարներն են:

ԼՐԻՎ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ – այն ընդգրկում է տնտեսավարող սուբյեկտի բոլոր միջոցները և պարտադիր կերպով հաշվառվում են բոլոր հիմնական միջոցները, նյութական պաշարները, անավարտ արտադրության և շինարարության ծախսումները, պատրաստի արտադրանքը, դրամական միջոցները և այլն: Լրիվ գույքագրումը սովորաբար կատարվում է տարեկան հաշվետվություն կազմելու նախօրյակին, կամ որոշ այլ դեպքերում՝ անհրաժեշտությունից ելնելով:

ԼՐԻՎ ԻՆՔՆԱՐԺԵՔ – տնտեսական կատեգորիա է, որը դրամական ձևով արտահայտում է ապրանքի արտադրության և իրացման վրա տնտեսավարող սուբյեկտի կողմից կատարված բոլոր ծախսերի ամբողջությունը:

ԼՈՒԾԱՐՈՒՄ – գործընթաց, որի միջոցով կազմակերպությունը դադարեցնում է իր գոյությունը որպես իրավաբանական անձ: Այն կարող է կապված լինել այն կազմակերպության ստեղծման ժամկետը լրանալու հետ, որը կախված է կազմակերպության կառավարման բարձրագույն մարմնի (մասնակիցների ընդհանուր ժողովի), վերադաս մարմնի (պետական կազմակերպությունների համար) կամ դատարանի որոշման ընդունման հետ: Ընդունված է տարբերել կամավոր լուծարում

(ինքնալուծարում), որն իրականացվում է կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովի հիման վրա, և հարկադրական լուծարում, որը նախաձեռնվում է պարտատերերի կամ համապատասխան իրավասու պետական մարմնի կողմից, եթե կազմակերպությունը ճանաչվում է անվճարունակ: Օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակվում է լուծարային կառավարիչ, որը վաճառում է կազմակերպության ակտիվները, և վաճառքի հասույթով մարվում են պարտքերը: Առաջին հերթին բավարարվում են պարտատերերի պահանջները: Պարտքերը վճարելուց հետո մնացած հասույթի ավելցուկը բաժանվում է սովորական բաժնետոմսերի տերերին՝ բաժնետոմսերի քանակին համապատասխան: Համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, բանկի լուծարում տեղի է ունենում հետևյալ դեպքերում՝ ա) լիցենզիան անվավեր ճանաչելու, բ) լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, գ) բանկի անվճարունակության հետևանքով բանկը օրենքով սահմանված կարգով այլ բանկի հետ միաձուլելու կամ լուծարելու, դ) բանկի ինքնալուծարման, ե) օրենքով նախատեսված այլ հիմքերով: Բանկը կարող է ինքնալուծարվել, եթե առկա է ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությունը:

Խ

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿ – բանկի կողմից հաճախորդին տրվող հաշվառման գրքույկ, որտեղ արտացոլվում են խնայողական հաշվին ավանդադրվող, հաշվից հանվող գումարները և հաշվարկված տոկոսները:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏՆԵՐ – դրանք վարկային հիմնարկությունների գրավոր հավաստագրեր են միջոցների ավանդագրման մասին և հաստատում են տիրոջ իրավունքը՝ ժամկետը լրանալուց հետո դեպոզիտի գումարի և դրա տոկոսի ստացման վերաբերյալ: Խնայողական սերտիֆիկատները կարող են տրվել ինչպես պետական, այնպես էլ առևտրային բանկերի կողմից: Տարբերվում են 2 տեսակի խնայողական սերտիֆիկատներ՝ անվանական և ըստ ներկայացնողի: Վերջիններս առք ու վաճառքի ենթակա են, իսկ առաջինը՝ ոչ: Ըստ ներկայացնողի սերտիֆիկատը կարող է հաշվարկների միջոց

հանդիսանալ դեբիտորների և կրեդիտորների միջև: Սերտիֆիկատի տոկոսները վճարվում են միայն դեպոզիտի ժամկետը լրանալուց հետո:

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՖԻՐՄԱՆԵՐ – որոնք հաճախորդներին տրամադրում են խորհրդատվություն՝ ներդրումային գործունեության և ակտիվների կառավարման հարցերի վերաբերյալ:

Ճ

ՃԱԽՍԵՐ (ՃԱԽՔԵՐ) – 1) գումար, որը ծախսվել է որևէ գործարքի, օրինակ՝ ապրանքներ ու ծառայություններ գնելու համար: Ճախսը կարող է եկամուտների և ծախսերի վերաբերյալ հաշվետվության ծախսի հոդված դառնալ կամ չդառնալ՝ կախված նրանից, թե ծախսը կազմակերպությունում որևէ արժեք ստեղծել է, թե ոչ, 2) որոշակի նպատակի հասնելու համար կատարված ծախսեր (սովորաբար, դրամական), օրինակ, ապրանքների արտադրության, ձեռնարկության կառուցման կամ մասնաճյուղը փակելու վրա կատարված ծախսեր, 3) համաձայն ՀՀ հաշվապահական հաշվառման մասին օրենսդրության, ծախսը հաշվետու ժամանակաշրջանում ակտիվների արտահոսքն է և նվազումը կամ պարտավորությունների առաջացումը, որոնք հանգեցնում են սեփական կապիտալի փոքրացման, բացառությամբ մասնակիցների միջև սեփական կապիտալի բաշխման հետևանքով դրա փոքրացման դեպքի: Բանկի ծախսերն են. ա) տոկոսային ծախսերը (թղթակցային հաշիվների և ցպահանջ պարտավորությունների, ՀՀ կենտրոնական բանկից ներգրավված միջոցների, բանկերից և այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների, ներգրավված ավանդների, օգտագործված օվերդրաֆտի, օվերնայթի, ֆորվարդային, ֆյուչերսային, օպցիոն պայմանագրերի, լիզինգի, ստորադաս փոխառությունների դիմաց վճարված ծախսեր, բանկի կողմից թողարկված արժեթղթերի գծով տոկոսային ծախսեր), բ) ոչ տոկոսային ծախսերը (աշխատավարձ, դրան հավասարեցված այլ վճարումներ, գործուղման ծախսեր, ապահովագրական հատկացումներ, կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամներին ծախսեր, հարկեր, հիմնական մի-

ջոցների ամորտիզացիոն ծախսեր, բանկի շենքի վարձակալության վճար, գովազդային և ներկայացուցչական, աուդիտային և խորհրդատվական ծառայության ծախսեր, վճարված տույժեր, տուգանքներ և այլ ծախսեր), գ) հատկացումները ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին:

ԾԱԽՍԵՐ ԱՆՈՒՂԱԿԻ – դրանք իրենց բնույթով չնայած անուղղակիորեն կապված են ամբողջ արտադրության գործընթացի հետ, բայց և անմիջականորեն չեն կարող վերագրվել արտադրվող արդյունքի այս կամ այն տեսակին: Այդ ծախսերից են՝ վարչական աշխատողների, արտադրամասի պետի, բրիգադավարի աշխատավարձը՝ սոցիալական ապահովագրության հատկացումներով, լուսավորության, ջեռուցման հետ կապված ծախսերը և այլն:

ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ – հաշվապահական հաշվառման բաժին, որը նվիրված է ընթացիկ և գալիք ծախսերի դասակարգմանը, գրանցմանը, ամփոփմանն ու հաշվետվության կազմմանը: Ծախսերի հաշվառումն այն միջոցն է, որի օգնությամբ կառավարիչը կարող է վերահսկել ինքնարժեքը: Դրա հիմնական խնդիրն է ծախսերի լրիվ և անընդհատ բացահայտումը՝ արդյունավետության վերլուծության նպատակով: Ծախսերի հաշվառման համակարգերը դասակարգվում են կախված հաշվառման ժամանակից (պլանային, բնականոն, փաստացի) և հաշվառված ծախսերի ընդգրկման չափից (լրիվ և մասնակի ծախսերի հաշվառում):

ԾԱԽՍԻ ԴՐԱՄԱՐԿՂԻ ՕՐԴԵՐ – սկզբնական փաստաթուղթ է, որը հավաստում է դրամարկղից դրամական միջոցների վճարումը: Համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, ծախսի դրամարկղի օրդերում պարտադիր նախանշվում են ստանդարտ ռեկվիզիտներ:

ԾԱԽՍՈՂ ՄԻԱՎՈՐՆԵՐ – դրանք այն միավորներն են, որոնք համաձայն բյուջետային օրենսդրության, իրավունք են ստանում ծախսելու բյուջետային ռեսուրսներ:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼ - արտացոլում է մատուցված տարբեր տեսակի ծառայությունների ծավալը և հաշվառվում է այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մատուցվել են ծառայություններն անկախ դրանց դիմաց վճարումից, առանց ավելացված արժեքի և այլ նմանատիպ (անուղղակի) հարկերի: Ցուցանիշը չի ներառում նաև պետպատվերով իրականացված ծառայությունների ծավալը:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ – ընդգրկում է տրանսպորտի, կապի, առևտրի, նյութատեխնիկական մատակարարման, բնակարանային ու կոմունալ տնտեսության, արվեստի, առողջապահության, կենցաղային, բանկային (այլ ֆինանսավարկային) և այլ ծառայություններ: Այն պայմանագրային աշխատանքների կատարում է համաձայնեցված ժամկետներում:

ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ (ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ – դրանք հաշվետու ժամանակաշրջանում գրանցված ծնվածների թվաքանակի (մահվան դեպքերի) և հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված մշտական բնակչության թվաքանակի միջին ցուցանիշի հարաբերություններն են, որոնք հաշվարկվում են 1000 բնակչի հաշվով, արտահայտված պրոմիլներով:

ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ – դրանք բնութագրում են յուրաքանչյուր տարիքային խմբի կանանց ծնելիության միջին տարեկան մակարդակը և հաշվարկվում են՝ տվյալ տարիքային խմբի կանանց մոտ տարվա ընթացքում ծնվածների թվաքանակը բաժանելով ընթացիկ գնահատման արդյունքներով ստացված այդ տարիքի կանանց միջին տարեկան թվաքանակի վրա: Մինչև 20 տարեկան տարիքային խմբի համար ծնելիության գործակցի հաշվարկման ժամանակ որպես հայտարար ընդունվում է 15-19 տարեկան կանանց թվաքանակը, իսկ 15-49 տարեկան տարիքային խմբի համար համարիչում հաշվի են առնվում բոլոր կենդանածինները, ներառյալ ինչպես մինչև 15 տարեկան, այնպես էլ՝ 50 տարեկանից բարձր մայրերի մոտ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ – դրանք օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված գծանկարային կամ այլ նիշեր են, որոնք հիմք են տալիս կազմակերպության կողմից թողարկված ապրանքն այլ տնտեսավարող սուբյեկտների արտադրանքից տարբերակելու համար:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ – դրանք կազմակերպության տարածքային առանձնացված բաժանմունքները, մասնաճյուղերը և ներկայացուցչություններն են, որոնք ինքնուրույն կազմակերպություն չեն, չունեն իրավաբանական անձի կարգավիճակ ու առանձին հաշվարկային հաշիվ, բայց լիազորված են իրականացնելու ինքնուրույն ձեռնարկատիրական գործունեություն:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ – նրա կանոնադրությամբ, գործունեության կանոնակարգով կամ այլ փաստաթղթերով նախատեսված նախագծերը, նմուշները, արտոնագրերը, մյուս այն տվյալները, որոնց հրապարակումը, փոխանցումը կամ այլ ձևով կողմնակի անձանց հայտնի դառնալը կարող են վնաս հասցնել կազմակերպության շահերին կամ գործարար ակտիվությանը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ – ելնելով կազմակերպահրավական տեսակից, կազմակերպության հիմնադիր փաստաթղթեր կարող են հանդիսանալ՝ հիմնադրման, վարձակալության, լիազորագրային կառավարման մասին պայմանագրերը, կանոնադրությունը, գործունեության կանոնակարգը կամ արձանագրությունը (ակտը) և օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերը: Հիմնադիր փաստաթղթերում նշվում են կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, գործունեության նպատակները, խնդիրներն ու բնագավառները, գույքի կազմավորման և եկամուտների գոյացման ու բաշխման կարգը, հսկողության և կառավարման կազմակերպումը, վերակառուցման (վերակազմավորման) և գործունեության դադարեցման պայմանները:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ (ՀԻՄՆԱԴԻՐ) – կարող են լինել տվյալ երկիրը և այլ պետությունները, այդ պետությունների իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունները, քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – դրանք օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկային և այլ հաշիվներ բացելն է ցանկացած բանկային հիմնարկում՝ իր դրամական միջոցները պահելու, հաշվարկային, վարկային և դրամարկղային բոլոր տեսակի գործառնություններ իրականացնելու համար: Կազմակերպության ֆինանսական գործառնությունները, այդ թվում նաև աշխատավարձի վճարումները, կատարվում են բանկային հիմնարկների միջոցով, սահմանված ժամկետներին համապատասխան:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄ – կազմակերպության անվանումն է, որի ներքո վերջինս իրականացնում է իր գործունեությունը: Լրիվ ֆիրմային անվանումը պետք է ներառի կազմակերպության անվանումը, կազմակերպաիրավական տեսակը, գտնվելու վայրը, ինչպես նաև այլ տվյալներ, եթե սեփականատերը կամ հիմնադիրը համարում են անհրաժեշտ: Կրճատ ֆիրմայի անվանումը պետք է ընդգրկի կազմակերպության անվանումը և կազմակերպաիրավական տեսակը: Լրիվ և կրճատ անվանումները օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է գրանցվեն պետական լիազորված մարմնի կողմից:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ – կազմակերպական միավոր է, որն իրեն պատկանող կամ սեփականատիրոջ (հիմնադրի) կողմից հատկացված գույքով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն և պատասխանատվություն է կրում ստանձնած պարտավորությունների կատարման համար:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՈՎ – դա ՀՀ օրենսդրությանը համապատասխան ստեղծված ցանկացած

կազմակերպաիրավական տեսակի կազմակերպություն է, որի հիմնադիրը կամ մասնակիցն օտարերկրյա ներդրող է:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ – համապատասխան մարմնի (պետական ռեգիստրի) կողմից գրանցում ստանալու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը, այդ թվում՝ գրանցման մասին դիմումը՝ ստորագրված հիմնադրի կամ հիմնադիրների կողմից, հիմնադիր փաստաթղթերը, անհրաժեշտության դեպքում տվյալ գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիա) և կազմակերպության տվյալ կազմակերպաիրավական տեսակը գրանցելու համար օրենսդրությամբ պահանջվող այլ փաստաթղթեր: ՀՀ-ում կազմակերպությունը ստեղծված է համարվում անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելու և գրանցամատյանում գրառում կատարելու պահից՝ 30 օրվա ընթացքում: Եթե կազմակերպության հիմնադիրը բոլոր փաստաթղթերը ներկայացնելու մասին գրանցամատյանում նշում կատարելու պահից 45 օրվա ընթացքում գրանցման պաշտոնական մերժում չի ստանում, ապա այդ կազմակերպությունը համարվում է գրանցված:

ԿԱԼԿՈՒԼՅԱՑԻԱ – արտադրության գործընթացում պատրաստվող արտադրանքի մեկ միավորի կամ շինարարության, նորոգումների և այլ աշխատանքների ու ծառայությունների միավորի վրա կատարած ծախսումների հաշվարկման և ինքնարժեքի որոշման գործընթաց է դրամական արտահայտությամբ: Ավելի համառոտակի, կալկուլյացիան արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) միավորի ինքնարժեքի հաշվարկն է դրամական արտահայտությամբ: Կալկուլյացիան հաշվապահական հաշվառման մեթոդի տարրերից մեկն է:

ԿԱԼԿՈՒԼՅԱՑԻՈՆ ՀԱՇԻՎՆԵՐ – դրանց միջոցով իրականացվում է արտադրանքի ինքնարժեքի հաշվարկումը: Հաշիվների այս խմբին են պատկանում «Հիմնական արտադրություն», «Օժանդակ արտադրություն», «Ոչ ընթացիկ նյութական ակտիվների (հիմնական միջոցների) կառուցման կամ ստեղծման ծախսումներ» և այլ հաշիվները, որոնց դեբետում հավաքվում են արտադրվող արտադրանքի կամ նոր կառուցվող օբյեկտի վրա կատարված բոլոր ծախսումները (հումքը և նյութերը, վա-

ռելիքը, աշխատանքի վարձատրությունը սոցիալական ապահովագրության հատկացումներով և այլն), որոնց ամբողջությունը կազմում է պատրաստվող արտադրանքի, կառուցվող շենքերի ինքնարժեքը, կամ նոր ձեռք բերվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը: Կալկուլյացիոն հաշիվների կրեդիտում գրանցվում է թողարկված պատրաստի արտադրանքի կամ ավարտված օբյեկտի փաստացի ինքնարժեքը, որը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում, կամ աշխատանքն ավարտելուց անմիջապես հետո, փոխանցվում է պատրաստի արտադրանքը կամ ավարտված օբյեկտը հաշվառող հաշիվներին: Կալկուլյացիոն հաշիվներն ակտիվային են, ուստի դրանց մնացորդը կարող է լինել միայն դեբետային և բնութագրում է դեռևս թերավարտ կամ չավարտված օբյեկտի վրա կատարված ծախսումների գումարը:

ԿԱՅՈՒՆ (ՀԱՍՏԱՏՈՒՆ) ՊԱՍԻՎՆԵՐ – սեփական կապիտալի, այդ թվում՝ կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումարն է, լրացուցիչ կապիտալը, վերագնահատումից տարբերությունները, կուտակված շահույթը, պահուստները (բացի շահաբաժինների գծով կանխավճարներից), ինչպես նաև ոչ ընթացիկ պարտավորությունները, այդ թվում՝ նպատակային ֆինանսավորումն ու մուտքերը և գալիք ժամանակաշրջանի ծախսերի ու վճարումների պահուստները:

ԿԱՆԽԱՄՏԱՑՎԱԾ ՍՆԱՆԿԱՑՈՒՄ – պարտատերերի օրինական պահանջների լրիվ կամ մասնակի կատարումից խուսափելու նպատակով պարտապանի կողմից կազմակերպված, այդ թվում օրինական ճանապարհով սնանկացումն է:

ԿԱՆԽԱՎՃԱՐ – 1) ընթացիկ ամսվա համար հաշվարկված աշխատավարձի հաշվին կազմակերպության աշխատակիցներին ամսվա կեսերին վճարվող միջոցներ, 2) ծառայողական գործուղումների կամ այլ վայր աշխատանքի անցնելու հետ կապված ծախսերը հատուցելու, տնտեսական գնումներ, տրանսպորտի և կապի ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու համար կազմակերպության աշխատակիցներին տրամադրվող գումարներ, 3) որևէ ծառայության (նյութական արժեքների ձեռք բերման, աշխատանքների կատարման, ծառա-

յությունների մատուցման) դիմաց համաձայնեցված վարձատրության (առաջիկա վճարումների) այն մասը, որը գնորդը վճարում է մինչև աշխատանքը սկսելը՝ պայմանագիրն ստորագրելուն պես, 4) դրամի գումար, որը տրվում է կանխավճարը ստացողին (օրինակ, գործակալին, վստահված անձին) հանձնառությունների կատարման հետ կապված ծախսերը ծածկելու համար, 5) միջազգային առևտրում լայն տարածում են ստացել, այսպես կոչված, գնման կանխավճարները՝ որպես ներմուծողների կողմից արտահանողների վարկավորման ձև: Կանխավճարի չափը սովորաբար կազմում է պայմանագրի գնի 10-15%-ը: Կանխավճարը հաշվի է առնվում ամբողջությամբ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գծով վերջնահաշվարկի ժամանակ կամ մաս-մաս՝ ապրանքի առանձին խմբաքանակների կամ աշխատանքների փուլերի համար վճարում կատարելիս: Պայմանագիրը լուծելու կամ կանխավճարը ստացողի կողմից իր պարտականությունները չկատարելու դեպքում կանխավճարը սովորաբար վերադարձվում է: Կանխավճար ստացած անձը ներկայացնում է ծախսված գումարի վերաբերյալ համապատասխան հաշվետվություն: Կանխավճարը, ինչպես նաև նախավճարը, ծառայում է որպես պայմանագիրը կնքելու ապացույց, սակայն ի տարբերություն նախավճարի, չի հանդիսանում պարտավորության կատարման ապահովման եղանակ, քանի որ պարտավորությունը չկատարելու դեպքում այն ենթակա է վերադարձման:

ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄ – ՀՀ արժույթը և արտարժույթը թղթադրամների կամ մետաղադրամների տեսքով:

ԿԱՆԽԻԿԻ ԴԻՐՔ – կանխիկի բաժինը ընդհանուր զուտ ակտիվների մեջ, տոկոսային արտահայտությամբ:

ԿԱՆԽԻԿԻ ՀՈՍՔ – կազմակերպության կողմից ստացված կամ վճարված կանխիկ դրամական միջոցների գումարներն են, որոնք հաճախ վերլուծվում են ըստ տարբեր հոդվածների: Արտացոլում է ընթացիկ պարտավորությունների կատարման ունակությունը: Կանխիկի հոսքի կանխատեսումը սահմանում է տվյալ ժամանակաշրջանում սպասվող բոլոր վճարվելիք ու ստացվելիք գումարները: Շահույթի և վնասների պլանի հա-

մեմատ ունի շատ մեծ նշանակություն ու հենց կանխիկի շարժի կանխատեսման (պլանի) հիման վրա ղեկավարները կատարում են աշխատողների և պարտատերերի ժամանակին վճարումները:

ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ (ԲԱԺՆԵՀԱՎԱՔ) ԿԱՊԻՏԱԼ – որի ձևավորման կարգը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով: Կանոնադրական կապիտալի գումարի չափը հայտարարվում է այն հիմնադրելիս և ամրագրվում կանոնադրության մեջ: Կանոնադրական կապիտալը ձևավորվում է բաժնետերերի ներդրումներից և նրա գումարը հավասար է բաժնետերերի կողմից տեղաբաշխված բոլոր տեսակի բաժնետոմսերի անվանական արժեքների գումարին: Կանոնադրական կապիտալի գումարի չափը ձևավորվում է շահագործման մեջ գտնվող և չգտնվող հիմնական միջոցներով, բնական ռեսուրսներով, անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներով, ոչ նյութական ակտիվներով, նյութերով, արագամաշ առարկաներով, ապրանքներով, հողամասերով և այլ նյութական ակտիվներով:

ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ – ըստ որի մի կողմը (կապալառուն) պարտավորվում է մյուս կողմի (պատվիրատուի) առաջադրանքով կատարել որոշակի աշխատանք և դրա արդյունքը սահմանված ժամկետում հանձնել պատվիրատուին, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի վերջնական արդյունքը և վարձատրություն կատարել դրա դիմաց: Կապալի պայմանագիրը կնքվում է գրավոր:

ԿԱՊԻՏԱԼ – 1) գործարարության մեջ ներդրված դրամական միջոցներն են, որոնք օգտագործվում են նրա գործունեության համար անհրաժեշտ գույք ձեռք բերելու և գործունեություն սկսելու նպատակով: Կարող է ընդգրկել բաժնետիրական կապիտալը (բաժնետոմսերի իրացման արդյունքում ստացված դրամական միջոցները) և փոխառու կապիտալը (փոխառություններից ստացված միջոցները), 2) շահույթ ստանալու համար օգտագործվող ապրանքների, գույքի և ակտիվների հանրագումարը կամ հավելյալ արժեք բերող արժեքն է, 3) հաճախ օգտագործվում է «կազմակերպության գումարային ակտիվներ»

նշանակությամբ, 4) կազմակերպության մասնաբաժինները (դրամական արտահայտությամբ) ակտիվների մեջ՝ հանած մասնակիցների պարտավորությունները, այլ կերպ ասած, կապիտալը արտասահմանում ընդունված տերմիններով, դա իրավաբանական անձի մնացորդային շահն է ակտիվներում, 5) տնտեսագիտության տեսության մեջ այս տերմինն ունի մի քանի նշանակություն. ա) արտադրության գործոն, որը սովորաբար ներկայացված է մեքենաներով, սարքավորումներով և արտադրական շենքերով (ֆիզիկական կապիտալ) կամ դրամական միջոցներով (ֆինանսական կապիտալ): Սակայն այս մոտեցումը կիրառելի է նաև մի շարք այլ ակտիվների նկատմամբ (օրինակ, «մարդկային» կապիտալի նկատմամբ): Կապիտալը սովորաբար օգտագործվում է արտադրության մյուս գործոնների արտադրողականության բարձրացման համար (օրինակ, պարարտանյութերը բարձրացնում են հողի բերրիությունը, իսկ հաստոցները՝ աշխատանքի արտադրողականությունը), բ) տնտեսության մեջ նյութական և դրամական միջոցների ներդրումները, անվանում են նաև կապիտալ ներդրումներ, ինվեստիցիաներ, գ) ներդրումներից ստացվող ապագա շահույթի արժեքն է, դ) եկամուտ ստանալու համար օգտագործվող դրամական միջոցները կամ սեփականությունը, ե) կազմակերպության բաժնետոմսերի ընդհանուր արժեքը, 6) բանկային ոլորտում կապիտալը նշանակում է՝ երկարաժամկետ պարտք գումարած մասնակիցների (բաժնետերերի) բաժնետիրական կապիտալի գումարի չափ:

ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ – ներառում են պետական և համայնքային նշանակության ծրագրերի շրջանակներում նախատեսվող այն ծախսերը, որոնք հանգեցնում են հիմնական միջոցների, պետական ռազմավարական կամ համայնքային նշանակության պահուստների ստեղծման նպատակով ապրանքային արժեքների ձեռքբերմանը կամ դրանց արժեքի ավելացմանը: Կապիտալ ծախսերը հանդես են գալիս նաև ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր անվանումով:

ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼ – ընդգրկվում են՝ գործող արդյունաբերական, գյուղատնտեսական, տրանսպորտային, առևտրային և այլ կազմակերպությունների նոր շինարարության, վերակառուցման, ընդլայնման ու տեխնիկական վերա-

զինման ծախսերը, բնակարանային և մշակութակենցաղային շինարարության ծախսերը: Կապիտալ ներդրումներին վերաբերում են բոլոր տեսակի շինարարական աշխատանքների ծախսերը, շինարարության նախահաշվով նախատեսված սարքավորումների մոնտաժի, մոնտաժման կարիք ունեցող կամ չունեցող սարքավորումների, շինարարության նախահաշվի մեջ ներառվող արտադրության գործիքների և տնտեսական գույքի, շինարարության նախահաշվի մեջ չմտնող մեքենաների և սարքավորումների ձեռք բերման ծախսերը, այլ կապիտալ աշխատանքների ծախսերը:

ԿԱՊԻՏԱԼ ՍԵՓԱԿԱՆ – տնտեսական միջոցների (ակտիվի), կազմավորման աղբյուրների (պասիվի) մի մասն է, որն արտացոլված է հաշվապահական հաշվեկշռի պասիվում: Նրանում ներառվում են՝ կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալը, լրացուցիչ կապիտալը, պահուստները, կուտակված (չբաշխված) շահույթը, շահաբաժինների գծով կանխավճարները: Սեփական կապիտալը տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական կայունության գնահատման ամենահիմնական ցուցանիշն է:

ԿԱՊԻՏԱԼ ՓՈԽԱՌՈՒ – դրամական կապիտալ է, որը կազմավորվում է որոշակի ժամկետում՝ ի հաշիվ վարկերի, փոխառությունների ստացման, ինչպես նաև վարկային տոկոսների դիմաց վճարման, փոխառության տոմսերի թողարկման ու վաճառքի և դրամական այլ պարտավորությունների միջոցների ստացման գծով: Այլ կերպ, այն ոչ ընթացիկ և ընթացիկ պարտավորությունների հանրագումարն է:

ԿԱՊԻՏԱԼԱՑՈՒՄ – 1) կազմակերպության կապիտալի կառուցվածքն է, օրինակ՝ բաժնետիրական կապիտալի և փոխառու դրամական միջոցների կամ սովորական բաժնետոմսերի և արտոնյալ բաժնետոմսերի միջև եղած հարաբերակցությունները, 2) մասնակիցների (բաժնետերերի) կողմից ընկերությունում ներդրված բոլոր դրամական միջոցների գումարն է, 3) ունեցվածքի (հողամաս, կազմակերպություն, արժեթղթեր և այլն) արժեքի գնահատումն է՝ դրանից ենթադրվող օգտագործման ամբողջ ժամանակաշրջանում սպասվելիք եկամուտները հաշվարկելու միջոցով, 4) տվյալ ժամանակաշրջանում կատարված

ծախսերի վերագրումը երկարաժամկետ ակտիվներին, 5) ստացված շահույթի վերաներդրումն է, 6) ընկերության կապիտալի ընդհանուր գինն է, որը հաշվարկվում է՝ բաժնետոմսերի ընդհանուր քանակը բազմապատկելով դրանց շուկայական գնով, 7) պահուստների վերածումը բաժնետիրական կապիտալի:

ԿԱՊԻՏԱԼԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ – իրենցից ներկայացնում են ակտիվների (բացի կանխիկ դրամի և նյութական ընթացիկ ակտիվների) կամ դրանց ձեռք բերման համար միջոցների սեփականության իրավունքի անհատույց փոխանցումը մեկ կառուցվածքային միավորից մյուսին: Կապիտալի անհատույց փոխատվությունները սովորաբար լինում են միանվագ և որոշակի (նշանակալի)՝ ըստ գործառնության իրականացման մեծության, կապված մասնակիցների կողմից ակտիվների օգտագործման կամ դուրս գրման հետ:

ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ – մի երկրից կապիտալի արտահանումն է մեկ այլ երկիր՝ ուղղակի ներդրումների, վարկերի, սուբսիդիաների, արժեթղթերի գնման ձևերով: Կապիտալի արտահանում են համարվում նաև ավանդագրված միջոցներն օտարերկրյա բանկերում:

ԿԱՊԻՏԱԼԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ – այն ներառում է. ա) պետական, համայնքային սեփականություն համարվող հիմնական միջոցների օտարումից մուտքերը, այդ թվում՝ լուծարված պետական կազմակերպությունների, բաժնետիրական ընկերությունների մնացորդային գույքի օտարումից մուտքերը, բ) բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի օտարումից մուտքերը, գ) պետական, տեղական ինքնակառավարման մարմինների պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների իրացումից մուտքերը, դ) պետական սեփականություն համարվող հողի, ինչպես նաև պետական, համայնքային սեփականության ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքերը, ե) բանկերի, ապահովագրական ընկերությունների և այլ ֆինանսավարկային կազմակերպությունների՝ պետական սեփականություն համարվող բաժնետոմսերի օտարումից մուտքերը:

ԿԱՊԻՏԱԼԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇԻՎ – արտացոլում է հիմնական կապիտալի համախառն կուտակման և նյութական ընթացիկ ակտիվների (շրջանառու միջոցների) պաշարների փոփոխության ֆինանսավորումը, ներառյալ՝ կապիտալ անհատույց փոխատվությունների ձևով հարստության վերաբաշխումը տնտեսության հատվածների և արտերկրի միջև: Կապիտալի հետ գործառնությունների ֆինանսավորման հիմնական աղբյուրը հանդիսանում է խնայողությունը, որը փոխանցվում է եկամուտների օգտագործման հաշվից: Այդ գործառնությունների ֆինանսավորման մյուս կարևորագույն աղբյուր է համարվում ստացած կապիտալ անհատույց փոխատվություններն առանց փոխանցվածների:

ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱ – ֆինանսական շուկա է, որտեղ կորպորացիաները և կառավարությունը առավելապես երկարաժամկետ ներդրողներին վաճառում են բաժնետոմսեր, պարտատոմսեր և ներդրումների այլ տեսակներ: Այս իմաստով կապիտալի շուկան բնութագրվում է նաև որպես երկարաժամկետ կապիտալի շուկա, որտեղ կատարվում է կապիտալի (փոխատվական կամ բաժնետիրական) առևտուր: Կապիտալի շուկաներում ընդգրկվում են փոխատվական և բաժնետիրական կապիտալի տեղաբաշխման մասնավոր աղբյուրները, ինչպես նաև կազմակերպված շուկաները և բորսաները:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ – պետական բյուջեում նախատեսվում է կառավարության պահուստային հիմնադրամ, որը տվյալ տարվա պետական բյուջեում չկանխատեսված, ինչպես նաև՝ բյուջետային երաշխիքների ապահովման ծախսերի ֆինանսավորման աղբյուրն է: Պետական բյուջեի ծախսային մասում կառավարության պահուստային հիմնադրամը ներկայացվում է առանձին հոդվածով: Պահուստային հիմնադրամի միջոցներից ծախսերը կատարվում են կառավարության որոշումների հիման վրա:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ – անգլերեն լեզվի օքսֆորդյան ֆունդամենտալ բառարանում բացատրվում է չորս հիմնական բնորոշմամբ.

- կառավարումը (մենեջմենթը) որպես մարդկանց հետ հաղորդակցվելու եղանակ կամ միջոց,

- կառավարումը (մենեջմենթը) որպես ղեկավարման իշխանություն և արվեստ,
- կառավարումը (մենեջմենթը) որպես մասնագիտական գիտելիքների և կառավարման հմտությունների ամբողջություն,
- կառավարումը (մենեջմենթը) որպես կազմակերպության առանձին ադմինիստրատիվ (վարչական) բաժին:

Կառավարումը տնտեսական օրենքների պահանջներին համապատասխան, նյութական և հոգևոր բարիքների, ծառայությունների ստեղծմանը նպատակաուղղված աշխատանքի վրա համակարգված կարգավորիչ ներգործություն է:

ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԱՍԻՎՆԵՐ – ընթացիկ պարտավորություններից՝ բանկերի կարճաժամկետ վարկերն ու փոխառությունները, վարկերի և փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսները, ինչպես նաև այլ ընթացիկ պարտավորությունները, որոնք ենթակա են մարման հաշվետու պահից 12 ամսվա ընթացքում:

ԿԼԱՍՏԵՐ – իրենից ներկայացնում է փոխկապակցված ընկերությունների և կազմակերպությունների այնպիսի համախումբ, որոնք գործում են որոշակի ոլորտում՝ ընդհանուր գործունեությամբ ու միմյանց փոխլրացմամբ:

ԿԼԱՍՏԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ – իմաստը տնտեսավարող սուբյեկտների կապերի ամրապնդումն է, կապված նոր տեխնոլոգիաների կիրառման, գիտելիքների, աշխատանքային ու նյութական ռեսուրսների համատեղ օգտագործման և ռիսկի օպտիմալ բաշխման հետ:

ԿՅԱՆՔԻ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ – ծննդյան պահից տարիների այն թիվն է, որի ընթացքում ծնվող սերունդը, միջին հաշվով, պետք է ապրի: Պայմանով, որ այդ սերնդի ողջ կյանքի ընթացքում մի տարիքից մյուսն անցնելիս, մահացությունը յուրաքանչյուր տարիքում հավասար կլինի բնակչության մահացության տվյալ ժամանակահատվածի մակարդակին:

ԿՇՌՎԱԾ ԵՎ ՊԱՐԶ ՄԻՋԻՆ ՀԱՐՄՈՆԻԿ – մի շարք դեպքերում միջինի հաշվարկման ելակետային բազան և այդ հաշվարկի

համար եղած տվյալները հանգեցնում են ոչ թե միջին թվաբանականին, այլ միջինի մեկ ուրիշ ձևին՝ միջին հարմոնիկին:

Օրինակ, ենթադրենք անհրաժեշտ է որոշել մեկ կովի միջին տարեկան կաթնատվությունը մարզի ֆերմերային տնտեսությունների և բաժնետիրական ընկերությունների համար: Այսպես, եթե կովի միջին կաթնատվության տարբերակները նշանակենք X_i-ով, իսկ կաթի համախառն կիթը (ընդհանուր արտադրանքը) M-ով, ապա միջին կաթնատվության հաշվարկի գործողությունները կարելի է արտահայտել հետևյալ տեսքով՝

$$\bar{X}_{h(կշռ.)} = \frac{M_1 + M_2 + \ldots + M_n}{\frac{M_1}{X_1} + \frac{M_2}{X_2} + \ldots + \frac{M_n}{X_n}} = \frac{\sum M_i}{\sum \frac{M_i}{X_i}}, \quad (i=1, 2, \ldots, n):$$

Ըստ բանաձևի, համարիչում կաթի համախառն արտադրանքն է, իսկ հայտարարում կաթնատու կովերի գլխաքանակը: Այսինքն, այն կշռված միջին հարմոնիկի բանաձևն է, որտեղ M_i-ն կշիռներն են, իսկ $\sum \frac{M_i}{X}$ կաթնատու կովերի ընդհանուր գլխաքանակը:

Այսպիսով, կշռված միջին հարմոնիկը հաշվարկելու համար, պետք է կշիռների ընդհանուր գումարը բաժանել յուրաքանչյուր ցուցանիշի կշիռը համապատասխան տարբերակի վրա բաժանելուց ստացված արդյունքների գումարի վրա:

Եթե յուրաքանչյուր տարբերակի կշիռը հավասար է մեկի, ապա n թվով տարբերակների դեպքում պարզ միջին հարմոնիկի բանաձևը ստանում է այսպիսի տեսք՝

$$\bar{x}_{h.(պ.)} = \frac{n}{\sum \frac{1}{x_i}}, \quad (i=1, 2, \ldots, n)$$

ԿՇՌՎԱԾ ՄԻՋԻՆ ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ – հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\bar{x}_{երկ.(կշռ.)} = \sum^{f_i}\sqrt{x_1^{f_1} \cdot x_2^{f_2} \cdot \ldots \cdot x_n^{f_n}} = \sum^{f_i}\sqrt{\prod_{i=1}^{n} x_i^{f_i}},$$

որտեղ՝

x_i-ն ուսումնասիրվող ցուցանիշի i-րդ տարբերակի բացարձակ կամ հարաբերական մեծություններն են,

f_i-ն ուսումնասիրվող ցուցանիշի i-րդ տարբերակի հաճախությունն է կամ կշիռը:

ԿՇՌՎԱԾ ՄԻՋԻՆ ԹՎԱԲԱՆԱԿԱՆ – տարբեր հաճախությունով կրկնվող կամ, ինչպես ասում են, տարբեր կշիռներ ունեցող տարբերակներից հաշվարկված միջինն անվանվում է կշռված: Այն պարզաբանենք նշանակումներով: Այսպես, համասեռ արտադրանքի թողարկման տարբերակները նշանակենք x_1, x_2, …, x_n-ով, իսկ համապատասխան արտադրանք թողարկող բանվորների թիվը կամ այլ կերպ հաճախությունները (կշիռները) f_1, f_2, …,f_n-ով, կստանանք հետևյալ բանաձևը կշռված տեսքով՝

$$\bar{x}_{\text{կշռ.}} \frac{x_1f_1 + x_2f_2 + \ldots + x_nf_n}{f_1 + f_2 + \ldots + f_n} = \frac{\sum x_if_i}{\sum f_i}, \quad (i=1, 2, \ldots, n):$$

Ինչպես երևում է բանաձևից, կշռված միջին թվաբանականը հավասար է տարբերակների (x_i) ու նրանց համապատասխան կշիռների (f_i) արտադրյալների գումարի և կշիռների (բանվորների թվաքանակի) գումարի հարաբերակցությանը:

Տվյալ բանաձևը կարելի է ստանալ նաև ելնելով կշռված միջինի հատկություններից: Այսինքն, տարբերակները դրանց միջին մեծությունով փոխարինելու դեպքում հավասարման իմաստը չի փոփոխվում: Այսինքն՝

$$x_1f_1 + x_2f_2 + \ldots + x_nf_n = \bar{x}f_1 + \bar{x}f_2 + \ldots + \bar{x}f_n = \bar{x}(f_1 + f_2 + \ldots + f_n):$$

Այստեղից՝

$$\sum x_if_i = \bar{x}\sum f_i \quad և \quad \bar{x} = \frac{\sum x_if_i}{\sum f_i}, \quad (i=1, 2, \ldots, n):$$

ԿՈՄԻՍԻՈՆ (ՄԻՋՆՈՐԴԱՅԻՆ) ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ – բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վարձավճար է: Նրա հիմքում ընկած է ծառայության մատուցման համար կատարվող ծախսերի մեծությունը և բավարար շահույթի ապահովումը: Սակայն ծառայության տվյալ ոլորտում,

առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունից կախված, ծառայության գինը կարող է գտնվել իր ինքնարժեքից բարձր կամ ցածր մակարդակի վրա:

ԿՈՄՊԻԼՅԱՑԻԱ – ֆինանսական տեղեկատվության հավաքագրումը, դասակարգումն ու ամփոփումն է՝ այն օգտագործելու համար առավել հասկանալի և հարմար տեսքի բերելու նպատակով:

ԿՈՆԿՐԵՏ ՎԻճԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ – բնութագրում են ուսումնասիրվող երևույթի և գործընթացի չափի մեծությունը տվյալ ժամանակում և տվյալ տեղում: Այսպես, եթե անվանում ենք հիմնական միջոցի արժեքի կոնկրետ մեծությունը, ապա այդ դեպքում անպայման պետք է նշել, թե որ տնտեսավարող սուբյեկտին կամ ճյուղին և ժամանակի որ պահին է այն վերաբերում:

ԿՈՆՈՍԱՄԵՆՏ – ապրանքը տնօրինելու մասին փաստաթուղթ է, որը հավաստում է դրա տիրապետողի իրավունքը, այսինքն՝ տնօրինելու այդ փաստաթղթում նշված բեռը և ստանալու այն փոխադրելուց հետո: Կոնոսամենտը կարող է լինել՝ ըստ ներկայացնողի, որը հանդիսանում է բեռը տիրապետողը, օրդերային՝ այսինքն՝ կոնոսամենտի միջոցով: Կոնոսամենտ համարվող փաստաթուղթը կարող է մեկ անձից անցնել մյուսին՝ ըստ որի բեռը տիրապետողը հանդիսանում է կոնոսամենտում նշված անձըև այդ կոնոսամենտը փոխանցման ենթակա չէ: Կոնոսամենտին պարտադիր կցվում է ապահովագրական պոլիսը:

ԿՈՆՍՈԼԻԴԱՑԻԱ (ՀԱՄԱԽՄԲՈՒՄ) – 1) հաշվապահական հաշվեկշռի կազմման ժամանակ օգտագործված մեթոդ, երբ առանձին միանման հոդվածներ համախմբված են մեկ ընդհանուր հոդվածում, օրինակ՝ տրամադրված վարկերի, ներդրված ավանդների տեսակները և այլն, 2) վարկային գործառնություններ, երբ կարճաժամկետ ընթացիկ պարտքերը փոխարինվում են երկարաժամկետի, 3) ֆինանսական ռեսուրսների միավորումը մի քանի ընկերություններում, 4) ավելի շատ շահույթ ստանալու ակնկալիքով ներդրումային միջոցների ներառումը հուսալի արժեթղթերում:

ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ – իրենից ներկայացնում է տարբեր առևտրային միավորների (այդ թվում՝ բանկերի) միջև պայմանագրային հիմունքներով համատեղ գործունեություն իրականացնելու համագործակցություն:

ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ ԲԱՆԿԱՅԻՆ – ֆինանսական գործառնությունների համատեղ վարման համար ժամանակավոր միջբանկային համաձայնության ձև է՝ փոխառությունների տեղաբաշխման, վարկային ռիսկերի իջեցման և արդյունավետություն ապահովող արժեթղթերի գործարքների գծով:

ԿՈՆՏՈԿՈՐԵՆՏ – ակտիվապասիվային հաշիվ է, որի դեբետային մասով կատարվում են տնտեսավարող սուբյեկտի բոլոր վճարումները, իսկ կրեդիտային մասով հաշվեգրվում է այդ սուբյեկտի արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից ստացված հասույթի գումարը: Կոնտոկորենտի հաշվեմնացորդը (սալդոն) կարող է լինել դեբետային կամ կրեդիտային:

ԿՈՆՑԵՍԻԱ – 1) ազգային ռեսուրսների (երկրի ընդերքի) յուրացման նպատակով որոշակի չափով օտարերկրյա կապիտալի ներգրավման ձև է, որն իրականացվում է պայմանագրային հիմունքներով: Համաձայն միջազգային իրավունքի, պետությունը կարող է ընդհատել կոնցեսիայի գործունեությունը, երբ ավարտվում է պայմանագրի ժամկետը, 2) բանկի կողմից նոր թողարկված արժեթղթերի վաճառքի կազմակերպման դիմաց ստացված վարձավճարն է:

ԿՈՇՏ ԳՐԱՎ – համարվում է այն գրավը, որի առարկան թողնվում է գրավատուի մոտ՝ գրավի մասին վկայող նշաններով:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐ – համարվում է քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումը: Կոոպերատիվի անվանումը պետք է ցուցում պարունակի նրա գործունեության

հիմնական նպատակի մասին, ինչպես նաև ներառի «կոոպերատիվ» բառը: Կոոպերատիվի սեփականության ներքո գտնվող գույքը, կոոպերատիվի կանոնադրությանը համապատասխան, բաժանվում է նրա անդամների վրա՝ ըստ փայերի: Կոոպերատիվի անդամը պարտավոր է մինչև կոոպերատիվի գրանցումն ամբողջությամբ մուծել փայավճարը, եթե այլ բան նախատեսված չէ կոոպերատիվի կանոնադրությամբ:

ԿՈՌԵԼՅԱՑԻԱՅԻ ԳԾԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԻՑ (r_{yxi})– սոցիալ-տնտեսական երևույթների որակական և քանակական չափման փոխկախվածությունում կարևորվում է ուսումնասիրվող ցուցանիշների կապի սերտության ու ուղղության որոշումը: Այսինքն, որոշել արդյունքային ցուցանիշի (y) համապատասխան տատանման չափը՝ կախված գործոնային ցուցանիշների (x_1, x_2,…,x_n) փոփոխությունից:

Կապի սերտության գծային կախվածությունը որոշվում է կոռելյացիայի գծային գործակցի (r_{yxi}) օգնությամբ, որը վիճակագրության տեսությունում մշակվել և գործնականում կիրառվում է տարբեր հաշվարկային բանաձևերում, սակայն ամենահամառոտակի և պարզ բանաձևը հետևյալն է.

$$r_{yx_i} = \frac{\overline{yx}_i - \overline{yx_i}}{\sigma_y \sigma_{x_i}}, \ (i=1, 2, ..., n),$$

որտեղ՝

$\overline{yx}_i$ -ը y-ի և x_i-ի արտադրյալի միջին մեծությունն է,

$\bar{y}$ և $\bar{x}_i$-ը համապատասխանաբար y-ի և x_i-ի միջին մեծություններն են,

σ_y և σ_{x_i} -ը՝ y-ի և x-ի i-րդ գործոնի միջին քառակուսային շեղումները:

Կոռելյացիայի գործակիցը իր բացարձակ մեծությամբ փոքր կամ հավասար է մեկից՝

$$\left|r_{yx_i}\right| \le 1 \text{ կամ } -1 \le r_{yx_i} \le 1:$$

Հեշտ է պարզաբանել, որ եթե $r_{yx_i} = 0$-ի, ապա y-ի և x_i-ի միջև կապը բացակայում է, եթե $0 \le r_{yx_i} \le 1$ փոխադարձ կապը ուղղակի է, եթե $-1 \le r_{yx_i} \le 0$, ապա կապը հակադարձ է, եթե $r_{yx_i} = 1$, ապա կապը ֆունկցիոնալ է: Միջազգային փորձը վկայում է, որ եթե կոռելյացիայի գործակիցը $r_{yx_i} \le 0,3$՝ ապա կապը շատ թույլ է կամ գործնականում բացակայում է, $\pm 0,3 \le r_{yx_i} \le \pm 0,5$ պայմանի դեպքում կապը մեղմ է կամ միջին, $\pm 0,5 \le r_{yx_i} \le \pm 0,7$ պայմանի դեպքում կապը նկատելի է կամ լավ, $\pm 0,7 \le r_{yx_i} \le 1$ պայմանի դեպքում կապն ուժեղ է:

ԿՈՌԵԼՅԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԱԿՑԻ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇ ($\mu_{r_{yx_i}}$) – հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\mu_{r_{yx_i}} = \frac{r_{yx_i}}{\sigma_{r_{yx_i}}}$$

որտեղ՝

r_{yx_i}-ն y-ի և x_i-ի ազդող գործոնի միջև կոռելյացիայի գործակիցն է,

$\sigma_{r_{yx_i}}$-ն կոռելյացիայի գործակցի միջին քառակուսային սխալի մեծությունն է:

Հուսալիության չափանիշը համարվում է հավաստի, եթե այն մեծ է 2,5-3,0 մեծություններից, հակառակ դեպքում այն անիմաստ է, և կնշանակի, որ y-ի և x_i-ի միջև փոխադարձ կապը թույլ է եղել:

ԿՈՌԵԼՅԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԱԿՑԻ ՄԻՋԻՆ ՔԱՌԱԿՈՒՍԱՅԻՆ ՍԽԱԼԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ($\sigma_{r_{yx_i}}$) – արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$\sigma_{r_{yx_i}} = \frac{1 - r_{yx_i}^2}{\sqrt{n}}$$

որտեղ՝

r_{yx_i}-ն y-ի և x_i-ի ազդող գործոնի միջև կոռելյացիայի գործակիցն է,

n-ը՝ ուսումնասիրության ենթակա ցուցանիշի տարբերակների թվաքանակը:

Որքան մեծ լինի կոռելյացիայի գործակիցը, այնքան փոքր կլինի միջին քառակուսային սխալի մեծությունը:

ԿՈՌԵԼՅԱՑԻՈՆ ԿԱՊ – որի դեպքում ազդող գործոնի (x) միևնույն արժեքին առանձին դեպքերում կարող են համապատասխանել արդյունքային ցուցանիշի (y) բազմաթիվ արժեքներ, այնպես, որ ազդող գործոնի փոփոխությամբ փոփոխվում է նաև արդյունքային ցուցանիշի միջին մեծությունը:

Այսպես, օրինակ, բերքատվության և կատարված պարարտացման քանակության միջև իհարկե կա ուղիղ կապ: Բայց եթե մի քանի տնտեսություններում յուրաքանչյուր հեկտարի վրա ծախսված է նույն քանակությամբ պարարտանյութ, ապա չի կարելի ակնկալել, որ բոլոր այդ տնտեսություններում նաև բերքատվությունը կլինի նույնը: Կամ եթե «Ա» տնտեսությունում պարարտացումը կատարված է ավելի շատ, քան «Բ» տնտեսությունում, ապա դա դեռևս չի նշանակում, որ «Ա» տնտեսությունում բերքատվությունը պարտադիր կարգով պետք է ավելի լինի, քան «Բ» տնտեսությունում: Դա բացատրվում է նրանով, որ բերքատվությունը, բացի պարարտացման քանակությունից, կախված է նաև բազմաթիվ այլ գործոնների (սերմացուի և հողի որակ, ցանքի և բերքահավաքի ժամկետներ, տարբեր ագրոտեխնիկական միջոցառումների անցկացման ժամկետներ ու որակ և այլ հանգամանքներ) ազդեցությունից, որոնք առանձին տնտեսություններում կարող են լինել խիստ տարբեր:

ԿՈՌԵԼՅԱՑԻՈՆ ՀԱԿԱԴԱՐՁ ԿԱՊ – ըստ որի արդյունքային ցուցանիշի (y) փոփոխման ուղղությունը չի համընկնում ազդող գործոնի (x) փոփոխման ուղղության հետ: Հակադարձ կապի դեպքում ազդող գործոնի արժեքի ավելացմամբ փոքրանում է արդյունքային ցուցանիշի արժեքը և հակառակը: Այսպես, այլ հավասար պայմանների դեպքում աշխատանքի արտադրողականության աճի հետ իջնում է միավոր արտադրանքի ինքնար-

ժեքը, իսկ ինքնարժեքի իջեցումը բերում է արտադրանքի շահութաբերության բարձրացում:

ԿՈՌԵԼՅԱՑԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ – ուսումնասիրում է արդյունքային ու ազդող ցուցանիշների փոխկապվածությունը և հնարավորություն է տալիս գնահատելու.

- ցուցանիշների միջև կապի սերտությունը զույգային, մասնակի և բազմակի կոռելյացիայի գործակիցների օգնությամբ,
- ռեգրեսիայի հավասարմամբ:

ԿՈՌԵԼՅԱՑԻՈՆ ՈՒՂԻՂ ԿԱՊ – ըստ որի արդյունքային ցուցանիշի (y) փոփոխման ուղղությունը համընկնում է ազդող գործոնի (x) փոփոխման ուղղության հետ: Ուղիղ կապի դեպքում ազդող գործոնի արժեքի մեծացմամբ ավելանում է նաև արդյունքային ցուցանիշի արժեքը նույնպես, իսկ փոքրացման դեպքում՝ նվազում: Այսպիսի կապերի օրինակներ կարող են ծառայել աշխատանքային ստաժի և աշխատանքի արտադրողականության, պարարտանյութերի քանակի և բերքատվության միջև կապերը:

ԿՈՎԵՐՆՈՏ – դա փաստաթուղթ է, որը ժամանակավոր՝ մինչ ապահովագրական վկայագրի պատրաստ լինելը, ապահովագրողի կողմից տրվում է ապահովագրվողին (ներառում է տեղեկատվություն այն մասին, որ ապահովագրության պայմանագրով ապահովագրվողի ցուցմունքները իրականացված են)՝ ի հաստատումն կնքված պայմանագրի:

ԿՐԵԴԻՏ – հաշվապահական հաշիվների գծով կազմված աղյուսակի աջ կողմի անվանումն է, որը հանդես է գալիս երկու իմաստով: Ակտիվային հաշիվներում կրեդիտը նշանակում է հաշվառվող տնտեսական միջոցների (ակտիվի) գումարների ելքագրում կամ նվազեցում, իսկ պասիվային հաշիվների դեպքում՝ ակտիվի կազմավորման աղբյուրների (պասիվի) գումարների մուտքագրում կամ ավելացում:

ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ – դրանք լայն առումով տնտեսավարող սուբյեկտի, կազմակերպության և տարբեր հաճախորդների (դեբիտոր) պարտքերն են իրավաբանական կամ

ֆիզիկական անձանց՝ նրանց կողմից մատակարարած ապրանքանյութական արժեքների, կատարած աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց, ինչպես նաև բանկային վարկերն ու տարբեր տեսակի պարտավորություններն են: Նեղ առումով՝ դեբիտոր կազմակերպության պարտքերն են մատակարարներին, ֆինանսական մարմիններին և այլ կազմակերպություններին, ընթացիկ ու ոչ ընթացիկ տարբեր տեսակի պարտավորությունների դիմաց: Օրինակ, գնորդ (դեբիտոր) կազմակերպությունը մատակարարից (կրեդիտորից) ստացել է ապրանքանյութական արժեքներ, բայց գումարը դեռևս չի վճարել: Քանի դեռ գումարը չի վճարվել դեբիտոր կազմակերպության կողմից, ապա դա նրա համար դառնում է կրեդիտորական պարտք:

ԿՐԿՆԱԿԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՂԱՆԱԿ – փաստաթղթերում արտացոլված տնտեսական գործառնությունները գրանցվում են երկու տարբեր հաշվապահական հաշիվներում միաժամանակ, այսինքն՝ մի հաշվի դեբետում և մյուսի կրեդիտում, միևնույն գումարի չափով: Նպատակը բոլոր հաշիվների դեբետում և կրեդիտում կատարվող գրանցումների հավասարության պահպանումն է, որով ստուգվում է հաշվապահական հաշվառման աշխատանքների ճշտությունը: Կրկնակի գրանցման եղանակը յուրահատուկ է միայն հաշվապահական հաշվառմանը և հանդիսանում է նրա մեթոդի կարևորագույն տարրերից մեկը:

ԿՈՒՊՈՆ (ԿՏՐՈՆ) – 1) արժեթղթի (բաժնետոմսի կամ պարտատոմսի) մի մասն է, որը կտրվում է դրանից, և իրավունք է տալիս տիրոջը՝ կտրոնի վրա նշված ժամկետը լրանալիս, ստանալ շահաբաժին կամ տոկոսային եկամուտ: Կուպոնը սովորաբար ամրացված է լինում պարտատոմսին, սակայն երբեմն կարող է շրջանառվել (գնվել և վաճառվել) ինքնուրույն: Բոլոր դեպքերում այն պետք է նույնացվի այն պարտատոմսի հետ, որին վերաբերում է, և պետք է պարունակի համապատասխան պարտապան կազմակերպության անվանումը, կուպոնի գումարը, պարտատոմսի անվանումն ու համարը, վճարող բանկի անվանումը, կուպոնի գործունեության ժամկետը, հերթական համարը՝ հաշվարկված տվյալ սերիայի առաջին կուպոնից: Կուպոնները սովորաբար կցվում են, ըստ ներկայացնողի, պար-

տատոմսերին: 2) Կուպոնային տոկոսադրույք, այսինքն՝ պարտատոմսի թողարկման պահին սահմանված տոկոսադրույքի չափով հաշվարկվում է տոկոսային եկամուտ: Օրինակ, 5 տոկոսանոց կուպոնը նշանակում է, որ պարտատոմսը բերում է 5% եկամուտ: Ելնելով կուպոնային տոկոսից, ներդրողը ստանում է պարտատոմսերի գծով տարեկան վճար: 3) ԱՊՀ մի շարք անդամ երկրների ժամանակավոր դրամական բաշխողական միավորն է, որը շրջանառվում էր ռուբլու հետ միասին:

Հ

ՀԱԿԱԴԱՐՁ ԿԱՊ – որի դեպքում գործոնային ցուցանիշի (x) արժեքի մեծացումը կամ փոքրացումը համապատասխանաբար առաջ է բերում արդյունքային ցուցանիշի (y) արժեքի փոքրացման կամ մեծացման, այսինքն՝ արդյունքային ցուցանիշի արժեքները գործոնային ցուցանիշի փոփոխության համեմատությամբ փոփոխվում են հակառակ ուղղությամբ:

ՀԱՃԱԽՈՐԴ – իրավաբանական կամ ֆիզիկական անձն է, որն օգտվում է կազմակերպության (օրինակ՝ բանկի) ծառայություններից, կամ մշտական գնորդներն ու պատվիրատուներն են:

ՀԱՄԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ – մի քանի ապահովագրողների կողմից նույն ռիսկից կամ ռիսկերի խմբից ապահովագրությունն է: Այս դեպքում բոլոր ապահովագրական գումարների հանրագումարը չի գերազանցում ապահովագրվող առարկայի ապահովագրական արժեքը:

ՀԱՄԱԴՐԵԼԻ (ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ) ԳՆԵՐՈՎ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄ – կատարվում է ինչպես ըստ արտադրված համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ)-ի, այնպես էլ՝ ըստ դրա օգտագործման ցուցանիշների: ՀՆԱ-ի արտադրության ցուցանիշների վերագնահատումը համադրելի գներով իրականացվում է կրկնակի դեֆլյացիայի եղանակի կիրառմամբ, որի ժամանակ ավելացված արժեքի մեծությունը ստացվում է որպես համադրելի գներով գնահատված թողարկման և միջանկյալ սպառման մեծությունների տարբերություն:

Թողարկման և միջանկյալ սպառման վերագնահատումը համադրելի գներով կատարվում է երկու եղանակով.

- հաշվետու ժամանակաշրջանի տվյալները դեֆլյատավորելով ընթացիկ գներին համապատասխան գների ինդեքսներով,
- բազային տարվա տվյալները՝ ընթացիկ գներով, ֆիզիկական ծավալի ինդեքսներով կամ բնեղեն չափիչներով՝ էքստրապոլյացիայի (համահարթեցման) ենթարկելով:

ՀՆԱ-ի օգտագործման ցուցանիշների համադրելի գներով վերագնահատման համար կիրառվում են համապատասխան գների ինդեքսներ (սպառողական գների ինդեքսը, կապիտալ ներդրումների ինդեքսը և այլն) և բնեղեն չափիչներ:

ՀԱՄԱԽԱՌՆ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔ – հաշվարկվում է, ծյուղային մակարդակով, որպես ապրանքների և ծառայությունների թողարկման ու միջանկյալ սպառման տարբերություն: «Համախառն» արտահայտությունը ցույց է տալիս, որ այդ ցուցանիշն իրենում ներառում է հիմնական կապիտալի արժեքի սպառումն արտադրության գործընթացում:

ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔ - ժամանակաշրջանի ցանկացած պահին փաստացի ընթացիկ և ոչնչով չպայմանավորված պարտավորությունների չվճարված գումարն է, որը պահանջում է հիմնական պարտքի և (կամ) տոկոսների վճարումներ հետագայում ժամանակի որևիցե պահին և իրենից ներկայացնում է ռեզիդենտների պարտավորությունները ոչ ռեզիդենտների նկատմամբ:

ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՈՒՏ – 1) ֆիզիկական կամ իրավաբանական անձի եկամուտն է (մուտքերը)՝ նախքան դրա ստացման հետ կապված ծախսերը հանելը, 2) ապրանքների և ծառայությունների իրացումից ստացված դրամական հասույթի և դրանց արտադրության վրա կատարված նյութական ծախսերի տարբերությունն է: Այն հավասար է աշխատավարձի և զուտ եկամտի գումարին, 3) հարկատուի համախառն եկամուտն է կազմավորման բոլոր աղբյուրներից, որից, սակայն հարկերը դեռևս չեն պահվել: Ներառում է ոչ միայն ընթացիկ, այլև անցած տարիների եկամտի վրա հիմնված տարբեր աղբյուրներից (հարկման տարում) ստացված եկամուտը: Եկամուտների շատ տեսակների

գծով հարկերը կարող են պահվել կազմավորման աղբյուրի մոտ՝ հարկատուին թողնելով մաքուր գումարը, 4) բոլոր աղբյուրներից ստացված եկամուտների ընդհանուր գումարը, 5) արժեթղթերում կամ անշարժ գույքում կատարված ներդրումների գծով եկամուտը, որը հաշվարկված է լրիվ տեսքով՝ մինչև հարկերի վճարումը և հատկացումների կատարումը: Համաձայն ՀՀ հարկային օրենսդրության, համախառն եկամուտը հարկային կամ հաշվետու տարում հարկատուի ստացած բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից:

ՀԱՄԱԽԱՌՆ ՀՈՍՔԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐ - ընդգրկում են հաշվետու ժամանակահատվածի վերջին միայն գործառնության արդյունքում իրականացված ներդրումների ծավալների հանրագումարը (առանց պարտավորությունների գծով մարումները, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների՝ արտակարգ իրավիճակների, մեխանիկական սխալի և կազմակերպության ուղղակի լուծարման արդյունքում իրականացված փոփոխությունները):

ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ (ՀՆԱ) – դա մակրոտնտեսական ցուցանիշ է, որը բնութագրում է տվյալ երկրի տնտեսության բոլոր ճյուղերում արտադրված ապրանքների ու ծառայությունների արժեքը՝ նախատեսված վերջնական սպառման, կուտակման և զուտ արտահանման համար: ՀՆԱ-ն հաշվարկվում է երեք՝ արտադրական, եկամուտների ձևավորման և եկամուտների օգտագործման (ծախսային), եղանակներով: Արտադրական եղանակով ՀՆԱ-ն ստացվում է որպես ապրանքների և ծառայությունների ողջ թողարկման ու միջանկյալ սպառման տարբերություն կամ որպես տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքի հանրագումար: Ընդ որում, ըստ ճյուղերի, ավելացված արժեքի ծավալները հաշվարկվում են հիմնական գներով, որոնք չեն ներառում ապրանքների և ներմուծման հարկերը, սակայն ներառում են ապրանքների և ներմուծման լրացուցիչ հատկացումները: Շուկայական գներով ՀՆԱ-ի հաշվարկման համար անհրաժեշտ է ավելացնել ապրանքների և ներմուծման զուտ (առանց լրացուցիչ հատկացումների) հարկերը: Ըստ եկամուտների ձևավորման աղբյուրների համախառն ներքին արդյունքն արտացոլում է անմիջապես արտադրական

գործընթացին մասնակցող միավորների, ինչպես նաև պետական հիմնարկների և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ստացած սկզբնական եկամուտները: Այս հաշվարկներում համախառն եկամուտը հանդիսանում է հաշվեկշռող հոդված և որոշվում է որպես արտադրական եղանակով հաշվարկված համախառն ներքին արդյունքի (շուկայական գներով) և աշխատողների աշխատանքի վարձատրության և արտադրության ու ներմուծման զուտ հարկերի տարբերություն: Նշված եղանակը կիրառվում է ՀՀ Ազգային վիճակագրության կողմից ոչ թե ՀՆԱ-ի անվանական ծավալի կամ դինամիկայի որոշման, այլ միայն դրա արժեքային կառուցվածքի վերլուծության համար: Եկամուտների օգտագործման կամ ծախսային եղանակով հաշվարկված համախառն ներքին արդյունքն իրենից ներկայացնում է ապրանքների և ծառայությունների վերջնական սպառման ծախսերի, համախառն կուտակման և զուտ արտահանման հանրագումար:

ՀԱՄԱԽԱՌՆ ՇԱՀՈՒՅԹ – 1) թողարկված արտադրանքի, ապրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների իրացումից զուտ հասույթի (առանց անուղղակի հարկերի՝ ավելացված արժեքի հարկ և ակցիզային հարկ) և դրանց հետ կապված ծախսերի միջև եղած տարբերությունն է: Երբ զուտ հասույթի գումարի չափը գերազանցում է կատարված բոլոր ծախսերին, ապա արդյունքում ստացվում է համախառն շահույթ, իսկ հակառակ դեպքում՝ վնաս: Վերջինիս գումարը «Ֆինանսական արդյունքների մասին» հաշվետվությունում ցույց է տրվում է փակագծերի մեջ: 2) իրենից ներկայացնում է ավելացված արժեքի այն մասը, որը մնում է արտադրողներին վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության և արտադրության հարկերի վճարման հետ կապված ծախսերը կատարելուց հետո: «Համախառն» կամ «զուտ» շահույթ արտահայտությունը տվյալ դեպքում ցույց է տալիս՝ արտադրության գործընթացում հիմնական կապիտալի սպառումը հաշվի առնված է նշված ցուցանիշում, թե ոչ: Տնային տնտեսություններին պատկանող ձեռնարկությունների արտադրական գործունեության արդյունքում ձևավորված շահույթը կոչվում է համախառն եկամուտ, քանի որ այն արտացոլում է ինչպես ձեռ-

նարկատիրոջ կողմից կատարած աշխատանքի վարձատրությունը, այնպես էլ՝ ձեռնարկատիրական շահույթը:

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵԿՇԻՌ – 1) ամփոփ հաշվապահական հաշվետվություն է, որում ներառված են մայր և դուստր ընկերությունների հաշվեկշիռները: Այն արտացոլում է ընկերության և նրա դուստր ընկերությունների ամփոփ ֆինանսական վիճակն ամբողջությամբ վերցրած: Կրկնակի հաշվարկից խուսափելու նպատակով համախմբված հաշվեկշռից հանվում է ընկերությունների միջև փոխադարձ (միջխմբային) շրջանառությունը: Համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, այլ անձանց կանոնադրական կապիտալում (հիմնադրամում) բանկի մասնակցությունը 50%-ը գերազանցելու դեպքում բանկը տվյալ անձանց հաշվեկշիռը միավորում է իր հաշվեկշռում՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով, 2) ամփոփ հաշվետվություն է, որն արտացոլում է ընկերության և նրա մասնաճյուղերի գործառնությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ – համայնքի ավագանու որոշմամբ կարող է օգտագործվել տվյալ տարվա բյուջեով նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման կամ չկանխատեսված ելքերի ֆինանսավորման նպատակով: Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարն ուղղվում է.

- նախորդ (եզրափակված) բյուջետային տարում վարչական մասից ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված ելքերի գծով՝առկա պարտավորությունների կատարմանը,
- վերը նշված պարտավորությունները կատարելուց հետո առաջացած միջոցների մնացորդն ուղղվում է համայնքի բյուջեի ֆոնդային մաս՝ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված ծախսերի ֆինանսավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄ – համայնքի բյուջեի հաստատումից հետո համայնքի ղեկավարը սահմանում է բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, հաստատում բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի նախահաշիվները: Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարումն ապահովելու նպատակով. ա) համայնքի ավագանու հաստա-

տած տարեկան բյուջեն՝ եռամսյակային համամասնություններով, և բյուջետային հիմնարկների պահպանման ծախսերի տարեկան և եռամսյակային բաշխմամբ հաստատված նախահաշիվները տրամադրում է համայնքի բյուջեի կատարման սպասարկումն իրականացնող ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համապատասխան տեղական գանձապետական բաժանմունքին, բ) ստորագրում է ֆինանսական փաստաթղթերը, գ) աջակցում է հարկային մարմիններին՝ համայնքի բյուջե հարկերի մուտքագրման գործում, դ) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Համայնքի բյուջեի կատարման պատասխանատուն համայնքի ղեկավարն է:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾ – այն կազմվում է համայնքի զարգացման եռամյա ծրագրով՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա: Համայնքի բյուջեի նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ – համայնքի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարը կարող է բյուջեն հաստատելու մասին համայնքի ավագանու ընդունած որոշմանը չհակասող վերաբաշխումներ կատարել: Համայնքի ղեկավարի կատարած փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի մասին որոշմամբ սահմանված չափաքանակները: Համայնքի բյուջեում փոփոխությունները և (կամ) լրացումները կարող են կատարվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկությամբ: Այդ փոփոխությունները և (կամ) լրացումները չեն կարող խախտել համայնքի բյուջեի հաշվեկշռվածությունը:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ – համայնքների բյուջեների կառուցվածքը, տեղական ինքնակառավարման մարմինների կող-

միջ իրականացվող լիազորությունների և դրանց ֆինանսավորման համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով, բաժանվում է հետևյալ բաղկացուցիչ մասերի՝ համայնքի բյուջեի վարչական մաս (վարչական բյուջե), համայնքի բյուջեի հիմնադրամային մաս (հիմնադրամային բյուջե): Համայնքի բյուջեի բաղկացուցիչ մասերից յուրաքանչյուրը պետք է հաշվեկշռված լինի: Համայնքների բյուջեների վարչական մասը (վարչական բյուջեն) ներառում է՝ համայնքների բյուջեներին օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող եկամուտները, այդ թվում՝ հարկային եկամուտները և տուրքերը, ոչ հարկային եկամուտները, պաշտոնական տրանսֆերտները:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ – իրականացնում են՝ համայնքի ավագանին, Ազգային ժողովը և կառավարությունը, օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում: Համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է իր անդամի (անդամների) և (կամ) աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով, ավագանու որոշած պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ – հիմնական սկզբունքներն են՝ 1) համայնքի զարգացման եռամյա ծրագրի հիման վրա համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորումը, 2) *պահուստային հիմնադրամի ստեղծումը*՝ որպես տվյալ տարվա համայնքի բյուջեում չկանխատեսված, ինչպես նաև վարկերի և այլ փոխառու միջոցների օգտագործման վճարների (տոկոսների) գծով ծախսերի աղբյուրի և կապիտալ ծախսերի ֆինանսավորման հիմնական երաշխիք, 3) *համայնքի բյուջեի հաշվեկշռվածությունը*՝ յուրաքանչյուր բյուջետային տարվա համար համայնքի բյուջեով նախատեսված ծախսերի հանրագումարը չպետք է գերազանցի տվյալ տարվա բյուջեով նախատեսված եկամուտների (մուտքերի) հանրագումարին, 4) *խնայողականությունը*, երբ կատարված ծախսին համապատասխանում է դրան համարժեք նյու-

թական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումը, 5) *արդյունավետությունը*, երբ ապահովվում է կատարված ծախսի և համայնքի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը, 6) *հավաստիությունը և հստակությունը,* որը հնարավորություն է ընձեռնում ապահովել բյուջեի կատարման ու բյուջետային գործընթացի նկատմամբ իրականացվող վերահսկողության արդյունավետությունը՝ բյուջեի հոդվածների հիմքում դրվող հստակ հաշվարկների միջոցով, 7) *հրապարակայնությունը,* որն ապահովում է համայնքի բյուջեի ձևավորման և կատարման վերաբերյալ համայնքի անդամների իրազեկությունը:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ – համայնքների բյուջեները կազմված են երկու մասից՝ վարչական բյուջե և ֆոնդային բյուջե:

Վարչական բյուջեն իր հերթին բաղկացած է մուտքերից և ելքերից: Մուտքերում ներառվում են՝ հարկային եկամուտները, տուրքերը, ոչ հարկային եկամուտները, պաշտոնական տրանսֆերտները, պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները, ինչպես նաև՝ փոխատվության ստացումը և տարեսկզբի ազատ մնացորդը: Վարչական բյուջեի ելքերում ներառվում են՝ ընթացիկ ծախսերը և փոխատվության մարումները:

Ֆոնդային բյուջեն ևս բաղկացած է մուտքերից և ելքերից: Մուտքերում ներառվում են՝ ոչ հարկային եկամուտները, կապիտալի գործառնություններից եկամուտները, պաշտոնական տրանսֆերտները, պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները, ինչպես նաև՝ վարկերը, մասնավորեցումից մուտքերը, պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքերը և ազատ մնացորդը: Ֆոնդային բյուջեի ելքերում ներառվում են՝ կապիտալ ծախսերը և վարկերի ու պարտատոմսերի դիմաց մարումները:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ – համայնքի բյուջեն ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով տեղական ինքնակառավարման մարմնին վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագիրն է:

Համայնքի բյուջեի կատարումը համայնքի բյուջեի մուտքերի ձևավորման, ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունն է:

Համայնքի բյուջեի կատարման պատասխանատուն համայնքի ղեկավարն է, իսկ համայնքի տնօրինության տակ գտնվող դրամական միջոցները շրջանառվում են նույն կարգով, ինչ կարգով շրջանառվում են պետական բյուջեի դրամական միջոցները:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ – համայնքի տվյալ տարվա բյուջեում չկանխատեսված, ինչպես նաև հիմնադրամային մաս կատարվող հատկացումների, համայնքների բյուջեների կողմից վարկերի և այլ փոխառու միջոցների օգտագործման վճարների (տոկոսների) գծով ստանձնված պարտքային պարտավորությունների կատարման ապահովման ֆինանսական աղբյուր է: Պահուստային հիմնադրամի միջոցներից համայնքի բյուջեում չկանխատեսված ծախսերի գծով ֆինանսավորումն իրականացվում է համայնքի ավագանու որոշումների հիման վրա:

ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ – նմանատիպ գործունեության պայմանագրով երկու կամ ավելի անձինք (մասնակիցները) պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար: Ձեռնարկատիրական գործունեության համար կնքված համատեղ գործունեության պայմանագրի կողմեր կարող են լինել միայն անհատ ձեռնարկատերերը և (կամ) առևտրային կազմակերպությունները: Մասնակցի ավանդ է համարվում այն ամենը, ինչ նա ներդնում է ընդհանուր գործում, ներառյալ՝ դրամը, այլ գույքը, մասնագիտական և այլ գիտելիքները, ունակություններն ու հմտությունները, ինչպես նաև՝ գործարար համբավն ու գործարար կապերը:

ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ – կանոնադրական կապիտալ, որն ընկերության մասնակիցների կողմից հայտարարվում է այն հիմնադրելիս և ամրագրվում է նրա կանոնադրությամբ: Նախկինում հայտարարված կանոնադրական կապիտալն ամբողջությամբ համալրելուց հետո ընկերության

մասնակիցները կարող են հայտարարել կանոնադրական կապիտալի նոր մեծություն, որը հաստատվում է մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ: Այն օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցելուց հետո մասնակիցները կարող են համալրել նոր հայտարարված կանոնադրական կապիտալը՝ օրենքով սահմանված ժամկետում:

ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ – այն անցկացվում է նյութական պատասխանատու անձերի համար անսպասելի ժամկետներում՝ անհրաժեշտությունից ելնելով:

ՀԱՇԻՎ – 1) գնորդի և վաճառողի միջև պայմանագրային հարաբերություններ են, որոնց համաձայն, վճարումը կատարվելու է հաջորդ ժամանակաշրջանում: Առևտրական հարաբերություններում հաշիվ (ապրանքագիր) է անվանվում ապրանքային փաստաթուղթը, որը վաճառողի կողմից դուրս է գրվում գնորդի անունով և հավաստում ապրանքի մատակարարումը կամ ծառայության մատուցումը, մեկ անձի պարտքը մյուսի հանդեպ:

Մասնագիտական ծառայություններ մատուցող անձը կարող է հաշիվ դուրս գրել իր հաճախորդին կամ գնորդին: Օգտագործվում են նաև «բաց հաշիվ» կամ «բաց հաշվով վարկ» տերմինները, կախված այն բանից, թե պայմանագիրը կնքվել է առևտրային նպատակներով, թե՝ սպառողական գնումները սպասարկելու համար, 2) բանկերի կամ ֆինանսական կազմակերպությունների կողմից կատարվող բոլոր գործառնությունների գրանցումն է՝ դրանց կատարման ամսաթվերի հետ միասին, արտահայտված դրամով: Այդ գործառնություններն առնչվում են ակտիվների, պարտավորությունների, եկամուտների, ծախսերի կամ իրավաբանական և ֆիզիկական անձանց հաշիվներում ընթացիկ մնացորդի հետ: Հանդիսանում է հաշվապահական հաշվառման համակարգերի մեջ տվյալների խմբավորման և պահպանման հիմնական միավորը: Ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի յուրաքանչյուր տեսակին համապատասխանում է իր հաշիվը: Կրկնակի գրանցման համակարգում հաշիվներն ունեն դեբետային (ձախ) և կրեդիտային (աջ) մասեր: Հաճախ հաշիվը պատկերում են «Т» տառի տեսքով, քանի որ էջը բաժանում են աջ և ձախ մասերի, որոնց վերևում ընդգծում են հաշվի անվանումը: Մուտքը գրանցվում է

մի սյունակում, ելքը՝ մյուսում: Հաշիվները կարող են վարվել գրավոր ձևով՝ հաշվապահական գրքում, առանձին քարտի վրա կամ համակարգչում՝ տեղեկատվության մագնիսական կրիչի վրա: Գոյություն ունեն ցպահանջ, ժամկետային, համատեղ, հավատարմագրային կառավարման, հատուկ, հաշվարկային, ընթացիկ և այլ հաշիվներ: Հաշիվները վարելու գծով վարչական պարտականությունները կատարում է հատուկ անձը, որը պատասխանատու է հաշվով գործառնությունների համար, 3) ներդրողների շրջանում տեղաբաշխելու համար արժեթղթերի համատեղ ձեռք բերման կապակցությամբ կողմերի միջև ֆինանսական և պայմանագրային հարաբերություններն են, 4) բրոքերային, դիլերային ընկերության և նրա հաճախորդի միջև փոխհարաբերությունն է, որի դեպքում ընկերությունն իր գրանցված ներկայացուցչությունների միջոցով գործում է որպես արժեթղթերի առք ու վաճառքի գծով գործակալ և իրականացնում է համապատասխան կառավարչական հսկողություն:

ՀԱՇԻՎ ԱԿՏԻՎԱ-ՊԱՍԻՎԱՅԻՆ – հաշվապահական հաշվի մի տեսակ է, որում գրանցումները միաժամանակ կատարվում են և՛ դեբետում, և՛ կրեդիտում:

ՀԱՇԻՎ ԱԿՏԻՎԱՅԻՆ – հաշվապահական հաշվի մի տեսակ է, որի դեբետում գրանցվում են հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական միջոցների սկզբնական մնացորդը, դրանց ավելացումները և այդ ժամանակաշրջանի վերջնական մնացորդը, իսկ կրեդիտում՝ տնտեսական միջոցների նվազումները: Այս հաշվի վերջնական մնացորդը հավասար է՝ սկզբնական մնացորդին գումարած ավելացումները, հանած կրեդիտում գրանցված նվազումները:

ՀԱՇԻՎ ԱՆԱԼԻՏԻԿ – այն հաշիվն է, որում տնտեսական միջոցները (ակտիվ), դրանց կազմավորման աղբյուրները (պասիվ) և տնտեսական գործառնությունները գրանցվում են ավելի մանրամասն, ըստ առանձին տարատեսակների՝ արժեքային արտահայտությամբ:

ՀԱՇԻՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ – ինքնատիպ ամփոփ աղյուսակ է, ինչպես և բոլոր մյուս հաշիվները,

այն նույնպես կազմված է երկու մասից՝ «ռեսուրսային», որտեղ ցույց են տրվում ապրանքների և ծառայությունների թողարկումն ու ներմուծումը, ապրանքների ու ներմուծման հետ կապված հարկերը և լրացուցիչ հատկացումները, իսկ «օգտագործման» մասում՝ սպառման (միջանկյալ և վերջնական) համար օգտագործվող ապրանքների և ծառայությունների ծավալները, հիմնական և շրջանառու կապիտալի կուտակումը, ապրանքների արտահանումը:

ՀԱՇԻՎ ԱՎԱՆԴԱՅԻՆ – բանկում այն հաշիվն է, որից ավանդագրված միջոցները կարող են դուրս հանվել ավանդատուի առաջին իսկ պահանջով (ցպահանջ ավանդի դեպքում), մինչև ժամկետը լրանալը (ժամկետային ավանդի դեպքում), կամ մինչև բանկային ավանդի պայմանագրում նշված պայմանների վրա հասնելը: Ավանդային հաշվի միջոցների դիմաց վճարվող տոկոսների մեծությունը կախված է ընթացիկ տոկոսադրույքից, գումարն ավանդադրելու ժամկետից, ավանդը վաղաժամկետ պահանջելու՝ ավանդատուի մտադրությունից, արժույթի տեսակից, ավանդի դիմաց տոկոսներ վճարելու պարբերականությունից և այլ գործոններից: Ավանդային հաշիվ բացելիս բանկի և ավանդատուի միջև կնքվում է բանկային ավանդի պայմանագիր:

ՀԱՇԻՎ ԸՆԹԱՑԻԿ – 1) բանկային հաշիվ է, որտեղից հաճախորդը կարող է ցանկացած պահին դրամ հանել (ԱՄՆ-ում համարժեքն է չեկային հաշիվը): Այդ հաշիվը թույլ է տալիս դուրս գրել չեկեր, հաճախորդին հնարավորություն է տալիս առօրյա ընթացիկ վճարումներ կատարել չեկերի միջոցով, ստանալ կանխիկ դրամ և միջոցներն ազատ օգտագործել այլ ձևերով: Ընթացիկ հաշիվ կարող է բացվել նաև ֆիզիկական անձի, կազմակերպությունների մասնաճյուղերի, բյուջետային հիմնարկությունների համար: Դրամական միջոցներն այդ հաշվից կարող են հեշտությամբ հանվել: Եթե հաշվում արտացոլվում են նաև փոխատվական գործառնություններ, ապա այն կոչվում է կոնտոկորենտային հաշիվ, 2) երկու կազմակերպությունների միջև փոխհարաբերությունների հաշիվ է, որում արտացոլվում են նրանց միջև միջոցների, ապրանքների և այլնի շարժը, 3) հաշիվ է, որում արտացոլվում են կազմակերպությունների ստորաբաժանումների միջև փոխադարձ վճարում-

ները և պարտքերը, 4) հաշիվ է, որում գրանցվում են ընկերակցության որևէ անդամի կողմից կատարված բոլոր գործառնությունները, որոնք անմիջապես չեն վերաբերում ընկերակցության կապիտալում նրա բաժնեմասին, 5) երկրի վճարային հաշվեկշռի մի մասն է, որում գրանցվում են կապիտալի շարժի հետ չկապված գործառնությունները: Ընդգրկում է առևտրային հաշվեկշիռը, ներմուծումը, արտահանումը, միակողմանի փոխանցումները, օտարերկրյա ներդրումների գծով տոկոսները և այլ եկամուտներ:

ՀԱՇԻՎ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ – հաշվում արտացոլվում են ապրանքների, ծառայությունների, եկամուտների ու տրանսֆերտների հետ կապված բոլոր տիպի գործառնությունները:

ՀԱՇԻՎ ԹՂԹԱԿՑԱՅԻՆ – այնպիսի հաշիվ է, որում արտացոլվում են կնքված թղթակցային պայմանագրի հիման վրա այլ բանկի հանձնարարականով և նրա հաշվին տվյալ բանկի կատարած հաշվարկները: Բացվում են առավելապես այն բանկերի միջև, որոնք ակտիվորեն իրականացնում են փոխանցումներ, ակրեդիտիվներ, ինկասացիոն և ապրանքների ու ծառայությունների դիմաց հաշվարկների գծով այլ գործառնություններ: Տարբերվում են «լորո» և «նոստրո» թղթակցային հաշիվներ: «Նոստրո» հաշիվը մի բանկում հանդիսանում է թղթակից բանկի «լորո» հաշիվ: Թղթակցային հաշիվները կարող են բացվել ինչպես փոխադարձության, այնպես էլ միակողմանի հիմքի վրա, որը որոշվում է մեկը մյուսի համար կատարվելիք հանձնարարականների ծավալով, միջազգային հաշվարկներում մասնակցության աստիճանով: Մեկ այլ բանկի դեպոզիտները (ավանդները) պահող բանկը դրանք հաշվառում է իր հաշվեկշռում որպես պարտք «լորո» հաշվով (տվյալ բանկում թղթակցային հաշիվների մնացորդ): Այդ բանկերում ավանդներ ունեցող բանկը դրանք հաշվառում է որպես ակտիվներ «նոստրո» հաշվով (թղթակից բանկերի մոտ):

Թղթակցային հաշիվներով վճարումները կատարվում են կամ հաշվի մնացորդի սահմաններում, կամ էլ հաշվի մնացորդի գերազանցմամբ՝ հաշվի գծով վարկ (օվերդրաֆտ) տրամադրելու հաշվին:

ՀԱՇԻՎ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ – հաշիվ բանկում, որը, որպես կանոն, նախատեսված է բնակչության խնայողությունների համար: Այդպիսի հաշվով գործառնությունների թիվը և գումարները սովորաբար սահմանափակված են, այսինքն՝ հաշվում միջոցները ներդրվում են կանոնավոր կերպով, երկարատև ժամանակաշրջանում, ոչ մեծ գումարներով և չեն կարող օգտագործվել չեկերի վճարման համար: Կարող են լինել ցպահանջ և ժամկետային: Խնայողական հաշիվները սովորաբար բերում են տոկոսային եկամուտ, և որոշ բանկեր տոկոսներ են գանձում՝ խնայողական հաշիվներից միջոցները չափազանց հաճախակի դուրս հանելու համար:

ՀԱՇԻՎ ՉԵԿԱՅԻՆ – հաշիվ է բանկում, որի հիման վրա կարելի է չեկ դուրս գրել, իսկ այդ հաշվի մնացորդին սովորաբար հաշվեգրվում է տոկոսային գումար:

ՀԱՇԻՎ ՊԱՍԻՎԱՅԻՆ – հաշվապահական հաշվի մի տեսակ է, որի կրեդիտում գրանցվում են հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական միջոցների կազմավորման աղբյուրների սկզբնական մնացորդը, դրանց ավելացումները և այդ ժամանակաշրջանի վերջնական մնացորդը, իսկ դեբետում՝ կազմավորման աղբյուրների նվազումները: Այս հաշվի դեպքում վերջնական մնացորդը հավասար է սկզբնական մնացորդին գումարած ավելացումները, և հանած դեբետում գրանցված նվազումները:

ՀԱՇԻՎ ՍԱՌԵՑՎԱԾ – 1) բանկային հաշիվ, որով վճարումները դադարեցվել են մինչև դատարանի որոշումը, կամ մինչև այն պահը, երբ օրինական գործողությունների հետևանքով հնարավոր կլինի հաշվից գումար հանել: Հաշիվը սովորաբար սառեցվում է հաշվետիրոջ սնանկացման կամ մահվան դեպքում:

Մահացած մարդու հաշիվը սառեցվում է՝ նախքան դատարանի որոշմամբ մահացածի գույքը բաժանելը: Դատարանի որոշմամբ որոշում են հաշվի նոր օրինական տիրոջը (տերերին), 2) բանկային հաշիվ որևէ երկրում՝ այդ երկրի արժույթով, որը փակ արժույթ է: Այդպիսի հաշվի միջոցները կարող են օգտագործվել միայն այդ երկրի ներսում, 3) հաշիվ, որի օգտագործումը լրիվ սահմանափակվում է այն դեպքում, երբ հաճախորդը

վաճառում է նախկինում ստացված (գնված), սակայն չվճարված արժեթղթերը, իսկ այնուհետև փորձում է վաճառքից ստացված հասույթը դուրս հանել հաշվից՝ արժեթղթերի գնման դիմաց դեռևս չվճարած, կամ ընդհանրապես չի կատարում գնման համար վճար՝ որոշակի ժամանակաշրջանում (սովորաբար՝ գործարքի պահից 7 օրվա ընթացքում): Հաշվի սառեցման ժամանակ հաճախորդը 90 օրվա ընթացքում չի կարող կատարել որևէ վճարում, քանի դեռ ամբողջությամբ չի վճարել նախորդ գործարքի համար, 4) բանկային հաշիվ, որը չի կարող օգտագործվել, սովորաբար այն պատճառով, որ դրա օգտագործումն արգելված է կառավարության կողմից:

ՀԱՇԻՎ ՍԻՆԹԵՏԻԿ – որում տնտեսական միջոցները (ակտիվ), դրանց կազմավորման աղբյուրները (պասիվ) և դրանց միջոցով իրականացվող տնտեսական գործառնությունները գրանցվում են ընդհանրացված տեսքով՝ արժեքային արտահայտությամբ:

ՀԱՇԻՎ ՎԱՐԿԱՅԻՆ – հաշիվ, որտեղ բանկերը հաշվառում են վարկերի տրամադրումը և դրանց վերադարձը: Վարկը տրամադրելիս վարկային հաշիվը դեբետագրվում է, իսկ հաճախորդի հաշիվը՝ կրեդիտագրվում: Վարկային հաշիվները ստորաբաժանվում են պարզ և հատուկ հաշիվների: Պարզ հաշվով կրեդիտագրումը, որպես կանոն, կատարվում է ըստ մնացորդի, իսկ հատուկ հաշվով կրեդիտագրումն իրականացվում է ըստ շրջանառության:

ՀԱՇԻՎ ՖԱԿՏՈՒՐԱ – ֆինանսական փաստաթուղթ է, որը վկայում է ապրանքների կամ ցուցաբերվող ծառայությունների մատակարարման մասին: Այն լրացվում և դուրս է գրվում մատակարարի, վաճառողի կողմից՝ գնորդի անունով, յուրաքանչյուր տեսակի ապրանքի (ապրանքախմբի), ցուցաբերվող ծառայության և կատարվող աշխատանքի գծով: Այդ փաստաթղթում նշվում են կողմերի անվանումներն ու հասցեները, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ճշգրիտ անվանումը, քանակը, գինը և այլն: Հաշիվ ֆակտուրան համարվում է հաշվարկներ և վճարումներ կատարելու հիմք:

ՀԱՇԻՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ – արտացոլում է արտաքին աշխարհի հետ այն բոլոր գործառնությունները, որոնց արդյունքում տեղի է ունենում ռեզիդենտների արտաքին ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխություն: Ընդ որում, վերագնահատման հետևանքով ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը ֆինանսական հաշվում չի գրանցվում: Ֆինանսական հաշվի շրջանակներում ըստ յուրաքանչյուր ակտիվի գործառնությունները գրանցվում են զուտ ձևով, այսինքն՝ գրանցումներն արտահայտում են որոշակի ժամանակահատվածի ընթացքում տվյալ տեսակի ակտիվի կամ պարտավորության գծով բոլոր դրական և բացասական գործառնությունների զուտ գումարային փոփոխությունը: Ակտիվների զուտ գումարային նվազումը կամ պարտավորությունների զուտ գումարային աճը կրեդիտագրվում են, իսկ ակտիվների զուտ գումարային աճը կամ պարտավորությունների զուտ գումարային նվազումը՝ դեբետագրվում:

ՀԱՇԻՎՆԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ – դրանք ստորաբաժանվում են երեք ենթախմբի՝ կալկուլյացիոն հաշիվների, հավաքման-բաշխման հաշիվների և համադրման հաշիվների:

ՀԱՇԻՎՆԵՐ ԳՈՒՅՔԱ-ՆՅՈՒԹԱԿԱՆ – այդ հաշիվներին են վերաբերվում բոլոր տեսակի գույքային (ոչ ընթացիկ ակտիվներ) և ապրանքանյութական (նյութական ընթացիկ ակտիվներ) արժեքները հաշվառող հաշիվները՝ շահագործման մեջ գտնվող և չգտնվող հիմնական միջոցները, ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվները, պաշարները, արագամաշ առարկաները, պատրաստի արտադրանքը, ապրանքները և այլն: Նշված բոլոր հաշիվներն էլ ակտիվային են:

ՀԱՇԻՎՆԵՐ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ – նախատեսված են արտադրական ծախսումների և արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ինքնարժեքի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, որոնք օգտագործվում են կազմակերպության ներքին կարիքների համար՝ կառավարչական որոշումներ ընդունելու նպատակով:

ՀԱՇԻՎՆԵՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ – այս հաշիվներն օգտագործվում են այն դեպքում, երբ անհրաժեշտ է լինում տնտեսավարող սուբյեկտների տնտեսական միջոցների կամ դրանց կազմավորման աղբյուրների որևէ խումբն արտացոլել ընթացիկ հաշվառման մեջ կամ հաշվապահական հաշվեկշռում՝ երկու տարբեր գնահատումներով: Օրինակ՝ հիմնական միջոցները, արագամաշ առարկաները՝ նրանց սկզբնական և մնացորդային արժեքով, ապրանքները՝ գնման գներով և մանրածախ գներով: Այդ նպատակի համար անհրաժեշտություն է առաջանում հիմնական հաշվին առընթեր ունենալ մի երրորդ հաշիվ, որը կնպաստի արտացոլված տնտեսական միջոցների կամ դրանց կազմավորման աղբյուրների գնահատումը ճշտելու համար: Այդպիսի հաշիվներ են՝ հիմնական միջոցների, արագամաշ առարկաների գծով, դրանց մաշվածության հաշիվը, իսկ ապրանքների գծով՝ «Առևտրային հավելագին» հաշիվը:

ՀԱՇԻՎՆԵՐ ՀԱՄԱԴՐՄԱՆ – դրանք նախատեսված են արտադրության և շրջանառության գործընթացի հետևանքներն ի հայտ բերելու համար: Այս հաշիվների թվին է պատկանում «Իրացում» ընդհանուր հաշիվը («Գործառնական գործունեությունից եկամուտներ և ծախսեր» հաշիվները), ըստ որի, համադրված են դեբետային ու կրեդիտային մնացորդները, և վերջնական արդյունքում որոշվում է շահույթը կամ վնասը:

ՀԱՇԻՎՆԵՐ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ – այս հաշիվներն օգտագործվում են, երբ տարբեր կազմակերպություններ կամ տնտեսավորող սուբյեկտներ փոխհարաբերությունների մեջ են մտնում միմյանց միջև՝ ապրանքանյութական արժեքների տեղափոխման, դրամի կանխիկ վճարման, անկանխիկ փոխանցումների և այլ տեսակի գործառնությունների ժամանակ: Հաշվարկային հաշիվները լինում են՝ ակտիվային, պասիվային և ակտիվա-պասիվային:

ՀԱՇԻՎՆԵՐ ՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ – նախատեսված են կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի և պարտավորությունների հաշվառման համար: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում հաշվապահական հաշվեկշռում արտացոլվում են այս հաշիվների (դեբետային և կրեդիտային) մնացորդները:

ՀԱՇԻՎՆԵՐ ՀԱՎԱՔՄԱՆ-ԲԱՇԽՄԱՆ – դրանք օգտագործվում են արտադրության կամ շինարարության գծով, ինչպես նաև ընդհանուր բնույթ կրող ծախսերը հաշվառելու համար: Այդպիսի ծախսերն ամբողջ հաշվետու ժամանակաշրջանում հավաքվում են հավաքման-բաշխման հաշվի դեբետում և այդ ժամանակաշրջանի վերջում բաշխելով ըստ պատկանելության, փոխանցվում են համապատասխան հաշիվներին՝ դրանցից յուրաքանչյուրին վերաբերող չափով: Հաշիվների այս խմբին են պատկանում, օրինակ, «Վարչական և ընդհանուր այլ ծախսեր», «Գործառնական այլ ծախսեր» հաշիվները: Հավաքման-բաշխման հաշիվները մնացորդ չեն ունենում:

ՀԱՇԻՎՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄԱՅԻՆ – դրանք այն հաշիվներն են, որոնք առաջանում են ոչ միայն տնտեսավարող սուբյեկտին ամրացված միջոցներից, այլև կազմավորման տարբեր աղբյուրներից և զուտ շահույթի բաշխումից: Այս հաշիվներին են պատկանում կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալը, պահուստային ու լրացուցիչ կապիտալները և այլն: Նշված բոլոր հաշիվներն էլ պասիվային են, և դրանցում համապատասխան գումարների ավելացումները գրանցվում են կրեդիտում, իսկ նվազեցումները՝ դեբետում:

ՀԱՇԻՎՆԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ – հաշվապահական հաշվառման այն հաշիվներն են, որոնք օգտագործվում են տնտեսավարող սուբյեկտին պատկանող բոլոր միջոցների դրությունն ու շարժը հաշվառելու և վերահաշվելու համար: Հիմնական հաշիվները ստորաբաժանվում են չորս ենթախմբի՝ գույք-նյութական, դրամական, հաշվարկային և հիմնադրամային:

ՀԱՇԻՎՆԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ – դրանք նախատեսված են կազմակերպության եկամուտների և ծախսերի հաշվառման համար: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում այս հաշիվների զուտ շրջանառությունը (դեբետայինը՝ ծախսերի գծով և կրեդիտայինը՝ եկամուտների գծով) շահույթի կամ վնասի տեսքով արտացոլվում է «Ֆինանսական արդյունքների մասին» հաշվետվությունում:

ՀԱՇԻՎՆԵՐ ՖԻՆԱՆՍԱ-ՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ – դրանք այն հաշիվներն են, որոնք արտացոլում են տնտեսավարող սուբյեկտի տնտեսական գործունեության ֆինանսական հետևանքները՝ շահույթը կամ վնասը:

ՀԱՇԻՎՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ – դրանք ֆինանսական, կառավարչական և արտահաշվեկշռային հաշվառման հաշիվներն են:

ՀԱՇՎԱՅԻՆ ԱԶԱՏ ԹԵՐԹԵՐ – հաշվային ռեգիստրների ձևերից են, որոնք ի տարբերություն հաշվային քարտերի, ավելի մեծ չափսերի են և օգտագործվում են որպես օրագիր-օրդերներ ու տեղեկագրեր: Նրանք կարող են ունենալ տարբեր կառուցվածք՝ զանազան հաշիվներում կատարվող գրանցումների առանձնահատկություններին համապատասխան: Ազատ թերթերը պահվում են ոչ թե քարտարկղում, այլ առանձին թղթապանակներում:

ՀԱՇՎԱՅԻՆ ՉԱՓԻՉՆԵՐ – դրանք նպաստում են տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեությունը հաշվառելուն, նրանց ենթակայության տակ եղած միջոցների (ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվների) մեծությունը և կատարված աշխատանքի ծավալը որոշելուն: Հաշվային չափիչները լինում են հիմնականում երեք տեսակի՝ բնական, աշխատանքային և դրամական, որոնց միջոցով բնութագրվում է տվյալ սուբյեկտի տնտեսական միջոցների (ակտիվների) և գործընթացների ոչ միայն քանակական, այլև որակական կողմերը:

ՀԱՇՎԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐ – պատշաճ ձևով կազմված, ստուգված, հաստատված և մշակված փաստաթղթերի հիման վրա հստակ ձևի աղյուսակներ են, որոնցում արտացոլվում են կատարվող տնտեսական գործառնությունները: Ըստ ձևի դրանք ստորաբաժանվում են հաշվապահական մատյանների, քարտերի և ազատ թերթերի, որոնք իրենց ձևով և արտաքին տեսքով տարբերվում են:

ՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ – դրանց միջոցով ձևակերպվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող գործընթացներում տեղի ունեցող բազմաթիվ ու բազմաբնույթ գոր-

ծառնություններ: Այդ փաստաթղթերում նշվում են դրանց կատարման տեղն ու ժամանակը, բովանդակությունը՝ քանակական ու արժեքային ցուցանիշներով, ինչպես նաև կատարող այն անձինք, որոնց միջոցով իրականացվում են այդ գործառնությունները: Փաստաթղթում նշվում են նաև նրանց ստորագրությունները:

ՀԱՇՎԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ – դրանք հաշվային ռեգիստրների ձևերից են, որոնք ունեն աղյուսակի տեսք: Գրանցումների ժամանակ կարող են տեղադրվել ու դասավորվել ցանկացած ձևով և դրանցում կատարել ոչ միայն սովորական, այլև պատճենահան ու մեքենայացված գրանցումներ: Դրանք պահվում են հատուկ պատրաստված քարտարկղերում՝ օգտագործումը հեշտացնելու նպատակով:

ՀԱՇՎԱՆՑՈՒՄ – 1) ապրանքների, արժեթղթերի և մատուցված ծառայությունների դիմաց անկանխիկ հաշվարկների համակարգ է, որը հիմնված է պահանջների ու պարտավորությունների փոխադարձ մարման (հաշվանցման) վրա: Հաշվանցման նպատակն է փոխադարձ պարտքերի կրճատումը, հաշվարկների արագացումը և վճարային միջոցների խնայողությունը: Կարող է լինել երկկողմ և բազմակողմ: Հաշվանցումն իրականացվում է բանկերի կամ հատուկ հաշվանցման կազմակերպությունների՝ հաշվարկային կենտրոնների, պալատների, տների, միջոցով: Առաջին անգամ հաշվանցումը սկսեց կիրառվել Անգլիայում 18-րդ դարի կեսերին: Առաջին միջազգային հաշվանցումը ստեղծվեց 1885թ., ընդ որում՝ սկանդինավյան երկրների միջև հաշվարկներ կատարելու համար միջազգային հաշվարկներում կատարվում է արտարժութային հաշվանցման եղանակով: Առավել տարածված են երկկողմ հաշվանցումները: Կախված մարման եղանակից, ստորաբաժանվում են փոխարկվող մնացորդով (մնացորդը ամբողջությամբ կամ մասամբ մարվում է ոսկով կամ ազատ փոխարկելի արտարժույթով) և ոչ փոխարկելի մնացորդով հաշվանցումների (մնացորդը ծածկվում է ապրանքների մատակարարումներով): 2) ֆինանսական ոլորտում՝ տարածքային հաշվարկների կենտրոնի (կենտրոնների) անդամների միջև շրջանառվող բոլոր ֆինանսական գործիքների գծով դրամի ընդհանուր շարժը:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇԻՎ – տնտեսավարող սուբյեկտի միատեսակ բովանդակությամբ տնտեսական միջոցների, դրանց կազմավորման աղբյուրների, տնտեսական գործընթացների ու դրանց ֆինանսական հետևանքների ընթացիկ հաշվառման միջոց է, որը հաշվապահական հաշվառման մեթոդի կարևորագույն տարրերից մեկն է: Ըստ հաշվառման օբյեկտի տնտեսագիտական բովանդակության, հաշվապահական հաշիվները լինում են՝ ակտիվային, պասիվային և ակտիվապասիվային՝ ավելացմամբ ու նվազեցումով, իսկ ըստ ձևի՝ հաշվապահական հաշիվը երկկողմ աղյուսակ է, որի ձախ կողմը կոչվում է դեբետ, իսկ աջ կողմը՝ կրեդիտ: Հաշվապահական հաշիվներն ըստ նշանակման և կառուցվածքի դասակարգվում են՝ հիմնական, կարգավորող, գործառնական, ֆինանսահետևանքային և արտահաշվեկշռային հաշիվների:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐ – 1) սկզբնական հաշվառման փաստաթղթերում առկա տեղեկատվությունը հավաքվում և համակարգվում է հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում, 2) տնտեսական գործառնությունները գրանցամատյաններում գրանցվում են ժամանակագրական կարգով, 3) գրանցամատյանները ժամանակին և ամբողջական կազմելու պատասխանատվությունը կրում են դրանք վարող անձինք, 4) գրանցամատյաններում չծանուցված ուղղումներ չեն թույլատրվում: Սխալի ուղղումը հաստատվում է տվյալ գրանցամատյանն ստորագրելու իրավունք ունեցող անձի ստորագրությամբ՝ նշելով ուղղման տարին, ամիսը և ամսաթիվը, 5) հաշվապահական հաշվառումն կարգավորող պետական մարմինը կարող է սահմանել գրանցամատյանների օրինակելի ձևեր, որոնցից կազմակերպությունն ինքնուրույն ընտրում է իր կողմից կիրառելի ձևը, կամ, ելնելով սույն օրենքից և հաշվապահական հաշվառման ընդհանուր մեթոդաբանական սկզբունքներից, ինքնուրույն սահմանում է գրանցամատյանների ձևերը:

Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերով կարող են սահմանվել պարտադիր կիրառման ենթակա գրանցամատյանների ձևեր:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ – իրականացնում է կառավարության լիազորած պետական մարմինը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, իսկ բանկերում՝ կենտրոնական բանկը, կառավարության լիազորած պետական մարմնի հետ համատեղ:

Հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինն իր իրավասության սահմաններում հաստատում է՝ ա) հաշվապահական հաշվառման ստանդարտները (չափորոշիչները), բ) հաշվապահական հաշվառման հաշվային պլանները և դրանց կիրառման մասին հրահանգները, գ) հաշվապահական հաշվառման ստանդարտների կիրառման, ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների կատարման, հաշվապահական հաշվառման քաղաքականության, արտադրական ծախսումների (ինքնարժեքի) հաշվառման վերաբերյալ մեթոդական ցուցումները, հրահանգները:

Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու որևէ հարցի վերաբերյալ հաշվապահական հաշվառման ստանդարտներում և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերում մոտեցումների բացակայության դեպքում կազմակերպությունը մշակում է դրանք ինքնուրույն:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆ – նույն համակարգի բոլոր կազմակերպություններում և առևտրային ֆինանսա-տնտեսական գործառնությունների միանման ձևակերպումն ապահովելու նպատակով, տարբեր տեսակի հաշվապահական հաշիվների (ակտիվային, պասիվային, ակտիվա-պասիվային) հիման վրա կազմված մի պլան է, որտեղ ծածկագրերի հերթականությամբ լուսաբանվում է յուրաքանչյուր հաշվի բովանդակությունը: Հաշվային պլանն ըստ տնտեսական բովանդակության կազմված է՝ հաշիվների դասերից, հաշիվների խմբերից, առաջին կարգի հաշիվներից (սինթետիկ հաշիվներ) և երկրորդ կարգի հաշիվներից (ենթահաշիվներ):

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎԵՐ – ընթացիկ հաշվառումը կազմակերպելու և վարելու համար կիրառվող հաշվային ռեգիստրների ու նրանց միջև գոյություն ունեցող փոխադարձ կապի մի որոշակի համակարգ է: Հաշվառման պրակտիկայում

կիրառվել են հետևյալ ձևերը՝ մայր մատյանային, մեմորիալ-օրդերային, օրագրա-օրդերային, աղյուսակա-պերֆոքարտային, իսկ այժմյան պայմաններում՝ համակարգչային-ավտոմատացված հաշվառման ձևը:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ – սահմանում է տվյալ պետությունում հաշվապահական հաշվառում կազմակերպելու և վարելու, ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվություններ կազմելու ու ներկայացնելու միասնական հիմունքները, կարգավորում է հաշվապահական հաշվառմանը վերաբերող այլ հարաբերություններ:

Սույն օրենքը տարածվում է, սահմանված կարգով, պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց (ներառյալ՝ նրանց ստեղծած հիմնարկների), օտարերկրյա կազմակերպությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների վրա:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵԹՈԴ – այն փաստաթղթավորման և գույքագրման, հաշվապահական հաշիվների և կրկնակի գրանցման, գնահատման ու կալկուլյացիայի, հաշվապահական հաշվեկշռի և հաշվետվությունների ուսումնասիրման ամբողջականությունն է:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ – ներառում է. 1) հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, ինչպես նաև համակարգչային կրիչների վրա գտնվող տեղեկատվությունը՝ սկզբնական հաշվառման փաստաթղթերը, գրանցամատյանները, ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը, հաշվապահական հաշվառման մեքենայական մշակման ծրագրերը: Դրանք կազմակերպության կողմից պահպանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, բայց ոչ պակաս, քան հինգ տարի, 2) հաշվապահական հաշվառման փաստաթղթերի առգրավումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով: Կազմակերպությունն իրավունք ունի առգրավված փաստաթղթերը կրկնօրինակել և պահել իր մոտ, 3) հաշվապահական հաշվառման փաստաթղթերի պահպանումը կազմակերպելու պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարը:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ – ստորագրելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է կազմակերպության ղեկավարը՝ կախված տվյալ անձի զբաղեցրած պաշտոնից, գործառնության ոլորտից, էությունից և դրամական միջոցների գումարի մեծությունից:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ – կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր ու անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ – ներառում են «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքը, հաշվապահական հաշվառմանը վերաբերող Հայաստանի Հանրապետության այլ օրենքները, սույն օրենքով սահմանված՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի կողմից ընդունված իրավական այլ ակտերը:

Բոլոր կազմակերպությունները պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ – հաշվեկշռային հաշվետվություն (ՁՆ N1), որն ըստ կառուցվածքի երկկողմանի աղյուսակ է՝ արժեքային արտահայտությամբ, որի ձախ մասը (ակտիվ) որևիցե ժամանակաշրջանի պահի դրությամբ արտահայտում է տնտեսավարող սուբյեկտի տնտեսական միջոցների կազմն ու տեղաբաշխումը, իսկ աջ մասը (պասիվ)՝ այդ տնտեսական միջոցների կազմավորման աղբյուրները: Հաշվեկշռի ակտիվի և պասիվի հանրագումարներն իրար հավասար են լինելու, քանի որ տվյալ տնտեսավարող սուբյեկտը պետք է կազմավորման աղբյուրների գումարին համապատասխան իր տրամադրության տակ ունենա տնտեսական միջոցներ (ակտիվներ): Հաշվեկշռի ցուցանիշները կազմվում են հաշվապահական հաշվառման տվյալների հիման վրա: Ըստ հաշվապահական հաշվառման գործող ստանդարտների, կազմակերպությունների հաշվեկշիռը բաղկացած է հինգ բաժիններից, ընդ որում, ըստ ակտիվի եր-

կուսը՝ ոչ ընթացիկ ակտիվներ և ընթացիկ ակտիվներ, իսկ ըստ պասիվի՝ երեքը, սեփական կապիտալ, ոչ ընթացիկ պարտավորություններ և ընթացիկ պարտավորություններ:

Ի տարբերություն մնացած տնտեսավարող սուբյեկտների, բանկերի հաշվապահական հաշվեկշիռը բաղկացած է երեք բաժիններից, այդ թվում՝ ընդհանուր ակտիվներից, սեփական կապիտալից և պարտավորություններից:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ – ցուցանիշների համակարգ է, որոնք բնութագրում են կազմակերպության միջոցների վիճակը և ֆինանսատնտեսական գործունեությունը որոշակի ժամանակահատվածում (ամսում, եռամսյակում, տարում): Կազմվում է հաշվապահական հաշվառման տվյալների հիման վրա:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՋԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ – դրանք կազմվում են տնտեսավարող սուբյեկտի հաշվապահությունում տարբեր տեսակի տեղեկանքների, տեղեկագրերի, ամփոփագրերի ձևով կամ այլ փաստաթղթերով ընդգրկված տնտեսական գործառնությունների ձևակերպման նպատակով: Այդպիսի փաստաթղթերից են՝ հիմնական միջոցների ամորտիզացիոն հատկացումների հաշվարկման տեղեկագրերը, հայտնաբերված սխալներն ուղղելու համար կազմվող տեղեկանքները և այլն:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՏՅԱՆՆԵՐ – հաշվային ռեգիստրների ձևերից են, որոնցում կատարվում են տնտեսական գործառնությունների գրանցումներ թե սինթետիկ, և թե անալիտիկ հաշիվների վերաբերյալ: Մատյանները բացվում են յուրաքանչյուր տարվա սկզբում՝ դրանց կազմի վրա նշելով տնտեսավարող սուբյեկտի անվանումը, մատյանի անվանումը և տարեթիվը: Այն էջակալվում է և վերջին էջի վրա ցույց է տրվում մատյանի օգտագործման նպատակը, որը հաստատվում է գլխավոր հաշվապահի ստորագրությամբ ու կազմակերպության կլոր կնիքով:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵԿԱՄՈՒՏ ՉԵՆԱՉՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ – այսպիսի ճշտգրտման անհրաժեշտությունը սովորաբար ծագում է միայն այն դեպքում, երբ հարկատուն հետ է գնում իր բաժնետոմսերը կամ փայաբաժինները և դրանց իրաց-

ման ու հաշվեկշռային արժեքի միջև առաջանում է դրական տարբերություն: Ֆինանսական արդյունքների հաճրագումարը ավելացվում է տարբերության չափով, եթե նման ետգնումը պայմանավորված չէ օրենքի պահանջով:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏՇԱԿՈՎ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՉՃԱՆԱՉՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ – այս գումարները նվազեցվում են ֆինանսական արդյունքների հաճրագումարից: Դրանց թվին են պատկանում՝

- օրենքով զեղչված կամ ներված հարկային պարտավորությունների գումարները,
- հարկատուի ստացած շահաբաժինները,
- արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների ու պարտավորությունների վերագնահատումից ստացված դրական արդյունքը,
- հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան նախորդող երեք տարիներից ավելի վաղ ժամանակաշրջաններում պակաս ցույց տրված եկամուտը և կամ ավել ցույց տրված ծախսը,
- իրավաբանական անձի լուծարման դեպքում՝ հարկատուի բաժնեմասի դիմաց ստացված մնացորդային գույքի գումարի և այդ բաժնեմասի հաշվարկային արժեքի դրական տարբերությունը,
- գյուղատնտեսական արտադրանքի արտադրության հետ կապված եկամուտները,
- հաստատագրված վճարով հարկվող գործունեության հետ կապված եկամուտները:

Վերջին երկու տեսակի գործունեություններին վերաբերող ծախսերը ներառվում են չնվազեցվող ծախսերի մեջ, այսինքն՝ գումարվում են ֆինանսական արդյունքներին, բացառելով կրկնակի նվազեցումը:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ – 1) հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են տնտեսական գործառնության կատարումը, 2) սկզբնական հաշվառման փաստաթղթերը պետք է ունենան հետևյալ պարտադիր ռեկվիզիտները (վավերապայմանները)՝ ա) փաստաթղթի անվանումը, բ) հերթական համարը, գ) կազմելու

տարին, ամիսը և ամսաթիվը, դ) գործառնության մասնակիցների (մասնակցի) անվանումը (անունը, ազգանունը), ե) տնտեսական գործառնության բովանդակությունը, զ) տնտեսական գործառնության չափման միավորները՝ դրամական և բնաիրային արտահայտությամբ, է) պատասխանատու անձանց պաշտոնները և նրանց ստորագրությունները: Սկզբնական հաշվառման փաստաթղթերում կարող են ներառվել լրացուցիչ վավերապայմաններ՝ կախված գործառնության բնույթից և տվյալների մշակման համակարգից: Լրացուցիչ վավերապայմանները կարող են սահմանել հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինը և (կամ) կազմակերպությունը, 3) սկզբնական հաշվառման փաստաթղթերը կազմվում են գործառնության կատարման պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա գործառնության ավարտից անմիջապես հետո: Սկզբնական հաշվառման փաստաթղթերը ժամանակին և ամբողջական ձևակերպելու, սահմանված կարգով և ժամկետներում հաշվապահական հաշվառման մեջ արտացոլելու համար, դրանց փոխանցման պատասխանատվությունը կրում են այդ փաստաթղթերը կազմող և ստորագրող անձինք, 4) սկզբնական հաշվառման փաստաթղթերում սխալի ուղղումը համաձայնեցվում է տնտեսական գործառնության մասնակիցների հետ և հաստատվում տվյալ փաստաթուղթն ստորագրելու իրավունք ունեցող անձանց ստորագրություններով՝ նշելով ուղղման տարին, ամիսը և ամսաթիվը: Դրամարկղային և բանկային փաստաթղթերում սխալների ուղղում չի թույլատրվում, 5) հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինը կարող է սահմանել սկզբնական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևեր:

Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերով կարող են սահմանվել պարտադիր կիրառման ենթակա սկզբնական հաշվառման փաստաթղթերի ձևեր:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ – 1) սկզբնական հաշվառման փաստաթղթերում, գրանցամատյաններում և ներքին օգտագործման համար կազմված հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունը համարվում է առևտրային գաղտնիք, որին կարելի է ծանոթանալ կազմակերպության ղեկավարի թույլտվությամբ՝ կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով և օրենքով նախատեսված դեպքե-

րում ու կարգով, 2) առևտրային գաղտնիք համարվող տեղեկատվությանը ծանոթացած անձինք և կազմակերպությունները պարտավոր են պահպանել դրա գաղտնիությունը: Վերջինիս հրապարակման դեպքում նրանք կրում են պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ – 1) դրամական միջոցների և նյութական արժեքների հաշվառման գրքերի և տեղեկագրերի վարումն է՝ փաստաթղթավորման որոշակի կանոնների և ձևերի պահպանմամբ: Հաշվապահությունը առավել լայնորեն տարածված է բաժնետիրական ընկերություններում, կազմակերպություններում, ֆիրմաներում, սակայն կարող է կիրառվել նաև ընտանիքում, երկրի մասշտաբով: Հաշվապահությունը կազմակերպության ինքնուրույն առանձնացված ստորաբաժանում է և չի կարող մտնել կազմակերպության մյուս ստորաբաժանումների մեջ: Սովորաբար գլխավորում է գլխավոր հաշվապահը: Հաշվապահությունը պարտավոր է կազմակերպել և վարել ամբողջ հաշվապահական հաշվառումը, կազմել ֆինանսական հաշվետվությունները, վերահսկել բոլոր տնտեսական գործառնությունները՝ դրանց օրինականության և տնտեսական նպատակահարմարության տեսակետից, իրականացնել հսկողություն նախահաշվային և ֆինանսական կարգապահության պահպանման նկատմամբ և այլն, 2) հաշվապահական հաշվառման վարում:

ՀԱՇՎԱՌՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ (ՕՊԵՐԱՏԻՎ) – դիտարկում, խմբավորում և արտացոլում է տնտեսավարող սուբյեկտի տնտեսական գործունեության առանձին գործառնություններն ու գործընթացները հենց դրանց կատարման պահին՝ բավականաչափ սեղմ ժամանակում: Կառավարչական (օպերատիվ) հաշվառումն իրականացվում է անմիջականորեն աշխատատեղերում (արտադրամաս, բաժին), այդ պատճառով էլ այդ տվյալները սահմանափակվում են կազմակերպության շրջանակներում: Կառավարչական (օպերատիվ) հաշվառման տվյալները կարևոր նշանակություն ունեն տնտեսավարող սուբյեկտների կառավարման համար (արտադրանքի թողարկման, առաքման, իրացման, ծառայությունների մատուցման և այլնի հաշվառում): Այս հաշվառումն իրականացվում է միայն անհրաժեշտության դեպքում:

ՀԱՇՎԱՌՈՒՄ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ – դիտարկում, ուսումնասիրում, գրանցում, խմբավորում և ընդհանրացնում է ոչ միայն տնտեսական, այլև հասարակական կյանքում տեղի ունեցող համատարած, որակապես միանման երևույթներն ու գործընթացները, տալիս է դրանց քանակական, որակական արտացոլումը ոչ թե մեկը մյուսից առանձնացված կամ անջատված, այլև դրանց միասնության մեջ՝ որակապես նույնանման հատկանիշներով:

ՀԱՇՎԱՌՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ – թվային ցուցանիշների ստացման և հաշվարկման մի ամբողջական համակարգ է, որով իրականացվում է տնտեսական գործընթացների քանակական արտացոլումն ու որակական բնութագրումը և, միաժամանակ, այդ գործընթացները վերահաշվառելու և ղեկավարելու նպատակով: Տնտեսական հաշվառման տեսակներն են՝ վիճակագրական հաշվառումը, կառավարչական (օպերատիվ) հաշվառումը և հաշվապահական հաշվառումը, այդ թվում ֆինանսական հաշվառում:

ՀԱՇՎԱՌՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ – հաշվապահական հաշվառման բաղկացուցիչ մասն է, ըստ որի, հաշվառվում են ֆինանսական ռեսուրսների և դրամական միջոցների առկան ու շարժը: Այն սերտորեն կապված է ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացի հետ և օգտագործվում է, հիմնականում, կազմակերպությունից դուրս, չնայած նրան, որ գրանցումները (կազմակերպության և գնորդների, մատակարարների, աշխատակիցների և սեփականատերերի միջև գործարքներ), որոնց հիման վրա կազմվում են ֆինանսական հաշվետվությունները, կարևոր են նաև կազմակերպության ամենօրյա կառավարման համար:

ՀԱՇՎԱՐԿԱ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ – բանկերի և այլ ֆինանսավարկային հիմնարկությունների միջոցով տարբեր ձեռնարկությունների ու կազմակերպությունների միջև փոխադարձ հաշվարկների սպասարկումն է: Հաշվարկադրամարկղային սպասարկման մեջ մտնում են բանկի հետևյալ գործառնությունները. հաճախորդի համար հաշվարկային հաշվի բացումը, նրա հաշվին մուտքագրվող միջոցների հաշվեգրումը, հաճախորդի

հաշվում բոլոր միջոցների պաշտպանվածության ապահովումը, հաշվում եղած միջոցները տնօրինելու համար հաճախորդի կարգադրությունների կատարումը, հաճախորդի հաշվում եղած միջոցների սահմաններում նրան կանխիկ դրամական միջոցների տրամադրումը, բանկի կողմից սահմանված սակագներին համապատասխան հաշվում եղած միջոցների նկատմամբ տոկոսների հաշվեգրումը և այլն:

ՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ԱՐԺԵՔ – 1) որևէ ակտիվի կամ պասիվի արժեքն է ըստ կազմակերպության հաշվեկշռի, 2) ակտիվի արժեքն է՝ որպես երկարաժամկետ ակտիվի սկզբնական արժեքից կուտակված մաշվածությունը հանելուց հետո, 3) կազմակերպության զուտ ակտիվների, սեփական կապիտալի (կազմակերպության ընդհանուր ակտիվները, պարտավորությունները հանելուց հետո) հաշվեկշռային արժեքն է, 4) բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքն է, որը որոշվում է հետևյալ ձևով՝ կազմակերպության հաշվառման փաստաթղթերի հիման վրա ընդհանուր ակտիվների և ընդհանուր պարտավորությունների տարբերությանը ավելացվում է արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը, այնուհետև ստացված գումարը շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի թվի վրա բաժանելիս տալիս է սովորական բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքը:

ՀԱՇՎԵԿՇՌԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ – հավասարում, որը ցույց է տալիս, որ կազմակերպության ընդհանուր ակտիվները ձևավորվում են ընդհանուր պարտավորություններից և սեփական (ընդհանուր) կապիտալից: Ընդհանուր ակտիվներ = Ընդհանուր պարտավորություններ + Սեփական կապիտալ:

ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ – դրանք կախված են տնտեսական գործառնությունների բովանդակությունից և իրենց հետ բերում են հաշվապահական հաշվեկշռում չորս տիպի փոփոխություններ՝ ակտիվային, պասիվային, ակտիվա-պասիվային ավելացմամբ և ակտիվա-պասիվային նվազեցումով: Ակտիվայինի դեպքում փոփոխություն է առաջանում միայն հաշվեկշռի ակտիվում, այսինքն՝ կատարված գործառնության գումարի չափով ակտիվի մի հոդված

ավելանում է, իսկ մի ուրիշ հոդված՝ նվազում: Վերջնական արդյունքում հաշվեկշռի ակտիվի ընդհանուր գումարը մնում է անփոփոխ, և միաժամանակ պահպանվում է նրա հավասարությունը պասիվի հանրագումարի հետ: Ի տարբերություն ակտիվային, պասիվային փոփոխության դեպքում տնտեսական գործառնությանը մասնակցում են միայն պասիվային հաշիվներ և պահպանվում է նույն օրինաչափությունը, այսինքն՝ միևնույն գումարի չափով պասիվի մի հոդված ավելանում է, իսկ մեկ այլ հոդված՝ նվազում, պահպանելով հաշվեկշռի պասիվի ընդհանուր գումարը նախկինի չափով: Ակտիվա-պասիվային ավելացումով կամ նվազեցումով փոփոխության դեպքում տնտեսական գործառնությանը մասնակցում են ինչպես ակտիվային, այնպես էլ պասիվային հաշիվներ: Կախված գործառնության բովանդակությունից, միաժամանակ կատարվում է հաշվապահական հաշվեկշռի ակտիվի ու պասիվի համապատասխան հոդվածներում ավելացում կամ նվազեցում, որի վերջնական արդյունքում հաշվեկշռի ակտիվի և պասիվի հանրագումարները միաժամանակ ավելանում կամ նվազում են միևնույն գումարի չափով:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ – աղյուսակների համակարգ է, որոնցից յուրաքանչյուրում ամփոփվում է ընթացիկ հաշվառման մեջ արտացոլված տնտեսական գործունեության որևէ ցուցանիշ և այն ներկայացվում է կառավարման որոշակի մարմիններին (համապատասխան նախարարություններին, հարկային տեսչություններին և այլն), որոնց օգնությամբ կառավարվում, կարգավորվում և վերահսկվում է տնտեսավարող սուբյեկտների ու առանձին օղակների գործունեությունը:

ՀԱՇՎԵՏՈՒ ԱՆՁ – կազմակերպության աշխատակից կամ կառավարման մարմիններում ներգրավված անձ, որին գործուղման կամ որոշակի նպատակներով կազմակերպության անունից վճարումներ կատարելու համար տրվել է կանխիկ դրամ:

ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ – 1) հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարին կամ միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանը, 2) հաշվետու տարին տվյալ տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանա-

կաշրջանն է: Նոր ստեղծված կազմակերպությունների համար առաջին հաշվետու տարի է համարվում դրանց պետական գրանցման օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը: Հաշվետու տարվա համար պարտադիր կազմվում են տարեկան ֆինանսական հաշվետվություններ, 3) միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանը տարուց փոքր ժամանակաշրջան է: Միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի համար միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ կազմվում են օրենսդրությամբ սահմանված դեպքերում կամ կազմակերպությունների հայեցողությամբ:

ՀԱՍԱՐԱԿ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ – համարվում է ըստ ներկայացնողի այն արժեթուղթը, որը հավաստում է ապրանքային պահեստի կողմից ապրանքն ի պահ ընդունելը: Գրավի տեսակներն են՝ գրավականը, գրավատուն հանձնված գույքի գրավը, իրավունքների գրավը, դրամական միջոցների գրավը, կոշտ գրավը, շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավը, հիփոթեքը:

ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐ – սույն օրենքով նախատեսված չափերով և ժամկետներում վճարողների (ֆիզիկական, իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունների) կողմից պետական բյուջե վճարվող ավելացված արժեքի հարկին և (կամ) շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող պարտադիր և անհատույց հաստատագրված վճար է: Վերջինիս հարկվող օբյեկտ են համարվում գործունեության հետևյալ տեսակները. առևտրի իրականացման վայրի կազմակերպման և հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունները, ավտոտրանսպորտային և ավտոկանգառների գործունեությունները, արտարժույթի առք ու վաճառքի գործունեությունը, խաղատների գործունեության և վիճակախաղերի կազմակերպումը և այլ նմանատիպ գործունեության տեսակներ:

ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ – որպես կանոն, հաստատագրված վճար իրականացնողները ելակետային և ուղղիչ գործակիցների մասին տարին երկու անգամ համապատաս-

խան ամիսներում (հունիս և դեկտեմբեր ամիսներին) հարկային մարմիններին ներկայացնում են համապատասխան հայտարարություն:

Այս կանոնից բացառություն են կազմում.

- առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեությունը, որի դեպքում հայտարարությունները ներկայացվում են յուրաքանչյուր ամսվա կտրվածքով (այդ ամսվան նախորդող ամսվա վերջին օրը),
- ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնողները հայտարարություն ներկայացնում են եռամսյակը մեկ անգամ (այդ եռամսյակին նախորդող ամսվա վերջին օրը),
- խանութների, կրպակների, տաղավարների միջոցով իրականացվող առևտրական գործունեության, հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար հարկային մարմիններին ներկայացվում է նաև սահմանային չափերի վերաբերյալ հայտարարություն: Հայտարարությունը տրվում է տվյալ եռամսյակի ցուցանիշների համար՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա համար սահմանված ժամկետը ներառյալ,
- այդպիսի հայտարարություն ներկայացնում են նաև բենզինի կամ դիզելային վառելիքի մանրածախ վաճառք կազմակերպողները, ինչպես նաև ավտոտեխսպասարկման կայանների միջոցով գործունեություն իրականացնողները: Հայտարարությունը ներկայացվում է մինչև հաջորդող ամսվա համար սահմանված ժամկետը:

Հաստատագրված վճարները կատարվում են յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև ամսվան հաջորդող ամսվա համար սահմանված ժամկետը:

ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ – «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված են այն գործունեության տեսակները, որոնցով զբաղվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտները, որոշակի պայմանների առկայության դեպքում կամ առանց պայմանների առկայության, հանդիսանում են հաստատագրված վճար վճարողներ:

Այդ գործունեության տեսակներից են, մասնավորապես՝

- 30 քառակուսի մետր մակերեսից ոչ ավելի առևտրային մակերես ունեցող խանութների, կրպակների, տաղավարների միջոցով իրականացվող առևտրական գործունեությունը,
- հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը,
- վարսավիրական ծառայությունների մատուցումը,
- լուսանկարչական լաբորատորիաների գործունեությունը,
- բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքը,
- արտարժույթի փոխանակման կետերում արտարժույթի առք ու վաճառքի գործունեությունը,
- համակարգչային խաղերի կազմակերպումը, դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործումը,
- ավտոտեխսպասարկման կայանների գործունեությունը,
- ցնցուղարանների (սաունաների) իրականացրած գործունեությունը,
- գազալցման գործունեությունը և այլն:

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԾԱԽՍԵՐ – կատարվող այն ծախսերն են, որոնք կախված չեն արտադրության ծավալների մեծությունից: Այդ ծախսերին են վերաբերվում ժամավարձով աշխատողների աշխատավարձը՝ սոցիալական ապահովագրության հատկացումներով, շենքերի ամորտիզացիոն հատկացումները, լուսավորության, ջեռուցման, շենքերի նորոգման և այլ ծախսերը:

ՀԱՍՈՒՅԹ – եկամտի այն մասն է, որն առաջանում է սովորական գործունեության ընթացքում և արդյունք է տարբեր տեսակի վաճառքներից, գանձույթներից, տոկոսներից, շահաբաժիններից և ռոյալթիներից:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ - ընթացակարգ է, որի միջոցով հավատարմագրման խորհուրդը պաշտոնապես ճանաչում է իրավաբանական անձի իրավասությունը՝ համապատասխանության հավաստման որոշակի ոլորտում աշխատանքներ կատարելու համար, ինչպես նաև պաշտոնապես ճանաչում է արտադրանք արտադրողից (վաճառողից) կամ ծառայություն մատուցողից այդ իրավաբանական անձի անկախությունը:

ՀԱՎԵԼԱԾԻ ՏԵՄՊ ($T_{\text{հավ.տ.}}$) – հաշվարկվում է որպես բացարձակ հավելաճի և բազիսային կամ նախորդ մակարդակի հարաբերակցությամբ.

$$T_{\text{բազ.}} = \frac{\pm \Delta y_{\text{բ.}}}{y_1} \cdot 100\% = \frac{y_i - y_1}{y_1} \cdot 100\% = (K_{\text{բ.}} - 1) \cdot 100\%, (i = 2,3,..., n)$$

$$T_{\text{շղթ.}} = \frac{\pm \Delta y_{\text{շղթ.}}}{y_{i-1}} \cdot 100\% = \frac{y_i - y_{i-1}}{y_{i-1}} \cdot 100\% = (K_{\text{շղթ.}} - 1) \cdot 100\%, (i = 2,3,..., n)$$

Հավելաճի տեմպի գործակիցը միշտ էլ մեկ միավորով փոքր է լինում աճի տեմպից, իսկ տոկոսներով արտահայտելիս՝ հավելաճի տեմպը կարող է հաշվարկվել նաև աճի տեմպից հանելով 100%, այսինքն՝

$$T_{\text{բ.}} = K_{\text{բ.}}\% - 100\%$$

$$T_{\text{շղթ.}} = K_{\text{շղթ.}}\% - 100\%$$

ՀԱՎԵԼԱԾԻ ՏԵՄՊԻ 1%-Ի ԲԱՑԱՐՁԱԿ ԱՐԺԵՔ (A) – որոշվում է բացարձակ հավելաճը հարաբերելով հավելաճի տեմպին (շղթայական եղանակի դեպքում).

$$A = \frac{y_i - y_{i-1}}{\frac{y_i - y_{i-1}}{y_{i-1}} \cdot 100} = \frac{1}{100} y_{i-1} = 0,01 y_{i-1}, \quad (i = 2,3,..., n)$$

Տվյալ ցուցանիշը տնտեսագիտական իմաստ ունի միայն շղթայական եղանակով հաշվարկելու դեպքում, քանի որ բազիսային եղանակով հաշվարկելու դեպքում այն բոլոր տարիների համար հավասար է լինում սկզբնական մակարդակին:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ի տարբերություն բացարձակ վիճակագրական ցուցանիշների, հարաբերական մեծությունները ածանցյալ մեծություններ են: Դրանք ստացվում են ոչ թե պարզ գումարման, այլ բացարձակ մեծությունների համեմատության (հարաբերակցության) միջոցով և դրանով իսկ արտահայտում են կոնկրետ հասարակական երևույթներին ու գործընթացներին յուրահատուկ քանակական հարաբերակցությունները: Հարաբերական մեծությունները հաշվարկում են ամե-

նատարբեր նպատակների համար: Դրանց օգնությամբ արտահայտում են արտադրության աճի տեմպերը և հասարակական կյանքի երևույթների այլ քանակական բնութագրերը, որոնք օգնում են ավելի խորիմաստ թափանցել այդ երևույթների էության մեջ և ավելի լրիվ ու ճշգրիտ կարծիք կազմել դրանց մասին:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ – նույնանուն երևույթների մակարդակների փոփոխությունը ժամանակի ընթացքում բնութագրող ցուցանիշներն են: Հանդես են գալիս որպես տվյալ երևույթի տարբեր ժամանակաշրջանների կամ պահերի մակարդակների հարաբերակցություն և արտահայտվում են տոկոսների կամ գործակիցների տեսքով:

Այսպես, ըստ դինամիկայի աճի, պլանային տեմպերը հաշվարկվում են այսպիսի հարաբերակցությունով՝

$$\frac{\text{Առաջիկա ժամանակաշրջանի պլանային առաջադրանք}}{\text{Բազիսային ժամանակաշրջանի փաստացի կատարողական}}$$

Այս հարաբերակցությունը ցույց է տալիս, թե պլանային առաջադրանքը քանի անգամ է ավելի բազիսային ժամանակաշրջանում ձեռք բերված մակարդակից (կամ նրա որ մասն է կազմում): Պլանային առաջադրանքները տոկոսներով արտահայտելու համար բավական է տվյալ հարաբերակցությունը բազմապատկել 100-ով:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ – այն ցուցանիշներն են, որոնք բնութագրում են տվյալ երևույթի տարածվածության կամ զարգացման աստիճանը որոշակի միջակայքում: Դրանք հաշվարկվում են որպես տվյալ երևույթի բացարձակ մեծության և այն միջավայրի չափի հարաբերակցություն, որտեղ այդ երևույթը զարգանում է: Ինտենսիվության հարաբերական մեծությունների օրինակ կարող են ծառայել ծնելիության, մահացության և բնակչության բնական հավելաճի գործակիցները, որոնք օգտագործվում են բնակչության վերարտադրության վերլուծության ժամանակ:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ – այն ցուցանիշներն են, որոնք բնութագրում են ամբողջի (ընդհանուրի) բաղկացուցիչ մասերի բաժինները (տեսակարար կշիռները) նրանց հանրագումարում: Օրինակ, կանանց ու տղամարդկանց տեսակարար կշիռները բնակչության ընդհանուր թվում: Կառուցվածքի հարաբերական ցուցանիշը հաշվարկելու ժամանակ ամբողջական գումարն ընդունում ենք որպես համեմատության բազա (հիմք) և գտնում ենք առանձին մասերի բաժնային կամ (ավելի հաճախ) տոկոսային հարաբերակցությունը այդ գումարի նկատմամբ, այսինքն՝ նրանց հանրագումարի նկատմամբ:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ԿՈՈՐԴԻՆԱՑՄԱՆ – բնութագրում են համակցության առանձին մասերի հարաբերությունները դրանցից այն մեկի նկատմամբ, որն ընդունվում է որպես համեմատության բազա: Այդպիսի ցուցանիշներ են, օրինակ, 100 բանվորին ընկնող ինժեներատեխնիկական աշխատողների թիվը և ծառայողների թիվը, հացահատիկային կուլտուրաների 100 հա ընկնող տեխնիկական (կամ կերային) կուլտուրաների հեկտարների քանակը և այլն:

Կոորդինացման հարաբերական մեծությունները միևնույն չափի միավոր ունեցող բացարձակ մեծությունների հարաբերակցություն են և այդ պատճառով արտահայտվում են տոկոսներով, պրոմիլով և ոչ թե ամբողջական թվերով կամ գործակիցներով:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ – այն հարաբերական ցուցանիշներն են, որոնք հանդես են գալիս միևնույն ժամանակաշրջանում կամ ժամանակի պահին և բնութագրում են տարբեր օբյեկտներին կամ տարածաշրջաններին վերաբերվող համանուն մեծությունների համեմատական չափերը: Սովորաբար դրանք հաշվարկվում են տոկոսներով կամ գործակցային հարաբերակցություններով, որոնք ցույց են տալիս, թե մեկ համեմատվող մեծությունը քանի անգամ է մեծ կամ փոքր մյուսից: Համեմատության հարաբերական մեծությունների օրինակ կարող են ծառայել որևիցե ժամանակաշրջանում Հայաստանում և արտասահմանյան որևիցե երկրում արտա-

դրանքի մի քանի տեսակների արտադրության հարաբերակցության վերաբերյալ եղած տվյալները:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ – տվյալ ժամանակաշրջանում պլանային առաջադրանքի կատարման աստիճանը բնութագրող ցուցանիշներն են:

Պլանի կատարման հարաբերական մեծությունները սովորաբար հաշվարկվում են տոկոսային հարաբերակցության տեսքով՝

$$\frac{\text{Փաստացի կատարողական}}{\text{Պլանային առաջադրանք}} \times 100\%$$

որտեղ փաստացի կատարողականը և պլանային առաջադրանքը վերցվում են միևնույն ժամանակաշրջանի կամ ժամանակի նույն պահի համար:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՁԵՎԵՐ – նայած ուսումնասիրվող երևույթի բնույթին և հետազոտության խնդիրներին, հարաբերական մեծությունները կարող են ունենալ արտահայտման տարբեր ձևեր: Դրանցից ամենապարզ ձևն այն թիվն է կամ գործակիցը, որը ցույց է տալիս, թե քանի անգամ է մեծ համեմատության համար հիմք ընդունված մեծությունից, կամ նրա որ մասն է կազմում: Հարաբերական թվերի մի այլ ձև է հանդիսանում նաև պրակտիկայում լայնորեն տարածում ստացած տոկոսային հարաբերությունը, որի դեպքում որպես արտահայտիչ մեծություն ընդունվում է 100%-ը: Տոկոսային հարաբերության հիմնական առավելությունը կայանում է նրանում, որ այն հեշտությամբ է ընկալվում: Մի շարք դեպքերում որպես արտահայտիչ՝ բազիսային մեծություն ընդունվում է ոչ թե որպես 100%-ը, այլ որպես 1000 պրոմիլը (‰), որը հատկապես օգտագործվում է բնակչության վիճակագրության ժամանակ:

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ – դրանցից են՝ դինամիկայի, պլանի կատարման, կառուցվածքի, ինտենսիվության, կոորդինացման և համեմատության հարաբերական մեծությունները:

ՀԱՐԿ – հաստատուն չափերով ու սահմանված ժամկետներում ֆիզիկական և իրավաբանական անձանցից ու այլ վճարողներից պետական ու հասարակական կարիքների բավարարման նպատակով գանձվող պարտադիր և անհատույց վճար է, որը մուծվում է պետական ու համայնքային բյուջե:

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐ – հիմնականում հանդիսանում են տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները (կազմակերպությունները) և անհատ ձեռնարկատերերը: Որոշ դեպքերում հարկ վճարողներ են հանդիսանում նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք (շենքերի, շինությունների, հողի սեփականատերերը, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական ու են «Հարկերի մասին» օրենքով: Հարկային մարմիններին տրված են որոշակի լիազորություններ՝ պատշաճ կերպով իրենց վերահսկողական գործառույթներն իրականացնելու համար: Իրավասությունների հետ մեկտեղ, հարկային մարմինների համար սահմանված են նաև համապատասխան պարտականություններ՝ օրենսդրական պահանջների կատարման, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների հետ ունեցած փոխհարաբերություններում վերջիններիս իրավունքները չանտեսելու առնությամբ (մասնավորապես արգելվում է խոչընդոտ հանդիսանալ տնտեսավարող սուբյեկտի բնականոն աշխատանքին, հրապարակել առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն և այլն):

Հարկ վճարողների պարտականությունները հիմնականում կապված են հարկերի ճիշտ հաշվարկման և ժամանակին բյուջե փոխանցելու հետ: Հարկ վճարողներն իրավունք ունեն սահմանված կարգով գանգատարկել հարկային տեսչության պաշտոնատար անձանց գործողությունները:

ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ – «Հարկերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված են հետևյալ հարկային արտոնությունները. հարկվող օբյեկտի և հարկի դրույքաչափի նվազեցում, հարկի գումարի նվազեցում, հարկի հաշվարկման և հարկի վճարման ժամկետների հետաձգում, հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերից և տուգանքներից ազատում, նվազեցում, վճարման ժամկետի հետաձգում, ինչպես նաև

բանկի կամ վարկային կազմակերպության կողմից հարկային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար տուժանքների և այլ ֆինանսական պատժամիջոցների վճարման պարտավորության հետաձգում՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտատերերի պահանջների սառեցման ժամանակահատվածում:

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ - դրանք տնտեսական բնույթի այն հանցագործություններ են, որոնք որակավորվում են ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով: Հանցագործությունը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները, ցանկացել է դրանք կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը: Տնտեսական հանցագործություններ են երկրի տնտեսության ոլորտում կատարվող և հանրորեն վտանգավոր այն արարքները, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքով:

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ – ապրանքները մատակարարելուց և ծառայությունները մատուցելուց հարկատուն դուրս է գրում հարկային հաշիվներ: Հարկային հաշիվ է համարվում ապրանքների մատակարարումը կամ ծառայությունների մատուցումը հաստատող հաշվարկային փաստաթուղթը:

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ – հարկային հարաբերությունները կարգավորվում են հարկային օրենսդրությամբ, որը բաղկացած է «Հարկերի մասին» օրենքից և առանձին հարկատեսակների մասին օրենքներից (ներառյալ դրանց փոխարինող հաստատագրված վճարների և պարզեցված հարկի), կառավարության որոշումներով՝ հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և սահմաններում, ինչպես նաև հարկային տեսչության և պետական կառավարման այլ մարմինների կողմից ընդունված իրավական ակտերով՝ հարկային օրենսդրությամբ կամ կառավարության որոշումներով սահմանված դեպքերում և սահմաններում:

ՀԱՐԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ – հարկերի և այլ պարտադիր վճարների հաշվարկման և վճարման կարգի նկատմամբ հսկողությունն իրականացվում է հիմնականում հարկային տեսչության կողմից: Մաքսային մարմինների կողմից հսկողական գործառույթը սահմանափակվում է միայն հանրապետության տարածքով ապրանքների տեղափոխման հետ կապված անուղղակի հարկերի և մաքսային վճարների գանձմամբ:

ՀԱՐԿԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԳԱՆԳԱՏԱՐԿՈՒՄ – նպատակն է ստուգել հարկ վճարողների կողմից ներկայացված հաշվարկների ճշգրտությունը, դրանց փաստացի հիմնավորվածությունը: Ստուգումներն ուղղված են նաև թաքցվող եկամուտների և դրանց հետևանքով չվճարվող հարկային պարտավորությունների բացահայտմանը:

Հարկային տեսչության պաշտոնատար անձանց գործողությունները սահմանված օրերի ընթացում կարող են գանգատարկվել հարկային տեսչության այն մարմնին, որին անմիջականորեն ենթակա են նրանք: Գանգատները հարկային տեսչության մարմնի կողմից քննության են առնվում և դրանց մասին որոշումներ են ընդունվում ոչ ուշ, քան գանգատը ստացվելուց հետո սահմանված օրերի ընթացքում: Ընդունված որոշումները կարող են գանգատարկվել հարկային տեսչության վերադաս մարմին կամ դատարան՝ գանգատարկողի կողմից որոշման կրկնօրինակը ստանալուց հետո, սահմանված օրերի ընթացքում: Հարկ վճարողը և նրա կողմից լիազորված անձը իրավունք ունեն մասնակցել գանգատի քննարկմանը:

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ – հարկային օրենսդրությունը խախտելու համար հարկ վճարողները ենթարկվում են ֆինանսական և վարչական պատասխանատվության: Առավել լուրջ իրավախախտումների դեպքում հարկ վճարողները կարող են ենթարկվել նաև քրեական պատասխանատվության:

ՀԱՐԿԵՐ ԱՆՈՒՂՂԱԿԻ – դրանք ըստ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի, որպես կանոն, վերջնական արդյունքում գանձվում են ապրանքների, արտադրանքի, ծառայությունների վերջնական սպառողներից և ուղղակիորեն կապված են ոչ թե տնտեսա-

վարող սուբյեկտների գործունեության ֆինանսական արդյունքների, այլ որոշակի գործարքների, գործառնությունների իրականացման հետ: Անուղղակի հարկերը ներառվում են վաճառվող գույքի (արտադրանքի, ապրանքների և այլն) և ծառայությունների արժեքում ու միջանկյալ փուլերում (մինչև վերջնական սպառողին հասնելը), պետական բյուջե են վճարվում հաշվանցման մեխանիզմով, այսինքն՝ ակտիվներ վաճառողը բյուջեի հետ փոխհարաբերություններում իր կողմից վաճառված ակտիվների (կամ ծառայությունների) արժեքում ներառվող անուղղակի հարկերից նվազեցնում է այլ տնտեսավարող սուբյեկտներից ձեռք բերված ակտիվների (կամ մատուցված ծառայությունների) արժեքում ներառված անուղղակի հարկերը:

ՀԱՐԿԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ – ներառում են այն հարկերը, որոնց չափերն ուղղակիորեն կախված են թողարկված արտադրանքի և մատուցված ծառայությունների արժեքից: Դրանց թվին են դասվում ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը և այլն: Ներմուծման հարկը դա ներմուծվող ապրանքներից և ծառայություններից գանձվող հարկն է:

ՀԱՐԿԵՐ ՈՒՂՂԱԿԻ – ըստ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի, շահութահարկը և եկամտահարկը, որպես կանոն, ուղղակիորեն կապված են տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության արդյունքների հետ, այսինքն՝ այդ հարկատեսակների գծով պարտավորություն առաջանում է միայն տնտեսական գործունեության դրական արդյունքի՝ շահույթի կամ եկամտի, առկայության դեպքում, իսկ հողի հարկը և գույքահարկը վճարվում են՝ անկախ տնտեսական գործունեության արդյունքները հաշվի առնելու:

ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳ – հարկ վճարողները սահմանված ժամկետներում հարկային մարմիններին ներկայացնում են հարկային հաշվարկներ և կատարում հարկերի վճարում: Սահմանված ժամկետների խախտումը առաջացնում է ֆինանսական և վարչական պատասխանատվություն:

ՀԱՐԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ – «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված են 6 հարկատեսակներ՝ շահութահարկ, եկամտահարկ, ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ, հողի հարկ և գույքահարկ: Այս հարկատեսակներից շահութահարկը և եկամտահարկը, ի տարբերություն հողի հարկի և գույքահարկի, ուղղակի կախվածության մեջ են տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության արդյունքների հետ, իսկ անուղղակի հարկերը արդյունք են տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացված որոշակի գործարքների կամ գործառնությունների: Բացի վերը նշվածներից օգտագործվում է նաև պարզեցված հարկը:

ՀԵՋԱՎՈՐՈՒՄ (ԿՈՐՈՒՍՏԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄ) – երկու միմյանց հակադիր միաժամանակյա գործարքների (առք ու վաճառք) կնքումն է, որոնց նպատակն է հումքի, արժեթղթի կամ արտարժույթի գների ապագա տատանումների չեզոքացումը: Կատարվում է ժամկետային (ֆորվարդային, ֆյուչերսային) շուկայում հումքի, արժեթղթի կամ արտարժույթի ֆյուչերսային պայմանագրերի, ինչպես նաև օպցիոն պայմանագիր կնքելու միջոցով: Օրինակ, գնելով որևէ ապրանք, այն միաժամանակ վաճառվում է որպես ֆյուչերս կամ օպցիոն:

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ – համարվում է քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպությունը, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադիրների (հիմնադիրի)՝ հիմնադրամին հանձնած գույքը հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն այդ գույքն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակներով: Հիմնադրամը պարտավոր է ամեն տարի հաշվետվություն հրապարակել իր գույքի օգտագործման մասին:

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱԽԱՌՆ ԿՈՒՏԱԿՈՒՄ – իրենից ներկայացնում է ռեզիդենտ-միավորների կողմից ապագայում նոր եկամտի ստեղծման համար միջոցների ներդրում հիմնական կապիտալի օբյեկտներում՝ արտադրության մեջ դրանք օգտագործելու ճանապարհով:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ – ոչ ընթացիկ ակտիվների մի մասն է, այդ թվում՝ շենքերը, կառույցները, մեքենաներն ու սարքավորումները (բանվորական և ուժային մեքենաներն ու սարքավորումները, չափիչ և կարգավորիչ փորձասարքերը ու հարմարանքները, լաբորատոր սարքավորումները, հաշվողական տեխնիկան), փոխադրամիջոցները և հիմնական միջոցների այլ տեսակները:

Հիմնական միջոցների մեջ են ներառվում նաև պետական և մասնավոր հատվածների կազմակերպությունների բոլոր հիմնական միջոցները, ինչպես նաև ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցները: Այդ միջոցների մեջ ներառվում են բնակելի տները, բնակչության անձնական օժանդակ տնտեսությունների, ինչպես նաև գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների (տնտեսական շենքեր, բազմամյա տնկիներ, բանող և մթերատու անասուններ, գյուղտեխնիկա) հիմնական միջոցները:

Հիմնական միջոցների գործարկման ցուցանիշի մեջ ներառվում է՝ շինարարությունն ավարտված և կազմակերպություններին շահագործման հանձնված, արտադրական և ոչ արտադրական նշանակության շինությունների ու կառույցների արժեքները, նոր շահագործվող մեքենաների, բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների (մոնտաժման կարիք ունեցող և չունեցող, շինարարության նախահաշվի մեջ մտնող ու չմտնող) արժեքները, գործիքների, գույքի և այլ առարկաների արժեքները, որոնք հաշվառված են հիմնական միջոցների մեջ, բազմամյա տնկիների (մրգատու, խաղողի այգիներ և այլն) արժեքը, հողերի ոռոգման և չորացման աշխատանքների արժեքը, հողերի բարելավման հետ կապված կապիտալ ծախսերը և հիմնական միջոցների արժեքի մեծացման հետ կապված այլ ծախսերը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ - որում ներառվում են շինարարությունն ավարտված ու շահագործման հանձնված կազմակերպությունների, շենքերի և շինությունների արժեքները, նոր շահագործվող մեքենաների, բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների, սարքավորանքների (մոնտաժվող և չմոնտաժվող, շինարարության նախահաշվի մեջ մտած ու չմտած) արժեքները, գործիքների, գույքի և այլ առարկաների արժեքները (որոնք հաշվառված են հիմնական միջոցների մեջ),

հողերի ոռոգման և չորացման աշխատանքների արժեքը, հողերի որակի լավացման հետ կապված ծախսերը և հիմնական միջոցների արժեքների մեծացման հետ կապված այլ ծախսերը:

ՀԻՊԵՐԻՆՖԼՅԱՑԻԱ – տեղի է ունենում, երբ գների միջին տարեկան տեմպերը կազմում են 100% և ավելի: Տվյալ մակարդակի, ինչպես նաև սուպերինֆլյացիայի դեպքում, տնտեսությունը դառնում է անկառավարելի:

ՀԻՓՈԹԵՔ – 1) երկարաժամկետ փոխատվություն ստանալու նպատակով անշարժ գույքի (գլխավորապես հողի և շինությունների) գրավադրման տարատեսակ է: Արտադրական և բնակելի շենքերի շինարարության ֆինանսավորման հիմնական տեսակներից մեկն է: Անշարժ գույքի գրավադրումը կատարվում է առանց այդ գույքը գրավային պարտատիրոջ (գրավառուի) տիրապետմանը հանձնելու: Հիփոթեքի առարկան անշարժ գույքն է, որը մնում է գրավատուի տիրապետման ներքո, սակայն այն կարող է լինել նաև անշարժ գույքի իրավունքը: Միևնույն սեփականությունը կարող է գրավադրվել կրկնակի հիփոթեքի տակ (հաջորդող գրավ)՝ պայմանով, որ այդ սեփականության արժեքը գերազանցում է նախորդ հիփոթեքային վարկի արժեքը: Հիփոթեքային վարկը կարող է ծառայել նոր շինարարության ֆինանսավորման աղբյուր՝ պայմանով, որ այդ օբյեկտը հանդիսանում է հիփոթեքի առարկա: Հիփոթեքի համար բնորոշ են՝ գույքի թողնելը պարտապանի (գրավատուի) տիրապետման ներքո, նույն գույքի գրավոր լրացուցիչ հիփոթեքային փոխատվությունների ստացման հնարավորությունը երկրորդ, երրորդ գրավականներով և այլն, գրավի պարտադիր գրանցումը: Պարտապանի (գրավատուի) անվճարունակության դեպքում վարկատուի պահանջների բավարարումը տեղի է ունենում իրացված գույքի հաշվին՝ գրավի գրանցման հերթականությամբ: Հիփոթեքի հիմնական տեսակը շրջանառու հիփոթեքն է, այսինքն՝ հիփոթեքի գրավի վկայականի հանձնումը, որը հեշտացնում է այդպիսի հիփոթեքի շրջանառությունը առևտրային շրջանառության մեջ, 2) գրավաթուղթ է՝ բանկի կողմից փոխառուին տրվող պարտքային վկայական, անշարժ գույքի գրավի մասին, 3) անշարժ գույքի գրավի դիմաց փոխատվություն է, 4) համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, հիփոթեք է հա-

մարվում գրավը, որի առարկան, անկախ նրանից այն անշարժ թե շարժական գույք է, մնում է գրավատուի կամ երրորդ անձի տիրապետման և օգտագործման ներքո:

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – դրանք տրամադրում են կարճաժամկետ վարկեր՝ անշարժ գույքի ձեռք բերման նպատակով:

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ – համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի՝ հիփոթեք է համարվում անշարժ գույքի, ինչպես նաև՝ հողամասի կառուցապատման իրավունքի գրավը: Համաձայն Հայաստանի Հանրապետության ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին օրենքի՝ հիփոթեքային վարկը հիփոթեքով ապահովված վարկն է:

Գործնականում հիփոթեքային վարկը վերաբերում է անշարժ գույքի ձեռքբերմանը, վերանորոգմանը, վերակառուցմանը և կառուցմանը: Այլ խոսքերով՝ հիփոթեքային վարկն այն վարկն է, որը տրամադրվում է հետևյալ պայմաններով.

- վարկի նպատակն է անշարժ գույքի ձեռքբերումը, վերանորոգումը, վերակառուցումը կամ կառուցումը,
- վարկն ապահովված է անշարժ գույքի գրավով,
- վարկը տրամադրվում է որոշակի տոկոսադրույքով,
- հիփոթեքի առարկա է հանդիսանում բնակարանը, սեփական տունը, հողամասը, առևտրային տարածքը և այլ անշարժ գույք:

Սովորաբար հիփոթեքային գործարքում ներգրավված է անշարժ գույքի գնորդը (վերանորոգման, կառուցման կամ վերակառուցման դեպքում՝ անշարժ գույքի սեփականատերը), որը վարկ է վերցնում վարկատու կազմակերպությունից և կնքում հիփոթեքի ու վարկային պայմանագրեր, որտեղ որպես գրավ հանդես է գալիս անշարժ գույքը:

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԿԱՆԽԱՎՃԱՐ – Վարկատու կազմակերպությունը տրամադրելով հիփոթեքային վարկ՝ կատարում է երկարաժամկետ ներդրում: Այն վարկառուից պահանջում է մասնակից լինել այդ ներդրմանը: Կանխավճարը հանդիսանում է այն գումարը, որով վարկառուն

մասնակցում է այդ ներդրմանը, և որը սովորաբար կատարվում է գործարքի կնքման ժամանակ:

Վարկատու կազմակերպության կողմից կանխավճար պահանջելու հիմնական նպատակը վարկառուի կողմից վարկը չվճարելու հետևանքով առաջացող հնարավոր կորուստներից ապահովագրվելն է: Եթե վարկառուն ի վիճակի չլինի մարել վարկը, ապա վարկատուն իրավունք ունի վաճառել գրավադրված գույքը և այդ գումարից մարել վարկի մնացորդը: Վարկատու կազմակերպությունը պահանջելով կանխավճար՝ մեծացնում է այն հավանականությունը, որ գույքի հետագա վաճառքից գոյացած գումարը կբավարարի վարկի մնացորդային արժեքը մարելու համար:

Վարկատու կազմակերպությունները սովորաբար չեն տրամադրում վարկ՝ անշարժ գույքի ձեռքբերման գնի չափով: Տարբեր վարկատուներ սահմանում են կանխավճարի տարբեր նվազագույն սահմանաչափեր: Որոշ վարկատուներ պահանջում են կանխավճար գույքի ձեռքբերման արժեքի 50%-ի չափով, մյուսները կարող են պահանջել 30% կանխավճար:

Օրինակ, վարկառուն ցանկանում է ձեռք բերել բնակարան, որի արժեքը կազմում է 60 000 000 ՀՀ դրամ: Համաձայն վարկատուի ներքին կանոնակարգերի, պահանջվող նվազագույն կանխավճարի մեծությունը կազմում է գույքի արժեքի 30%-ը: Հետևաբար, վարկատուի կողմից տրամադրվելիք վարկի առավելագույն գումարը կարող է կազմել 42 000 000 ՀՀ դրամ (60 000 000 × 70%): Հիմք ընդունելով այս սահմանաչափը՝ վարկառուն պետք է իր խնայողություններից կատարի 18 000 000 ՀՀ դրամ կանխավճար:

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ –

- Ընտրել այն անշարժ գույքը, որը պետք է գնել (եթե վարկի նպատակը անշարժ գույքի ձեռքբերումն է):
- Ծանոթանալ վարկատու կազմակերպությունների կողմից հիփոթեքային վարկավորման պայմաններին:
- Համեմատել վարկատու կազմակերպությունների կողմից առաջարկվող պայմանները, ընտրել այն վարկատու կազմակերպությունը, որի դեպքում վարկառուի եկամուտները և գրավադրվող գույքը բավարարում են սահմանված չափանիշներին ու վարկունակության գնահատման ցուցանիշներին, և որը

առաջարկում է վարկառուի համար հիփոթեքային վարկավորման առավել հարմար պայմաններ:

• Վարկատու կազմակերպությանը ներկայացնել հիփոթեքային վարկավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը և լրացնել վարկային հայտ: Եթե առկա է նաև համավարկառու, ապա նա նույնպես մասնակցում է հայտի լրացմանը: Հայտը լրացնելուց հետո և՛ վարկառուն, և՛ համավարկառուն (առկայության դեպքում) ստորագրում են վարկային հայտը:

• Վարկատու կազմակերպության համապատասխան աշխատակիցն ուսումնասիրում է վարկառուի հայտը և դրական եզրակացության դեպքում ներկայացնում վարկային կոմիտեի քննարկմանը: Այս փուլը սովորաբար տևում է 1-2 շաբաթ:

• Վարկային կոմիտեի դրական եզրակացության դեպքում սկսվում է հիփոթեքային վարկի ձևակերպման գործընթացը: Հիփոթեքային վարկի ձևակերպման համար վարկառուից պահանջվում է ներկայացնել տեղեկանք՝(Միասնական տեղեկանք) ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումից առ այն, որ գրավադրվող գույքի վրա բռնագանձում տարածված չէ, այն գրավի, արգելանքի կամ կալանքի տակ չի գտնվում:

• Միասնական տեղեկանքը վարկատուին ներկայացնելուց հետո, վարկատու կազմակերպության համապատասխան աշխատակիցը պատրաստում է վարկային՝ հիփոթեքի առքուվաճառքի (անշարժ գույքի ձեռքբերման դեպքում) և երաշխավորության պայմանագրերը (եթե առկա է երաշխավոր):

• Երբ արդեն պատրաստ են պայմանագրերը՝ վարկառուն, գրավադրվող անշարժ գույքի սեփականատերերը և վարկատու կազմակերպության լիազորված անձը պետք է ներկայանան նոտարական գրասենյակ՝ առքուվաճառքի և հիփոթեքի պայմանագրերի վավերացման նպատակով: Հիփոթեքի պայմանագիրը կնքվում է չորս օրինակից՝ մեկական օրինակ կողմերին (գրավատու, գրավառու), մեկ օրինակ՝ նոտարական գրասենյակին, մեկ օրինակ էլ ներկայացվում է ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ գրավի իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

Առքուվաճառքի պայմանագիրը կնքվում է հինգ օրինակից՝ մեկական օրինակ կողմերին (վաճառող, գնորդ-գրավատու, գրավառու), մեկ օրինակ՝ նոտարական գրասենյակին, մեկ օրինակ էլ ներկայացվում է ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ գնորդի սեփականության իրավունքի և գրավառուի գրավի իրավունքի պետական գրանցում կատարելու համար: Նույն օրը վարկառուի և վարկատուի միջև կնքվում է վարկային, իսկ վարկատուի և երաշխավորի միջև՝ երաշխավորության (երաշխավորի առկայության դեպքում) պայմանագրերը:

• Գնորդ-գրավատուի սեփականության (անշարժ գույքի ձեռք բերման դեպքում) իրավունքի և գրավառուի գրավի իրավունքի պետական գրանցումից հետո, վարկատուն ստանում է անշարժ գույքի սեփականության վկայականը և տրամադրում վարկը: Վարկատու կազմակերպությունը վարկառուին է տրամադրում կնքված պայմանագրերի մեկական օրինակ:

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԿԱՐԻՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՈՒՆԵՆԱԼ – այն ֆիզիկական անձիք, ովքեր պատրաստվում են գնել, վերանորոգել, վերակառուցել կամ կառուցել անշարժ գույք, որի համար պահանջվող գումարը գերազանցում է իրենց խնայողությունները:

Օրինակ, անձը ցանկանում է ձեռք բերել բնակարան, որի արժեքը կազմում է 20 մլն ՀՀ դրամ: Սակայն նրա խնայողությունները կազմում են 8 մլն ՀՀ դրամ և կանխիկ գումարը չի բավականացնում բնակարանի գնման համար: Ուստի, եթե նրա եկամուտները բավարարում են վարկատու կազմակերպության կողմից սահմանված չափորոշիչներին, նա կարող է վերցնել 12 մլն ՀՀ դրամ հիփոթեքային վարկ, որի դեպքում ձեռք բերվող բնակարանը կգրավադրվի և կհանդիսանա վարկի ապահովություն:

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՄԱՐՈՒՄ – եթե վարկառուն ստացել է հիփոթեքային վարկ, ապա համաձայն կնքված վարկային պայմանագրի՝ պարտավորվում է կատարել ամսական մարումներ, որն իր մեջ ներառում է և՛ պարտքի գումարի, և՛ ամսական կուտակված տոկոսի մարումը: Այսպիսով, վարկառուի վարկի

ամսական մարումը բաղկացած է երկու մասից՝ մայր գումարի մարում, որը նվազեցնում է վարկառուի պարտքը և կուտակված տոկոսի մարում, որը հաշվարկվել է վարկի մնացորդի նկատմամբ:

Հիմնականում հիփոթեքային վարկի մարումները կատարվում են կամ անուիտետային մարումների, կամ մայր գումարի հավասարաչափ մարումների եղանակով:

Անուիտետային մարումներով վարկի դեպքում վարկառուն պարտավորվում է վարկի մարման ողջ ընթացքում յուրաքանչյուր ամիս կատարել հավասարաչափ վճարումներ: Սովորաբար նմանատիպ մարման ժամանակացույցով հիփոթեքային վարկն անվանում են նաև ստանդարտ հիփոթեքային վարկ, քանի որ տոկոսադրույքը հաստատուն է լինում վարկի մարման ողջ ժամկետի համար: Ստանդարտ հիփոթեքային վարկն իր գործունեության ողջ ժամկետի ընթացքում վարկառուին հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ կառավարել իր եկամուտները, քանի որ վարկի մարման ողջ ընթացքում նա պարտավոր է ամսական վճարել միևնույն գումարը, որը փոփոխման ենթակա չէ:

Անուիտետային մարումներով վարկի ամսական վճարումը, որը ներառում է և պարտքի գումարի, և կուտակված տոկոսավճարի մարումը, հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$R = \frac{P \cdot r/100}{1 - \frac{1}{(1 + r/100)^n}}$$

որտեղ՝

R - ամսական մարումն է,

P - հիփոթեքային վարկի գումարը,

n - վարկի ժամկետը (ամիսների քանակը),

r - վարկի ամսական տոկոսադրույքը (%):

Մայր գումարի հավասարաչափ մարումներով հիփոթեքային վարկի դեպքում վարկառուն պարտավորվում է մայր գումարը մարել հավասարաչափ մասերով, իսկ ամսական տոկոսավճարի մարումը նվազում է պարտքի մնացորդի նվազմանը զուգահեռ: Այս տեսակի մարման ժամանակացույցով վարկն ավելի քիչ հասանելի է, կամ հասանելի է ավելի փոքր գումարներով, քանի

որ վարկատու կազմակերպությունը վարկառուի վարկունակությունը որոշելիս հիմնվում է առաջին ամսվա ընթացքում կատարվելիք վճարման մեծության վրա, և համեմատած անուիտետային մարումներով վարկի հետ՝ այս դեպքում առաջին ամսվա ընթացքում վճարվելիք գումարն ավելի մեծ է:

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿՆ ԻՆՉ ԱՐԺՈՒՅԹՈՎ ԿԱՐՈՂ Է ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԼԻՆԵԼ – Հիփոթեքային վարկը կարող է արտահայտված լինել՝

- ՀՀ դրամով,
- արտարժույթով:

Եթե վարկառուն պատրաստվում է դիմել արտարժույթով հիփոթեքային վարկ ստանալու համար, սակայն ձեռքբերվող անշարժ գույքը գնանշված է ՀՀ դրամով, կամ վերանորոգման, վերակառուցման, կառուցման ծախսերի նախահաշիվը կազմված է ՀՀ դրամով, ապա նա պետք է հաշվի առնի այն փաստը, որ արտարժույթի փոխարժեքի տատանումները կարող են ունենալ բացասական ազդեցություն, և վարկի գումարը կարող է չբավականացնել անշարժ գույքի ձեռքբերման, վերանորոգման, վերակառուցման կամ կառուցման համար: Ուստի, արտարժույթի ռիսկից խուսափելու համար վարկառուն պետք է դիմի ստանալու հիփոթեքային վարկը՝ արտահայտված նույն արժույթով, որով իր եկամուտներն են արտահայտված:

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում վարկառուի վնաս կրելու հավանականությունն է:

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ՝ ՈՉ ՍՏԱՆԴԱՐՏ – ի տարբերություն ստանդարտ հիփոթեքային վարկերի, մարվում են ոչ համամասնական, կամ այլ կերպ՝ փոփոխական գումարներով: Սովորաբար գործարքի ավարտին մոտեցող վճարները գերազանցում են սկզբի վճարներին, այսինքն՝ ժամանակի գործընթացին համընթաց, վճարային պարտավորությունները աճման միտում ունեն, սակայն ամեն դեպքում կողմնորոշիչ մեծությունը տարեկան վճարումների մեծությունն է:

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ՝ ՍՏԱՆԴԱՐՏ – առանձնահատուկ տեղ են զբաղեցնում վարկային շուկայում ոչ թե միայն երկարաժամկետ վարկերի առումով, այլ նաև նրանով, որ այս դեպքում գրավի առարկան անշարժ գույքն է, հիմնականում՝ հողերն ու նրանց կցված կառույցները, և միաժամանակ, գրավի առարկան չի օտարվում իր սեփականատիրոջից: Հետևաբար, այս վարկերը, որոնք շատ մեծ տարածում ունեն զարգացած երկրներում, իրենց մեջ ունեն նաև ռիսկի աստիճան՝ կախված վարկառուի ֆինանսական և ընտանեկան պայմաններից, ինչպես նաև հենց մարդկային գործոնից: Այդ պատճառով էլ կան տարբեր մոտեցումներ այս վարկի մարման կապակցությամբ, որոնք հաշվի են առնում վարկի հետ կապված ռիսկերը: Սակայն հիմնականում այս վարկերի մարման գործընթացը իրականացվում է ստանդարտ հիփոթեքների մեթոդով, այսինքն՝ վարկի մարում հաստատուն մարման հաճախությամբ: Սովորաբար վճարման հաճախությունն այսպիսի հիփոթեքների ժամանակ ընդունվում է ամսական կտրվածքով՝ հաստատուն վճարներով: Վճարման չափը որոշվում է վարկի մասնակի մարումների մեթոդով, ելնելով տարեկան վճարների բաշխմամբ՝ ըստ ամիսների:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ – այն ներառում է օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ՀՀ կառավարությանն ու ՀՀ ԿԲ-ին տրամադրված վարկերը, ինչպես նաև վարկեր՝ տրամադրված ՀՀ կառավարությանը և ԿԲ-ին, երաշխիքներով:

ՀՀ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ԲՅՈՒՋԵ – այն ներառում է ՀՀ պետական, համայնքների և սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեների ցուցանիշները: Նշված բյուջեների համախմբման ընթացքում կրկնակի հաշվառումից խուսափելու համար հաշվի չի առնվում դրանց միջև ներքին տրանսֆերտները: ՀՀ պետական բյուջեի ծախսերից հանվում են համայնքների բյուջեներին տրված տրանսֆերտները (դոտացիա, սուբվենցիա, փոխատվություն), սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին հատկացումները և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները: ՀՀ համայնքների բյուջեների ծախսերից հանվում են մուծումները սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին:

ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔԸ (ՀՀ ՄՆԴ) - վիճակագրական հաշվետվություն է, որտեղ արտացոլվում են երկրի ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարների մակարդակը որևէ ժամանակահատվածի սկզբի և վերջի դրությամբ: Միաժամանակ, հաշվետվության մեջ արտացոլվում են այն բոլոր փոփոխությունները, որոնք կատարվել են ուսումնասիրվող ժամանակահատվածում ֆինանսական գործառնությունների, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների շնորհիվ:

ՀՀ միջազգային ներդրումների դիրքը սերտորեն կապված է ՀՀ վճարային հաշվեկշռի հետ, որի ֆինանսական հաշվում գրանցվում են բոլոր այն գործառնությունները, որոնք կապված են արտաքին ակտիվների և պարտավորությունների հետ: Բնականաբար, այդ գործառնություններն իրենց ազդեցությունն են ունենում ՀՀ ՄՆԴ-ում արտացոլված արտաքին ակտիվների ու պարտավորությունների պաշարների վրա: Միաժամանակ, կան նաև այլ գործոններ (գների, փոխարժեքի փոփոխություններ), որոնք ժամանակի ընթացքում հանգեցնում են ակտիվների և պարտավորությունների արժեքի փոփոխության, որը նույնպես արտացոլվում է ՀՀ ՄՆԴ-ում: Եթե վերջինս արտացոլում է տնտեսության արտաքին ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարները, ապա ՀՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշիվը՝ այդ ակտիվների ու պարտավորությունների հետ կատարված գործառնությունները (հոսքերը կոնկրետ ժամանակահատվածում):

ՀՆԱ-Ի ԴԵՖԼՅԱՏՈՐ (ԻՆԴԵՔՍ) – ընթացիկ գներով ՀՆԱ-ի մեծության հարաբերությունն է նախորդ ժամանակաշրջանի համադրելի գներով գնահատված ծավալին: Ի տարբերություն ապրանքների և ծառայությունների գների ինդեքսի՝ ՀՆԱ-ի դեֆլյատորը բնութագրում է աշխատանքի վարձատրության, զուտ շահույթի (ներառյալ խառը եկամուտները), հիմնական կապիտալի սպառման փոփոխությունները՝ գների փոփոխման արդյունքում:

ՀՆԱՐԱՎՈՐ ՍՆԱՆԿԱՑՈՒՄ – տնտեսավարող սուբյեկտների կամ անհատ ձեռներեցների այնպիսի վիճակն է, որի շարու-

նակումը կարող է հանգեցնել սնանկացման, եթե ժամանակին չսկսվի այդ գործընթացի գծով դատական քննությունը:

ՀՈԼԴԻՆԳ – կորպորացիա, ընկերություն, առաջատար կազմակերպություն է, որը կառավարում և հսկողություն է իրականացնում այլ կազմակերպությունների, ընկերությունների գործունեության նկատմամբ: Տարբերվում են հոլդինգի երկու տեսակներ. 1) որոնք չեն զբաղվում արտադրական, առևտրային կամ բանկային գործունեությամբ, 2) որոնք տարբեր ոլորտներում զբաղվում են ձեռնարկատիրությամբ:

ՀՈՂԻ ՀԱՐԿ – հողի սեփականատերերից, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական և ժամանակավոր օգտագործողներից պետական բյուջե գանձվող պարտադիր վճար է: Այն ուղղակի հարկ է և գանձվում է գյուղատնտեսական նշանակության հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտից ու ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝ կադաստրային գնահատման արժեքից, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված տոկոսադրույքաչափով:

ՀՈՂԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐ – հողի հարկ վճարող են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական հողերի մշտական և ժամանակավոր օգտագործողները:

Վարձակալության տված հողերի համար հարկատուն հանդիսանում է վարձատուն:

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՀ – հողի հարկի պարտավորություններն առաջանում են սեփականության, ժամանակավոր կամ մշտական օգտագործման իրավունքը ձեռք բերելու ամսվան հաջորդող ամսից:

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – հողի հարկից ազատվում են.

- բյուջետային հիմնարկներն ու կազմակերպությունները, ինչպես նաև պետական արգելանոցները և արգելավայրերը, ծառաբանական զբոսայգիները, բուսաբանական այգիները և պատմամշակութային նշանակության հողերը, բացառու-

թյամբ այն դեպքերի, երբ հողատարածքները տրված են վարձակալության կամ ծառայողական օգտագործման,
- բնակավայրերում պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողերը (հրապարակներ, փողոցներ, անցումներ և այլն),
- պետական անտառային ֆոնդի հողերը, բացառությամբ՝ գյուղատնտեսական նշանակության վարձակալության տրված հողերի,
- մասնագիտական տեխնիկական ուսումնարաններին և դպրոցներին կից ուսումնաարտադրական և փորձարարական հողամասերը,
- ժամանակավորապես այն հարկատուները, որոնց որոշակի ժամկետով, եկամտահարկից ազատելու պայմանով, տրամադրվել են հողեր:
- այլ արտոնություններ:

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ – հարկատուները «Հողի հարկի մասին» օրենքի պահանջները չկատարելու կամ խախտումներով կատարելու համար ենթարկվում են ընդհանուր տույժերի և տուգանքների: Դրանք են.
- տուգանք՝ հարկը չվճարելու կամ պակաս վճարելու համար,
- տույժ՝ ժամանակին չվճարված հարկի համար,
- տուգանք՝ ժամանակին հաշվետվություն չհանձնելու համար,
- տուգանք՝ հաշվապահական հաշվառումները սխալ վարելու համար:

ՀՐԱԺԱՐԱԳԻՆ – կողմերի համաձայնությամբ պարտավորությունը կարող է դադարել, եթե գործընթացի կատարման փոխարեն հրաժարագին տրամադրվի (դրամ վճարելով, գույք հանձնելով և այլն): Հրաժարագնի չափը, ինչպես նաև այն տրամադրելու ժամկետները և կարգը սահմանում են հենց իրենք՝ կողմերը:

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ – առանձին դուստր կազմակերպությունների (ձեռնարկություն, ընկերություն, ֆիրմա) միավորումն է մեկ տնտեսական միավորի մեջ: Տարբերվում են ձեռնարկատիրական գործունեության միավորման 2 ձևեր. ա) ձեռնարկատիրական գործունեության միավորումն է, որի համաձայն կազմակերպություններից մեկը՝ ձեռք բերողը (մայր կազմակերպությունը), վերահսկման իրավունք է ստանում այլ կազմակերպության՝ ձեռք բերվողի (դուստր կազմակերպության), զուտ ակտիվների և գործառնությունների նկատմամբ՝ ակտիվների փոխանցման, պարտավորությունների ստանձնման կամ բաժնետոմսերի (բաժնեմասերի) թողարկման դիմաց, բ) բաժնեմասերի (շահերի) միացում, այսինքն՝ ձեռնարկատիրական գործունեության միավորումն է, որտեղ միավորվող կազմակերպությունների բաժնետերերը միավորում են իրենց բոլոր զուտ ակտիվների և գործառնությունների նկատմամբ վերահսկողությունը՝ միավորված կազմակերպությանը հատուկ ռիսկերը և օգուտները համատեղ ու շարունակաբար կրելու նպատակով: Դա արվում է այնպես, որ ոչ մի կողմ չի կարող համարվել որպես ձեռք բերող:

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ – տնտեսավարող սուբյեկտների (ձեռներեցների) կողմից իրականացվող, օրենսդրությամբ չարգելված տնտեսական ցանկացած գործունեություն է: Վերջինս կարող են իրականացնել տվյալ երկրի և այլ պետությունների քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք ու իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող տնտեսավարող սուբյեկտները (կազմակերպությունները):

ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԱՐԺԵՔ – 1) դրամի գումարը, որը վճարվել է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավական փաստաթուղթը ստանալու համար՝ մինչև հիփոթեքային վարկի ձևակերպումը, 2) երբեմն այս տերմինը օգտագործվում է շենքերի և սարքավորումների հաշվեկշռային արժեքը նշելու համար, 3)ակտիվի արժեքը, որը ճշգրտված է գների ընդհանուր մակարդակի հաշվառմամբ:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐ – ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման ու պահպանման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով օրենքով սահմանված կարգով ու չափով պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐ – համարվում են տրանսպորտային միջոցների սեփականատերերը՝ իրենց պատկանող տրանսպորտային միջոցներով, կամ «Ճանապարհային վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեությամբ զբաղվելու նպատակով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձինք:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ – 1) այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու վճար, 2) ծանրաքարշ ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճար, 3) մեծ եզրաչափերով ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար վճար, 4) ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու համար վճար:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ – ճանապարհային վճարների դրույքաչափերը սահմանված են դրամով: Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը գանձվում է յուրաքանչյուր մուտքի համար՝ ամսական դրույքաչափերով: Դրույքաչափերը ենթակա են փոփոխման՝ ըստ համապատասխան օրենքի:

Ծանրաքարշ ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարի դրույքաչափը սահմանված է յուրաքանչյուր կմ-ի համար, որը կախված է՝ կա՛մ ավտոտրանսպորտային միջոցի ընդհանուր զանգվածից, կա՛մ առնիների կամրջակի վրա եղած բեռնվածքից:

ՄԱԿԼԵՐ – ֆոնդային կամ ապրանքային բորսաներում գործարքների կնքման միջնորդ: Գործում է հաճախորդի հանձնարարությամբ և նրա հաշվին: Ունի իրավաբանական անձի կարգավիճակի իրավունք և մասնագիտանում է բորսային գործառնությունների որոշ տեսակներում: Նրանք միավորվում են մակլերային գրասենյակներում և ֆիրմաներում, որոնք միջնորդ ծառայություններ ցուցաբերելու համար բորսային կոմիտեի կողմից սահմանված կոմիսիոն (միջնորդային) վճար են գանձում:

ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ – տարբեր հասակներում ազգաբնակչության մահացությունը և մեկ հասակից մյուսին անցնելու ընթացքում կյանքի սպասվելիք տևողությունը բնութագրող հաշվարկային ցուցանիշներ պարունակող վիճակագրական աղյուսակ է: Այն օգտագործվում է հիմնականում ակտուարային հաշվարկներում:

ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ – բնութագրում են յուրաքանչյուր տարիքային խմբում մահացության միջին մակարդակը: Դրանք հաշվարկվում են որպես հարաբերակցություն՝ տարվա ընթացքում տվյալ տարիքային խմբում մահացածների թվաքանակը բաժանելով ընթացիկ գնահատման արդյունքներով ստացված տվյալ տարիքային խմբի անձանց միջին տարեկան թվաքանակի վրա (մշտական բնակչություն), բացառությամբ՝ 0-4 տարիքային խմբի, որի համար մահացության տարիքային գործակիցը հաշվարկվում է՝ 0-4 տարիքային խմբի մահացածների թվաքանակը բաժանելով կենդանածինների ընդհանուր թվաքանակի վրա:

ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ – անձնական սպառման կամ տնային տնտեսությունում օգտագործման համար բնակչությանը կանխիկ դրամով վաճառված սպառողական ապրանքների արժեքն է: Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի ցուցանիշը ձևավորվում է խանութների, կրպակների (տաղավարների), հանրային սննդի օբյեկտների, սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառների), գյուղատնտեսա-

կան արտադրանքի շուկաների և առևտրի իրականացման համանման այլ օբյեկտների միջոցով իրականացված ապրանքաշրջանառության հիման վրա: Պարենային, ոչ պարենային և խառը սպառողական ապրանքների շուկաներում (տոնավաճառներում) վաճառված ապրանքների ծավալը որոշվում է վիճակագրական հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրացուցիչ հաշվարկների հիման վրա: Գյուղատնտեսական արտադրանքի քաղաքային շուկաների ապրանքաշրջանառության ծավալը որոշվում է վիճակագրական հաշվետվությունների տվյալների և կատարված դիտարկումների արդյունքներով: Ապրանքային պաշարները յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված ապրանքաշրջանառությունն է օրերով, որը որոշվում է առևտրական կազմակերպությունների ապրանքային պաշարների միջին ամսական ծավալի և տվյալ ամսվա ապրանքաշրջանառության մեկ օրվա ծավալի հարաբերակցությամբ:

Կամ այլ առումով այն վերջնական սպառման կամ տնային տնտեսությունում օգտագործման համար նախատեսված սպառողական ապրանքների վաճառքն է արժեքային արտահայտությամբ: Մանրածախ առևտրի շրջանառության ցուցանիշը ձևավորվում է ըստ առևտրի օբյեկտների՝ խանութների, կրպակների, առևտրի այլ օբյեկտների (շարժիչային և կենցաղային վառելիքի մանրածախ առևտրի կետերի), ինչպես նաև առևտրի իրականացման վայրերի՝ սպառողական ապրանքների և գյուղատնտեսական արտադրանքի շուկաների միջոցով իրականացված առևտրի շրջանառության հիման վրա:

ՄԱՍՆԱԿԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ – այն ընդգրկում է տնտեսական միջոցների որևէ խումբ կամ դրա տեսակ, տնտեսավարող սուբյեկտի որևէ տեղամաս և այլն: Օրինակ, դրամարկղի ամենամսյա ստուգում, կամ պահեստում նյութերի գների փոփոխման կապակցությամբ դրանց մի քանի տեսակների գույքագրում և այլն:

ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԱՆՑ ՏՐՎՈՂ ՎԱՐԿԵՐ – ներառում են ավտոմեքենաների, շարժական տների, էլեկտրակենցաղային տեխնիկայի և այլ սպառողական ապրանքների ապառիկ գնման, տների վերանորոգման ու արդիականացման, բուժսպասարկման

ծախսերը փոխհատուցելու և այլ անձնական ծախսերի ծածկման համար տրվող վարկերը: Սովորաբար այս տեսակի վարկերը հատկացվում են անմիջականորեն քաղաքացիներին կամ մանրածախ դիլերների միջոցով՝ անուղղակիորեն:

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ – ըստ որի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու, կամ անձնական, ընտանեկան, տնային և այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով օգտագործելու համար: Մատակարարման պայմանագիրը կնքվում է գրավոր:

ՄԱՐԿԵԹԻՆԳ – բառացի նշանակում է շուկայավարություն, որի նպատակն է առավելագույն շահույթի ստացումը՝ կապված նոր արտադրատեսակների մշակման, դրանց թողարկման, իրացման ու ծառայությունների մատուցման հետ: Հիմնական գործառույթներն են՝ պահանջարկի, գնագոյացման, գովազդի, իրացումը խթանելու, ապրանքատեսակների պլանավորման հարցերի մշակումը և այլն:

ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ – Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցակետերի տարածք կամ մաքսային հսկողության ենթակա ապրանքների և այլ առարկաների մաքսային պահպանման տարածք:

ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ – իրականացվում է մաքսային մարմինների կողմից, որոնց գործողությունները, ինչպես նաև՝ իրավունքներն ու պարտականությունները, կանոնակարգվում են «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքով: Մաքսային վերադաս մարմնի (պետական լիազոր մարմնի) գործառույթները իրականացնում է ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն:

ՄԱՔՍԱՎՃԱՐ – այն սահմանված կարգով և չափով պետական բյուջե գանձվող վճար է, որն օգտագործվում է մաքսային գործի զարգացման ու մաքսային մարմինների նյութատեխնիկական և սոցիալական բազան ամրապնդելու նպատակով:

ՄԱՔՍԱՏՈՒՆ – տվյալ երկրի սահմաններով առաքվող ապրանքների, փոստային առաքումների և բեռների մուտքը վերահսկող պետական հաստատություն է: Այն իրագործում է բեռների ստուգում, գանձում է մաքսատուրք, իրականացնում է հավելյալ մաքսային վճարումներ և այլ գործառնություններ: Մաքսատուրք գանձվում է մաքսային հայտարարագրերի հիման վրա: Այն միջոց է ազգային շուկայի մրցակցության ապահովման, ներմուծվող ապրանքների մրցունակության փոքրացման, ներմուծման և արտահանման ծավալի ու կառուցվածքի կարգավորման, բյուջեի համար միջոցների հայթայթման և այլ գործառնություններ ապահովելու համար:

ՄԱՔՍԱՏՈՒՐՔ – այն ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար սահմանված կարգով և չափով պետական բյուջե գանձվող պարտադիր վճար է:

ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ – տարբերակվում են ըստ գործառնության և հաշվարկման բնույթի:

Ըստ գործառնության բնույթի մաքսատուրքերը լինում են.

- արտահանման, որը վճարում են ՀՀ տարածքից ապրանքների արտահանման համար,
- ներմուծման, որը վճարում են ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների համար,
- սեզոնային, որը վճարում են տարվա որոշակի ժամանակահատվածում՝ առանձին ապրանքներ ներմուծելու կամ արտահանելու համար:

Ըստ հաշվարկման բնույթի լինում են.

- արժեքային մաքսատուրքեր, որի դեպքում այն հաշվարկվում է տոկոսներով՝ ապրանքի արժեքի նկատմամբ,
- յուրահատուկ (կամ հաստատագրված) մաքսատուրքեր, երբ այն հաշվարկվում է կայուն դրույքով՝ հարկման ենթակա ապրանքների միավորի համար,
- խառը մաքսատուրքեր, երբ վերոնշյալները զուգակցվում են:

ՀՀ տնտեսության շահերը պաշտպանելու և տնտեսական գործունեությունը խրախուսելու նպատակով կիրառում են հակազդման ու խրախուսման մաքսատուրքեր: Հակազդման մաքսատուրքերը կիրառվում են առանձին անձանց և պետությունների կամ դրանց միությունների խտրական գործողությունները կանխելու, իսկ խրախուսման մաքսատուրքերը՝ առանձին երկրներից ներմուծվող ապրանքների նկատմամբ սահմանված դրույքաչափերը նվազեցնելու միջոցով՝ այդ ապրանքների ներմուծումը խթանելու նպատակով:

ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻ ԵՎ ՄԱՔՍԱՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ – «Մաքսային օրենսգրքով» սահմանված է մաքսատուրքի հետևյալ դրույքաչափերը՝

- սահմանված դրույքաչափեր,
- յուրահատուկ դրույքաչափեր:

Եթե տոկոսային դրույքաչափերով արտահայտված մաքսատուրքը հաշվարկվում է՝ ելնելով ապրանքների մաքսային արժեքներից, ապա յուրահատուկ դրույքաչափերով մաքսատուրքը հաշվարկվում է կայուն դրույքով՝ հարկման ենթակա ապրանքների միավորի համար: Դրույքաչափերը ենթակա են փոփոխման ըստ համապատասխան օրենքի:

Մաքսավճարների գծով դրույքաչափերը սահմանվում են ըստ մաքսային գործողությունների՝ դրամական արտահայտությամբ: Առանձին գործողությունների համար այն կիրառվում է երկաստիճան սանդղակով՝ կապված զննման, պահպանման կամ վերահսկողության տակ գտնվող բեռի (ապրանքի) քաշից կամ տեսակից:

ՄԱՔՈՒՐ ՊԱՇԱՐՆԵՐ - ընդգրկում են հաշվետու ժամանակահատվածի վերջին ինչպես գործառնության արդյունքում իրականացված ներդրումների ծավալների հաճրագումարը, այնպես էլ պարտավորությունների գծով մարումները, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների՝ արտակարգ իրավիճակների, մեխանիկական սխալի և կազմակերպության ուղղակի լուծարման արդյունքում իրականացված փոփոխությունները:

ՄԵԴԻԱՆԱ – վիճակագրության մեջ մեդիանա կոչվում է համակցության այն միավորի հատկանիշը, որը տեղադրված է կարգավորված շարքի մեջտեղում: Օրինակ, եթե ըստ հասակի կանգնեցնենք 9 ուսանողի, ապա շարքի սկզբից (կամ վերջից) հաշված հինգերորդի հասակը կլինի մեդիանան: Իսկ եթե լինեն 10 ուսանող, ապա մեդիանա կլինի հինգերորդ և վեցերորդ ուսանողների հասակի միջին արժեքը:

Վարիացիոն շարքի մեջ մեդիանա է համարվում համակցության այն միավորի հատկանիշի արժեքը, որը վարիացիոն շարքն ըստ հաճախությունների գումարի բաժանում է երկու հավասար մասի, այնպես, որ միավորների կեսի հատկանիշի արժեքը փոքր է մեդիանայից, իսկ մյուս կեսինը մեծ է նրանից:

Մեդիանան հաշվարկելիս կատարված գործողությունները կարող են ընդհանրացվել հետևյալ բանաձևի տեսքով՝

$$M_e = X_{Me} + h_{Me}\frac{\frac{\sum f_i}{2} - S_{Me-1}}{f_{Me}}$$

որտեղ՝

X_{Me}-ն մեդիանային միջակայքի սկիզբն է (ստորին սահմանը),

h_{Me}-ն՝ մեդիանային միջակայքի մեծությունը,

f_{Me}-ն՝ մեդիանային միջակայքի հաճախությունը,

S_{Me-1} - ը՝ մինչև մեդիանային միջակայքը կուտակված հաճախությունը,

Σf_i -ը՝ հաճախությունների (կշիռների) կուտակումների հանրագումարը:

ՄԵԾ ԹՎԵՐԻ ՕՐԵՆՔ – այն հարցի պատասխանը, թե որքա՞ն է մեծ և ինչքա՞ն է հավանական գլխավոր ու ընտրանքային ընդհանրացնող ցուցանիշների միջև եղած տարբերությունը, տալիս է մեծ թվերի օրենքի վրա հիմնված ընտրանքային մեթոդի տեսությունը: Այդ պատասխանը նա տալիս է փոխադարձաբար շաղկապված երկու խնդրի լուծման հիման վրա. նախ, տրված հավանականությամբ ընտրանքային ցուցանիշների և գլխավոր համակցության համապատասխան ցուցանիշների հնարավոր շեղման սահմանների հաշվարկման, և երկրորդ, այն բանի հավանականության որոշման հիման վրա, որ ընտ-

րանքային ու գլխավոր համակցության ցուցանիշների հնարավոր շեղումների չափերը չեն գերազանցի տրված սահմաններից:

ՄԵԾԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ – առևտրի այն տեսակն է, երբ գնորդը մեծ խմբաքանակով ապրանքներ է ձեռք բերում դրանց հետագա վերավաճառքի համար այլ վաճառողներին, վերամշակողներին, բայց ոչ վերջնական սպառողներին՝ համապատասխան հաշվարկային փաստաթղթերով:

Մեծածախ առևտրի շրջանառության ցուցանիշը ներառում է նաև արտահանման ծավալները (բացառությամբ արտադրողների կողմից անմիջական արտահանումը):

ՄԵԿ ԲԱԺՆԵՏՈՄՍԻ ՇԱՀԱԲԱԺԻՆ – որոշվում է շահաբաժինների վճարման համար ուղղված դրամական միջոցների և շրջանառությունում գտնվող բաժնետոմսերի ընդհանուր քանակի հարաբերակցությամբ:

ՄԵՆԱՇՆՈՐՀ – 1) պետությանը, ձեռնարկությանը, կազմակերպությանը կամ ֆիզիկական անձին տրամադրված բացառիկ իրավունք՝ որևէ գործունեությամբ զբաղվելու համար: Շուկայական տնտեսության պայմաններում հակադրվում է ազատ մրցակցությանը, 2) խոշորագույն կազմակերպություններ (ընկերություններ) և (կամ) դրանց միավորումներ (կարտելներ, տրեստներ, կոնցեռներ, կոնսորցիումներ, կոնգլոմերատներ), որոնք իրենց ձեռքում են կենտրոնացնում ապրանքների ու ծառայությունների արտադրության և իրացման զգալի մասը, որը նրանց թույլ է տալիս գերիշխող դիրք գրավել շուկայում և իրենց պայմանները թելադրել սպառողին, ընդհուպ մինչև մենաշնորհային գնի սահմանումը: Երբեմն անհատական ֆիրմաները կնքում են մենաշնորհային համաձայնագրեր՝ գները, արտադրության ծավալները վերահսկելու, կամ շուկաները միմյանց միջև բաժանելու նպատակով: Համարվում է շուկայի անարդյունավետ կառուցվածք, քանի որ մրցակիցների բացակայությունը ապրանքի արտադրության ծախսերն իջեցնելու նախադրյալներ չի ստեղծում: Ավելին, մենավաճառը շուկայում չարաշահում է իր իշխանությունը սպառողների նկատմամբ՝ նշանակելով չափազանց բարձր գներ և (կամ) պակասեցնելով արտադրանքը, ինչպես նաև հնարավոր մրցակիցների նկատմամբ ստեղծելով արգելքներ՝ շուկա մուտք գործելու համար:

ՄԵՆԵՋՄԵՆԹ – անգլերեն բառ է, որը նշանակում է «կառավարում»: Մենեջմենթ բառը առաջացել է լատիներեն manus բառից, որը նշանակում է ձեռք, քանի որ սկզբնական շրջանում մենեջմենթ ասելով հասկացել են կենդանիների, մասնավորապես ձիերի կառավարումը, այսինքն՝ վարժեցնելը և դրանց սանձելը: Հետագայում այդ բառը առավել լայն կիրառություն ու իմաստ ստացավ, և ներկայումս այն վերաբերում է գիտության ու պրակտիկայի բնագավառում մարդկանց ու կազմակերպության կառավարմանը:

ՄԵՏԱՂԱԴՐԱՄ – մետաղի դրամահատած կտոր, որը պետությունը հայտարարում է դրամ (փող): Մետաղական դրամանիշը, սովորաբար պատրաստվում է ազնիվ մետաղներից և ունի ոչ մեծ արժողություն: Ներկայումս առավելապես կատարում է դրամի մանրման գործառույթ, այսինքն՝ թողարկվում է երկրի պաշտոնական դրամական միավորից ցածր անվանական արժեքով և ծառայում է այն մանրելու համար: Մետաղադրամի մեջ տարբերվում են դիմերեսը, հակառակ երեսը և կողը (եզրը): Մանր վճարումները սպասարկելու համար օգտագործվում է մանրադրամը, որը գլխավորապես պատրաստվում է պղնձանիկելային, պղնձա-ցինկային և ալյումինե ծուլվածքներից: Ավելի բարձր որակի մետաղներն օգտագործվում են հոբելյանական և հուշադրամների պատրաստման համար:

ՄԻԱԳՈՐԾՈՆ ԵՎ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆ ԿԱՊԵՐ – եթե ուսումնասիրվում է արդյունքային ցուցանիշի (y) կախվածությունը միայն մեկ ազդող գործոնից (x), ապա կապը կոչվում է միագործոն: Եթե կապը ֆունկցիոնալ է, ապա նշանակում է, որ արդյունքային ցուցանիշը կախված է միայն տվյալ գործոնից:

Եթե հետազոտվում է արդյունքային ցուցանիշի կոռելյացիոն կախվածությունը մի քանի ազդող գործոններից միաժամանակ, ապա կապը կոչվում է բազմագործոն, իսկ կոռելյացիան՝ բազմակի:

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ - հաշվարկվում են ՀՀ ոստիկանության անձնագրային ու վիզաների վարչության կողմից տրամադրված ըստ բնակության վայրի հաշվառման և դուրս գրման վարչական գրանցումներով ձևավորված էլեկտրոնային

տեղեկատվական շտեմարանների տվյալների հիման վրա: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվառման կանգնելու և հաշվառումից դուրս գրվելու գործառույթներն ուղղակիորեն կախված են քաղաքացիների կամքից, և որպես դրա հետևանք, այդ կարգի գրանցումները միգրացիոն տեղաշարժերի ամբողջական պատկերը դեռևս չեն արտացոլում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – բանկային գործառնություններ, որոնք կապված են արտարժույթի, արտասահմանյան վարկերի տրամադրման կամ որպես ներդրումային բանկերի աշխատանքի հետ, որոնք սպասարկում են արտասահմանյան երկրներին, տարածքներին, ընկերություններին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ – միջազգային արժութավարկային կազմակերպություններ են, որոնք ստեղծվել են միջպետական համաձայնագրերի հիման վրա՝ երկրների միջև արժութային և ֆինանսավարկային հարաբերությունները կարգավորելու, երկրների տնտեսական զարգացմանն աջակցելու, վարկային օգնություն ցուցաբերելու նպատակով: Այդպիսի կազմակերպությունների շարքին են դասվում՝ Միջազգային հաշվարկների բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը, Զարգացման միջազգային ասոցիացիան, Միջազգային ֆինանսական կորպորացիան, Եվրոպական ներդրումային բանկը, զարգացման տարածաշրջանային միջազգային բանկերը:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՊԱՌՈՒՄ – կազմված է այն ապրանքների ու ծառայությունների արժեքից, որոնք հաշվետու ժամանակաշրջանում ամբողջությամբ սպառվում կամ վերափոխվում են արտադրության ընթացքում: Միջանկյալ սպառման մեջ չի ներառվում հիմնական կապիտալի սպառումը: Միջանկյալ սպառման կազմում առանձին դիրքով ներառվում է ֆինանսական միջնորդների (բանկերի) անուղղակիորեն առնչվող ծառայությունները:

ՄԻՋԻՆ ԱՃԻ ՏԵՄՊ ($T_{աճ}$) – որոշվում է միջին երկրաչափականի բանաձևով՝ շղթայական և բազիսային եղանակներով.

- շղթայական եղանակ՝

$$\overline{T}_{աճ(շղթ.)} = \sqrt[n]{K_1 \cdot K_2 \cdot \ldots \cdot K_n} = \sqrt[n]{\prod_{i=1}^{n} K_i}, \quad (i=1, 2,..., n),$$

որտեղ՝

$K_{i(շղթ.)} = \frac{y_i}{y_{i-1}}$ շղթայական աճի տեմպի գործակիցն է,

n-ը՝ աճի տեմպերի թիվ

Վերը նշված բանաձևում y_1, y_2,..., y_n ցուցանիշների միջև եղած աճի տեմպերը արտահայտելով դրանց արտադրյալով, կստանանք. $\frac{y_2}{y_1} \cdot \frac{y_3}{y_2} \cdot \ldots \cdot \frac{y_n}{y_{n-1}} = \frac{y_n}{y_1}$ (բազիսային եղանակ),

- բազիսային եղանակով աճի միջին տեմպը՝

$$\overline{T}_{աճ(բ.)} = \sqrt[n-1]{\frac{y_n}{y_1}} :$$

Հավելաճի միջին տարեկան տեմպը բազիսային և շղթայական եղանակներով հավասար է աճի միջին տեմպից հանած 100%.

$$\overline{T}_{հավելաճ} = \overline{T}_{աճ}\%-100\%:$$

ՄԻՋԻՆ ԲԱՑԱՐՁԱԿ ՀԱՎԵԼԱՃ ($\overline{\Delta}$) –այն հնարավորություն է տալիս պարզելու, թե միավոր ժամանակամիջոցում միջին հաշվով որքանո՞վ է ավելացել շարքի մակարդակը (բացարձակ արտահայտությամբ)՝ սկզբնական մակարդակի նկատմամբ:

Բացարձակ հավելաճը միշտ միջակայքային ցուցանիշ է և նրա միջին մեծությունը հաշվարկվում է հավասար ժամանակահատվածների համար՝ բազիսային և շղթայական եղանակներով.

- բազիսային՝ $\overline{\Delta}_{բազ.} = \frac{y_n - y_1}{n-1}$,
- շղթայական՝ $\overline{\Delta}_{շղթ.} = \frac{\sum(\pm \Delta y_{շղթ.})}{N}$,

որտեղ՝

y_n և y_1-ը դինամիկայի շարքի վերջին և սկզբնական մակարդակներն են,

n-ը՝ դինամիկայի շարքի անդամների թիվը,

$\pm\Delta y_{շղթ.}$-ը՝ բացարձակ հավելաճերն են շղթայական եղանակով,

N-ը՝ բացարձակ հավելաճերի թվաքանակը:

Երկու եղանակներով հաշվարկման դեպքում էլ միջին բացարձակ հավելաճի համար ստացվում է միևնույն արդյունքը:

ՄԻՋԻՆ ԳԾԱՅԻՆ ՇԵՂՈՒՄ – իրենից ներկայացնում է առանձին ցուցանիշի տարբերակների և դրանց միջին թվաբանականից նրանց արժեքների բացարձակ շեղումների միջին մեծությունը:

Եթե յուրաքանչյուր տարբերակ կրկնվում է մեկ անգամ, ապա միջին գծային շեղումը (d) հավասար է՝

$$d_{պ.} = \frac{\sum|x_i - \bar{x}|}{n}, \text{ (պարզ)}, \qquad (i=1, 2, ..., n),$$

որտեղ՝

$|x_i - \bar{x}|$-ը՝ առանձին տարբերակների և դրանց միջին թվաբանականի միջև շեղումների բացարձակ արժեքն է,

n-ը՝ շարքի անդամների թիվը:

Անհավասար հաճախություններ կամ կշիռներ (f_i) ունեցող վարիացիոն շարքի համար բանաձևն ունի հետևյալ տեսքը.

$$d_{կշռ.} = \frac{\sum|x_i - \bar{x}|f_i}{\sum f_i}, \text{ (կշռված)}, \quad (i=1, 2, ..., n),$$

որտեղ Σf_i-ը վարիացիոն շարքի հաճախությունների (կշիռների) գումարն է:

Շեղումների մոտ գտնվող ուղիղ փակագծերը ցույց են տալիս, որ գումարման կամ բազմապատկման ժամանակ այդ շեղումները վերցնում են առանց հաշվի առնելու նրանց նշանները, այսինքն՝ բացարձակ արժեքների տեսքով: Դա արվում է այն պատճառով, որ միջին թվաբանականից տարբերակների շեղումների հանրահաշվական գումարը հավասար է զրոյի:

ՄԻՋԻՆ ԹՎԱԲԱՆԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ – միջին թվաբանականն ունի մի շարք հատկություններ, որոնք կարող են օգտագործվել նրա հաշվարկը պարզեցնելու համար և այլ նպատակներով: Քննարկենք միջին թվաբանականի հիմնական հատկությունները:

1. Կշռված միջին թվաբանականից տարբերակների շեղումների հանրահաշվական գումարը հավասար է 0-ի՝

$$\sum_{i=1}^{n}(x_i - \bar{x})\cdot f_i = 0:$$

Դիցուք տրված է մի վարիացիոն շարք, որի մեջ տարբերակներն ընդունում են $x_1, x_2, \ldots x_n$ արժեքները և կշիռները համապատասխանաբար կազմում են $f_1, f_2, \ldots f_n$: Այսպիսի շարքի համար միջին թվաբանականը հավասար կլինի $\bar{x} = \frac{\sum x_i f_i}{\sum f_i}$, որտեղից հետևում է՝

$$\sum x_i f_i = \bar{x}\sum f_i, \qquad (i=1, 2, \ldots, n):$$

Այդ դեպքում միջին թվաբանականից տարբերակների շեղումների հանրահաշվական գումարը կկազմի՝

$$\sum(x_i - \bar{x})\cdot f_i = \sum x_i f_i - \bar{x}\sum f_i = \bar{x}\sum f_i - \bar{x}\sum f_i = 0, \quad (i=1, 2, \ldots, n):$$

որը համաձայն վերը նշված բանաձևի հավասար է զրոյի:

Այս հատկությունը օգտագործվում է վարիացիայի ցուցանիշները հաշվարկելու ժամանակ:

2. Միջին թվաբանականի մեծությունը չի փոխվում, եթե յուրաքանչյուր տարբերակի կշիռը բազմապատկվի (կամ բաժանվի) միևնույն թվով:

Վերցնենք մի վարիացիոն շարք, որի համար կշռված միջին թվաբանականը հավասար է՝ $\bar{x} = \frac{\sum x_i f_i}{\sum f_i}$: Այժմ այդ շարքի բոլոր կշիռները բազմապատկենք a թվով: Այդ դեպքում թվաբանական միջինը կլինի՝

$$\bar{x} = \frac{\sum x_i a f_i}{\sum a f_i} = \frac{a\sum x_i f_i}{a\sum f_i} = \frac{\sum x_i f_i}{\sum f_i} = \bar{x}:$$

Հետևապես, միջինի արժեքը մնաց անփոփոխ:

3. Միջին թվաբանականի հաշվարկման տեխնիկան պարզեցվում է նաև միջինացվող հատկանիշի տարբերակների զանազան ձևափոխումների միջոցով: Ընդ որում, օգտագործվում է միջին թվաբանականի հետևյալ հատկությունը:

Եթե հատկանիշի բոլոր տարբերակները մեծացվեն կամ փոքրացվեն միևնույն թվով, ապա համապատասխանաբար կփոխվի նաև միջինը՝ այդ նույն թվի չափով:

Դիցուք՝

$$\bar{x} = \frac{\sum_{i=1}^{n} x_i f_i}{\sum_{i=1}^{n} f_i} = \frac{x_1 f_1 + x_2 f_2 + \ldots + x_n f_n}{f_1 + f_2 + \ldots + f_n}:$$

Այդ դեպքում բոլոր տարբերակները մեծացնելով կամ փոքրացնելով միևնույն a թվով և միջինը հաշվարկելով նոր տարբերակներից, կստանանք՝

$$\overline{(x \pm a)} = \frac{\sum_{i=1}^{n} (x_i \pm a) f_i}{\sum_{i=1}^{n} f_i} = \frac{\sum_{i=1}^{n} x_i f_i}{\sum_{i=1}^{n} f_i} \pm a = \bar{x} \pm a:$$

Բոլոր տարբերակները մեծացնելով a անգամ և միջինը հաշվարկելով նոր (ax) տարբերակներից, կունենանք՝

$$\overline{(ax)} = \frac{\sum_{i=1}^{n} a x_i f_i}{\sum_{i=1}^{n} f_i} = a \frac{\sum_{i=1}^{n} x_i f_i}{\sum_{i=1}^{n} f_i} = a\bar{x}:$$

ՄԻՋԻՆ ՔԱՌԱԿՈՒՍԱՅԻՆ – գործնականում երբեմն անհրաժեշտություն է լինում հաշվարկել ուսումնասիրվող ցուցանիշի քառակուսիների միջին մեծությունը: Այն հաշվարկվում է չխմբավորված և խմբավորված վարիացիոն շարքի դեպքում, հետևյալ բանաձևերի տեսքով.

- չխմբավորված շարքի դեպքում (պարզ)՝

$$\bar{x}_{\text{չխմբ}} = \sqrt{\frac{\sum x_i^2}{n}}, \qquad (i=1, 2, 3, \ldots, n)$$

- խմբավորված շարքի դեպքում (կշռված)՝

$$\bar{x}_{\text{խմբ}} = \sqrt{\frac{\sum x_i^2 f_i}{\sum f_i}}, \qquad (i=1, 2, 3, ..., n)$$

որտեղ՝

x_i^2 -ը ուսումնասիրվող ցուցանիշի i-րդ տարբերակի քառակուսու մեծությունն է,

f_i-ը ուսումնասիրվող ցուցանիշի i-րդ տարբերակի քառակուսու հաճախությունն է կամ կշիռը:

Այս միջինները հաճախ կիրառվում են տատանվող ցուցանիշների հաշվարկման ժամանակ:

Միաժամանակ, վիճակագրական պրակտիկայում օգտագործվում է նաև 3-րդ և ավելի բարձր կարգի միջինների հաշվարկումը՝ կախված ուսումնասիրվող ցուցանիշի տատանման էությունից:

ՄԻՋԻՆ ՔԱՌԱԿՈՒՍԱՅԻՆ ՇԵՂՈՒՄ (σ) – իրենից ներկայացնում է քառակուսի արմատ դիսպերսիայից (σ^2): Այդ ցուցանիշի ընդհանուր բանաձևը կարող է գրվել հետևյալ կերպ.

- անհավասար հաճախություններ (կշիռներ) ունեցող վարիացիոն շարքի համար՝

$$\sigma_{\text{կշռ.}} = \sqrt{\frac{\sum (x_i - \bar{x})^2 f_i}{\sum f_i}} \text{ (կշռված)}, \qquad (i=1, 2, ..., n),$$

- հաճախությունների (կշիռների) բացակայության դեպքում հավասար կլինի՝

$$\sigma_{\text{պ.}} = \sqrt{\frac{\sum (x_i - \bar{x})^2}{n}} \text{ (պարզ)}, \qquad (i=1, 2, ..., n),$$

ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐ – միջնորդական գործառնությունների համար վճար է կամ վարձատրություն: Այդ վճարը միջնորդը ստանում է գնորդի կամ վաճառողի անունից՝ կատարած որոշակի ծառայության դիմաց: Վճարվում է հաստատագրված կամ փոփոխվող սանդղակով՝ կախված գործարքի պայմաններից: Երբեմն ամ-

բողջ միջնորդավճարը վճարում է վաճառողը (օրինակ, երբ բրոքերը վաճառում է հաճախորդի արժեթուղթը, միջնորդավճարը վճարում է հաճախորդը): Սակայն մի շարք դեպքերում (օրինակ, որոշ ապրանքային շուկաներում) միջնորդավճարը հավասարաչափ բաժանվում է գնորդի և վաճառողի միջև: Գովազդային գործունեության մեջ միջնորդական վարձատրությունն իրենից ներկայացնում է արժեքից զեղչ: Միջնորդավճարներ վճարվում են ներդրումային և առևտրային բանկերին, բրոքերային ընկերություններին, որոնք իրականացնում են միջնորդական գործառնություններ: Բացի դրանից, առևտրական բանկերը, կարող են միջնորդավճարներ ստանալ նաև թղթակցային հարաբերություններ վարելու, տրաստային գործառնությունների, խորհրդատվական ծառայությունների, իսկ ներդրումային բանկերը՝ խորհրդատվական ծառայությունների համար: Ապահովագրական գործում հատուկ բրոքերային ընկերությունները միջնորդավճար են վերցնում ապահովագրական ռիսկերն ընդունելու համար՝ դրանք հետագայում ապահովագրական ընկերություններին փոխանցելով:

ՄՈԴԱ – վիճակագրության մեջ մոդա է կոչվում հատկանիշի ամենից հաճախ հանդիպող արժեքը: Վարիացիոն շարքի նկատմամբ մոդան այն տարբերակն է, որն ունի ամենամեծ հաճախությունը, այսինքն՝ կրկնվում է բոլորից շատ, ավելի հաճախ:

Մոդան կիրառական մեծ նշանակություն ունի: Օրինակ, կոշիկի արդյունաբերության մեջ դրա մասսայական կարի համար կաղապարներ նախագծելիս անհրաժեշտ է սահմանել մի շարք պարամետրեր՝ ոտնաթաթի լայնության ու երկարության հարաբերակցությունը, ոտնաթմբի բարձրության ու ոտնաթաթի երկարության հարաբերակցությունը և այլն: Այդ պարամետրերը սահմանելիս մոդան բացահայտ առավելություն ունի մնացած միջինների հանդեպ:

Դիսկրետ (ամբողջական թվերով) վարիացիոն շարքում մոդան որոշելիս ոչ մի բանաձև չի պահանջվում, մոդա կլինի շարքի այն տարբերակը, որն ունի ամենամեծ հաճախությունը, այսինքն՝ մյուսներից ավելի հաճախ է կրկնվում:

Հավասար միջակայքեր ունեցող անընդհատ վարիացիոն շարքում մոդան որոշվում է հետևյալ մոտավոր բանաձևով.

$$M_o = x_{Mo} + h_{Mo} \cdot \frac{f_{Mo} - f_{Mo-1}}{(f_{Mo} - f_{Mo-1}) + (f_{Mo} - f_{Mo+1})},$$

որտեղ՝

x_{Mo}-ն մոդայական միջակայքի, այսինքն՝ ամենամեծ հաճախություն ունեցող միջակայքի, սկիզբն (ստորին սահման) է,

h_{Mo}-ն՝ մոդայական միջակայքի մեծությունը,

f_{Mo}-ն՝ մոդայական միջակայքի հաճախությունը (կամ հարաբերական հաճախությունը),

f_{Mo-1}-ը՝ նախամոդայական միջակայքի հաճախությունը (կամ հարաբերական հաճախությունը),

f_{Mo+1}-ը՝ ետմոդայական միջակայքի հաճախությունը (կամ հարաբերական հաճախությունը):

ՄՈՄԵՆՏԱՅԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ – էությունն այն է, որ ուսումնասիրվող գործընթացի առանձին տարրերի առկայությունն արձանագրվում է ժամանակի որոշակի պահերին (մոմենտներին), որոնք հետազոտման հաջորդաբար և առանց ընդհատումների մեկը մյուսին հետևող ամբողջ ժամանակահատվածի բաղկացուցիչ մասերն են՝ հաշվի չառնելով տվյալ տարրի տևողությունը:

Օրինակ, որևէ արտադրական տեղամասի բանվորների աշխատաժամանակի կառուցվածքը ուսումնասիրելիս առանձնացվում է երկու մոմենտային տարր՝ «աշխատանք» և «պարապուրդ»:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳ – տնտեսական օբյեկտներին անընդհատ հետևելն ու դրանց գործունեության (որպես կառավարման բաղկացուցիչ մասի) վերլուծությունն է: Օրինակ, ֆինանսական շուկաների և ֆոնդային բորսաների տեխնիկական պարամետրերին հետևելն ու դրանց հիման վրա վերլուծական գործունեության ծավալումը՝ առավելապես համակարգչային համակարգերի օգնությամբ:

ՄՈՏԻՎԱՑԻԱ – որևէ քայլի մղելու՝ դրդապատճառների կամ շարժառիթների, ամբողջություն: Մոտիվացիայի առաջին ու առավել տարածված ձևը եղել է պատժի և խրախուսման համակարգը, որն օգտագործվել է ցանկալի արդյունքի հասնելու համար, ու կիրառվել է վարչահրամայական համակարգերի պայ-

մաններում՝ աստիճանաբար ձևափոխվելով վարչական և տնտեսական պատժամիջոցների ու խթանների (նյութական, սոցիալ-հոգեբանական) համակարգի:

Նյութական խթանների թվին են դասվում՝ աշխատավարձի բարձրացումը, պարգևատրումները, հավելավճարները, շահույթի կամ եկամուտների բաշխումը:

Սոցիալ-հոգեբանական խթաններից են կազմակերպությունում տարբեր սոցիալական արտոնությունների տրամադրումը, այդ թվում՝ աշխատողի երեխայի ուսման վարձի հատկացումը, բժշկական ապահովագրությունը, ընդմիջման համար սննդի ու տրանսպորտային ծախսերի վճարումը և այլն:

ՄՈՒՏՔԻ ԴՐԱՄԱՐԿՂԻ ՕՐԴԵՐ – սկզբնական փաստաթուղթ, որը հավաստում է դրամը դրամարկղ մուտքագրվելու փաստը: Մուտքի դրամարկղի օրդերը կազմված է անմիջապես բուն մուտքի դրամարկղի օրդերից, որը մնում է դրամն ընդունող գանձապահի մոտ, և անդորրագրից, որը հանձնվում է դրամը դրամարկղ հանձնած անձին: Համաձայն ՀՀ բանկային օրենսդրության, մուտքի դրամարկղի օրդերում պարտադիր արտացոլվում են ստանդարտ ռեկվիզիտներ:

ՄՈՒՐՀԱԿ – արժեթուղթ է, որը հավաստում է մուրհակատուի պարտավորությունը՝ սահմանված ժամկետում մուրհակատիրոջը վճարելու որոշակի գումար: Մուրհակը ոչ միայն հարմար հաշվարկային ձև է, այլ նաև առևտրային վարկի տեսակ, քանի որ վճարումն ըստ մուրհակի կատարվում է ոչ թե անմիջապես, այլ որոշ ժամանակ անց, որի ընթացքում մուրհակի գումարը գտնվում է մուրհակատուի տրամադրության տակ: Մուրհակը պարտքի միակողմանի դրամական պարտավորություն է, ըստ որի, մուրհակատերը ոչ մի պարտավորություն չունի, այլ մուրհակատուն է պարտավորվում վճարել նրանում նշված գումարը: Գոյություն ունեն հասարակ և փոխանցվող մուրհակներ: Հասարակ մուրհակում մասնակցում են 2 կողմեր՝ մուրհակատուն և մուրհակատերը: Այստեղ սահմանված է մուրհակատուի բացարձակ պարտավորությունը՝ մուրհակում նշված անձին (մուրհակատուին) գումարը որոշակի ժամկետում վճարելու մասին: Փոխանցվող մուրհակը տրվում է վարկատուի կողմից: Այն պարունակում է մուրհակատուի հրամանը վճարողին՝ սահմանված ժամկետում

վճարել որոշակի գումար մուրհակ ներկայացնողին կամ մուրհակում նշված անձին, կամ նրան, ում նա կնշի մինչև մուրհակի ժամկետի լրանալը:

ՄՈՒՐՀԱԿ ՀԱՍԱՐԱԿ – գրավոր փաստաթուղթ է, որը հավաստում է մուրհակ տվողի (մուրհակատուի)՝ որևէ բանով չպայմանավորված պարտավորությունը, մուրհակում նշված ժամկետում և որոշված տեղում որոշակի գումար վճարել մուրհակը տիրողին: Այդպիսի մուրհակին մասնակցում են երկու անձինք՝ մուրհակ տվողը, որը պարտավորվում է ուղղակիորեն և առանց որևէ պայմանի վճարել իր կողմից տրված մուրհակը, և առաջին ձեռք բերողը (մուրհակին տիրողը), որին պատկանում է մուրհակի դիմաց վճարը ստանալու իրավունքը:

ՄՈՒՐՀԱԿԻ ԶԵՂՉՈՒՄ – բանկի կամ մասնագիտացված վարկային կազմակերպության կողմից մուրհակների գնումն է, մինչև դրանց ժամկետը լրանալը: Զեղչման դեպքում բանկը մուրհակատիրոջը ժամկետից շուտ վճարում է գումարը՝ հանած հասանելիք տոկոսը, որի չափը, կախված մուրհակի որակից և ժամկետից, որոշվում է փոխատվական կապիտալի տոկոսադրույքի հիման վրա: Բանկերը զեղչման են ընդունում միայն այսպես կոչված առաջնակարգ մուրհակները, այսինքն՝ նշանավոր ֆիրմաների պարտավորություններով մուրհակները, որոնց վճարունակությունը կասկած չի հարուցում: Խոշոր բանկերի երաշխիքներով մուրհակները զեղչվում են ավելի ցածր տոկոսադրույքներով, քան բանկային երաշխիքներ (բանկային ավալ) չունեցող առևտրական և արդյունաբերական ֆիրմաների մուրհակները: Փոքր և ֆինանսական առումով թույլ ֆիրմաների պարտավորություններով մուրհակները բանկերի կողմից զեղչման չեն ընդունվում, կամ զեղչվում են անհատական և խիստ բարձր տոկոսադրույքով:

Ն

ՆԱԽԱՎՃԱՐ – համարվում է այն դրամական գումարը, որը պայմանավորվող կողմերից մեկը պայմանագրով հասանելիք վճարների հաշվից տալիս է մյուս կողմին՝ իբրև պայմանագրի

կնքման ապացույց և դրա կատարման ապահովում: Նախավճարի մասին համաձայնությունը, անկախ նախավճարի գումարի չափից, պետք է կնքվի գրավոր:

ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ – դրամական այն միջոցներն են, որոնք չեն պատկանում կազմակերպությանը, սակայն ժամանակավորապես, մինչև դրանց վերադարձը, գտնվում են նրա տնօրինության ներքո: Շուկայական տնտեսության պայմաններում ներգրավված միջոցների ամենահիմնական և տարածված տեսակը վարկային ռեսուրսներն են:

ՆԵՐԴՐՈՂ (ԻՆՎԵՍՏՈՐ) – ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող սուբյեկտ, որն արժեթղթերի սեփականատեր կամ նրա կողմից լիազորված անձ է:

ՆԵՐԴՐՎԱԾ ԿԱՊԻՏԱԼԻ ԵՏ ԳՆՄԱՆ ԺԱՄԿԵՏ – հասկանում ենք այն ժամանակահատվածը, որի ընթացքում ներդրվող գումարը կվերադառնա ներդրողին: Ավելի ստույգ, դա այն ժամկետն է, որը բնորոշվում է ներդրված կապիտալի և կանխատեսվող տարեկան զուտ շահույթի (հարկումից հետո) հարաբերակցությամբ:

Արդյունքում ստացվում է այն տարիների քանակը, որի ընթացքում սկզբնական ներդրված գումարը կվերադառնա ներդրողին՝ ի հաշիվ ստացվող զուտ շահույթի:

ՆԵՐԴՐՈՒՄ (ԻՆՎԵՍՏԻՑԻԱ) – կապիտալի ներդրումն է (դրամական, նյութական և ոչ նյութական ձևերով) ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող օբյեկտներում՝ եկամուտ (տոկոս կամ շահաբաժին) ստանալու, կապիտալն ու ակտիվներն ավելացնելու կամ այլ նպատակներ իրագործելու համար: Այսինքն՝ դրամի օգտագործումն է ավելի մեծ քանակությամբ դրամ ստանալու նպատակով: Ներդրումներին վերաբերում են դրամական միջոցները, նպատակային բանկային ավանդները, փայաբաժինները, բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, տեխնոլոգիաները, մեքենաները, սարքավորումները, լիցենզիաները, վարկերը, ցանկացած այլ գույքը և գույքային իրավունքները, մտավոր արժեքները, որոնք ներդրվում են ձեռնարկատիրական

գործունեություն իրականացնող օբյեկտներում: Հաշվառման, վերլուծության և պլանավորման նպատակներով ներդրումները դասակարգվում են ըստ տարբեր հատկանիշների. ա) ըստ միջոցների ներդրման օբյեկտների՝ իրական և ֆինանսական: Իրական ներդրումները դրանք կապիտալ ներդրումներն են որևէ արտադրանքի արտադրության մեջ: Դրանց արդյունքն է իրական կապիտալի (շենքեր, սարքավորումներ, ապրանքանյութական պաշարներ և այլն) հավելաճը: Ֆինանսական ներդրումներն արժեթղթեր ձեռք բերելու համար կատարված ծախսերն են, ինչպես նաև բանկային ավանդները: Այս դեպքում իրական կապիտալի հավելաճ տեղի չի ունենում: Անհատների, կազմակերպությունների և ֆինանսական հաստատությունների կողմից կատարվող փաթեթային ներդրումները ծառայում են շահաբաժնի, տոկոսի, վարձավճարի և կապիտալի աճի ձևով եկամուտ ստանալու նպատակով, բ) ըստ ներդրման մեջ մասնակցության բնույթի՝ ուղղակի և անուղղակի, գ) ըստ ներդրման ժամանակաշրջանի՝ կարճաժամկետ և երկարաժամկետ, դ) ըստ ներդրումային ռեսուրսների սեփականության ձևերի՝ մասնավոր, պետական և համատեղ ներդրումներ, ե) ըստ տարածքային հատկանիշի՝ ներքին և օտարերկրյա ներդրումներ:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐ (ԾԱԽՍԵՐ) – դրանք են՝ հիմնական միջոցների, ոչ նյութական և ոչ ընթացիկ ակտիվների, այլ կազմակերպության սեփական կապիտալի (բաժնեմասնակցության) միջոցների և պարտքային արժեթղթերի ձեռք բերման համար, փոխատվությունների տրամադրումից, ներդրումային այլ գործունեության նպատակով, արտասովոր դեպքերի հետ կապված վճարումները:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՋՈՒՏ ՀՈՍՔԵՐ – հավասար է ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքագրված և ելքագրված գումարների տարբերությանը:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐ (ԵԿԱՄՈՒՏՆԵՐ) – դրանք են՝ նյութերի, ապրանքների ձեռք բերման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման դիմաց, աշխատակիցներին և նրանց

անունից կատարված վճարումները (վճարված աշխատավարձը, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները, եկամտահարկը, ալիմենտը), սոցիալական ապահովագրության և ապահովության նպատակով վճարումները, բյուջեին վճարումները (տնտեսավարող սուբյեկտի կողմից հարկերի, տուրքերի, դրանց դիմաց հաշվարկված տույժերի, տուգանքների և բյուջե գանձվող այլ վճարումների գծով վճարված դրամական միջոցները), գործառնական այլ գործունեության նպատակով վճարումները (անհատույց տրված, գործուղման, պայմանագրային պարտավորությունների խախտման համար տույժերի և տուգանքների, դուրս գրված կրեդիտորական պարտքերի մարման և գործառնական այլ նպատակով վճարված դրամական միջոցները) և արտասովոր դեպքերի հետ կապված վճարումները:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՇՈՒԿԱ – վայր, որտեղ վաճառվում են արժեթղթեր և կատարված այլ ներդրումներ:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ – իրենից ներկայացնում է գործող տնտեսական քաղաքականության շրջանակներում ֆինանսական ներդրումների նպատակային ընտրված համախումբ:

Ներդրումային պորտֆելի ձևավորման գլխավոր նպատակը ներդրումային քաղաքականության իրականացումն է՝ առավել եկամտաբեր և ոչ ռիսկային ներդրումներ իրականացնելու ճանապարհով: Այս առումով, ներդրումային պորտֆել ձևավորելիս ակնկալվում է առավելագույն ներդրումային շահույթի ստացում, հնարավոր ռիսկերի նվազեցում, ներդրումային պորտֆելի բավարար իրացվելիության ապահովում: Քանի որ ֆինանսական ներդրումներից ամենատարածվածը արժեթղթերում ներդրումներն են, ուստի շատ հաճախ ներդրումային պորտֆել անվանում են արժեթղթերի փաթեթը, ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատկանող արժեթղթերի ամբողջությունը: Արժեթղթերի փաթեթի կազմի մեջ կարող են մտնել բաժնետոմսեր, մասնավոր և պետական պարտատոմսեր, ֆինանսական միջոցներ: Արժեթղթերի ընտրությունը կախված է դրանք ձեռք բերողի (իրավաբանական կամ ֆիզիկական անձի) նպատակից՝ արդյո՞ք ցանկանում է արժեթղթերի առք ու վաճառքից շահույթ ստանալ, թե ներդրում կատարել: Ներդրողները, սովո-

րաբար աշխատում են ձեռք բերել տարբեր արտադրաճյուղերի և ընկերությունների արժեթղթեր՝ արժեթղթերի գների տատանումների վտանգը նվազեցնելու նպատակով: Տարբեր տեսակի արժեթղթերի միջև հարաբերակցության փոփոխությունը (մի տեսակի արժեթղթերի վաճառքի և մեկ այլ տեսակի արժեթղթերի ձեռք բերման միջոցով) նշանակում է արժեթղթերի փաթեթի կառավարում: Փաթեթը համարվում է հավասարակշռված, եթե այն այնպես է կազմված, որ ներդրողը ստանում է անվտանգության, եկամտաբերության, կապիտալի աճի և իրացվելիության միջև լավագույն հարաբերակցություն:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՍԽԱԼ – դա ընդհանրացնող ընտրանքային ցուցանիշների ու գլխավոր համակցության համապատասխան ցուցանիշների միջև եղած տարբերությունն է:

Ներկայացուցչական սխալները բաժանվում են *պատահական և սիստեմատիկ* սխալների: *Պատահական* սխալները չունեն ուսումնասիրվող ցուցանիշի մեծություններն ավելացնելու կամ փոքրացնելու միակողմանի ուղղություն, իսկ *սիստեմատիկ* սխալներն ուղղված են մի որոշակի կողմ: Օրինակ, եթե շաքարի ճակնդեղի բերքատվության որոշման համար նրա ընտրանքային եղանակով փորել-հանելու ժամանակ մի շարք պատճառներով ընտրանքի մեջ պատահականորեն լինեն ավելի լավորակ նմուշներ, քան դրանց միջինն է, ապա այդ դեպքում խոսքը կգնա ներկայացուցչական պատահական սխալների մասին: Իսկ եթե ընտրանքի ժամանակ ոչ թե պատահական, այլ ինչ-որ կանխակալ նպատակներով սիստեմատիկորեն ընտրվեն միայն ավելի վատորակ նմուշներ, ապա այստեղ խոսք կգնա արդեն ընտրանքի կանոնի խախտման հետևանքով ստացված ներկայացուցչական սիստեմատիկ սխալների մասին: Ներկայացուցչական սխալների կանխման ու վերացման համար անհրաժեշտ է սահմանել միավորների ընտրանքի գիտականորեն հիմնավորված կարգ, որը բացառի ուսումնասիրվող հատկանիշների չափերի ինչպես կանխամտածված, այնպես էլ չկանխամտածված խեղաթյուրումները:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ – որը մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից լիազորագրի, օրենքի կամ դրա համար լիազորված պետական մարմնի (կամ

տեղական ինքնակառավարման մարմնի) ակտի վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում է անմիջականորեն ներկայացվողի համար: Լիազորությունը կարող է ակնհայտորեն բխել նաև այն իրավիճակից, որում գործում է ներկայացուցիչը (մանրածախ առևտրում՝ վաճառողը, գանձապահը և այլն): Ներկայացուցչություններ չեն այն անձինք, ովքեր թեև գործում են ի շահ ուրիշի, սակայն իրենց անունից (առևտրային միջնորդները, սնանկության ժամանակ՝ մրցութային կառավարիչները, ժառանգության ժամանակ՝ կտակ անողները և այլն), ինչպես նաև՝ ապագայում հնարավոր գործարքների վերաբերյալ բանակցություններ վարելու լիազորությամբ օժտված անձինք: Ներկայացուցիչը չի կարող ներկայացվողի անունից գործարք կնքել անձամբ իր կամ մեկ այլ անձի նկատմամբ, որի ներկայացուցիչն է միաժամանակ, բացառությամբ՝ առևտրային ներկայացուցչության դեպքում:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ – ներկայացուցիչ է համարվում ձեռնարկատիրական գործունեության ոլորտում ձեռնարկատերերի անունից պայմանագրեր կնքելիս նրանց մշտապես և ինքնուրույն ներկայացնող անձը: Առևտրային ներկայացուցիչը պարտավոր է այդ ոլորտում իրականացվող գործարքների մասին հայտնի դարձած տեղեկությունները գաղտնի պահել, նաև իրեն տրված հանձնարարությունը կատարելուց հետո:

ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ – պետության պարտքն է տնտեսավարող սուբյեկտներին և բնակչությանը, որոնցից ներգրավվել են դրամական միջոցներ պետական ծրագրերի ու պատվերների կատարման, շրջանառությունում արժեթղթերի բացթողնման և այլ նպատակների համար:

ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ – կազմակերպության հատուկ ստորաբաժանման կողմից իրականացվող հաշվապահական հաշվառման վիճակի վերահսկողությունն է, ինչպես նաև նրա ֆինանսատնտեսական գործունեության համալիր վերլուծության անցկացումը՝ արդյունավետության բարձրացման ուղիները նախանշելու, կազմակերպության և նրա ստորաբաժանումների

զարգացման հնարավորությունները բացահայտելու, կառավարչական տեղեկատվության արժանահավատությունը ստուգելու և ակտիվները պաշտպանելու նպատակով: Ներքին վերահսկողությունը ներառում է նաև վերոհիշյալ նպատակների հասնելու եղանակները և միջոցները: Նման միջոցներից են որոշակի փաստաթղթերի վրա մեկից ավելի ստորագրության պահանջը, արժեթղթերով գործառնությունների անվտանգության կանոնները, ծառայողների պարտականությունների տարանջատումը, հսկիչ հաշիվների վարումը, հատուկ նշանաբառերի օգտագործումը և այլն: Հատկապես կարևոր է բազմաթիվ հարաբերականորեն ինքնուրույն ստորաբաժանումներ (մասնաճյուղեր) ունեցող խոշոր կազմակերպությունների համար:

ՆԵՐՔԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ – պետական պարտքային պարտավորություն է, որը փոխառության տոմսի տեսքով շրջանառվում է տվյալ երկրի ներքին շուկայում:

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ – ֆիզիկական կամ նյութական (շոշափելի) ակտիվներ են, ի տարբերություն ոչ նյութական (անշոշափելի) ակտիվների: Նյութական ակտիվ են համարվում, օրինակ, սարքավորումները, մեքենաները, հողը, շենքը, շինությունները և այլն:

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ – ընդգրկում է արտադրական պաշարների, անավարտ արտադրության, պատրաստի արտադրանքի և վերավաճառքի համար նախատեսված ապրանքների պաշարների փոփոխությունը: Տվյալ ժամանակահատվածում պաշարների արժեքի փոփոխությունը հաշվարկվում է որպես ժամանակաշրջանի վերջին և սկզբին առկա պաշարների արժեքների տարբերություն, գնահատված դիտարկվող ժամանակահատվածի միջին շուկայական գներով՝ գների ազդեցությունը չեզոքացնելու նպատակով:

ՆՇԱՆԱԿՎԱԾ ԱՄՍԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ (ՆՊԱՍՏԻ) ՄԻՋԻՆ ՉԱՓ – հաշվարկվում է՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանվածության մարմիններում հաշվառման կանգնած բոլոր կենսաթոշակառուներին (նպաստ ստացողների) նշանակված

ամսական կենսաթոշակի (նպաստի) ընդհանուր գումարը նրանց թվաքանակի վրա հարաբերելով:

ՆՈՍՏՐՈ – տվյալ վարկային հիմնարկության հաշիվն է, որը գտնվում է թղթակից բանկերում, որում արտացոլվում են փոխադարձ վճարումներ: Սովորաբար հաշվի բացման դեպքում նախատեսվում է՝ ինչպիսի՞ արժույթով պետք է տարվի այդ հաշիվը, արդյո՞ք պետք է, որպեսզի վճարումները կատարվեն հաշվում եղած ամբողջ գումարի սահմաններում կամ օվերդրաֆտի ձևով, հաշվարկվելու՞ են արդյոք տոկոսային գումարները և կատարված հանձնարարությունների դիմաց կոմիսիոն (միջնորդային) վարձատրությունը:

ՆՈՍՏՐՈ ՀԱՇԻՎ – հաճախորդների հաշիվներն են թղթակից բանկերում, որոնք բացվում են բանկի անունից օտարերկրյա թղթակից բանկերում: Ռեզիդենտ բանկի արտարժույթով թղթակցային հաշիվն է օտարերկրյա բանկում, որում արտացոլվում են փոխադարձ հաշվարկները (օրինակ՝ ՀՀ տարածքում գործող բանկի հաշիվը մեկ այլ երկրի բանկում): Նոստրո հաշիվը բացվում և վարվում է սովորաբար այն երկրի արժույթով, որտեղ պահվում են դրամական միջոցները: Այդ բանկի համար, որն ունի նոստրո հաշիվ, այն ակտիվային է, քանի որ արտացոլում է միջոցների տեղաբաշխումը բանկային ավանդի ձևով: Մյուս բանկի համար հաշիվն ունի պասիվային բնույթ, արտացոլում է ներգրավված ռեսուրսները և կոչվում է լորո հաշիվ: Նոստրո հաշվի վարման պայմանները սահմանվում են երկու բանկերի միջև թղթակցային հարաբերությունների պայմանագրում:

ՆՈՐՄԱԼ ԲԱՇԽՈՒՄ – բաշխման ուշագրավ տիպերից մեկն է, որը լայնորեն կիրառվում է տնտեսագիտական վերլուծության մեջ: Գաուս-Լյապունովի նորմալ բաշխումն է, որը արտահայտվում է հետևյալ բանաձևով՝

$$y_t = \frac{1}{\sqrt{2\pi}} \cdot e^{\frac{t^2}{2}},$$

որտեղ՝

y_t -ն նորմալ բաշխման (հաճախության) կորի օրդինատն է, $\pi \approx 3,1415\ldots$, $e \approx 2,7182\ldots$

t-ն նորմավորված շեղումն է, որը հավասար է՝ $\frac{x_i - \bar{x}}{\sigma}$, (i = 1,2,..,n):

Հետևաբար, նորմալ բաշխման կորը կարող է կառուցվել երկու պարամետրերով՝ թվաբանական միջինով ($\bar{x}$) և միջին քառակուսային շեղումով (σ):

Նորմալ բաշխման կորը միագագաթ սիմետրիկ պատկեր է, այն առավելագույն արժեքից հավասարաչափ և սիմետրիկ կերպով իջնում է երկու կողմում էլ, մոտենալով աբսցիսների առանցքին, և ստեղծում է երկու հավասար ու նման կոր: Այստեղից հետևում է, որ նորմալ բաշխման մեջ թվաբանական միջինը, մեդիանան և մոդան համընկնում ու գտնվում են կենտրոնում (աբսցիսների առանցքի վրա):

ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ – ճանաչվում է գույքի կամ իրավունքի նվիրատվությունը հանրօգուտ նպատակներով: Նվիրաբերություններ կարող են արվել քաղաքացիներին, բուժական, դաստիարակչական հիմնարկներին, սոցիալական պաշտպանության ու նույնանման այլ հաստատություններին, բարեգործական, գիտական ու ուսումնական հաստատություններին, հիմնադրամներին, թանգարաններին ու մշակույթի այլ հաստատություններին, հասարակական և կրոնական կազմակերպություններին, ինչպես նաև՝ պետությանն ու համայնքներին: Նվիրաբերությունն ընդունելու համար որևէ մեկի թույլտվություն կամ համաձայնություն չի պահանջվում:

Շ

ՇԱՀԱԲԱԺԻՆ (ԴԻՎԻԴԵՆՏ) – զուտ շահույթի (հարկումից հետո) մի մասն է, որը բաժին է ընկնում յուրաքանչյուր արտոնյալ կամ սովորական (հասարակ) բաժնետոմսին՝ սահմանված տոկոսադրույքով, և ենթակա է բաժնետերերի միջև բաժանման:

ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԿԱՆԽԱՎՃԱՐ – արդյունք է զուտ շահույթից (հարկումից հետո) ըստ յուրաքանչյուր բաժնետոմսի

(արտոնյալ և հասարակ) տրամադրման: Շահաբաժնի ձևով չվճարված կամ այլ եղանակով չօգտագործված շահույթը տեղաբաշխվում է տնտեսավարող սուբյեկտի (ընկերության) հայեցողությամբ:

ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ – ցույց է տալիս, թե հարկումից հետո զուտ շահույթի ո՞ր մասն է ուղղված շահաբաժինների վճարմանը: Բաժնետիրական ընկերությունների համար այս ցուցանիշը՝ կախված նրա տնտեսական զարգացման վիճակից, ունի տարբեր իմաստ: Այսպես, նորաստեղծ և արագ զարգացող ընկերություններն ունեն շատ ցածր կամ նույնիսկ զրոյական արժեք ապահովող ցուցանիշ: Իսկ ահա, ֆինանսապես բարվոք վիճակում գտնվող (մինչև 50% զուտ շահույթ ապահովող) ընկերությունները ձգտում են իրենց կողմը գրավել բաժնետերերին՝ բարձր և կայուն շահաբաժինների վճարման հաշվին:

ՇԱՀԱՌՈՒ (ՎՃԱՐՈՒՄԸ ՍՏԱՑՈՂ) – 1) երրորդ անձ (ֆիզիկական կամ իրավաբանական անձ), որի օգտին կամ որի հրամանով կատարվում է վճարումը, կամ որի անունով դուրս է գրվում չեկ, մուրհակ կամ վճարային այլ փաստաթուղթ: Սովորաբար վճարային փաստաթղթի վրա նշվում է «վճարել հրամանը» մակագրություն, որի օգտին կամ որի հրամանով կատարվում է վճարումը: Օգտագործվում է փաստաթղթային ակրեդիտիվների, ինկասոյի, երաշխիքի իրացման կամ ավանդային սերտիֆիկատ գնելու ժամանակ: Ակրեդիտիվներով հաշվարկների ժամանակ թողարկող բանկը պետք է շահառուի օգտին վճարում կատարի հաճախորդի խնդրանքով կամ ակցեպտավորի (հոժարագրի) փոխանցելի մուրհակները, որոնք դուրս են գրվել իր՝ շահառուի կողմից: Ինկասոյի դեպքում պետք է վճարել փոխանցելի մուրհակը շահառուի օգտին: Երաշխիքի դեպքում երաշխիք տվող անձը պատասխանատվություն է կրում շահառուի առջև՝ երաշխիքի պայմաններին համապատասխան և դրա գումարի սահմաններում: Ավանդային սերտիֆիկատ գնելիս շահառուն թողարկող բանկից կամ ցեսիոներից (նրան ցեսիայի իրավունք տալու դեպքում) պետք է ստանա հասանելիք գումարը, 2) ռենտա ստացողը, 3) կտակով ժառանգորդը, 4) ապահովագրական

պոլիսով փոխհատուցում ստացողը, 5) անձ, որի օգտին խնամակալը կառավարում է ֆինանսական ռեսուրսները:

ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ) – դրանք են. 1) Իրացվող արտադրանքի շահութաբերությունը, որն իրենից ներկայացնում է իրացումից շահույթի և իրացումից հասույթի (զուտ հասույթի) հարաբերակցությունը: Այս ցուցանիշով բնորոշվում է իրացումից հասույթում (զուտ հասույթում) այդ շահույթի տեսակարար կշիռը և լավ է, որ այն բարձր լինի, քանի որ դրա մեծությամբ է պայմանավորված նաև ՀՀ պետական բյուջեի եկամուտների կազմավորումն ու ավելացումը: 2) Սեփական կապիտալի շահութաբերությունը, որը որոշվում է շահութահարկի վճարումից հետո զուտ շահույթի և սեփական կապիտալի միջին մեծության հարաբերակցությամբ: Այս ցուցանիշն իր էությամբ կարևորներից մեկն է, քանի որ նրա մեծությամբ է արտահայտվում տնտեսավարող սուբյեկտի տնտեսական կայուն վիճակը: 3) Հիմնական գործունեության շահութաբերությունը, որը հաշվարկվում է իրացումից շահույթի և իրացված արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) լրիվ ինքնարժեքի հարաբերակցությամբ: Այս ցուցանիշը բնորոշում է մեկ միավոր լրիվ ինքնարժեքին բաժին ընկնող իրացումից ստացվող շահույթի գումարի չափը, և որքան բարձր լինի կատարվող ծախսի հատույցի չափը՝ կնշանակի, տվյալ տնտեսավարող սուբյեկտն աշխատել է արդյունավետ և ապահովել է բարձր շահույթի ստացում: 4) Ընդհանուր ակտիվների շահութաբերությունը, որն արտահայտվում է հարկումից հետո զուտ շահույթի և ընդհանուր ակտիվների միջին մեծության հարաբերակցությամբ: Այս ցուցանիշը բնորոշում է միջին հաշվով ընդհանուր ակտիվների (հաշվեկշռի հանրագումարի) մեկ միավորին բաժին ընկնող զուտ շահույթի (շահութահարկի վճարումից հետո) գումարի չափը, և այն նաև ցույց է տալիս ընդհանուր ակտիվների հատույցի մեծությունը: 5) Ընթացիկ ակտիվների շահութաբերությունը, որն իրենից ներկայացնում է հարկումից հետո զուտ շահույթի և ընթացիկ ակտիվների միջին մեծության հարաբերակցությունը: Այս ցուցանիշը նույն իմաստն ունի, ինչ որ ընդհանուր ակտիվների շահութաբերությունը: 6) Ներդրումների շահութաբերությունը, որը որոշվում է սովորական (ֆի-

նանսատնտեսական) գործունեությունից շահույթի և սեփական ու ոչ ընթացիկ պարտավորությունների միջին մեծությունների գումարի հարաբերակցությամբ: Հատկապես այս ցուցանիշը հաշվարկելիս շատ կարևոր է ոչ ընթացիկ պարտավորությունների նպատակային օգտագործումը և դրա միջին հաշվով մեկ միավորի գծով շահույթի ապահովումը: Հակառակ դեպքում՝ անիմաստ է ներդրումային քաղաքականության իրականացումը: 7) Շահույթի նորման, որը հաշվարկվում է սովորական (ֆինանսատնտեսական) գործունեությունից ստացված շահույթի և ոչ ընթացիկ ակտիվների (հիմնական միջոցներ և այլ ներդրումներ) ու նյութական ընթացիկ ակտիվների (պաշարների) միջին մեծությունների գումարի հարաբերակցությամբ: 8) Վաճառքի ծավալի շահութաբերությունը, որն իրենից ներկայացնում է հարկումից հետո զուտ շահույթի և իրացումից հասույթի (զուտ հասույթի) հարաբերակցությունը: Այն ցույց է տալիս հարկային վճարումներից հետո տնտեսավարող սուբյեկտների ենթակայության տակ գտնվող զուտ շահույթի տեսակարար կշիռը՝ իրացումից հասույթում (զուտ հասույթում): Նշված բոլոր ցուցանիշներն էլ հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության տվյալների հիման վրա:

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ – հարկ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է: Շահութահարկ են վճարում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները (պետական գրանցում ստացած իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունները), որոնց համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում ու նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը, և ոչ ռեզիդենտները (օտարերկրյա պետություններում ստեղծված իրավաբանական անձինք ու իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունները, ինչպես նաև՝ միջազգային կազմակերպություններն ու դրանց կողմից ՀՀ-ից դուրս ստեղծված իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունները), որոնց համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից

ստացվող հարկվող շահույթը, բացառությամբ՝ ՀՀ բյուջետային հիմնարկների և ՀՀ կենտրոնական բանկի:

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐ – տարբերակվում են շահութահարկ վճարողների երկու խումբ՝ ռեզիդենտներ (հայաստանյան կազմակերպություններ) և ոչ ռեզիդենտներ (օտարերկրյա և միջազգային կազմակերպություններ): Էական է համարվում այն, որ ռեզիդենտները շահութահարկը վճարում են իրենց համաշխարհային եկամուտներից, իսկ ոչ ռեզիդենտները՝ ՀՀ-ում ստացած եկամուտներից:

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԱՄՈՐՏԻԶԱՑԻՈՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ – հարկային նպատակով ամորտիզացիոն մասհանումները կատարվում են գծային եղանակով, այսինքն՝ հավասարաչափ, ակտիվների օգտագործման տևողության ընթացքում: Ամորտիզացիոն մասհանումների տարեկան մեծությունը հաշվարկվում է ակտիվների սկզբնական արժեքի և ամորտիզացիոն ժամկետի հարաբերակցությամբ:

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԵԿԱՄՈՒՏ ՉՀԱՄԱՐՎՈՂ ՏԱՐՐԵՐ – որոշ գործարքների կամ գործառնությունների արդյունքում հարկ վճարողի սեփական կապիտալի աճը չի հանգեցնում հարկվող շահույթի համապատասխան աճի, ուստի դրանք հարկային նպատակներով եկամուտ չեն դիտվում:

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԾԱԽՍ ՉՀԱՄԱՐՎՈՂ ՏԱՐՐԵՐ – որոշ գործարքների կամ գործառնությունների արդյունքում հարկ վճարողի սեփական կապիտալի նվազեցումը չի հանգեցնում հարկվող շահույթի համապատասխան նվազեցման, ուստի դրանք հարկային նպատակներով ծախս չեն դիտվում:

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ – ծախսերը կազմում են համախառն եկամտից նվազեցման ենթակա հիմնական խումբը: Հարկային նպատակով ծախսերին են դասվում նյութական ծախսերը, աշխատանքի վարձատրության գումարները, ամորտիզացիոն մասհանումները, վարձակալության վճարները, գովազդային ծախսերը, ներկայացուցչական ծախսերը,

մարքեթինգի ծախսերը, գործուղման ծախսերը, կադրերի վերապատրաստման ծախսերը և այլն:

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ – դրանց են վերաբերում այն նյութական ռեսուրսների արժեքները, որոնք հարկատուի գործունեության ընթացքում անմիջականորեն սպառվում են կամ իրենց արժեքն ամբողջությամբ փոխանցում են արտադրանքին կամ ծառայությանը:

Նյութական ծախսերն արտացոլում են օգտագործված նյութական ռեսուրսների սկզբնական արժեքները:

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐ – նվազեցումների հիմնական տեսակներն են՝ ծախսերը, կորուստներն ու այլ նվազեցումները, ինչպես օրինակ՝ ստացված շահաբաժինները, գործունեությունից պատճառված վնասները և այլն:

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ – բոլոր ռեզիդենտները տարին մեկ անգամ իրենց շահութահարկի հաշվարկը կատարում և ներկայացնում են հարկային տեսչություն՝ ֆինանսական հաշվետվությունների հետ միասին: Ոչ ռեզիդենտները հայտարարագրում են ՀՀ-ում ստացված եկամուտները՝ ներկայացնելով տարեկան եկամուտների մասին հայտարարագիր, ինչպես նաև կամայական (իրենց կողմից որոշված) ձևով հաշվետվություն՝ իրենց գործունեության մասին:

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՎՃԱՐՈՒՄ – հարկային գործակալների, ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների համար վճարման ժամկետները տարբեր են: Հարկային գործակալների կողմից գանձված հարկերի փոխանցման ժամկետը կախված է եկամուտների վճարման ժամկետից: Որոշ պայմանների առկայության դեպքում հարկատուները կատարում են կանխավճարներ:

ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏ – դա հարկվող շահույթն է, որն իրենից ներկայացնում է համախառն եկամտի և նվազեցումների դրական տարբերությունը: Հարկվող շահույթից գանձվում է շահութահարկ՝ օրենքով սահմանված դրույքաչափով (20%), որը կարող է ենթարկվել փոփոխման:

ՇԱՀՈՒՅԹ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ – իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այն կազմակերպությունն է, որի սեփականատիրոջը կանոնադրությամբ արգելված է ներդրված գույքից շահույթ ստանալ: Նման կազմակերպություն կարող է համարվել մեկ անձի (ընտանիքի) կողմից որպես իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ձեռնարկությունը, ինչպես նաև՝ ձեռնարկության կամ կազմակերպության կողմից որպես դուստր կազմակերպությունը և մի քանի անձանց (այդ թվում և իրավաբանական) կողմից՝ որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Այդ կազմակերպությունը չի կարող անդամակցել տնտեսական այն միավորումներին, որոնք շահույթ ստանալու նպատակ են հետապնդում: Միաժամանակ այդ կազմակերպությունը ստացած եկամուտը կարող է ծախսել միայն իր կանոնադրական գործունեության հետ կապված նպատակներով: Կազմակերպության հիմնադիր փաստաթուղթը նրա կանոնադրությունն է, իսկ որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ նաև հիմնադիր պայմանագիրը: Կազմակերպության անվանումից պետք է պարզ լինի նրա շահույթ ստանալու նպատակ չհետապնդելը և գործունեության ոլորտը: Թույլատրվում է նշել հիմնադրի (հիմնադիրների) անվանումը (անունը), «Հիմնադրամ» կամ «Բարեգործական հիմնադրամ» բառերը, եթե դրանք համապատասխանում են շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպության կանոնադրական գործունեությանը:

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՊԻՏԱԼԱՑՈՒՄ – 1) ֆիրմայի տնտեսական արժեքի գնահատումն է՝ ապագայում ենթադրվող զուտ շահույթի ներկա ժամանակի բերելու միջոցով, 2) չբաշխված շահույթի վերածումը ընկերության կանոնադրական կապիտալի:

ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔ – գույք, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, սահմանված չէ որպես անշարժ գույք:

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ – որոշակի ժամանակաշրջանում, սովորաբար մեկ տարում, դրամական միավորի կատարած պտույտների միջին թիվն է: Սովորաբար հաշվարկվում

է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) և դրամական ագրեգատներից որևէ մեկի հարաբերակցությամբ: Իրենից ներկայացնում է դրամական զանգվածի և ապրանքների ու ծառայությունների վրա կատարված ծախսերի հարաբերակցությունը գնահատելու ցուցանիշ: Շրջանառության արագության ավելացումը նշանակում է տնտեսական աճ:

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ – օրենքով սահմանված կարգով, չափերով ու ժամկետներում առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից իրականացվող գործունեության համար պետական բյուջե վճարվող՝ ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) և ((կամ) շահութահարկին փոխարինող հարկ է: Առևտրային կազմակերպությունների համար շրջանառության հարկը փոխարինում է ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին: Անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար շրջանառության հարկը փոխարինում է ԱԱՀ-ին:

Շրջանառության հարկ վճարողներ են համարվում այն անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը՝ առանց ԱԱՀ-ի (այսուհետ՝ իրացման շրջանառության), չի գերազանցել 58,35 մլն. դրամը: Սույն դրույթի կիրառման առումով իրացման շրջանառությունը ներառում է նաև հաստատագրված վճարներով և (կամ) արտոնագրային վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը), իսկ առևտրային կազմակերպության վերակազմակերպման (միացում, միաձուլում, առանձնացնում, բաժանում, վերակազմավորում) դեպքում գործող կազմակերպությունների իրացման շրջանառության հաշվարկման համար հիմք են ընդունվում վերակազմակերպմանը մասնակցող բոլոր այդ կազմակերպությունների նախորդ օրացուցային տարվա իրացման շրջանառությունները:

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՐԱՎ – համարվում է գրավատուի մոտ թողնված ապրանքների գրավը՝ գրավատուին իրավունք վերապահելով փոխել գրավ դրված գույքի (ապրանքային պաշարների, հումքի, նյութերի, կիսա-

ֆաբրիկատների, պատրաստի արտադրանքի և այլն) կազմը և բնական ձևը, պայմանով, որ դրանց ընդհանուր արժեքը չնվազի գրավի մասին պայմանագրում նշվածից: Շրջանառության մեջ գտնվող գրավ դրված ապրանքների արժեքի նվազեցումը թույլատրվում է գրավով ապահովված պարտավորության կատարվածի մասին համաչափ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ – 1) ապրանքային արտադրությանը բնորոշ՝ աշխատանքի արդյունքների, դրամի և սեփականության այլ օբյեկտների առք ու վաճառքի միջոցով, փոխանակության ձև է, 2) բանկի կողմից թողարկված և շրջանառության մեջ գտնվող բանկնոտների ընդհանուր արժեքն է՝ ի տարբերություն բանկային պահուստներում գտնվող ամբողջ դրամի:

ՇՈՒԿԱ – ապրանքների ու ծառայությունների առկա և հնարավոր գնորդների ու վաճառողների ամբողջություն է: Այլ կերպ ասած՝ շուկան գնողունակ պահանջարկով տարբերակված սպառողական առանձին խմբերի ամբողջություն է և ձևավորվում է տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և հոգեբանական ամբողջական գործոնների փոխազդեցության հետևանքով:

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔ – ապրանքների (ծառայությունների), այդ թվում՝ բորսայական ապրանքների, արժեթղթերի և արտարժույթի ընթացիկ արժեքն է, որը որոշվում է շուկայում յուրաքանչյուր պահին ձևավորված պահանջարկի և առաջարկի հարաբերակցության հիման վրա: Այդ գնով սեփականատերը պատրաստ է վաճառել ունեցվածքը, իսկ մի շարք գնորդներ պատրաստ են այն գնել: Կազմակերպության հաշվեկշռում նման ունեցվածքը գրանցվում է սկզբնական արժեքով, թեպետև շուկայական արժեքը կարող է էապես տարբերվել՝ արտահայտելով ընթացիկ գինը:

ՈՉ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ – արդյունք են՝ հիմնական միջոցների, ֆինանսական ներդրումների, ոչ ընթացիկ այլ ակտիվների, գործունեության ընդհատման հետ կապված ակտիվների, փոխարժեքային տարբերությունների, անհատույց ստացված ակտիվների, ֆինանսական ներդրումների (շահաբաժիններ, տոկոսներ), կապակցված կազմակերպությունների շահույթի բաժնեմասի, ֆինանսական վարձակալության:

ՈՉ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԾԱԽՍԵՐ – արդյունք են՝ հիմնական միջոցների, ֆինանսական ներդրումների, ոչ ընթացիկ այլ ակտիվների ձեռք բերման հետ կապված փոխարժեքային տարբերությունների, վարկերի և փոխառությունների, կապակցված կազմակերպությունների վնասի բաժնեմասի, ֆինանսական վարձակալության:

ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ – տնտեսական միջոցների (ակտիվի) մի մասն են, որոնք արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռի 1-ին բաժնում, և նրանում ներառվում են հիմնական միջոցները, ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցները, ոչ նյութական ակտիվները, ֆինանսական վարձակալությունում զուտ ներդրումները և այլ ոչ ընթացիկ ակտիվները:

ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ – դրանք են՝ շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցները (շենքեր, կառուցվածքներ, փոխանցող հարմարանքներ, մեքենաներ և սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ, արտադրական ու տնտեսական գույք և գործիքներ, բազմամյա տնկարկներ, բանող և մթերատու անասուններ, այլ միջոցներ), շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցները (շահագործման չհանձնված հիմնական միջոցներ, ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոցներ և դրանց մաշվածություն, շահագործումից հանված և օտարման նպատակով պահվող հիմնական միջոցներ), հողամասերը, բնական ռեսուրսները և դրանց սպառումը, անավարտ, ոչ ընթացիկ նյութական ակտիվները

(կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ, տեղակայման ենթակա սարքավորումներ, հետագա կապիտալացվող ծախսումներ), ֆինանսական վարձակալության ստացված հիմնական միջոցները, ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեզրկումից կորուստները:

ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – տնտեսական միջոցների (ակտիվի) կազմավորման աղբյուրների (պասիվի) մի մասն են, որոնք արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռի պասիվում, և նրանում ներառվում են երկարաժամկետ բանկային վարկերն ու փոխառությունները, ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորությունները, հետաձգված հարկային պարտավորությունները և ոչ ընթացիկ այլ պարտավորություններ:

ՈՉ ԼՐԻՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ – կատարվում է այն ժամանակ, երբ գույքի կամ ձեռնարկատիրական ռիսկի ապահովագրության պայմաններում ապահովագրական գումարը սահմանվել է ապահովագրական արժեքից ցածր: Այդ դեպքում ապահովագրողն՝ ապահովագրական պատահարը վրա հասնելիս, պարտավոր է ապահովագրվողին (շահառուին) հատուցել վերջինիս կրած վնասների մի մասը՝ ապահովագրական արժեքի նկատմամբ ապահովագրական գումարին համամասնական չափով: Պայմանագրով կարող է նախատեսվել ապահովագրական հատուցման առավել բարձր գումար, սակայն ապահովագրական արժեքից ոչ ավելի չափով:

ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ – ոչ ընթացիկ ակտիվների այն մասն են, որոնք չունեն ֆիզիկական մարմնավորում, սակայն ունեն իրական արժեք՝ առաջին հերթին ակտիվը տիրապետողի համար: Այդպիսի ակտիվներից են՝ կազմակերպության վարկի և գործարար կապերի պայմանական արժեքը, մտավոր սեփականությունը, արտոնագրերը, հեղինակային իրավունքները, առևտրանշանները, ապահովագրական պոլիսները, ծրագրային ապահովումը, հողի ու բնական ռեսուրսների օգտագործման իրավունքը և այլ ոչ նյութական ակտիվները: Ամենից անտեսանելի և անշոշափելի ոչ նյութական ակտիվները, հավանաբար, կազմակերպության վարկն ու գործարար կապերն են,

քանի որ դրանց առկայությունը չի ամրագրվում որևէ փաստաթղթում և դժվար է գնահատել դրանց առևտրական արժեքը: Սակայն դրանք հաճախ շահույթի կարևոր գործոն են դառնում:

ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ – ոչ պետական են համարվում այն կազմակերպությունները, որոնց գույքի 50%-ից ավելին քաղաքացիների կամ կոլեկտիվ սեփականություն է:

ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐ – դրանք են. ա) արտասահմանում մշտական բնակության վայր ունեցող ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիություն չունեցող անձինք, այդ թվում՝ ՀՀ տարածքում ժամանակավորապես գտնվող ֆիզիկական անձինք, բ) իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այն ընկերությունները ու կազմակերպությունները, որոնք ստեղծված են օտարերկրյա պետությունների օրենսդրությանը համապատասխան ու գտնվում են Հայաստանի Հանրապետությունից դուրս, ինչպես նաև՝ դրանց մասնաճյուղերը և ներկայացուցչությունները, որոնք գտնվում են Հայաստանի Հանրապետությունում, գ) Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող օտարերկրյա դիվանագիտական և պաշտոնական այլ ներկայացուցչությունները, ինչպես նաև՝ միջազգային կազմակերպությունների ու օտարերկրյա ֆիրմաների ներկայացուցչությունները:

ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ – դրանք հետևյալներն են՝

- պետությանը պատկանող հիմնական միջոցների օտարումից մուտքերը (այդ թվում՝ լուծարված պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց լուծարումից հետո մնացած գույքի օտարումից պետական մասնակցության չափին համապատասխան մուտքերը),
- բարձրարժեք ակտիվների օտարումից մուտքերը,
- պետության պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների իրացումից մուտքերը,
- պետական սեփականություն համարվող չարտադրված ակտիվների՝ հողի և ոչ նյութական ակտիվների օտարումից մուտքերը:

ՈՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄԵԹՈԴ – ենթադրում է ռիսկի ծագման աղբյուրների և պատճառների հայտնաբերումը, ռիսկի պոտենցիալ սահմանների որոշումը և կարևորում է բոլոր հնարավոր ռիսկերի բացահայտումը:

Չ

ՉԱՊԱՀՈՎՎԱԾ (ԲԼԱՆԿԱՅԻՆ) ՎԱՐԿ – վարկ, որը տրվում է առանց որևէ ապահովման՝ փոխառուի լավ համբավի դիմաց:

ՉԲԱՇԽՎԱԾ ՇԱՀՈՒՅԹ – ներառում է հարկումից հետո զուտ շահույթի այն մասը, որը չի վճարվել որպես շահաբաժին և թողնվել է ներդրումային նպատակով:

ՉԵԿ – անկանխիկ հաշվարկային գործառնությունների իրականացման փաստաթուղթ է, ըստ որի չեկի տերը գրավոր համաձայնություն է տալիս իր հաշվից վճարելու դրամական միջոցներ՝ մատակարարի հաշվին, չեկում ցույց տրված գումարի չափով: Չեկերն օգտագործվում են իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող և չունեցող ընկերությունների, կազմակերպությունների, հիմնարկությունների միջև փոխադարձ հաշվարկների իրականացման ժամանակ:

ՉԵԿԱՅԻՆ ԱՎԱՆԴ – ավանդ առևտրային բանկում, որի հիման վրա կարելի է չեկ դուրս գրել: Այդպիսի ավանդներին վերաբերում են անժամկետ (ցպահանջ) ավանդները՝ ըստ ներկայացնողի չեկ դուրս գրելու իրավունքով, միջոցները խնայողական հաշվին ավտոմատ փոխանցելու իրավունքով ավանդները և այլն:

ՉԵԿԱՅԻՆ ԳՐՔՈՒՅԿ – մեկ գրքույկի տեսքով (սովորաբար 25 թերթ) միացված չեկերի ձևաթղթեր են, որոնք բանկի կողմից տրվում են բանկում չեկային հաշիվ բացելու ժամանակ: Չեկային գրքույկն իրենից ներկայացնում է բանկում չեկային հաշիվը տնօրինելու միջոց: Օգտագործելով չեկային գրքույկ և այն բաժանելով առանձին չեկերի ու դրանք ներկայացնելով վճարման, հաճախորդը չեկերի միջոցով ոչ միայն կարող է կանխիկ

դրամ ստանալ իր ընթացիկ հաշվից, այլ նաև դրանցով անմիջապես հաշվարկներ կատարել ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ: Չեկերը, որպես կանոն, ձևակերպվում են հատուկ ձևաթղթերի վրա, որոնք պատրաստվում են տպագրական եղանակով հատուկ թղթի վրա և ապահովվում են հաջորդական համարակալումով:

Պ

ՊԱԿԱՍՈՐԴ – դրամական միջոցների, ապրանքների և այլ արժեքների փաստացիի նկատմամբ պակաս չափով լինելու բացահայտումն է: Այն կարող է տեղի ունենալ սահմանված նորմաներից ավելի կորուստների, հաշվառման մեջ թույլ տրված սխալների, ապրանքանյութական արժեքների ու դրամական միջոցների հափշտակման և գողության հետևանքով: Պակասորդը հայտնաբերվում է գույքագրման միջոցով՝ հաշվապահական հաշվառման մեջ արտացոլված և առկա արժեքների քանակային համեմատությամբ:

ՊԱԿԱՍՈՒՐԴ – 1) կազմակերպության պարտավորությունների գերազանցումը նրա ակտիվներին ու եկամուտներին, 2) տվյալ բյուջետային ժամանակաշրջանի փաստացի պարտավորությունների ու ծախսերի գերազանցումը այդ ժամանակաշրջանի համար սահմանված բյուջեին, 3) որևէ նպատակի (նպատակների) հետ կապված պարտավորությունների կամ ծախսերի գերազանցումն է այդ նպատակի համար նախատեսված նախահաշվային գումարին, 4) բյուջետային ծախսերի գերազանցումը եկամուտներին (բյուջեի պակասուրդ):

ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԿՈՐ – կոր, որը ցույց է տալիս ապրանքի (ծառայության) պահանջարկի կախվածությունը դրա գնից: Այլ կերպ ասած, ապրանքի (ծառայության) շուկայական գնի և գնորդների կողմից այդ գնով գնվող քանակի միջև փոխկապվածության գծապատկերումն է: Եթե պահանջարկի կորը թեքված է դեպի ներքև, ապա արդյունքում ստացվում է, որ ապրանքների ու ծառայությունների գների իջեցմանը զուգընթաց դրանց գնումների քանակն աճում է, իսկ հակառակ դեպքում՝ գների

աճին զուգընթաց, գնվող ապրանքների ու ծառայությունների քանակն արդեն կկրճատվի: Պահանջարկի վրա, գնի հետ միասին, ազդում են նաև մի շարք այլ գործոններ, այդ թվում՝ սպառողների եկամուտների միջին մեծությունը, շուկայի չափը, փոխարինող ապրանքների գները, նախասիրություններն ու նախապատվությունները: Այս գործոններից յուրաքանչյուրի ազդեցությունը կհանգեցնի պահանջարկի կորի փոփոխության:

ՊԱՀՈՒՍՏՆԵՐ – 1) արդյունք են տնտեսավարող սուբյեկտների ենթակայության տակ գտնվող զուտ շահույթից մասհանումների, որի գումարի չափը որոշվում է կանոնադրական կապիտալի գումարի նկատմամբ սահմանված տոկոսադրույքի չափով (15%): Պահուստային կապիտալն օգտագործվում է պատճառված կորուստները ծածկելու, ինչպես նաև ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը ետ գնելու համար: Պահուստային կապիտալը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար, 2) այն միջոցներն են, որոնք կոչված են չնախատեսված ծախսեր կատարելու, ինչպես նաև՝ չհայտարարված շահաբաժինների վճարման և պարտավորությունների մարման համար:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ – համարվում է երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն: Երկուսից ավելի կողմերի միջև կնքված պայմանագրերի նկատմամբ պայմանագրի մասին ընդհանուր դրույթները կիրառվում են, եթե դա չի հակասում նման պայմանագրերի բազմակողմանի բնույթին: Քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիրը կնքելիս: Պայմանագիր կնքելուն հարկադրել չի թույլատրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիր կնքելու պարտականությունը նախատեսված է կամովին ստանձնած պարտավորությամբ: Կողմերը կարող են կնքել ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ՝ չնախատեսված պայմանագիր:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓՈԽԱՐԺԵՔ (ԿՈՒՐՍ) – արտարժույթի փոխարժեքն է, որը որոշում է տվյալ երկրի իրավասու պետական

մարմինը (սովորաբար կենտրոնական բանկը): Եթե այն տարբերվում է շուկայական փոխարժեքից, ապա կենտրոնական բանկը պետք է պատրաստ լինի պաշտպանելու պաշտոնական փոխարժեքը, որպեսզի այդ երկու փոխարժեքները համընկնեն: Այդ առումով պետք է իրականացնի բաց շուկայական քաղաքականություն:

ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԳՐԱՆՑՎԱԾ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐ – համարվում են հանրապետության տարածքում մշտապես բնակվող աշխատունակ տարիքի այն աշխատունակ քաղաքացիները, ովքեր դիտարկվող ժամանակաշրջանում աշխատանք (եկամտաբեր զբաղմունք) չեն ունեցել, աշխատանք են փնտրել զբաղվածության տարածքային կենտրոնների օգնությամբ, պատրաստ են եղել անմիջապես, կամ օրենսդրությամբ սահմանված ժամանակաշրջանի ընթացքում անցնել աշխատանքի:

ՊԱՍԻՎՆԵՐ – տնտեսավարող սուբյեկտների ենթակայության տակ գտնվող տնտեսական միջոցների (ակտիվների) կազմավորման աղբյուրներն են, որոնք իրենց բովանդակությամբ հանդես են գալիս սեփական կապիտալի, ոչ ընթացիկ պարտավորությունների և ընթացիկ պարտավորությունների տեսքով: Պասիվներն իրենց արժեքային առումով արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռի աջ կողմում (պասիվային մաս):

ՊԱՍԻՎՆԵՐ ՈՉ ՀՐԱՏԱՊ – ընթացիկ պարտավորություններից կրեդիտորական պարտքերն են (առևտրային կրեդիտորական պարտքերը, կարճաժամկետ կրեդիտորական պարտքը բյուջեին, պարտադիր սոցիալական ապահովագրության գծով պարտքերը և այլն), շահաբաժինների գծով կանխավճարները, այլ կրեդիտորական պարտքերը, որոնք սահմանված ժամկետում չեն վճարվում:

ՊԱՐԶ ՄԻՋԻՆ ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ – հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\bar{x}_{\text{երկ(պ)}} = \sqrt[n]{x_1 \cdot x_2 \cdot \ldots \cdot x_n} = \sqrt[n]{\prod_{i=1}^{n} x_i}$$

որտեղ՝

x_i-ը ուսումնասիրվող ցուցանիշի i-րդ տարբերակի բացարձակ կամ հարաբերական մեծություններն են,

n-ը ուսումնասիրվող ցուցանիշի տարբերակների (ըստ ժամանակաշրջանների) թվաքանակն է, $\sqrt[n]{\prod_{i=1}^{n} x_i}$-ը ուսումնասիրվող ցուցանիշի i տարբերակների արտադրյալն է:

Նշված միջինի բանաձևով հաշվարկվում է դինամիկայի ցուցանիշներից աճի միջին տեմպը՝ գործակցով կամ տոկոսային արտահայտությամբ:

ՊԱՐԶ ՏՈԿՈՍՆԵՐ – հաշվարկվում է որպես վճար վարկի (ավանդի) դիմաց, այսինքն՝ տոկոսները կարելի է գանձել ինչպես վարկային (ավանդային) գործարքի սկզբում, այնպես էլ՝ նրա վերջում: Այսպես, եթե տոկոսները հաշվարկվում են վարկային (ավանդային) գործարքի ավարտին, մարման ժամկետը լրանալուց, ապա որոշվում է պարզ տոկոսադրույքների բանաձևով՝

$$S=P+I$$

որտեղ՝

P-ն սկզբնական վարկային (ավանդային) մայր գումարն է,

I-ն ըստ սահմանված տոկոսադրույքի հասանելիք տոկոսային եկամուտն է,

S-ը՝ մարման կամ ետ վերադարձման ենթակա գումարը՝ տոկոսային եկամտի հետ համատեղ:

$$S = P + \frac{P \cdot i}{100} t = P\left(1 + \frac{i}{100} t\right)$$

որտեղ՝

i-ն տոկոսադրույքն է,

t-ն՝ վարկի (ավանդի) տրամադրման կամ հետ վերադարձման ժամկետը:

ՊԱՐՁԵՑՎԱԾ ՀԱՐԿ – սույն օրենքով սահմանված չափերով ու ժամկետներում ձեռնարկատիրական գործունեության համար պետական բյուջե վճարվող՝ ավելացված արժեքի հարկին և (կամ) շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հարկ է: Առևտրային կազմակերպությունների համար պարզեցված հարկը

փոխարինում է ավելացված արժեքի հարկին և (կամ) շահութահարկին, իսկ անհատ ձեռնարկատերերի համար՝ փոխարինում է ավելացված արժեքի հարկին և (կամ) եկամտահարկին: ՀՀում պարզեցված հարկ վճարող են համարվում իրենց հաշվառման վայրի հարկային մարմիններին սահմանված ժամկետներում և կարգով հայտարարագիր ներկայացրած առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նպաստները:

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿԻ ԳՑՈՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ – «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված են որոշակի պայմաններ, որոնց չբավարարող անձինք չեն կարող համարվել պարզեցված հարկ վճարողներ, օրինակ՝ վարկային կամ ապահովագրական կազմակերպությունները, ներդրումային հիմնադրամները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված կազմակերպությունները, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողները, խորհրդատվական և աուդիտորական ծառայություններ մատուցողները, ակցիզային հարկով հարկվող ապրանքներ արտադրողները, նախորդ տարվա ընթացքում այնպիսի ապրանքներ ներմուծողները, որոնց համար ներմուծման պահին նախատեսված չէ ԱՀՀ-ի գանձում, և եթե այդ ապրանքների չիրացված մնացորդը գերազանցում է օրենքով սահմանված գումարը, գյուղատնտեսական արտադրանք արտադրողները, ժամկետանց հարկային պարտավորություններ ունեցող հարկատուները, որոնց պարտքը կազմում է սահմանված չափով որոշակի գումար:

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄ – տնտեսավարող սուբյեկտը, պարզեցված հարկ վճարող ճանաչվելուց հետո, հարկային տարվա ընթացքում մի շարք պատճառներով կարող է դադարել այդպիսին համարվելուց: Այդպիսի պատճառներ կարող են հանդիսանալ՝ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայությունը, այդ դաշտում չթույլատրված գործունեություն իրականացնելը, ակցիզային դրոշմանիշերի հետ կապված որոշ իրավախախտումների առկայությունը և այլն:

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ – պարզեցված հարկի դրույքաչափերը տարբերակվում են ըստ գործունեության տեսակների և շրջանառության ծավալների: Խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեության մասով դրույքաչափը սահմանված է 3.5%-ի չափով՝ անկախ իրացման շրջանառության ծավալից, վարձակալության և նոտարական գործունեության համար հարկի դրույքաչափը համապատասխանաբար սահմանված է 10 և 20%-ի չափով, իսկ գործունեության մնացած տեսակների համար սահմանված է երկաստիճան սանդղակ՝ 7% (մինչև 30 մլն. դրամ շրջանառության նկատմամբ) և 12% (30 մլն. դրամը գերազանցող շրջանառության նկատմամբ): Նշված դրույքաչափերը ենթակա են փոփոխության ըստ համապատասխան օրենքի:

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ – պարզեցված հարկ վճարողների համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում եռամսյակը: Հարկի հաշվարկները հարկային մարմին են ներկայացվում եռամսյակը մեկ՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա համար սահմանված ժամկետը: Հարկի վճարման ժամկետը ևս համընկնում է նշյալ ժամկետին:

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԻՆ ԱՆՑՆԵԼ – հարկման ընդհանուր կարգին անցնելուց հետո հարկատուները շահութահարկը (եկամտահարկը) հաշվարկում և վճարում են միայն հարկման ընդհանուր կարգին վերաբերող ժամանակահատվածի համար: Սակայն շահութահարկի (եկամտահարկի) հաշվարկի մեջ ընդգրկվում է նաև պարզեցված հարկի մեջ պարունակվող շահութահարկը (եկամտահարկը) ներկայացնող գումարը:

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏ – պարզեցված հարկով հարկվում է հարկային տարվա ընթացքում հարկատուի կողմից մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների իրացման շրջանառությունը: Վարձակալության և փոխառության գործարքներ իրականացնելու դեպքում իրացման շրջանառություն է համարվում այդ գործարքների համար նախատեսված հատուցումը:

ՊԱՐՏԱԴԻՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ – սահմանվում է քաղաքացիների սոցիալական շահերի և պետության շահերի ապահովման նպատակով, որոշակի կատեգորիայի պետական ծառայողների կյանքի, առողջության ու գույքի գծով: Նման տեսակի ապահովագրությունն իրականացվում է նախարարությունների և գործադիր իշխանության այլ մարմինների (ապահովագրվողների) համար պետական բյուջեից տրամադրվող միջոցների հաշվին:

ՊԱՐՏԱՊԱՆ (ԴԵԲԻՏՈՐ) – իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող տնտեսավարող սուբյեկտ, անհատ ձեռներեց և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող տնտեսավարող սուբյեկտի սեփականատեր (մասնակից), ով ի վիճակի չէ կամ հրաժարվում է ժամանակին կատարել պարտատիրոջ (կրեդիտորի) հանդեպ ունեցած պարտավորությունները:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ – ըստ որի մի անձը (պարտապանը) պարտավորվում է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՌԻՍԿ – 1) այն ռիսկն է, ըստ որի կազմակերպությունը սահմանված ժամկետում չի կատարի պայմանագրով ամրագրված վճարումը, 2) այն հավանականությունն է, ըստ որի հիմնական պարտքը կամ դրա գծով տոկոսները ժամանակին չեն վճարվի կամ կվճարվեն միայն մասամբ, 3) այն ռիսկն է, ըստ որի պարտատոմսեր թողարկողը ի վիճակի չի լինի կատարելու դրանով վճարումներ՝ պարտատոմսերին համապատասխան:

ՊԱՐՏԱՏԵՐ (ԿՐԵԴԻՏՈՐ) – ֆիզիկական անձ, անհատ ձեռներեց, իրավաբանական անձ, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող տնտեսավարող սուբյեկտի սեփականատեր (մասնակից), ՀՀ պետական մարմիններ, ինչպես նաև միջազ-

գային կազմակերպություններ, որոնք պարտապանի (դեբիտորի) հանդեպ օրինական պահանջներ ունեն:

ՊԱՐՏԱՏՈՄՍ – արժեթուղթ է, որը հավաստում է դրա տիրոջը՝ ըստ արժեթղթի անվանական արժեքի, սահմանված տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամտի հետ միասին վերադարձնելու պարտավորությունը: Պարտատոմս ունեցողն այն թողարկող բաժնետիրական ընկերությունն է: Պարտատոմսերը կարող են թողարկվել՝ անվանական և ըստ ներկայացնողի, տոկոսային և անտոկոս, ազատ շրջանառող կամ սահմանափակ շրջանառելիությամբ: Բաժնետիրական ընկերությունը պարտատոմսեր է թողարկում միայն թողարկված բոլոր բաժնետոմսերի լրիվ վճարումից հետո՝ կանոնադրական կապիտալի 25 %-ից ոչ ավելի գումարով: Սեփականության ցանկացած ձևի տնտեսավարող սուբյեկտներ նույնպես կարող են թողարկել պարտատոմսեր, որի իրացումից ստացված գումարները օգտագործվում են միայն այդ սուբյեկտի զարգացման նպատակներով: Պարտատոմսերով տոկոսները վճարվում են՝ կա՛մ պարբերաբար՝ դրանց թողարկման ժամանակի ընթացքում, կա՛մ էլ միանվագ՝ պարտատոմսի ժամկետը լրանալուց հետո:

ՊԱՐՏՔ – դրամական միջոցների որոշակի գումար է կամ այլ ակտիվ, որը որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձ փոխարինաբար վերցրել է մեկ այլ անձից, և որպես կանոն, պարտավոր է վերադարձնել սահմանված ժամկետում՝ որոշակի պայմանների կատարմամբ: Պարտքն առաջանում է վճարման ուշացման կամ վարկի տրամադրման հետևանքով: Առևտրային գործառնություններում պարտքերը սովորաբար մարվում են ապրանքագրի ստացման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում, կամ պայմանագրով նախատեսված ժամկետում: Այդ ժամկետը լրանալուց հետո պարտքի գումարին կարող է հավելագրվել հաշվարկված տոկոսային գումար: Երկարաժամկետ պարտքը կարող է ձևակերպվել փոխանցվելի մուրհակով, որը օտարվող (շրջանառվող) ֆինանսական միջոց է: Այդ պարտքը գործառուի և գործատուի միջև իրավաբանորեն ձևակերպված համաձայնագիր է, որը սովորաբար նախատեսում է պարտքի վճարման որոշ երաշխիքներ: Երկարաժամկետ արժեթղթերի

թողարկման հետևանքով առաջացած պարտքը ուղղվում է կարճաժամկետ արժեթղթերի թողարկման մարմանը: Տարբերում են ներքին և արտաքին պարտք:

ՊԱՐՏՔԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ – փաստաթուղթ, որը փոխառուն տալիս է պարատիրոջը՝ փոխատվություն ստանալու ժամանակ: Պարտքային պարտավորության մեջ նշվում են վարկի գումարը և դրա մարման ժամկետը: Ստորագրվում է վարկը ստացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի վստահած (լիազորած) անձի կողմից:

ՊԱՐՏՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ – երկրի արտաքին պարտքի սպասարկմանը հատկացվող գումարի (կատարվող վճարումների) և տվյալ երկրի արտահանումից ստացվող տարեկան եկամուտների հարաբերակցությունն է, արտահայտված տոկոսներով: Տվյալ գործակիցը երկրի արտաքին պարտքի նախանշման կարևորագույն ցուցանիշ է:

ՊԱՐՏՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ – այն համաձայնեցված ժամանակացույցին համապատասխան, պարտապանի կողմից հիմնական պարտքերի և հաշվարկված տոկոսային գումարների ժամանակին վճարումն է պարտատիրոջը: Ընթացիկ պարտքի սպասարկումն այն վճարումների իրականացման գործընթացն է, որոնք անհրաժեշտ են տոկոսների, հիմնական ընթացիկ պարտքի գումարի վճարման, ինչպես նաև պարտքի մարման պահուստներին հատկացումներ կատարելու համար: Պարտքի սպասարկումը փոխառության պայմանները ժամանակին և լրիվ ծավալով կատարելն է, տոկոսային պարտատոմսերի գծով՝ տոկոսների կանոնավոր վճարումը և պարտատոմսերի գնումը, զեղչով պարտատոմսերի գծով՝ դրանց ետ գնումը անվանական արժեքով, նպատակային պարտատոմսերի գծով՝ պարտատոմսերը մարելիս ապրանքների և ծառայությունների տրամադրումը:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ – մեկ տարվա (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) առումով տվյալ պետության եկամուտների և ծախսերի նախահաշիվն է, որում ներառվում են եկամուտների կազմավորման ու նախատեսվող ծախսերի ուղղու-

թյունները: Պետական բյուջեն կազմվում է տվյալ երկրի կառավարության կողմից և վերջնական տեսքով ընդունվում ու հաստատվում է բարձրագույն օրենսդիր մարմնի (ազգային ժողովի) կողմից:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) – դա արդյունք է, երբ պետական բյուջեի համար նախատեսվող ծախսերը գերազանցում են սպասվելիք եկամուտներին:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ – դրանք ներքին և արտաքին աղբյուրներից ներգրաված փոխառու միջոցներն են. 1) ներքին, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկի միջոցներ, ՀՀ առևտրային բանկերի միջոցներ, պետական արժեթղթեր (պարտատոմսեր, մուրհակներ), պետական կազմակերպությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհումից մուտքեր, այլ ներքին աղբյուրներ: 2) Արտաքին, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների միջոցներ (վարկեր), օտարերկրյա պետությունների միջոցներ (վարկեր), այլ արտաքին աղբյուրներ:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ – դրանք դասակարգվում են ըստ՝ ա) հարկային եկամուտների և տուրքերի (պետական, տեղական), բ) ոչ հարկային եկամուտների, գ) կապիտալի գործառնություններից եկամուտների, դ) պաշտոնական տրանսֆերտներից մուտքագրումների:

Հարկային եկամուտներ և տուրքեր են՝ ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը, շահութահարկը, եկամտահարկը, գույքահարկը, հողի հարկը, հաստատագրված վճարները, մաքսային տուրքը, պետական տուրքը (բացառությամբ՝ օրենքով սահմանված, համայնքների բյուջեներ մուտքագրվող պետական տուրքի տեսակների), հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը (բացառությամբ՝ օրենքով սահմանված, համայնքների բյուջեներ մուտքագրվող հարկերի գծով չվճարման համար գանձվող տուգանքների և տույժերի):

Ոչ հարկային եկամուտներն են՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ծախսերի և մասհանումների նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերը, դիվի-

դենտները (շահաբաժինները), պետական կազմակերպությունների և գույքի, համայնքների վարչական տարածքից դուրս գտնվող պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման վարձավճարները ամբողջությամբ, պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց վճարները (տոկոսները), բռնագրաված, տիրազուրկ և ժառանգության իրավունքով պետությանն անցած գույքի իրացումից մուտքերը, պետական վիճակախաղերի անցկացումից ստացվող եկամուտները, իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը, ճանապարհային վճարը, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտները:

Կապիտալի գործառնություններից եկամուտներն են՝ պետությանը պատկանող հիմնական միջոցների օտարումից մուտքերը, պետական բյուջեի միջոցների հաշվին պահվող բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի օտարումից մուտքերը, պետության պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների իրացումից մուտքերը, պետական սեփականություն համարվող հողի և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքերը:

Պաշտոնական տրանսֆերտներ են՝ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների տրամադրած ու այլ աղբյուրներից ստացվող տրանսֆերտները:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ – դրանք դասակարգվում են ըստ. ա) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառնությունների՝ ֆունկցիոնալ կամ գործառնական դասակարգման, բ) տնտեսագիտական բովանդակության:

Պետական բյուջեի միջոցով ֆինանսավորվում են պետական նշանակության ծրագրերն ու ծախսերը հետևյալ հիմնական ուղղություններով՝ ընդհանուր բնույթի պետական ծառայությունների, պաշտպանության, հասարակական կարգի պահպանության և անվտանգության, կրթության և գիտության, առողջապահության, սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության, բնակարանային կոմունալ տնտեսության, մշակույթի, սպորտի և կրոնի, վառելիքաէներգետիկ

համալիրի, գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ջրային տնտեսության և ձկնաբուծության, լեռնահանքային արդյունաբերության և հանքային հանածոների (բացառությամբ վառելիքի), վերամշակող արդյունաբերության, շինարարության և բնապահպանության, տրանսպորտի և կապի, ճանապարհային տնտեսության և պետական բյուջեի ծախսերի հիմնական ուղղություններին չդասվող այլ ծախսերի, այդ թվում՝ կառավարության պահուստային հիմնադրամ, համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ, համայնքների բյուջեներին պատվիրակված լիազորությունների համար տրամադրվող հատկացումներ, համայնքների կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ – բյուջեի կատարման հսկողությունն իրականացնում է ՀՀ կառավարությունը՝ իր սահմանած կարգով, իսկ վերահսկողությունն իրականացնում է Ազգային ժողովը՝ տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանված պահանջների կատարման նկատմամբ, օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների ու վարկերի օգտագործման նկատմամբ, բյուջետային պարտավորությունների կատարման, բյուջետային միջոցների ծախսման օրինականության և հաստիքաանախահաշվային կարգապահության պահպանման ուղղությամբ:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄ – բյուջեի կատարման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը, որի կատարման ընթացքում պետական կառավարման համապատասխան մարմինների ղեկավարները կարող են պետական բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգմամբ նախատեսված հոդվածների միջև կատարել վերաբաշխումներ, որոնց հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել տվյալ տարվա բյուջեի մասին օրենքով սահմանված չափաքանակը: Ազգային ժողովի հաստատած պետական բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել Ազգային ժողովի պատգամավորների, կառավարության առաջարկու-

թյամբ՝ օրենսդրական նախաձեռնության կարգով: Պետական բյուջեում այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք նվազեցնում են պետական բյուջեի եկամուտները կամ ավելացնում ծախսերը, Ազգային ժողովը քննարկում է միայն կառավարության եզրակացության առկայությամբ և ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Պետական բյուջեում փոփոխությունները և (կամ) լրացումները կատարվում են օրենքով: Պետական բյուջեի կատարման պատասխանատուն կառավարությունն է, և յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 40 օրվա ընթացքում, Ազգային ժողով է ներկայացնում տեղեկատվություն:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾ – ներառում է՝ ՀՀ կառավարության բյուջետային ուղերձը, պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը, պետական բյուջեի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացված կենտրոնական բանկի պաշտոնական եզրակացությունը:

Կառավարության բյուջետային ուղերձը ներառում է՝ կառավարության զեկույցը բյուջետային տարվա սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև բյուջեի կատարումն ապահովող օրենքների նախագծերը, պետության սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների կանխատեսումն առաջիկա երեք տարվա համար, պետական բյուջեի մասին օրենքի նախագծի բացատրագիրը: Վերջինս այդ օրենքի նախագիծը հիմնավորող փաստաթղթերի ամբողջությունն է, որը ներառում է՝ պետական բյուջեի մասին օրենքի նախագծում նախատեսված եկամուտների, ծախսերի, դեֆիցիտի և պրոդեֆիցիտի (հավելուրդի) հիմնավորումը, այդ թվում՝ դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող վարկերի տոկոսադրույքները և հատկացման ժամկետները, ինչպես նաև՝ այդ ցուցանիշների համեմատական վերլուծությունը նախորդ տարվա և ընթացիկ բյուջետային տարվա հաշվարկային և սպասվելիք համապատասխան ցուցանիշների նկատմամբ:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊՐՈՊԵՖԻՑԻՏ (ՀԱՎԵԼՈՒՐԴ) – դա արդյունք է, երբ պետական բյուջեի համար սպասվելիք եկամուտները գերազանցում են նախատեսվող ծախսերին:

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ – պետական գործակալների կողմից ստացվող եկամուտները (հարկեր, սակագներ, տարիֆներ), տուրքերն ու ոչ հարկային այլ վճարումներն են: Ոչ հարկային պետական վճարումները լինում են պարտադիր և կամավոր: Պարտադիր վճարումների հիմք է հանդիսանում իրավասու մարմինների կողմից իրավաբանական և ֆիզիկական անձանց օգտին որոշակի գործողությունների կատարումը (այս կամ այն իրավունքների տրամադրումը, աշխատանքների, ծառայությունների կատարումը): Ոչ հարկային պետական եկամտի մեջ մտնող կամավոր վճարումների մուծումը հիմնված է իրավաբանական և ֆիզիկական անձանց կամքի ազատ արտահայտման վրա: Ոչ հարկային վճարումների առանձնահատկությունն այն է, որ դրանց բնորոշ է մուտք եղած գումարների օգտագործման նպատակայնությունը:

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ – պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրերն են: Բյուջեները կազմվում, քննարկվում և հաստատվում են Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ – իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող տնտեսավարող սուբյեկտ է, որի միակ հիմնադիրը պետությունն է (կառավարությունը) կամ վերջինիս կողմից լիազորված պետական կառավարման (իշխանության, տեղական) մարմինը: Այն ստեղծվում է պետական միջոցների հաշվին և գործունեության հիմնական փաստաթուղթը համարվում է նրա կանոնադրությունը:

ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ԾԱԽՍԵՐ – դրանք ուղղված են անհատական պահանջմունքների բավա-

րարմանը, կազմված են պետական հիմնարկների անհատական սպառման համար նախատեսված սպառողական ապրանքների և ծառայությունների համար կատարած ծախսերից: Այսպիսի ծախսերը ֆինանսավորվում են պետական բյուջեի և արտաբյուջետային հիմնադրամների հաշվին: Պետական հիմնարկների վերջնական սպառման ծախսերը՝ ուղղված կոլեկտիվ պահանջմունքների բավարարմանը, տարբերվում են նախորդից նրանով, որ դրանցում հաշվի են առնվում պետական բյուջեի հաշվին կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները, որոնք բավարարում են ոչ թե առանձին տնային տնտեսությունների, այլ ամբողջ հասարակության պահանջմունքները (պաշտպանության, կառավարման, ճանապարհային տնտեսության, բյուջեի և արտաբյուջետային հիմնադրամների միջոցների հաշվին վճարվող գիտական գործունեության, կոմունալ տնտեսության, գյուղատնտեսությանը սպասարկող կազմակերպությունների ծախսերը):

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ – ըստ որի՝ մատակարարը (կատարողը), պետական պայմանագրով պարտավորվում է ապրանքները հանձնել պետական պատվիրատուին կամ նրա ցուցումով այլ անձի, իսկ պետական պատվիրատուն պարտավորվում է վճարել մատակարարված ապրանքների համար: Պետական պայմանագիրը կնքվում է պետական կարիքների համար՝ ապրանքների մատակարարման պետական պատվիրատուի պատվերի հիման վրա:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ – 1) կառավարության և կենտրոնական բանկի ընդհանուր պարտավորություններն են, ներառյալ նաև այն պարտավորությունները, որոնք արդյունք են տրամադրված երաշխիքներից, օրենսդրությունից ու համաձայնագրերից, 2) պետության ընդհանուր պարտքն է արտաքին և ներքին վարկատուներին (կրեդիտորներին):

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ – պետական սեփականությամբ տնտեսավարող սուբյեկտներ են համարվում նրանք, որոնց գույքի կազմում պետության (իշխանության տեղական մարմինների) սեփականության մասը 50% և դրանից ավելին է:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ – պետական մարմինների (դատարան, նոտարական գրասենյակ և այլն) կողմից իրականացվող որոշակի ծառայությունների համար իրավաբանական և ֆիզիկական անձանցից ու այլ վճարողներից կանխիկ դրամով, տուրքային դրոշմանիշով կամ վճարողի ունեցած հաշվից գանձվող գումար է, որը սահմանվում է բազային տուրքի նկատմամբ տոկոսավճարով կամ հաստատագրված վճարով:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ – պետական տուրք վճարողներն իրավունք ունեն.

- պետական տուրք գանձող մարմնից պահանջել կատարելու տուրքի հաշվարկ կամ վերահաշվարկ,
- վերադասության կամ դատական կարգով բողոքարկել պետական տուրք գանձող մարմնի գործողությունները,
- դիմել համապատասխան պետական մարմինների՝ արտոնություններ ստանալու համար,
- ստանալ տեղեկանք՝ տուրքի վճարման մասին,
- ետ ստանալ ավել վճարված տուրքը:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – պետական տուրք վճարողները պարտավոր են.

- ժամանակին և լրիվ վճարել օրենքով սահմանված տուրքը,
- պետական տուրք գանձող պետական մարմնին ներկայացնել արտոնության իրավունքը հաստատող փաստաթղթերը,
- օրենքով սահմանված դեպքերում բյուջե վճարել ժամանակին չվճարված տուրքի համար սահմանված ժամկետանց օրերի տույժը:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԱՆՁՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ – «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված են այն ծառայությունները, գործողությունները, որոնց համար գանձվում է տուրք: Պետական տուրք գանձվում է մասնավորապես.

- դատարան տրվող հայցադիմումների, դիմումների և գանգատների համար,
- նոտարական գործողությունների համար,
- քաղաքացիական կացության ակտերը գրանցելու համար,
- հյուպատոսական ծառայություններ կամ գործողություններ իրականացնելու համար,

- ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական գրանցման համար,
- անշարժ գույքի օտարման և վարձակալական պայմանագրերի գրանցման համար,
- ֆիզիկական ու իրավաբանական անձանց տրվող լիցենզիաների համար և այլն:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – պետական տուրքի գծով սահմանված են հետևյալ արտոնությունները.
- պետական տուրքի վճարումից ազատում,
- պետական տուրքի նվազեցում,
- պետական տուրքի դրույքաչափի նվազեցում,
- պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում,
- պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ – պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ: Եթե տուրքը սահմանված է գնահատման ենթակա գույքի արժեքի նկատմամբ, ապա այն սահմանվում է տոկոսներով՝ այդ արժեքի նկատմամբ, իսկ եթե տուրքի գանձումը նախատեսված է բազային տուրքից ելնելով, ապա այն սահմանվում է բազային տուրքի նկատմամբ՝ բազմապատիկների միջոցով:

ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ – որոնց վիճակագրության տեղեկատվական բազան ձևավորված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությանը տրամադրած պետական ու համայնքային բյուջեների կատարման մասին, ինչպես նաև ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի հաշվետվությունների հիման վրա:

ՊԼԱՆ ՕՊԵՐԱՏԻՎ – փաստաթուղթ է, որը նպատակաուղղված է կազմակերպության, բանկի առջև դրված խնդիրների լուծման ռազմավարությանն ու մարտավարությանը, ինչպես

նաև այդ խնդիրների իրականացման համար առկա ռեսուրսների քանակին, որակին և տեղաբաշխմանը: Պլանի մշակման գործընթացը ոչ պակաս կարևոր է, քան պլանի իրականացումը: Այն իրենից ներկայացնում է կազմակերպության, բանկի և նրա յուրաքանչյուր ստորաբաժանման առջև դրված քանակական ու որակական խնդիրների իրականացման սահմանների որոշումը: Այդ պատճառով էլ օպերատիվ պլանավորումը հատկապես կարևորվում է այն պայմաններում, երբ կազմակերպությունը, բանկը կանգնած է օրենսդրության լուրջ փոփոխությունների, վերակառուցման կամ նոր մրցակցային շուկա դուրս գալու պրոբլեմի առջև:

ՊԼԱՆԱՅԻՆ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ – այն անցկացվում է հրահանգով որոշված պարբերականությամբ, սահմանված ժամկետներում:

ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ (ՏԱԿՏԻԿԱԿԱՆ) – նպատակաուղղված է կոնկրետ որևէ խնդրի լուծմանը: Առաջադրանքները հիմնականում ունեն կարճաժամկետ բնույթ և հանդիսանում են ռազմավարական պլանի կատարման հիմքը: Մարտավարական պլանավորման գործընթացում նկարագրվում են խնդիրների լուծման ուղիները և կազմակերպության, բանկի յուրաքանչյուր գործող օղակի դերը՝ նպատակին հասնելու ճանապարհին: Մարտավարական պլանավորումը սովորաբար լինում է կոնկրետ:

ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ (ՍՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ) – ընդգրկում է գաղափարներ և նպատակներ, առաջարկում է ուղիներ և միջոցներ՝ այդ նպատակներին հասնելու համար: Ըստ էության, նա է ստեղծում կազմակերպության, բանկի զարգացման նախադրյալները: Ռազմավարական պլանավորման գործընթացը ներառում է ապագա շուկաներին վերաբերող արմատական որոշումների ընդունման հիմքերի մշակումը, ինչպես նաև՝ կազմակերպության, բանկի կողմից ներկայացվող ծառայությունների, կառուցվածքի, եկամտաբերության, ներդրումային և վարկային պորտֆելի ռիսկայնության հետ կապված հարցերը: Այն ունի երկարաժամկետ բնույթ:

ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԵՐ – պլաստիկ քարտի ցանկացած տեսակ սպառողի կողմից օգտագործվում է որպես վճարման մեխանիզմ: Պլաստիկ քարտերի կիրառմամբ է պայմանավորված էլեկտրոնային հաշվարկների համակարգը և ներառում է ավտոմատ գանձման սարքերի միջոցով կատարվող գործառնությունները, այդ թվում՝ առևտրային կազմակերպություններում բնակչության համար էլեկտրոնային հաշվարկների իրականացում, տարբեր հաճախորդների համար տանը և աշխատանքի վայրում բանկային սպասարկում: Պլաստիկ քարտերը համարվում են անկանխիկ հաշվարկների կազմակերպման ամենահիմնական եղանակներից մեկը: Օգտագործվող քարտերի տեսակները սովորաբար նկարագրվում են որպես դեբետային, կրեդիտային, դրամական քարտեր:

ՊԼԱՖՈՆ – վարկի գումարի սահմանաչափ է, որը տրամադրվում է բանկի կողմից կոնկրետ վարկառուին, կամ այլ առումով՝ բնորոշվում է վարկառուի ֆինանսական դրությունը և վարկատուի վստահության աստիճանը:

ՊՈՐՏՖԵԼԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄ - օտարերկրյա ներդրողների այն կապիտալ ներդրումն է, որը թույլ է տալիս օտարերկրյա ներդրումով կազմակերպությունում ունենալ սահմանափակ ազդեցություն և ստանալ որոշակի շահույթ, որը կարգավորվում է կողմերի միջև կնքվող պայմանագրով: Պորտֆելային ներդրումները լինում են կապիտալի արժեթղթերի՝ գլխավորապես բաժնետոմսերի (բաժնետիրական ընկերությունների կողմից թողարկվող) և պարտքի արժեթղթերի տեսքով:

ՊՐՈՄԻԼ – անվանվում է թվի մեծության կամ առարկայի քանակության հազարերորդական մասը (ի տարբերություն տոկոսի՝ հարյուրերորդական մասի) և արտահայտվում է հետևյալ նշանով՝ ‰:

ՌԵԳՐԵՍԻԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ – էությունն այն է, որ վերլուծության ընթացքում մեկ կախյալ մեծության, կամ այլ կերպ՝ արդյունքային ցուցանիշի (y) փոփոխությունը պայմանավորված է մեկ կամ մի քանի գործոնների (x_1, x_2,..., x_n) մեծությունների ազդեցությամբ, իսկ մնացած այլ գործոնների բազմությունը, որոնք նույնպես ազդում են կախյալ մեծության վրա, ընդունվում է որպես հաստատուն մեծություն:

Ըստ կախվածության ձևի տարբերում են.

- գծային ռեգրեսիա, որն արտահայտվում է ուղիղ գծի հավասարման (գծային ֆունկցիա) ձևով.

$$\bar{y}_x = a_0 + a_1x_1,$$

- ոչ գծային ռեգրեսիա, որն արտահայտվում է հավասարումների հետևյալ տեսակներով.

ա) պարաբոլի՝ $\bar{y}_x = a_0 + a_1x_1 + a_2x_1^2$,

բ) հիպերբոլի՝ $\bar{y}_x = a_0 + \frac{a_1}{x_1}$ և այլն,

որտեղ՝

a_o-ն այլ գործոնների ազդեցությունն է արդյունքային ցուցանիշի (y) վրա, որոնք հաշվի չեն առնված վերլուծության ընթացքում,

x_1-ը ազդող գործոնն է արդյունքային ցուցանիշի վրա,

a_1-ը և a_2-ը այն գործակիցներն են, որոնք իրենց ազդեցությունն են թողնում արդյունքային ցուցանիշի վրա:

Ըստ կապի ուղղության բնույթի տարբերում են.

- ուղիղ ռեգրեսիա (դրական), երբ ազդող գործոնի (x) մեծության արժեքի աճման կամ նվազման հետ մեկտեղ համապատասխանաբար աճում կամ նվազում է կախյալ (արդյունքային ցուցանիշի) մեծությունը (y),
- հակադարձ (բացասական) ռեգրեսիա, որը հանդես է գալիս այն պայմանով, որ ազդող գործոնի մեծության ավելացումը

կամ նվազումը հանգեցնում է կախյալ մեծության (արդյունքային ցուցանիշի) նվազմանը կամ ավելացմանը:

ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐ – դրանք են. ա) Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր ունեցող ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, այդ թվում՝ ՀՀ-ում մշտական բնակության վայր ունեցող, բայց ժամանակավորապես արտասահմանում գտնվող ֆիզիկական անձինք, բ) իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այն ընկերությունները և կազմակերպությունները, որոնք ստեղծված են ՀՀ օրենսդրությանը համապատասխան և գտնվում են ՀՀ տարածքում, ինչպես նաև ՀՀ սահմաններից դուրս գտնվող մասնաճյուղերը և ներկայացուցչությունները, գ) Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և այլ պաշտոնական այն ներկայացուցչությունները, որոնք գտնվում են ՀՀ սահմաններից դուրս:

ՌԵԿՎԻԶԻՏՆԵՐ – որոնց օգնությամբ փաստաթղթերում որոշվում են տնտեսական գործառնությունների կատարման տեղը, ժամանակը, կատարողներն ու այդ գործառնությունների բովանդակությունը և դրանով իսկ փաստաթղթին հաղորդում են ապացուցողական ուժ: Փաստաթղթերի հիմնական և կարևորագույն ռեկվիզիտներն են՝ այն կազմակերպության կամ տնտեսավարող սուբյեկտի անվանումը, որտեղ կազմվում է տվյալ փաստաթուղթը, այդ փաստաթղթի անվանումն ու հերթական համարը, գործառնության կատարման թվականը (օր, ամիս, տարի), գործառնությանը մասնակցող կողմերը, գործառնության բովանդակությունը և այլն:

ՌԵԿՎԻԶԻՑԻԱ – տարերային աղետների, վթարների, համաճարակների դեպքում և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքներում գույքը կարող է օրենքով սահմանված պայմաններում ու կարգով, պետական մարմինների որոշմամբ վերցվել սեփականատիրոջից՝ ի շահ հասարակության, դրա արժեքը վճարելու պայմանով: Սեփականատերը կարող է դատարանում վիճարկել հարկադրաբար վերցված գույքի հատուցման արժեքի չափը:

ՌԵՅԹԻՆԳ – այն վարկառուի (փոխառուի) վարկունակության, արժեթղթեր թողարկողների վճարունակության գնահատման ցուցանիշ է՝ բառերի համակցության կամ թվանշանների ձևով: Հաշվարկվում է՝ փոխառուի նախկին վարկային պատմության, տարբեր ֆինանսական ցուցանիշների, ըստ հուսալիության գնահատման պայմանական ցուցանիշների համակարգի հիման վրա: Պետությունների վարկային ռեյթինգը նրանց վարկունակության գնահատումն է՝ կախված վարկերը չվերադարձնելու ռիսկի աստիճանից: Առավել հաճախ ռեյթինգը կիրառվում է արժեթղթերի, գլխավորապես՝ պարտատոմսերի նկատմամբ: Իրականացվում է հատուկ մասնագիտացված ֆիրմաների կողմից՝ կազմակերպության մասին հանգամանալից տեղեկատվության հիման վրա: Ցանկացած ռեյթինգի որոշման համար օգտագործվում են մեծ թվով ցուցանիշներ, ինչպես նաև ոչ տնտեսական բնույթի տեղեկատվություններ: Ռեյթինգը միաժամանակ ունի կողմնորոշման բնույթ յուրաքանչյուր ներդրողի համար:

ՌԵՆՏԱ – 1) հողի, գույքի, կապիտալի օգտագործումից սեփականատիրոջ ստացած եկամուտն է, որը նրանից չի պահանջում իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն կամ կատարելու լրացուցիչ ծախսեր: Այդպիսի եկամուտ կարելի է ապահովել, օրինակ, եթե հողը կամ շենքերը տրվում են վարձակալության՝ վարձավճար ստանալու ակնկալիքով, 2) ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական վկայագրով (պոլիս) ապահովագրված անձին կանոնավոր վճարվող դրամական գումարն է:

ՌԵՊՈ – համաձայնագիր է, որն իրենից ներկայացնում է կարճաժամկետ փոխառության տեսակ: Այն երկու կողմերից բաղկացած ֆինանսական գործարք է, որի մասնակիցներից մեկը արժեթղթերը (ապրանքները) վաճառում է մյուս կողմին և միաժամանակ իր վրա պարտավորություն է վերցնում ետ գնելու նշվածները սահմանված ժամկետում (ամսաթվին), կամ երկրորդ կողմի պահանջի դեպքում:

ՌԻՍԿ (ՎՏԱՆԳ) – որոշակի վնաս կրելու կամ եկամուտը բաց թողնելու հավանականությունն է կամ համապատասխան եկա-

մուտն ակնկալելու անվստահությունը: Եթե հնարավոր է նկարագրել կորուստները և հաշվել դրանց տեղի ունենալու հավանականությունը, ապա այդպիսի ռիսկը կոչվում է ապահովագրելի ռիսկ: Օրինակ հրդեհը, կողոպուտը, ճանապարհատրանսպորտային պատահարը ապահովագրելի ռիսկեր են, քանի որ ապահովագրական ընկերությունը կարող է հաշվել դրանց հավանականությունը և ապահովագինը: Եթե ռիսկն այնքան հազվադեպ է, որ հնարավոր չէ հաշվել դրա հավանականությունը, ապա ոչ մի ապահովագրող չի համաձայնվի ապահովագրել այն: Այդպիսի ռիսկը կոչվում է անապահովագրելի ռիսկ: Բանկերն իրենց գործունեության ընթացքում առնչվում են մի շարք ռիսկերի հետ, այդ թվում՝ անվճարունակության (կամ սնանկացման), իրացվելիության, վարկային, տոկոսային, արտարժութային, գործառնական, վճարային համակարգի, շուկայական, քաղաքական, գնաճի (սղաճի), ինսայդերական (բանկի հետ կապված անձանց), շահույթ չստանալու, չարաշահումների, օրենսդրական դաշտի փոփոխության ռիսկ: Ըստ ռիսկի գործունեության միջավայրի և ազդեցության ոլորտի, բանկային ռիսկերը կարելի է բաժանել երկու խմբի՝ արտաքին և ներքին: Արտաքին ռիսկերի խմբում ներառվում են բանկի գործունեության ընթացքում առաջացող այն ռիսկերը, որոնք կապված չեն բանկի ներքին կազմակերպչական աշխատանքների, գործունեության կազմակերպման հետ, սակայն թողել են իրենց ազդեցությունը բանկի ֆինանսական գործունեության արդյունքների վրա: Ներքին ռիսկերն առաջանում են բանկի գործունեության ընթացքում և կապված են նրանց կողմից իրականացվող գործարքների տեսակներով:

ՌԻՍԿ ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ – ծագում է այն ժամանակ, երբ ցանկացած տնտեսավարող սուբյեկտ, այդ թվում նաև առևտրային բանկը, սպառել է իր հիմնական կապիտալը կամ դրա զգալի մասը:

ՌԻՍԿ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ – ծագում է ապրանքների իրացման և ծառայությունների մատուցման գործընթացում: Առևտրային ռիսկի պատճառներն են՝ արտադրանքի իրացման ծավալի իջեցումը, նյութական ռեսուրսների ձեռքբերման գների բարձ-

րացումը, շրջանառության ծախսերի ավելացումը, մրցակցությունը և այլն:

ՌԻՍԿ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ – առաջանում է շուկայում արժեթղթերի գների ոչ բարենպաստ փոփոխությունների արդյունքում: Արժեթղթերի ռիսկը գնահատելիս պետք է հաշվի առնել հետևյալ ռիսկերը՝ կապիտալի կորստի (արժեթղթերի պորտֆելի չիրացվելիության ռիսկը), ընտրանքային (արժեթղթերի սխալ ընտրության ռիսկը) և շուկայական (արժեթղթերի արժեզրկման ռիսկը):

ՌԻՍԿ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ – կապված է արտադրական տարբեր գործունեություններում արտադրանքի ստացման, կատարվող աշխատանքների և ծառայությունների հետ: Արտադրական ռիսկի ծագման պատճառներն են՝ արտադրության ծավալի իջեցումը (ավելացումը), նյութական ծախսերի աճը, աշխատողների դժգոհությունը, հարկային վճարումների ավելացումը և այլն: Արտադրական ռիսկը կապված է նաև տնտեսավարող սուբյեկտի պարտավորությունների չկատարման հետ:

ՌԻՍԿ ԱՐՏԱՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ – այն ռիսկն է, ըստ որի հնարավոր կորուստները կարող են պայմանավորված լինել արտահաշվեկշռային հաշիվներով:

ՌԻՍԿ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ – 1) Կապված է օտարերկրյա արժույթի կուրսի փոփոխության հետ (դոլար, ֆունտ ստեռլինգ, ֆրանկ, իեն, եվրո և այլն), ինչի հետևանքով բանկը կարող է վնաս կրել՝ ակտիվների ու պասիվների գներն իջնելու պատճառով: Այն ֆինանսական ռիսկերի տեսակներից մեկն է, որը պայմանավորված է ապագայում այլ արժույթների նկատմամբ ազգային արժույթի գնի փոփոխության անորոշությամբ: Արտարժույթի փոխարժեքների անբարենպաստ փոփոխությունը (արժույթի արժեզրկումը կամ արժեքավորումը) կարող է դառնալ վնասների առաջացման պատճառ: Արտարժութային ռիսկ պարունակում է միայն արտարժութային բաց դիրքը, իսկ արտարժութային փակ դիրքի դեպքում այդ ռիսկը բացակայում է: Արտարժութային ռիսկը մեծանում է դիրքի երկարությանն ուղիղ համեմատական կարգով: Արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետ կապված արժութային կորուստների վտանգը կարող

է առաջանալ արտաքին առևտրային, վարկային, արտարժութային գործառնություններ իրականացնելիս: 2) Առաջանում է ազգային արժույթի նկատմամբ արտարժույթի փոխարժեքի ոչ բարենպաստ փոփոխությունների արդյունքում: Արտարժույթի փոխարժեքի տատանումներից բանկի վնաս կրելը կամ շահույթի ստացումը կախված է այն բանից, թե բանկն արտարժութային ի՞նչ դիրքում է գտնվում և ինչպե՞ս է իրականացնում արտարժույթով ստանձնած պարտավորությունների ու տեղաբաշխված ակտիվների ծավալների կառավարումը:

ՌԻՍԿ ԲԱՆԿԱՅԻՆ – բանկային գործառնությունների առանձնահատկություններից բխող կորուստների վտանգն է, որն արտահայտվում է անորոշությամբ և շահույթ չստանալու հավանականությամբ: Բանկերը և այլ վարկային կազմակերպությունները կարող են վնասներ կրել երկրում տնտեսական իրավիճակի վատթարացման, տրամադրված վարկերի գծով չվճարումների, արժեթղթերի գնանշումների, տոկոսադրույքների դինամիկայի փոփոխության, ռեսուրսների կրճատման, արտահաշվեկշռային գործառնությունների գծով վճարումների կատարման և այլ հանգամանքների հետևանքով: Բանկային ռիսկերը լինում են արտաքին (ապահովագրական, արտարժութային, անհաղթահարելի ուժի հանգամանքների ռիսկ) և ներքին (վարկային, ներդրումային, կոնկրետ բանկային գործառնությունների ռիսկեր): Ռիսկի մակարդակը վերահսկվում է կոնկրետ բանկային գործառնությունների (ֆորֆետավորում, հեջավորում և այլն) կամ դրանց ապահովագրության օգնությամբ: Բանկային ռիսկերը սահմանափակելու նպատակով կենտրոնական բանկը սահմանում է տնտեսական նորմատիվներ:

ՌԻՍԿ ԲԱՆԿԻ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ – բանկերի համար կարևորագույն նշանակություն ունի ցանկացած պահին դեպոզիտների վերադարձման, վարկերի տրամադրման և այլ գործառնությունների ապահովման համար անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը: Այն բանկը, որի առջև ծառացել է իրացվելիության ռիսկի վտանգը, ստիպված է լինում շատ բարձր տոկոսներով ներգրավել դրամական միջոցներ, որը և կհանգեցնի շահույթի նվազմանը: Գործնականում բանկերը հազվադեպ են հանդիպում իրացվելիության ռիսկի, քանի որ ներկայումս իրաց-

վելիության պակասը հեշտությամբ համալրվում է միջբանկային շուկայում:

ՌԻՍԿ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ – 1) բանկի սովորական գործառնությունների հետևանքով հնարավոր վնասների ռիսկն է, 2) անփույթ և ոչ տեղին կատարվող գործողությունների ռիսկն է: Գործառնական ռիսկը կապված է բանկային գործարքների կամ հսկողության համակարգի խափանման հետ՝ ինչպես արտաքին պատճառների, այնպես էլ կազմակերպության ներսում կատարված սխալների կամ խարդախությունների հետևանքով: Բանկերը կարող են զգալի վնասներ կրել մատուցվող ծառայությունների որակի հսկողության համակարգում հնարավոր ձախողումների, անարդյունավետ կարգավորման, ինչպես նաև կառավարչական սխալների պատճառով: Նրանք միշտ ենթակա են գործառնական ռիսկի այնպիսի դրսևորումների ազդեցությանը, ինչպիսիք են՝ սխալների, տեխնիկական և խարդախության ռիսկերը: ՀՀ կենտրոնական բանկը սահմանել է այս ռիսկերի կանխմանը կամ իջեցմանն ուղղված նվազագույն այնպիսի պահանջներ, որոնք պարտադիր են ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերի համար:

ՌԻՍԿ ԳՐԱՎՆԵՐԻ – այն հավանականությունն է, որ հաճախորդի կողմից չեն կատարվի ստանձնած պարտավորությունները և բանկը ստիպված կլինի իր կրած կորուստները փոխհատուցել գրավի իրացմամբ: Գրավի ռիսկը կախված է այն բանից, թե ում մոտ է գտնվում գրավը՝ գրավառուի, թե գրավատուի, ապահովագրված է տվյալ գրավը, թե՝ ոչ:

ՌԻՍԿ ԵՐԿՐԻ – որոշվում է ելնելով տվյալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացածության մակարդակից, համաշխարհային տնտեսական համակարգում նրա տեղից և դերից: Երկրի ռիսկի գնահատումը կարևորվում է արտերկրի հետ գործառնություններ իրականացնելիս, մասնավորապես, կապված այլ երկրների բանկերում թղթակցային հաշիվներ բացելու, միջազգային փոխանցումներ կատարելու և այլ գործառնություններ իրականացնելու հետ:

ՌԻՍԿ ԻՆՖԼՅԱՑԻԱՅԻ (ԱՐԺԵՋՐԿՄԱՆ) – պայմանավորված է այն հավանականությամբ, որ կարող են բարձրանալ ապրանքների ու ցուցաբերվող ծառայությունների գները, և որի պատճառով էլ հանկարծակի կարող է իջնել սպասվելիք շահույթի մեծությունն ու դրան առընթեր՝ բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների գումարի չափը:

ՌԻՍԿ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ – 1) Ավանդները վերադարձնելու, վարկերը տրամադրելու և այլ գործառնություններ իրականացնելու համար անհրաժեշտ պահին կանխիկ դրամական ու ներգրավված միջոցների անբավարարության հավանականությունն է: Նման ռիսկի հետ բախվող բանկերը հաճախ ստիպված են լինում կանխիկ միջոցների նկատմամբ ընթացիկ պահանջները բավարարելու համար շտապ ներգրավել շատ բարձր տոկոսադրույքներով միջոցներ, որը հանգեցնում է շահույթի փոքրացման: Իրացվելիության ռիսկը դրսևորվում է նաև անհրաժեշտ պահին պարտավորությունները կատարելու համար ակտիվների վերաֆինանսավորման, վաճառքի անհնարինությունով: Իրացվելիության անբավարարությունը հաճախ պայմանավորված է ներգրավված և տեղաբաշխված միջոցների՝ ըստ ժամկետների և գումարի անհավասարակշռված տեղաբաշխմամբ, ավանդների անսպասելի արտահոսքով: Բանկերի իրացվելիության ռիսկը սահմանափակելու համար մի շարք երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, բանկային օրենսդրությամբ սահմանվում են հիմնական տնտեսական նորմատիվներ: 2) Առաջանում է այն ժամանակ, երբ ցանկացած տնտեսավարող սուբյեկտի, այդ թվում նաև առևտրային բանկի, ստանձնած պարտավորությունների մարման ապահովման համար կանխիկ միջոցների անբավարարություն է զգացվում:

ՌԻՍԿ ԿԱՊԻՏԱԼԻ – ռիսկ, որը ծագում է այն դեպքերում, երբ բանկը՝ կնքելով գործարք, ստիպված է գործընկերոջը վճարել միջոցներ և վստահ չէ, որ այն ի վիճակի կլինի կատարելու իր պայմանագրային պարտավորությունները:

ՌԻՍԿ ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ – իրենից ներկայացնում է այն հավանականությունը, որ կատարված հաշվարկներում

ընդգրկված տարրերը իրական չեն արտահայտում ցանկացած տնտեսավարող սուբյեկտի, այդ թվում նաև առևտրային բանկի, սեփական կապիտալի մեծությունը և դրան առընթեր ի վիճակի չեն լինի սեփական միջոցների հաշվին կատարելու ստանձնած պարտավորությունները:

ՌԻՍԿ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ – բանկի կողմից հավատարմագրային վերցված ակտիվների ոչ ճիշտ կառավարման արդյունքում կրած վնասն է:

ՌԻՍԿ ՀԱՐԿԱՅԻՆ – որը կարելի է քննարկել երկու կտրվածքով. 1) ձեռնարկատիրական հարկային ռիսկ, որը կապված է հարկային քաղաքականության հնարավոր փոփոխությունների (նոր հարկատեսակների առաջացում, հարկային արտոնությունների կրճատում կամ վերացում և այլն), ինչպես նաև հարկային դրույքաչափերի մեծության փոփոխության հետ, 2) պետական հարկային ռիսկ, երբ հարկային քաղաքականության փոփոխության արդյունքում կարող են կրճատվել պետբյուջե մուտքագրվող գումարները:

ՌԻՍԿ ԵՅՈՒՂԱՅԻՆ – առաջանում է տվյալ ճյուղի ցածր եկամտաբերության կամ դրա մակարդակի կտրուկ նվազման, բնականոն գործունեության խափանման, ճգնաժամային իրավիճակի հետևանքով:

ՌԻՍԿ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ – կապված է երկրում տնտեսական հարաբերությունների խախտման և անբարենպաստ ֆինանսական գործոնների առաջացմամբ:

ՌԻՍԿ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ – 1) արդյունք է ցանկացած տնտեսավարող սուբյեկտի, այդ թվում նաև առևտրային բանկի կողմից այլ անձի կանոնադրական կապիտալում իրականացրած ներդրումների սպասվածից ցածր եկամտաբերությամբ, շահույթի բացակայությամբ կամ ընդհանրապես կորուստներով, 2) կապված է տնտեսավարող սուբյեկտի ներդրումային պորտֆելի արժեզրկման հնարավորության և սպասվելիք եկամտի ստացման հետ, 3) պետական իշխանության և կառավարման մարմինների

գործողությունների կամ այլ պատճառների հետևանքով կապիտալ ներդրումների արժեզրկման ռիսկն է:

ՌԻՍԿ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ – 1) կապված է ապրանքների և ծառայությունների շուկայական գների տատանումների, ինչպես նաև՝ սեփական և օտարերկրյա արժույթների փոխարժեքների ու փոխատվության շուկայական տոկոսադրույքների տատանումների հետ, 2) տոկոսադրույքների, փոխարժեքների և գների աճի կամ անկման հետևանքով հնարավոր վնասների հավանականությունն է: Բանկը կարող է զգալի վնասներ կրել ցանկացած ակտիվի գծով, որը նա պետք է վաճառի կամ ձեռք բերի, կամ ցանկացած միջոցների գծով, որոնք պետք է փոխ առնվեն կամ վճարվեն: Տոկոսադրույքներն աճելիս հաստատագրված եկամուտով արժեթղթերի (օրինակ՝ պարտատոմսերի) հաստատագրված տոկոսով վարկերի շուկայական արժեքը փոքրանում է: Բանկը, որը հարկադրված պետք է վաճառի նման ակտիվները, տոկոսադրույքների աճի պայմաններում կկրի վնասներ: Շուկայական ռիսկը փոքրացնելու նպատակով կիրառվում են հեջավորման տարբեր մեթոդներ: 3) Առաջանում է շուկայական տոկոսադրույքների, գների, փոխարժեքների ոչ բարենպաստ փոփոխությունների արդյունքում, օրինակ՝ ներգրաված և տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների, արտարժույթի փոխանակային կուրսերի, գույքի, շենքի, շինությունների և սարքավորումների գների ոչ բարենպաստ փոփոխության:

ՌԻՍԿ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ – հիմնականում ներբանկային է, առաջանում է բանկի տերերի, նրա ծառայողների և հաճախորդների կողմից օրենքը խախտելու պատճառով, այսինքն՝ թույլ են տրվում խարդախություններ, չարաշահումներ, յուրացումներ, կատարվում են գողություններ, հակաօրենսդրական գործողություններ, և նման պայմաններում բանկը վնաս է կրում:

ՌԻՍԿ ՉԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՎՈՂ (ՊԱՐԲԵՐԱԿԱՆ) – չդիվերսիֆիկացվող կամ պարբերական ռիսկը կապված է այնպիսի երևույթների հետ, ինչպիսիք են՝ գնաճը, քաղաքական իրադարձությունները, որոնք կարող են իրենց ազդեցությունը թողնել ոչ թե ներդրումային առանձին ձեռնարկումների, այլ դրանց բոլորի վրա: Ցանկացած ներդրող կարող է նվազեցնել դիվերսիֆիկացվող ռիսկն՝ ընտրելով իր համար արժեթղթերի դիվեր-

սիֆիկացված պորտֆել, այսինքն՝ ռիսկը, որի կառավարմանը հարկ է մեծ ուշադրություն դարձնել, դա չդիվերսիֆիկացվող ռիսկն է: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ակտիվների պորտֆելում, եթե ընտրվեն 8-15 տեսակի արժեթուղթ, ապա դիվերսիֆիկացվող ռիսկը կարելի է նվազագույնի հասցնել, սակայն մյուս կողմից՝ արժեթղթի յուրաքանչյուր տեսակ իր հետ կբերի չդիվերսիֆիկացվող ռիսկի որոշակի տեսակ, որը գնահատելու համար օգտագործվում է Բետտա ֆակտորը (գործոնը):

ՌԻՍԿ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ – պայմանավորված է քաղաքացիական պատերազմներով, խռովություններով, գործադուլներով և այլն:

ՌԻՍԿ ՎԱՐԿԱՅԻՆ – իրենից ներկայացնում է այն հավանականությունը, ըստ որի վարկառուի կողմից չեն կատարվի պայմանագրային կարգով նրա ստանձնած պարտավորությունները, այսինքն՝ չի վերադարձվի վարկի մայր գումարը կամ տոկոսագումարները: Վարկային ռիսկը պայմանավորված է հաճախորդի վարկունակության գնահատմամբ՝ կապված նրա ֆինանսական կայունության, իրացվելիության մակարդակի, շուկայում նրա դիրքի և այլ պայմանների հետ:

ՌԻՍԿ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՄ ՌԻՍԿ ՖՈՐՍՄԱԺՈՐԱՅԻՆ – պայմանավորված է ոչ կանխատեսելի, անհաղթահարելի բնական աղետների առաջացման հետ: Ռիսկի կառավարման ուղին վթարներից, հրդեհներից, երկրաշարժերից և տարերային այլ աղետներից ապահովագրումն է:

ՌԻՍԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ – պայմանավորված է համախառն ազգային արդյունքի նվազմամբ կամ աճի ցածր տեմպերով, ապրանքների գների կտրուկ աճով, արտահանման եկամուտների նվազմամբ, հումքի և էներգիայի ներմուծման ծախսերի ավելացմամբ, վճարային հաշվեկշռի դեֆիցիտով և այլն:

ՌԻՍԿ ՏՈԿՈՍԱՅԻՆ – 1) ծագում է ակտիվների և պարտավորությունների տոկոսադրույքների փոփոխման ժամկետների անհամապատասխանությունից: Տոկոսային ռիսկից կարելի է խուսափել, երբ ակտիվները և պարտավորությունները ճշգրտո-

րեն հակադրվում ու հավասարակշռվում են միմյանց թե՛ ծավալի, թե՛ տոկոսադրույքի փոփոխման ժամկետի տեսանկյունից: Տոկոսային ռիսկի ընդունված տարբերակը հեջավորումն է: 2) Այն դրսևորվում է, երբ փոխվում է գործառնական եկամուտների և գործառնական ծախսերի տարբերության գումարը: Օրինակ՝ տոկոսադրույքի բարձրացումը կարող է հանգեցնել բանկային շահույթի մարժայի իջեցման, մանավանդ, եթե ակտիվների ու պասիվների կառուցվածքն այնպիսին է, որ միջոցների ներգրավման տոկոսային ծախսերն աճում են ավելի արագ, քան վարկերի ու այլ ակտիվների տոկոսային եկամուտները: Բանկային շահույթի մարժայի վրա տոկոսադրույքների փոփոխության ազդեցությունը կոչվում է տոկոսային ռիսկ:

ՌԻՍԿ ՓՈԽԱՆՑՄԱՆ – առաջանում է արտարժույթի անհրաժեշտ ծավալի բացակայությունից, արտաքին առևտրի, ներդրումների և վճարային հաշվեկշռի ռիսկերից, պարտավորությունների կատարումից հրաժարման, պայմանագրի պահանջների ու նախագծերի վերանայման և այլնի հետևանքով:

ՌԻՍԿ ՔԱՂԱՔԱԿԱՆ – 1) պայմանավորված է երկրում պատերազմի, տարածքային վեճերի և նմանատիպ այլ երևույթների ծագմամբ, 2) հավանականությունն է այն բանի, որ օրենսդրական կամ կարգավորող ակտերի փոփոխությունը երկրի ներսում կամ նրա սահմաններից դուրս բացասական ազդեցություն կունենա ստացվող եկամտի, կատարվող գործարքների և հեռանկարային զարգացման վրա:

ՌԻՍԿ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ – ծագում է՝ կապված օրենսդրության փոփոխությունների, օրենսդրական պահանջների խախտումների հետ, ինչպես նաև այս կամ այն գործընթացի իրականացումն օրենսդրությամբ չնախատեսվելուց:

ՌԻՍԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ – 1) արդյունք է արտաքին պարտքի և համախառն ներքին արդյունքի աճի տեմպերի խզման, 2) դրսևորվում է տնտեսավարող սուբյեկտների, բանկերի ու ֆինանսական այլ բնույթի կազմակերպությունների միջև տեղի ունեցող փոխհարաբերությունների ոլորտում: Ֆինանսական ռիսկը կապված է բյուջեի մշակման, եկամուտների և ծախսերի

կազմման, ֆինանսական միջոցների բաշխման ու օգտագործման, երկարատև ֆինանսական ներդրումների պլանավորման, ինչպես նաև չնախատեսված ծախսումների կատարման հետ: Ֆինանսական ռիսկի պատճառներն են՝ փոխառու և սեփական կապիտալի հարաբերակցության մեծացումը, կրեդիտորներից (վարկատուներից, փոխառուներից) կախվածությունը, սեփական կապիտալի պասիվ օգտագործումը և այլն:

ՌԻՍԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ – իրենից ներկայացնում է այն հավանականությունը, որ երաշխիք ստացած հաճախորդի կողմից չեն կատարվի ստանձնած պարտավորությունները և տնտեսավարող սուբյեկտը, այդ թվում՝ առևտրային բանկը, ստիպված կլինի կատարել այն հաճախորդի փոխարեն:

ՌԻՍԿԵՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ – կապված են բանկի տարածքի անվտանգության և ներքին հակահրդեհային անվտանգության ռիսկերի հետ:

ՌԻՍԿԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ – իրենց մեջ ներառում են բանկի ծառայությունների գների փոփոխության և ընթացիկ ծախսերի ավելացման հետ կապված ռիսկեր:

ՌԻՍԿԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ – կապված են բարձրակարգ մասնագետների բացակայության, ֆինանսական տեղեկատվության բացակայության հետ:

ՌԻՍԿԵՐ ՀԱՇՎԱՌՄԱՆ – կապված են ոչ ճիշտ կամ ոչ ժամանակին կատարվող հաշվառման հետ: Դրանք չհաշվառված թղթակցությունների պատճառով խաբեության ռիսկերն են:

ՌԻՍԿԵՐ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅԱՆ – նախագծային և նոր գյուտերի հետ կապված ռիսկերն են (հազվագյուտ նախագծերի ռիսկ, շուկայական կամ պորտֆելային ռիսկ), որոնք ներառում են նաև նորամուծության սխալ ընտրության ռիսկը, նորամուծության համար ոչ ճիշտ ժամանակ ընտրելու ռիսկը, օրենսդրության փոփոխության հետևանքով տնտեսավարող սուբյեկտի, այդ թվում նաև առևտրային բանկի նոր գործունեության ոլորտի կանխման ռիսկը:

ՌԻՍԿԵՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ – բանկի ղեկավարության որդեգրած ոչ ճիշտ քաղաքականության արդյունքում նախատեսված եկամուտներ չստանալու ռիսկերն են, որոնց պատճառը կարող է լինել ռիսկի թույլատրելի մակարդակը գերազանցելը, ռիսկի աստիճանի և չափի սխալ գնահատումը:

ՌԻՍԿԵՐ ՎԱՐՉԱԿԱՆ – հիմնականում կապված են վճարման և այլ փաստաթղթերի կորստի հետ: Այսպիսի ռիսկերը սերտորեն կապված են տարբեր տեսակի չարաշահումների հետ:

ՌԻՍԿԵՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ – դասվում են տեխնոլոգիական գործառնությունների հետ կապված համակարգչային ցանցի խափանումը, պահուստների բացակայության պատճառով փաստաթղթերի կորուստը և այլ ռիսկեր:

ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ – ռիսկը նվազագույնին հասցնելու համար ընկերությունների, բանկերի և ֆիրմաների կողմից կիրառվող մեթոդների, միջոցառումների և գործողությունների ամբողջությունն է: Գործում են տարբեր տեսակի ռիսկերի փոքրացման ընթացակարգեր, որոնց հետ բանկը (ընկերությունը, ֆիրման) առնչվում է իր գործունեության ընթացքում: Գոյություն ունեն ռիսկերի կառավարման հետևյալ հիմնական մեթոդները՝ ռիսկի դիվերսիֆիկացիա, ռիսկերի վերլուծության և մոնիտորինգի տարբեր մեթոդների կիրառումը, մարքեթինգային հետազոտությունների իրականացումը, ռիսկի հեջավորումը և ապահովագրումը:

ՌՈԼՈՎԵՐ (ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ) – 1) վարկի ժամկետի երկարաձգումն է, այսինքն՝ դրա վերականգնման (վերսկսման) միջոցով կատարվում է վարկի տեխնիկական մարում՝ միաժամանակ նոր վարկի (այդ թվում՝ նոր պայմաններով) տրամադրմամբ: Ռոլովերը հաճախ օգտագործվում է «փուչիկ» տեսակի վարկերի (մինչև ժամկետը լրանալը՝ միանվագ խոշոր վճարում) գծով վճարման ժամկետն ավելի ուշ տեղափոխելու համար, 2) միջին և երկարաժամկետ վարկերի տարատեսակ, որոնք տրամադրվում են լողացող տոկոսադրույքով: Ռոլովերի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ վարկային պայմանագրի (համաձայնագրի) մասնակիցների միջև վարկի

ընդհանուր ժամկետի համաձայնեցման պայմաններում դրա օգտագործման ժամանակաշրջանը բաժանվում է առանձին ժամանակահատվածների, որոնցից յուրաքանչյուրի համար տոկոսադրույքը սահմանվում է նորից՝ ելնելով կարճաժամկետ կապիտալների շուկայի իրավիճակից, որտեղ, որպես կանոն, վերաֆինանսավորվում են ռոլովերները: Ռոլովերի ի հայտ գալը մի կողմից կապված է տևական ժամկետով վարկերի նկատմամբ պահանջարկի ավելացման, իսկ մյուս կողմից՝ վարկերի կորստյան ռիսկը բարձրացնող տոկոսադրույքների և արտարժույթի փոխարժեքների ուժեղացման հետ, 3) միջոցների փոխադրումը ներդրումների մի ձևից դեպի մեկ այլ ձև, 4) ժամկետային ավանդ կամ ավանդային սերտիֆիկատ, որը ժամկետը լրանալուց հետո նորացվում է՝ տվյալ պահին ձևավորված տոկոսադրույքով, 5) արտարժույթի առքն ու վաճառքը մեկ օրում:

ՌՈՅԱԼԹԻՆԵՐ – տվյալ կազմակերպության ոչ նյութական ակտիվների օգտագործման դիմաց վճարներն են՝ հաշվարկված տոկոսային գումարների և շահաբաժնի տեսքով: Այլ կերպ ասած, գյուտերից (հայտնագործություններից), արտոնագրերից (պատենտներից), համակարգչային ծրագրերից, նորամուծություններից և այլ ոչ նյութական ակտիվներից օգտվելու թույլտվության իրավունքի դիմաց պարբերաբար վճարումներն են: Վերջիններս հաշվարկվում են դրանց վաճառքի արժեքից սահմանված տոկոսադրույքաչափով:

Ս

ՍԱԿԱԳԻՆ – 1) ներմուծվող ապրանքներից գանձվող հարկն է կամ ներմուծման մաքսը: Վերջինս հաշվարկվում է ապրանքների արժեքի (հաստատագրված տոկոսադրույքով ապրանքի արժեքից) կամ քանակի (գանձվում է որոշակի գումար ապրանքի յուրաքանչյուր միավորից) հիման վրա: Սակագինը հանդիսանում է պետական տնտեսական կարգավորման քաղաքականության կարևորագույն գործոն և կառավարությունն այն օգտագործում է հատկապես ներքին արտադրողների շահերը պաշտպանելու, վճարային հաշվեկշիռը բարելավելու և բյուջեի

եկամուտներն ավելացնելու համար, 2) ապրանքի կամ ծառայության սպառման դիմաց վճարն է, օրինակ՝ կոմունալ ծառայությունների (գազ, էլեկտրաէներգիա և այլն), 3) գնացուցակ:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ՍՊԸ) – համարվում է մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Սահամանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները պատասխանատու չեն նրա պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը: Սահամանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆիրմային անվանումը պետք է պարունակի տարբերակող նշանակության հատուկ, հասարակ և (կամ) այլ անուն, ինչպես նաև՝ «սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» բառերը: Սահամանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքով սահմանված քանակը: Հակառակ դեպքում, այն մեկ տարվա ընթացքում վերակազմավորվում է բաժնետիրական ընկերության, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո՝ դատական կարգով լուծարվում է, եթե նրա մասնակիցների թիվը չպակասի մինչև օրենքով սահմանված քանակը: Սահամանափակ պատասխանատվությամբ ընկերությունը չի կարող, որպես միակ մասնակից, ունենալ մեկ անձից կազմված այլ տնտեսական ընկերություն:

ՍԵԿՎԵՍՏՐ – պետական բյուջեի ծախսային մասի գծով նախատեսված գումարների կրճատումն է, որը պայմանավորված է եկամտային հոդվածների գծով պլանների չկատարմամբ: Դա հարկադրված քայլ է՝ երկրի տնտեսապես վատ վիճակի հետ կապված:

ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ – համապատասխանության հավաստման ընթացակարգ, որի արդյունքով սերտիֆիկացման մարմինը գրավոր հավաստիացնում է արտադրանքի կամ ծառայության համապատասխանությունը գործող նորմատիվ պահանջներին:

ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆ - դա որոշակի արտադրանքի կամ ծառայության համապատասխանության հավաստման աշխատանքների կատարման համար հավատարմագրված իրավաբանական անձն է:

ՍԵՓԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ (ՇՐՋԱՆԱՌՈՒ) ԱԿՏԻՎՆԵՐ – հաշվարկվում են երկու եղանակով. 1) հաշվապահական հաշվեկշռի սեփական կապիտալի և ոչ ընթացիկ պարտավորությունների հանրագումարի ու ոչ ընթացիկ ակտիվների գումարի տարբերությունն է, 2) հաշվապահական հաշվեկշռի ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների գումարների տարբերությունն է:

ՍԵՓԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ (ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ) ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ – հաշվարկվում է որպես սեփական ընթացիկ ակտիվների և կազմակերպությունում առկա ընդամենը ընթացիկ ակտիվների փաստացի արժեքի հարաբերակցություն:

ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՈՒՂԹ – ՀՀ կառավարության կողմից թողարկված արժեթուղթ է, որով պետական պարտավորություններ են սահմանվում դրանք ձեռք բերող անձանց նկատմամբ՝ սեփականաշնորհման և ապապետականացման ծրագրերի իրագործման ընթացքում:

ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ – ՀՀ օրենսդրությամբ սահմանված ձևերով պետական տնտեսավարող սուբյեկտների և անավարտ շինարարության օբյեկտների օտարումն է ՀՀ քաղաքացիներին, ոչ պետական տնտեսավարող սուբյեկտներին, պետական մասնակցությամբ տնտեսավարող սուբյեկտներին և օտարերկրյա անձանց:

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ – այն եկամուտներն են, որոնք ստացվում կամ վճարվում են կառուցվածքային միավորի կողմից օգտագործման նպատակով տրամադրված ֆինանսական միջոցների, հողի և այլ ոչ ֆինանսական ակտիվների (ընդերք և այլ բնական ակտիվներ, պատենտ, արտոնագիր և այլն) օգտագործման արդյունքում:

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՇԻՎ – համարվում է եկամուտների սկզբնական բաշխման հաշվի երկրորդ կառուցվածքային մասը: Այն բնութագրում է ռեզիդենտների (կառուցվածքային միավորների) միջև արտադրական գործունեությունից և սեփականությունից ստացած սկզբնական եկամուտների բաշխումը:

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՍԱԼԴՈ (ՄՆԱՑՈՐԴ) – բնութագրում է այն եկամուտները, որոնք ձևավորվում են կառուցվածքային ռեզիդենտ-միավորների մոտ՝ արտադրությանը մասնակցելուց և սեփականությունից: Այն որոշվում է որպես ռեզիդենտ-միավորների ստացած և վճարած բոլոր սկզբնական եկամուտների տարբերություն: Ամբողջ տնտեսության մակարդակով սկզբնական եկամուտների սալդոն, մինչև հիմնական կապիտալի սպառման դուրս բերումը, հավասար է համախառն ազգային եկամտին:

ՍՅՈՒՐՎԵՅԵՐ – փորձագետ, որն ապահովագրողի և (կամ) ապահովագրվողի խնդրանքով զննում է ապահովագրված կամ ապահովագրության ենթակա նավերը և (կամ) բեռները՝ դրանց արժեքի և (կամ) կրած վնասների չափի վերաբերյալ եզրակացություն տալու նպատակով:

ՍՆԱՆԿԱՑՈՒՄ (ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ) – պարտատիրոջ (պարտատերերի) հանդեպ պարտապանի (պարտք վերադարձնողի) ստանձնած գույքային պարտավորությունների կատարման կասեցումն է դատարանի որոշմամբ:

ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ – պարտապանի անկարողությունն է կատարելու կամ վճարելու իր պարտավորությունները, դրամական միջոցների բացակայության պատճառով պարտքի վերադարձն է, պայմաններ, որոնց դեպքում ֆիզիկական կամ իրավաբանական անձի ֆինանսական վիճակը դառնում է այնպիսին, որ այն կարելի է բնութագրել որպես փաստացի կամ իրավաբանորեն անվճարունակ (սնանկ): Կազմակերպության սնանկությունն ամենից հաճախ առաջանում է կապված այն երևույթի հետ, որ երկարատև ժամանակահատվածում նրա ծախսերը գերազանցում են եկամուտներին՝ վնասների ծածկման աղբյուրների բացակայության պայմաններում: Անձը պաշտոնապես (իրավաբա-

նական կամ ֆիզիկական) ճանաչվում է սնանկ՝ սնանկության մասին դատարանի որոշմամբ: Գոյություն ունեն սնանկության երկու տեսակներ. ա) կամավոր՝ այն դեպքում, երբ իր անվճարունակության մասին դատարան է դիմում ինքը՝ պարտապանը, բ) հարկադիր՝ այն դեպքերում, երբ անվճարունակ պարտապանի մեկ կամ մի քանի պարտատերեր (որոնց պարտքը չի վերադարձվել) հայց են ներկայացնում դատարան՝ պարտապանին սնանկ հայտարարելու մասին: Դատարանի որոշմամբ անվճարունակ կազմակերպությունը կարող է վերակազմավորվել, այսինքն՝ նրան ժամանակ է տրվում սնանկության վիճակից դուրս գալու, պարտքերը մարելու համար, իսկ երբեմն էլ օգնություն է ցույց տրվում այդ հարցում: Սակայն հնարավոր է նաև կազմակերպության լուծարումը նրա գույքի վաճառքով՝ պարտքերը մարելու համար: Կազմակերպության լուծարումից (ունեցվածքի վաճառքից) ստացված միջոցների հաշվին պարտապանի պարտավորությունների կատարման հերթականությունը սահմանվում է օրենքով:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ – որի արժեքը չափվում է բանկի կողմից թողարկվող սովորական բաժնետոմսերի անվանական արժեքով:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՇԱՀՈՒՅԹ (ՎՆԱՍ) – գործառնական գործունեությունից շահույթի (վնասի), ֆինանսական ծախսերի (ֆինանսական վարձակալության և վարկերի ու փոխառությունների հետ կապված ծախսեր), կապակցված կազմակերպությունների շահույթի (վնասի) և այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթի (վնասի) հանրագումարն է:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ – ՀՀ կառավարության կողմից հիմնադրված կազմակերպություն է, որն իրականացնում է պարտադիր սոցիալական ապահովության պետական ծրագրեր: Սոցապահովագրության հիմնադրամի էությունն է՝ օրենքով սահմանված կարգով իրականացնել կենսաթոշակների վճարում: Պարտադիր սոցիալական վճարները պարբերաբար գանձվում են աշխատողներից, գործատուներից, անհատ ձեռներեցներից և ուղղվում են կենսաթոշակային տարիքի հասած անձանց աշխատանքային կենսաթոշակների

վճարմանը: Սոցիալական վճարներ կատարող անձինք իրենց հերթին իրավունք են ստանում ապագայում՝ հասնելով կենսաթոշակային տարիքի, ստանալ կենսաթոշակներ:

Սոցապահովագրության հիմնադրամն այսօր կազմակերպում և իրականացնում է նաև ՀՀ կառավարության սոցիալական ապահովության ծրագրերի շրջանակներում կենսաթոշակների բաշխման և այլ վճարումների կատարման գործառույթը:

Ընդհանուր առմամբ Հայաստանում կենսաթոշակային համակարգն ընդգրկում է կենսաթոշակային ապահովագրության և կենսաթոշակային ապահովության համակարգերը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ – պարտադիր սոցիալական ապահովագրության պետական ծրագրերի ֆինանսավորման նպատակով ապահովադիրների կողմից պարտադիր կարգով վճարվող միջոցներն են, կամ այլ կերպ՝ դրանք այն պարտադիր վճարներն են, որոնք գանձվում են պետության կողմից պետական սոցիալական ծրագրերն իրականացնելու նպատակով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ – սոցիալական վճարներ կատարում են ՀՀ-ն կազմակերպությունները, ՀՀ քաղաքացի հանդիսացող անհատ ձեռնարկատերերը, վարձու աշխատողները, ինչպես նաև ֆիզիկական անձինք՝ իրենց հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող ՀՀ քաղաքացիների համար:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ – սոցիալական վճարների հետ կապված հարցերը կարգավորվում են՝ ՀՀ Սահմանադրությամբ, «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» օրենքով, կառավարության (կամ նրա կողմից լիազորված մարմնի) որոշումներով, օրենսդրական այլ ակտերով, ինչպես նաև՝ միջազգային պայմանագրերով, որոնք օրենսդրությամբ սահմանված նորմերի նկատմամբ ունեն գերակայող բնույթ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ – աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների նկատմամբ սահմանված են սոցիալական վճարների դրույքաչափեր գործատուների և վարձու աշխատողների համար: Վարձու աշխատողների համար

սոցիալական վճարների դրույքաչափը կախված չէ աշխատանքի վարձատրության չափից, իսկ գործատուների կողմից հաշվարկվող սոցիալական վճարները կատարվում են աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների նկատմամբ՝ եռաստիճան սանդղակով, ընդ որում սոցիալական վճարի գումարը յուրաքանչյուր վարձու աշխատողի հաշվով չի կարող սահմանված չափից փոքր լինել: Ներկայացված են նաև վճարողների մյուս խմբերի համար սահմանված դրույքաչափերը՝ կախված սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի գումարից:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ – սոցիալական վճարների հաշվարկման և վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը՝ իր ենթակայության տակ գտնվող սոցիալական ապահովագրության տարածքային կենտրոնների միջոցով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ – դրանք են՝ գործատուների կողմից ՀՀ քաղաքացիների աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցները, վարձու աշխատանք կատարող ՀՀ քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձանց աշխատավարձը և դրան հավասարեցված եկամուտներն ու ՀՀ քաղաքացի հանդիսացող անհատ ձեռնարկատերերի տարեկան եկամուտները՝ առանց հաշվի առնելու եկամտահարկով հարկման նպատակով կատարվող անձնական նվազեցումը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՈՒՇԱՑՄԱՆ ԳԾՈՎ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ – սոցիալական վճարների կատարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ուշացման օրվանից մինչև 365-րդ օրը ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար ապահովադրից գանձվում է տույժ՝ ժամանակին չվճարված գումարի նկատմամբ սահմանված տոկոսադրույքի չափով:

Սոցիալական վճարների օբյեկտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու, վարձու աշխատողների աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու դեպքում, ապահովադրից գանձվում է թաքցրած կամ պակաս ցույց տված սոցիալական վճարների օբյեկտի նկատմամբ

հաշվարկված սոցիալական վճարների գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի նկատմամբ սահմանված տոկոսադրույքի չափով: Խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սոցիալական վճարների օբյեկտը կրկին թաքցնելու կամ պակաս ցույց տալու, վարձու աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չծևակերպելու դեպքում՝ սոցիալական վճարների ամբողջ գումարի չափով:

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ – դրանք կոոպերատիվ սեփականության վրա հիմնված, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, իրենց անդամների անձնական, աշխատանքային և գույքային մասնակցությամբ գործող կազմակերպություններն են, որոնց անդամներին կանոնադրությամբ արգելվում է շահույթից բաժնեմաս ստանալ: Սպառողական կոոպերատիվի հիմնադիր փաստաթուղթը նրա կանոնադրությունն է, որի անդամներ կարող են լինել ինչպես քաղաքացիներ, այնպես էլ՝ գյուղացիական տնտեսություններ: Նմանատիպ կոոպերատիվները ստեղծվում են իրենց անդամների գործունեությանն օժանդակելու և նրանց ծառայություններ մատուցելու համար: Սպառողական կոոպերատիվները չեն կարող հիմնադրել որևէ կազմակերպություն, ինչպես նաև՝ բաժանմունքներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ: Սպառողական կոոպերատիվների գույքը պատկանում է նրա անդամներին՝ համատեղ սեփականության իրավունքով:

ՍՊՐԵԴ – 1) մատակարարման տարբեր ժամկետներում ֆյուչերսային պայմանագրերով ապրանքատեսակների միաժամանակյա առք ու վաճառքն է, 2) տարբեր ժամանակահատվածների ընթացքում կամ տարբեր գներով մեկ տեսակի ապրանքի միաժամանակյա առք ու վաճառքն է օպցիոն պայմանագրերով, 3) առք ու վաճառքի գների միջև տարբերությունն է:

ՍՎԻՖՏ – դա միջբանկային հեռահաղորդակցությունների և համակարգչային ծառայությունների հետ կապված միջազգային դրամական հաշվարկներ ու վճարումներ կատարելու ավտոմատացված համակարգ է:

ՍՎՈՓ (ՓՈԽԱՆԱԿՈՒՄ) – 1) ֆինանսափոխանակային գործարք է, որի ժամանակ անհրաժեշտ ակտիվը չի գնվում, այլ փոխանակվում է առկա գտնվող մեկ այլ ակտիվի հետ՝ փոխադարձ համաձայնության հիման վրա, 2) փոխանակում կամ բարտեր (պարտավորությունների կամ ակտիվների փոխանակման գործառնություն), որը կատարվում է դրանց կառուցվածքը բարելավելու, ռիսկերը և ծախքերը նվազեցնելու, շահույթ ստանալու նպատակով, 3) ժամանակավոր գնում՝ հետագա վաճառքի երաշխավորությամբ, 4) արժեթղթերով միաժամանակյա փոխանակման գործառնություն: Ժամկետը երկարաձգելու նպատակով սվոփ՝ արժեթղթի վաճառքը և այլ արժեթղթի գնումը, որն ունի մինչև մարումն ավելի երկարատև ժամկետ, 5) ազգային արժույթը արտարժույթով փոխանակելու գործառնություն՝ որոշակի ժամանակ անց հակադարձ փոխանակման պարտավորությամբ: Սովորաբար իրականացվում է կենտրոնական բանկերի միջև, 6) սվոփ արտարժույթի շուկայում, արտարժույթի գնում կամ վաճառք «սփոթ» պայմաններով՝ միաժամանակ կնքելով հակադարձ ֆորվարդային գործարք (օրինակ արտարժույթի ռիսկը ծածկելու համար), 7) նույն ժամկետով երկու արժույթների գծով տոկոսադրույքների տարբերությունը:

ՍՎՈՓԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ – երկու կողմերի միջև համաձայնագիր է դրամական հոսքերի փոխանակման մասին, որով առաջին դրամական հոսքն ուղարկվում է հաստատագրված, իսկ հակադարձը՝ լողացող կուրսով (փոխարժեքով):

ՍՏԱԳՆԱՑԻԱ – տնտեսական ցուցանիշների դանդաղ աճման կամ գործարար ակտիվության նվազման միտումն է:

ՍՏԱԳՖԼՅԱՑԻԱ – 1) ինֆլյացիայի և ստագնացիայի համակցումն է, 2) տնտեսության վիճակն է, որի ընթացքում տեղի է ունենում, միաժամանակ, արտադրության անկում, գների աճ և գործազրկություն:

ՍՏԱՆԴԱՐՏԱՑՎԱԾ ՄԱՍՇՏԱԲՈՎ ԲԱԶՄԱԿԻ ՌԵԳՐԵՍԻԱՅԻ ՀԱՎԱՍԱՐՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ (β_i) – որը հնարավորություն է տալիս կատարելու համեմատական վերլուծություն՝ բացահայտելու գործոնային ցուցանիշի (x) փոփոխության

ազդեցությունն արդյունքային ցուցանիշի (y) փոփոխության վրա:

Այն արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$\beta_i = a_i \frac{\sigma_y}{\sigma_{x_i}},$$

որտեղ՝

σ_y -ը արդյունքային ցուցանիշի միջին քառակուսային շեղումն է,

σ_{x_i}-ն՝ գործոնային i-րդ ցուցանիշի միջին քառակուսային շեղումը,

a_i -ն i-րդ գործոնային ցուցանիշի գործակիցն է:

ՍՏԱՆԴԱՐՏԱՑՈՒՄ - իրականում գոյություն ունեցող կամ հնարավոր խնդիրների վերաբերյալ համընդհանուր և բազմակի կիրառման համար դրույթների սահմանման միջոցով, որոշակի բնագավառում կարգավորվածության լավագույն աստիճանին հասնելու ուղղված գործունեություն է:

ՍՏՈԽԱՍՏԻԿ ԿԱՊ – սոցիալ-տնտեսական մասսայական երևույթների բնագավառում այս կամ այն քանակական օրինաչափությունը հաճախ դրսևորվում է որպես արդյունքային ցուցանիշի արժեքների բաշխվածություն՝ կախված ազդող գործոնների մեծություններից: Այսպես, եթե որևէ ոլորտի տարբեր ճյուղերում աշխատողների բաշխվածությունն ըստ սեռի միատեսակ չէ, ապա կարելի է խոսել այդ երկու ցուցանիշների միջև ստոխաստիկական կապերի վերաբերյալ, այսինքն՝ ըստ սեռի աշխատողների կազմը ստոխաստիկորեն կախված է այդ ոլորտի ճյուղերից:

Ստոխաստիկական կապերի մասնակի դեպք է կոռելյացիոն կապը:

ՍՈՒԲՍԻԴԻԱ – օգնություն, աջակցություն է դրամական կամ բնեղեն տեսքով, որը տրամադրվում է պետական, համայնքային բյուջեների միջոցներից կամ հատուկ նշանակության հիմնադրամներից՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց, տեղական ինքնակառավարման մարմիններին ու այլ պետություններին:

ՍՈՒԲՎԵՆՑԻԱ – դրամական օգնություն է, որը տրամադրվում է վերադաս մարմինների կողմից որպես նպատակային ֆինանսավորում՝ որոշակի միջոցառումների իրականացման գծով: Սուբվենցիան նպատակային չօգտագործման դեպքում ենթակա է վերադարձման նույն վերադաս մարմիններին:

ՍՈՒՊԵՐՀԻՊԵՐԻՆՖԼՅԱՑԻԱ – տնտեսական իրավիճակ, երբ գների ամսական աճի տեմպերը կազմում են 50% և ավելի: Նման մակարդակն առավել ավերիչ ու վտանգավոր է և տվյալ պարագայում տնտեսությունը դառնում է անկառավարելի:

ՍՓՈԹ – 1) կանխիկ, առձեռն, 2) առձեռն ապրանքի կամ արտարժույթի վաճառքի վերաբերյալ բորսայական կամ արտաբորսայական գործարք է, որը նախատեսում է արագ մատակարարում և վճարում: «Սփոթ» պայմաններով արտարժութային գործարքի ժամանակ վաճառողի կողմից արտարժույթի հանձնումը գնորդին կատարվում է գործարքը կնքելուց հետո երկրորդ աշխատանքային օրը (կամ երկու աշխատանքային օրվա ընթացքում): Ժամանակի մեջ այդ տարբերությունը սահմանված է միջազգային պրակտիկայում և կապված է կնքված գործարքը բանկերում ձևակերպելու (սկզբնական փաստաթղթերի քաղվածք, վճարային և ծանուցող հեռագրերի պատրաստում և այլն) անհրաժեշտության հետ: «Սփոթ» գործարքներով արտարժույթի փոխարժեքի մեծությունը կարող է տարբերվել այլ գործարքների գծով փոխարժեքից:

ՍՓՈԹ ԳԻՆ – ապրանքի (արտարժույթի, արժեթղթի) գինն է՝ այն կանխիկ վաճառելիս:

ՍՓՈԹ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – համարվում են այն գործառնությունները, որոնք նախատեսում են հաշվարկների անմիջական իրականացում գործարքից հետո ոչ ավելի, քան երկու բանկային օրվա ընթացքում: Այն փոխարժեքները, որոնք հիմք են հանդիսանում սփոթ գործառնությունների կնքման համար, անվանվում են սփոթ:

ՎԱՏ ԿԱՄ ԱՆՀՈՒՍԱԼԻ ՊԱՐՏՔ – 1) սահմանված ժամկետում փոխառուի (վարկառուի) կամ հաճախորդի չվճարված պարտքն է այդ գումարը տրամադրող կազմակերպությանը, 2) ցանկացած կրեդիտորական կամ դեբիտորական պարտքն է, որը չի մարվել պայմանագրով սահմանված ժամկետներում և շատ հավանական է, որ չի վերադարձվի, օրինակ՝ պարտապանի անվճարունակության պատճառով: Նման պարտքը կորուստ է ճանաչվում և կազմակերպության հաշվեկշռից դուրս է գրվում որպես գործառնական ծախս: Այդպիսի պարտքերի ծածկման համար ստեղծվում են պահուստներ: Պահուստի մեծությունը որոշվում է յուրաքանչյուր վատ (կասկածելի) պարտքի գծով՝ կախված պարտապանի ֆինանսական վիճակից, վճարունակությունից, ժամկետանց օրերի թվից և պարտքն ամբողջությամբ կամ մասնակիորեն մարելու հավանականության գնահատականից:

ՎԱՐԱՆՑ (ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ) – 1) արժեթղթին կցվող վկայական կամ փաստաթուղթ է, որը դրա տիրոջը տալիս է լրացուցիչ իրավունքներ և արտոնություններ, 2) չշրջանառվող փոխանցելի մուրհակ է, որը կարող է վճարումը ստացողի կողմից փոխարկվել որևէ շրջանառվող գործիքի՝ վարանտով սահմանված պայմաններին համապատասխան, 3) հաշվում անբավարար միջոցների դիմաց վերադաս որևէ մարմնի կողմից չեկեր դուրս գրելու միջոցով կարճաժամկետ փոխառության եղանակ է: Չեկերն ամեն դեպքում պետք է վճարվեն տրասատ բանկի կողմից՝ վերջինիս հետ համաձայնեցված պայմաններով և տոկոսադրույքներով, 4) ապրանքի անդորրագիր և (կամ) պահեստային վկայագիր է, որը հավաստում է ապրանքային պահեստի կողմից ապրանքն ի պահ ընդունելը: Փաստաթուղթը դուրս է գրվում կոնկրետ ապրանքների դիմաց և կարող է փոխանցվել փոխանցագրի (ինդոսամենտի) միջոցով, 5) դրամական վճարումը թույլատրող փաստաթուղթ է, 6) որոշակի գործողություն ձեռնարկելու իրավունք, կալանքի, խուզարկության թույլտվություն է:

ՎԱՐԻԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԱԿԻՑ – միջին գծային շեղման (d) կամ միջին քառակուսային շեղման (σ) տոկոսային հարաբերակ-

ցությունն է միջին թվաբանականի նկատմամբ և նշանակվում է V-ով՝

$$V = \frac{d}{\bar{x}} \cdot 100\% \text{ կամ } V = \frac{\sigma}{\bar{x}} \cdot 100\% :$$

Որքան փոքր լինեն միջին գծային շեղման և միջին քառակուսային շեղման մեծությունները, այնքան փոքր կլինի վարիացիայի գործակիցը:

ՎԱՐԻԱՑԻԱՅԻ ԹԱՓ – վարիացիայի ցուցանիշներից առավել պարզը նրա թափն է, այսինքն՝ ցուցանիշի (հատկանիշի) ամենամեծ և ամենափոքր արժեքների տարբերությունը՝

$$\text{Վարիացիայի թափը} = X_{max} - X_{min}:$$

ՎԱՐԻԱՑԻԱՅԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ – հետևյալներն են՝ վարիացիայի թափը, միջին գծային շեղումը, դիսպերսիան, միջին քառակուսային շեղումը և վարիացիայի գործակիցը:

Միջին մեծությունը ներկայացնում է տատանվող ցուցանիշի (հատկանիշի) ընդհանրացնող բնութագիրը: Սակայն միջինը, բնութագրելով վարիացիոն շարքն ամբողջությամբ, ցույց չի տալիս, թե ինչպես են նրա շուրջը դասավորվում միջինացվող ցուցանիշի (հատկանիշի) տարբերակները. նրանք արդյո՞ք կենտրոնացված են միջինի շուրջը, թե զգալիորեն շեղվում են նրանից: Միջինը դեռևս ցույց չի տալիս նաև ցուցանիշի (հատկանիշի) վարիացիայի բնույթը և նրա տատանողականության աստիճանը:

Բազմաթիվ գործոնների ներգործությամբ, օրինակ, առաջանում է աշխատանքի արտադրողականության, աշխատավարձի, արտադրանքի ինքնարժեքի, շահութաբերության և մյուս ցուցանիշների վարիացիա: Ուսումնասիրելով հասարակական երևույթների քանակական կողմը, վիճակագրությունը գրեթե միշտ գործ ունի իր կողմից ուսումնասիրվող երևույթների տատանվող հատկանիշների հետ: Վիճակագրության խնդիրն է՝ նրա ուսումնասիրման օբյեկտների էությունն ավելի խորը և բազմակողմանիորեն ճանաչելու համար տալ հատկանիշների

տատանողականության թվային արտահայտությունը: Դրա համար օգտագործվում են վարիացիայի տարբեր ցուցանիշներ:

ՎԱՐԻԱՑԻՈՆ ՇԱՐՔ – ուսումնասիրվող երևույթի քանակական հատկանիշով ու փոփոխվող չափեր ու թվային արժեք ունեցող միավորների կարգավորված մի շարք է: Քանակական հատկանիշի չափերի թվային արժեքները կոչվում են տարբերակներ, իսկ այդ տարբերակներին համապատասխանող թվերը՝ հաճախություններ: Տարբերակները կարող են արտահայտվել. 1) դրական և բացասական, 2) բացարձակ և հարաբերական թվերով: 1-ին տեսակի օրինակ կարող է ծառայել աշխատողների բաշխումն ըստ նրանց տարիքի, ըստ աշխատավարձի և այլն, իսկ տնտեսավարող սուբյեկտները՝ ըստ աշխատողների թվաքանակի, ըստ արտադրանքի ծավալի և այլն:

2-րդ տեսակի օրինակ կարող է լինել, եթե տնտեսավարող սուբյեկտները խմբավորենք ըստ տնտեսական գործունեության ֆինանսական արդյունքների, ապա տարբերակները կարող են լինել ինչպես դրական (շահույթ), այնպես էլ բացասական (վնաս) թվերով:

Իրենց հերթին հաճախությունները միշտ դրական թվեր են, քանի որ ուսումնասիրվող միևնույն տարբերակը, որը կարող է հանդիպել մի քանի անգամ, 0-ից փոքր կամ բացասական չեն կարող լինել: Վարիացիոն շարքի հաճախությունների գումարն անվանվում է կուտակային հաճախություն կամ հանրագումար: Վարիացիոն շարքը կարող է լինել դիսկրետ և չընդհատվող: Դիսկրետ է համարվում այն շարքը, երբ տարբերակների առանձին արժեքները կարող են մեկը մյուսից տարբերվել մի ինչ-որ որոշակի մեծությամբ: Այսինքն, շարքի անդամներն արտահայտվում են ամբողջ թվերով և այն կոչվում է դիսկրետ վարիացիոն շարք:

Չընդհատվող է համարվում այն շարքը, երբ տարբերակները սովորաբար բաժանվում են միջակայքերի, իսկ հաճախությունները վերաբերում են ոչ թե ուսումնասիրվող ցուցանիշի առանձին արժեքին, ինչպես դիսկրետ վարիացիոն շարքերում է, այլ ամբողջ միջակայքին: Եթե միջակայքերն ամբողջ շարքում պահպանում են միևնույն մեծությունը, ապա նրանք կոչվում են հավասար միջակայքեր, իսկ վարիացիոն շարքը՝ հավասար միջակայքեր ունեցող շարք:

ՎԱՐԻԱՑԻՈՆ ՇԱՐՔԵՐԻ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ – օգտագործվում են վիճակագրական տեղեկատվությունները պատկերավոր և ակնառու ձևով ներկայացնելու համար: Դրանք արտահայտում են սոցիալ-տնտեսական երևույթները բնութագրող ցուցանիշների փոխկապվածությունը, դրանց արժեքների փոփոխությունները, երկրաչափական պատկերների՝ կետերի, ուղիղների, կորերի և այլնի միջոցով:

Ըստ ներկայացման ձևի գծապատկերները լինում են՝ գծային, հարթապատկերային և ծավալային:

Գծային պատկերները օգտագործվում են ուսումնասիրվող երևույթի կամ ցուցանիշի հատկանիշների միջև եղած կապերի բնույթը, դրանց ժամանակային փոփոխությունները (օրինակ, պլանային առաջադրանքի կատարումը) արտահայտելու համար:

Հարթապատկերները կիրառվում են այնպիսի դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում ակնառու տեսքով ցուցադրել համանման երևույթների քանակական համեմատելիությունը: Ուսումնասիրվող երևույթները ներկայացվում են համապատասխան մակերես (ուղղանկյունների, բազմանկյունների, շրջանների և այլն) ունեցող հարթաչափական պատկերների տեսքով: Այսինքն, այդ գծապատկերները արտահայտվում են հիստոգրամների (սյունակային դիագրամներ, որոնցում համեմատվող ցուցանիշի արժեքները պատկերվում են աբցիսների առանցքի վրա ուղղանկյունիների տեսքով, որտեղ բոլոր սյունակների լայնությունները հավասար են իրար, իսկ բարձրությունները ուղիղ համեմատական են պատկերվող ցուցանիշների արժեքներին) և սեկտորային դիագրամների (որոնք արտացոլում են երևույթների կառուցվածքային առանձնահատկությունները և այդպիսի դեպքերում երևույթի կառուցվածքն ընդունվում է 100%, իսկ դրա յուրաքանչյուր բաղադրիչի մաս կամ տեսակարար կշիռ ընդհանուրի մեջ արտապատկերվում է որպես շրջանի սեգմենտ) միջոցով: Օրինակ հողատեսքերի կազմն ու կառուցվածքը:

Ծավալային գծապատկերներն օգտագործվում են երբեմն, այնպիսի դեպքերում, երբ անհրաժեշտ է լինում դրանց արտապատկերել դիսկրետ (ամբողջ) թվերի խմբավորված դինամիկ բաշխման շարքերը բնորոշող տարբեր բնութագրիչներով (միջին մեծությունները, միջին քառակուսային շեղումը, դիսպերսիան և այլն) և այդ դեպքում սովորաբար օգտագործվում են պոլի-

գոններ: Պոլիգոնները, արդյունք են, երբ հիստոգրամայի գծով ուղղանկյունիների միջնակետերը միացվում են՝ իրար ստեղծելով կորագծային պատկեր:

ՎԱՐԿ – օգտագործվում է մի քանի իմաստներով. 1) վերադարձնելու և սովորաբար տոկոս վճարելու պայմանով տրամադրվող դրամական (արտարժութային) կամ ապրանքային փոխատվություն է, որի գործընթացում վարկատուի և վարկառուի (փոխառուի) միջև առաջանում են տնտեսական որոշակի հարաբերություններ, 2) ֆիզիկական անձի կամ կազմակերպության վարկանիշն է և ֆինանսական դրությունը, 3) ֆինանսական միջոց, որն անձին կամ կազմակերպությանը, ընկերությանը հնարավորություն է տալիս դրամ փոխառել փոխատուներից՝ ապրանքներ, հումք և այլ նյութական արժեքներ գնելու, այսինքն՝ դրանց անմիջապես տիրանալու) համար՝ հետ վերադարձը կատարելով սահմանված կամ փոխհամաձայնեցված ժամանակահատվածի ընթացքում, միաժամանակ վճարելով տոկոսներ: Տարբերվում են բանկային վարկեր, ոչ բանկային կազմակերպությունների կողմից տրամադրվող ֆինանսական վարկեր, տնտեսական գործընկերների կողմից տրվող ապրանքային (առևտրային) վարկեր և այլն: Վարկի դիմաց գանձվող տոկոսադրույքը կարող է լինել հաստատագրված կամ փոփոխական (լողացող)՝ կախված վարկի պայմաններից: Վարկ հասկացությունը տնտեսագիտության տեսանկյունից ներկայացնում է փոխատվական կապիտալի շարժ, 4) գրառում է (ձևակերպում), որը կատարվում է կրկնակի գրանցմամբ հաշվապահական հաշվառման համակարգի դեպքում՝ հաշվի աջ մասում, և արտացոլում է կազմակերպության ակտիվների և ծախսերի նվազումը (դեբետում) կամ պարտավորությունների, սեփական կապիտալի և եկամուտների ավելացումը (կրեդիտում), 5) հոդված է տվյալ երկրի վճարային հաշվեկշռում, օրինակ՝ արտահանումը, որն արտարժույթ է բերում:

Վարկերի տարբեր տեսակների միասնական դասակարգում գոյություն չունի: Այնուհանդերձ, դրանք կարող են դասակարգվել ըստ տարբեր հատկանիշների, այդ թվում՝ ըստ ժամկետների (կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ վարկեր), ըստ ապահովության տեսակների (ապահովված, չապահովված կամ բլանկային վարկեր), ըստ պարտատերերի տեսակների

(բանկային, պետական, ապահովագրական ընկերությունների, մասնավոր անձանց, առևտրային, կոնսորցիոնալ վարկեր), ըստ փոխառուների տեսակների (գյուղատնտեսական, արդյունաբերական, կոմունալ, անձնական վարկ), ըստ օգտագործման (սպառողական, արդյունաբերական, ընկերության միջոցների ձևավորման, ներդրումային, սեզոնային, ժամանակավոր ֆինանսական դժվարությունների հաղթահարման, միջանկյալ, արժեթղթերով գործառնությունների համար, ներմուծման, արտահանման վարկեր), ըստ չափերի (փոքր, միջին, խոշոր վարկեր): Վարկային պայմանագրով առաջացող իրավահարաբերությունների էությունը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ըստ որի, բանկը կամ այլ վարկային կազմակերպություն (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ վերջինս էլ պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և վճարել տոկոսներ դրանից

ՎԱՐԿ ԱՊԱՀՈՎՎԱԾ – այն վարկատեսակն է, որն ապահովված է իրական ակտիվներով, որոնք ձևակերպվել են որպես գրավային միջոց: Փոխառուի (վարկառուի) կողմից պարտքը չվերադարձնելու դեպքում փոխատուն (վարկատուն) իրավունք ունի իրացնել այդ ակտիվները՝ փոխատվության գումարը մարելու նպատակով:

ՎԱՐԿ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ – ըստ դրա պայմանավորվող կողմերը կարող են կնքել պայմանագիր, որը նախատեսում է մի կողմի պարտականությունը մյուս կողմին տրամադրելու տեսականուն համապատասխան որոշվող գույքը՝ ըստ սահմանված քանակի և որակի:

ՎԱՐԿ ԲԱՆԿԱՅԻՆ – վարկային պայմանագրով նյութական արժեքների գրավադրմամբ՝ բանկի կողմից տրամադրվող դրամական կամ արտարժութային միջոցներ:

ՎԱՐԿ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ – այն փոխատվական կապիտալի ներդրման ձև է, որը նախատեսված է գյուղատնտեսության զարգացման համար և տրամադրվում է գրավադրմամբ: Գյուղատնտեսական վարկերը տրվում են հողի մշակման, բերքա-

հավաքի, անասունների բտման ու խնամքի հետ կապված աշխատանքներին նպաստելու նպատակով:

ՎԱՐԿ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ – 1) դրանք են՝ կարճաժամկետ (մինչև 1 տարի), միջնաժամկետ (1-ից 3 տարի), երկարաժամկետ (3-ից բարձր տարի) վարկերը: Նշված վարկերը ժամկետային առումով յուրահատուկ են անցումային տնտեսություն վարող երկրներին, իսկ զարգացած երկրներում միջնաժամկետ վարկերը 1-ից 6 տարի է, երկարաժամկետը՝ 6-ից բարձր տարի: 2) որոշակի ժամանակով տրամադրվող վարկ է, որը սովորաբար ենթակա է մարման, տրման պահից՝ 30, 60, 90 կամ 120 օր հետո: Տրամադրված վարկի գծով հաշվարկված տոկոսը սովորաբար գանձվում է նախօրոք, փոխատվության տրման պահին և ներկայացնում է՝ վարկի գումարից կատարելով հանում կամ զեղչ:

ՎԱՐԿ ԼՈՄԲԱՐԴԱՅԻՆ – 1) հեշտ իրացվող շարժական գույքի գրավի դիմաց տրամադրվող կարճաժամկետ վարկ: 17-18-րդ դարերում լոմբարդային վարկեր սկսեցին տրամադրել բանկերը: Որպես գրավ ծառայում էին թանկարժեք մետաղները և ապրանքները: Գրավի արժեքը սովորաբար գերազանցում էր վարկի մեծությունը: Փոխառուն պահպանում էր պարտատիրոջ մոտ գրավ դրված գույքի նկատմամբ սեփականության իրավունքը: Եթե վարկը ժամանակին չէր մարվում, ապա սեփականության իրավունքն անցնում էր պարտատիրոջը, որն իրացնում էր գույքը և ստացված հասույթից պահում գրավի գումարը՝ հաշվեգրված տոկոսների հետ միասին: Լոմբարդային վարկի ժամանակակից ձևը բանկում դեպոնացված արժեթղթերի գրավի դիմաց տրված բանկային վարկն է: Որպես գրավ սովորաբար ընդունվում են պետական արժեթղթերը և ֆոնդային բորսայում գնանշվող արժեթղթերը, որոնք վարկավորման ընթացքում հանձնվում են բանկին: Վարկի գումարը կազմում է գրավի արժեքի 50-90%-ը: Լոմբարդային վարկը աստիճանաբար դուրս է մղվում վարկավորման այլ ձևերի կողմից: 2) Իրենից ներկայացնում է ՀՀ տարածքում գործող ռեզիդենտ բանկերի կողմից (կարճաժամկետ իրացվելիության կարգավորման նպատակով) վարկավորում՝ պետական արժեթղթերի, բանկային ոսկու, թանկարժեք մետաղների, արտարժույթի գրավադրման դիմաց:

ՎԱՐԿ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ – վարկ, որը տրամադրվում է մինչև մեկ տարի մարման ժամկետով՝ առավելապես կազմակերպությունների շրջանառու միջոցների ձևավորման համար: Կարճաժամկետ վարկը կարող է լինել նաև միջբանկային, երբ մի բանկը վարկ է տրամադրում մյուսին՝ վերջինիս բանկային ռեսուրսները համալրելու և (կամ) իրացվելիության խնդիրները լուծելու նպատակով: Կարճաժամկետ վարկի տեսակ է նաև օվերդրաֆտը (հաշվի վարկավորումը):

ՎԱՐԿ ԿՈՄՈՒՆԱԼ – կոմունալ տնտեսության և բնակարանային շինարարության կարիքների համար սահմանված տոկոսադրույքաչափերով տրամադրվող վարկ է:

ՎԱՐԿ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ – 1) փոխատվություն է՝ անշարժ գույքի գրավադրմամբ: Ազատ մրցակցության ժամանակաշրջանում հիփոթեքային բանկերը 10, 15, 25 և ավելի տարով վարկեր են տրամադրում հողամասերի, բնակելի շենքերի և այլ կառույցների գրավի դիմաց: 2) երկարաժամկետ փոխատվություններ են, որոնք սովորաբար տրամադրվում են անշարժ գույքի՝ հողի և արտադրական ու բնակարանային նշանակության կառույցների, գրավադրման դիմաց: Դրանք տրվում են հող, շենքեր (սովորաբար՝ տներ) ձեռք բերելու կամ տներ կառուցելու համար և ետ են վերադարձվում երկարատև ժամանակաշրջանից հետո: Գրավ կարող է լինել նաև գնվող կամ կառուցվող անշարժ գույքը: Վարկը ժամանակին չմարելու դեպքում վարկատուն (փոխատուն) իրավունք ունի ձեռնարկել օրենսդրությամբ նախատեսված միջոցներ՝ ակտիվը վերականգնելու համար: Եթե գրավադրված գույքը արժեթղթերից տարբեր շարժական գույք է, ապա այդպիսի հիփոթեքը անվանվում է շարժական գույքի դիմաց հիփոթեքային վարկ: 3) անշարժ գույքով (հողատարածքով, շենքերով, այլ գույքով) ապահովված վարկերն են, ներառյալ՝ շինարարության և հողաշինության համար կարճաժամկետ վարկերը, գյուղատնտեսական հողատեսքերի, շենքերի և բնակարանների, առևտրային կառույցների ու գույքի գնման համար վարկերը:

ՎԱՐԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ – 1) որևէ երկրի, նրա բանկերի, ինչպես նաև այլ կազմակերպությունների կողմից այլ երկրների, դրանց

բանկերին, իրավաբանական ու ֆիզիկական անձանց տրամադրվող վարկ: Միջազգային վարկի համար միջոցները հավաքագրվում են փոխատվական կապիտալների միջազգային շուկայում, ազգային շուկաներում, ինչպես նաև՝ պետական, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների ռեսուրսների օգտագործման հաշվին: Լինում է կարճաժամկետ (մինչև 1 տարի), միջնաժամկետ (1-5 տարի) և երկարաժամկետ (5 տարուց ավելի): Ապահովման տեսակետից լինում են ապահովված (ապրանքանյութական արժեքներով, առևտրական փաստաթղթերով և այլ արժեքներով) և չապահովված (բլանկային) վարկեր: Իրենց ձևով վարկերը լինում են՝ արտարժութային և ապրանքային: Կախված այն բանից, թե ո՞վ է վարկատուն, տարբերվում են՝ մասնավոր, կառավարական, միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների վարկերի: Ըստ վարկավորման օբյեկտի, միջազգային վարկերը ստորաբաժանվում են ֆինանսականի և առևտրայինի, 2) միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտում ֆինանսական ռեսուրսների և արտարժույթի տրամադրումն է՝ վերադարձման, ժամկետայնության և տոկոսի վճարման պայմաններով: Նման վարկեր տրամադրում են մասնավոր ֆիրմաները, բանկերը, օտարերկրյա պետությունները, միջազգային ֆինանսական կազմակերպությունները:

ՎԱՐԿ ՄՈՒՐՀԱԿԱՅԻՆ – 1) գնորդների և վաճառողների կողմից միմյանց տրամադրվող առևտրային վարկի հիման վրա առաջացած բանկային վարկի տեսակ է, որը ձևակերպվել է մուրհակով: Օգտագործելով պարտքային հանձնառությունները փոխադարձ հաշվարկներում, նրանք, վերջին հաշվով, օգտագործում են մուրհակները նաև բանկի հետ գործարքներում, դրանք հանձնելով որպես ստացվող փոխատվությունների ապահովում: Արդյունքում տեղի է ունենում պարտատիրոջ փոխարինում, ընդ որում նոր կապն անցնում է մուրհակի տիրոջ միջոցով, որը մուրհակը ներկայացնում է բանկ հաշվառման համար: Բանկը ակցեպտավորում (հոժարագրում) է մուրհակը՝ վարկային պայմանագրի պայմաններով: Մուրհակային վարկ տրամադրելու դեպքում բանկը պարտավոր է մարել իր կողմից ակցեպտավորված մուրհակը՝ վճարման ժամկետը լրանալիս, կամ հաճախորդ-փոխառուից՝ նրան տրամադրված մուրհա-

կային վարկի մարման նպատակով ստացված միջոցներից, կամ սեփական միջոցների հաշվին, այդպիսով ձևափոխելով մուրհակային վարկը սովորականի: Մուրհակային վարկ տրամադրելու համար բանկը գանձում է հաշվարկված տոկոսային գումարը: 2) վարկատեսակ է, որը առաջացել է առևտրային վարկի զարգացման հիման վրա, երբ ձեռք բերված ապրանքների դիմաց դրամի կամ արտարժույթի փոխարեն օգտագործվել է մուրհակը, որի տերը այն վաճառում է բանկին կամ գրավ դնում բանկում: Այսինքն՝ մուրհակի գրավադրմամբ փոխատվությունը միաժամանակ վարկային գործառնություն է: Բանկի կողմից տրամադրված փոխատվությունները պետք է վերադարձվեն գրավադրված մուրհակի վճարման ժամկետը լրանալուն պես:

ՎԱՐԿ ՊԵՏԱԿԱՆ – վարկային հարաբերությունների համակարգ է, որում կողմերից մեկը պետությունն է: Պետական վարկի հիմնական ձևերն են՝ պետական փոխառությունները, խնայդրամարկղերում բնակչության ավանդները, որոնց միջոցով վերջիններս ձեռք են բերում պետական արժեթղթեր: Պետական վարկերը հանդես են գալիս երկու առումով՝ ներքին և միջազգային: Ներքին վարկի դեպքում, երբ վարկատուները բանկերն են, ապա պետությունը կատարում է վարկառուի (փոխառուի) դեր, իսկ երբ վարկառուները տեղական մարմիններն են (մարզ, համայնք և այլն), ապա պետությունն իրականացնում է վարկատուի դեր: Միջազգային վարկի դեպքում պետությունը, որպես վարկատու և վարկառու, փոխհարաբերությունների մեջ է մտնում այլ երկրների հետ:

ՎԱՐԿ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ – բանկի կողմից տրամադրվում է բնակչությանը՝ սպառման ապրանքներ գնելու կամ կենցաղային ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու համար: Որպես կանոն, տրամադրվում է մինչև 3 տարի ժամկետով՝ սահմանված տոկոսադրույքաչափերով: Տրամադրված վարկի դիմաց վճարումներ չկատարելիս, գրավ դրած իրի սեփականության իրավունքն անցնում է բանկին և վաճառվում աճուրդով կամ այլ ձևով:

ՎԱՐԿԱԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՆԵՐ – որոնք առաջարկում են (առավելապես մասնավոր անձանց և ընտանիքներին) միջոցների խնայողության պլաններ՝ խնայողական կամ կենսաթոշակային ավանդների տեսքով, ինչպես նաև տրամադրում են հիփոթեքային վարկեր:

ՎԱՐԿԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ – ներառում է՝ հաճախորդներին (իրավաբանական և ֆիզիկական անձանց) վարկերի տրամադրման և այլ առևտրային բանկերին ազատ դրամական միջոցների ժամանակավոր փոխանցման գործընթացները՝ որոշակի վարձավճարի դիմաց: Վարկային բիզնեսի մյուս տեսակը կարող է հանդես գալ միջբանկային վարկի, կամ ուրիշ բանկում ժամկետային դեպոզիտի տեսքով: Վարկային բիզնեսի զարգացման համար պայման է հանդիսանում ինչպես տնտեսությունում ազատ դրամական միջոցների առկայությունը և այդ միջոցների նկատմամբ կարիք ունեցող սուբյեկտների առկայությունը, այնպես էլ վարկային հաստատությունների միջև ընթացիկ կապի առկայությունը, բանկային շուկայում ռեսուրսների վերաբաշխման վրա մասնագիտացված և բավարար վստահություն ներշնչող միջնորդների առկայությունը:

ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ – վարկառուի (փոխառուի) հանդեպ ունեցած բանկի կամ վարկային կազմակերպության իրավաբանորեն ձևակերպված պարտավորությունն է, որոշակի ժամանակաշրջանում նրան տրամադրելու վարկեր՝ սահմանված առավելագույն գումարի սահմաններում: Երբեմն վարկային գիծ բացելու մասին պայմանագրում ամրագրվում է պայման, ըստ որի, փոխառուն, պարտավոր է բանկում պահել ավանդ՝ վարկային գծի և ընտրված վարկերի գումարի նկատմամբ հաշվարկված որոշակի տոկոսի չափով: Բանկն իրեն իրավունք է վերապահում չեղյալ համարել պայմանագիրը. եթե հաճախորդի ֆինանսատնտեսական վիճակը վատթարանում է, եթե փոխառուն վարկային գծի միջոցները չի օգտագործում ըստ նշանակության (պայմանագրում սովորաբար նշվում են միջոցների օգտագործման նպատակները) և պայմանագրով նախատեսված այլ դեպքերում: Փոխառուն իրավունք ունի ընտրել վարկային գծի միջոցներն ըստ անհրաժեշտության և վճարել հաշվարկված տոկոսներ միայն փաստացի ընտրված վարկի համար: Երկրա-

չափական պատկերման առումով, միանվագ վարկային համաձայնագիրը կարելի է ներկայացնել որպես կետի, իսկ վարկային գիծը՝ հատվածի ձևով: Վարկային գիծը միանվագ վարկային պայմանագրի դեպքում ունի առավելություն երկու կողմերի համար էլ: Այն փոխառուի համար ստեղծում է առևտրային գործունեության իրականացման ավելի որոշակի հեռանկարներ, վերադիր ծախսերի և ժամանակի տնտեսում, որոնք անմիջապես կապված են յուրաքանչյուր առանձին վարկային համաձայնագրի շուրջ բանակցություններ վարելու և կնքելու հետ: Նույնը վերաբերում է նաև վարկատու բանկին (վարկային կազմակերպությանը): Դրա հետ մեկտեղ, բանկն իր վրա է վերցնում փոխատվական կապիտալների շուկաներում իրադրությունների անբարենպաստ տատանումների ռիսկը, քանի որ անկախ իրավիճակից պարտավոր է կատարել փոխառուի նկատմամբ իր պարտավորությունները և տրամադրել նրան վարկ՝ վարկային գծի վերաբերյալ համաձայնագրին համապատասխան: Վարկային գծերը սովորաբար օգտագործվում են խոշոր կազմակերպությունների կողմից՝ ապագա պարտավորությունները ֆինանսավորելու և ապրանքանյութական պաշարներ գնելու համար:

ՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾ – հավանական փոխառուի (ֆիզիկական կամ իրավաբանական անձի) ֆինանսական վիճակի, նրա գործունեության վերաբերյալ փաստերի և կարծիքների հավաքումն է: Այդ տեղեկությունները հատկապես վերաբերվում են փոխառուի (վարկառուի) ֆինանսական պարտավորությունների կատարմանը:

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ – հիմնականում ունի երկու իմաստ. լայն առումով՝ սոցիալ-տնտեսական այս կամ այն ֆորմացիայի (կազմավորման) շրջանակներում գոյություն ունեցող վարկային հարաբերությունների, վարկի ձևերի ու մեթոդների ամբողջությունն է, իսկ նեղ առումով՝ պատմական որոշակի ժամանակաշրջանում այս կամ այն երկրի վարկային հարաբերություններ կազմակերպող ինստիտուտների և վարկային կազմակերպությունների ամբողջությունն է: Արդյունաբերորեն զարգացած երկրների վարկային համակարգի մեջ մտնում են բանկերը և մասնագիտացված ոչ բանկային ֆինանսավարկային կազմա-

կերպությունները, այդ թվում՝ ա) ապահովագրական ընկերությունները, բ) կենսաթոշակային հիմնադրամները, գ) խնայողական դրամարկղները, որոնք մասնագիտացված են և հասարակության տարբեր շերտերի խնայողությունները փոխարկում են փոխատվական կապիտալի, դ) գրավատները և այլն:

ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ – իրենցից ներկայացնում են բանկային համակարգի կողմից տնտեսությանը կամ դրա կարիքը զգացող իրավաբանական անձանց տրամադրված վարկերի գծով միջոցներ: Վարկային ներդրումները բաժանվում են կարճաժամկետի՝ տրամադրված մեկ տարուց պակաս ժամկետով, և երկարաժամկետի՝ մեկ տարուց ավել ժամկետով:

ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ – դրանով բանկը կամ վարկային այլ կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական կամ արտարժութային վարկ տրամադրել վարկառուին (փոխառուին), իսկ վերջինս էլ պարտավորվում է սահմանված ժամկետում վերադարձնել ստացված գումարը և դրանից վճարել տոկոսներ:

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ – վարկային ներդրումների արդյունավետ կառավարման հիմքում ընկած է պորտֆելային կառավարման սկզբունքը, որը հնարավորություն է տալիս գնահատելու ամբողջ պորտֆելի ռիսկը, որն առավել արդիական է դառնում ռազմավարական պլանավորման ընթացքում՝ դիվերսիֆիկացիայի ճիշտ ընտրության համար: Վարկային պորտֆելի ռազմավարական պլանավորում իրականացնելիս, անհրաժեշտ է առանձնացնել ռիսկի գործոնները՝ ինչպես վարկային շուկայում, այնպես էլ նրա առանձին ստորաբաժանումներում, համադրելով այն պորտֆելում ներառված վարկերի տեսականու հետ: Բանկի դերը ֆինանսական շուկայում և նրա ֆինանսական ռազմավարությունը մեծ ազդեցություն է ունենում ակտիվների որակի և, բնականաբար, բանկի ֆինանսական վիճակի վրա:

Վարկերի պորտֆելային կառավարում իրականացնելիս պետք է տեսակավորել պորտֆելում առկա վարկային ներդրումները և որոշել դրանց տեսակարար կշիռը:

ՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ – վարկադրամային միջոցառումների իրականացման համակարգ է, որը պետությունն օգտագործում է տնտեսական և քաղաքական որոշակի նպատակների հասնելու համար: Այն տնտեսական ընդհանուր քաղաքականության տարրերից է:

ՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՐՏԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ – որոնք կարճաժամկետ վարկեր (օվերդրաֆտ) են հատկացնում մասնավոր անձանց և տնտեսավարող սուբյեկտներին՝ մանրածախ առևտրի խրախուսման նպատակով:

ՎԱՐԿԱՌՈՒ (ՓՈԽԱՌՈՒ) – վարկային հարաբերությունների մի կողմն է, որն օգտագործման համար ստանում է միջոցներ (վարկ) և պարտավորվում է այն պայմանավորված ժամկետում վերադարձնել վարկատուին՝ հաշվարկված տոկոսային եկամտի հետ համատեղ:

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ – դրանք են՝ բոլոր տեսակի տնտեսավարող սուբյեկտները, պետությունը, բնակչությունը և բանկերը:

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ – դրանք այն նյութական միջոցներն են, որոնց համար տրամադրվում են վարկեր և կնքվում վարկային պայմանագրեր: Օրինակ, կարճաժամկետ վարկերն ուղղվում են նյութական ընթացիկ ակտիվներ (պաշարներ) ձեռք բերելու, իսկ երկարաժամկետ վարկերը՝ արտադրական օբյեկտների շինարարության, վերակառուցման, հիմնական միջոցների ձեռք բերման և երկարաժամկետ այլ նպատակների համար:

ՎԱՐԿԱՏՈՒ – համարվում են ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք իրենց ժամանակավորապես ազատ դրամական միջոցները որոշակի ժամկետով տրամադրում են վարկառուին (փոխառուին):

ՎԱՐԿԵՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ – տրվում են ձեռնարկատիրությամբ զբաղվող կազմակերպություններին ապրանքանյութական արժեքների

պաշարների ձևավորման համար՝ դրանց գնումների հետ կապված ծախսերի, աշխատավարձի վճարման ու հարկերի մարման նպատակով:

ՎԱՐԿԵՐ ԿՈՆՏՈԿՈՐԵՆՏԱՅԻՆ – տարբեր երկրներում բնորոշվում են որպես վարկերի դասական տեսակ: Դա այնպիսի վարկ է, որը տրվում է բանկի կողմից ազգային արժույթով կամ արտարժույթով բանկի հաճախորդին՝ նրա պահանջարկին համապատասխան, և կարող է օգտագործվել նրա հայեցողությամբ, չգերազանցելով նախօրոք հաստատված պայմանագրային գումարը: Մուտքերի և վճարումների մնացորդը (սալդոն) հաճախորդի հաշվից կատարվում է պայմանագրում նշված ժամկետից հետո, միաժամանակ վարկերի դիմաց վճարումը կատարելով բանկի միասնական հաշվին:

Կոնտոկորենտային վարկերը դասվում են կարճաժամկետ վարկերի շարքին և նրանց իրացվելիության ապահովման համար տրվում են բանկի առաջնակարգ հաճախորդներին՝ ըստ անհրաժեշտության: Տոկոսավճարների գանձումը կատարվում է փաստացի օգտագործված գումարից: Իսկ այդ վարկային գործարքի համար բանկը, անկախ վարկային միջոցի օգտագործումից, գանձում է միջնորդային (կոմիսիոն) վճարներ, որը հաշվարկվում է շրջանառվող գումարից կամ գանձվում հաստատագրված վճարների ձևով: Կոնտոկորենտային վարկերի տոկոսավճարների հաշվառման և գանձման համար գործում է հատուկ կարգ՝ «շտաֆելային» մեթոդ: Այս մեթոդի էությունը կայանում է նրանում, որ այստեղ տոկոսավճարների համար չկան սահուն ժամկետ և որոշակի կայուն դրամական հոսքեր, այստեղ հաշվառումը տարվում է օրերով, մի դեպքում՝ դեբետ, մի դեպքում՝ կրեդիտ, իսկ արդյունքների ամփոփումը կատարվում է եռամսյակի վերջում:

ՎԱՐԿԵՐ ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ – դրանք ազատ դրամական միջոցների ներգրավումն ու տեղաբաշխումն է բանկերի միջև: Այդ վարկերը բանկերի իրացվելիության ապահովման, թղթակցային հաշիվների համալրման և ֆինանսական շուկայի առավել եկամտաբեր ոլորտներում գործառնություններ իրականացնելու համար անհրաժեշտ միջոցների հայթայթման հիմնական աղբյուրներից են:

ՎԱՐԿԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՆ – որոնք տրամադրվում են բանկերին, ապահովագրական ու ֆինանսական կազմակերպություններին:

ՎԱՐԿԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ – ըստ որի վարկային յուրաքանչյուր հաշիվ դասակարգված է համապատասխան հատկանիշներով, հետևյալ 5 խմբերում՝ ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի.

• Ստանդարտ են համարվում այն վարկերը, որոնք սպասարկվում են ըստ կազմված պայմանագրի և, որպես կանոն, դրանց բնորոշ են հետևյալ հատկանիշները՝ ա) վարկառուի ֆինանսական վիճակը կասկած չի հարուցում, բ) առկա է վարկը մարելու վարկառուի բավարար ունակությունը:

Բանկի կամ վարկային կազմակերպության տրամադրած ստանդարտ վարկերն ունեն վարկառուի կողմից հիմնական գումարի և տոկոսագումարների ետ վերադարձման հուսալի ապահովվածություն:

• Հսկվող են այն վարկերը, որոնք իրենց հատկանիշներով ամբողջությամբ համապատասխանում են ստանդարտ վարկերի սահմանմանը, սակայն դրանց հիմնական գումարի կամ դրա մի մասի մարումը և տոկոսագումարների վճարումը ուշացել է սահմանված ժամկետից մինչև 90 օր:

• Ոչ ստանդարտ վարկերին բնորոշ են հետևյալ հատկանիշները. ա) ժամկետում մարումը հնարավոր չէ վարկառուի դրամական միջոցների ոչ բավարար լինելու պատճառով, բ) վարկառուի ֆինանսական ոչ բարվոք վիճակի հետևանքով դրամական առաջնային աղբյուրները բավարար չեն, և այս դեպքում բանկը (վարկային կազմակերպությունը) պետք է դիմի երկրորդային աղբյուրներին, այդ թվում՝ գրավային միջոցի, գույքի վաճառքի, տրված վարկերի պայմանների վերանայման և այլն:

Ոչ ստանդարտ վարկերի դեպքում հիմնական գումարի կամ դրա մի մասի մարումը և տոկոսագումարների վճարումը ուշացել է սահմանված ժամկետից մինչև 90-180 օր:

• Կասկածելի վարկերն ունեն նույն հատկանիշները, ինչ-որ ոչ ստանդարտինն է, սակայն այն տարբերությամբ, որ վճարումը ձգձգվում է սահմանված ժամկետից 181-270 օր:

• Անհուսալի վարկերը դրանք դժվարությամբ ետ վերադարձվողներն են, որոնց գծով վճարումների ուշացումը կա-

տարվում է սահմանված ժամկետից 270 օր և ավելի, որը ոչ մի վարկատուի ձեռնտու չէ:

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ – ըստ որի վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք: Վարձակալության կարող են հանձնվել հողամասեր և մեկուսի բնական այլ օբյեկտներ, շենքեր, շինություններ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ և այլ գույք, որոնք օգտագործման ընթացքում չեն կորցնում իրենց բնական հատկությունները: Վարձակալության պայմանագրում պետք է նշվեն տվյալներ, որոնք թույլ են տալիս որոշակիորեն սահմանել այն գույքը, որը որպես վարձակալության օբյեկտ հանձնվում է վարձակալին: Պայմանագրում այդպիսի տվյալների բացակայության դեպքում վարձակալության օբյեկտի մասին պայմանը համարվում է չհամաձայնեցված, իսկ համապատասխան պայմանագիրը՝ չկնքված: Վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր:

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ – վարձատուն որոշակի վճարի կամ վճարների դիմաց վարձակալին է փոխանցում ակտիվի մի մասի (մասնավորապես հիմնական միջոցների) օգտագործման իրավունքը պայմանագրային ժամանակաշրջանի ընթացքում:

ՎԱՐՁԱՎՃԱՐ – ըստ որի, վարձակալը պարտավոր է ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար սահմանված վճարը: Վարձավճարը սահմանվում է վարձակալության հանձնված ամբողջ գույքի կամ դրա յուրաքանչյուր բաղկացուցիչ մասի համար. ա) պարբերաբար կամ միաժամանակ վճարվող որոշակի կայուն գումարով, բ) վարձակալված գույքն օգտագործելու արդյունքում ստացված արտադրանքի կամ եկամուտների համար սահմանված բաժնով, գ) վարձակալի կողմից որոշակի ծառայություններ մատուցելով, դ) վարձակալի կողմից պայմանագրով պայմանավորված գույքը վարձատուի սեփականությանը կամ վարձակալությանը հանձնելով, ե) վարձակալված գույքը բարելավելու համար պայմանագրով նախատեսված ծախսերը վարձակալի վրա դնելով: Կողմերը վարձակալության պայմանագրով կարող են նախատեսել վարձավճարի մատնանշված ձևերի համակցություն կամ դրա այլ ձևեր:

ՎԱՐՁԱՏՈՒ – կարող են լինել գույքը վարձակալության հանձնելու համար օրենքով կամ սեփականատիրոջ կողմից լիազորված անձինք: Գույքը վարձակալության հանձնելու իրավունքը պատկանում է դրա սեփականատիրոջը: Ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձատու կարող է լինել բանկը կամ օրենքով սահմանված կարգով լիցենզիա (թույլտվություն) ստացած մասնագիտացված կազմակերպությունը:

ՎԱՈՒՉԵՐ – սեփականաշնորհման չեկ կամ փաստաթուղթ է, որի տիրոջը իրավունք է տրվում անմիջական մասնակցություն ունենալու սեփականաշնորհվող կազմակերպության միջոցներին՝ բաժնեմասնակցության տեսքով: Այն գրավոր վկայագիր, հանձնարարագիր, երաշխիք է:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ – կառավարման եզրափակիչ գործառույթն է, առանց որի անհնար է գործնականորեն արդյունավետ իրականացնել կառավարման մյուս երեք գործառույթները, այդ թվում՝ պլանավորումը, կազմակերպումը և մոտիվացիան: Այն հանդես է գալիս որպես կազմակերպությունների կողմից իրենց առջև դրված նպատակներին հասնելու ապահովման գործընթաց:

Վերահսկողությունը տնտեսավարող սուբյեկտների արտադրական ու ֆինանսատնտեսական գործունեության անբաժանելի մասն է, որը պարտադիր իրականացվում է կառավարման բոլոր մակարդակներում ու օղակներում, և որի գլխավոր խնդիրը կազմակերպության ընթացիկ ու հեռանկարային գործունեության օպերատիվ կառավարումն է, առաջադրված պլանների և փաստացի ձեռք բերված արդյունքների համապատասխանության գնահատումը և, որ ամենակարևորն է, կազմակերպության առջև դրված հիմնական նպատակների, հատկապես գլխավոր նպատակի՝ առաքելության, իրականացման ապահովումը:

ՎԵՐԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ – մեկ ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագրով որոշված պայմաններով ապահովագրվողի նկատմամբ ունեցած իր բոլոր կամ մի շարք պարտավորությունների կատարման ռիսկի ապահովագրումն է՝ մեկ այլ ապահովագրողի մոտ (վերապահովագրող): Վերա-

պահովագրությունը համակարգ է, որով ապահովագրողները կարող են ընդլայնել ապահովագրության հիմնական սկզբունքն՝ իրենց ռիսկերը վերաբաշխելով:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ – ուղղված է արդյունքային (արդյունավետության) ցուցանիշների մակարդակի և դրանց աճի վրա ազդող գործոնների մեծության բացահայտմանը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԴԵՏԵՐՄԻՆԱՑՎԱԾ (ՄԱՆՐԱՄԱՍՆԵՑՎԱԾ) – օգտագործվում է գործոնային և հանրագումարային ցուցանիշների միջև առկա փոխկապվածությունն ուսումնասիրելու համար:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԴԻԱԳՆՈՍՏԻԿ – իրենից ներկայացնում է տիպիկ նախանշանների հիման վրա տնտեսական գործընթացների նորմալ ընթացքի խախտման էության բացահայտման միջոց: Օրինակ, եթե համախառն արդյունքի աճի տեմպը գերազանցում է պատրաստի արտադրանքի աճի տեմպին, ապա դա վկայում է անավարտ արտադրության մնացորդի աճի մասին: Նման նախանշանների իմացությունը թույլ է տալիս արագ և բավականին ճշտորեն տալ խախտումների բնութագիրը՝ առանց լրացուցիչ ժամանակ և միջոցներ պահանջող գործողությունների:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ – ներառում է տնտեսավարող սուբյեկտի այն բոլոր ծառայությունները, որոնք կապված են՝ պլանավորման, վերահսկման, արդյունավետ որոշումների ընդունման, ռազմավարության և տակտիկայի մշակման, շուկայավարման, տեխնիկայի և տեխնոլոգիայի բարելավման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման նպատակով:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ – սովորաբար սահմանափակվում են հաշվետվական տվյալների համեմատությամբ (փաստացի տվյալները պլանայինի, նախորդ տարիների տվյալների, այլ տնտեսավարող սուբյեկտների տվյալների հետ):

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ – իրականացվում է հաշվետու ժամանակաշրջանի համար (ամիս, եռամսյակ, տարի): Նրա էությունը կայանում է նրանում, որ ձեռնարկատիրական գործունեությունն ուսումնասիրվում է բազմակողմանիորեն՝ համապատասխան ժամանակահատվածի հաշվետվական տվյալների հիման վրա:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆ – իրականացվում է տնտեսավարող սուբյեկտի տնտեսական գործունեության ավարտից հետո: Այն օգտագործվում է պլանների վերահսկման, չօգտագործված պաշարների բացահայտման և գործունեության արդյունքների օբյեկտիվ գնահատման համար:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԺԻՆԱԼ – այն կառավարչական որոշումների արդյունավետության գնահատման և դրա հիմնավորման մեթոդ է, որը հիմնված է իրացումից հասույթի, ինքնարժեքի և շահույթի (վնասի) պատճառահետևանքային փոխկապվածության, և ծախսերը փոփոխունի և հաստատունի բաժանման վրա:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՄԻՋՏՆՏԵՍԱԿԱՆ – համեմատվում են երկու կամ ավելի համադրելի տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունքները: Դա հնարավորություն է տալիս բացահայտել առաջավոր փորձը, առկա պաշարները, թերությունները և դրա հիման վրա տալ դրանց գործունեության առավել արդյունավետ գնահատական:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՏՆՏԵՍԱԿԱՆ – ուսումնասիրում է տնտեսավարող սուբյեկտի և նրա ստորաբաժանումների ներքին գործունեությունը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՇՈՒԿԱՅԱՎԱՐՄԱՆ (ՄԱՐՔԵԹԻՆԳԻ) – ըստ որի ուսումնասիրվում է տնտեսավարող սուբյեկտի գործունեության արտաքին միջավայրի, հումքի և պատրաստի արտադրանքի շուկաների, մրցունակության առաջարկի և պահանջարկի, առևտրային ռիսկի, գնային քաղաքականության հետազոտությունն ու ուսումնասիրումը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ – ուսումնասիրում է տնտեսավարող սուբյեկտի սոցիալական և տնտեսական գործընթացների փոխհարաբերությունները, նրանց փոխազդեցությունը միմյանց ու դրանց գործունեության տնտեսական արդյունքների վրա:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ – օգտագործվում է ուսումնասիրվող երևույթների և գործընթացների միջև կախվածությունը հետազոտելու համար:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ – որով զբաղվում են տնտեսավարող սուբյեկտի տեխնիկական ծառայությունները (գլխավոր ինժեներ, գլխավոր տեխնոլոգ և այլն): Նրա էությունը կայանում է՝ տեխնիկական ու տնտեսական գործընթացների փոխազդեցության ուսումնասիրությունը և տնտեսավարող սուբյեկտի գործունեության տնտեսական արդյունքների վրա նրանց ազդեցության բացահայտումը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ – հետազոտում է բնապահպանական և տնտեսական գործընթացների փոխազդեցությունը՝ կապված շրջակա միջավայրի պահպանման և այդ ուղղությամբ կատարված ծախսերի հետ:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ – որի օգնությամբ ընտրվում է արտադրատնտեսական գործունեության առավել արդյունավետ ապահովման տարբերակը, և բացահայտվում են նյութական, աշխատանքային ու ֆինանսական առկա ռեսուրսների առավելագույն օգտագործման հաշվին՝ արտադրության արդյունավետության բարձրացման պահուստները:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ – օգտագործվում է հասարակական երևույթների համատարած ուսումնասիրման համար, տնտեսավարող սուբյեկտի ղեկավարման տարբեր մակարդակներում:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՕՊԵՐԱՏԻՎ – իրականացվում է անմիջապես տնտեսական գործընթացի ավարտից հետո կարճատև

ժամանակաընթացքում (հերթափոխ, օր, տասնօրյակ): Նպատակն է՝ օպերատիվ ձևով բացահայտել թերությունները և մշակել դրանց վերացման միջոցառումների ծրագիր:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ – ըստ որի հիմնական ուշադրությունը բևեռվում է տնտեսավարող սուբյեկտի գործունեության ֆինանսական արդյունքներին, ֆինանսական պլանների կատարմանը, սեփական և փոխառու կապիտալների նպատակային օգտագործմանն ու տարբեր տեսակի շահութաբերությունների բարձրացմանը, ինչպես նաև ֆինանսական վիճակի և վճարունակության բարելավմանը:

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ԾԱԽՍԵՐ – ձևավորվում են՝ տնային տնտեսությունների, տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև կոլեկտիվ և անհատական ծառայությունների ու ապրանքների համար կատարված պետական հիմնարկների վերջնական սպառման ծախսերից: Այսպիսի խմբավորումը ցույց է տալիս, թե ով է ֆինանսավորում վերջնական սպառման ծախսերը:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ – վիճակագրական նյութերի ամփոփման և մշակման թվային արդյունքների առավել իրական, ակնառու և սիստեմավորված (համակարգված) շարադրման ձև է:

Վիճակագրական աղյուսակների արժանիքներն են՝ դրանցում բովանդակվող տվյալների արտահայտիչ և ակնառու լինելն ու ամբողջականությունը: Աղյուսակներում բացակայում են համանման ցուցանիշների վերաբերյալ միևնույն տեղեկությունների կրկնողությունները, որպիսիք կարող են լինել տեքստային շարադրանքում:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՏԱՐՐԵՐ – արտաքինից վիճակագրական աղյուսակն իրենից ներկայացնում է սյունակների և տողերի համախմբում, ուր տեղադրվում են ուսումնասիրության ենթակա թվերը: Յուրաքանչյուր տողում և սյունակում գտնվող ցուցանիշների նշանակությունը պարզաբանվում է վերնագրերով, որոնք զետեղվում են աղյուսակի ծախ մասում (տողերի անվանումները) և վերևի մասում (սյունակների անվանումները): Բացի այդ, յուրաքանչյուր վիճակագրական աղյուսակ պետք է

ունենա ընդհանուր վերնագիր և համապատասխան համարակալում, որը դրվում է վերնագրից վերև:

Սովորաբար աղյուսակները բաղկացած են վիճակագրական ենթակայից և ստորոգյալից, որոնցում կողմնային (ըստ տողերի) վերնագրերն օգտագործվում են ենթակայի իմաստավորման, իսկ վերին (ըստ սյուների) վերնագրերը՝ ստորոգյալի իմաստավորման համար: Սակայն, երբեմն, ուսումնասիրության էությունից ելնելով, ենթակայի և ստորոգյալի իմաստավորումներն իրենց տեղերը փոխում են:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ – տնտեսագիտական հետազոտությունների գործընթացում կիրառվում են վիճակագրական աղյուսակների տարբեր տեսակներ: Դրանք տարբերվում են իրենցում ներառվող ցուցանիշների (համակցությունների) քվով, ենթակայի ու ստորոգյալի տարբեր կառուցվածքով և այլն:

Կիրառվում են վիճակագրական աղյուսակների տարբեր տեսակներ: Դրանցից առավել տարածված է աղյուսակի այն տեսակը, որը կազմվում է ենթակային բնորոշ համակարգով: Ուստի, նայած ենթակայի կառուցվածքին, տարբերում են վիճակագրական աղյուսակների երեք տեսակներ՝ *պարզ, խմբային և կոմբինացված:*

Վիճակագրական *պարզ* աղյուսակների ենթակայում պարզապես թվարկվում են վիճակագրական դիտարկման ենթարկված ինչ-որ օբյեկտներ կամ տարածքային միավորներ:

Վիճակագրական *խմբային* աղյուսակների ենթական ներառում է ուսումնասիրվող օբյեկտի միավորների խմբերը՝ ըստ մեկ էական հատկանիշի: Խմբային աղյուսակների պարզագույն տեսակ են այնպիսիները, որոնցում ներկայացված են բաշխման շարքերը: Միաժամանակ, խմբային աղյուսակների ավելի բարդ տեսակ են այն աղյուսակները, որոնցում ստորոգյալը այս կամ այն խմբի մեջ մտնող միավորների թվի հետ միասին ներառում է նաև ենթակայի խմբերի բնութագրմանը վերաբերող մի շարք ուրիշ ցուցանիշներ:

Վիճակագրական *կոմբինացված* աղյուսակների կազմման դեպքում ենթական պետք է ներառի մեկ հատկանիշով պայմանավորված միավորների խմբեր, որոնք այնուհետև կարող են բաժանվել առանձին ենթախմբերի՝ ըստ մեկ կամ մի քանի

այլ հատկանիշների: Կոմբինացված աղյուսակների պարզագույն տեսակներից են այնպիսիները, որոնք ցույց են տալիս միայն համակցության միավորների բաշխումը՝ ըստ երկու կամ ավելի հատկանիշների: Օրինակ, այդպիսիք են այն աղյուսակները, որոնք ցույց են տալիս բնակչության բաշխումը՝ միաժամանակ ըստ սեռի և տարիքի, կամ՝ ըստ զբաղմունքների և կրթության մակարդակի:

Ավելի բարդ են այն վիճակագրական աղյուսակները, որոնք ներառում են կոմբինացված խմբավորում ենթակայում և մի շարք ցուցանիշներ՝ ստորոգյալում:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ – խնդիրն է՝ հանրագումարի բերել, համակարգել (սիստեմավորել) և ընդհանրացնել դիտարկման արդյունքներն այնպես, որպեսզի հնարավոր դառնա հայտնաբերել ամբողջությամբ վերցրած վիճակագրական համակցության բնորոշ գծերը և երևան հանել ուսումնասիրվող երևույթների ու գործընթացների օրինաչափությունները: Տարբերում են ամփոփման երկու հասկացություն. ամփոփում՝ բառի լայն իմաստով, և ամփոփում՝ բառի նեղ իմաստով: *Լայն իմաստով ամփոփում ասելով* հասկացվում է համատարած երևույթների և գործընթացների հետ կապված գործառնությունների ավելի ընդգրկուն շրջանակ: Այն իրենում ներառում է ուսումնասիրվող օբյեկտի միավորների բաժանումն առանձին խմբերի, ցուցանիշների համակարգի օգնությամբ այդ խմբերի բնութագրումը, ինչպես նաև արդյունքների ներկայացումը վիճակագրական շարքերի, աղյուսակների և գծապատկերների տեսքով: *Բառի նեղ իմաստով* ամփոփում ասելով հասկացվում է խմբային և ընդհանուր գումարների հաշվումը:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՆԸՆԴՀԱՏ ԴԻՏԱՐԿՈՒՄ – հասկացվում է այնպիսի դիտակումը, որի ժամանակ փաստերի բացահայտումը և գրանցումը կատարվում է դրանց առաջացմանը համընթաց: Անընդհատ դիտարկման դեպքում փաստերի գրանցումը ընթանում է իրադարձություններին զուգահեռ և այդ առումով էլ այն կատարվում է մշտապես: Այդպես են կատարվում, օրինակ, քաղաքացիական կացության ակտերի (ծննդի և մահվան, ամուսնության և ամուսնալուծության) գրանցումը, արտադրանքի թողարկման, առաքման և բեռների ստացման հաշվառումը:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ – որի դեպքում պետական վիճակագրական մարմինների կամ ուրիշ կազմակերպությունների ներկայացուցիչները տեղեկություններ են ստանում դիտարկվող օբյեկտի ենթակայության միավորներն անձամբ հաշվելու, չափելու, կշռելու և այլ միջոցներով: Դիտարկման այդպիսի եղանակի օրինակ կարող է ծառայել այգիների և հատապտղանոցների հաշվեգրումը, որի դեպքում գրանցողները իրավունք ունեն հաշվեգրման թերթիկներում գրանցել յուրաքանչյուր տնտեսության ունեցած պտղատու ծառերի քանակը՝ դրանք հաշվելուց հետո, այլ ոչ թե սեփականատիրոջ բանավոր ասածի հիման վրա:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԲԱՇԽՄԱՆ ՇԱՐՔԵՐ – այն շարքերն են, որոնք բնութագրում են համակցության միավորների բաշխումն ըստ մի որևէ հատկանիշի, և որի տարատեսակները դասավորված են որոշակի կարգով:

Բաշխման շարքերը կարող են կազմվել ըստ ատրիբուտիվ, կամ էլ ըստ քանակական հատկանիշների, և դրան համապատասխան էլ տարբերում են դրանց երկու տեսակ՝ *ատրիբուտիվ և վարիացիոն շարքեր*:

Ըստ *ատրիբուտիվ* հատկանիշների, դրանք այն բաշխման շարքերն են, որոնք բնութագրում են տվյալ երևույթի հատկությունը, որակը և չունեն քանակական արտահայտություն, խմբավորելիս ստանում են տվյալներ այն մասին, թե որքան միավորներ ունեն ատրիբուտիվ հատկանիշի այս կամ այն տարատեսակները: Օրինակ, կազմակերպությունում աշխատողներից որքա՞նն են բանվորները, ծառայողները, ինժեներատեխնիկական աշխատողները, բանվորներից քանի՞սն են խառատներ, փականագործներ և այլն:

Իրենց հերթին վարիացիոն շարքերը դրանք ուսումնասիրվող երևույթի քանակական հատկանիշով, փոփոխվող չափեր ու թվային արժեք ունեցող միավորների կարգավորված շարքեր են:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ (ԳՐԱՖԻԿՆԵՐ) – վիճակագրության մեջ գծապատկերներ են կոչվում թվային բացարձակ մեծությունների և նրանց հարաբերակցությունների պայմանական պատկերումները տարբեր երկրաչափական գծապատկերների՝ կետերի, գծերի և այլնի տեսքով:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ – տարբերվում են ըստ բովանդակության և ըստ կառուցման եղանակի: Վիճակագրական գծապատկերները բաժանվում են հետևյալ տեսակների. 1) տարբեր օբյեկտներին կամ տարածաշրջաններին վերաբերող համանուն ցուցանիշների համեմատման գծապատկերներ, 2) վարիացիոն շարքերի գծապատկերներ, 3) կառուցվածքի (կազմի) գծապատկերներ, 4) փոխադարձաբար կապված ցուցանիշների գծապատկերներ, 5) դինամիկայի (ժամանակի մեջ կատարվող փոփոխություններ) գծապատկերներ, 6) պլանի կատարման գծապատկերներ:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿ ՇԱՐՔԵՐ – այն շարքերն են, որոնք բնութագրում են հասարակական երևույթների չափերի փոփոխությունը որևիցե ժամանակամիջոցում:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ – գրանցման ենթակա հատկանիշների և ցուցանիշների ցանկն է: Այլ խոսքով ասած, դիտարկման ծրագիրն այն հարցերի ցանկն է, որոնց պատասխանները պետք է ստացվեն դիտարկման ենթակա յուրաքանչյուր միավորի վերաբերյալ:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ – իրականացվում է մի շարք մեթոդների օգնությամբ, որոնցից կարևորագույնը վիճակագրական խմբավորումների մեթոդն է, որի օգնությամբ առանձնացվում են որակապես համասեռ սոցիալ-տնտեսական տիպերը, ըստ էական հատկանիշների բնորոշ խմբերը և ենթախմբերը:

Վիճակագրական դիտարկման նյութերն ամփոփելիս հաջողությամբ կիրառվում են աղյուսակային և գծապատկերային մեթոդները:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆ – ըստ որի վիճակագրական ամեն մի դիտարկում անցկացվում է նախապես և մանրամասնորեն մշակված պլանով: Վերջինիս միջոցով կարգավորվում են ծրագրամեթոդական և կազմակերպչական հարցերի լուծումները: *Ծրագրամեթոդական հարցերին* վերաբերում են՝ դիտարկման նպատակի և խնդիրների սահմանումը, դիտարկման օբյեկտի և միավորի որոշումը, դիտարկման ծրագրի

մշակումը, ինչպես նաև դիտարկման տեսակի և եղանակի ընտրությունը: *Կազմակերպչական հարցերին* վերաբերում են՝ դիտարկման տեղի, ժամանակի և ժամկետների սահմանումը, դիտարկումներն անցկացնելու համար պատասխանատու անձանց և կազմակերպությունների քանակը որոշելը, կադրերի ընտրությունը, ուսուցումն ու հրահանգավորումը, դիտարկման ձևերի և մյուս նյութերի բազմացումն ու ուղարկումը, նյութերի հանձնման (ներկայացման) ժամկետների սահմանումը, ինչպես նաև վիճակագրական դիտարկման նախապատրաստման, կազմակերպման և անցկացման հետ կապված մյուս պրակտիկ հարցերը:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՍԽԱԼՆԵՐ – դիտարկման ժամանակ ստացված վիճակագրական տվյալների անճշտությունները և սխալները ընդունված են անվանել դիտարկման սխալներ: Դիտարկման սխալները լինում են՝ ա) գրանցման սխալներ, բ) ներկայացուցչության սխալներ:

Գրանցման սխալները կարող են լինել ինչպես համատարած, այնպես էլ ոչ համատարած դիտարկման ժամանակ՝ *պատահական և սիստեմատիկ* տեսքով: *Պատահական սխալներ* կարող են թույլ տրվել ինչպես հարցման ենթարկվողների կողմից նրանց պատասխաններում, այնպես էլ՝ գրանցողների կողմից բլանկները լրացնելիս (օրինակ վրիպակները): *Սիստեմատիկ սխալներն* իրենց հերթին կարող են լինել կանխամտածված և ոչ կանխամտածված:

Կանխամտածված սխալները (ավելի ճիշտ՝ գիտակցված ավանդական աղավաղումները) ստացվում են այն երևույթի հետևանքով, երբ հարցման ենթարկվողները, իմանալով գործի իրական վիճակը, գրանցողին գիտակցաբար հաղորդում են սխալ տվյալներ: Տվյալների կանխամտածված աղավաղմանը վերաբերում են հավելագրումները, աչքակապությունը, որոնք թույլ են տրվում որոշ անբարեխիղճ աշխատողների (ղեկավարների) կողմից հաշվետվությունը կազմելիս: Ոչ կանխամտածված սիստեմատիկ սխալները թույլ են տրվում ոչ դիտավորյալ առումով:

Ներկայացուցչության սխալները առաջանում են միայն ոչ համատարած դիտարկման ժամանակ: Դրանց պատճառն այն է, որ ուսումնասիրվող համակցության ընտրված և հետազոտ-

ված մասը բավարար ճշգրտությամբ չի արտացոլում ամբողջ համակցության կազմը:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԵՂԱՆԱԿ – որի դեպքում անհրաժեշտ տվյալները ստանում են տարբեր փաստաթղթեր օգտագործելու հիման վրա: Դիտարկման այդ եղանակը հաճախ անվանում են հաշվետու, քանի որ այն գլխավորապես կիրառվում է տարբեր տեսակի ընկերությունների, կազմակերպությունների, հիմնարկությունների կողմից սկզբնական հաշվառման փաստաթղթերի հիման վրա վիճակագրական հաշվետվությունը լրացնելիս: Դիտարկման փաստաթղթային եղանակին բնորոշ օրինակ է՝ բնակչության բնական շարժի վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով պետական վիճակագրության մարմինների կողմից քաղաքացիական կացության ակտերի երկրորդ օրինակների օգտագործումը:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ – ա) ըստ որի, հավաքվում են սկզբնական վիճակագրական նյութերը և մեծ թվերի օրենքին համապատասխան, հնարավորություն է ընձեռնվում ուսումնասիրվող հասարակական երևույթների ու գործընթացների վերաբերյալ ստանալ ստույգ, գիտականորեն իմաստավորված սկզբնական տվյալներ, որոնց հետագա մշակումը թույլ է տալիս բացահայտել վիճակագրական օրինաչափությունները, բ) դա սոցիալ-տնտեսական երևույթների և գործընթացների վերաբերյալ պլանաչափ ու գիտականորեն կազմակերպված համատարած տեղեկատվության հավաքելն է:

Վիճակագրական դիտարկումը մեծ, բարդ և աշխատատար գործ է, որը սովորաբար կատարվում է շատ աշխատողների ուժերով: Այն բաղկացած է նախապատրաստական աշխատանքներից, տվյալների անմիջական հավաքումից և դրանց նկատմամբ վերահսկողությունից:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ – վիճակագրական դիտարկման հաջողությունն ապահովելու համար կարևոր է ճիշտ որոշել ոչ միայն ծրագրամեթոդական, այլև՝ կազմակերպչական հարցերը: Տեղեկությունների հավաքման աշխատանքը հաջող անցկացնելու համար անհրաժեշտ միջոցառումների ցանկը կոչվում է վիճակագրական դիտարկ-

ման կազմակերպչական պլան, և վերջինիս հարցերի մեջ կարևոր նշանակություն ունի այն ժամանակի ճշգրիտ սահմանումը, որին վերաբերում են գրանցվող տեղեկատվության տվյալները: Անհրաժեշտ է նաև սահմանել այն ժամանակը, որի ընթացքում պետք է անցկացվի վիճակագրական դիտակում, իսկ այդ կապակցությամբ տարբերում են դիտարկման օբյեկտիվ, սուբյեկտիվ ժամանակ և կրիտիկական պահ:

Այն ժամանակը, որին վերաբերում են գրանցվող տեղեկատվական տվյալները, կոչվում է դիտարկման *օբյեկտիվ ժամանակ*:

Դիտարկման *սուբյեկտիվ ժամանակն* այն ժամանակաշրջանն է, որի ընթացքում կատարվում է գրանցումը:

Ժամանակի այն պահը (օր, ժամ), որին հարմարեցված են տեղեկատվական տվյալները, կոչվում է դիտարկման *կրիտիկական պահ*:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴՎՈՂ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐ – ընդհանուր առմամբ խմբավորումներ կատարում են գլխավորապես սկզբնական վիճակագրական տեղեկատվական տվյալների հիման վրա: Սակայն այդպիսի խմբավորումների հետ միասին վիճակագրության մեջ կիրառվում են արդեն խմբավորված տեղեկատվական տվյալների հիման վրա կատարվող խմբավորումներ, այսպես կոչված՝ երկրորդվող, որոնց սովորաբար դիմում են այն դեպքերում, երբ նախկինում կատարված խմբավորումների կամ խմբերի թվի, կամ տվյալների համեմատելիության տեսանկյունից՝ չեն բավարարում հետազոտման նպատակներին:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՎՈՂ ԴԻՏԱՐԿՈՒՄ – որի դեպքում փաստերի, իրադարձությունների գրանցումը կատարվում է կանոնավոր կերպով՝ որոշակի ժամանակահատվածներից հետո, կամ երբեմն ըստ անհրաժեշտության:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ – ուսումնասիրվող օբյեկտի միավորներն ըստ նրանց համար էական հատկանիշների և համասեռ խմբերի բաժանելն է: Վիճակագրական խմբավորումները հանդես գալով որպես վիճակագրական ամփոփման առաջին քայլ, թույլ են տալիս սկզբնական տեղեկատվական տվյալները մշակել այնպես, որպեսզի ուսումնասիրվող երևույթ-

ների բոլոր էական գծերն ու առանձնահատկությունները ստանան հստակ արտահայտվածություն: Վիճակագրական խմբավորումները լինում են *տիպոլոգիական, կառուցվածքային և երկրորդվող*:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐ – այն խմբավորումներն են, որոնք բնութագրում են միատիպ համակցության միավորների բաշխում ըստ որոշակի հատկանիշների: Դրանց են վերաբերում, օրինակ՝ բանվորների խմբավորումները՝ ըստ տարիքի, աշխատանքային ստաժի, աշխատավարձի և այլն: Մի շարք ժամանակաշրջանների (կամ պահերի) համար վերցված կառուցվածքային խմբավորումները ցույց են տալիս ուսումնասիրվող երևույթների կառուցվածքի փոփոխությունները: Կառուցվածքային խմբավորումը հնարավոր է կատարել ինչպես մեկ, այնպես էլ ըստ մի քանի խմբավորման հատկանիշների՝ նրանց համապատասխան զուգակցմամբ, կոմբինացմամբ: Օրինակ, որևիցե կազմակերպության բանվորների կազմը վերլուծելու համար նպատակահարմար է խմբավորում կատարել ոչ միայն ըստ առանձին վերցրած հատկանիշների (տարիք, աշխատանքային ստաժ, որակավորում և այլն), այլև այդպիսի հատկանիշների զուգակցմամբ (ըստ տարիքի և որակավորման, որակավորման և աշխատավարձի):

Կառուցվածքային խմբավորումների կազմումը հնարավոր է ինչպես որակական, այնպես էլ քանակական հատկանիշների հիման վրա: Ըստ որակական հատկանիշի խմբավորելիս, խմբերն իրարից տարբերվում են ոչ թե հատկանիշի մեծությամբ, այլ բնույթով: Քանակական հատկանիշների հիման վրա կառուցվածքային խմբավորումներ կազմելիս անհրաժեշտ է որոշել խմբերի օպտիմալ թիվը և միջակայքերի մեծությունը: Մաթեմատիկական վիճակագրության մեջ առաջարկվում է խմբերի թվաքանակի որոշման հետևյալ բանաձևը՝

$$K = 1 + 3{,}332 \lg N$$

որտեղ՝

K-ն խմբերի թվաքանակն է,

N-ը ուսումնասիրվող ցուցանիշի (համակցության) տարբերակների թիվն է:

Խմբերի միջակայքերը կարող են լինել *հավասար և անհավասար*:

Հավասար միջակայքերի կիրառմամբ խմբավորման դեպքում միջակայքի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$h = \frac{X_{max} - X_{min}}{K},$$

որտեղ՝

h-ը միջակայքի մեծությունն է,

X_{max}-ը ուսումնասիրվող ցուցանիշի (հատկանիշի) առավելագույն մեծությունն է,

X_{min}-ը ուսումնասիրվող ցուցանիշի (հատկանիշի) նվազագույն մեծությունն է,

Անհավասար միջակայքերի կիրառմամբ խմբավորման դեպքում միջակայքի մեծությունն ընտրվում է կամայական:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄ – որի դեպքում հաշվառման և գրանցման ենթակա են ուսումնասիրվող համակցության բոլոր միավորները: Համատարած դիտարկման օրինակներ են՝ մարդահամարները, հատապտղային տնկարկների ու խաղողի այգիների հաշվեգրումները և այլն:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ – կարող է կատարվել բանավոր և գրավոր ձևով: Բանավոր հարցման դեպքում հատուկ նախապատրաստված աշխատողները (գրանցողները, հաշվարարները) հարցման են ենթարկում համապատասխան անձանց և նրանց ասածի հիման վրա սահմանված բլանկներում գրանցում են անհրաժեշտ տեղեկատվությունները:

Գրավոր հարցման դեպքում բլանկները բաժանվում կամ ուղարկվում են հարցման ենթակա անձանց, որոնք էլ իրենց հերթին լրացնում են դրանք: Իսկ վիճակագրական մարմինների ներկայացուցիչները միայն հրահանգավորում են հարցման ենթարկվող անձանց և լրացված բլանկները ստանալիս վերահսկում են տեղեկատվության լրիվությունը և ճշտությունը: Այս եղանակը երբեմն անվանում են նաև *ինքնագրանցման* եղանակ:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ – որքանով էլ որ ձևակերպված լինեն վիճակագրական դիտարկման ծրագրի հարցերը, այնուհանդերձ, բոլոր պահանջների ավելի մանրազնին և ճիշտ կատարումն ապահովելու համար, այդ ծրագրին կից կազմում են *գրավոր ցուցումներ ու պարզաբանումներ (հրահանգներ)*:

Դրանցում շարադրում են վիճակագրական դիտարկման ինչպես ծրագրամեթոդական, այնպես էլ՝ պլանակազմակերպչական կողմերի հետ կապված հարցերը, այն է՝ վիճակագրական հետազոտության նպատակի և խնդիրների վերաբերյալ, դիտարկման օբյեկտի և միավորի վերաբերյալ, դիտարկումը անցկացնելու ժամանակի և ժամկետների վերաբերյալ, դիտարկման նյութերը ձևակերպելու և դրանք վերադաս կազմակերպություններին ներկայացնելու ժամկետների վերաբերյալ հարցերը և այլն:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՁԵՎԵՐ – վիճակագրական ձև է կոչվում այն հատուկ փաստաթուղթը, որում գրանցվում են դիտարկման ծրագրի հարցերին տրված պատասխանները: Տարբերում են վիճակագրական ձևերի երկու համակարգ՝ *քարտային* և *ցուցակային*:

Քարտային համակարգի դեպքում յուրաքանչյուր քարտ ձև նախատեսված է դիտարկման մեկ միավորի և նրա հատկանիշների գրանցման համար:

Ցուցակային համակարգի դեպքում յուրաքանչյուր ձևում գրանցվում են դիտարկման մի քանի միավորների մասին տեղեկություններ: Ցուցակային համակարգի օրինակ կարող է ծառայել համատարած մարդահամարի թերթիկները, որոնցից յուրաքանչյուրը նախատեսված է երկու անձի և նրանց բնութագրող հատկանիշների գրանցման մասին:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴ – հիմնվում է վիճակագրական շարքերի ուղղահայաց, հորիզոնական և համեմատական վերլուծության վրա:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՔԵՐ – սկզբնական վիճակագրական նյութերի մշակման և սիստեմավորման հետևանքով ստացվող այն թվային ցուցանիշների շարքերն են, որոնք բնութագրում են ուսումնասիրվող երևույթների ու գործընթացների առանձին

կողմերը կամ նրանց փոփոխությունը որոշակի ժամանակաընթացքում:

Վիճակագրական շարքերն ըստ իրենց բովանդակության լինում են երկու տեսակ՝ *բաշխման շարքեր և դինամիկայի շարքեր*:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՉ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄ – այն դիտարկումն է, որի դեպքում գրանցման են ենթակա ուսումնասիրվող համակցության ոչ բոլոր միավորները: Այն ստորաբաժանվում է հետևյալ տեսակների՝ հիմնական համակցության դիտարկում, անկետային և ընտրանքային դիտարկում: Հիմնական համակցության դիտարկումը ոչ համատարած դիտարկման այն տեսակն է, որի դեպքում օբյեկտի միավորների ամբողջ համակցությունից դիտարկման է ենթարկվում նրա այն մասը, որում ուսումնասիրվող հատկանիշի ծավալը կազմում է նրա ընդհանուր ծավալի ճնշող կամ գերակշռող բաժինը: *Դիտարկման անկետային տեսակը* հանգում է նրան, որ անհրաժեշտ տվյալներն ստացվում են այնպիսի հատուկ հարցաթերթիկների (անկետաների) ուղարկման միջոցով, որոնց լրացումը և վերադարձնելը հիմնված են կամավոր սկզբունքների վրա: *Ընտրանքային* կոչվում է ոչ համատարած դիտարկման այն տեսակը, որի դեպքում ամբողջ համակցությունը բնութագրելու նպատակով հետազոտման է ենթարկվում նրա որոշ մասը, որը վերցվում է որոշակի կանոններով կատարվող ընտրանքով:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ – ըստ որի, վիճակագրական օրինաչափությունների և փոխադարձ կապերի բացահայտման գործընթացում լայնորեն կիրառվում են մի շարք վիճակագրական մեթոդներ, որոնք թույլ են տալիս ստանալու ընդհանրացնող ցուցանիշներ, որոնց օգնությամբ կատարվում են բացահայտված օրինաչափությունների չափում և քանակական գնահատում:

Այդպիսի ընդհանրացնող ցուցանիշներին վերաբերում են բացարձակ և հարաբերական մեծությունները, միջին մեծությունները, վարիացիայի ցուցանիշները, ուսումնասիրության ենթակա ցուցանիշների միջև կապի սերտության մեծությունները, ժամանակի մեջ հասարակական երևույթների փոփոխության ցուցանիշների ինդեքսները:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԻՊՈԼՈԳԻԱԿԱՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐ – այն խմբավորումներն են, որոնք իրենց էությամբ հանգեցնում են սոցիալ-տնտեսական տիպերի առանձնացմանը: Այդպիսի խմբավորումները լայնորեն կիրառվում են տարբեր հասարակական երևույթներն ուսումնասիրելիս, և այստեղ առաջին հերթին նշենք բնակչության խմբավորումներն ըստ սոցիալական հատկանիշի, օրինակ՝ ըստ դասակարգերի: Տիպոլոգիական խմբավորումների հիման վրա տրվում է նաև տնտեսությունների սոցիալ-տնտեսական տարբեր տիպերի գործունեության արդյունավետության համեմատական բնութագիրը:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ – սոցիալ-տնտեսական երևույթների և գործընթացների քանակական բնութագիրն է որակական որոշակիության պայմաններում, որն անմիջականորեն կապված է ուսումնասիրվող երևույթի կամ գործընթացի բովանդակության և նրա էության հետ:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ – 1) վիճակագրությունը ուսումնասիրում է հասարակական երևույթների և գործընթացների քանակական կողմը տեղի և ժամանակի կոնկրետ պայմաններում, 2) վիճակագրությունն ուսումնասիրում է հասարակական կյանքի համատարած երևույթները, այսինքն՝ առանձին միավորների մեծ թվից կազմված համակցությունների քանակական կողմը, 3) վիճակագրության կողմից ուսումնասիրվող հասարակական երևույթների համակցություններն ունեն միավորների որակական համասեռություն և ուսումնասիրվող հատկանիշների տատանում:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ – քննարկում է վիճակագրական բոլոր տեսակի կատեգորիաները, ինչ-պես նաև՝ այն սկզբունքները, կանոններն ու մեթոդները, որոնք ընդհանուր են ցանկացած հասարակական երևույթների քանակական կողմի վիճակագրական ուսումնասիրության համար:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ – ելնելով իր առարկայական բնույթից և հիմնական առանձնահատկություններից, վիճակագրությունը մշակում է հետազոտությանը հատուկ մասնագի-

տական հնարքներ և եղանակներ, որոնք ամբողջությամբ կազմում են վիճակագրական մեթոդաբանությունը:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԻՋԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ – մի ընդհանրացնող ցուցանիշ է, որը բնութագրում է համասեռ համակցության միավորի հաշվով տատանվող հատկանիշի տիպային մակարդակը՝ ժամանակի և տեղի կոնկրետ պայմաններում: Միջին մեծությունն արտացոլում է այն ընդհանուրը, որը թաքնված է համասեռ համակցության յուրաքանչյուր միավորի մեջ: Օրինակ՝

$$\text{Մեկ հեկտարի միջին բերքատվություն} = \frac{\text{Ընդհանուր բերքը (համախառն բերք)}}{\text{Ցանքատարածությունը (հեկ.)}}$$

$$\text{Բանկում ավանդների միջին չափը (ավանդների միջին մնացորդը այս կամ այն ամսաթվին)} = \frac{\text{Բոլոր ավանդների ընդհանուր գումարը}}{\text{Ավանդների թիվը}}$$

Միջին մեծությունն իմաստավորելու համար կատարենք նշանակումներ: Այսպես՝ առանձին բանվորների արտադրած արտադրանքը նշանակենք x_1, x_2 ... x_n-ով, բանվորների թվաքանակը՝ n-ով, իսկ միջին արտադրանքը՝ X-ով: Տվյալ դեպքում որոշիչ ցուցանիշ է համարվում բոլոր բանվորների ընդհանուր արտադրանքը, որը հավասար է $x_1 + x_2 + \ldots + x_n$:

Որտեղից՝

$$x = \frac{x_1 + x_2 + \ldots + x_n}{n}$$

կամ ավելի պարզ ձևով գրված՝

$$x_{պ} = \frac{\sum x_i}{n}, \ (i = 1, 2, 3, \ldots, n):$$

որտեղ Σ-ն գումարման նշան է:

Այս բանաձևով հաշվարկված միջինը կոչվում է պարզ միջին թվաբանական: Այն ստացվում է՝ միջինացվող ցուցանիշի բոլոր տարբերակների պարզ գումարման և ստացված գումարը բոլոր տարբերակների ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ – ուսումնասիրության օբյեկտ են համարվում հասարակությունը, հասարակական երևույթները և գործընթացները:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ – ծագել է լատիներեն "status" (ստատուս) բառից, որը նշանակում է. 1) իրերի, իրադարձությունների *վիճակ կամ դրություն*, 2) հասարակական կյանքի տարբեր երևույթների և գործընթացների վերաբերյալ տվյալների հավաքման ու ընդհանրացման գծով պրակտիկ գործունեություն, 3) հասարակական երևույթները և գործընթացները բնութագրող թվային ցուցանիշների համակցություն:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ – ուսումնասիրում է տնտեսության բնագավառում տեղի ունեցող երևույթների ու գործընթացների քանակական կողմը և մշակում է տվյալ տնտեսությունը, որպես մի միասնական ամբողջություն, ուսումնասիրելու տնտեսական ցուցանիշների համակարգն ու մեթոդները:

ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ – իրենից ներկայացնում է վիճակագրական հաշվետվություն, որում համակարգված տեսքով արտացոլվում են ամփոփ տվյալներ՝ հաշվետու ժամանակաշրջանում (եռամսյակ, տարի) այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ ՀՀ արտաքին տնտեսական գործառնությունների մասին: Տնտեսական բնույթի գործառնությունները, որոնք կատարվում են ՀՀ ռեզիդենտների և ՀՀ ոչ ռեզիդենտների միջև, իրականացվում են ապրանքների և ծառայությունների, եկամուտների հոսքերի, ընթացիկ անհատույց փոխատվությունների տեսքով, ինչպես նաև գործառնություններ, որոնք կապված են ֆինանսական պահանջների և պարտավորությունների հետ: Վճարային հաշվեկշիռը կազմված է երկու հիմնական հաշիվներից՝ ընթացիկ, կապիտալի ու ֆինանսական: Ընթացիկ հաշվում գրանցվում են ապրանքների, ծառայությունների, եկամուտների և ընթացիկ անհատույց փոխատվությունների հետ կատարված գործառնությունները, իսկ կապիտալի և ֆինանսական հաշվում՝ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների շարժը, ինչպես նաև անհատույց փոխատվությունների գծով կապիտալը: Մեթոդաբանական առումով, ընթացիկ հաշվի մնացորդը բացարձակ մեծությամբ և հակա-

ռակ նշանով պետք է հավասար լինի կապիտալի և ֆինանսական հաշվի մնացորդին, սակայն, իրականում միշտ առաջանում են տարբերություններ, ինչը միջազգային պրակտիկայում ընդունված է անվանել «սխալների և բացթողումների» հոդված: Վճարային հաշվեկշիռը կառուցվում է հաշվապահական հաշվառման հետևյալ սկզբունքով. ամեն մի գործառնություն գրանցվում է կրկնակի՝ որևէ հաշվի կրեդիտում և մեկ այլ հաշվի դեբետում, ընդ որում ակտիվային հաշվի ավելացումը գրանցվում է դեբետում, իսկ նվազումը կրեդիտում, պասիվային հաշվի ավելացումը գրանցվում է կրեդիտում, իսկ նվազումը՝ դեբետում: Կրկնակի գրանցման մեթոդի կիրառման պատճառն այն է, որ ըստ դրա, որպես կանոն, կատարվող գործառնություններն իրենցից ներկայացնում են տնտեսական արժեքների փոխանակում:

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏ – միջոց է, որը հնարավորություն է տալիս.

- կատարել վճարումներ առևտրի և ապասարկման կետերում ապրանքների կամ ծառայությունների դիմաց՝ առանց ունենալու մեծ քանակով կանխիկ գումար:
- ստանալ կանխիկ միջոցներ բանկի բաժանմունքներից կամ բանկոմատներից:
- բանկոմատների միջոցով կատարել կոմունալ վճարումներ:
- իրականացնել ինտերնետային առևտուր:
- քարտի կորստի կամ վնասվելու դեպքում (հրդեհից, ջրից և այլն) խուսափել դրամական միջոցների կորստից, քանի որ այդ դրամական միջոցները գտնվում են բանկային հաշվի վրա:
- շահավետ պայմաններով օգտվել նաև այլ ֆինանսական ծառայություններից և այլն:

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ – Վճարային քարտն անձնավորված միջոց է: Դա նշանակում է, որ բանկը քարտ տրամադրելիս իրականացնում է վճարային քարտի հեղինակականացում: Այսինքն՝ վճարային քարտի վրա նշվում են հաճախորդի անհատական տվյալները (օրինակ՝ անունը, ազգանունը, բանկի անվանումը, քարտի տեսակը և այլն), որոնք հնարավորություն են տալիս նույնականացնել քարտը, ինչպես նաև իրականացնել քարտերի վճարունակության ստուգում: Քարտն ստանալուն պես հաճախորդը պետք է ստորագրի

քարտի վրա: Դա նախատեսված է տվյալ քարտը երրորդ անձի կողմից օգտագործելուց զերծ պահելու համար: Հաճախորդի կողմից քարտի գործածման ամբողջ ժամանակահատվածում քարտը հանդիսանում է թողարկող բանկի սեփականությունը:

ՎճԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ – Վճարային քարտի օգտագործման հնարավորությունները շատ բազմազան են, այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ է տարբերել վճարային քարտերը, որոնք դասակարգվում են ըստ հետևյալ չափանիշների. ըստ նպատակայնության, օգտագործման տեխնոլոգիայի, վճարային համակարգի:

Վճարային քարտեր ըստ նպատակայնության –

• Դեբետային քարտեր, որոնց օգտագործման հիմնական նպատակն անկանխիկ վճարումներ կատարելն ու կանխիկ դրամի ստացումն է: Ըստ էության դեբետային քարտը միջոց է, որն օգնում է հաճախորդին առանց բանկ այցելելու կառավարել և օգտագործել իր բանկային հաշվում գտնվող միջոցները: Դեբետային քարտերը հիմնականում տրամադրվում են այն ժամանակ, երբ հաճախորդը ցանկանում է օգտագործել սեփական գումարը, որը մուտքագրել է բանկային հաշվի վրա: Դեբետային քարտերի միջոցով հարմար է ծախսել կամ կանխիկացնել բանկային հաշվի վրա մուտքագրված աշխատավարձը կամ այլ դրամական միջոցները:

• Վարկային կամ կրեդիտային քարտեր, որոնք նախատեսված են բանկի կողմից վարկի ձևով տրամադրված դրամական միջոցների սահմաններում գործառնություններ (առևտուր, կանխիկացում և այլն) իրականացնելու համար: Դա նշանակում է, որ ընթացիկ ծախսերի իրականացման համար վարկային քարտերի միջոցով բանկերը տրամադրում են վարկեր, որոնք հաճախորդը պարտավոր է այնուհետև վերադարձնել բանկին: Կրեդիտային քարտեր Հայաստանում տարածված չեն, սակայն տարածված են այսպես կոչված «հաշվարկային» քարտեր, որոնք միավորում են դեբետային և կրեդիտային քարտերի հատկանիշները: Սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ օրինակ դեբետային քարտին հնարավորություն է տրվում նաև վարկային գիծ (օվերդրաֆտ) ստանալ: Հաշվի առնելով, որ Հայաստանում հաճախ խառն են օգտագործում վերոնշյալ քարտերի անվանումները, պետք է ուշադիր լինել վճարային

քարտերի մասին հարցումներ կատարելու ժամանակ: Օրինակ, կրեդիտային քարտ ասելով հասկանում են հաշվարկային քարտը: Իսկ հաճախ վճարային քարտի համար օգտագործվում է «պլաստիկ քարտ» բառակապակցությունը:

Վճարային քարտեր ըստ օգտագործման տեխնոլոգիայի –

• Մագնիսական քարտեր, որոնք ներկայումս ամենատարածված քարտերն են ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ աշխարհում: Մագնիսական քարտերը պատված են մագնիսական ժապավենով և տեղեկատվությունը գրանցվում է մագնիսական եղանակով: Սակայն այս քարտերն ապահովում են սահմանափակ ծառայություններ՝ օգտագործվելով հիմնականում որպես վճարային քարտ:

• Չիպային քարտեր, որոնց հիմքում ընկած է միկրոսխեմա, որը թույլ է տալիս կատարել տեղեկատվության մշակման համար առավել բարդ գործառնություններ: Չիպային քարտերը հայտնի են նաև «սմարտ քարտեր» անվամբ: Չիպային քարտերը հնարավորություն են տալիս զգալիորեն ընդլայնել սպառողին մատուցվող ծառայությունների շրջանակը: Բացի վճարային քարտ լինելուց, չիպային քարտերը կարող են ծառայել նաև որպես անձ հաստատող փաստաթուղթ, որևէ հաստատության անցագիր, փոխարինել բժշկական քարտին կամ քննական գրքույկին (օրինակ ուսանողների համար) և այլն: Թեև մագնիսական քարտերը բավականին ապահովված են և անվտանգ, սակայն համարվում է, որ չիպային քարտերն ավելի առաջատար տեխնոլոգիայի քարտեր են, ուստի դրանք կեղծելու և ապօրինի օգտագործելու տեսանկյունից առավել անվտանգ են:

Վճարային քարտեր ըստ վճարային համակարգի –

ՀՀ տարածքում լայնորեն շրջանառվում են ինչպես տեղական «ԱրՔա» (ArCa) քարտերը, այնպես էլ՝ միջազգային «ՄաստերՔարտ» (MasterCard) և «Վիզա» (Visa) քարտերը: ՀՀ տարածքում շրջանառվող վերոնշյալ վճարային քարտերը թողարկվում և սպասարկվում են ՀՀ բանկերի կողմից: Հանդիպում են նաև բանկերի կողմից տրամադրվող այլ քարտեր՝ «Կանխավճարային նվեր քարտ», «Ուսանողական» և այլն: Դրանք գործում են վերոնշյալ «ԱրՔա», «Վիզա» և «ՄաստերՔարտ» համակարգերում, ըստ էության դրանց ենթատեսակն են և սպառողին տալիս են այդ վճարային քարտի օգտագործման սահմանափակ հնարավորություններ:

Առանձին բանկերի կողմից կարող են սպասարկվել նաև այլ վճարային համակարգերի պատկանող քարտեր, օրինակ՝ «AmericanExpress»: Հայաստանում այլ վճարային քարտերի սպասարկումը շատ քիչ է տարածված:

Վճարային «Արքա» (ArCa) քարտերը «Արմենիաքարդ» միասնական վճարային համակարգին պատկանող քարտերն են, որոնց գործածումը հնարավոր է միայն Հայաստանի տարածքում: Վերջիններս կարող են թողարկվել միայն «Արմենիաքարդ» համակարգի անդամ բանկերի կողմից: «Արքա» (ArCa) քարտերը Ձեզ հնարավորություն են տալիս օգտվել հետևյալ ծառայություններից.

- ՀՀ տարածքում կանխիկի ստացում բանկոմատներից, որոնց վրա փակցված է լինում «Արքա» համակարգի նշանը:
- ՀՀ տարածքում գտնվող առևտրի և սպասարկման կետերում (որոնք սպասարկում են«Արքա» քարտեր) ձեռք բերված ապրանքների կամ ստացված ծառայությունների դիմաց վճարումների իրականացում: «Արքա» քարտ սպասարկող առևտրի և սպասարկման կետերի մուտքի կամ դրամարկղի վրա փակցված է« ArCa» նշանը:
- կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների իրականացում բանկոմատների միջոցով:
- ՀՀ տարածքում գտնվող առևտրի և սպասարկման կետերից ապրանքների, ծառայությունների ձեռք բերում ինտերնետով:
- վիրտուալ քարտի միջոցով կոմունալ վճարումների իրականացում, քարտային հաշվի մնացորդի և քարտով գործարքների վերաբերյալ տեղեկատվության ստացում ինտերնետով:
- տվյալ քարտից մեկ ուրիշի «Արքա», «ՄաստերՔարտ» և «Վիզա» քարտերին (որոնք գտնվում են «Արքա» վճարային համակարգում) գումարների փոխանցում և այլն:

«Արքա» քարտերը կարող են լինել ինչպես դեբետային, այնպես էլ՝վարկային և տրամադրվում են միայն ՀՀ դրամով:

«Արքա» քարտերի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար Դուք կարող եք այցելել www.arca.am կայքը:

Վճարային «Վիզա» քարտերը հանդիսանում են «VISA» միջազգային վճարային համակարգի քարտեր, իսկ *«ՄաստերՔարտ»* քարտերը՝ «MASTERCARD» միջազգային վճարային համակարգի քարտեր: «Վիզա» և «ՄաստերՔարտ» քարտերի միջոցով

հնարավոր է գումար կանխիկացնել և վճարումներ կատարել ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ ամբողջ աշխարհում: Հայաստանի բանկերի մեծամասնությունը «Վիզա» և «ՄաստերՔարտ» քարտերի միջոցով «Արմենիաքարդ» միասնական վճարային համակարգի կողմից առաջարկվող ծառայություններից օգտվելու հնարավորություն է ընձեռնում: ՀՀ տարածքում և արտասահմանում այդ քարտերով կարելի է օգտվել այն բանկոմատներից, առևտրի և սպասարկման կետերից, որոնք սպասարկում են դրանք: Այդպիսի բանկոմատների կողքին, առևտրի և սպասարկման կետերի մուտքին կամ դրամարկղի կողքին փակցված են «VISA» և «MASTERCARD» նշանները:

«Վիզա» և «ՄաստերՔարտ» քարտերը լինում են դեբետային և կրեդիտային քարտեր: Դեբետային քարտերին վարկային գիծ կցելու դեպքում վերջիններս համարվում են հաշվարկային քարտեր:

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ – անկանխիկ հաշվարկային գործառնությունների իրականացման փաստաթուղթ է, ըստ որի, գնորդը (վճարողը) հանձնարարություն է տալիս իրեն սպասարկող բանկին՝ իր հաշվից որոշակի գումար փոխանցել մատակարարի (ստացողի) հաշվին, արդեն ստացված ապրանքանյութական արժեքների դիմաց: Այս փաստաթղթով վճարումները կարող են կատարվել ժամկետային, վաղաժամկետ և հետաձգված՝ ըստ կողմերի պայմանավորվածության:

ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ – այն բնութագրելիս հաշվի են առնում կանխիկ դրամի գումարի չափը տնտեսավարող սուբյեկտի դրամարկղում կամ նրան սպասարկող բանկային հաշվում: Այսինքն, նա ի վիճակի՞ է ամբողջ ծավալով կատարել կարճաժամկետ (ընթացիկ) պարտավորությունների գծով հաշվարկներ, օրինակ՝ աշխատողների հետ՝ աշխատանքի վարձատրության, մատակարարների հետ՝ ստացված ապրանքանյութական արժեքների և ցուցաբերված ծառայությունների դիմաց, բանկի հետ՝ վարկերի ու տոկոսավճարների և հաշվարկային այլ փոխհարաբերությունների գծով:

ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ – ՀՀ տարածքով մաքսային հսկողության ներքո ապրանքների և այլ առարկաների տեղափոխումն է ՀՀ պետական սահմանի երկու կետերի միջև՝ առանց բեռնագիրը փոխելու:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ – պարտադիր գանձույթ է, որի գանձումն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացմամբ, պայմանավորված գործողությունների համար:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՈՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ – տեղական վճարի դրույքաչափը համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին՝ տվյալ գործողությունն իրականացնելու համար անհրաժեշտ նվազագույն ծախսերի չափով: Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում է միասնական դրույքաչափեր և, ընդ որում, սահմանված դրույքաչափերը տարվա ընթացքում փոփոխության չեն կարող ենթարկվել:

Օրենքով սահմանված են տեղական վճարների հետևյալ տեսակները.

- համայնքի տարածքում շինարարության կամ շինությունների արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,
- շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը,
- տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման ու այլ աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը,

- տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճարը:

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ – տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման դիմաց «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով սահմանված կարգով և չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է: Տուրք վճարող են համարվում ֆիզիկական, իրավաբանական անձինք և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունները: Տեղական տուրքի տեսակներից են՝ համայնքի տարածքում շինարարության, շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ (ներառյալ նաև ժամանակավոր) օբյեկտներն ամրացնելու, վերականգնելու, արդիականացնելու, արտաքին տեսքը փոփոխող աշխատանքներ սկսելու թույլտվության և այլ նմանատիպ նպատակների համար: Համայնքի տարածքում բոլոր վճարների համար սահմանվում են տեղական տուրքերի միասնական դրույքաչափեր:

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ – տեղական տուրք վճարողներն իրավունք ունեն՝

- տեղական տուրք գանձող մարմնից պահանջել կատարելու տուրքի հաշվարկ կամ վերահաշվարկ,
- գանգատարկել տեղական տուրք գանձող մարմնի կամ պաշտոնատար անձանց գործողությունները,
- ստանալ տեղեկանք տեղական տուրքի վճարման մասին,
- հետ ստանալ վերադարձման ենթակա տեղական տուրքը:

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ – տեղական տուրք վճարողները պարտավոր են տուրքի գանձմամբ գործողություններ իրականացնող մարմիններ կամ պաշտոնատար անձանց ներկայացնել տեղական տուրքի վճարումը հիմնավորող փաստաթղթերը կամ դրանց պատճենները (կրկնօրինակները):

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ – «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով, ըստ տեղական տուրքերի տեսակների, սահմանված են համապա-

տասխան դրույքաչափեր: Ընդ որում, օրենքով սահմանված են դրույքաչափերի սահմանները, իսկ կոնկրետ դրույքաչափը սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ:

Սահմանված դրույքաչափերը տարվա ընթացքում փոփոխության չեն կարող ենթարկվել, ընդ որում, համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում է միասնական դրույքաչափեր:

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ – արտոնությունները կարող է սահմանել համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ: Արտոնություն սահմանելու դեպքում արտոնյալ տուրքի գծով վճարի գումարները կատարվում է համայնքի բյուջեից:

ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՎ – ապրանքների և այլ առարկաների ներմուծումն է ՀՀ մաքսային տարածք, արտահանումը այդ տարածքից կամ տարանցիկ (տրանզիտ) փոխադրումը ՀՀ տարածքով՝ ցանկացած տեսակի փոխադրամիջոցով, ներառյալ խողովակաշար փոխադրամիջոցները և էլեկտրահաղորդման գծերը:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ԾԱԽՍԵՐ – դրանք տնային տնտեսություններին հասարակական կազմակերպությունների կողմից անվճար տրամադրվող սպառողական ապրանքների ու ծառայությունների համար կատարած ծախսերն են: Դրանցում ներառվում են նաև իրենց աշխատողները, կրթության, առողջապահության, մշակույթի ոլորտում կազմակերպությունների կողմից մատուցված անվճար ծառայությունները:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ԾԱԽՍԵՐ – ներառում են տնային տնտեսությունների այն ծախսերը, որոնք ուղղված են բոլոր առևտրային կազմակերպություններում, քաղաքային շուկաներում և ոչ կազմակերպված (փողոցային) առևտրի վայրերում, կենցաղային և բնակարա-

նային-կոմունալ սպասարկման, ուղևորատար տրանսպորտի, կապի, հյուրանոցների, մշակույթի, առողջապահության և կրթության վճարովի հիմնարկների՝ սպառողական ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը, ինչպես նաև տնային տնտեսությունների կողմից սեփական սպառման համար արտադրված և որպես աշխատանքի վարձատրություն ստացած ապրանքների ու ծառայությունների՝ բնեղեն տեսքով, սպառմանը (բնակչության անձնական օժանդակ տնտեսությունների գյուղատնտեսական արտադրանքը, սեփական կացարանում ապրելու պայմանականորեն չափվող ծառայությունները):

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ (ՏԱՑ) - դա երկրի տնտեսությունում արտադրանքի թողարկման իրական ծավալի փոփոխության ամսական ագրեգացված ցուցանիշն է: Այն ընդգրկում է տնտեսական գործունեության բոլոր տեսակները և սկզբնապես հաշվարկվում է նախորդ տարվա միջին տարեկան գներով, ինչը հնարավորություն է տալիս ունենալ տվյալ ամսվա արտադրանքի թողարկման ծավալի իրական փոփոխությունը նախորդ ամսվա ու նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ և ստեղծել ՏԱՑ-ի ժամանակագրական շարքերի շղթայական ինդեքսներ: Յուրաքանչյուր ամսվա համար այն իրենից ներկայացնում է ամբողջ տնտեսության համար մեկ ագրեգացված ցուցանիշ՝ ինդեքսի տեսքով:

Ի տարբերություն ազգային հաշիվների մեթոդաբանությամբ հաշվարկվող ՀՆԱ ցուցանիշի (որն ունի եռամսյակային և տարեկան պարբերականություն) ամսական ՏԱՑ-ը բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների փոփոխությունը, այլ ոչ թե ավելացված արժեքի փոփոխությունը: Բացի այդ, ամսական ՏԱՑ-ը չի ընդգրկում արտադրանքի զուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները (ՖՄԱՉՕ), որոնք ներառվում են եռամսյակային ու տարեկան ՀՆԱ-ի արտադրական եղանակով հաշվարկներում:

ՏԱՑ-ը հաշվարկվում է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) վիճակագրություն վարող կառուցվածքային ստորաբաժանումների կողմից հավաքագրվող և վարչական ռեգիստրներից ստացվող (զուտ) ամսական տվյալների հիման վրա՝ կիրառելով նախորդ տարվա միջին տարեկան գների

նկատմամբ դրանց համահունչ ինդեքսները: Տնտեսական գործունեության տեսակների իրական ծավալի հաշվարկված ինդեքսներն ագրեգացվում են՝ հիմք ընդունելով նախորդ տարվա տարեկան ՀՆԱ-ում այդ գործունեության տեսակների ունեցած կշիռները:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ – կոլեկտիվ կամ խառը սեփականության և սեփականատերերի աշխատանքային մասնակցության վրա հիմնված, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է: Տնտեսական ընկերակցության հիմնադիր փաստաթուղթը հիմնադիր պայմանագիրն է, որտեղ նշված են ընկերակցության անդամները, գրանցվում են նրանց աշխատանքային ու գույքային ավանդները, և որոնց հիման վրա էլ որոշվում են նրանց մասնակցության բաժնեմասերը: Տնտեսական ընկերակցության անդամներ կարող են լինել իրավաբանական անձինք (բացի պետական մարմիններից) կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունները, քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ԱՃԻ ԳՈՐԾԱԿԻՑ – ցույց է տալիս բաժնետիրական ընկերության հնարավորությունները՝ հաջորդ տարում ավելացնելու իր ակտիվները ներքին ֆինանսավորման հաշվին, այն պայմանով, որպեսզի պահպանվի ինչպես սեփական կապիտալի և պարտավորությունների համամասնությունը, այնպես էլ՝ նույն չափով նաև շահաբաժինների վճարման բաժինը հաշվետու տարում: Այս գործակիցը, որն ավելի ճիշտ կլինի անվանել ներքին ֆինանսավորման աղբյուրների հաշվին կայուն աճի տեմպի ապահովման գործակից, որոշվում է շահաբաժինների վճարումից հետո զուտ շահույթի մնացած մասի և ելակետային (սկզբնական) սեփական կապիտալի հարաբերակցությամբ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ – հաշվապահական հաշվեկշռում ներառված ոչ ընթացիկ (հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ, երկարաժամկետ ֆինանսական ներդրումներ և այլն) և ընթացիկ (պաշարներ, դրամական միջոցներ, դեբիտորական պարտքեր և այլն) ակտիվներն են:

ՏՆՏԵՍԱՊԵՍ ԱԿՏԻՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ – ներառվում են զբաղված բնակչությունը և գործազուրկները, ովքեր ստեղծում են աշխատանքի շուկա աշխատուժի առաջարկի մասով՝ ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման համար:

ՏՆՏԵՍԱՊԵՍ ՈՉ ԱԿՏԻՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ – ներառվում են աշխատունակ տարիքի ցերեկային ուսուցմամբ և արտադրությունից կտրված սովորողներն ու ուսանողները, տնային տնտեսություն վարողները, երեխաներին և հիվանդ հարազատներին խնամողները, ինչպես նաև անձինք, ովքեր զանազան պատճառներով չեն աշխատում և աշխատանք չեն փնտրում:

ՏՆՕՐԻՆՎՈՂ ԵԿԱՄՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇԻՎ – ցույց է տալիս, թե տնային տնտեսությունները, պետական հիմնարկները և տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունները ինչպե՞ս են իրենց տնօրինվող եկամուտը բաշխում վերջնական սպառման ծախսերի և խնայողության միջև:

ՏՆՕՐԻՆՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ – այն եկամուտն է, որը վերջնական սպառման կամ խնայողության նպատակով տնօրինում է կառուցվածքային միավորը: Այն հավասար է՝ համախառն ազգային եկամտից հանած ընթացիկ անհատույց փոխատվություններ համարվող փոխանցված եկամուտները և գումարած ստացած ընթացիկ անհատույց փոխատվությունները: Բոլոր կառուցվածքային ռեզիդենտ միավորների տնօրինվող եկամուտների գումարը հավասար է համախառն ազգային տնօրինվող եկամտին: Օգտագործման փուլում համախառն ներքին արդյունքը հաշվարկվում է որպես ապրանքների և ծառայությունների վերջնական սպառման, համախառն կուտակման և զուտ արտահանման (առանց ներմուծման) հանրագումար:

ՏՈԿՈՍ – կազմակերպության, վարկառուի (փոխառուի) կողմից դրամական միջոցների կամ հասանելիք գումարների օգտագործման դիմաց վճար է, որը հանդես է գալիս ստացվելիք տոկոսային եկամտի (տրամադրված վարկի, ներդրված

ավանդի կամ դեպոզիտի) և վճարվելիք տոկոսային ծախսի (ստացված վարկի, ավանդի կամ դեպոզիտի) տեսքով:

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ – ֆինանսավարկային գործարքի եկամտաբերության նորման է, որը պայմանագրով սահմանված ժամանակամիջոցում ստացված կամ վճարված տոկոսների (տոկոսային եկամուտների կամ տոկոսային ծախսերի) և տրամադրված վարկերի կամ ավանդների գումարների հարաբերակցությունն է: Այլ կերպ, այն բնութագրում է տրամադրված կամ ներգրավված դրամական միջոցների նկատմամբ հատկացված տոկոսագումարների չափը: Տոկոսադրույքը արտահայտվում է հետևյալ նշանով՝ %, և հաշվարկները կատարելիս բազամապատկվում է 100-ով: Օրինակ, առևտրային բանկը վարկ է տրամադրում իր հաճախորդին 10 մլն. դրամի չափով և նրանից, ըստ պայմանագրի, ակնկալում է 1մլն. 200 հազ. դրամ տոկոսային եկամուտ: Տվյալ պարագայում ըստ վերոնշյալի տարեկան տոկոսադրույքը կկազմի (1,2 : 10) × 100% = 12%:

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ԼՈՂԱՑՈՂ – 1) որոշ պարտատոմսերի, ավանդային սերտիֆիկատների և այլնի տոկոսադրույքն է, որը փոխվում է շուկայական տոկոսադրույքին զուգընթաց և հիմնված է բազային տոկոսադրույքի վրա, 2) միջնաժամկետ և երկարաժամկետ վարկերի տոկոսադրույք է, որի չափը չի ամրագրվում վարկի ամբողջ ժամկետի ընթացքում, այլ պարբերաբար (պարտատիրոջ և փոխառուի կողմից փոխհամաձայնեցված ժամանակահատվածներում, օրինակ՝ ամիսը, եռամսյակը մեկ անգամ) վերանայվում է՝ կախված վարկային շուկայում ձևավորված իրադրությունից:

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ – 1) տոկոսադրույք, որով առևտրային բանկերը հաշվառում են (զեղչում են) մուրհակները դրամական շուկայում: Զեղչի գումարը = մուրհակի գումար x զեղչատոկոս x մարմանը մնացած օրերի թիվ, 2) տոկոսադրույք, որով կենտրոնական բանկը պատրաստ է հաշվառել կամ վերահաշվառել առաջնակարգ մուրհակները կամ վարկեր տրամադրել առևտրային բանկերին: Այն նպաստում է դրամավարկային կարգավորման գործընթացին:

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ – տոկոսադրույք, որով հաշվարկային պալատի անդամները գնում կամ ներկայացնում են ԱՄՆ դոլար գնելու բարեխիղճ հայտ ոչ թե տարբեր ֆինանսական ինստիտուտներից անհապաղ մատակարարմամբ, այլ արժույթների հետ փոխանակելու համար:

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ – 1) տոկոսադրույք, որը որոշվում է շուկայի այն մասնակիցների կանոնավոր գնանշումների հիման վրա, որոնք մասնակցում են իրական գործարքներին, 2) տոկոսադրույք, որը ֆիրման վճարում է՝ միջոցների փոխառության նպատակով:

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ՎԱՐԿԱՅԻՆ – հանդիսանում է որոշակի ժամանակով տրամադրվող վարկի օգտագործման համար հաճախորդի կողմից բանկին վճարվող հաշվարկային գինը: Վարկային տոկոսադրույքի դասակարգման հիմքում ընկած են՝ վարկի տեսակները (առևտրային, բանկային, սպառողական և այլն), վարկային կազմակերպությունները (ԿԲ զեղչատոկոս, բանկային, լոմբարդային և այլն), վարկի ժամկետները (կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ), վարկի օգտագործման ուղղությունները (ընթացիկ ակտիվների համալրմանն ուղղված, օվերդրաֆտ, մուրհակների զեղչում, նպատակային վարկեր և այլն), գործառնությունների տեսակները (տրամադրված վարկերի, ներգրավված դեպոզիտների, միջբանկային վարկի տոկոսները, արժեթղթերի գործառնություններից տոկոս և այլն), տոկոսադրույքի հաշվարկման ձևերը (բարդ և պարզ տոկոսներ):

ՏՎՅԱԼՆԵՐ ՄՇԱԿՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – որոնք զբաղվում են տվյալների համակարգչային մշակմամբ և տեղեկատվության տրամադրմամբ:

ՏՐԱՆՍՖԵՐՏ – 1) հաճախորդի հաշվից մեկ ուրիշի հաշվին դրամական փոխանցումն է, 2) էլեկտրոնային համակարգում քլիրինգային հաշվարկների միջոցով իրականացվող բանկային վճար է, 3) փոխառուների (վարկառուների) իրավունքների կամ պարտականությունների տրամադրումն է այլ անձանց, 4) վերաբաշխման ենթակա դրամական վճարներ, որոնք կապված չեն ապրանքների և ծառայությունների առքուվաճառքի հետ, 5)

դրամական միջոցներ, որոնք տրվում են պետական բյուջեից անվերադարձ՝ նպաստների, կրթաթոշակների, կենսաթոշակների, սոցիալական ապահովագրության, դոտացիաների և օգնության այլ վճարների տեսքով:

ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ – տրանսֆերտ է համարվում այն տնտեսական գործառնությունը, որի ժամանակ մեկ տնտեսավարող սուբյեկտը անհատույց կարգով մեկ այլ տնտեսավարող սուբյեկտին է տրամադրում ապրանքներ, ծառայություններ, ակտիվներ կամ սեփականության իրավունք: Վճարային հաշվեկշռում տարանջատում են ընթացիկ և կապիտալ տրանսֆերտներ հասկացությունները: Ընթացիկ տրանսֆերտները մեծացնում են տվյալ երկրի տնօրինվող եկամուտները, ապրանքների ու ծառայությունների սպառման մակարդակը (մարդասիրական օգնություն) և հակառակ ազդեցություն ունենում դոնոր երկրի տնտեսության վրա: Ընթացիկ տրանսֆերտներն արտացոլվում են ընթացիկ հաշվում: Այն տրանսֆերտները, որոնք չեն համարվում ընթացիկ, դասակարգվում են որպես կապիտալ տրանսֆերտներ: Կապիտալ տրանսֆերտները հանգեցնում են ինչպես դոնոր, այնպես էլ տրանսֆերտ ստացող երկրի ակտիվների ու պարտավորությունների փոփոխության և արտացոլվում են կապիտալի հաշվի գործառնություններում: Կապիտալ տրանսֆերտների օրինակ է հիմնական միջոցների անհատույց տրամադրումը և պարտքի ներումը: Դրամական միջոցների անհատույց փոխանցումը կապիտալ տրանսֆերտ է համարվում միայն այն դեպքում, երբ այն նախատեսվում է հիմնական միջոցների ձեռք բերման կամ կապիտալ շինարարության իրականացման նպատակով:

ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ ԸՆԹԱՑԻԿ – դրանք են՝ հատկացումներ սոցիալական ապահովագրությանը, սոցիալական նպաստները, կամավոր մուծումները և ոչ կապիտալ բնույթի նվերները, տույժ ու տուգանքները և այլն:

ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ – դրանք են. ա) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների տրամադրած տրանսֆերտները, այդ թվում՝ ընթացիկ և կապիտալ տրանսֆերտները, բ) այլ աղբյուրներից տրամադրված տրանս-

ֆերտները, այդ թվում՝ ընթացիկ և կապիտալ տրանսֆերտները, գ) համայնքների բյուջեներին՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները, դ) համայնքների բյուջեներին պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումները՝ սուբվենցիաները:

ՏՐԱՍԱՆՑ – ըստ որի, ով դուրս է գրում չեկ, պարտավոր է ներկայացնել փոխանցելի մուրհակ:

ՏՐԱՍԱՑ – մուրհակատերը կարգադրություն է տալիս վճարողին՝ նշված գումարի չափով կատարելու վճարում:

ՏՐԱՍՏ – իրավաբանական փաստաթուղթ է կամ իրավաբանական գործողություն, ըստ որի բնորոշվում է սեփականության վստահ (հավատ ներշնչող) կառավարման գործընթացը:

ՏՐԱՍՏԱՅԻՆ (ՎՍՏԱՀԱՐԱՅԻՆ) ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – որոնք կառավարում են կազմակերպությունների կամ մասնավոր անձանց սեփականությունը:

ՏՐԱՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – բանկերի կամ ֆինանսական կազմակերպությունների կողմից իրականացվող գործառնություններ են, որոնք ուղղված են հաճախորդների (կլիենտների) կամ օրենքի սահմաններում նրանց վստահված անձանց (ֆիզիկական, իրավաբանական անձինք և առևտրային բանկը) գույքի կամ տարբեր ծառայությունների կառավարմանը:

ՏՐԱՏՏԱ (ՓՈԽԱՆՑՎՈՂ ՄՈՒՐՀԱԿ) – արժեթուղթ, որն իրենից ներկայացնում է մուրհակապահի (տրասանտի) գրավոր հանձնարարությունը վճարողին (տրասատ)՝ մուրհակում նշված գումարը երրորդ անձին վճարելու համար:

ՏՐԵՆԴ – դինամիկայի շարքի երկարաժամկետ (երկարատև) բաղադրամասն է, որը բնութագրում է նրա զարգացման, աճման կամ նվազման միտումը:

ՏՈՒԺԱՆՔ (ՏՈՒԳԱՆՔ, ՏՈՒՅԺ) – համարվում է օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը (դեբիտորը) պարտավոր է վճարել պարտատիրոջը (կրեդիտորին)՝ պարտավորությունը չկատարելու, կամ ոչ պատշաճ կարգով կատարելու դեպքում: Տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել: Տուժանքով ապահովվում է միայն իրական պահանջը: Պարտատերն իրավունք չունի պահանջել վճարելու տուժանքը, եթե պարտապանը պատասխանատվություն չի կրում պարտավորությունը չկատարելու, կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Ց

ՑԵԴԵՆՏ – պարտատեր, որը փոխանցում է մուրհակով դրամ ստանալու իր իրավունքը, կամ այլ կերպ, դրամային պարտավորությունը տալիս է մեկ այլ անձի:

ՑԵՍԻԱ – պարտավորությունների զիջում այլ անձանց կամ ինչ-որ մեկին իրավունքների փոխանցում, օրինակ՝ պարտապանից (կրեդիտորից) փոխանցվում են նրա ենթակայության տակ գտնվող իրավունքները այլ անձին (ցեսիոներին): Տվյալ իրավասությունները ստանձնողին է փոխանցվում նաև պարտավորությունների ապահովման կատարման իրավունքը (գրավ, հանձնարարագիր): Ցեսիայի պայմանագիրը չի պահանջում պարտապանի համաձայնությունը և կարող է կնքվել առանց նրա տեղյակ լինելու:

ՈՒ

ՈՒՂԻՂ ԿԱՊ – որի դեպքում գործոնային ցուցանիշի (x) արժեքների մեծացումը կամ փոքրացումը առաջ է բերում արդյունքային ցուցանիշի (y) արժեքների մեծացման կամ փոքրացման, այսինքն՝ արդյունքային և գործոնային ցուցանիշներն ունեն նույն ուղղվածությունը:

ՈՒՂՂԱԳԻԾ ԵՎ ԿՈՐԱԳԻԾ ԿԱՊ – եթե արդյունքային ցուցանիշի (y) կախվածությունը տվյալ ազդող գործոնից (x) կարող է արտահայտվել ուղիղ գծի հավասարումով, ապա կապը կոչվում է ուղղագիծ (գծային), իսկ եթե կախվածությունը արտահայտվում է որևէ կորի (հիպերբոլ, պարաբոլ և այլն) հավասարումով, ապա կապը կոչվում է կորագծային:

ՈՒՂՂԱԿԻ ԾԱԽՍԵՐ – իրենց բնույթով անմիջականորեն կապված են արտադրված արդյունքի տվյալ տեսակի հետ և վերագրվում են դրան: Այդ ծախսերից են՝ արտադրական ինքնարժեքում ներառվող հիմնական բանվորների աշխատավարձը՝ սոցիալական ապահովագրության հատկացումներով, հումքի և նյութերի, տեխնոլոգիական վառելանյութի ծախսերը և այլն:

ՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿՈՒՄ – հարկատու հանդիսացող անձերից կամ կազմակերպություններից հարկումն է, ըստ որի, տնտեսագետները սահմանազատում են ուղղակի և անուղղակի հարկերը: Առաջինի լավագույն օրինակն է եկամտահարկը, երբ եկամուտ վաստակած անձը վճարում է հարկ, որի արդյունքում իր կամ իր ընտանիքի եկամուտը նվազում է: Հարկման երկրորդ տեսակի օրինակ կարող է հանդիսանալ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ): Այս դեպքում հարկը վճարում է սպառողը, սակայն հարկի արժեքը մտցվում է գնի մեջ, այնպես, որ հարկային բեռը հաղորդվում է վերջի սպառողին, ով որ գնում է տվյալ ապրանքը, մատուցվող ծառայությունը:

ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄ - կատարվում է արտասահմանյան ուղղակի ներդրողների կողմից, որոնք ձգտում են ձեռք բերել ուղղակի ներդրումով իրավաբանական անձի գործունեության վրա կայուն, տևական ազդեցություն: Ուղղակի ներդրող (ինվեստոր) է համարվում ոչ ռեզիդենտ միավորը, նրա հետ կապված կամ համագործակցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը (ընկերությունը), որին պատկանում է ՀՀ ռեզիդենտ միավորի բաժնետիրական կապիտալի ոչ պակաս, քան 10%-ը:

Այլ կերպ ասած՝ ցույց են տալիս մի երկրի իրավաբանական և ֆիզիկական անձանց (ուղղակի ներդրող) կողմից իրականացված այն ներդրումները, որոնք նպատակ են հետապնդում մասնակցել մեկ այլ երկրի տնտեսավարող սուբյեկտի գործու-

նեության կառավարմանը: Որպես ուղղակի ներդրում են համարվում ոչ միայն ուղղակի ներդրողի կազմակերպության կապիտալում մասնակցության ձևով ներդրումները, այլև նրա կողմից իրականացված ցանկացած այլ ներդրումներ:

Փ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ՓԲԸ) – այն ընկերությունը, որի բաժնետոմսերը բաշխվում են միայն նրա հիմնադիրների կամ նախապես որոշված այլ անձանց միջև, համարվում է փակ բաժնետիրական ընկերություն: Նման ընկերությունն իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց առաջարկել այլ ձևով ձեռք բերելու դրանք: Փակ բաժնետիրական ընկերության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված քանակը (երկու կամ ավելի բաժնետերեր), հակառակ դեպքում, այն մեկ տարվա ընթացքում ենթակա է վերակազմավորման բաց բաժնետիրական ընկերության, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո՝ դատական կարգով լուծարման, եթե մասնակիցների թիվը չնվազի մինչև օրենքով սահմանված քանակը:

ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ – հաշվապահական հաշվառման մեթոդի տարրերից է, որի միջոցով բնորոշվում են տնտեսավարող սուբյեկտի տնտեսական գործունեության բոլոր կողմերը: Նրանով է պայմանավորված տնտեսական գործառնությունների տվյալների գրանցումը փաստաթղթերի ձևաթղթերի (բլանկների) մեջ, իսկ տնտեսական վեճերի լուծման ժամանակ այն ապացուցման միջոց է համարվում:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԱՄՓՈՓ – դրանցում խմբավորվում և ամփոփվում են տնտեսական գործունեության որևէ բնագավառին վերաբերող գործառնությունների ձևակերպման սկզբնական փաստաթղթերը: Դրանցից են՝ գանձապահի ամենօրյա հաշվետվությունը, նյութերի պահեստի վարիչի հաշվետվությունը և այլն:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԸՍՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԻ – դրանք լինում են երկու տեսակի՝ սկզբնական և ամփոփ փաստաթղթեր:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԸՍՏ ՆՇԱՆԱԿՄԱՆ – դրանք լինում են՝ կարգադրողական, կատարողական կամ արդարացուցիչ, հաշվապահական ձևակերպման և կոմբինացված:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԿԱՄ ԱՐԴԱՐԱՑՈՒՑԻՉ – հիմնավորում են արդեն ավարտված տնտեսական գործառնությունների կատարված լինելու փաստը: Այդպիսի փաստաթղթերից են ապրանքանյութական արժեքների մուտքի և ելքի բեռնագրերը, որոնք վկայում են դրանց ընդունման կամ բացթողնման փաստի մասին:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԱՐԳԱԴՐՈՂԱԿԱՆ – դրանց միջոցով տրվում են առաջադրանքներ՝ տնտեսական գործառնություններ կատարելու համար: Այդ փաստաթղթերից են՝ հրամանները, որոշումները, օրդերները, կարգագրերը և այլն:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿՈՄԲԻՆԱՑՎԱԾ – արտացոլում են կարգադրողական, կատարողական կամ արդարացուցիչ հաշվապահական ձևակերպման փաստաթղթերից կամայական երկուսի կամ երեքի գործառույթները (ֆունկցիաները) միաժամանակ: Այդպիսի փաստաթղթերից են դրամարկղային մուտքի և ելքի օրդերները, որոնք միաժամանակ հանդես են գալիս նշված երեք փաստաթղթերի տեսքով:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՍԿԶԲՆԱԿԱՆ – դրանց միջոցով ձևակերպվում են առանձին տնտեսական գործառնությունների կատարման փաստերը: Այդպիսի փաստաթղթերը կոչվում են սկզբնական, որովհետև տեղի ունեցած տնտեսական երևույթի առաջին գրավոր արձանագրությունն է և գործառնությունների կատարման առաջին վկայությունը: Այդպիսի փաստաթղթերից են՝ երթուղային թերթիկները, կատարված աշխատանքների կարգագրերը և այլն:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ – դրանք ըստ իրենց կազմման տեղի բաժանվում են երկու խմբի՝ ներքին և արտաքին

փաստաթղթերի: Ներքին փաստաթղթերը կազմվում են տվյալ կազմակերպության կամ ընկերության ներսում, նրա գործունեության ընթացքում տեղի ունեցող տնտեսական գործառնությունները ձևակերպելու համար: Այդպիսի փաստաթղթերի օրինակ են՝ դրամարկղային մուտքի և ելքի օրդերները, ապրանքանյութական արժեքների գույքագրման տեղեկագրերը և այլն: Արտաքին փաստաթղթերը կազմվում են ուրիշ տնտեսավարող սուբյեկտներում և այդ փաստաթղթերի միջոցով արտացոլվում են այդ սուբյեկտների հետ տեղի ունեցող տնտեսաֆինանսական կապերն ու փոխհարաբերությունները: Այդպիսի փաստաթղթերից են՝ բանկային հաշիվների քաղվածքները, անկանխիկ հաշվարկների ձևերը և այլն:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՇՐՋԱՊՏՈՒՅՏ – այն ասելով հասկանում ենք տնտեսավարող սուբյեկտում փաստաթղթերի ամբողջ շարժը՝ սկսած տնտեսական գործառնությունների փաստաթղթային ձևակերպումից կամ արտաքին փաստաթղթերի ստացման պահից մինչև դրանց գրանցվելը հաշվապահական հաշիվներում, և հաշվային փաստաթղթերի արխիվ հանձնվելը:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՌԵԿՎԻԶԻՏՆԵՐ – հաշվային ռեգիստրներում կամ փաստաթղթերում ներառվող տարբեր բովանդակությամբ տվյալներ ու ցուցանիշներ են, որոնց օգնությամբ որոշվում են տնտեսական գործառնությունների կատարման տեղը, պայմանները, ժամանակը, մասնակցող կողմերը, այդ գործառնությունների բովանդակությունը և դրանով իսկ փաստաթղթին տրվում է ապացուցողական բնույթ:

ՓՈԽԱԴՐՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ (ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ) ԾԱՎԱԼ – բնութագրում է փոխադրված բեռների փաստացի քանակը՝ հաշվի առնելով տարայի կամ կոնտեյների քաշը:

ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԾԱԽՍՈՒՄՆԵՐ – տոկոսների դիմաց վճարումներն ու այլ ծախսումներն են, որոնք տնտեսավարող սուբյեկտը (կազմակերպությունը) կատարում է՝ կապված փոխառու կապիտալի ստացման հետ (օրինակ՝ փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսները, փոխառությունների ստացման հետ

կապված օժանդակ ծախսումները, ֆինանսական վարձակալության վերաբերող վճարները):

ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ – ըստ որի, մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմին (փոխառուին), որպես ժամանակավոր սեփականություն, հանձնում է դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից: Փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր և նման ձևը չպահպանելը հանգեցնում է փոխառության պայմանագրի ոչ հավաստի լինելուն:

ՓՈԽԱՏՎԱԿԱՆ ՏՈԿՈՍ – այն տոկոսային գումարն է, որը վճարվում է փոխատվության տրված կապիտալի մեծությունից, երկկողմանի փոխհամաձայնեցված տոկոսադրույքի չափով:

ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆ – որոշակի ժամկետում, որպես պարտք, դրամական միջոցների կամ նյութական արժեքների տրամադրումն է մեկ անձից (փոխատուից) մյուսին (փոխառուին)՝ հետ վերադարձնելու պայմանով, փոխատուին օգտագործված միջոցների դիմաց վճարելով փոխատվական տոկոս: Փոխատվությունը տրվում է փոխհամաձայնեցված պայմանագրի հիման վրա:

ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ – գործառնություն է, երբ կառուցվածքային մեկ միավորը տրամադրում է ապրանքներ, ծառայություններ, ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներ մեկ այլ միավորի՝ առանց դրանց դիմաց ապրանքի, ծառայության կամ ակտիվի ձևով փոխհատուցում ստանալու: Տարբերում են ընթացիկ և կապիտալ անհատույց փոխատվություններ, որոնք կարող են իրականացվել դրամական ու բնեղեն ձևով:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴ – իրենից ներկայացնում է սուբյեկտիվ գնահատում, այսինքն՝ փորձագետի

անկախ կարծիք, իսկ վարկանիշային գնահատումը՝ տարբեր ցուցանիշների հիման վրա դասակարգումն է:

ՓՈՓՈԽՈՒՆ ԾԱԽՍԵՐ – ծախսեր են, որոնք փոփոխվում են արտադրության ծավալներին համամասնորեն: Այսինքն, եթե արտադրության ծավալներն աճում են երկու անգամ, ապա այս ծախսերը նույնպես ավելանում են նույնքան անգամ: Այստեղից հետևություն, որ ընդհանուր փոփոխական ծախսերը գծային կախվածություն ունեն արտադրության ծավալներից: Այս ծախսերը միավոր արտադրանքի հաշվով համարվում են հաստատուն մեծություն: Փոփոխական ծախսերից են՝ հիմնական բանվորների աշխատավարձը՝ սոցիալական ապահովագրության հատկացումներով, հումքի, նյութերի, տեխնոլոգիական վառելանյութի ծախսերը և այլն:

ՓՈՔՐԱԳՈՒՅՆ ՔԱՌԱԿՈՒՍԻՆԵՐԻ ՄԵԹՈԴ – ռեգրեսիայի հավասարման պարամետրերի գնահատումը կատարվում է նշված մեթոդի օգնությամբ, որի էությունն այն է, որ նվազագույնի է հասցվում արդյունքային ցուցանիշի (y) փաստացի և հաշվարկային արժեքների տարբերությունների քառակուսիների գումարը, որն արտահայտվում է հետևյալ հավասարման տեսքով.

$$S = \sum_{i=1}^{n} (y - \bar{y}_x)^2 \rightarrow \min$$

Ուղիղ կախվածության համար ($\bar{y}_x = a_0 + a_1 x_1$), այն կունենա հետևյալ տեսքը.

$$S = \sum_{i=1}^{n} (y_x - a_0 - a_1 x_1)^2 \rightarrow \min$$

Վերը նշված հավասարման a_0 և a_1 գործակիցները գնահատելու համար անհրաժեշտ է որոշել S-ի մասնակի դիֆերենցիալներն ըստ a_0-ի և ըստ a_1-ի, դրանք հավասարեցնել զրոյի՝

$$\begin{cases} \frac{\partial S}{\partial a_0} = \sum 2(y_x - a_0 - a_1 x)(-1) = 0 \\ \frac{\partial S}{\partial a_1} = \sum 2(y_x - a_0 - a_1 x)(-x_1) = 0 \end{cases}$$

Այստեղից՝ նորմալ հավասարումների համակարգը որոշ փոփոխություններից հետո կունենա հետևյալ տեսքը (որտեղ $\Sigma a_o = na_o$)՝

$$\begin{cases} \Sigma y = na_0 + a_1 \Sigma x_1 \\ \Sigma yx = a_0 \Sigma x_1 + a_1 \Sigma x_1^2 \end{cases}$$

որտեղ՝ n-ը ուսումնասիրվող համակցության ծավալն է (դիտարկվող միավորների թիվը):

Լուծելով, որպես հանրահաշվական հավասարումների համակարգ, կստանանք՝

$$\begin{cases} a_0 = \dfrac{\Sigma y \Sigma x_1^2 - \Sigma y x_1 \Sigma x_1}{n\Sigma x_1^2 - (\Sigma x_1)^2} \\ a_1 = \dfrac{n\Sigma y \Sigma x_1 - \Sigma y x_1 \Sigma x_1}{n\Sigma x_1^2 - (\Sigma x_1)^2} \end{cases}$$

Ռեգրեսիայի հավասարումներում a_o պարամետրը ցույց է տալիս արդյունքային ցուցանիշի (y) վրա չնախատեսված (հետազոտության համար չառանձնացված) այլ գործոնների միջինացված ազդեցությունը, իսկ a_1-ը (պարաբոլի հավասարման մեջ նաև a_2-ը) ռեգրեսիայի գործակիցն է, որը ցույց է տալիս, թե միջինում որքանով կփոփոխվի արդյունքային ցուցանիշի արժեքը գործոնային ցուցանիշի (x) մեկ միավորի փոփոխման դեպքում:

Նույն մեթոդով հաշվարկվում է նաև բազմագործոն (x_1, x_2, ..., x_n) հավասարումների համար a_o, a_1 ,a_2, ..., a_n գործակիցները՝ համակարգչային ծրագրերով:

Ք

ՔԱՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄԵԹՈԴ – ենթադրում է առանձին ռիսկի կամ մի խումբ ռիսկերի թվային գնահատում: Այս վերլուծությունով որոշվում է ռիսկային իրադարձությունների և դրանց հետևանքների հանդես գալու հավանականությունների թվային արժեքը, տրվում է ռիսկի մակարդակի քանակական գնահատումը և սահմանվում տվյալ կոնկրետ իրավիճակում ռիսկի ընդունելի մակարդակը:

ՔԼԻՐԻՆԳ – անկանխիկ հաշվարկների միջոցով ապրանքների, կատարվող աշխատանքների, ցուցաբերվող ծառայությունների և արժեթղթերի գծով ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև առաջացած փոխադարձ պահանջների ու պարտավորությունների հաշվանցումն է:

Օ

ՕՊՑԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ – արժեթուղթ է, որով մի կողմը (որոշակի գրավի դիմաց) մյուս կողմին իրավունք է տալիս սահմանված ժամկետում և իր անունից ձեռք բերել կամ վաճառել որոշակի քանակի ապրանք, արժույթ և արժեթուղթ, այդ թվում՝ ֆյուչերսային կամ ֆորվարդային պայմանագիր:

ՕՎԵՐԴՐԱՖՏ – բանկի կողմից հաճախորդին կարճաժամկետ վարկի տրամադրման հատուկ ձև է, երբ այդ գումարի մեծությունը գերազանցում է հաճախորդի հաշվում եղած դրամական միջոցների մնացորդին: Տվյալ դեպքում բանկը վարկային միջոցներ է դուրս գրում հաճախորդի հաշվից ամբողջությամբ, այսինքն՝ նրան տրամադրում է կարճաժամկետ վարկի գումար և արդյունքում ձևավորում է դեբետային մնացորդ (քանի որ օվերդրաֆտը ակտիվային հաշիվ է): Արդյունքում, հաճախորդը այդ գումարի չափով պարտք է մնում բանկին, որը հետագայում պայմանավորված ժամկետում (ժամկետներում) մարվում է: Օվերդրաֆտի օգտագործման կանոններով վարկը տրամադրվում է բանկի կողմից պայմանագրային հիմունքներով ավելի հուսալի հաճախորդներին, որում սահմանվում է օվերդրաֆտի

առավելագույն գումարի չափը, օվերդրաֆտով վարկի տրամադրման պայմանները և մարման կարգը:

ՕՎԵՐՆԱՅԹ – բանկի կողմից վարկի տրամադրման տարատեսակ է, որի գործարքը կատարվում է նրա օգտագործման պահից՝ սովորաբար ուրբաթ օրվանից մինչ հաջորդ երկուշաբթի ընկած ժամանակահատվածում: Այն համարվում է բանկի համար տոկոսային եկամուտ ապահովող կարևորագույն գործարք:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՂ – օտարերկրյա պետություն, ցանկացած օտարերկրյա իրավաբանական անձ, քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ, ՀՀ տարածքից դուրս մշտական բնակվող ՀՀ քաղաքացի, ինչպես նաև միջազգային կազմակերպություն, որն իր գտնվելու վայրի օրենսդրությանը համապատասխան ներդրում է կատարում Հայաստանի Հանրապետությունում:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄ – գույքի ցանկացած տեսակ է, այդ թվում՝ նաև ֆինանսական միջոցներ և մտավոր արժեքներ, որն օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է ՀՀ տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթի (եկամտի) ստացման կամ օգտակար այլ արդյունքի հասնելու նպատակով:

ՕՖԵՐՏԱ – մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց հասցեագրված առաջարկն է, որը որոշակիորեն արտահայտում է առաջարկողի մտադրությունը, այն է՝ պայմանագիրը կնքված համարել առաջարկն ընդունած հասցեատիրոջ հետ: Օֆերտան պետք է պարունակի պայմանագրի էական (կարևոր) պայմանները:

Ֆ

ՖԱԿՏՈՐԻՆԳ – ա) նեղ առումով՝ այն ֆինանսավորում է դրամական պահանջի զիջման դիմաց, բ) լայն առումով՝ միջազգային պրակտիկայում այն ասելով հասկանում են բանկի (ֆակտորի) ստանձնած պարտավորությունը՝ ստանալ իր հա-

ճախորդի դեբիտորական պարտքը, կամ այլ կերպ դա տնտեսավարող սուբյեկտների միջև ապրանքների և ծառայությունների իրացման ժամանակ առևտրային վարկի պայմաններով առաջացած պարտավորությունների (վճարային փաստաթղթերի) պահանջատիրոջ իրավունքների ստանձնումն է բանկի (ֆակտորի) կողմից, որը զուգրակցվում է նաև հաշվապահական, տեղեկատվական, ապահովագրական և այլ ծառայությունների մատուցմամբ կամ Ֆակտորինգային պայմանագրով մի կողմը՝ (բանկ կամ վարկային կազմակերպություն), մյուս կողմին (հաճախորդ) է հանձնում դրամական միջոցներ, իսկ հաճախորդը զիջում է երրորդ անձից ունեցած դրամական պահանջը, որը բխում է հաճախորդի կողմից նրան ապրանքներ տրամադրելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց:

Օրինակ. Ենթադրենք որևէ անձ ապրանքներ է վաճառում և կա գնորդ, ով ցանկանում է ձեռք բերել դրանք՝ երեք ամիս հետո վճարելու պայմանով: Վաճառողը չի ցանկանում կորցնել այդ գնորդին, սակայն միևնույն ժամանակ գումարը ստանալու համար չի կարող սպասել երեք ամիս: Հենց այսպիսի իրավիճակներում նրան կարող է օգնել ֆակտորինգը: Ֆակտորինգային գործարքի էությունը կայանում է հետևյալում. վաճառողն առաքում է ապրանքները գնորդին՝ հետաձգված վճարում կատարելու պայմանով, բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքում է ֆակտորինգի պայմանագիր և վերջինիս ներկայացնելով ապրանքների առաքումը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը՝ ստանում հասանելիք գումարի հիմնական մասը (մինչև 90%): Հետագայում՝երեք ամիս անց, բանկը կամ վարկային կազմակերպությունը գումարն ամբողջությամբ ստանում է գնորդից և իրեն հասանելիք տոկոսագումարների և միջնորդավճարի գանձումից հետո մնացած մասը (10%) փոխանցում վաճառողին:

Արդյունքում՝

- *վաճառողը* որոշակի վճարներ կատարելով, հնարավորություն է ստանում առաքված ապրանքների դիմաց անմիջապես ստանալ դրամական միջոցներ,
- *գնորդը* կարող է ձեռք բերել ապրանքներ՝ վճարի հետաձգման պայմանով,

- *բանկը կամ վարկային կազմակերպությունը* կստանա եկամուտներ (տոկոսագումարներ, միջնորդավճար):

Ֆակտորինգի պայմանագրով հաճախորդին կարող են մատուցվել այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են օրինակ՝
- հաճախորդի համար հաշվապահական հաշվառում վարելը,
- հաճախորդի դեբիտորական պարտքերի վարումը և հաշվառումը,
- չվճարման ռիսկից հաճախորդին ապահովագրումը և այլն:

ՖԱԿՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրով մի կողմը (ֆինանսական գործակալը՝ ֆակտորը) մյուս կողմին հանձնում կամ պարտավորվում է հանձնել դրամական միջոցներ՝ ի հաշիվ հաճախորդի (վարկատուի), երրորդ անձից (պարտապանից) ունեցած դրամական պահանջի, որը բխում է հաճախորդի կողմից երրորդ անձին ապրանքներ տրամադրելուց, նրա համար աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց, իսկ հաճախորդը ֆինանսական գործակալին զիջում կամ պարտավորվում է զիջել դրամական պահանջը:

ՖԱԿՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ – Ֆակտորինգային գործարքի մասնակիցներն են՝
- բանկերը և վարկային կազմակերպությունները (այսուհետ՝ ֆինանսական կազմակերպություններ),
- ֆինանսական կազմակերպությունների հաճախորդները՝ ապրանքներ արտադրողներն ու ծառայություններ մատուցողները (այսուհետ՝վաճառողներ),
- ապրանքների և ծառայությունների գնորդները (այսուհետ՝ գնորդներ):

ՖԱԿՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆ ԻՆՉՊԵՍ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ –
- Գնորդի և վաճառողի միջև կնքվում է ապրանքների առքուվաճառքի պայմանագիր:
- Վաճառողը ապրանքներն առաքում է գնորդին:
- Վաճառողի ու ֆինանսական կազմակերպության միջև կնքվում է ֆակտորինգի պայմանագիր և վաճառողը ֆինանսական

կազմակերպությանն է ներկայացնում ապրանքների առաքումը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը:

• Ֆինանսական կազմակերպությունը գնորդի կողմից վճարվելիք գումարի մինչև 90%-ը վճարում է վաճառողին (որպես կանոն, ֆինանսական կազմակերպությունը կամ վաճառողը ծանուցում է գնորդին՝ դրամական պահանջը զիջելու վերաբերյալ):

• Վաճառողի և գնորդի միջև կնքված առքուվաճառքի պայմանագրով սահմանված ժամկետը լրանալուց հետո գնորդը ֆինանսական կազմակերպությանն է վճարում ողջ գումարը:

• Ֆինանսական կազմակերպությունը վաճառողին է վճարում չվճարված գումարի և վաճառողի կողմից իրեն վճարվելիք գումարի (տոկոսագումարներ, միջնորդավճար) տարբերությունը:

ՖԱԿՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – որոնք գնում են ընթացիկ ակտիվներ՝ ժամանակավոր ֆինանսավորմամբ:

ՖԱԿՏՈՐԻՆԳԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ – Ֆակտորինգային գործարքները լինում են մի քանի տեսակի.

Ըստ հետպահանջի իրավունքի առկայության՝

• *հետպահանջի իրավունքով,*
• *առանց հետպահանջի իրավունքի:*

Հետպահանջի իրավունքով ֆակտորինգի դեպքում գնորդից գումարը ժամանակին չստանալու դեպքում ֆինանսական կազմակերպությունն իրավունք ունի գումարը գանձել վաճառողից: Իսկ առանց հետպահանջի իրավունքի ֆակտորինգի դեպքում ֆինանսական կազմակերպությունը նման իրավունք չունի: Այս դեպքում վաճառողը նաև ապահովագրվում է չվճարման ռիսկից: Առանց հետպահանջի իրավունքի ֆակտորինգը, որպես կանոն, ավելի բանկ ֆինանսական գործիք է, քան՝առաջինը:

Ըստ մասնակիցների քանակի՝

• *բաց,* երբ գնորդը տեղեկացվում է ֆակտորինգային գործարքի մասին:
• *փակ,* երբ գնորդը չի տեղեկացվում ֆակտորինգային գործարքի մասին:

ՖԱԿՏՈՐԻՆԳՆ ԻՆՉՈՎ Է ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՎԱՐԿԻՑ – Ըստ էության և ֆակտորինգի, և վարկի վերջնական նպատակը գոր-

ծուեեության ֆինանսավորումն է, սակայն դրանք տարբերվում են թե՛ բովանդակության, թե՛ իրականացման մեխանիզմների տեսանկյունից: Մասնավորապես, վարկը ենթադրում է միայն ֆինանսավորման ստացում, իսկ ֆակտորինգը՝ բացի ֆինանսավորումից, ներառում է նաև այլ հարակից ծառայությունների մատուցում և ի տարբերություն վարկի, ֆակտորինգային գործարք կնքելու համար անհրաժեշտ չէ գրավի առկայությունը (առանց հետպահանջի իրավունքի ֆակտորինգ): Բացի այդ, վարկի համար վճարում է գնորդը, որը ապրանքներ ստանալու դիմաց պետք է վճարում կատարի, իսկ ֆակտորինգի համար՝ վաճառողը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ – հանդիսանում է մենեջմենթի (կառավարման) այն բաղկացուցիչ մասը, որը կապված է դրամական միջոցների կարգավորման, այսինքն՝ փողով փող ստեղծելու, ներդրումների իրականացման, կազմակերպության գործուեեության, մարդկային և աշխատանքային փոխհարաբերությունների կառավարման հետ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐ (ԾԱԽՍԵՐ) – դրանք են՝ սեփական կապիտալի միջոցների հետ գնումից (կազմակերպության կողմից թողարկված բաժնետոմսերի հետ գնման դիմաց վճարված դրամական միջոցները), ստացված վարկերի և փոխառությունների մարումից, պարտքային արժեթղթերի մարումից վճարված շահաբաժինները, վճարված տոկոսները, ֆինանսական այլ գործուեեության նպատակով և արտասովոր դեպքերի հետ կապված վճարումները:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԶՈՒՏ ՀՈՍՔԵՐ – հավասար է ընդամենը ֆինանսական գործուեեությունից մուտքագրված և ելքագրված գումարների տարբերությանը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐ (ԵԿԱՄՈՒՏՆԵՐ) – դրանք են՝ սեփական կապիտալի (բաժնեմասնակցության) միջոցների թողարկումից և վերավաճառքից (կազմակերպության կողմից թողարկված կամ

հետ գնված բաժնետոմսերի վաճառքից կամ վերավաճառքից ստացված դրամական միջոցները), ստացված վարկերից և փոխառություններից, պարտքային արժեթղթերի թողարկումից, ֆինանսական այլ գործունեությունից և արտասովոր դեպքերից մուտքերը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – որոնք տնտեսավարող սուբյեկտներին տրամադրում են կարճաժամկետ և երկարաժամկետ կապիտալ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ) – դրանք են. 1) *Սեփական կապիտալի կենտրոնացման գործակիցը*, որը բնութագրում է տնտեսավարող սուբյեկտի սեփական կապիտալի տեսակարար կշիռը հաշվեկշռի պասիվի հանրագումարում կամ ընդհանուր ակտիվներում: Որքան բարձր լինի այս գործակիցը, կնշանակի տնտեսավարող տվյալ սուբյեկտը ֆինանսապես կայուն վիճակում է և կախվածության մեջ չէ արտաքին ու ներքին վարկատուներից: Հետազոտությունները ցույց են տալիս, որ տնտեսավարող սուբյեկտը ֆինանսապես կայուն վիճակում կլինի, եթե այդ գործակիցը կազմում է 0,6 (60%) կամ ավելի: Այսինքն՝ սեփական կապիտալի տեսակարար կշռի նվազագույն չափը 60%-ից ցածր չպետք է լինի, հակառակ դեպքում, տնտեսավարող սուբյեկտն աստիճանաբար կհայտնվի ֆինանսապես անկայուն վիճակում: 2) *Փոխառու կապիտալի (ոչ ընթացիկ և ընթացիկ պարտավորություններ) կենտրոնացման գործակիցը*, որը բնութագրում է տնտեսավարող սուբյեկտի փոխառու կապիտալի տեսակարար կշիռը՝ հաշվեկշռի պասիվի հանրագումարում կամ ընդհանուր ակտիվներում: Ի տարբերություն սեփական կապիտալի կենտրոնացման գործակցի, այս գործակիցը համարվում է արդյունավետ, եթե այն փոքր է 0,4 (40%)-ից: Նշված երկու գործակիցների միջև կա փոխադարձ կապ, այսինքն՝ դրանց գումարը հավասար է 1,0 միավորի կամ 100%-ի: 3) *Ֆինանսական կախվածության գործակիցը*, որը բնութագրում է սեփական կապիտալի կենտրոնացման գործակցի հակադարձ մեծությունը: 4) *Սեփական կապիտալի շարժունակության գործակիցը*, որը ցույց է տալիս, թե դրա որ մասն է օգտագործվում տնտեսավարող սուբյեկտի ընթացիկ գործու-

նեության ֆինանսավորման համար, կամ այլ կերպ՝ ներդրվում ընթացիկ ակտիվների (շրջանառու միջոցների) ծեռք բերման համար, իսկ որ մասը՝ կապիտալացվում: Դրա մեծության փոփոխությունը կախված է տվյալ տնտեսավարող սուբյեկտի ճյուղային պատկանելիությունից: 5) *Երկարաժամկետ ներդրումների կառուցվածքի գործակիցը*, որը ցույց է տալիս, թե ոչ ընթացիկ ակտիվների որ մասն է վերաֆինանսավորվում ի հաշիվ ոչ ընթացիկ պարտավորությունների: Որքան բարձր լինի այս գործակցի մեծությունը, դրան համապատասխան էլ անհրաժեշտ կլինի, որպեսզի տնտեսավարող սուբյեկտն իր տրամադրության տակ եղած հիմնական միջոցներն ու այլ տեսակի ներդրումներն օգտագործի խիստ նպատակային: 6) *Երկարաժամկետ ներգրավվող պարտավորությունների գործակիցը*, որը բնութագրում է տնտեսավարող սուբյեկտի կողմից ներգրավվող ոչ ընթացիկ պարտավորությունների (երկարաժամկետ վարկերի և փոխառությունների) բաժինը՝ ընթացիկ ակտիվների լրացման նպատակով: Նշված գործակիցը միաժամանակ ցույց է տալիս երկարաժամկետ ներգրավված պասիվների տեսակարար կշիռը տնտեսավարող սուբյեկտի սեփական կապիտալի և ոչ ընթացիկ պարտավորությունների հանրագումարում: Այս ցուցանիշի մեծության աճման միտումը կարող է տնտեսավարող սուբյեկտին էլ ավելի կախվածության մեջ դնել արտաքին ներդրողներից: 7) *Փոխառու կապիտալի կառուցվածքի գործակիցը*, որը բնութագրում է ոչ ընթացիկ պարտավորությունների բաժնի չափը փոխառու կապիտալի հանրագումարում: Նշված գործակիցը կարող է անընդհատ տատանվել՝ կախված տնտեսավարող սուբյեկտի կրեդիտորական պարտքերի գումարի չափից, արտադրական ընթացիկ գործունեության վարկավորման կարգից և այլ գործոններից: 8) *Սեփական և փոխառու կապիտալների հարաբերակցության գործակիցը*, որը ցույց է տալիս տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական կայունության գնահատման ավելի իրական պատկերը: Նշված գործակցի մեծության աճը վկայում է տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական կայունության էլ ավելի բարելավում, այսինքն՝ հավասար պայմաններում սեփական կապիտալն ավելանում է, իսկ փոխառու կապիտալը՝ նվազում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ – այն ասելով հասկանում ենք, որ տնտեսավարող սուբյեկտներն իրենց գործունեության ընթացքում ապահովում են եկամուտների կայուն աճ՝ կատարվող ծախսերի նկատմամբ, դրամական միջոցների նպատակային օգտագործում, արտադրության գործընթացի անընդհատություն և արտադրված արտադրանքի ժամանակին իրացում: Այդ իսկ պատճառով էլ, ֆինանսական կայունությունը ձևավորվում է արտադրատնտեսական գործընթացի բոլոր փուլերում և համարվում է տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր կայունության ամենահիմնական ցուցանիշը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ – ֆինանսական հարաբերությունների տարբեր ոլորտների ամբողջությունն է, որոնց միջոցով իրականացվում են դրամական միջոցների կազմավորումը և օգտագործումը, կամ այլ առումով՝ տվյալ երկրի ֆինանսական հիմնարկների համակարգ է, որը ֆինանսավորման և վարկավորման գործընթացում իրականացնում է դրամական միջոցների համախմբումն ու բաշխումը, ինչպես նաև՝ ֆինանսական հսկողությունը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ - կազմված է 4 հոդվածներից՝ օտարերկրյա ուղղակի, պորտֆելային, այլ ներդրումներից և պահուստային ակտիվներից: Վճարային հաշվեկշռում օտարերկրյա ներդրումները բերված են զուտ հիմքով, այսինքն՝ օտարերկրյա ներդրումների հոսքեր հանած վճարումներ (ուղղակի ներդրումների դեպքում՝ նաև ներֆիրմային շարժ): Վճարային հաշվեկշռում արտացոլված օտարերկրյա ներդրումները ներառում են ինչպես իրական հատվածում կատարված ներդրումները, այնպես էլ բանկային (ներառյալ՝ ՀՀ Կենտրոնական Բանկ) և պետական կառավարման համակարգերով իրականացված ներդրումները:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇԻՎՆԵՐ – դրանք հաշվային պլանում ներառված հաշվեկշռային և տնտեսական գործունեության արդյունքների հաշիվներն են, որոնք օգտագործվում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլման ենթակա տեղեկատվության ընդհանրացման համար: Ֆինանսական հաշվառման հաշիվներն ընդգրկում են՝ ոչ ընթացիկ ակտիվները,

ընթացիկ ակտիվները, սեփական կապիտալը, ոչ ընթացիկ պարտավորությունները և ընթացիկ պարտավորությունները:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ – կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին (ներկա և պոտենցիալ ներդրողներին, կառավարման անձնակազմին և աշխատողներին, պետական մարմիններին, մատակարարներին և այլ կրեդիտորներին, փոխատուներին, հասարակությանը և ֆինանսական հաշվետվությունների այլ օգտագործողներին) անկողմնակալ տեղեկատվությամբ ապահովումն է, որը նրանց նպատակահարմար է՝ տնտեսական որոշումներ կայացնելու համար:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄ (առևտրային բանկերում) - հաշվապահական հաշվեկշիռ ՁԱ №1 (ամսական, եռամսյակային և տարեկան), հաշվեկշիռ ՁԱ №2 (շաբաթական), հաշվետվություն՝ $Ն^1_1$, $Ն^2_1$, $Ն^1_2$, $Ն^2_2$, $Ն^1_3$, $Ն^2_3$, $Ն^1_4$, $Ն^2_4$ և ընդհանուր կապիտալի նվազագույն նորմատիվների վերաբերյալ ՁԱ №3 (ամսական), հաշվետվություն ՀՀ կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման նորմատիվների վերաբերյալ (ՁԱ №4), հաշվետվություն բանկի եկամուտների և ծախսերի վերաբերյալ ՁԱ №5 (ամսական, եռամսյակային և տարեկան), հաշվետվություն վարկային ներդրումների, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերի վերաբերյալ ՁԱ №6 (ամսական), հաշվետվություն արտարժույթի տնօրինման վերաբերյալ ՁԱ №7 (շաբաթական), հաշվետվություն ներգրավված և տեղաբաշխված միջոցների ծախսատարության և եկամտաբերության վերաբերյալ ՁԱ №8 (ամսական), հաշվետվություն ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետայնությունների վերաբերյալ ՁԱ №9 (ամսական), հաշվետվություն կանոնադրական կապիտալի ձևավորման վերաբերյալ ՁԱ №10 (յուրաքանչյուր փոփոխության դեպքում) և այլն: Դրանք թվով 26-ն են ի տարբերություն մնացած կազմակերպությունների հաշվետվությունների ձևերի:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄ (բացի բանկերից) – ներառում են. ա) *հաշվապահական հաշվեկշիռը (ձև* №1*)*, որը բնութագրում է հաշվետու ամսաթվի դրությամբ կազմակերպության ֆինանսական վիճակը, որի գնահատման հետ անմիջականորեն կապված տարրերն են՝ ակտիվները, սեփական կապիտալը և պարտավորությունները, բ) *ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը (ձև* №2), որը բնութագրում է հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքները, որի հետ անմիջականորեն կապված տարրերն են՝ եկամուտները և ծախսերը, գ) *սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը (ձև* №3), որը բնութագրում է կազմակերպության սեփական կապիտալի հոդվածների մնացորդը հաշվետու ամսաթվի դրությամբ և դրանց շարժը՝ հաշվետու ժամանակաշրջանում, դ) *դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը (ձև* №4), որը բնութագրում է դրամական միջոցների մնացորդը հաշվետու ամսաթվի դրությամբ և դրանց շարժը՝ կապված գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեությունների հետ, հաշվետու ժամանակաշրջանում, ե) *ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները (ձև* №5), որոնք բացահայտում են կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և հաշվապահական հաշվառման ստանդարտներով պահանջվող այլ տեղեկատվությունը:

Եթե ֆինանսական հաշվետվություններն օրենքով ենթակա են պարտադիր աուդիտի, ապա ֆինանսական հաշվետվություններին կից պետք է ներկայացվի աուդիտորական եզրակացություն:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐՐԵՐ – դրանք կազմակերպության ակտիվներն են, սեփական կապիտալը, պարտավորությունները, եկամուտները, ծախսերը և դրամական հոսքերը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ – վերահսկողության ձև է, որն իրականացվում է դրամական միջոցների կազմավորման, բաշխման ու օգտագործման գործընթացում՝ կապված ֆինան-

սական փաստաթղթերի ճիշտ ձևակերպումների հետ, օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ – դրամական միջոցների կենտրոնացված (պետական բյուջեն, արտաբյուջետային, կենսաթոշակային ու զբաղվածության հիմնադրամները և այլն) և ապակենտրոնացված (զուտ շահույթը, ամորտիզացիոն հիմնադրամը և այլն) հիմնադրամներ են, որոնց ձևավորման և օգտագործման գումարները նախօրոք հաշվարկվում են:

ՖԻՆԱՆՍՆԵՐ – դրսևորվում են ոչ թե միայն նյութական և մարդկային, այլ նաև ֆինանսական ռեսուրսներում: Դրանք արտահայտվում են դրամի միջոցով, թեև ֆինանսներն իրենց էությամբ դրամ չեն, այլ՝ տնտեսական հարաբերություններ:

ՖԻՖՈ – 1) ապրանքային պաշարների, արժեթղթերի և այլ ակտիվների հաշվառման մեթոդ է, ըստ որի, հաշվապահական հաշվեկշռից դուրս են գրվում արժեքային արտահայտությամբ՝ ժամակաշրջանի սկզբում ձեռք բերված դրանց գներով, 2) ժամկետից շուտ բանկային ավանդի մի մասի դուրս գրման գծով տոկոսների (տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի) հաշվարկման մեթոդն է, որն իրականացվում է ավանդատուի կողմից բանկում ներդրված վերջնական գումարի նկատմամբ:

ՖԼՈՈՒԹ – 1) ընկերության բաժնետոմսերի այն ընդհանուր քանակն է, որը թողարկվում է արժեթղթերի շուկայում, 2) չեկի ներկայացման և դրա դիմաց բանկի հաշվից փաստացի դուրս գրված դրամի միջև ընկած ժամանակահատվածն է, 3) արժույթի կուրսերի տատանման համարժեքության համաձայնությունն է:

ՖՅՈՒՉԵՐՍԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ – արժեթուղթ է, որով մի կողմը պարտավորվում է (որոշակի գրավի դիմաց) սահմանված քանակով, հաստատագրված գներով և ժամկետներում, մյուս կողմից ձեռք բերել կամ նրան վաճառել որևէ ապրանք, այդ թվում՝ արժեթուղթ կամ արժույթ:

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ – իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող սուբյեկտ (կազմակերպություն) է՝ հիմնադրված սահ-

մանափակ պատասխանատվությամբ կամ բաժնետիրական ընկերության ձևով, որը որոշակի տեղում և սահմանված ժամկետներում իր կողմից հաստատված կանոններով կազմակերպում է արժեթղթերով հրապարակային սակարկություններ և կատարում արժեթղթերի գնահատում:

ՖՈՐՎԱՐԴԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ – դրանք սփոթ գործառնությունների կնքումից որոշ ժամանակ անց հաշվարկների իրականացում նախատեսող գործարքներ են, որոնց կատարման օրը որոշվում է ֆորվարդային պայմանագրի ժամկետին ավելացնելով ևս երկու օր: Այսինքն, ֆորվարդային օրերի քանակին ավելացվում է սփոթ գործառնություններով հաշվարկների համար նախատեսված երկու օրը:

ՖՈՐՎԱՐԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ – արժեթուղթ է, որով մի կողմը պարտավորվում է (որոշակի գրավի դիմաց) սահմանված ժամկետներում, գործարքի կնքման պահին շուկայում ձևավորված գնով, մյուս կողմից ձեռք բերել կամ նրան վաճառել որևէ ապրանք, այդ թվում՝ արժեթուղթ կամ արժույթ:

ՖՈՐՖԵՏԱՎՈՐՈՒՄ (ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴ) – վճարային պարտավորությունների ձեռք բերում, սովորաբար՝ մուրհակի տեսքով, առանց վճարողի նկատմամբ հետադարձ պահանջի իրավունքի, այսինքն՝ գործարքի կատարման ժամանակ ֆինանսական կազմակերպությունը (ֆորֆետողը)՝ գնելով վերոհիշյալ վճարային պարտավորությունները, անվերապահորեն հրաժարվում է պահանջներ ներկայացնել վճարային պարտավորությունների նախորդ սեփականատերերի նկատմամբ, որը ձևակերպվում է՝ «առանց հետադարձ պահանջի իրավունքի» գրառումով: Ֆորֆետավորումը միջազգային վարկավորման տեսակներից մեկն է:

ՖՐԱԽՏԻ (ՉԱՐՏԵՐԻ) ՊԱՅՄԱՆԱԳԻՐ – ըստ որի, մի կողմը (ֆրախտ տրամադրողը) պարտավորվում է մյուս կողմից (ֆրախտ ստացողին)՝ բեռների, ուղևորների և ուղեբեռների փոխադրման համար վճարի դիմաց տրամադրել տրանսպորտային միջոցի ամբողջ տարողունակությունը կամ դրա մի մասը՝ մեկ կամ մի

քանի չվերթի համար: Ֆրախտի պայմանագրի կնքման կարգը սահմանվում է օրենքով և այլ իրավական ակտերով:

ՖՐԱՆՉԱՅԶԻՆԳ – համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվություն է, ըստ որի, պայմանագրով մեկ կողմը (իրավատերը) պարտավորվում է՝ վարձատրությամբ, ժամկետի նշումով կամ առանց դրա, մյուս կողմից (օգտագործողին) իրավունք տրամադրել իր ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների համալիր, ներառյալ՝ իրավատիրոջ ֆիրմային անվանման, օրենքով պահպանվող առևտրային տեղեկատվության, ինչպես նաև պայմանագրով նախատեսված բացառիկ իրավունքների այլ օբյեկտների՝ ապրանքային նշանի, սպասարկման նշանի և այլնի նկատմամբ իրավունքները: Համալիր թույլտվության պայմանագրով կողմեր կարող են լինել առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատեր քաղաքացիները:

ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԿԱՊ – ըստ որի, գործոնային ցուցանիշների (x_i) յուրաքանչյուր որոշակի արժեքների համակարգի (տարբերակների) համապատասխանում է արդյունքային ցուցանիշի (y) մեկ (կամ մի քանի) խիստ որոշակի արժեքներ: Ֆունկցիոնալ կապերը գոյություն ունեն մաթեմատիկայի, ֆիզիկայի, աստղագիտության բնագավառներում: Այսպես, շրջանագծի երկարությունը ամբողջությամբ որոշվում է նրա շառավիղի երկարությամբ, իսկ եռանկյան մակերեսը՝ նրա կողմերի երկարությամբ: Այդպիսի կապեր գոյություն ունեն նաև հասարակական երևույթներում, մասնավորապես՝ տնտեսագիտությունում: Այսպես, օրինակ որոշակի տեսակի ապրանքի վաճառքից ստացած ընդհանուր հասույթն ամբողջությամբ որոշվում է նրա քանակությամբ և միավոր ապրանքի գնով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ 8
ԱԶԳԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ ՀԱՇԻՎՆԵՐ 8
ԱԶԳԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ....8
ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 9
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ (ԱՀՀ) 9
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՍՏԱՆԴԱՐՏ ՀԱՄԱԿԱՐԳ (ԱՀՍՀ) 9
ԱԺՈՒՐ....9
ԱԿՏԻՎ ճԱՆԱՉՎԱԾ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾԱԽՍՈՒՄՆԵՐ....9
ԱԿՏԻՎ ՈՉ ՍՏԱՆԴԱՐՏ 10
ԱԿՏԻՎՆԵՐ 10
ԱԿՏԻՎՆԵՐ ԱՌԱՎԵԼ ԻՐԱՑՎԵԼԻ....11
ԱԿՏԻՎՆԵՐ ԱՐԱԳ ԻՐԱՑՎԵԼԻ 11
ԱԿՏԻՎՆԵՐ ԴԱՆԴԱՂ ԻՐԱՑՎԵԼԻ 11
ԱԿՏԻՎՆԵՐ ԴժՎԱՐ ԻՐԱՑՎԵԼԻ....11
ԱԿՏԻՎՆԵՐ ԵԿԱՄՏԱԲԵՐ 11
ԱԿՏԻՎՆԵՐ ԿԱՐճԱԺԱՄԿԵՏ 12
ԱԿՏԻՎՆԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ....12
ԱԿՏԻՎՆԵՐ ՈՉ ԻՐԱՑՎԵԼԻ 13
ԱԿՏԻՎՆԵՐ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ 13
ԱԿՏԻՎՆԵՐ ՌԻՍԿԱՅԻՆ....13
ԱԿՏԻՎՆԵՐ ՍԱՌԵՑՎԱԾ 13
ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ 14
ԱԿՏԻՎՆԵՐԻ ԶՈՒՏ ԱՐԺԵՔ....14
ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14
ԱԿՏՈՒԱՐ 15
ԱԿՐԵԴԻՏԻՎ....15
ԱԿՐԵԴԻՏԻՎ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ 16
ԱԿՐԵԴԻՏԻՎ ՀԵՏ ԿԱՆՉՎՈՂ....16
ԱԿՐԵԴԻՏԻՎ ՀԵՏ ՉԿԱՆՉՎՈՂ 16
ԱԿՐԵԴԻՏԻՎԻ ԲԱՑՈՒՄ 16
ԱԿՐԵԴԻՏԻՎԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ....17
ԱԿՐԵԴԻՏԻՎՆ ԻՆՉ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ....18
ԱԿՑԵՊՏ (ՀՈԺԱՐԱԳԻՐ)....19

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ....19
ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ ՎճԱՐՈՂՆԵՐ....19
ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՕՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՈՒՄ 20
ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՕՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 20
ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ.... 20
ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ
ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ....20
ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 21
ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆ....21
ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՐԳ....21
ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ....21
ԱճԻ ՏԵՄՊ ($K_{աճ.տ.}$) 22
ԱՄՐԱԿՑՎԱԾ ԳՈՒՅՔ 22
ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ / ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 22
ԱՅԼ ՈՉ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՇԱՀՈՒՅԹ....23
ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ 23
ԱՆԿԱԽ ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԲՐՈՔԵՐ....23
ԱՆԿԱԽ ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԴԻԼԵՐ....23
ԱՆԿԱՆԽԻԿ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ 23
ԱՆՀԱՏ ՁԵՌՆԵՐԵՑ 24
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲԱՑԱՌՁԱԿ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ 24
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ....24
ԱՆՀԱՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ 24
ԱՆՁՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 25
ԱՆՆՈՒԻՏԵՏ 25
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ....26
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ....26
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎ (ՀԻՓՈԹԵՔ)....26
ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ (ՍՆԱՆԿԱՑՄԱՆ) ՌԻՍԿ 26
ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ....26
ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿՈՒՄ 27
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՉԱՓԻՉՆԵՐ 27
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....27
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ
ԱՅԼ ՎճԱՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐ 28
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ....28
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 28

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ....29
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐ....29
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼ....29
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ....29
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ....29
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ....29
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ....29
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՇԱՀ....30
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ....30
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ....30
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ....30
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ....30
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՐԳԵՎ....31
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊՈԼԻՍ (ՎԿԱՅԱԳԻՐ, ՀԱՎԱՍՏԱԳԻՐ, ԱՆԴՈՐՐԱԳԻՐ)....31
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿ....31
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ....31
ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ....31
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐ....31
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՏ....32
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ....32
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԳՆԱՅԻՆ ԱՐԺԵՔ....32
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ....32
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ....32
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՌԸ....33
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՄԱՎՈՐ....33
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿՅԱՆՔԻ....33
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ....33
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ....34
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՏԱԴԻՐ....34
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԿԵՐԻ....34
ԱՊԱՀՈՎԱԴԻՐ (ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂ)....34
ԱՊԱՀՈՎԱԴԻՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ՕԱԽՍԵՐ....34
ԱՊԱՊԵՏԱԿԱՆԱՑՈՒՄ....35
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ....35
ԱՊՐԱՆՔՆԵՐ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ....35
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ....35
ԱՌԵՎՏՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ....35
ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ....36
ԱՌՀԱՇԻՎ ՏՐՎԱԾ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄ....36

ԱՍԻՄԵՏՐԻԱՅԻ ԳՈՐԾԱԿԻՑ (K_A) 36
ԱՎԱԼ 36
ԱՎԱՆԴ 36
ԱՎԱՆԴ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ 37
ԱՎԱՆԴ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ 37
ԱՎԱՆԴԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 38
ԱՎԱՆԴԱՅԻՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ 38
ԱՎԱՆԴՆԵՐ ՑՊԱՀԱՆՋ 38
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔ 38
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ 38
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐ 39
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 39
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ 39
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ 40
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՆՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ 40
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿ 40
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՐԿՎՈՂ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ 40
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 41
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿՄԱՆ (ԱԱՀ) ՕԲՅԵԿՏ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 41
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 41
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ 41
ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 42
ԱՎԻԶՈ 42
ԱՎՈՒՐԱՆԵՐ 42
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼ 43
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ ԻՆԴԵՔՍ 43
ԱՐԺԵԹՂԹԵՐ 43
ԱՐԺԵԹՂԹԵՐ ԱԶԱՏ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ 43
ԱՐԺԵԹՂԹԵՐ ԵԿԱՄՏԱԲԵՐ 44
ԱՐԺԵԹՂԹԵՐ ԹՈՂԱՐԿՈՂ (ԷՄԻՏԵՆՏ) 44
ԱՐԺԵԹՂԹԵՐ ՉԳՆԱՆՇՎՈՂ 44
ԱՐԺԵԹՂԹԵՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ 44
ԱՐԺԵԹՂԹԵՐ ՏԱՐԱԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 44
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ 45

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՐՏԱԲՈՐՍԱՅԱԿԱՆ ՇՈՒԿԱ 45
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԲԱՑ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ 45
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԲԻԶՆԵՍ 45
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԱԶԴԱԳԻՐ 45
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ (ԷՄԻՍԻԱ)....46
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ 46
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱ 46
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ....46
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ 46
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ....46
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԿ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ....47
ԱՐԺԵԹՈՒՂԹ 47
ԱՐԺԵԹՈՒՂԹ ԱԾԱՆՑՅԱԼ....47
ԱՐԺԵԹՈՒՂԹ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ....47
ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ 47
ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՏԻ 48
ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ....48
ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿԱՊԻՏԱԼԻ ԵՎ ՎԱՐԿԻ ՇԱՐԺԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ....49
ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ 49
ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱ....49
ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ....49
ԱՐԺՈՒՅԹ 50
ԱՐԺՈՒՅԹ ԱԶԱՏ ՓՈԽԱՐԿԵԼԻ 50
ԱՐԺՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 50
ԱՐԺՈՒՅԹԻ ԱՐԺԵՋՐԿՈՒՄ....51
ԱՐԺՈՒՅԹԻ ԳՆԱՆՇՈՒՄ 51
ԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԿԵԼԻՈՒԹՅՈՒՆ 51
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԻՆՔՆԱՐԺԵՔ 52
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐ....52
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ....52
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ....52
ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԻՐԱՑՈՒՄԻՑ ՇԱՀՈՒՅԹ (ՎՆԱՍ) 53
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀԱՐԿԵՐ....53
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԶՈՒՏ ՀԱՐԿԵՐ....53
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍ (I_{zq})....53
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՇԻՎ 54
ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐ....54
ԱՐՏԱՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ 54

ԱՐՏԱՍՈՎՈՐ (ԱՆՆԱԽԱԴԵՊ) ԴԵՊՔԵՐԻՑ ՇԱՀՈՒՅԹ (ՎՆԱՍ).....55
ԱՐՏԱՍՈՎՈՐ (ԱՆՆԱԽԱԴԵՊ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐ.....55
ԱՐՏԱՍՈՎՈՐ (ԱՆՆԱԽԱԴԵՊ) ՕԱԽՍԵՐ.....55
ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ «ԱՐԲԻՏՐաժ».....55
ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....55
ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻՐՔ.....56
ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻՐՔ՝ ԵՐԿԱՐ.....56
ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻՐՔ՝ ՁՈՒՏ.....56
ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻՐՔ՝ ԿԱՐԾ.....56
ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻՐՔ՝ ՀԱՄԱԽԱՌՆ.....57
ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ.....57
ԱՐՏԱՐԺՈՒՅԹ.....57
ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԳՆԱՆՇՈՒՄ.....58
ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՇՈՒԿԱ.....58
ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ (ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ) ՓՈԽԱՐԺԵՔ.....58
ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԺԵՔ.....59
ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔ.....59
ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ.....60
ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ.....60
ԱՐՏԱՔԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ.....60
ԱՈՒԴԻՏ.....60
ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁ.....61
ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....61
ԱՈՒԴԻՏԻ ԵՆԹԱՐԿՎՈՂ ԱՆՁ.....62
ԱՈՒԴԻՏԻ ԵՆԹԱՐԿՎՈՂ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....62
ԱՈՒԴԻՏԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ.....63
ԱՈՒԴԻՏԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ (ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ).....64
ԱՈՒԴԻՏՈՐ.....64
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....64
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ.....65
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ.....65
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....65
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՂԾ.....66
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐ.....66
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....66

Բ

ԲԱՁԵԼՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 67
ԲԱՁՄԱԳՈՐԾՈՆ ՌԵԳՐԵՍԻԱ 67
ԲԱՁՄԱԿԻ ԿՈՌԵԼՅԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԱԿԻՑ 68
ԲԱԺՆԵՏԵՐ 69
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ 70
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ 70
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ԲԸ) 70
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ 70
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԱՐՏՈՆՅԱԼ 71
ԲԱԺՆԵՏՈՄՍ 71
ԲԱԺՆԵՏՈՄՍ ԱՐՏՈՆՅԱԼ 71
ԲԱԺՆԵՏՈՄՍ ՀԱՍԱՐԱԿ 72
ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ 72
ԲԱԺՆԵՏՈՄՍԻ ՇԱՀՈՒՅԹԻ ՆՈՐՄԱ 72
ԲԱՆԿ 72
ԲԱՆԿ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ 73
ԲԱՆԿ ԷՄԻՍԻՈՆ 73
ԲԱՆԿ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ 73
ԲԱՆԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ 74
ԲԱՆԿ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ 74
ԲԱՆԿ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ 75
ԲԱՆԿ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ 76
ԲԱՆԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 76
ԲԱՆԿ ՄՈՒՆԻՑԻՊԱԼ 77
ԲԱՆԿ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ 77
ԲԱՆԿ ՊԵՏԱԿԱՆ 78
ԲԱՆԿ ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ 78
ԲԱՆԿ ՌԵԶԻԴԵՆՏ 78
ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴ 78
ԲԱՆԿԱՅԻՆ ԱՈՒԴԻՏ 79
ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ 79
ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 80
ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 80
ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ 81
ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ 81
ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ 81
ԲԱՆԿԱՅԻՆ ՀՈԼԴԻՆԳ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ 82

ԲԱՆԿԱՅԻՆ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏ 83
ԲԱՆԿԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ....83
ԲԱՆԿԱՅԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ 83
ԲԱՆԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ 83
ԲԱՆԿԱՅԻՆ ՕՖՇՈՐԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐ 84
ԲԱՆԿԵՐ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ....84
ԲԱՆԿԵՐ ՓԱՅԱՏԻՐԱԿԱՆ....85
ԲԱՆԿԵՐ ՓՈԽԱԴԱՐՁ-ԽՆԱՅՈՂԱԿԱՆ 85
ԲԱՆԿԵՐ ՓՈՍՏԱ-ԽՆԱՅՈՂԱԿԱՆ 86
ԲԱՆԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ....86
ԲԱՆԿԻ ԱԿՏԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ 86
ԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ 87
ԲԱՆԿԻ ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ 87
ԲԱՆԿԻ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԴԻՐՔ....87
ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՌԻՍԿԵՐ....87
ԲԱՆԿԻ ԲԱՐՁՐ ԻՐԱՑՎԵԼԻ ԱԿՏԻՎՆԵՐ....88
ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ....88
ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ....88
ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԶՈՒՏ ՄԱՐԺԱ 88
ԲԱՆԿԻ ԴԱՍԱԿԱՐԳՎԱԾ (ՉԱՇԽԱՏՈՂ) ՎԱՐԿԵՐ 88
ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ 88
ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ 89
ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ 89
ԲԱՆԿԻ ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻՑ ՎԵՐԱԴԱՐՁ....89
ԲԱՆԿԻ ԵԿԱՄՏԱԲԵՐ ԱԿՏԻՎՆԵՐ....90
ԲԱՆԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ....90
ԲԱՆԿԻ ԶՈՒՏ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ....90
ԲԱՆԿԻ ԶՈՒՏ ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ 90
ԲԱՆԿԻ ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ 90
ԲԱՆԿԻ ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՄԱՐԺԱ....90
ԲԱՆԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՍԵՓԱԿԱՆ) ԿԱՊԻՏԱԼ....90
ԲԱՆԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ....91
ԲԱՆԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐԻ
ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ (ROA) 91
ԲԱՆԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԳՈՐԾԱԿԻՑ (AU)....91

ԲԱՆԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՍԻՎՆԵՐ 92
ԲԱՆԿԻ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 92
ԲԱՆԿԻ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 92
ԲԱՆԿԻ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅՈՒՆ 92
ԲԱՆԿԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ (ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ) ԿԱՊԻՏԱԼ 93
ԲԱՆԿԻ ՕԱԽՍԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ 93
ԲԱՆԿԻ ԿԱՅՈՒՆ ԱՃԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 93
ԲԱՆԿԻ ԿԱՆԽԱՎՃԱՐՎԱԾ ՕԱԽՍԵՐԻ ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ 94
ԲԱՆԿԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ 94
ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՐԱԿ 95
ԲԱՆԿԻ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԱԿՏԻՎՆԵՐ 95
ԲԱՆԿԻ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ 95
ԲԱՆԿԻ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 95
ԲԱՆԿԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 96
ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ 96
ԲԱՆԿԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ 97
ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՆԵՐ 97
ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ 97
ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ 97
ԲԱՆԿԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻՆ
ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ 98
ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ 98
ԲԱՆԿԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ 99
ԲԱՆԿԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՇԱՀՈՒՅԹԻ ՉՍՏԱՑՄԱՆ ՌԻՍԿ 99
ԲԱՆԿԻ ՆԵՐՔԻՆ ՌԻՍԿԵՐ 99
ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԶՈՒՏ ՄԱՐԺԱ (NPM) 100
ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒՅԹԻ ՍՊՐԵԴ 100
ԲԱՆԿԻ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՆԵՐ 100
ԲԱՆԿԻ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 101
ԲԱՆԿԻ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ 101
ԲԱՆԿԻ ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 101
ԲԱՆԿԻ ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՕԱԽՍԵՐ 101
ԲԱՆԿԻ ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՄԱՐԺԱ 102
ԲԱՆԿԻ ՊԱՍԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ 102
ԲԱՆԿԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 102
ԲԱՆԿԻ ՌԻՍԿՈՎ ԿՇՌՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ 102
ԲԱՆԿԻ ՍԵՓԱԿԱՆ (ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ) ԿԱՊԻՏԱԼԻ
ՄՈՒԼՏԻՊԼԻԿԱՏՈՐ ԿԱՄ ԲԱԶՄԱՐԿԻՉ (EM) 103
ԲԱՆԿԻ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ (ROE) 103

ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ....103
ԲԱՆԿԻ ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ....103
ԲԱՆԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՍՊՐԵԴ....104
ԲԱՆԿԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ....104
ԲԱՆԿԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՕՁԽՍԵՐ....104
ԲԱՆԿԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՄԱՐԺԱ....104
ԲԱՆԿԻ ՑՊԱՀԱՆՋ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ....105
ԲԱՆԿՈՒՄ CAMELS ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ....105
ԲԱՐԴ ՏՈԿՈՍՆԵՐ....112
ԲԱՐՏԵՐ....113
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ԲԲԸ)....113
ԲԱՑ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ....113
ԲԱՑԱՐՁԱԿ ՀԱՎԵԼԱՑ (±Δy)....114
ԲԱՑԱՐՁԱԿ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ....114
ԲԱՑԱՐՁԱԿ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՒՄԱՐԱՅԻՆ....115
ԲԱՑԱՐՁԱԿ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ....115
ԲԵՌՆԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ (ՏՈՆՆԱԿԻԼՈՄԵՏՐԵՐՈՎ)....115
ԲԻՋՆԵՍ (ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ)....116
ԲԻՋՆԵՍՄԵՆ (ԳՈՐԾԱՐԱՐ)....116
ԲՅՈՒՋԵ....116
ԲՅՈՒՋԵ ԱՎԵԼ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԿԱՐԳ....116
ԲՅՈՒՋԵ ԸՆՏԱՆԻՔԻ....117
ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՊԱՀՎՈՂ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՕՁԽՍԵՐ....117
ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕՁԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ....117
ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՄՈՒՏՔԵՐ ԵՎ ՕՁԽՍԵՐ....118
ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ....118
ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ....119
ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ....119
ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐ....120
ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԽՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ....120
ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ....121
ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԱՄՓՈՓՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ....121
ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊՐՈՖԻՑԻՏ)....122
ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ....123
ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՊԱԿԱՍՈՒՐԴ (ԴԵՖԻՑԻՏ)....123

ԲՅՈՒՋԵՆԵՐԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԽՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ 123
ԲՅՈՒՋԵՆԵՐԻՑ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ 124
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 124
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ 124
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵԼՔԵՐ 125
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 125
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ 125
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՕԱԽՍԵՐ 125
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՕԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐ 125
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՕԱԽՍԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ (ՍԵԿՎԵՍՏՐ) 126
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ 126
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ 127
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ 127
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐ 127
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՐԱԴԱՍ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐ 128
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ 128
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ 128
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ 129
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ 130
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ ԵՎ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 130
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐԻ 130
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ 131
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՑ 131
ԲՆԱԿԱՆ ՉԱՓԻՉՆԵՐ 131
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԱՃ 131
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՇԱՐԺ 131
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 132
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԱԽՍԵՐ ԵՎ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 132
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 132
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՕԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԱՎԱԼ 132
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐ ՎՃԱՐՈՂՆԵՐ 133
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ 133
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐ 133

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ 133
ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐ 134
ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ 134
ԲՈՆԻՖԻԿԱՑԻԱ 134
ԲՈՆՈՒՍ 134
ԲՈՐՍԱ 134
ԲՈՐՍԱՅԱԿԱՆ ԻՆԴԵՔՍՆԵՐ 135
ԲՈՐՍԱՅԱԿԱՆ ՓՈԽԱՐԺԵՔ 135
ԲՈՐՍԱՅԻՆ ՇԱՀՈՒՅԹ 135
ԲՐՈՔԵՐ 136
ԲՐՈՔԵՐ ԱՆԿԱԽ 136
ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ՖԻՐՄԱՆԵՐ 136

Գ

ԳԱՆՁԱՊԱՀ 136
ԳԱՆՁԱՊԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 137
ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ 138
ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ 138
ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐ 138
ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳ 138
ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻՑ ԿԱՆԽԻԿ ՉԵՎՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ 139
ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇԻՎ (ԳՄՀ) 139
ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆ 140
ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ 141
ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 141
ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ 142
ԳԱՆՁՈՒՄ 143
ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ 144
ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ 144
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ 145
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 145
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ 146
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ 146
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 147
ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 147

ԳՅՈՒՂՄԹԵՐՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ 147
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ 147
ԳՆԱՀԱՏՈՒՄ 148
ԳՆԱԾ 148
ԳՆԱՆԿՈՒՄ 149
ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ 150
ԳՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍԸ ԱԳՐԵԳԱՏԱՅԻՆ ՏԵՍՔՈՎ (I_p) 151
ԳՆՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ 151
ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ 152
ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐ 152
ԳՈՐԾԱԿԱԼ 152
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐ (ՕԱԽՍԵՐ) 154
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՋՈՒՏ ՀՈՍՔԵՐ 154
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐ (ԵԿԱՄՈՒՏՆԵՐ) 154
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՇԱՀՈՒՅԹ (ՎՆԱՍ) 155
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 155
ԳՈՐԾԱՐԱՐ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ) 155
ԳՈՐԾԱՐԱՐ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 157
ԳՐԱՆՑ 158
ԳՐԱՆՑՄԱՆ ՍԽԱԼՆԵՐ 158
ԳՐԱՆՑՎԱԾ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ 158
ԳՐԱՎ 158
ԳՐԱՎԱԿԱՆ 158
ԳՐԱՎԱՌՈՒ 159
ԳՐԱՎԱՏՈՒ 159
ԳՐԱՎԱՏՈՒՆ ՀԱՆՁՆՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎ 159
ԳՐԱՎԻ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 159
ԳՈՒԴՎԻԼ 159
ԳՈՒՅՔԱԳՈՒՄ (ԻՆՎԵՆՏԱՐԻԶԱՑԻԱ) 159
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ 160
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐ 160
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԵՎ ԴԱՊԱՐԵՑՄԱՆ ՊԱՀ 160
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 161
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՕՎ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ 161
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՃԱՐՈՒՄ 161
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱ 162

ԳՈՒՅՔԱՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏ 162
ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 162

Դ

ԴԵԲԵՏ 162
ԴԵԲԵՏԱՅԻՆ ՔԱՐՏ 163
ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ 163
ԴԵՊՈ ՀԱՇԻՎ 164
ԴԵՊՈԶԻՏ 164
ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ 164
ԴԵՎԱԼՎԱՑԻԱ 165
ԴԵՏԵՐՄԻՆԱՑԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԻՑ ($D_{yx_1x_2...x_n}$) 165
ԴԵՏԵՐՄԻՆԱՑԻԱՅԻ ՄԱՍՆԱԿԻ ԳՈՐԾԱԿԻՑ (dyx_i) 165
ԴԵՖԼՅԱՑԻԱ 165
ԴԻԼԵՐ 166
ԴԻԼԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 166
ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՇԱՐՔԻ ՀԱՐԹԵՑՈՒՄՆԵՐ 166
ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՇԱՐՔԻ ՄԻՋԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 168
ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 169
ԴԻՍԿՈՆՏ 169
ԴԻՍԿՈՆՏԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ 169
ԴԻՍԿՈՆՏԱՎՈՐՈՒՄ 170
ԴԻՍՊԵՐՍԻԱ 170
ԴԻՍՊԵՐՍԻԱ ԸՍՏ ԱԼՏԵՐՆԱՏԻՎ (ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ) ՀԱՏԿԱՆԻՇԻ 171
ԴԻՍՊԵՐՍԻԱՅԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ 172
ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱ 174
ԴՈՏԱՑԻԱ 174
ԴՐԱՄ 174
ԴՐԱՄԱԿԱՆ ԱԳՐԵԳԱՏ 175
ԴՐԱՄԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ 175
ԴՐԱՄԱԿԱՆ ԲԱԶԱ 175
ԴՐԱՄԱԿԱՆ ՋԱՆԳՎԱԾ 175
ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 176
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ 176
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 177
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՐԱՎ 177
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐ 177

ԴՐԱՄԱԿԱՆ ՇՈՒԿԱ 177
ԴՐԱՄԱԿԱՆ ՉԱՓԻՉՆԵՐ 178
ԴՐԱՄԱՀԱՏԱՐԱՆ 178
ԴՐԱՄԱՆԻՇԵՐ 178
ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ 179
ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ 179
ԴՐԱՄԱՊԱՀՈՑ 180
ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ 180
ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 180
ԴՐԱՄԱՐԿՂ 181
ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳԻՐՔ 182
ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 182
ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ 182
ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՉԵԿ 183
ԴՐԱՄԱՐԿՂԻ ՕՐԴԵՐ 183
ԴՐԱՄԻ (ՓՈՂԻ) ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԵՐԸ 183
ԴՈՒՍՏՐ ԲԱՆԿ 184
ԴՈՒՍՏՐ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ (ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ) 184

Ե

ԵԿԱՄՏԱՀԱՐԿ 184
ԵԿԱՄՏԱՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐ 185
ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԳԱՆՁՈՒՄԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՑ
ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑԻՑ 185
ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԳՁՈՎ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ 185
ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԳՁՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 186
ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ 186
ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ 186
ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՁՈՎ ԵԿԱՄՈՒՏ
ՉՀԱՄԱՐՎՈՂ ՏԱՐՐԵՐ 187
ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՁՈՎ ՀԱՄԱԽՍՈՒՆ ԵԿԱՄՈՒՏ 187
ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ԵՎ ՎՃԱՐՈՒՄ
ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԿՈՂՄԻՑ 188
ԵԿԱՄՏԱՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏ ԵՎ ՀԱՐԿՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ 188
ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ 188
ԵԿԱՄՈՒՏ 189

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՇԻՎ 189
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄԸ ՏԱՐՎԱ ԱՌՈՒՄՈՎ 189
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՇԻՎ 189
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՇԻՎ 190
ԵՎՐԱՐԺՈՒՅԹ 190
ԵՎՐԱՐԺՈՒՅԹՈՎ ԴԵՊՈԶԻՏՆԵՐ 190
ԵՎՐՈՇՈՒԿԱ 190
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 191
ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 192
ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ (ԱՆԴԵՐՐԱՅԹԻՆԳ) 192
ԵՐԱՇԽԻՔ 193
ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 193
ԵՐԿԱԿԻ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ 193
ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԱԿՏԻՎՆԵՐ 193
ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՊԱՍԻՎՆԵՐ 194
ԵՐԿՄԱԿԱՐԴԱԿ ՇՈՒԿԱ 194
ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԻՍԿ 194
ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ 194
ԵՐՐՈՐԴ ԱՆՁ 195

Զ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ 195
ԶԲԱՂՎԱԾՆԵՐ 195
ԶԲԱՂՎԱԾՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ 195
ԶԵՂՁ 196
ԶՈՒՅԳԱՅԻՆ ՌԵԳՐԵՍԻԱ 196
ԶՈՒՏ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ 197
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ 197
ԶՈՒՏ ԱՐԺԵՔ 197
ԶՈՒՏ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ 197
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ (ԶԱԱ) 198
ԶՈՒՏ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔ 198
ԶՈՒՏ ՀԱՍՈՒՅԹ 198
ԶՈՒՏ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ 198
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ (ԶՆԱ) 198
ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ (ՀԱՐԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ) 199
ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ (ՄԻՆՉԵՎ ՀԱՐԿՈՒՄԸ) 199
ԶՈՒՏ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ (+) ԿԱՄ ԶՈՒՏ ՓՈԽԱՌՈՒՄ (-) 199

Է

ԷԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ 199
ԷԼԱՍՏԻԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ 199
ԷԼԱՍՏԻԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԳՈՐԾԱԿԻՑ 199
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 200
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՆՈՒՄ 200
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴՐԱՄՆԵՐ 200
ԷՄԻՍԻԱ 200
ԷՄԻՍԻՈՆ ՇԱՀՈՒՅԹ 201
ԷՄԻՏԵՆՏ 201
ԷՔՍՈՒՆԹԻՆԳ 201
ԷՔՍՊԻՐԱՑԻԱ 201

Ը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԱՄՈՒՏ 201
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍ 201
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍ (ԿԱՅՈՒՆ ԿԱՋՄՈՎ)՝ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԳՈՎ (I_z) 201
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍ՝ ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՎ (I_{pq}) 202
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍ՝ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԾԱԽՍԻ ԳՈՎ (I_{Tq}) 202
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍ՝ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ (I_q) 203
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊ 203
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ՄԱՍԻՆ 204
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ 204
ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ 205
ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐԻ (ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ) ՇՐՋԱՆԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ 205
ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ 205
ԸՆԹԱՑԻԿ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 206
ԸՆԹԱՑԻԿ ԱՐԺԵՔ 206
ԸՆԹԱՑԻԿ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 206
ԸՆԹԱՑԻԿ ԶՈՒՏ ԱՐԺԵՔ 207

ԸՆԹԱՑԻԿ ՕԱԽՍԵՐ.....207
ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....207
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՌԵԵՍՏՐ.....207
ԸՆՏԱՆԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ.....208
ԸՆՏՐԱՆՔ ԲՈՒՆ-ՊԱՏԱՀԱԿԱՆ.....208
ԸՆՏՐԱՆՔ ԿՐԿՆՎՈՂ.....209
ԸՆՏՐԱՆՔ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ.....210
ԸՆՏՐԱՆՔ ՉԿՐԿՆՎՈՂ.....210
ԸՆՏՐԱՆՔ ՍԵՐԻԱԿԱՆ.....211
ԸՆՏՐԱՆՔ ՏԻՊԱԿԱՆ.....211
ԸՆՏՐԱՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԸՆՏՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ.....211
ԸՆՏՐԱՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՍԽԱԼ.....212

Թ

ԹՂԹԱԴՐԱՄ.....212
ԹՂԹԱԿԻՑ ԲԱՆԿ.....213
ԹՂԹԱԿՑԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....214
ԹՈՂԱՐԿՈՒՄ (ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ).....214

Ժ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԱՅԴ ՏԱՐԱԾՔԻՑ.....215
ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔ.....215
ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏՔ.....215

Ի

ԻՄԻՋ.....215
ԻՆԴԵՔՍ.....215
ԻՆԴԵՔՍ ԱԳՐԵԳԱՏԱՅԻՆ.....217
ԻՆԴԵՔՍ ԱՆՀԱՏԱԿԱՆ.....217
ԻՆԴԵՔՍ ԱՆՀԱՏԱԿԱՆ՝ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ԱՊՐԱՆՔՆԵՐԻ) ՖԻԶԻԿԱԿԱՆ ՕԱՎԱԼԻ ԳՕՈՎ (i_q).....217

ԻՆԴԵՔՍ ԱՆՀԱՏԱԿԱՆ՝ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐԺԵՔԻ (ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ) ԳՇՈՎ (i_{pq}) 219
ԻՆԴԵՔՍ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԳՆԵՐԻ (ԱԱԳ) 219
ԻՆԴԵՔՍ ԲԵՌՆԱՓԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ 220
ԻՆԴԵՔՍ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՆԵՐԻ 221
ԻՆԴԵՔՍ ԳՅՈՒՂՄԹԵՐՔ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԳՆԵՐԻ 221
ԻՆԴԵՔՍ ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ 221
ԻՆԴԵՔՍ ԿԱՅՈՒՆ ԿԱԶՄՈՎ 221
ԻՆԴԵՔՍ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺՈՎ 222
ԻՆԴԵՔՍ ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ 222
ԻՆԴԵՔՍ ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԳՆԵՐԻ 223
ԻՆԴԵՔՍ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ 223
ԻՆԴԵՔՍ ՓՈՓՈԽԱԿԱՆ ԿԱԶՄՈՎ 223
ԻՆԴԵՔՍ՝ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕԱԽՍՈՒՄՆԵՐԻ 224
ԻՆԴԵՔՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ 224
ԻՆԴԵՔՍԱՎՈՐՈՒՄ 225
ԻՆԴԵՔՍՆԵՐ ՄԻՋԻՆ 226
ԻՆԴԵՔՍՆԵՐ ՏԵՐԻՏՈՐԻԱԼ (ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ) 228
ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿԱՅՈՒՆ ԿՇԻՌՆԵՐՈՎ 229
ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ 229
ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՓՈՓՈԽՈՒՆ ԿՇԻՌՆԵՐՈՎ 229
ԻՆԴՈՍԱՄԵՆՏ 230
ԻՆԴՈՍԱՆՏ 230
ԻՆԴՈՍԱՏ 230
ԻՆԿԱՍԱՑԻԱ 230
ԻՆԿԱՍՈ 230
ԻՆՎԵՍՏԻՑԻԱ 231
ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԲՈՔԵՐԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ 231
ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ 231
ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ 231
ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ 231
ԻՆՖԼՅԱՑԻԱ 231
ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ 232
ԻՐԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 232
ԻՐԱԿԱՆ ԶՈՒՏ ԱՐԺԵՔ 232
ԻՐԱԿԱՆ ՕԱԽՍԵՐ 232
ԻՐԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ 232
ԻՐԱԿԱՆ ՓՈԽԱՐԺԵՔ 233

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐ 233
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՉՈՒՆԵՑՈՂ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏ 234
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏ 234
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ....234
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՎ 234
ԻՐԱՑՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԾԱՎԱԼ....234
ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ)....235
ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 237
ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅՈՒՆ 237
ԻՐԱՑՈՒՄԻՑ ՀԱՍՈՒՅԹ....238
ԻՐԱՑՈՒՄԻՑ ՇԱՀՈՒՅԹ (ՎՆԱՍ)....238

L

ԼԵՎԵՐԻՋ....238
ԼԵՎԵՐԻՋԻ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ....238
ԼԻԱԶՈՐԱԳԻՐ (ՎՍՏԱՀԱԳԻՐ)....239
ԼԻԲՈՐ....239
ԼԻԶԻՆԳ (ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ) 239
ԼԻԶԻՆԳ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ....240
ԼԻԶԻՆԳ ՕՊԵՐԱՏԻՎ 241
ԼԻԶԻՆԳ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ....241
ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔ 241
ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ....242
ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 243
ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ 243
ԼԻԶԻՆԳԻ (ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ) ՈՒՂՂԱԿԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ 243
ԼԻԶԻՆԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ....243
ԼԻԶԻՆԳՆ ԻՆՉ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ....244
ԼԻԶԻՆԳՆ ԻՆՉՈՎ Է ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՎԱՐԿԻՑ 245
ԼԻԶԻՆԳՈՎ ԻՆՉ ԱՊՐԱՆՔՆԵՐ ԿԱՐԵԼԻ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ....245
ԼԻՑԵՆԶԻԱ 246
ԼԻՖՈ 246
ԼՈՂԱՑՈՂ ՓՈԽԱՐԺԵՔ....247
ԼՈՐՈ....247
ԼՈՐՈ ԹՂԹԱԿՑԱՅԻՆ ՀԱՇԻՎ....247

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ 247
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 247
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՊԻՏԱԼ 248
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ 248
ԼՐԻՎ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ 248
ԼՐԻՎ ԻՆՔՆԱՐԺԵՔ 248
ԼՈՒԾԱՐՈՒՄ 248

Խ

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿ 249
ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏՆԵՐ 249
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՖԻՐՄԱՆԵՐ 250

Ծ

ԾԱԽՍԵՐ (ԾԱԽՔԵՐ) 250
ԾԱԽՍԵՐ ԱՆՈՒՂԱԿԻ 251
ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ 251
ԾԱԽՍԻ ԴՐԱՄԱՐԿՂԻ ՕՐԴԵՐ 251
ԾԱԽՍՈՂ ՄԻԱՎՈՐՆԵՐ 251
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼ 252
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ 252
ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ (ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 252
ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 252

Կ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ 253
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ 253
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ 253
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 253
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ (ՀԻՄՆԱԴԻՐ) 254
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 254
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄ 254

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ....254
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՈՎ....254
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ....255
ԿԱԼԿՈՒԼՅԱՑԻԱ....255
ԿԱԼԿՈՒԼՅԱՑԻՈՆ ՀԱՇԻՎՆԵՐ....255
ԿԱՅՈՒՆ (ՀԱՍՏԱՏՈՒՆ) ՊԱՍԻՎՆԵՐ....256
ԿԱՆԽԱՄՏԱՑՎԱԾ ՍՆԱՆԿԱՑՈՒՄ....256
ԿԱՆԽԱՎԵՃԱՐ....256
ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄ....257
ԿԱՆԽԻԿԻ ԴԻՐՔ....257
ԿԱՆԽԻԿԻ ՀՈՍՔ....257
ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ (ԲԱԺՆԵՀԱՎԱՔ) ԿԱՊԻՏԱԼ....258
ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ....258
ԿԱՊԻՏԱԼ....258
ԿԱՊԻՏԱԼ ՕԱԽՍԵՐ....259
ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՕԱՎԱԼ....259
ԿԱՊԻՏԱԼ ՍԵՓԱԿԱՆ....260
ԿԱՊԻՏԱԼ ՓՈԽԱՌՈՒ....260
ԿԱՊԻՏԱԼԱՑՈՒՄ....260
ԿԱՊԻՏԱԼԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ....261
ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ....261
ԿԱՊԻՏԱԼԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ....261
ԿԱՊԻՏԱԼԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇԻՎ....262
ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱ....262
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ....262
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ....262
ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԱՍԻՎՆԵՐ....263
ԿԼԱՍՏԵՐ....263
ԿԼԱՍՏԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ....263
ԿՅԱՆՔԻ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ....263
ԿՇՌՎԱԾ ԵՎ ՊԱՐԶ ՄԻՋԻՆ ՀԱՐՄՈՆԻԿ....263
ԿՇՌՎԱԾ ՄԻՋԻՆ ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ....264
ԿՇՌՎԱԾ ՄԻՋԻՆ ԹՎԱԲԱՆԱԿԱՆ....265
ԿՈՄԻՍԻՈՆ (ՄԻՋՆՈՐԴԱՅԻՆ) ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ....265
ԿՈՄՊԻԼՅԱՑԻԱ....266
ԿՈՆԿՐԵՏ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ....266
ԿՈՆՈՍԱՄԵՆՏ....266
ԿՈՆՍՈԼԻԴԱՑԻԱ (ՀԱՄԱԽՄԲՈՒՄ)....266
ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ....267
ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ ԲԱՆԿԱՅԻՆ....267

ԿՈՆՏՈԿՈՐԵՆՏ 267
ԿՈՆՑԵՍԻԱ 267
ԿՈՇՏ ԳՐԱՎ 267
ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐ 267
ԿՈՌԵԼՅԱՑԻԱՅԻ ԳՇԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԻՑ (r_{yx_i}) 268
ԿՈՌԵԼՅԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԱԿՑԻ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇ ($\mu_{r_{yx}}$) . 269
ԿՈՌԵԼՅԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԱԿՑԻ ՄԻՋԻՆ ՔԱՌԱԿՈՒՍԱՅԻՆ
ՍԽԱԼԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ($\sigma_{r_{yx}}$) 269
ԿՈՌԵԼՅԱՑԻՈՆ ԿԱՊ 270
ԿՈՌԵԼՅԱՑԻՈՆ ՀԱԿԱԴԱՐՁ ԿԱՊ 270
ԿՈՌԵԼՅԱՑԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 271
ԿՈՌԵԼՅԱՑԻՈՆ ՈՒՂԻՂ ԿԱՊ 271
ԿՈՎԵՐՆՈՏ 271
ԿՐԵԴԻՏ 271
ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ 271
ԿՐԿՆԱԿԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՂԱՆԱԿ 272
ԿՈՒՊՈՆ (ԿՏՐՈՆ) 272

Հ

ՀԱԿԱԴԱՐՁ ԿԱՊ 273
ՀԱՃԱԽՈՐԴ 273
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 273
ՀԱՄԱԴՐԵԼԻ (ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ) ԳՆԵՐՈՎ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄ 273
ՀԱՄԱԽՍՈՒՆ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔ 274
ՀԱՄԱԽՍՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔ 274
ՀԱՄԱԽՍՈՒՆ ԵԿԱՄՈՒՏ 274
ՀԱՄԱԽՍՈՒՆ ՀՈՍՔԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐ 275
ՀԱՄԱԽՍՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ (ՀՆԱ) 275
ՀԱՄԱԽՍՈՒՆ ՇԱՀՈՒՅԹ 276
ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵԿՇԻՌ 277
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՉՔԻ
ԱՋԱՏ ՄՆԱՑՈՐԴ 277
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄ 277
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾ 278
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ 278
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ 278
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 279

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ 279
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ 280
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 280
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ 281
ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 281
ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ 281
ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ 282
ՀԱՇԻՎ 282
ՀԱՇԻՎ ԱԿՏԻՎԱ-ՊԱՍԻՎԱՅԻՆ 283
ՀԱՇԻՎ ԱԿՏԻՎԱՅԻՆ 283
ՀԱՇԻՎ ԱՆԱԼԻՏԻԿ 283
ՀԱՇԻՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 283
ՀԱՇԻՎ ԱՎԱՆԴԱՅԻՆ 284
ՀԱՇԻՎ ԸՆԹԱՑԻԿ 284
ՀԱՇԻՎ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 285
ՀԱՇԻՎ ԹՂԹԱԿՑԱՅԻՆ 285
ՀԱՇԻՎ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ 286
ՀԱՇԻՎ ՉԵԿԱՅԻՆ 286
ՀԱՇԻՎ ՊԱՍԻՎԱՅԻՆ 286
ՀԱՇԻՎ ՍԱՌԵՑՎԱԾ 286
ՀԱՇԻՎ ՍԻՆԹԵՏԻԿ 287
ՀԱՇԻՎ ՎԱՐԿԱՅԻՆ 287
ՀԱՇԻՎ ՖԱԿՏՈՒՐԱ 287
ՀԱՇԻՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ 288
ՀԱՇԻՎՆԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ 288
ՀԱՇԻՎՆԵՐ ԳՈՒՅՔԱ-ՆՅՈՒԹԱԿԱՆ 288
ՀԱՇԻՎՆԵՐ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ 288
ՀԱՇԻՎՆԵՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ 289
ՀԱՇԻՎՆԵՐ ՀԱՄԱԴՐՄԱՆ 289
ՀԱՇԻՎՆԵՐ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ 289
ՀԱՇԻՎՆԵՐ ՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ 289
ՀԱՇԻՎՆԵՐ ՀԱՎԱՔՄԱՆ-ԲԱՇԽՄԱՆ 290
ՀԱՇԻՎՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄԱՅԻՆ 290
ՀԱՇԻՎՆԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ 290
ՀԱՇԻՎՆԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ 290
ՀԱՇԻՎՆԵՐ ՖԻՆԱՆՍԱ-ՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ 291
ՀԱՇԻՎՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ 291

ՀԱՇՎԱՅԻՆ ԱՋԱՏ ԹԵՐԹԵՐ 291
ՀԱՇՎԱՅԻՆ ՉԱՓԻՉՆԵՐ 291
ՀԱՇՎԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐ 291
ՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 291
ՀԱՇՎԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ 292
ՀԱՇՎԱՆՑՈՒՄ 292
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇԻՎ 293
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐ 293
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ 294
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ ՊԼԱՆ 294
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎԵՐ 294
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ 295
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵԹՈԴ 295
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ 295
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 296
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ 296
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ 296
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ 296
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 297
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 297
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՏՅԱՆՆԵՐ 297
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵԿԱՄՈՒՏ ՉԵՆԱՉՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 297
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՉԵՆԱՉՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 298
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 298
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ 299
ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 300
ՀԱՇՎԱՌՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ (ՕՊԵՐԱՏԻՎ) 300
ՀԱՇՎԱՌՈՒՄ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ 301
ՀԱՇՎԱՌՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ 301
ՀԱՇՎԱՌՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ 301
ՀԱՇՎԱՐԿԱ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 301
ՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ ԱՐԺԵՔ 302
ՀԱՇՎԵԿՇՌԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ 302
ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ 302
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 303

ՀԱՇՎԵՏՈՒ ԱՆՁ 303
ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ 303
ՀԱՍԱՐԱԿ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ 304
ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎճԱՐ 304
ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎճԱՐԻ ԳԾՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ 304
ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎճԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ 305
ՀԱՍՏԱՏՈՒՆ ՕԱԽՍԵՐ 306
ՀԱՍՈՒՅԹ 306
ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ 306
ՀԱՎԵԼԱԾԻ ՏԵՄՊ 307
ՀԱՎԵԼԱԾԻ ՏԵՄՊԻ 1%-Ի ԲԱՑԱՌՁԱԿ ԱՐԺԵՔ (A) 307
ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ 307
ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ 308
ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ 308
ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ 309
ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ԿՈՈՐԴԻՆԱՑՄԱՆ 309
ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ 309
ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ 310
ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՁԵՎԵՐ 310
ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ 310
ՀԱՐԿ 311
ՀԱՐԿ ՎճԱՐՈՂՆԵՐ 311
ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ 311
ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ 312
ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ 312
ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ 312
ՀԱՐԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 313
ՀԱՐԿԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԳԱՆԳԱՏԱՐԿՈՒՄ 313
ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 313
ՀԱՐԿԵՐ ԱՆՈՒՂՂԱԿԻ 313
ՀԱՐԿԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ 314
ՀԱՐԿԵՐ ՈՒՂՂԱԿԻ 314
ՀԱՐԿԵՐԻ ՎճԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳ 314
ՀԱՐԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ 315
ՀԵՋԱՎՈՐՈՒՄ (ԿՈՐՈՒՍՏԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄ) 315
ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ 315

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱԽԱՌՆ ԿՈՒՏԱԿՈՒՄ 315
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 316
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ 316
ՀԻՊԵՐԻՆՖԼՅԱՑԻԱ 317
ՀԻՓՈԹԵՔ 317
ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 318
ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ 318
ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԿԱՆԽԱՎԵՃԱՐ 318
ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ 319
ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԿԱՐԻՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՈՒՆԵՆԱԼ 321
ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՄԱՐՈՒՄ 321
ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿՆ ԻՆՉ ԱՐԺՈՒՅԹՈՎ ԿԱՐՈՂ Է ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԼԻՆԵԼ 323
ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ՝ ՈՉ ՍՏԱՆԴԱՐՏ 323
ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ՝ ՍՏԱՆԴԱՐՏ 324
ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ 324
ՀՀ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ԲՅՈՒՋԵ 324
ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔԸ (ՀՀ ՄՆԴ) 325
ՀՆԱ-Ի ԴԵՖԼՅԱՏՈՐ (ԻՆԴԵՔՍ) 325
ՀՆԱՐԱՎՈՐ ՍՆԱՆԿԱՑՈՒՄ 325
ՀՈԼԴԻՆԳ 326
ՀՈՂԻ ՀԱՐԿ 326
ՀՈՂԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐ 326
ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՀ 326
ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 326
ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՕՈՎ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ 327
ՀՐԱԺԱՐԱԳԻՆ 327

Չ

ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ 328
ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 328
ՉԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԱՐԺԵՔ 328

Ճ

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐ 329

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐ 329
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ 329
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ 329

Մ

ՄԱԿԼԵՐ 330
ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ.....330
ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ.....330
ՄԱՆՐԱՃԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ.....330
ՄԱՍՆԱԿԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ 331
ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՋԱՆՑ ՏՐՎՈՂ ՎԱՐԿԵՐ 331
ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ.....332
ՄԱՐԿԵԹԻՆԳ 332
ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ.....332
ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 332
ՄԱՔՍԱՎՃԱՐ.....333
ՄԱՔՍԱՏՈՒՆ 333
ՄԱՔՍԱՏՈՒՐՔ 333
ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ.....333
ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻ ԵՎ ՄԱՔՍԱՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ 334
ՄԱՔՈՒՐ ՊԱՇԱՐՆԵՐ 334
ՄԵԴԻԱՆԱ 335
ՄԵԾ ԹՎԵՐԻ ՕՐԵՆՔ.....335
ՄԵԾԱՃԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ 336
ՄԵԿ ԲԱԺՆԵՏՈՄՍԻ ՇԱՀԱԲԱԺԻՆ.....336
ՄԵՆԱՇՆՈՐՀ.....336
ՄԵՆԵՋՄԵՆԹ.....337
ՄԵՏԱՂԱԴՐԱՄ 337
ՄԻԱԳՈՐԾՈՆ ԵՎ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆ ԿԱՊԵՐ 337
ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 337
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 338
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ 338
ՄԻՋԱՆԿՅԱԼ ՍՊԱՌՈՒՄ 338
ՄԻՋԻՆ ԱճԻ ՏԵՄՊ.....339
ՄԻՋԻՆ ԲԱՑԱՐՁԱԿ ՀԱՎԵԼԱճ (Ā) 339
ՄԻՋԻՆ ԳԾԱՅԻՆ ՇԵՂՈՒՄ 340
ՄԻՋԻՆ ԹՎԱԲԱՆԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 341
ՄԻՋԻՆ ՔԱՌԱԿՈՒՍԱՅԻՆ.....342

ՄԻՋԻՆ ՔԱՌԱԿՈՒՍԱՅԻՆ ՇԵՂՈՒՄ (σ) 343
ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐ....343
ՄՈԴԱ 344
ՄՈՄԵՆՏԱՅԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ 345
ՄՈՆԻՏՈՐԻՆԳ 345
ՄՈՏԻՎԱՑԻԱ....345
ՄՈՒՏՔԻ ԴՐԱՄԱՐԿՂԻ ՕՐԴԵՐ 346
ՄՈՒՐՀԱԿ 346
ՄՈՒՐՀԱԿ ՀԱՍԱՐԱԿ 347
ՄՈՒՐՀԱԿԻ ՁԵՂՁՈՒՄ 347

Ն

ՆԱԽԱՎՃԱՐ 347
ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ 348
ՆԵՐԴՐՈՂ (ԻՆՎԵՍՏՈՐ)....348
ՆԵՐԴՐՎԱԾ ԿԱՊԻՏԱԼԻ ԵՏ ԳՆՄԱՆ ԺԱՄԿԵՏ 348
ՆԵՐԴՐՈՒՄ (ԻՆՎԵՍՏԻՑԻԱ) 348
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐ (ՕԱԽՍԵՐ) 349
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁՈՒՏ ՀՈՍՔԵՐ 349
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐ (ԵԿԱՄՈՒՏՆԵՐ) 349
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՇՈՒԿԱ....350
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ....350
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՍԽԱԼ....351
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ 351
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ 352
ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ....352
ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ....352
ՆԵՐՔԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ 353
ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ 353
ՆՅՈՒԹԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ....353
ՆՇԱՆԱԿՎԱԾ ԱՄՍԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ (ՆՊԱՍՏԻ) ՄԻՋԻՆ ՉԱՓ 353
ՆՈՍՏՐՈ....354
ՆՈՍՏՐՈ ՀԱՇԻՎ 354

ՆՈՐՄԱԼ ԲԱՇԽՈՒՄ....354
ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ....355

Շ

ՇԱՀԱԲԱԺԻՆ (ԴԻՎԻԴԵՆՏ)....355
ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՕՎ ԿԱՆԽԱՎՃԱՐ....355
ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ....356
ՇԱՀԱՌՈՒ (ՎՃԱՐՈՒՄԸ ՍՏԱՑՈՂ)....356
ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ)....357
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ....358
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐ....359
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՕՎ ԱՄՈՐՏԻԶԱՑԻՈՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ....359
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՕՎ ԵԿԱՄՈՒՏ ՉՀԱՄԱՐՎՈՂ ՏԱՐՐԵՐ....359
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՕՎ ԾԱԽՍ ՉՀԱՄԱՐՎՈՂ ՏԱՐՐԵՐ....359
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՕՎ ԾԱԽՍԵՐ....359
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՕՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ....360
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԳՕՎ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐ....360
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ....360
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՎՃԱՐՈՒՄ....360
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏ....360
ՇԱՀՈՒՅԹ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ....361
ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՊԻՏԱԼԱՑՈՒՄ....361
ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔ....361
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ....361
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ....362
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՐԱՎ....362
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ....363
ՇՈՒԿԱ....363
ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔ....363

Ո

ՈՉ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 364
ՈՉ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԱԽՍԵՐ.....364
ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ.....364
ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ 364
ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 365
ՈՉ ԼՐԻՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 365
ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ.....365
ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ 366
ՈՉ ՌԵՋԻՊԵՆՏՆԵՐ 366
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ 366
ՈՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄԵԹՈԴ 367

Չ

ՉԱՊԱՀՈՎՎԱԾ (ԲԼԱՆԿԱՅԻՆ) ՎԱՐԿ 367
ՉԲԱՇԽՎԱԾ ՇԱՀՈՒՅԹ.....367
ՉԵԿ.....367
ՉԵԿԱՅԻՆ ԱՎԱՆԴ.....367
ՉԵԿԱՅԻՆ ԳՐՔՈՒՅԿ 367

Պ

ՊԱԿԱՍՈՐԴ 368
ՊԱԿԱՍՈՒՐԴ.....368
ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԿՈՐ 368
ՊԱՀՈՒՍՏՆԵՐ.....369
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ.....369
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓՈԽԱՐԺԵՔ (ԿՈՒՐՍ).....369
ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԳՐԱՆՑՎԱԾ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐ 370
ՊԱՍԻՎՆԵՐ.....370
ՊԱՍԻՎՆԵՐ ՈՉ ՀՐԱՏԱՊ.....370
ՊԱՐԶ ՄԻՋԻՆ ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ 370
ՊԱՐԶ ՏՈԿՈՍՆԵՐ 371
ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿ 371
ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ.....372

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄ 372
ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿԻ ՊՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ.....373
ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ
ԵՎ ՀԱՐԿԻ ՎճԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ 373
ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻՑ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԻՆ ԱՆՑՆԵԼ 373
ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏ 373
ՊԱՐՏԱԴԻՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 374
ՊԱՐՏԱՊԱՆ (ԴԵԲԻՏՈՐ) 374
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ 374
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՌԻՍԿ.....374
ՊԱՐՏԱՏԵՐ (ԿՐԵԴԻՏՈՐ) 374
ՊԱՐՏԱՏՈՄՍ.....375
ՊԱՐՏՔ 375
ՊԱՐՏՔԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.....376
ՊԱՐՏՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ 376
ՊԱՐՏՔԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 376
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ.....376
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏ (ՊԱԿԱՍՈՒՐԴ).....377
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ)
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ.....377
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 377
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՕԱԽՍԵՐ 378
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 379
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄ 379
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻՇ.....380
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊՐՈԳՆԵՖԻՑԻՏ (ՀԱՎԵԼՈՒՐԴ) 381
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 381
ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐ.....381
ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ.....381
ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ
ՍՊԱՌՄԱՆ ՕԱԽՍԵՐ 381
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ.....382
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ 382
ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ 382
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ.....383
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎճԱՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 383
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎճԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 383
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԱՆՁՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ.....383

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳՁՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 384
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ 384
ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ 384
ՊԼԱՆ ՕՊԵՐԱՏԻՎ 384
ՊԼԱՆԱՅԻՆ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ 385
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ (ՏԱԿՏԻԿԱԿԱՆ) 385
ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ (ՍՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ) 385
ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԵՐ 386
ՊԼԱՖՈՆ 386
ՊՈՐՏՖԵԼԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄ 386
ՊՐՈՄԻԼ 386

Ռ

ՌԵԳՐԵՍԻԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 387
ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐ 388
ՌԵԿՎԻԶԻՏՆԵՐ 388
ՌԵԿՎԻԶԻՑԻԱ 388
ՌԵՅԹԻՆԳ 389
ՌԵՆՏԱ 389
ՌԵՊՈ 389
ՌԻՍԿ (ՎՏԱՆԳ) 389
ՌԻՍԿ ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ 390
ՌԻՍԿ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ 390
ՌԻՍԿ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ 391
ՌԻՍԿ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ 391
ՌԻՍԿ ԱՐՏԱՀԱՇՎԵԿՇՌԱՅԻՆ 391
ՌԻՍԿ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ 391
ՌԻՍԿ ԲԱՆԿԱՅԻՆ 392
ՌԻՍԿ ԲԱՆԿԻ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ 392
ՌԻՍԿ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ 393
ՌԻՍԿ ԳՐԱՎՆԵՐԻ 393
ՌԻՍԿ ԵՐԿՐԻ 393
ՌԻՍԿ ԻՆՖԼՅԱՑԻԱՅԻ (ԱՐԺԵԶՐԿՄԱՆ) 394
ՌԻՍԿ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ 394
ՌԻՍԿ ԿԱՊԻՏԱԼԻ 394
ՌԻՍԿ ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ 394
ՌԻՍԿ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 395
ՌԻՍԿ ՀԱՐԿԱՅԻՆ 395

ՌԻՍԿ ՃՅՈՒՂԱՅԻՆ 395
ՌԻՍԿ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ 395
ՌԻՍԿ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ 395
ՌԻՍԿ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ 396
ՌԻՍԿ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ 396
ՌԻՍԿ ՉԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՎՈՂ (ՊԱՐԲԵՐԱԿԱՆ) 396
ՌԻՍԿ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ 397
ՌԻՍԿ ՎԱՐԿԱՅԻՆ 397
ՌԻՍԿ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՄ ՌԻՍԿ ՖՈՐՍՄԱԺՈՐԱՅԻՆ 397
ՌԻՍԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ 397
ՌԻՍԿ ՏՈԿՈՍԱՅԻՆ 397
ՌԻՍԿ ՓՈԽԱՆՑՄԱՆ 398
ՌԻՍԿ ՔԱՂԱՔԱԿԱՆ 398
ՌԻՍԿ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ 398
ՌԻՍԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ 398
ՌԻՍԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ 399
ՌԻՍԿԵՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ 399
ՌԻՍԿԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ 399
ՌԻՍԿԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ 399
ՌԻՍԿԵՐ ՀԱՇՎԱՌՄԱՆ 399
ՌԻՍԿԵՐ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅԱՆ 399
ՌԻՍԿԵՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ 400
ՌԻՍԿԵՐ ՎԱՐՉԱԿԱՆ 400
ՌԻՍԿԵՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ 400
ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 400
ՌՈԼՈՎԵՐ (ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ) 400
ՌՈՅԱԼԹԻՆԵՐ 401

Ս

ՍԱԿԱԳԻՆ 401
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ՍՊԸ) 402
ՍԵԿՎԵՍՏՐ 402
ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ 402
ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆ 403
ՍԵՓԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ (ՇՐՋԱՆԱՌՈՒ) ԱԿՏԻՎՆԵՐ 403

ՍԵՓԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ (ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ) ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ 403
ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՈՒՂԹ 403
ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ 403
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 403
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՇԻՎ 404
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՍԱԼԴՈ (ՄՆԱՑՈՐԴ) 404
ՍՅՈՒՐՎԵՅԵՐ 404
ՍՆԱՆԿԱՑՈՒՄ (ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ) 404
ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ 404
ՍՈՎՈՐԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ 405
ՍՈՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՇԱՀՈՒՅԹ (ՎՆԱՍ) 405
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ 405
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ 406
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ 406
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ 406
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ 406
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 407
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ 407
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՈՒՇԱՑՄԱՆ ԳՇՈՎ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ 407
ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ 408
ՍՊՐԵԴ 408
ՍՎԻՖՏ 408
ՍՎՈՓ (ՓՈԽԱՆԱԿՈՒՄ) 409
ՍՎՈՓԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 409
ՍՏԱԳՆԱՑԻԱ 409
ՍՏԱԳՖԼՅԱՑԻԱ 409
ՍՏԱՆԴԱՐՏԱՑՎԱԾ ՄԱՍՇՏԱԲՈՎ ԲԱԶՄԱԿԻ ՌԵԳՐԵՍԻԱՅԻ ՀԱՎԱՍԱՐՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾԱԿԻՑ (β_i) 409
ՍՏԱՆԴԱՐՏԱՑՈՒՄ 410
ՍՏՈԽԱՍՏԻԿ ԿԱՊ 410
ՍՈՒԲՍԻԴԻԱ 410
ՍՈՒԲՎԵՆՑԻԱ 411
ՍՈՒՊԵՐՀԻՊԵՐԻՆՖԼՅԱՑԻԱ 411
ՍՓՈՌ 411
ՍՓՈՌ ԳԻՆ 411
ՍՓՈՌ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 411

Վ

ՎԱՏ ԿԱՄ ԱՆՀՈՒՍԱԼԻ ՊԱՐՏՔ 412
ՎԱՐԱՆՑ (ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ) 412
ՎԱՐԻԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԱԿԻՑ 412
ՎԱՐԻԱՑԻԱՅԻ ԹԱՓ 413
ՎԱՐԻԱՑԻԱՅԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 413
ՎԱՐԻԱՑԻՈՆ ՇԱՐՔ 414
ՎԱՐԻԱՑԻՈՆ ՇԱՐՔԵՐԻ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 415
ՎԱՐԿ 416
ՎԱՐԿ ԱՊԱՀՈՎՎԱԾ 417
ՎԱՐԿ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ 417
ՎԱՐԿ ԲԱՆԿԱՅԻՆ 417
ՎԱՐԿ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ 417
ՎԱՐԿ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ 418
ՎԱՐԿ ԼՈՄԲԱՐԴԱՅԻՆ 418
ՎԱՐԿ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ 419
ՎԱՐԿ ԿՈՄՈՒՆԱԼ 419
ՎԱՐԿ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ 419
ՎԱՐԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 419
ՎԱՐԿ ՄՈՒՐՀԱԿԱՅԻՆ 420
ՎԱՐԿ ՊԵՏԱԿԱՆ 421
ՎԱՐԿ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ 421
ՎԱՐԿԱԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՆԵՐ 422
ՎԱՐԿԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ 422
ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ 422
ՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾ 423
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ 423
ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ 424
ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 424
ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 424
ՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 425
ՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՐՏԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ 425
ՎԱՐԿԱՌՈՒ (ՓՈԽԱՌՈՒ) 425
ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ 425
ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ 425
ՎԱՐԿԱՏՈՒ 425

ՎԱՐԿԵՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 425
ՎԱՐԿԵՐ ԿՈՆՏՈԿՈՐԵՆՏԱՅԻՆ 426
ՎԱՐԿԵՐ ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ 426
ՎԱՐԿԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՆ 427
ՎԱՐԿԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ 427
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 428
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ 428
ՎԱՐՁԱՎՃԱՐ 428
ՎԱՐՁԱՏՈՒ 429
ՎԱՈՒՉԵՐ 429
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 429
ՎԵՐԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 429
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ 430
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԴԵՏԵՐՄԻՆԱՑՎԱԾ (ՄԱՆՐԱՄԱՍՆԵՑՎԱԾ) 430
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԴԻԱԳՆՈՍՏԻԿ 430
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ 430
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ 430
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ 431
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆ 431
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԺԻՆԱԼ 431
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՄԻՋՏՆՏԵՍԱԿԱՆ 431
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՏՆՏԵՍԱԿԱՆ 431
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՇՈՒԿԱՅԱՎԱՐՄԱՆ (ՄԱՐՔԵԹԻՆԳԻ) 431
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ 432
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ 432
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ 432
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ 432
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ 432
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ 432
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՕՊԵՐԱՏԻՎ 432
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ 433
ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ԾԱԽՍԵՐ 433
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ 433
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՏԱՐՐԵՐ 433
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ 434
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 435
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՆԸՆԴՀԱՏ ԴԻՏԱՐԿՈՒՄ 435
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ 436

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԲԱՇԽՄԱՆ ՇԱՐՔԵՐ 436
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ (ԳՐԱՖԻԿՆԵՐ) 436
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ 437
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿ ՇԱՐՔԵՐ 437
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ 437
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ 437
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆ 437
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՍԽԱԼՆԵՐ 438
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԵՂԱՆԱԿ 439
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ 439
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ 439
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴՎՈՂ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐ 440
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՎՈՂ ԴԻՏԱՐԿՈՒՄ 440
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ 440
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐ 441
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄ 442
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ 442
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ 443
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՁԵՎԵՐ 443
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴ 443
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՔԵՐ 443
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՉ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄ 444
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 444
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԻՊՈԼՈԳԻԱԿԱՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐ 445
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ 445
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 445
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ 445
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ 445
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԻՋԻՆ ՄԵՇՈՒԹՅՈՒՆ 446
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ 447
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 447
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ 447
ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ 447
ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏ 448
ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 448
ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ 449
ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ 452
ՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ 452

Տ

ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ....453
ՏԵՂԱԿԱՆ ՎճԱՐ....453
ՏԵՂԱԿԱՆ ՎճԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՈՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ....453
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ....454
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎճԱՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ....454
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎճԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ....454
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ....454
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎճԱՐԻ ԳՕՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ....455
ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՎ....455
ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՕՁԽՍԵՐ....455
ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՕՁԽՍԵՐ....455
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ (ՏԱՑ)....456
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ....457
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ԱճԻ ԳՈՐԾԱԿԻՑ....457
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ....457
ՏՆՏԵՍԱՊԵՍ ԱԿՏԻՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ....458
ՏՆՏԵՍԱՊԵՍ ՈՉ ԱԿՏԻՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ....458
ՏՆՕՐԻՆՎՈՂ ԵԿԱՄՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇԻՎ....458
ՏՆՕՐԻՆՎՈՂ ԵԿԱՄՈՒՏ....458
ՏՈԿՈՍ....458
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ....459
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ԼՈՂԱՑՈՂ....459
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ....459
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ....460
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ....460
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ՎԱՐԿԱՅԻՆ....460
ՏՎՅԱԼՆԵՐ ՄՇԱԿՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ....460
ՏՐԱՆՍՖԵՐՏ....460
ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ....461
ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ ԸՆԹԱՑԻԿ....461
ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ....461
ՏՐԱՍԱՆՏ....462

ՏՐԱՍԱՏ 462
ՏՐԱՍՏ 462
ՏՐԱՍՏԱՅԻՆ (ՎԱՍՏԱՀԱՐԱՅԻՆ) ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 462
ՏՐԱՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 462
ՏՐԱՏՏԱ (ՓՈԽԱՆՑՎՈՂ ՄՈՒՐՀԱԿ) 462
ՏՐԵՆԴ 462
ՏՈՒԺԱՆՔ (ՏՈՒԳԱՆՔ, ՏՈՒՅԺ) 463

Ց

ՑԵԴԵՆՏ 463
ՑԵՍԻԱ 463

ՈՒ

ՈՒՂԻՂ ԿԱՊ 463
ՈՒՂՂԱԳԻԾ ԵՎ ԿՈՐԱԳԻԾ ԿԱՊ 464
ՈՒՂՂԱԿԻ ԾԱԽՍԵՐ 464
ՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿՈՒՄ 464
ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄ 464

Փ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ (ՓԲԸ) 465
ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ 465
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԱՄՓՈՓ 465
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԸՍՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԻ 466
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԸՍՏ ՆՇԱՆԱԿՄԱՆ 466
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԿԱՄ ԱՐԴԱՐԱՑՈՒՑԻՉ 466
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿԱՐԳԱԴՐՈՂԱԿԱՆ 466
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿՈՄԲԻՆԱՑՎԱԾ 466
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՍԿԶԲՆԱԿԱՆ 466
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ 466
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՇՐՋԱՊՏՈՒՅՏ 467
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՌԵԿՎԻԶԻՏՆԵՐ 467
ՓՈԽԱԴՐՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ (ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ) ԾԱՎԱԼ 467
ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԾԱԽՍՈՒՄՆԵՐ 467

ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 468
ՓՈԽԱՏՎԱԿԱՆ ՏՈԿՈՍ 468
ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆ 468
ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ 468
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴ 468
ՓՈՓՈԽՈՒՆ ԾԱԽՍԵՐ 469
ՓՈՔՐԱԳՈՒՅՆ ՔԱՌԱԿՈՒՍԻՆԵՐԻ ՄԵԹՈԴ 469

Ք

ՔԱՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՄԵԹՈԴ....471
ՔԼԻՐԻՆԳ....471

Օ

ՕՊՑԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ....471
ՕՎԵՐԴՐԱՖՏ 471
ՕՎԵՐՆԱՅԹ....472
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՂ....472
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄ 472
ՕՖԵՐՏԱ 472

Ֆ

ՖԱԿՏՈՐԻՆԳ 472
ՖԱԿՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 474
ՖԱԿՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ....474
ՖԱԿՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆ ԻՆՉՊԵՍ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ 474
ՖԱԿՏՈՐԻՆԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ....475
ՖԱԿՏՈՐԻՆԳԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ 475
ՖԱԿՏՈՐԻՆԳՆ ԻՆՉՈՎ Է ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՎԱՐԿԻՑ 475
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ 476
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵԼՔԵՐ (ԾԱԽՍԵՐ)....476
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՋՈՒՏ ՀՈՍՔԵՐ 476

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐ (ԵԿԱՄՈՒՏՆԵՐ) 476
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 477
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ) 477
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ 479
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 479
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ 479
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇԻՎՆԵՐ 479
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ 480
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄ (առևտրային բանկերում) 480
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄ (բացի բանկերից) 481
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐՐԵՐ 481
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 481
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 482
ՖԻՆԱՆՍՆԵՐ 482
ՖԻՖՈ 482
ՖԼՈՈՒԹ 482
ՖՅՈՒՉԵՐՍԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 482
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ 482
ՖՈՐՎԱՐԴԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 483
ՖՈՐՎԱՐԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 483
ՖՈՐՖԵՏԱՎՈՐՈՒՄ (ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴ) 483
ՖՐԱԽՏԻ (ՉԱՐՏԵՐԻ) ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 483
ՖՐԱՆՉԱՅԶԻՆԳ 484
ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԿԱՊ 484

ԲԱՅԱՂՅԱՆ Ա. Հ.

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Հրատ. խմբագիր՝ Ա. Սահակյան

էջադրումն ու ձևավորումը՝ Մ. Համբարձումյանի

LIMUSH PRINTHOUSE

Տպագրության եղանակը՝ ռիզոգրաֆիա:
Ֆորմատ՝ 60x84 1/16, թուղթ օֆսեթ, N 1:
Ծավալ՝ 33 տպ. մամուլ: Տպաքանակ 200:

Տպագրված է «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի տպարանում:
Ք. Երևան, Պուշկին 40, տարածք 76, հեռ. 58.22.99
E-mail: info@limush.am

[5000տ.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0355837

II
A 100813